

ՊԱՐՏԱԴԻՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ

**ՓԱՐԻԶԻ
ԱՍՏՎԱԾԱՄՈՐ
ՏԱՃԱՐԸ**

**Ֆրանսերենից թարգմանեց՝
Վահե Միքայելյանը**



**Երևան
«Անտարես»
2012**

ՀՏԴ 840-31 Հյուզո

ԳՄԴ 84 Ֆր-44

Հ 660

230800

ԵՊՀ գրադարան



SU0207062

Հրատարակության պատրաստեց
Արքմենիկ Նիկողոսյանը

Հյուզո Վիկտոր

Հ 660 Փարիզի Աստվածամոր տաճարը: Վ. Հյուզո;

Թարգմ.՝ Վ. Միքայելյան. - Եր.: Անտարես, 2011. - 668 էջ:


Ֆրանսիացի մեծ գրող Վիկտոր Հյուզոյի (1802-1885) «Փարիզի Աստվածամոր տաճարը» հանրահայտ վեպի հայերեն նոր հրատարակությունը իրականացվում է 1953 թ. հրատարակության հիմքով: Կատարվել են անհրաժեշտ սրբագրական և խմբագրական աշխատանքներ՝ արդի հայերենի կետադրության և ուղղագրության կանոններին համապատասխանեցնելու նպատակով:

ՀՏԴ 840-31 Հյուզո

ԳՄԴ 84 Ֆր-44

ISBN 978-9939-51-348-5

© «Անտարես» Հրատարակչատուն, 2011



Մի քանի տարի առաջ Փարիզի Աստվածամոր տաճարը դիտելիս, ավելի ճիշտ՝ մանրակրկիտ զննելիս, այս գրքի հեղինակը աշտարակներից մեկի խավար մի անկյունում գտավ պատի վրա, ձեռքով փորագրված հետևյալ բառը.

ΑΝΑΓΚΗ¹

Հնանալուց սեւացած և քարի մեջ բավական խոր փորագրված այդ հունական գլխատառերը, գոթական գեղագրությանը հատուկ ինչ-որ առանձնահատկությունը, որ դրոշմված էր նրանց ձևի ու դիրքի մեջ՝ կարծես ցույց տալու համար, որ միջնադարյան ձեռք էր գրել դրանք այնտեղ, մանավանդ նրանց պարունակած տխուր ու ճակատագրական իմաստը խիստ ազդեցին հեղինակի վրա:

Դրանից հետո ներկել կամ քերել են պատը (ես չգիտեմ, թե երկուսից ո՞րը), և արձանագրությունն անհետացել է: Չէ՞ որ երկու հարյուր տարուց ի վեր այսպես են վարվում միջին դարերի սքանչելի եկեղեցիների հետ: Նրանց անդամահատումը կատարվում է ամեն կողմից՝ թե՛ ներսից, թե՛ դրսից: Քահանան ներկում է, ճարտարապետը քերում, հետո վրա է հասնում ժողովուրդը և քանդում:

Այսպիսով, բացի այն դյուրաբեկ հիշողությունից, որ այստեղ նվիրում է նրան այս գրքի հեղինակը, այսօր այլևս ոչինչ չի մնացել Աստվածամոր տաճարի խավարչտին աշտարակում փորագրված այս խորհրդավոր բառերից, ոչինչ չի մնացել այնքան տխրագին կերպով ամփոփված այդ անհայտ ճակատագրից: Պատի

1. Ծակատագիր (Հուն.):

վրա այդ բառը գրած մարդը ջնջվել է շատ դարեր առաջ՝ սերունդների հետ, բառն էլ իր հերթին է ջնջվել եկեղեցու պատից, գուցե և եկեղեցին էլ շուտով ջնջվի աշխարհից:

Ահա այդ բառն էլ ծնունդ տվեց այս գրքին:

Մարտ, 1831

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

I

ՄԵԾ ՍՐԱՀԸ

Ուղիղ երեք հարյուր քառասունութ տարի, վեց ամիս և տասնինն օր առաջ փարիզցիք արթնացան բոլոր զանգերի աղմուկից, որ ամենայն ուժգնությամբ ղողանջում էին Միջնաքաղաքի, Համալսարանի և Քաղաքի երեք շրջափակերում:

Սակայն 1482 թվականի հունվարի 6-ը այնպիսի օր չէր, որ հիշատակը պահած լիներ պատմությունը: Ոչ մի նշանակալի բան չունեի այն իրադարձությունը, որ հենց առավոտից շարժման մեջ էր դրել և՛ զանգերը, և՛ Փարիզի քաղաքացիներին: Ո՛չ պիկարդացիների կամ բուրգունդացիների գրոհ էր դա, ո՛չ սուրբ մասնատուփի սափոր, ո՛չ ճեմարանականների ըմբոստություն և Լասսի այգում, ո՛չ ահեղազույն տիրակալի մերո պառոն արքայի մուտքը, ո՛չ էլ գողերին ու գողուհիներին կախելու հետաքրքրաշարժ տեսարանը Փարիզի Արդարադատության պալատի բակում: Դա փայլվումն զգեստներով և փետրազարդ գլխարկներով զարդարված որևէ դեսպանության անակնկալ ժամանումն էլ չէր, որ այնքան հաճախ էր լինում տասնհինգերորդ դարում: Ընդամենը երկու օր էր անցել, որ դրանցից վերջինը՝ Ֆլանդրիայի դեսպանությունը հեծելաթափորով մուտք էր գործել Փարիզ՝ թագաժառանգի և Մարգարիտ Ֆլանդրիացու ամուսնության պայմանները կնքելու համար՝ ի մեծ անախորժություն պարոն կարդինալ դը Բուրբոնի, որ թագավորին դուր գալու համար ստիպված էր սիրալիր երևալ ֆլամանդական քաղաքապետների այդ

ռամիկ ամբոխին, մեծարել-հյուրասիրել նրանց իր Բուրբոնյան պալատում բազմաթիվ գեղեցիկ մորալիտներով, կառակերգերով և զավեշտներով, երբ հորդառատ անձրևը թրջում էր ապարանքի բաց դռան առաջ փռված հիանալի գորգերը:

Հունվարի 6-ին, այն, որ հուլիս էր Փարիզի ամբողջ խաժամուժը, ինչպես ժեհան դը Տրուան է ասում, անհիշելի ժամանակներից ի վեր միակցված կրկնակի հանդեսն էր՝ Թագավորաց՝ և Ծաղրածուների տոները:

Այդ օրը պետք է տեղի ունենային՝ հրավառութուն Գրեի հրապարակում, մայիսյան ծառի տնկումը Բրակի մատուռում, միստերիա Արդարադատության պալատում: Դրանց լուրը հաղորդել էին նախորդ օրը, քառուղիներով շեփոր փչելով, Փարիզի պրևոյի՝ մարդիկ՝ մանուշակագույն կամլոյե չքեղ բաճկոնակներով և սպիտակ խոշոր խաչեր կրծքներին:

Վաղ առավոտյան տուն ու խանութ փակելով՝ քաղաքացիների և քաղաքացուհիների բազմութունն ամեն կողմից դիմում էր այս երեք նշված տեղերից մեկը: Ամեն ոք իր գնալիք տեղը որոշել էր՝ ոմանք հրավառության, ոմանք՝ մայիսյան ծառատնկումին, ոմանք էլ՝ միստերիա... Ի պատիվ Փարիզի հետաքրքրասեր պարապ մարդկանց վաղեմի ողջամտության՝ ասենք, որ այդ բազմության մեծ մասը դիմում էր դեպի հրավառությունը, որը միանգամայն համապատասխան էր եղանակին, կամ դեպի միստերիա, որը պիտի ներկայացվեր Արդարադատության ծածկված ու փակ մեծ սրահում, այնպես որ հետաքրքրասերները համամիտ էին, որ մայիսյան դեռափթիթ ծառը Հունվարյան երկնքի տակ միայնակ դողդողա Բրակի մատուռի գերեզմանոցում:

2. Ըստ լուսավորչական հեղեղից՝ Աստվածահայտնության տոնը:

3. Նախահեղափոխական Ֆրանսիայում այսպես են կոչվել զանազան բարձր պաշտոնյաներ՝ գերազանցապես քաղաքական կամ դատական իշխանության ներկայացուցիչներ: Փարիզի պրևոն արքայի քաղաքական-դատական ներկայացուցիչն էր:

Ժողովուրդը հեղեղել էր մանավանդ Արդարադատութեան պալատը տանող ուղիները, որովհետեւ գիտեի, որ նախանցյալ օրը ժամանած ֆլամանդական դեսպանները մտադրութիւն ունեին ներկա լինել միստերիայի ներկայացման, ծաղրածուների պապի ընտրութեան, որ նմանապես պետք է տեղի ունենար Մեծ դահլիճում:

Հեշտ գործ էր այդ օրը մտնել մեծ սրահը, չնայած որ այն ժամանակ դա հուշակված էր որպէս աշխարհի ամենամեծ, փակ ծածկով վայրը (թեեւ ճիշտ է, որ Սովալը դեռ էր չափել Մոնտարժիի դղյակի մեծ դահլիճը): Բազմութեամբ լեցուն պալատի հրապարակը լուսամուտներում խճողված հետաքրքրասերներին երևում էր որպէս ծով, որի մեջ Հինգ թե վեց փողոց, ինչպէս նույնքան թվով գետաբերաններ, ամեն ընդհանուր էին թափում գլուխների նոր կոհակներ: Այդ բազմութեան ալիքներն անընդհատ աճելով՝ բախվում էին այն տների անկյուններին, որոնք այս ու այն տեղ դուրս էին ցցվում որպէս նույնաքանակ հրվանդաններ՝ հրապարակի անկանոն ավազանի մեջ: Պալատի գոթական՝ բարձր ճակատի կենտրոնում գտնվող մեծ սանդուղքով անվերջ բարձրանում ու իջնում էր մարդկանց երկու հոսանք, որը ճեղքելով մեջտեղի անդաստակի վրա՝ լայն կոհակներով տարածվում էր դեպի իր երկու կողմնային աստիճանները. այդ գլխավոր սանդուղքը, կրկնում եմ, կարծես անընդհատ հոսում էր հրապարակի մեջ, ինչպէս ջրվեժը՝ լճի մեջ: Աղաղակները, ծիծաղները, այդ հազարավոր ոտքերի դոփշունը անասելի աղմուկ ու ժխոր էին առաջացնում: Ժամանակ առ ժամանակ այդ ժխորն ու աղմուկը սաստկանում էին. ամբողջ բազմութիւնը դեպի գլխավոր սանդուղքը հրող հոսանքը ընկրկում էր, ալիկոծվում ու պտուլտ տալիս: Դա առաջանում էր այն ժամանակ, երբ որեւէ նետածիգ Հարված էր

4. Գոթական բառը, այն իմաստով, որ գործածում են ընդհանրապես, միանգամայն սխալ է, բայց և ամբողջովին սրբագործված: Մենք էլ ուրեմն ընդունում և ընկալում ենք, ինչպէս ամենքը, բնութագրելու համար միջին դարերի երկրորդ կեսի ճարտարապետութիւնը, որի սկզբունքը սրածայր կամարն է և որը հաջորդել է առաջին շրջանի ճարտարապետութեանը, իսկ սրա հատկանշականը կլոր կամարն է: (Ման. հեղինակի):

Հասցնում, կամ պրեոյության պահակագործի ձին խոյանում էր կարգ ու կանոն Հաստատելու. Հիանալի ավանդույթ, որ պրեոյությունը կտակեց գունդստարությանը, գունդստարությունը՝ հեծյալ պահակագործին, հեծյալ պահակագործն էլ՝ Փարիզի մեծ ժանդարմերիային:

Դոնեբրում, պատուհանների ու լուսանցույցների մեջ և տանիքների վիտացոզ քաղաքների հազարավոր բարի, խաղաղ ու ազնիվ կերպարանքները դիտում էին Փարիզը, նայում էին թոհոբոհին և ավելին չէին պահանջում, որովհետև Փարիզի բնակիչներից շատերը բավականանում էին հանդիսատեսներին դիտելով, և մեզ համար արդեն ինքնին խիստ հետաքրքրական է այն պատը, որի ետևը որևէ բան է տեղի ունենում:

Եթե մենք՝ 1830 թվականի մարդիկս, կարողանայինք մտովին խառնվել տասնհինգերորդ դարի այդ փարիզցիներին և նրանց հետ էլ իրար քաջքշելով, հրելով ու թավալզուր լինելով՝ մտնել Արդարդատության պալատի այդ հսկայական սրահը, որ այնքնա նեղվածք էր 1482 թվականի հունվարի 6-ին, ապա մեր առաջ բացվող տեսարանը զերծ չէր լինի ո՛չ հետաքրքրությունից, ո՛չ էլ հրապույրից, և մեր շուրջը կտեսնեինք այնքան հին բաներ, որ մեզ բոլորովին նոր կերևային:

Եթե ընթերցողը համաձայնի, մենք կփորձենք մտովի վերակենդանացնել այն տպավորությունը, որ կուեննար նա՝ մեզ հետ սնցնելով այդ ընդարձակ սրահի շեմքը, մտնելով բաճկոնակներ, վերարկուներ ու կուրտիկներ հագած այդ ամբոխի մեջ:

Ամենից առաջ կղժժային մեր ականջները, կչլանային մեր աչքերը: Մեր գլխավերևում կտեսնեինք սրածայր կամարավոր կրկնակ առաստաղ՝ փայտե քանդակներով դրվագված, ծովակապույտ ներկված՝ վրան էլ ոսկեգույն արքայաշուշաններ⁵: Մեր ոտքերի տակ՝ սև ու սպիտակ իրար հաջորդող մարմարե սալիկներով ծածկված հատակ: Մեզանից մի քանի քայլ հեռու՝ մի հսկայական սյուն, հետո մեկ

5. Վալուաների, այնուհետև նաև՝ Բուրբոնների դինաստիական խորհրդանիշը:

ուրիշը, ապա մի ուրիշը. ընդամենը յոթ սյուն սրահի երկարությունը, որոնք նրա լայնքի կենտրոնում սահում էին կամարակապ կրկնակ առաստաղի կողային էջերը: Առաջին չորս սյուների շուրջը կային առևտրականների կրպակներ՝ ապակուց ու փայլիլուն իրերից խիստ չողչողուն. վերջին երեքի շուրջը՝ դատ ունեցողների անդրավարտիքներից ու դատախազների երկար թիկնոցներից մաշված ու փայլող կաղնեփայտ նստարաններ: Սրահի բոլորտիքը՝ բարձր պատերի երկայնքով, դռների միջև, պատուհանների միջև, սյուների միջև՝ Ֆրանսիայի բոլոր թագավորների արձանների անվախճան շարանը՝ սկսած Ֆարամոնից, ծույլ ու պարսպ թագավորները՝ թևերը կախած և հայացքը խոնարհած, քաջարի ու սպառնալից թագավորները՝ գլուխն ու ձեռքերը համարձակ հրկինք բարձրացրած: Հետո սրակամար, երկար լուսամուտներին հազարհազ ապակիներ. սրահի լայն ելքի լի վրա՝ նրբորեն քանդակապարզված փարթամ դռներ, և այդ ամենը՝ կամարակապ առաստաղները, սյուները, պատերը, դուռ-լուսամուտի շրջանակները, որմնաքունդակները, դռներն ու արձանները վերից վար ծածկված էին կասուլյո ու ոսկեպուշյո զմայլելի պարզաներկով, որն արդեն մի քիչ աղոտացած այն ժամանակաշրջանում, որ մինք նկարագրում ենք, գրեթե ամբողջովին անհետացել էր փոշու և սարդոտայնների տակ փրկչական 1549 թվականին, երբ Դյու Բրոյը դեռ ավանդաբար հիանում էր նրանով:

Պատկերացրեք ուրեմն այդ երկարաձև հսկայական սրահը՝ լուսավորված հունվարյան դժգուշյո լույսով, նվաճված խայտարեցեռ ու ալմկող բազմությամբ, որ հորձանք էր տալիս պատերի երկայնքով ու պտտվում սյուների շուրջը, և արդեն մի տարտամ գալափար կկաղմեք այն ընդհանուր պատկերի մասին, որի հետաքրքրական մանրամասնությունները կփորձենք նշել ավելի ճշգրտորեն:

Անհրկբա է, որ եթե Ռավայակը չսպաներ Հենրի IV արքային, ապա չէին լինի Արդարադատության պալատի գրասենյակին հանձնված թղթեր Ռավայակի դատավարության վերաբերյալ, չէին լինի

վերոհիշյալ թղթերի ոչնչացմամբ շահագրգռված մեղսակիցներ, հետևաբար՝ չէին լինի հրճիգներ, որոնք ավելի լայն միջոցներ չունենալով՝ ստիպված էին հրկիղել դատական գրասենյակը, որպեսզի վառեն այդ թղթերը, և հրկիղել Արդարադատության պալատը, որպեսզի վառեն գրասենյակը, հետևաբար և բնավ չէր լինի 1618 թվականի հրդեհը: Հինավուրց պալատը տակավին կանգուն կլիներ իր հինավուրց մեծ սրահով, և ես կկարողանայի ասել ընթերցողին՝ գնացե՛ք տեսեք. այդպիսով մենք երկուսս էլ զերծ կլինեինք, ես՝ պատկերելուց, նա էլ՝ մի անշնորհք նկարագրություն կարդալուց: Իսկ դա ապացուցում է մի նոր ճշմարտություն – մեծ իրադարձությունները ունենում են անհաշիվ հետևանքներ:

Արդարև, շատ հնարավոր է նախ, որ Ռավայակը մեղսակիցներ չունեն. երկրորդ, որ նրա մեղսակիցները, եթե նույնիսկ ունեն, ո՛չ մի մասնակցություն չունենային 1618 թվականի հրդեհին: Գոյություն ունի դրա խիստ հավանական երկու այլ բացատրություն ևս. առաջին՝ մեկ ոտնաչափ լայնությամբ, մեկ արմունկաչափ բարձրությամբ խոշոր, բոցավառ սասուլը, որ, ինչպես գիտեն բոլորը, ընկավ Արդարադատության պալատի վրա, մարտի 7-ին, կեսգիշերն անց: Երկրորդ՝ Թեոֆիլի քառյակը.

Տեղի ունեցավ մի տխուր կատակ.

Տիկին արդարը Փարիզում այս մեծ,

Կերավ Համեմունք՝ այնքան անբանակ,

Որ ապարանքն իր կրակի մատնեց:

Ինչ էլ որ կարծեն 1618 թվականի Արդարադատության պալատի հրդեհի այս եռյակ՝ քաղաքական, ֆիզիկական և բանաստեղծական բացատրության մասին, այնուամենայնիվ, դժբախտ փաստը՝ հրդեհը, անկասկած է: Շատ քիչ բան է մնում այսօր այդ աղետի պատճառով, մանավանդ այն բազմապիսի, Հաջորդական վերականգնումների

6. Համեմունք (épice) բառը ֆրանսերեն նշանակում է նաև դատավճար, նվեր՝ դատավորին:

պատճառով, որոնք ավարտել են այն, ինչ խնայել է հրդեհը. շատ քիչ բան է մնում Ֆրանսիայի արքաների այդ առաջին կացարանից, Լուվրի անդրանիկը եղող այդ պալատից, որն արդեն Ֆրիլիպ Գեղեցիկի ժամանակ այնքան էր հնացել, որ նրա մեջ փնտրում էին Ռոբերտ արքայի կառուցած և Հելգադուսի նկարագրած փառահեղ շենքերի հետքերը: Համարյա ամեն ինչ անհետացել էր: Ի՞նչ է եղել դիվանատան այն սենյակը, որտեղ սուրբ Լյուդովիկոս արքան կատարեց յուր ամուսնութունը: Ի՞նչ է եղել այն այգին, որտեղ նա դատու դատաստան էր անում՝ «հագած կամլոյե զգեստ, մահուդե անթև վերնազգեստ և մինչև սև մաշիկները հասնող թիկնոց, պառկած գորգերի վրա ժուենվիլի՛ հետ»: Որտե՞ղ է Սիգիզմունդ կայսրի սենյակը. Կառլոս IV-ինը, Հովհան Անհոդինը: Որտե՞ղ է այն սանդուղքը, որտեղից Կառլոս IV-ը հռչակեց շնորհատվության իր հրովարտակը: Որտե՞ղ է այն սալը, որի վրա Մարսելը թագաժառանգի ներկայությամբ մորթեց Ռոբերտ դը Կլերմոնին և Շամպայնի մարչալին: Մ՛եր է այն դռնակը, որտեղ պատառոտվեցին հակապապական Բենեդիկտոսի կոնդակները, և որտեղից ետ գնացին այդ կոնդակները բերողները՝ ծաղրի համար փիլոն հագած ու խուլը դրած և հրապարակային մեղա ասելով ամբողջ Փարիզում: Որտե՞ղ է մեծ սրահն իր ոսկեզօծումով, ծովակապույտ ներկով, սրակամար դուռ-պատուհաններով, արձաններով, սյուներով, ամբողջովին քանդակաւորվազ ու անեղր կամարակապ առաստաղով, որտե՞ղ է ոսկեզօծ սենյակը, քարաքանդակ առյուծը, որ կանգնած էր դռանը՝ գլխահակ, պոչը ոտքերի արանքը քաշած, ինչպես Սողոմոնի գահի առյուծները՝ խոնարհ դիրքով, ինչպես պատշաճ է, որ ուժը կանգնի արդարադատության առաջ: Հապա գեղեցիկ դռնե՞րը, լուսամուտների զմայլելի ապակիները. հապա երկաթաքանդակները, որոնք հուսահատեցնում էին Բիսկորնետին. հապա դյու Հանսի նրբակերտ կահո՞ւյթը...: Ի՞նչ է արել ժամանակը, ի՞նչ են արել մարդիկ այդ հրաշալիքները: Ի՞նչ են

7. Ֆրանսիացի պատմիչ, Լյուդովիկոս IX-ի խորհրդականը (1224-1317):

ավել մեզ այդ ամենի տեղ, գաղղիական այդ ամբողջ պատմության, այդ ամբողջ դոթական արվեստի տեղ:— Սեն-ժերվեի չքաղուան ձախողակ ճարտարապետ պարոն դը Բյոսսի ծանր, ճխրված կլոր-կամարները, ահա սա՝ արվեստի փոխտրեն: Իսկ ինչ վերաբերում է պատմությանը, ապա մենք ունենք ճոռոմախոս հուշեր մեծ սյան մասին՝ Պատրյուի՝ տիպի մարդկանց դեռ շոնդացող բամբասանքը:

Այս ամենը մեծ բան է: Վերադառնանք իսկական հին Փարիզի իսկական մեծ սրահին:

Այս հսկայական զուգահեռագծի երկու ծայրերը գրավել էին մեկը միակտուր մարմարե շինված հռչակավոր սեղանը՝ այնքան երկար, այնքան լայն ու հաստ, որ երբեք չի ելել, ասում են հին կալվածատոմարները այնպիսի ոճով, որ կգրգռեր Գարգանտյուայի ախորժակը, աշխարհում մարմարե այդպիսի կտրված շերտ. մյուսը այն մատուռը, որտես Լյուդովիկոս XI-ը քանդակել էր տվել իրեն՝ սուրբ Կուլյսի դիմաց ծնկաչոք և ուր հրամայել էր տեղափոխել Կառլոս Մեծի և սուրբ Լյուդովիկոս IX-ի արձանները, որովհետև կարծում էր, թե այդ երկու սրբերը, որպես Ֆրանսիայի արքաներ, մեծ վարկ ունենին երկնքում, առանց մտահոգվելու, որ թագավորների արձանների շարանում երկու որմնախորշ կմնան դատարկ: Այդ մատուռը, որ դեռևս բուլրոսվին նոր էր, որովհետև կառուցված էր հագլիվ վեց տարի առաջ, ամբողջովին այն գոգտրիկ, նրբաճաշակ ճարտարապետության, հրաշալի քանդակագործության, նուրբ ու խոր մետաղադրվագման ոճով էր, նշում է գոթական դարաշրջանի վախճանը մեր երկրում և տևում է մինչև տասնվեցերորդ դարի կեսերը Վերածնության կախարդական երևակայությունների մեջ: Շքաղուան վերևում գետեզված լուսանցիկ-ծակոտկեն փոքրիկ վարդաքանդակը մասնավորապես նրբագույն գեղեցկություն գլուխգործոց էր, ասես ժանյակե աստղ լիներ:

8. Նիկոյա Բուլաոյի բարեկամը, փաստարան, Հայտնի է իր ճոռոմ հոստորությունը (1604-1681):

Սրահի մեջտեղը, գլխավոր դռան դեմուղեմը, պատին հենած՝ բարձրացել էին ոսկեճամուռի դիպակով ծածկված մի անդաստակ՝ ֆրամանդական դեսպանների և միստերիայի ներկայացմանը հրավիրված այլ բարձրաստիճան անձնավորությունների համար. այդ անդաստակի վրա շինել էին մի հատիկ մուտք՝ ոսկեզօծ սենյակի միջանցքի լուսամուտն օգտագործելով:

Ըստ ավանդական սովորության՝ միստերիան պիտի ներկայացվեր մարմարե սեղանի վրա: Հենց առավոտից էլ պատրաստել էին այդ սեղանը դրա համար. նրա մարմարե հոյակապ սալը, որ ամրողովին խազմված էր դատավորական դասի կրուսկներին, այժմ իր վրա կրում էր տախտակե, բավական բարձր մի վանդակ. որի վերին մակերեսը մատչելի լինելով ամրողջ սրահի հայացքներին՝ պիտի ծառայեր որպես բեմ, իսկ գորգերով քողարկված ներքնամասը պիտի լիներ պիեսի դերակատարների հանդերձարանը: Միամտաբար դրսից դրված ելարանը հանդերձարանի ու բեմի հաղորդակցության միջոց էր և իր թեք աստիճանները պետք է մատուցեր թե՛ մուտքերի, թե՛ ելքերի համար: Հետևաբար չկար դերասանի ո՛չ մի անսպասելի հայտնություն, ո՛չ մի հանկարծակի փոփոխություն կամ թատերական անակնկալ, որ ստիպված չլիներ բարձրանալ այդ ելարանով: Արվեստի ու մեքենաների անմեղ ու արժանամեծար մանկություն:

Արդարադատության պալատի բայլի՞՝ չորս սերժանտ՝ ժողովրդի բոլոր զվարճությունների մշտական վերակացուները տոնների ժամանակ կամ մահապատժի օրերին, կանգնած էին մարմարե սեղանի չորս անկյուններում:

Ներկայացումը պիտի սկսվեր այն ժամանակ միայն, երբ պալատի մեծ ժամացույցը խփեր ցերեկվա տասներկուերորդ հարվածը: Անշուշտ, շատ ուշ էր դա թատերական ներկայացման համար. սակայն հարկ էր եղել ընտրել դեսպանների հարմար ժամը:

9. Այլքայական դատավոր: Գործածվել է Հայերենում Կիլիկյան թագավորության ժամանակ:

Ահա այդ ամբողջ բազմությունն սպասում էր վաղ առավոտից: Այդ պարկեզտ հետաքրքրասերներից շատ շատերը լուսաբացից սկսած ցրտից սարսուռում էին պալատի մեծ աստիճանի առաջ. ոմանք նույնիսկ պնդում էին, թե ամբողջ գիշերն անց են կացրել մեծ դարպասի լայնքին պռակած, որպեսզի վստահ լինեն, որ ամենքից շուտ ներս կմտնեն: Բազմությունն ավելանում էր ըստ ըստ և, ինչպես մակերեսից բարձրացող ջուրը, սպառնում էր ելնել պատերն ի վեր, ուռչել սյուների շուրջը, տարածվել պատվանդանների, քիվերի, պատուհանագոգերի, ճարտարապետական բոլոր ելուստների, քանդակների բոլոր ցցվածքների վրա: Հետևաբար՝ ճնշումը, անհամբերությունը, ճանձրությունը, անպարկեշտության ու գժության հատկացված օրվա ազատությունը, դուրս ցցված արմուկնկի կամ երկաթադամ կոշիկի պատճառով ծագող բազմաթիվ կոփվները, երկար սպասումից առաջացած հոգնությունը, դեսպանների ժամանման պահից դեռ շատ առաջ, թթու ու դառն շեշտ էին սվել այդ ներփակված, իրար կայած, ճզմված, կոխոտված ու շնչահեղձ եղող բազմության ժխտին: Լսվում էին միայն տրտունջներ ու չարամաղթություններ ընդդեմ ֆյամաների, վսճռողականների պարագլխի, կարդինալ դը Բուրբոնի, Արդարադատության պալատի բայլի, տիկին Մարգարիտ Ավստրիացու, ճիստները պատրաստ պահած սերժանտների, ցրտի, շոգի, վատ եղանակի, Փարիզի նպիսկսպոսի, ծաղրածուների պապի, սյունների, արձանների, այս փակ դռան, այն բաց լուսամուտի. և այդ ամենը ի մեծ զվարճություն բազմության մեջ սփռված ճեմարանականների ու ծառաների խմբերի, որոնք այդ ամբողջ դժգոհությունը խառնում էին իրենց ծաղրն ու չարաճճիությունները, և այսպես ասած՝ զնդասեղի հարվածներով հրահրում էին ընդհանուր վատ տրամադրությունը:

Այդ ուրախ դեերի մեջ կար նաև մի խումբ, որ լուսամուտներից մեկի ապակիները տեղահան անելուց հետո համարձակ կերպով նստել էր ելուստի վրա և այդանպիսի փոխնիփոխ իր հայացքներն ու ծաղրուծանակն էր նետում թե՛ ներս, թե՛ դուրս՝ սրահի և հրապարակի

բազմությանը: Նմանակելու նրանց ժեստերից, անզուսպ քրքիջնե-
րից, հեգնանքով լի կատակներից, որ փոխանակում էին իրենց ընկեր-
ները հետ սրահի մի ծայրից մյուսը, հեշտ էր եզրակացնել, որ այդ
երիտասարդ ճեմարանականները մասնակից չէին մյուս հանդիսա-
կանների ձանձրույթին ու հոգնությանը և իրենց մասնավոր հաճույ-
քի համար շատ լավ կարողանում էին իրենց աչքի առաջ եղածից քա-
ղել մի ներկայացում, որը համբերություն էր տալիս նրանց սպասել
մյուսին:

— Արև՛ս վկա, դուք եք, ժոաննե՛ս Ֆրոլո դե Մուլենդիևո, — գոռում
էր դրանցից մեկը, խարտյաչ մազերով, սիրուն ու չարածճի դեմքով
մի փոքրի դե, որ կառչել էր մի խոյակի ականթաքանդակներից. — Ի՞նչ
լավ են ձեզ անվանել ժեհան՝ դե Մուլեն¹⁰, որովհետև ձեր երկու բա-
զուկներն ու երկու սրունքները ասես քամուց պտտվող հողմադացի
չորս թևեր լինեն: Ինչքա՞ն ժամանակ է այստեղ եք:

— Սատանայի ողորմածությամբ՝ չորս ժամից ավելի է արդեն. —
պատասխանեց ժոաննես Ֆրոլոն. — և ես հույս ունեմ, որ այդ ժամերը
կմտցնեն իմ հաշվի մեջ՝ քափարանում: Ես արդեն լսել եմ, թե ինչ-
պես Սիցիլիայի թագավորի ութ տիրացուները երսոժշտական պատու-
րագի առաջին տունն էին թնդացնում ժամը յոթին, Սենտ-Շապելում:

— Ի՛նչ լավ տիրացու են, — վրա բերեց մյուսը. — դրանց ձայնն
ավելի սուր է, քան գդակները: Իսկ պարոն սուրբ Հովհաննեսին պա-
տարագ մատուցելուց առաջ, թագավորը պարտավոր էր իմանալ, թե
պարոն սուրբ Հովհաննեսը սիրո՞ւմ է պրովանսյան շեշտով միալար
երգվող լատիներենը:

— Սիցիլիայի թագավորի այդ անիձյալ տիրացուներին վաստակ
ընձեռելու համար է այդ պատարագն արել, — խայթով շեշտով գոչեց
բազմությունից մի պառավ կին պատուհանի տակից: — Ասացի՛ք
խնդրեմ. փարիզյան հազար լիվր վճարել մե՛կ պատարագի համար,
այն էլ Փարիզի շուկայում ծովի ձուկ ծախելու հարկի հաշվին:

10. Մուլեն (moulin) նշանակում է աղաց. ջրաղաց:

– Զա՛յնդ կտրիր, սյառա՛վ,– վրա բերեց ձկնափաճառուհու կողքից մի գիրուկ ու լրջվեմ մարդ, որ հոտ չառնելու համար սեղմում էր իր քիթը:– Պատարագ մատուցել պետք է անշուշտ: Զլինի՞, թե ուզում եք, որ թագավորը նորից հիվանդանա:

– Շա՛տ լավ սասցիր, պարոն ժիլ Լըկորնյու՝ թագավորի զգեստները մուշտակապատող վարպե՛տ,– գոչեց խոյակին փաթաթված փոքրիկ ճեմարանականը:

Արքայի զգեստները մուշտակապատող վարպետի չարաբաստիկ անունը՝ ընդունվեց բոլոր ճեմարանականների միահամուռ քրքիջով:

– Լըկորնյու՛՛, ժի՛լ Լըկորնյու,– գոռում էին սմանք:

– *Cornutus et hirsutus*!¹¹,– վրա բերեց մի ուրիշը:

– Դե իհարկե՛.– գոչեց խոյակի փոքրիկ դեւը:– Էլ ի՞նչ եք քրքջում: Մեծապատիվ ժիլ Լըկորնյու՝ եղբայր արքայական ապարանքի պրեռ տյար ժեհան Լըկորնյուի, որդի Վենսանի անտառի առաջին գոնապան տյար Լըկորնյուի. բոլորն էլ Փարիզի քաղաքացիներ և բոլորն էլ՝ հայր ու որդի՝ ամուսնացած:

Հրճվանքը կրկնապատկվեց: Գիրուկ մուշտակագործը առանց ծպտուն հանելու ջանում էր իուռյս տալ ամեն կողմից իրեն սևեռված հայացքներից, բայց իղուր՝ քրտնում ու փնչացնում էր միայն. փայտի մեջ մխրճվող սեպլի նման՝ նրա թափած ջանքերն էլ միայն այն հետևանքն էին ունենում, որ ավելի ամուր էր սեղմվում հարևանների ուսերի միջև նրա լայն, կաթվածի տրամադիր, դժգոհությունից ու զայրույթից կարմրատակած դեմքը:

Վերջապես հարևաններից մեկը, որ նմանապես կարճահասակ, գիրուկ ու պատկառելի տեսքով մարդ էր, օգնության հասավ նրան:

– Ինչպիսի՛ խայտառակություն. այս ի՛նչ լեզվով եմ ճեմարանականները խոսում պատվավոր քաղաքացու հետ: Իմ ժամանակ ճիպոտի խուրճով դրանց մի լավ կղնգստեին, հետո էլ դրանով կվառեին:

Ամբողջ խուճը քրքջաց:

11. Եթե անջատենք՝ լը կորնյու (*le cornu*), կնշանակի կոտոչավոր:

12. Կոտոչավոր և մազոտ (լատ.):

– Պա՛հ-պա՛հ. այդ ո՞վ է երգում այս եղանակը. ո՞վ է դժբախտության այդ բվեճը:

– Լսի՛ր, ես դրան ճանաչում եմ, տյար Անդրի Մյունիեն է:

– Համալսարանի չորս երգվյալ գրադարանապետերից մեկն է, – ասաց մեկ ուրիշը:

– Ամեն ինչ չորս է այդ կրպակում, – գոռաց երրորդը. – չորս ազգ, չորս ֆակուլտետ, չորս տոն, չորս մատակարար, չորս հոգաբարձու, չորս գրադարանապետ:

– Դե՛ լավ. պետք է դրանց բուրդը մի լավ գզել, – ասաց ժեհան Ֆրոյն:

– Մյունիե՛, մենք կվառենք քո գրքերը:

– Մյունիե՛, մենք կծեծենք քո ծառային:

– Մյունիե՛, մենք կսեղմենք քո կնոջը:

– Անուշ գիրուկ տիկին Ուզարդին:

– Որն այնքա՛ն թարմ, այնքա՛ն ուրախ է, կարծես այրի լինի:

– Գրողի բաժին դառնա՛ք, – մրթմրթաց տյար Անդրի Մյունիեն:

– Տյա՛ր Անդրի, – վերսկսեց ժեհանը, որ դեռ կախ էր ընկել իր խոյակից, – լռի՛ր, թե չէ կընկնեմ գլխիդ վրա:

Տյար Անդրին աչքերը հառեց վեր, կարծես մի վայրկյան չափեց սյան բարձրությունը, խեղկատակի ծանրությունը, մտովի բազմապատկեց այդ ծանրությունը արագության քառակուսով և լուռ մնաց:

Ժեհանը դառնալով ռազմադաշտի տերը՝ հաղթական շարունակեց.

– Այո, ես այդ կանեմ, թեև սարկավագապետի եղբայրն եմ:

– Համալսարանի մեր պարոններն էլ լավ մարդիկ են, հա՛, այսպիսի օր էլ մեր առանձնաշնորհումները չեն հարգում: Ձէ՞ որ կա մայիսյան ծառատունկը և հրավառություն Քաղաքում. միստերիա, ծաղրածունների պապի ընտրությունն ու Ֆլամանդական դեսպանները՝ Միջնաքաղաքում, իսկ Համալսարանում՝ ոչի՛նչ:

– Թեև Մորեր հրապարակը բավական ընդարձակ է, – նկատեց լուսամուտագոգում հաստատված ճեմարանականներից մեկը:

– Կորչե՛ն ռեկտորը, հոգաբարձուներն ու մատակարարները,– գոռաց ժոանները:

– Այս երեկո հրավառություն պետք է սարքել Շան-Փայարում՝ տյար Անդրիի գրքերով,– վրա բերեց մի ուրիշը:

– Եվ դպիրների գրակալներո՛վ,– ասաց նրա հարևանը:

– Եվ պահապանների փայտերո՛վ:

– Եվ դեկանների թքամաններո՛վ:

– Եվ մատակարարների բուժետներո՛վ:

– Եվ հոգաբարձուների տաշտերո՛վ:

– Եվ ռեկտորի նստարաններո՛վ:

– Կորչե՛ն,– վերսկսեց պստիկ ժեհանը ժամերգության եղանակով,– կորչե՛ն տյար Անդրին, պահապաններն ու դպիրները, աստվածաբանները, բժիշկներն ու եկեղեցական օրենսգետները, մատակարարները, հոգաբարձուներն ու ռեկտորը:

– Աշխարհի վե՛րջն է սա,– մրթմրթաց տյար Անդրին՝ ականջները խցկելով:

– Ի դեպ, ահավասիկ ռեկտորը, որ անցնում է հրապարակով,– գոչեց պատուհանագոգին նստածներից մեկը:

Այդ խոսքի վրա ով կարող էր, դարձավ դեպի հրապարակը:

– Իսկապե՞ս մեր մեծահարգ ռեկտոր տյար Թիբոն է,– հարցրեց ժեհան Ֆրոլո դյու Մուլենը, որ կառչած լինելով ներքնակողմի սյունից՝ չէր կարող տեսնել դրսի անցուղարձը:

– Այո, այո,– պատասխանեցին մյուս բոլորը,– հենց նա է՝ ռեկտոր տյար Թիբոն:

Իրոք որ ռեկտորը և համալսարանի բոլոր բարձրաստիճան մարդիկ թափորով գնում էին դեսպաններին ընդառաջ՝ այդ պահին կտրելով Արդարադատության հրապարակը: Պատուհանի մեջ սեղմված ճեմարանականները նրանց անցումը դիմավորեցին ծաղրական խոսքերով և հեգնական ծափահարությամբ: Ռեկտորը, որ գնում էր իր պաշտոնակիցների առջևից, կրեց առաջին համազարկը. այդ համազարկը սաստիկ էր:

– Բարի լույս, պարո՛ն ռեկտոր: Պահո՛, բարի լույս եմ ասում, է՛:
– Ինչպե՞ս է եղել, որ այստեղ է այդ հին խաղամուլը. թողե՞լ է ուրեմն իր զառերը:

– Ինչպե՛ս է վարգուս իր ջորու վրա. անասունի ականջները նվազ երկար են, քան ռեկտորինը:

– Պահո՛, բարի լու՛յս, պարո՛ն ռեկտոր Թիբո, *Tybalde aleator*¹³, վաղեմի՛ ապուշ, հի՛ն խաղամուլ:

– Աստվա՛ծ ձեզ պահապան. այս գիշեր վեց-ու-վեց շատ գցե՞լ եք:

– Օ՛, ինչպիսի՛ ճխլտված, արճճագուլյն, ձգված ու ծեծված դեմք՝ խաղի ու զարի պատճառով:

– Ո՛ւր եք գնում այդպես, Թիբո՛, *Tybalde ad dados*¹⁴, մեջքը Համալսարանին դարձրած և դեպի քաղաքը վարգելով:

– Անկասկած գնում է այնտեղ՝ բնակարան վարձելու Թիրոտոդե՛¹⁵ փողոցում, – գոչեց Ժեհան դյու Մուլենը:

Ճեմարանականների ամբողջ խումբը կրկնեց տափակ բառախաղը որոտաձայն ու մոլեգին ծափահարություններով:

– Գնում ենք բնակարան փնտրելու Թիրոտոդե փողոցում, այնպես չէ՞, պարո՛ն ռեկտոր, սատանայի խաղընկե՛ր:

Հետո եկավ Համալսարանի մյուս մեծավորների հերթը:

– Կորչե՛ն պահապանները, կորչե՛ն մահակակիրները:

– Ասա՛ տեսնեմ, Ռոբե՛ն Պուսպեն, ո՞վ է այդ մեկը:

– Ժիրբեր դը Սյուլյին է՝ *Gilbertus de Soliaco*-ն, Օսյուների կուլիջի ղեկվանապետը:

– Ա՛յ, ահա իմ կոշիկը. քո դիրքն ափելի լավ է. առ ու շարտիր դրա դեմքին:

– *Saturnalitas mittimus ecce nuces*¹⁶.

13. Թիրալդ (նույնը և՛ Թիբո)՝ խաղամուլ (լատ.):

14. Թիրալդը զառով (լատ.):

15. Վերևի լատիներենի ֆրանսերենը (*Thibaut aux dés*), բառախաղ:

16. Սատուրնայի (ցոփ տոն հին Հռոմում) առթիվ ահա ձեզ ենք գցում ընկույզներ (լատ.)

– Կորչե՛ն վեց աստվածաբանները իրենց սպիտակ ժամաշապիկներով միասին:

– Մի՞թե դրանք աստվածաբաններ են. ես էլ կարծեցի, թե այն վեց սպիտակ սագերն են, որ սուրբ ժընևիևը տվել է քաղաքին՝ Ռոտոնյիի ավատի փոխարեն:

– Կորչե՛ն բժիշկները:

– Կորչե՛ն գլխավոր և ըստ ցանկության ընտրված նյութերի վիճաբանությունները:

– Գիշերային գլխանոցս քեզ լինի սուրբ ժընևիևի դիվանապետ. ինչպե՛ս իմ իրավունքը կտրեցիր:

– Շատ ճիշտ է. Նորմանդական ազգային բաժնուժ ունեցած իմ տեղը տվեց պստիկ Ասկանիո Ֆալցասպաղային, որ Բուրժի նահանգից է, մինչդեռ նա իտալացի է:

– Անարդար բան է դա,– գոչեցին բոլոր ճեմարանականները:– Կորչի՛ սուրբ ժընևիևի դիվանապետը:

– էյ-հե՛յ, տյա՛ր ժոռաբիմ դը Լադըհոր. էյ-հե՛յ, Լուի՛ Դահուլ. էյ-հե՛յ, Լամբե՛ր Օկտրման:

– Սատանան խեղդի գերմանական ազգային բաժնի մատակարարին:

– Եվ սուրբ Մատուռի վանահայրերին՝ իրենց մոխրագույն թևամուշտակներով հանդերձ՝ *cum tunicis grisis!*

– *Seu de pellibus grisis fourratis!*

– էյ-հե՛յ, արվեստի վարպետնե՛ր: Այստեղ են բոլոր սիրուն սև փիլոնները, բոլոր սիրուն կարմիր փիլոնները:

– Այս բոլորը գեղեցիկ պոչ են կազմում ռեկտորի համար:

– Ասես ծովի հետ ամուսնանալու գնացող վենետիկյան դուքս լինի:

– Տե՛ս, է՛, տե՛ս, ժեհա՛ն, Սուրբ ժընևիևի կանոնիկոսնե՛րը:

– Գրողի ծո՛ցը կանոնիկոսների դասը:

17. Մոխրագույն մուշտակով պճեված (լատ.)

– Արբա Կլոդ Շոա՛ր, վարդապետ Կլոդ Շոա՛ր, հո Մարիամ Ժիֆարդին չե՞ք փնտրում:

– Գլատինյի փողոցում է պարում:

– Պազոտների արքայի անկողինն է գցում:

– Իր չորս լուման է վճարում՝ *quatuor denarius*¹⁸.

– *Aut unum bombum*¹⁹.

– Ուզում եք, որ ձեր քթի տա՛կ վճարի:

– Տեսե՛ք, ընկերնե՛ր, տյար Սիմոն Սանգենն է անցնում, Պիկարդիայի հոգաբարձուն, կինն էլ գավակին:

– *Post equitem sedet atra cura*²⁰.

– Համարձակ եղիր, տյա՛ր Սիմոն:

– Բարի լո՛ւյս, պարո՛ն հոգաբարձու:

– Բարի գիշե՛ր, տիկի՛ն հոգաբարձու:

– Բախտավոր են դրանք. ամե՛ն ինչ տեսնում են, – հառաչելով ասում էր Ժոաննես դե Մոլենդինոն, որ շարունակում էր կախված մնալ իր խոյակի ականթատերեւներից:

Այդ միջոցին Համալսարանի երդվյալ գրադարանապետ տյար Անդրի Մյունիեն կուսացավ արքայական զգեստները մուշտակապատող տյար Ժիլ Լըկորնյուի ականջին.

– Կրկնում եմ, պարո՛ն, աշխարհի վերջն է սա: Ոչ ոք երբևէ չի տեսել ճեմարանականների այսպիսի սանձարձակություններ. դարի անիծյալ գյուտերը՝ թնդանոթները, ֆշչան հրանետները, ուբանետները, մանավանդ տպագրությունը՝ Գերմանիայից եկած այդ մյուս ժանտախտը՝ ամեն ինչի կորստյան պատճառ են դառնում: Էլ ո՛չ ձեռագրեր կլինեն, ո՛չ էլ գրքեր. տպագրությունն սպանում է գրքի առևտուրը: Աշխարհի վերջն է գալիս:

– Ես էլ եմ դա նկատում թավշե գործվածքների կատարելագործումից, – ասաց մուշտակավաճառը:

18. Չորս դինար (լատ.): Ակնարկություն Ավետարանի այրի կնոջ լումային:

19. Կամ թե մեկ ծափ (լատ.):

20. Զիավորի ետևում նստել է մռայլ հոգսը (լատ., Հորացիոսից):

Այդ ընդհանուր ժամացույցը խփեց տասներկուսը:

— Վերջապե՛ս... — գոչեց բազմությունը միաբերան:

Ճեմարանականները լռեցին: Դրան հաջորդեցին մի անասելի խլրտում, ոտքերի ու գլուխների մեծ շարժում, քիթը շունդաձայն մաքրելու ու հազալու ընդհանուր ուժգին որոտ. ամեն ոք տեղավորվեց, ամրացավ, ցցվեց, խմբվեց: Ապա խոր լռություն տիրեց. բոլոր վզերը մնացին ձգված, բոլոր բերանները՝ բաց, բոլոր հայացքները՝ սեեռված մարմարե սեղանի կողմը... Սակայն ոչ մի բան չերեաց այդտեղ: Պալատի բայլի չորս սերժանտները մնում էին այնտեղ՝ պրկված ու անշարժ, ինչպես ներկված արձաններ: Բոլոր հայացքները դարձան դեպի Ֆլամանդական դեսպաններին վերապահված անդաստակը: Դուռը մնում էր փակ, իսկ անդաստակը՝ դատարկ: Այդ բազմությունը վաղ առավոտից երեք բանի էր սպասում՝ ժամը տասներկուսին, Ֆլանդրիայի դեսպանութայնը և միստերիա տեսնելուն: Տասներկուսը եկել էր ճիշտ ժամին:

Այժմ արդեն չափ-սահման անցավ:

Սպասեցին մեկ, երկու, երեք, հինգ ըոպե, քառորդ ժամ. ոչ ոք չէր գալիս: Անդաստակը մնում էր դատարկ, թատրոնը՝ լուռ: Բայց անհամբերութայնը հաջորդել էր բարկությունը: Շրջան էին կատարում ցասումնալի խոսքեր, ճիշտ է՝ դեռ ցած ձայնով: — Միստերիա՛ն, միստերիա՛ն. — մրմնջում էին խուլ կերպով: Գլուխների մեջ խմորում էր կատարվում: Մրրիկը, որ դեռ մռնչում էր միայն, ծփում էր այդ բազմության վրա: Եվ ահա առաջին կայծը նետեց Ժեհան դյու Մուլենը:

— Միստերիա՛ն, և թո՛ղ գրողի ծոցը գնան Ֆլամանդացիները, — գոչեց նա ամբողջ ուժով՝ օձի պես գալարվելով իր խոյակի շուրջը:

Ժողովուրդը ծափ տվեց:

— Միստերիա՛ն, — կրկնեց բազմությունը, — իսկ Ֆլանդրիան գրողի ծոցը:

— Մեզ պետք է միստերիան, և իսկույն, — շարունակեց ճեմարանականը. — ապա թե ոչ՝ ես կարծում եմ, որ պետք է կախենք պալատի բայլին՝ կատակերգի ու մորալիտեի փոխարեն:

— Շա՛տ լավ է ասված, — գոռաց ժողովուրդը, — և կախաղան
Հանելը սկսենք սերժանտներին:

Ցնծության ժխոր Հաջորդեց դրան: Խեղճ չորս սերժանտներն
սկսեցին գույնը գցել և նայել իրար: Բազմությունը շարժվում էր
սերժանտների կողմը, և նրանք արդեն տեսնում էին, թե ինչպես փայ-
տաշեն դուրարեկ ճաղերը, որ իրենց բաժանում էին բազմությունից,
ծովում ու փորները դուրս են գցում ամբոխի ճնշման տակ:

Բոպեն ճգնաժամային էր:

— Հո՛ւպ տվեք, հո՛ւպ տվեք, — գոռում էին ամեն կողմից:

Այդ բոպեին բեմի Հանդերձարանի գորգածածկույթը, որ մենք
նկարագրեցինք քիչ վերև, բարձրացավ և թողեց անցնի մի անձնա-
վորություն, որի տեսքը միայն անմիջապես կանգնեցրեց բազմու-
թյանը և կարծես կախարդությամբ՝ զայրույթը վերածեց Հետա-
քրքրասիրության:

— Լուությո՛ւն, լուությո՛ւն:

Անձնավորությունը շատ քիչ գոտեպնդված և բոլոր անդամներով
դողալով, առաջացավ մինչև մարմարե սեղանի եզրը՝ անելով բազմա-
թիվ խոնարհություններ, որոնք, ինչքան ավելի էր նա մոտենում,
այնքան ավելի նմանվում էին երկրպագության:

Այնուամենայնիվ, Հանդարտությունը գրեթե Հաստատվեց:
Մնում էր միայն այն թեթև շշուկը, որ միշտ էլ բարձրանում է
բազմության լուությունից:

— Պարո՛ն քաղաքացիներ, — ասաց նա, — և տիկի՛ն քաղաքացիու-
հիններ, մենք շուտով պատիվ կունենանք արտասանել և նորին
սրբազնություն պարոն կարգինալի առաջ ներկայացնել չափազանց
գեղեցիկ մի «մորալիտե», որի վերնագիրն է «Տիկին սուրբ կույս Մա-
րիամի արդար դատաստանը»: Յուպիտերի դերը կատարելու եմ ես:
Նորին սրբազնությունն այս պահին ուղեկցում է Ավստրիայի մեծա-
հարգ պարոն դքսի դեսպանությանը, որն այս իսկ ժամին կանգ է
առել լսելու, Բողե դարպասի մոտ, Համալսարանի պարոն ռեկտորի

Հանդիսավոր ճառը: Հենց որ սրբազնագույն կարդինալը ժամանի, մենք կսկսենք:

Կասկածից դուրս է, որ միմիայն Յուզիտերի միջամտությունը կարողացավ փրկել Արդարադատության պալատի բայլի չորս տարաբախտ սերժանտներին:

Եթե մենք պատիվ ունենայինք անձամբ հորինելու այս խիստ ճշմարտացի պատմությունը և հետևաբար՝ դրա համար պատասխանատու լինեինք մեր տիկին քննադատության առաջ, ապա այս պահին մեր դեմ չէր, որ կկարողանային վկայակոչել այս դասական պատվիրանը՝ *Nec Dues intersit*²¹.

Վերադառնալով մեր նյութին՝ նշենք, որ տեր Յուզիտերի զգեստը չափազանց գեղեցիկ էր և պակաս չնպաստեց խաղաղեցնելու բազմությունը՝ գրավելով նրա ամբողջ ուշադրությունը: Նա հագել էր սև թավչով ծածկված օղակահյուս զրահ, թավչի վրա՝ ոսկեփայլ գնդիկներ, գլուխը դրել էր ոսկեզօծված արծաթե կոճակներով զարդարուն երկծայր գլխարկ: Եվ եթե չլինեին կարմիր ներկը և լայն մորուսը, որոնցից յուրաքանչյուրը ծածկում էր նրա դեմքի կեսը, եթե չլինեիր նրա բռնած ոսկեզօծ ստվարաթղթե գլանաձև փաթեթը, որ ծածկված էր զանակներով ու թելերից կախված փայլուն մանր իրերով, և որի մեջ վարժ աչքը դյուրությամբ կկուահեր կայծակը, եթե չլինեին հունական ձևով ժապավենապատված մսագույն ոտքերը, ապա իր խիստ կեցվախճքով կարող էր դիմանալ Բերրիի պարոն դքսի զորամասի որևէ բրետայնցի նետածիգի հետ համեմատվելուն:

21. Աստված էլ թող չմիջամտի (լատ.):

ԳԻՆԻ ԳՐԵՆԳՈՒԱՐ

Սակայն երբ նա ճառում էր այդպես, նրա հաղուստների առաջացրած միահամուռ բավարարութիւնն ու հիացմունքը հետզհետեւ փարատվում էին նրա խոսքերից. և երբ նա հասավ չարաբաստիկ եզրակացութեանը՝ «Հենց որ սրբազնագույն կարգիւսլը ժամանի, մենք կսկսենք», նրա ձայնը կորավ հայհոյի որոտի մեջ:

— Անմիջապես սկսեցե՛ք միստերիան, իսկույն ևեթ միստերիան, — գոռում էր ժողովուրդը: Եվ բոլորի ձայների վրայով լսվում էր ժոաննես դե Մոլենդիինոյի ձայնը, որ ծակում-անցնում էր ժխորը, ինչպես դուդուկը Նիմի նվագախմբում: — Իսկո՛ւյն ևեթ սկսեցեք, — ճշում էր ճեմարանականը:

— Կորչեն Յուպիտերն էլ, կարդինալ դը Բուրրոնն էլ. — գոռում էին Ռոբեն Պուսպենը և պատուհանում ծվարած մյուս ճեմարանականները:

— Իսկո՛ւյն ևեթ մորալիտեն, — կրկնում էր բազմութիւնը. — հե՛նց հիմա, անմիջապե՛ս, ապա թե ոչ պարկ ու պարան կատակերգուներին ու կարդինալին:

Ինեզ Յուպիտերը մոլորուն հայացքով, չչմած, կարմիր ներկի տակից գույնը գցած՝ ձեռքից բաց թողեց կայծակը, հանեց գլխարկը և խոնարհուեցին անելով ու դողալով՝ սկսեց թոթովել:

— Նորին սրբազանութիւնը... դեսպանները... տիկին Մարգարիտ Յլանդրիացին...:

Նա չէր իմանում՝ ինչ ասի: Ներքուստ վախենում էր կախազան հանվելուց:

Վախենում էր խաժամուժից, որ կկախի իրեն՝ սպասել տալու համար. վախենում էր կարգինալից, որ կախել կտա իրեն՝ չսպասելու համար: Երկու կողմից էլ նույն անդունդն էր տեսնում՝ կախաղանը:

Բարեբախտաբար, մի մարդ եկավ ծանր դրուժյունից հանելու նրան ու հանձն առնելու պատասխանատվությունը:

Ճաղի այն կողմը, մարմարե սեղանի շուրջը թողած ազատ տեղում կանգնած մի անձնավորություն, որին ոչ ոք դեռ չէր նկատել, որովհետև նրա երկար ու բարակ մարմինը ամբողջովին պատսպարված էր որևէ տեսողական ճառագայթից այն սյան տրամաչափով, որին հենվել էր, այդ անձնավորությունը, կրկնում ենք, բարձրահասակ, նիհար, գունատ, խարտյաչ մազերով, դեռ երիտասարդ, թեև ճակատից ու այտերից արդեն կնճռոտած, վալյուն աչքերով ու ժպտադեմ, հնուժյունից փայլող և քրքրված սև սերժե հագուստով մի մարդ էր, որ մոտեցավ մարմարե սեղանին և նշան արեց խեղճ տառապյալին: Բայց նա չափագանց շփոթված լինելով՝ չէր տեսնում:

Նորեկը մի քայլ ևս առաջացավ:

– Յուպիտե՛ր, ի՛մ սիրելի Յուպիտե՛ր,– ասաց նա:

Բայց նա ոչինչ չէր լսում:

Վերջապես բարձրահասակ խարտիչահերը համբերությունը հատած՝ համարյա թե գոռաց նրա քթի տակ.

– Միչե՛լ ժիրորն:

– Ո՛վ է կանչում ինձ,– հարցրեց Յուպիտե՛րը՝ կարծես հանկարծակի արթնացած:

– Ես,– պատասխանեց սևազգեստ անձնավորությունը:

– Աս՛,– գոչեց Յուպիտե՛րը:

– Սկսեցեք, իսկույն ևեթ,– ասաց նորեկը:– Բավարարեցիք ժողովրդին. ես հանձն եմ առնում մեղմացնել պարոն բայլին, որը կմեղմացնի պարոն կարդինալին:

Յուպիտե՛րը թեթևացած շունչ քաչեց:

– Տյա՛րք իմ քաղաքացիներ,– ամբողջ կրծքով գոռաց նա բազմությանը, որ շարունակում էր ալմկել,– Հե՛նց հիմա կսկսենք:

– *Evoe, Jupiter Plauidite, cives!*²² – գոչեցին ճեմարանականները:

– Յնծությո՛ւն, ցնծությո՛ւն,– գոռաց ժողովուրդը:

Խլացուցիչ ծափահարություններ թնդացին, և Յուպիտերն արգեն մտել էր գորգավարագուլրի ետեւը, երբ դահլիճը դեռ դղրդում էր ցնծագին բացականչություններից:

Իսկ անծանոթ անձնավորությունը, որ այնպիսի մոգական ձևով փոթորիկը մեղմ ծփանք էր դարձրել, ինչպես մեր ծերուկ ու սիրելի Կորնելյն է ասում, նորից Համեստորեն քաշվել էր իր սյան կիսասավերի մեջ և անկասկած առաջվա պես անտեսանելի, անշարժ ու լուռ կմնար այդտեղ, եթե նրան դուրս չբերեին Հանդիսատեսների առաջին շարքում կանգնած երկու դեռաստի կանայք, որոնք նկատել էին նրա խոսակցությունը Միշել ժիրոյն-Յուպիտերի հետ:

– Պատվելի՛,– ասաց նրանցից մեկը՝ նշան անելով, որ մոտենա...

– Սո՛ւս կացեք, ի՛մ սիրելի Լիենարդ,– ասաց սիրուն, թարմ և տոնական զգեստներով զուգված-զարդարված նրա Հարեանուհին:– Դպիր չէ դա, այլ աշխարհիկ մարդ, ուստի և չպետք է ասել «պատվելի», այլ «տյար»:

– Տյա՛ր,– ձայն տվեց Լիենարդը:

Անծանոթը մոտեցավ ճաղին:

– Ի՞նչ եք ուզում ինձանից, օրիորդնե՛ր,– ասաց նա Հաճոյակամությամբ:

– Օ՛, ոչինչ,– պատասխանեց Լիենարդը՝ խիստ շփոթվելով.– իմ Հարեանուհին՝ ժիսքետ յա-ժանսինեն է ուզում մի բան Հարցնել ձեզ:

– Ո՛չ, ո՛չ,– ասաց ժիսքետը՝ սաստիկ կարմրելով.– Լիենարդն էր՝ ձեզ ասաց «պատվելի», ես էլ ասացի, թե պետք է «տյար» կոչել:

Մանկահասակ աղջիկները Հայացքները խոնարհեցին: Խարտյաչ մազերով մարդը, որի ուզածն էլ հենց խոսակցության բռնվելն էր, նայում էր ժպտագին:

22. Յնծա՛, Յուպիտեր, ծափահարեցե՛ք քաղաքացիներ (լատ.):

– Ուրեմն ինձ ասելու բան չունե՞ք, օրիորդնե՛ր:

– Օ՛, բացարձակապես ոչինչ, – պատասխանեց ժիսքետը:

– Ոչինչ, – ասաց Լիենարդը:

Բարձրահասակ, խարտյաչ երիտասարդը մի քայլ արեց՝ ետ գնալու համար, սակայն հետաքրքրասեր աղջիկները իրենց որսը բաց թողնելու ցանկություն չունեին:

– Տյա՛ր, – ասաց աշխուժուրեն ժիսքետը բացվող ջրարգելակից վազող առվի կամ իր որոշումը կայացրած կնոջ թափով. – ուրեմն դուք ճանաչո՞ւմ եք այն գինյութին, որը տիկին սուրբ կույսի դերը պիտի կատարի միստերիայի մեջ:

– Ուզում եք ասել Յուպիտերի՞ դերը, – հարցրեց անծանոթը:

– Այո, իհարկե, – միջամտեց Լիենարդը: – Ի՛նչ հիմար աղջիկ ես: Ուրեմն դուք ճանաչո՞ւմ եք Յուպիտերին:

– Միչեկ ժիբրոնի՞ն, – հարցրեց անծանոթը. – այո, տիրուհի՛:

– Ի՛նչ փառահեղ մորուս ունի, – նկատեց Լիենարդը:

– Գեղեցի՞կ բան է լինելու այն, ինչ որ դրանք պիտի ասեն այստեղ, – ամաչկուս կերպով հարցրեց ժիսքետը:

– Շա՛տ գեղեցիկ, օրի՛որդ, – պատասխանեց անծանոթն առանց մազաչափ տատանվելու:

– Իսկ ի՞նչ պիտի լինի սյդ, – հարցրեց Լիենարդը:

– «Տիկին սուրբ կույսի արդար դատաստանը»՝ մորալիտե, եթե հաճելի է, օրի՛որդ:

– Աա՛, այդ սարերը բան է, – ասաց Լիենարդը:

Տիրեց կարճատև լուռություն, որը խախտեց անծանոթը.

– Բոլորովին նոր մորալիտե է դա և դեռ չի ներկայացվել:

– Ուրեմն սա այն նույնը չէ, – ասաց ժիսքետը, – որ ներկայացրին երկու տարի առաջ, պապական պատվիրակի ժամանման օրը, և որի մեջ երեք գեղեցիկ աղջիկ դեր ունեին...

– Սիրենաների, – վրա բերեց Լիենարդը:

– Եվ բոլորովին մերկ էին, – ավելացրեց երիտասարդը:

Լիենարդը ամոթխածութեամբ հայացքը խոնարհեց: Ժիսքիտը նայեց նրան և նույնպես աչքերը կախեց: Երիտասարդը ժպտալով շարունակեց.

– Խիստ զվարճալի տեսարան էր այդ: Այսօրվանը մորալիտե է՝ հորինված հատկապես Ֆլանդրիայի օրիորդի համար:

– Հովվերգներ հրգելո՞ւ են, – հարցրեց ժիսքիտը:

– Փա՛հ, – գոչեց անծանոթը. – մորալիտեի մե՞ջ: Ժանրերը չպետք է չփոթիլ: Եթե կատակերգ լինիր, իհա՛րկե:

– Ափսո՛ս, – նկատեց ժիսքիտը: – Այն օրը Պոնտոյի աղբյուրի մոտ կային վայրենի տղամարդիկ ու կանայք, որ կովում էին իրար դեմ, զանազան դիրքեր ընդունում՝ հոգևոր փոքրիկ երգեր ու հովվերգեր երգելով:

– Այն, ինչ պատշաճ է պապական պատվիրակի համար, – բա՜վական չորութեամբ ասաց անծանոթը, – պատշաճ չէ իշխանուհու համար:

– Իսկ նրանց մոտ, – ավելացրեց Լիենարդը, – բազմաթիվ փողային գործիքներ մրցակցում էին իրար դեմ և որոտընդոստ եղանակներ նվազում:

– Անցորդներին էլ զովացնելու համար, – շարունակեց ժիսքիտը, – աղբյուրի երեք բերաններից ցայտում էին գինի, կաթ ու հիպոկրաս²¹, և ուզողն էլ խմում էր:

– Իսկ Պոմսոյից մի քիչ ներքև, – վրա բերեց Լիենարդը, – Երրորդութեան եկեղեցում, ներկայացնում էին Քրիստոսի չարչարանքը՝ առանց խոսքի:

– Շա՛տ լավ եմ հիշում, – գոչեց ժիսքիտը: – Աստված խաչի վրա, աջից ու ձախից էլ երկու ավազակները:

Այստեղ արդեն երկու շաղակրատները ոգևորվելով պարոն պատվիրակի ժամանումը վերհիշելուց՝ սկսեցին միաժամանակ խոսել:

23. Եաքարով ու կինամոնով (դարչին) համեմված գինի:

– Իսկ ավելի այն կողմը, Նկարիչների դարպասում, կային չափազանց փարթամ հագնված այլ անձինք:

– Իսկ Սուրբ Անձեղության աղբյուրի մոտ, հիշո՞ւմ ես այն որսորդին, որ շների ու որսորդական շեփորների աղմուկ-աղաղակով հետապնդում էր եղնիկին:

– Հապա Փարիզի սպանդանոցո՞ւմ. այն լուսակերտները, որ պատկերում էին Դիեպի բանտը:

– Եվ երբ պատվիրակն անցավ, հիշո՞ւմ ես, Ժիսքե՛տ, գրոհեցին այդ բանտի վրա ու բոլոր անգլիացիների վիզը կտրեցին:

– Իսկ ի՞նչ գեղեցիկ դերակատարներ կային Շատլեի դարպասի մոտ:

– Հապա Լուժայսփոխների կամուրջի դիմաց. ինչպե՛ս էին գուգել-գարդարել:

– Իսկ երբ պատվիրակն անցնում էր, բաց թողին ավելի քան երկու հարյուր երկվեցյակ ամեն տեսակ թռչուններ. որքա՛ն գեղեցիկ էր, Լիենա՛րդ:

– Այսօր ավելի գեղեցիկ կլինի, – ասաց վերջապես նրանց զրուցակիցը, որ կարծես անհամբերությամբ էր լսում:

– Վստահեցնո՞ւմ եք մեզ, որ այս միստերիան գեղեցիկ կլինի, – հարցրեց Ժիսքետը:

– Անկասկած, – պատասխանեց երիտասարդը, ապա որոշ փրունությամբ ավիացրեց. – օրիորդնե՛ր, ես եմ դրա հեղինակը:

– Իսկապե՞ս, – գոչեցին աղջիկները խիստ ապշած:

– Իսկապես, – պատասխանեց բանաստեղծը՝ թեթևակի ձգվելով. – այսինքն երկուսն ենք՝ Ժեհան Մարշանը, որ սղոցել է տախտակները և պատրաստել թատրոնի հարթակն ու լաստակները, ես էլ գրել եմ պիեսը: Իմ անունն է Պիեր Գրենգուար:

«Սիդ»-ի հեղինակն ավելի հպարտությամբ չէր ասի՝ Պիեր Կոռնելյ:

Մեր ընթերցողները կարողացան նկատել, որ բավական ժամանակ անցավ այն ըրպեհից, երբ Յուսլիտերը նորից մտավ վարազույրի տակ,

մինչև այն վայրկյանը, երբ նոր մորալիտեի հեղինակն այդպես հանկարծակի հայտնվեց Ժիսքեթի և Լիենարդի միամիտ հիացմունքին: Նշանակալից է այն, որ մի քանի ըոպե առաջ այնքան հուզված բազմությունն այժմ հեզությամբ սպասում էր՝ հավատալով դերասանին. իսկ դա ապացուցում է այն մշտնջենական և դեռ այսօր էլ մեր թատրոններում զգացվող ճշմարտությունը, որ հասարակությանը համբերությամբ սպասել տալու լավագույն միջոցն այն է, որ հավաստես նրան, թե անմիջապես սկսելու են:

Բայց և այնպես ճեմարանական ժողովները էլ էր քնել:

— Էյ-հե՛յ,— գոռաց նա հանկարծ այն խաղաղ սպասման պահին, որ հաջորդել էր ալեկոծությանը:— Յուպիտե՛ր, տիկի՛ն սուրբ կույս, սատանայի ձեռնածունե՛ր, ծաղրո՞ւմ եք մեզ, ի՞նչ է: Պիե՛սը, պիե՛սը, սկսեցեք, թե չէ մենք կվերսկսենք:

Դրանից ավելին պետք էլ էր:

Փայտակերտի ներսից լսվեց բարձր ու ցածր գործիքների նվագ, վարագույրը բարձրացավ, այնտեղից դուրս եկան խայտարղետ ներկված ու շպարված չորս դերակատար, բարձրացան բեմի թեք ելարանը և հասնելով վերին հարթակին՝ շարքով կանգնեցին հասարակության դիմաց և խոնարհվելով ողջունեցին նրան: Այդ ժամանակ լռեց սիմֆոնիան. սկսվում էր միստերիայի ներկայացումը:

Չորս պերսոնաժները, իրենց արած խոնարհությունների վարձատրությունը ծափահարություններով առատորեն հավաքելուց հետո, երկյուղած լռության մեջ սկսեցին նախբզանքը, որից մենք հաճությամբ կփրկենք ընթերցողին: Առավել ևս, ինչ մեր օրերում էլ դեռ տեղի է ունենում, հասարակությունն ավելի շատ զբաղվում էր նրանց զգեստներով, քան թե դերի խոսքերով: Եվ իրականում արդարացի էր դա: Չորսն էլ հազել էին կեսը դեղին, կեսն սպիտակ զգեստներ, որոնք իրարից տարբերվում էին միայն գործվածքի տեսակով. առաջինը ոսկեգույն և արծաթագույն դիպակ էր, երկրորդը՝ մետաքսե, երրորդը՝ բրդե, չորրորդը՝ քաթանե: Առաջին պերսոնաժը աջ

ձեռքում բռնել էր սուր, երկրորդը՝ երկու ոսկե բանալի, երրորդը՝ կշեռք, չորրորդը՝ բահ: Եվ որպեսզի օղնած լինեին այն ծուլ մտքերին, որոնք այդ խորհրդանշանների որոշակիությունը հանդերձ, հասու էին լինի դրանց իմաստին, սպա խոշոր, սև տառերով ասեղնագործել էին դիսկակե զգեստի քղանցքին՝ իմ անունն է ազնվականություն, մետաքսե զգեստի քղանցքին՝ իմ անունն է Հոգևորականություն, բրդե զգեստի քղանցքին՝ իմ անունն է վաճառականություն, քաթանե զգեստի քղանցքին՝ իմ անունն է երկրագործություն: Երկու արու այլաբանությունների սեռը որոշակի նշված էր ամեն մի խելացի հանդիսատեսի համար իրենց ոչ այնքան երկար պարեզոտով և գլխին դրած գդակներով, մինչդեռ երկու իգական այլաբանություններն ավելի երկար պարեզոտով և եզրավոր գլխարկով էին:

Հանդիսատեսը չափազանց դժկամ մարդ պիտի լիներ, որպեսզի նախերգանքի բանաստեղծության միջոցով չհասկանար, որ Երկրագործությունը ամուսնացած էր Վաճառականության, իսկ Հոգևորականությունը՝ Ազնվականության հետ, և որ երկու երջանիկ գույգն էլ համայնորեն ունեին մի սքանչելի ոսկե գելֆին²⁴, որը հավակնում էին տալ միայն ամենագեղեցիկ աղջկան: Ուստի և նրանք ճանապարհ էին ընկել՝ ման գալու աշխարհում ու փնտրելու այդ գեղեցկուհուն: Եվ հաջորդաբար մերժելով Գուլկոնդի թագուհուն, Տրապիզոնի իշխանուհուն, Թաթարստանի մեծ խանի դստերը և այլն և այլն՝ Երկրագործությունն ու Հոգևորականությունը, Ազնվականությունն ու Վաճառականությունը եկել էին հանգստանալու Արգարադատության պալատի մարմարե սեղանի վրա՝ պատվավոր լսարանի առաջ, թափելով այնքան խմաստալից խոսքեր ու խրատներ, որ այդ ժամանակ կարելի էր շռայլել արվեստների ֆակուլտետի քննություններին, այնքան սովեստություն, սահմանում, պատկեր ու գործողություն, որ ուսանողները կարող էին գիտական առաջին աստիճանն ստանալ:

24. Այս բարը երկիմաստ է. նշանակում է և՛ դելֆին, և՛ թագաժառանգ (դոֆեն՝ dauphin):

Այս բոլորն իրոք շատ գեղեցիկ էր:

Սակայն այդ բազմության մեջ, որի վրա չորս այլաբանություններն իրար հետ մրցելով՝ մետաֆորների հորձանք էին թափում, չկար ավելի ուշադիր մի ականջ, ավելի բաբախուն սիրտ, ավելի խստահայաց աչք, ավելի ձգված վիզ, քան հեղինակ-բանաստեղծի, այն ազնիվ Պիեռ Գրենգուլարի աչքը, ականջը, վիզն ու սիրտը, որ մի րոպե առաջ չէր կարողացել դիմադրել իր անունը սիրուն աղջիկներին հայտնելու ուրախությունը: Նա մի քանի քայլ հեռանալով աղջիկներից՝ վերադարձել էր իր տեղը, սյան ետևը և այնտեղից լսում էր, դիտում, ըմբռնվում: Այն բարյացակամ ծափահարությունները, որոնցով դիմավորել էին նախերգանքի սկիզբը, դեռ թնդում էին նրա ներսում, և նա ամբողջովին սուզվում էր այն վերացած հայեցողության մեջ, որով հեղինակը տեսնում է, թե ինչպես իր մտքերը մեկիկ-մեկիկ դերակատարի բերանից ընկնում են ընդարձակ լսարանի լռության մեջ: Արժանահարգ Պիեռ Գրենգուլար:

Որքան էլ դժվար լինի մեզ համար, այնուամենայնիվ, պիտի ասենք, որ այդ առաջին հափշտակությունը շուտով խուսվից: Հազիվ էր Գրենգուլարն իր շրթունքները մուտեցրել հրճամքի ու հաղթանակի այդ արբեցնող թասին, որ դառնություն մի կաթիլ խառնվեց դրան:

Ցնցոտիների մեջ կորած մի մուրացկան, որ սեղմ խցկիկով բազմության մեջ՝ չէր կարողանում ողորմություն հավաքել և հավանաբար բավական հատուցում չէր ստացել իր հարևանների գրպաններից, մտածել էր թառել որևէ տեսանելի տեղ՝ մարդկանց հայացքներն ու ողորմությունը գրավելու համար: Ուստի և նախերգանքի առաջին տողերի ժամանակ, հատուկ տախտակամածի սյուների օգնությամբ մագլցել-հասել էր այն քիվին, որը եզերում էր ճաղերի ներքևի մասը: Եվ այդտեղ նստած՝ բաղմության ուշադրություն ու կարեկցանքն էր հայցում իր ցնցոտիներով և աջ բաղուկը ծածկող զգվիլի վերքով: Նկատենք նաև, որ ոչ մի բառ չէր ասում նա:

Նրա լուսթյունը թույլ էր տալիս, որ նախերգանքն անխափան ընթանա, և ոչ մի դգալի անկարգություն չէր առաջանա, եթե չար բախտը չուզենար, որ ճեմարանական ժոռանները իր սյան բարձունքից նկատի մուրացկանին և նրա ծեփծեփումները: Խելահեղ մի ծիծաղ բռնեց երիտասարդ խեղկատակին, որ առանց մտահոգվելու, թե ներկայացումը կրնդ հատվի և կլսանգարվի ընդհանուր կենտրոնացումը, ուրախ-զվարթ գոչեց.

— Պա՛հ, նայեցեք այդ ցավատանջին, որ ողորմություն է խնդրում:

Ով որ քար է գցել գորտերով լի ճահճի մեջ կամ հրացան է կրակել թռչունների երամի վրա, կարող է պատկերացնել, թե ի՞նչ ազդեցություն գործեց այդ անտեղի խոսքը ընդհանուր ուշադրության պահին: Գրեհգուարը սարսուռաց դրանից, ինչպես էլեկտրական ցնցումից: Նախերգանքն ընդոստ կտրվեց, և բոլոր գլուխներն էլ խառնիխուռն շրջվեցին դեպի մուրացկանը, որ մտքով իսկ չանցկացնելով չփոթվել, բնիք հավաքելու մի լավ առիթ տեսավ այդ պահարանի մեջ և աչքերը կիսափակ, ողբագին ձայնով սկսեց կանչել.

— Ողորմացե՛ք խեղճ աղքատին:

— Վա՛յ, տո՛... հոգիս վկա, Կլուպեն Տրույֆուն է դա,— շարունակեց ժոռանները:— Պահո՛, ախպե՛րս, քո վերքը սրունքիդ վրա ուրեմն նեղո՞ւմ էր քեզ, որ փոխադրել ես թևիդ վրա:

Այդ ասելով՝ նա կապիի ճարպկությամբ մի մանր սպիտակ դրամ գցեց այն թաղիքե ճենճոտ գլխարկի մեջ, որ պարզել էր մուրացկանն իր հիվանդ ձեռքով: Մուրացկանն առանց շարժվելու և աչքը թարթելու՝ ընդունեց ողորմությունն ու ծաղրը և լալահառաչ շեշտով շարունակեց.

— Ողորմացե՛ք խեղճ աղքատին:

Այս պատահարը բավական զվարճացրեց հանդիսատեսներին, որոնց մեծ մասը, Ռոբին Պուսպենի և բոլոր ճեմարանականների գլխավորությամբ, ցնծագին ծափահարում էր այն արտառոց դուետը, որը

նախերգանքի կեսին հանպատրաստից սկսել էին ճեմարանականն իր ճղճղան ձայնով և մուրացկանը իր անայլայլ սաղմոսերգությամբ:

Խիստ դժգոհ էր Գրենգուարը: Առաջին ապշանքից սթափված՝ նա մեծ ջանք թափելով գտնում էր բեմում գտնվող չորս դերակատարներին.

– Շարունակեցե՛ք, գրո՛ղը տանի, շարունակեցե՛ք, – առանց նույնիսկ արժանի համարելու արհամարհական մի հայացք նետել ընդհատողներին:

Այդ բոպեին նա զգաց, որ քաշում են իր վերնազգեստի քղանցքից. նա բավական դժկամ ու վրդովված շուռ եկավ և դժվարությամբ կարողացավ ժպտալ: Բայց ժպտալն անհրաժեշտ էր, որովհետև ժիսքետ լա-ժանսիենի գեղեցիկ բազուկը ճաղի արանքից մտած ներս՝ այդ ձևով հայցում էր նրա ուշադրությունը:

– Շարունակե՛ն պիտի, պարո՛ն, – հարցրեց դեռատի աղջիկը:

– Անշուշտ, – պատասխանեց Գրենգուարը բավականին վիրավորված այդ հարցից:

– Այդ դեպքում, պարո՛ն, – շարունակեց ժիսքետը, – սիրալիրությունն չէիք ունենա բացատրելու ինձ...

– Թե ինչ պիտի ասե՛ն, – ընդհատեց Գրենգուարը: – Դե՛ լավ, լսեցեք:

– Ոչ, – վրա բերեց ժիսքետը, – այլ այն, ինչ ասացին մինչև հիմա: Գրենգուարն ընդոստ շարժում գործեց այն մարդու նման, որի բաց վերքին դիպչում են:

– Սե ցա՛վը տանի քեզ պես հիմար ու բթամիտ աղջկան, – ասաց նա առամների արանքից:

Այդ բոպեից սկսած ժիսքետը ջնջվեց նրա մտքից:

Մինչ այս, մինչ այն՝ դերակատարները հնազանդվել էին նրա հրամանին, և հասարակությունը տեսնելով, որ նրանք սկսում են դերակատարումը, սկսեց լսել՝ բավական շատ գեղեցկություններ կորցնելով այդպես անակնկալ ձևով կտրված պիեսի երկու մասերի

միակցելուց: Գրենդոուարը խիստ կամացուկ խորհրդածոււմ էր այդ մասին: Այնուամենայնիվ, քիչ-քիչ հանդարտութիւնը վերահաստատուեց. ճեմարանականը յուռ էր, մուրացկանը հաշվում էր իր գլխարկի փոքր գումարը, և պիեսը նորից գրավեց հանդիսատեսների ուշադրութիւնը:

Իրականում շատ գեղեցիկ աշխատութիւն էր դա, և մենք կարծում ենք, որ այսօր էլ կարող էին հիանալի օգտվել դրանից՝ որոշ բաներ մշակելուց հետո: Նրա ֆարսույան, որ մի քիչ երկար ու մի քիչ դատարկ էր, այսինքն այն ժամանակվա կանոններով էր, պարզ էր, և Գրենդոուարը իր խղճի միամիտ սրբարանում հիանում էր դրա հստակութիւնից: Ինչպես հեշտ է կռահել, այլաբանական չորս սկրտնափները մի քիչ հոգնել էին աշխարհի երեք մասերը չափչփելուց՝ առանց կարողանալու պարտ ու պատշաճ ազատվել իրենց ոսկե դելֆինից: Դրանից հետո սկսվում էր հրաշալի ձկան ներքողը՝ հազարավոր նուրբ ակնարկներով Մարգարիտ Ֆլանդրիացու երիտասարդ նշանածի հասցեին, որ այդ ժամանակ տխուր-տրտում միայնակ ապրում էր Ամբուլազի դղյակում և ամենեւին չէր կասկածում, որ երկրագործութիւնն ու Հոգեորականութիւնը, Ազնվականութիւնն ու Վաճառականութիւնը իր պատճառով շուրջերկրյա ճանապարհորդութիւն էին կատարել: Վերոհիշյալ դելֆինը գեղեցիկ էր, երիտասարդ, ուժեղ և մանավանդ (արքայական բոլոր առաքինութիւնների հիանալի՝ աղբյուր) Ֆրանսիայի առյուծի որդին էր: Ես հայտարարում եմ, որ այս համարձակ փոխաբերութիւնը սքանչելի է, և այլաբանութեան ու արքայական հարսնեղբայրութեան օրվա թատրոնի բնական պատմութիւնը ամենեւին չի շփոթվում, որ առյուծի տղան դելֆին է լինում: Ահա հենց այս հազվադեպ և մանվածապատ խառնուրդներն էլ ապացուցում են հեյլինալի ներշնչումը: Այնուամենայնիվ, քննադատութեանն էլ բաժին հանելով՝ ասենք, որ բանաստեղծը կարող էր այդ գեղեցիկ միտքը զարգացնել ավելի պակաս, քան երկու հարյուր տողի մեջ: Ընչտ է նաև, որ միստերիան պետք է տևեր

ժամը տասներկուսից մինչև չորսը՝ ըստ պարոն պրեռոյի կարգադրու-
թյան, հետեաբար՝ որևէ բան պետք է ասվեր: Անկախ դրանից՝
համբերութեամբ լսում էին:

Եվ հանկարծ օրիորդ Վաճառականութեան և տիկին Ազնվակա-
նութեան միջև ծագած վեճի ճիշտ կեսին, այն բոլորին, երբ տյար Երկ-
րագործութեանն արտասանում էր հետևյալ զմայլելի չափատողը՝

*Onc ne vis dans les bois bête plus triomphante*²⁵,

հատուկ անդաստակի դուռը, որ մինչ այդ այնքան անպատեհ կեր-
պով մնացել էր փակ, բացվեց է՛լ ավելի անպատեհ, և բարապանի
հնչեղ ձայնը անսպասելիորեն հայտարարեց. «Նորին սրբազնութեան
գերապատիվ կարդինալ դը Բուրբոն»:

III

ՊԱՐՈՆ ԿԱՐԴԻՆԱԼԸ

Ինե՛ղճ Գրենզուար: Սեն-Փանի բոլոր խոշոր, կրկնակ ճայթուկնե-
րի թնդյունը, քսան հրահարի համազարկը, Բիյի աշտարակի այն
նշանավոր հրանոթի որոտը, որ Փարիզի պաշարման ժամանակ, 1465
թվականի սեպտեմբերի 29-ի կիրակի օրը, մի հարվածով յոթ բուր-
գուղացի սպանեց, Տամպլի դարպասի մոտ ամբարված թնդանոթա-
յին ամբողջ վառողի պայթյունը պակաս սաստկութեամբ կոթժացնեին
նրա ականջը այդ հանդիսավոր ու դրամատիկական պահին, քան
ինչ-որ բարապանի բերանից դուրս եկած հետևյալ մի քանի բառերը.
«Նորին սրբազնութեան գերապատիվ կարդինալ դը Բուրբոն»:

Դրա պատճառը բնավ էլ այն չէր, որ Պիեր Գրենզուարը վախե-
նում էր պարոն կարդինալից կամ արհամարհում էր նրան: Ո՛չ. նա

25. Ձի տեսնվել դեռ անտառում ավելի հաղթական մի գազան (հին Ֆրանս.):

ոչ այդպիսի թուլութիւն ունեւր, ոչ էլ այդպիսի հանձնապաստանութիւն: Լինելով իսկական էկլեկտիկ, ինչպես այսօր կասելին, Գրենդուարը մեկն էր այն վեհացած ու հաստատ, չափավոր ու հանդարտ մտքերից, որոնք միշտ էլ կարողանում են ամեն ինչում մեջտեղը բռնել (*stare in dimidio terum*) և տոգորված են բանականութեամբ ու ազատամիտ փրկիսոփայութեամբ՝ կարդինալներին կարեւորելով հանդերձ: Փրկիսոփաների արժեքավոր և երբեք չընդհատվող ցեղն է այդ, որոնց իմաստութիւնը, որպես մի ուրիշ Արիագնե, կարծես տվել է թելի կծիկ, որն արձակելով գնում են նրանք աշխարհի սկզբնավորութիւնից սկսած՝ մարդկային գործերի լաբիրինթոսի միջով: Նրանց հանդիպում ես բոլոր ժամանակներում, միշտ միատեսակ, այսինքն՝ միշտ ըստ իրենց ժամանակի:

Եվ հաշվի մեջ չմացնելով մեր Պիեր Գրենդուարին, որ նրանց ներկայացուցիչը կլինեւր տասնհինգերորդ դարում, եթե մենք կարողանայինք տալ նրա լրիվ պատկերը, որին արժանի է, ապա անկասկած նրանց ոգին էր խանդավառում հայր Դյու Բրյոլին, ելք տասնվեցերորդ դարում գրում էր միամտորեն վսեմ, բոլոր դարերին արժանի այս խոսքերը. «Ես եմ փարիզցի՝ ազգով, և փարիզյան խոսելակերպով, որովհետև *parthisia* հունարենն նշանակում է խոսելու ազատութիւն, որ ես գործ եմ անել նույնիսկ գերապատիվ կարդինալներին՝ Կոնտիի տեր իշխանի հորեղբոր ու եղբոր նկատմամբ, պահպանելով հանդերձ նրանց մեծութեան հարգանքը և առանց զայրացնելու ոչ ոքի նրանց շքախմբից, իսկ դա քիչ բան չէ»:

Այսպիսով Գրենդուարի վրա գործած անախորժ տպավորութեան մեջ ոչ ատելութիւն կար կարդինալի հանդեպ, ոչ էլ արհամարհանք՝ նրա ներկայութեան նկատմամբ: Ծիշտ հակառակը, մեր բանաստեղծը բավականաչափ առողջ դատողութիւն և խիստ հնամաշ վերնագգեստ ունեւր, որպեսզի առանձնակի արժեք չտար այն բանին, որ իր նախերգանքի բազմաթիվ ակնարկութիւնները, մասնավորապես՝ Ֆրանսիայի առյուծի որդու՝ դոֆինի (*թագածառանգի*)

փառաբանութիւնը չընկալին սրբազնագույնի ականջները: Սակայն շահախնդրութիւնը չէ, որ գերիշխում է բանաստեղծների ազնիվ խառնվածքի մեջ: Ես ենթադրում եմ, որ եթե բանաստեղծի էութիւնը նշանակե՞նք տասը թվով, ապա անկասկած քիմիկոսը, դրա անալիզն ու դեղաբաշխումն անելով, ինչպես Ռաբլեն է ասում, կգտներ, որ դա կազմված է մեկ բաժին շահախնդրութիւնից և ինը բաժին ինքնասիրութիւնից: Եվ ահա այն ըուպեին, երբ դուռը բացվեց կարգինալի համար, Գրենգուարի ինքնասիրութեան ինը բաժինը, ժողովրդի հիացմունքի շնչից ուռած ու փքված, այնպիսի զարմանալի աճման էր հասել, որ դրա տակ կարծես խեղդված՝ անհետանում էր շահի այն աննշմարելի հյուլն, որ քիչ առաջ նկատեցինք բանաստեղծների կազմութեան մեջ, ի դեպ, այն թանկարժեք բազալիթը, ռեսալակսնութեան ու մարդկայնութեան այն ծանրույթը, առանց որի գեանին չէին դիպչի նրանք: Գրենգուարը հրճվում էր, որ զգում, տեսնում է, այսպես ասած, շոշափում մի ամբողջ, ճիշտ է՝ անուրիտան հասարակութիւն, բայց ինչ հոգ. չէ՞ որ այդ հասարակութիւնը ապշած, քարացած, կարծես շնչահեղձ լինելով լսում էր իր հարսնեղբայրութեան բոլոր մասերից ամեն ըուպե բխող երկարաշունչ տիրազնները: Ես հաստատում եմ, որ նա էլ բաժանում էր ընդհանուր երանութիւնը, և հակառակ Լաֆոնսենին, որ իր «Ճլորենցիացի» կատակերգութեան ներկայացմանը հարցնում էր՝ «Ո՞վ է այս գուսաներգը հեղինակած անտաշը», Գրենգուարը հաճութեամբ իր կողքի մարդուն կհարցնէր. «Ո՞ւմն է այս գլուխգործոցը»: Ուստի և կարելի է պատկերացնել, թե ինչպիսի՞ տպավորութիւն գործեց նրա վրա կարգինալի հանկարծակի ու անժամանակ գալուստը:

Այն, ինչից նա վախենում էր, լիովին կատարվեց: Նորին սրբագնութեան մուտքը տակնուվրա արեց հանդիսականներին: Բոլոր գլուխները շրջվեցին դեպի անդաստակը: Դա բավական էր, որ այլևս չլսեն:— Կարդինա՛լը, կարդինա՛լը,— կրկնեցին բոլոր բերսնները: Չար սբաստիկ նախերգանքը ընդհատվեց երկրորդ անգամ:

Կարդինալը մի վայրկյան կանգ առավ անդաստակի շեմքին, և րբ բավական անտարբերությամբ հայացքը ման էր ածում հանդիսարահի վրա, ժխորը կրկնապատկվում էր: Ամեն ոք ուզում էր ավելի լավ տեսնել նրան: Ամեն մարդ փորձում էր իր գլուխը հենել արևանի ուսին:

Իրոք որ բարձրաստիճան անձնավորություն էր նա, և նրան տեսնելն արժեք, իհարկե, որևէ կատակերգության դիտումը: Արքեպիսկոպոս, Լիոնի կոմս և Գաղղիայի գահերեց կարդինալ Շառլ դը Բուրանը խնամի էր միաժամանակ Լյուդովիկոս XI-ին, իր եղբոր՝ Բոժյոյի անյոր Պրերի միջոցով, որն ամուսնացել էր արքայի անդրանիկ ատեր հետ, և խնամի էր Կառլոս Հանդուգնին, իր մոր՝ Ագնես Բուրուենդացու միջոցով: Նշենք, որ Գաղղիայի գահերեց եպիսկոպոսի նավորության տիրապետող, հատկանշական և որոշակի դիժը պալատականի ոգին էր և իշխանավորներին խնկարկելը: Կարելի է պատերացնել այն անհամար դժվարությունները, որ պատճառել էր նրան այդ կրկնակի ազգականությունը, և այն աշխարհիկ կյանքի խուճերը, որոնց միջով հոգևորականի նրա զավակը ստիպված էր խուսափումներով ընթանալ, որպեսզի չփշրվեր ոչ Լյուդովիկոսից, ոչ էլ իսուլոսից՝ այդ Խարիրդայից ու Սիցիլիայից, որը բզկտել էր Նեմուսի դքսին և Սեն-Պոլի գունդստաբլին: Երկնքի ողորմածությամբ նա ատ լավ էր պրծել այդ ուղեորությունից և առանց խոչընդոտի հասել էր Հռոմ: Բայց չնայած այն բանին, որ նավահանգստում էր նա, և հենց նրա համար, որ նավահանգստում էր, ապա երբեք առանց սահանգստանալու չէր հիշում այնքան երկար ժամանակ տազնապետրով ու աշխատանքով լի իր քաղաքական կյանքի վայրիվերումները: Ուստի և նա սովորություն ունեւր ասելու, որ 1476 թվականը և ու ապիտակ էր եղել իր համար, դրանով կամենալով ասել, որ այդ ռարվա ընթացքում կորցրել էր իր մորը՝ դքսուհի դը Բուրբոնսին և Կորեղբոր տղային՝ Բուրգունդիայի դքսին, որ մի սուզը մխիթարել էր րան մյուս սուզից:

Իսկ այնպես բարի մարդ էր նա, վարում էր կարդինալի ուրախ կյանք, հաճությամբ զվարճանում էր Շալյուսոյի տեղական արքունի գինով, ամենևին չէր ատում Ռիչարդ լա Գուրմուադին և Թոմաս լա Սայարդին, ավելի շուտ սիրուն աղջիկներին էլ ողորմություն տալիս, քան թե պառավ կանանց և այս բոլորի համար խիստ սիրելի էր Փարիզի հասարակ մարդկանց: Նա ման էր գալիս միայն բարձր ծագում ունեցող, կնամեծար, ուրախ և ցանկության դեպքում կերուխումից չխուսափող եպիսկոպոսների ու աբբաների մի փոքրիկ շքախմբով, և շատ անգամ Սեն-ժերմեն-դ'Օքսեռի պատվարժան բարեպաշտուհիները երեկոյան Բուրբոնյան պալատի լուսավոր պատուհանների տակից անցնելիս զայրացել էին՝ լսելով, որ ցերեկը իրենց համար եկեսցէ երգող միևնույն ձայները բաժակների զնվզնգոցների ընկերակցությամբ երգում են իր խուլրին երրորդ թագ ավելացրած Բենեդիկտոս XII պապի բաբոսյան առակավոր երգը՝ *Bibamus papaliter*²⁶:

Անկասկած, այնչափ իրավացի հիմունքներով ձեռք բերված այդ ժողովրդականությունն էր, որ ներս մտնելիս նրան զերծ պահեց մի բույն առաջ այնքան դժգոհ և կարդինալին հարգանք մատուցելու տրամադրություն գրեթե չունեցող սղմկահույզ բազմության վատ ընդունելությունից այնպիսի մի օր, երբ ինքը՝ ամբոխը, պապ պիտի ընտրեր: Սակայն փարիզցիների ոխը երկար չի տևում, և բացի դրանից՝ ներկայացումը տիրաբար սկսել տալով, բարեմիտ քաղաքացիները հաղթել էին կարդինալին, և այդ հաղթանակը բավական էր նրանց: Ասենք նաև, որ կարդինալ դը Բուրբոնը գեղեցիկ տղամարդ էր, ուներ շքեղ հագուստ, որը վայելչապեզ էլ հագնում էր: Այդ նշանակում էր, որ նրա կողմն էին բոլոր կանայք, հետևաբար՝ հանդիսասրահի լավագույն կեսը: Ինչ խոսք, որ անարդար և վատ ճաշակի նշան կհամարվեր հայհույով դիմավորել մի կարդինալի ներկայացմանն սպասել տալու համար, երբ նա գեղեցիկ մարդ է և շատ լավ է հագնում իր կարմիր զգեստը:

26. Խմենք պապի պես (լատ.):

Նա ներս մտավ, բարեկեց ներկաներին մեծավորների այն ժառանգարար անցնող ժպիտով, որ ցույց են տալիս նրանք Հասարակ ժողովրդին, և դանդաղ քայլերով դիմեց դեպի վառ կարմիր թավշով պատված իր բազկաթոռը՝ որևէ այլ բանի մասին մտածողի տեսքով: Նրա շքախուժմբը, որ այժմ մենք կանվանեինք եպիսկոպոսներից ու արքաներից կազմված շտաբ, նրա ետևից ներխուժեց անդաստակ՝ կրկնապատկելով անշուշտ պարտերի ժխորն ու հետաքրքրասիրութունը: Ամեն ոք սկսեց մատնացույց անել նրանց, անունները տալ, հայտարարել, որ ճանաչում է սրան կամ նրան. մեկը Մարսելի պարոն եպիսկոպոս Ակոլեին, եթե հիշողութունս ինձ չի դավաճանում, մյուսը Սեն-Դենիի արքայարանի վանահորը, մեկն էլ՝ Սեն-ժերմեն-դե-Պրեի արքա Ռոբեր դը Լեսպինասին՝ Լյուդովիկոս XI-ի սիրուհիներից մեկի այդ անառակ եղբորը, և այդ ամենը բազմաթիվ սխալմունքներով ու խժալուր ձայներով: Գալով ճեմարանականներին, ապա նրանք հայհոյում էին: Նրանց օրն էր դա, ծաղրածուների տոնը, նրանց սատուրնալը²⁷, դատարանական գրագիրների ու ճեմարանականների ամենամյա խրախճանքի օրը: Չկար այնպիսի խայտառակութուն, որ այդ օրը օրինական ու նվիրական չլիներ: Բացի դրանից՝ բաղմության մեջ կային և լաչառ ու լկտի կանայք՝ Սիմոնե Զորսֆնտանոցը, Ագնես Բեղաձուկը, Ռոբին Ուտնացուկը: Շատ բան էր միթե, որ մարդիկ կարող էին ուզածի չափ հայհոյել և մի քիչ էլ նզովել Աստուծու անունը այդքան գեղեցիկ մի օր, եկեղեցականների ու զվարճության արջիկների այդպես գեղեցիկ շրջապատում: Դրա համար էլ նրանք չէին թերանում, և ընդհանուր ժխորի միջից սրբապիլծ ու փակղցփեղ խոսքերի ինչպիսի՞ գարհուրելի ժխոր ու վայնասուն էր ժայթքում ազատ արձակված այդ բոլոր լեզուներից, սուրբ Լյուդովիկոսի շիկացած երկաթով պատժվելու վախից ողջ տարին զուսպ մնացած գրագիրների ու ճեմարանականների լեզուներից:

27. Սատուրնի (Կրոնոսի) տոնը հին Հռոմում, երբ ամեն անկարգութունն ու անսպարկեշտութունն թուլատրված էր:

Խն՛դճ սուրբ Լյուդովիկոս. արհամարհանքի էին ենթարկում նրան հենց իր Արդարադատության պալատում: Անդաստակը նոր բարձրացած անձերից ամեն մեկն իր համար թիրախ էր ընտրել սև կամ գորշ, սպիտակ կամ մանուշակագույն որևէ սքեմավորի: Ինչ վերաբերում է ժոաննես Ֆրոյո դե Մոլենդինոյին, ապա նա, որպես սարկավագապետի եղբայր, խիզախարար հարձակվում էր կարմիր սքեմի վրա և լկտի հայացքը կարդինալին սևեռած՝ ամենայն ուժով երգում էր.

*Cappa repleta mero!*²⁸

Այս բոլոր մանրամասնությունները, որ մերկությամբ նկարագրում ենք մենք այստեղ ի տեղեկություն ընթերցողի, այնքան ծածկված էին ընդհանուր ժխտողով, որ ջնջվում էին՝ նախքան հատուկ անդաստակին հասնելը. նկատենք սակայն, որ կարդինալն էլ շատ չէր անհանգստանում դրանից, որովհետև այդ օրը սանձարձակություններ անելը վաղեմի սովորույթ էր: Բացի դրանից, ինչպես երևում էր նրա գերզբաղված տեսքից, նա ունի որևիչ մտահոգություն, որ քայլ առ քայլ հետևում էր նրան և գրեթե միաժամանակ բարձրացավ անդաստակը: Ֆլանդրիայի դեսպանությունն էր դա:

Չպետք է կարծել, որ կարդինալը խոր քաղաքագետ էր և զբաղված էր իր քեռու աղջկա՝ Մարգարիտ Բուրգունդացու և իր հորեղբորորդու՝ Վիենի թագաժառանգ պարոն Շառլի ամուսնություն հնարավոր հետևանքներով, կամ թե որքան կտևի Ավստրիայի դքսի և Ֆրանսիայի արքայի առերես համաձայնությունը, ինչպես կընդունի Անգլիայի թագավորը իր աղջկան այդ ձևով անտեսելը: Այս բոլորը քիչ էին մտահոգում նրան, և ամեն երևիզ զվարճանում էր նա Շառլոյի արքայական գինի խմելով, ամենևին չկասկածելով, որ այդ նույն գինուց մի քանի շիչ (ճիշտ է՝ բժիշկ Կուակտիեի ձեռքով մի քիչ վերանայված և փոխված), Լյուդովիկոս XI-ի կողմից բարեկամաբար ընծայվելով Անգլիայի Էդուարդ IV թագավորին, մի գեղեցիկ

28. Գինով ներծծված սքեմ (լատ.):

առավոտ Լյուդգովիկոս XI-ին կազատե՞ր էդուարդ IV-ից: «Ավստրիական պարոն դքսի պատվավոր մեծաթիվ դեսպանությունը» այս մտահոգություններից ոչ մեկը չէր պատճառում կարդինալին, սակայն անհանգստացնում էր ուրիշ կողմից: Եվ իրոք որ բավական ծանր էր նրա՝ Շառլ դը Բուրբոնի պես մարդու համար, ինչպես այդ մասին մի երկու խոսք ասացինք այս գրքի երկրորդ էջում, ստիպված լինել լավ ընդունելություն ասելու ինչ-որ քաղաքացիների, լինելով կարդինալ՝ պատվել ինչ-որ քաղաքապետների, օգնականների, լինելով Ֆրանսիացի, ուրախ սեղանակից՝ կերուխում անել գարեջուր խմող Ֆլամանդացիների հետ, այն էլ հրապարակա՛վ: Անկասկած դա մեկն էր ամենից ավելի տաղտկալի, անախորժ կեղծումներից, որ արել էր նա ի հաճույս արքայի:

Եվ ահա, երբ բարապանն իր հնչեղ ձայնով ազդարարեց՝ «Ավստրիական պարոն դքսի պարոնայք դեսպանները», նա շրջվեց դեպի դուռը լավագույն բարեհամբույրությամբ (այնքա՛ն լավ էր նա ուսումնասիրել այդ): Ավելորդ է ասել, որ ամբողջ սրահն էլ նույնն արեց:

Այդ ժամանակ զույգ-զույգ և այնպիսի լուրջ դեմքով, որ հակադրություն էր կազմում Շառլ դը Բուրբոնի հոգևորական աշխույժ շքախմբի հետ, ներս մտան Մաքսիմիլիան Ավստրիացու քառասունութ դեսպանները՝ Սեն-Բերտենի արքա, Ոսկեգեղմի կարգի դիվանապետ, ծառա Աստուծո, դերապատիվ հայր Ժեհանի և Դոբի սեպուհ, Գենտի գերագույն դատավոր Ժակ դը Գուլայի գլխավորությամբ:

Սրահում խոր լուռություն տիրեց՝ խուլ ծիծաղներով հանդերձ, որպեսզի լսեն քաղաքացիական բոլոր անհեթեթ անուններն ու կոչումները, որ յուրաքանչյուր անձնավորություն անխուով կերպով հայտնում էր բարապանին, սա էլ անուն ու կոչում խառնելով ու նահատակելով նետում էր բազմությանը: Դրանցից էին Լուվենի քաղաքապետի տեղակալ տյար Լոիս Ռյոլոֆը, Բրյուսելի քաղաքապետի տեղակալ պարոն Կլայս դ'էտյուելդը, Վուարմիզելի ավագանի,

Ֆլանդրիայի նախագահ պարոն Պաուլ Բաոստը, Անտվերպենի քաղաքագլուխ տյար Ժեհան Կոլեգենսը, Գենտի քաղաքագլխի առաջին տեղակալ Գեորգ դը լա Մյորը, նույն քաղաքի ժառանգական գործերի առաջին ավագ պարոն Գելդոլֆ վան դեր Հագեն, ապա տյար Բիերբեբը, Ժեհան Պիննոկը, Ժեհան Դիմարգելը և այլն և այլն և այլն, գլխավոր դատավոր, քաղաքապետի տեղակալ, քաղաքագլուխ, քաղաքագլուխ, քաղաքապետի տեղակալ, գլխավոր դատավոր, բուլոն էլ ձգված, պրկված, լրջադեմ, թավշով ու դամասկյան դիպակով պճնված, գլխներին կիպրոսյան ոսկեթել խոշոր ծոպեր ունեցող սև թավշե գդակներ, մի խոսքով՝ իսկական Ֆլամանդական գլուխներ, խոժոռ ու արժանապատիվ դեմքեր, այն դեմքերի ընտանիքից, որ այնքան ուժգնորեն ու խստատես երևան է բերում Ռեմբրանդտը խավարի իր շրջանակի վրա. անձնավորութուններ, որոնց բոլորի ճակատներին ասես գրված էր, թե Մաքսիմիլիան Ավստրիացին իրավունք ուներ «լիովին վստահել», ինչպես նրա Հրովարտակն էր ասում, «նրանց խելքին, կորովամտության, փորձվածության, օրինակալության և բարյացակամ խոհեմության»:

Կար սակայն մի բացառություն: Նուրբ, խելացի, խորամանկ մի դեմք էր դա, կապիկի ու դիվանագետի ունի խառնուրդ, որին երեք քայլ ընդառաջ գնաց կարգինալը ու խոր ուներանս արեց, և որը կոչվում էր պարզապես «Գենտ քաղաքի խորհրդական և կառավարիչ Գիյոմ Ռիմ»:

Այդ ժամանակ շատ քչերը գիտեին, թե ով է Գիյոմ Ռիմը: Հագվագյուտ մի հանճար, որ հեղափոխության շրջանում կարող էր հանդես գալ իրադարձութունների մակերեսում, բայց տասնհինգերորդ դարում ստիպված էր մասնակցել մութ դավերի և «ապրել գետնի տակ», ինչպես դուքս Սեն-Սիմոնն է ասում: Սակայն նրան գնահատում էր Եվրոպայի առաջին «գետնափորը»։ Լյուդովիկոս XI-ի հետ նա մտերմաբար դավեր էր նյութում և հաճախ էր իր ձեռքը դնում արքայի գաղտնի գործերի վրա: Սրահի բազմությունը ոչինչ չգիտեր

այդ ամենի մասին և խիստ հիանում ու զարմանում էր՝ տեսնելով, որ կարդիինալը այդպիսի քաղաքավարութունն է ցույց տալիս այդ նիհար ֆլաման պաշտոնյային:

IV

ՎԱՐՊԵՏ ԺԱԿ ԿՈՊԸՆՈԼ

Այն ժամանակ, երբ Գենտի կառավարիչ պաշտոնյան և նորին սրբազնութունը խիստ ցածր խոնարհութունն էին անում իրար և էլ ավելի ցածր ձայնով մի քանի խոսք փոխանակում, մի բարձրահասակ, լայնագեմ, հազթ ուսերով մարդ էր ներս մտնում, որպեսզի կողք-կողքի ներկայանա Գիյոմ Ռիմի հետ. կարծես թե մի գամփռ ներս եկավ աղվեսի ետևից: Նրա թաղիքե գլխարկը և կաշվե բաճկոնակը ասես բիծ լինեին շրջապատի թավչի և մետաքսի մեջ: Ենթադրելով, որ նա ինչ-որ մոլորված ձիապան կլինի, բարապանը ճանապարհը կտրեց:

– Է՛, բարեկա՛մ, չի կարելի անցնել:

Կաշվե բաճկոնով մարդը հրեց նրա ուսը:

– Ի՞նչ է ուզում ինձանից այս խելառը, – ասաց նա այնպիսի որոտալի ձայնով, որ ամբողջ սրահը սկսեց ուշադիր հետևել այդ տարօրինակ խոսակցությանը: – Ձե՞ս տեսնում, որ ես էլ դրանցից եմ:

– Ձեր անո՞ւնը, – հարցրեց բարապանը:

– Ժակ Կոպրնոլ:

– Ձեր մակդիրները:

– Գուլպայավաճառ. «Երեք շղթայիկ» ցուցանակով, Գենտ քաղաքում:

Բարապանն ընկրկեց, քաղաքայինների տեղակալների և քաղաքագլուխների անուններ հայտարարելը էլի տանելի է, բայց գուլպայավաճառ՞, ոչ, ծանր է: Կարգինալն ասես փշի վրա լինեք: Ամբողջ

բազմութիւնը նայում էր ու լսում: Երկու օր է ահա, որ նորին մեծութիւնը ճգնում է շոյել այդ ֆլամանդական արջերին՝ հասարակութեանն ավելի ներկայանալի դարձնելու համար, և այնուամենայնիւ, այս կոսլիտ վիրավորանքը: Սակայն Գիյոմ Ռիմը իր նուրբ ժպիտով մոտեցավ բարապանին.

– Հայտարարեցեք պարոն Ժակ Կոպրնոլ՝ Գենտ քաղաքի կառավարիչներին գրագիրը, – խիստ ցած ձայնով հուշեց նրան:

– Բարապան, հայտարարեցեք պարոն Ժակ Կոպրնոլ՝ Գենտ քաղաքի կառավարիչներին գրագիրը, – ասաց կարդինալը բարձրաձայն:

Բայց դա վրիպում էր: Գիյոմ Ռիմն ինքնուրույն կարող էր հարթել ղօժարութիւնը, սակայն Կոպրնոլը լսեց կարդինալի խոսքերը:

– Ո՛չ, գրողը տանի, – գոչեց նա իր որոտալի ձայնով, – Ժակ Կոպրնոլ, գուլպայափաճառ: Լսո՞ւմ ես, բարապան: Ոչ մի բան ավելի, ոչ մի բան պակաս: Գրողը տանի, գուլպայափաճառը բավական գեղեցիկ է հնչում: Պարոն արքիդուքսը հաճախ է իր ձեռնոցները իմ վարտիքների²⁹ մեջ փնտրել-գտել:

Պայթեցին ծիծաղներ ու ծափահարութիւններ: Սրամիտ կատակը շուտ եւ հասկանում Փարիզում, ուստի և միշտ էլ ծափահարում են:

Ավիւացնենք, որ Կոպրնոլը ժողովրդի մարդ էր, և նրան չըջապատող բազմութիւնն էլ ժողովուրդ էր, այնպես որ՝ իր ու նրա միջև հաղորդակցութիւնը կատարվել էր պարզ, էնկտրական թափով, և այսպես ասած՝ առանց ելևէջի: Ֆլաման գուլպայագործի հանկարծակի, իրոխտ կատակը նվաստացնելով պալատական մարդկանց՝ բոլոր պլերեյական հոգիների մեջ շարժել էր տասնհինգերորդ դարում դեռ անորոշ ու տարտամ ինչ-որ զգացմունք: Իրենց հալիասար մի մարդ էր այդ գուլպայափաճառը, որ ահա եկել էր գլուխ դնելու պարոն կարդինալի հետ. քաղցր խորհրդածութիւնն առիթ այդ խեղճ մարդկանց համար, որոնք վարժվել էին հարգանք ու հնազանդութիւն

29. Այստեղ կա մի նուրբ բառախաղ. Chausse նշանակում է երկար վարտիք. այդ բառից էլ առաջացել է chaussette՝ գուլպա: Կոպրնոլը գործածում է երկիմաստորեն:

ցուցաբերել նույնիսկ կարգինալի քղանցքապահ՝ Սենտ-ժընեիևի արքայահոր կառավարչի սերժանտների ծառաներին:

Կոպընոլը Հպարտությամբ բարևեց նորին սրբազնությանը, որը փոխադարձաբար ողջունեց Լյուդովիկոս XI-ին անգամ վախ պատճառող այդ ամենազոր քաղաքացուն: Ապա, երբ Գիյոմ Ռիմը, «իմաստուն ու խորամանկ մի մարդ», ինչպես Ֆիլիպ դը Կոմինն է ասում, հետևում էր նրանց հեզնանքի ու գերազանցության ժպիտով, երկուսն էլ գրավեցին իրենց տեղերը՝ կարգինալը շփոթված ու մտահոգ, Կոպընոլը անխուով ու ամբարտավան և անկասկած մտածելով, որ գուլպայավաճառի իր կոչումը վերջիվերջո ոչնչով պակաս չէ մի այլ կոչումից, որ Մարի Բուրգունդացին՝ մայրը այս Մարգարիտի, որին Կոպընոյն ամուսնացնում է այսօր, իրենից պելի քիչ կվախենար, եթե ինքը ոչ թե գուլպայավաճառ, այլ կարգինալ լիներ, որովհետև Գենտի բնակիչներին Կառլոս Հանդուգնի դստեր սիրեկանների դեմ ըմբոստացնողը կարգինալ չէր, որ լոկ մի խուբով գոտեպնդեց ժողովրդին Ֆլանդրիայի իշխանադստեր արցունքների ու աղաչանքների դեմ, երբ սա եկել էր մինչև կառափնարանի ստորտը՝ պաղատելու իր ժողովրդին, որ խնայեն նրանց, մինչդեռ գուլպայավաճառի համար բավական էր բարձրացնել իր կաշվե բազպանով ձեռքը, որպեսզի ընկնեին երկուսիդ գլուխն էլ, պայծառափայլ սենյորներ, Գի դ'Իմբերկո՛ւր և կառավարչապետ Գիյոմ Լյուգոնն՝:

Սակայն ամեն ինչ վերջացած չէր խեղճ կարգինալի համար, նա պետք է մինչև մրուրը պարպեր այդքան վատ հասարակության մեջ գտնվելու թասը:

Ընթերցողը գուցե չի մոռացել այն աներես մուրացկանին, որ հենց նախերգանքի սկզբից եկել ու թառել էր կարգինալական անդաստակի ճաղերի տակ: Նշանավոր հյուրերի ժամանումը բնավ էլ չէր դրդել, որ նա շարժվի իր տեղից, և երբ հոգևորականներն ու դեսպանները, իսկական Ֆլամանդական տառետներին պես, շարվել էին իրենց խորշածև աթոռների մեջ, սա էլ հանգիստ տեղավորվել էր իր

Համար և սրունքները խաչաձևել սյունադրիսի վրա: Բացառիկ լիտիություն էր դա, և սկզբում ոչ ոք չէր նկատել, ուշագրությունն այլ կողմ էր դարձած: Նա էլ իր կողմից ոչինչ չէր նկատում սրահում, տմբտմբացնում էր գլուխը նեապուլցու անհոգությունը և հրեծմունքեմն ժխորի մեջ, մեքենայական սովորությունը կրկնում էր. «Ողորմացեք խեղճ աղքատին»:

Եվ անկասկած, նա ամբողջ բազմություն մեզ միտև մարդն էր, որ չբարեհաճեց գլուխը շրջել Կոպրնոլի և բարապանի վիճարանություն առթիվ: Եվ ահա սրտահականությունը կամեցավ, որ Գինտի դուրպայայավաճառը, որին ժողովուրդն արդեն ջերմագին Համակրում էր, և որի վրա էին սեեռված բոլորի աչքերը, գա ու նստի անդաստակի Հենց առաջին շարքում, մուրացկանի վերևը: Եվ քիչ չզարմացան մարդիկ, երբ տեսան, որ Ֆլամանդական այդ դեպուստը իր աչքերի տակ նստած տիպին մի լավ գննելուց Հետո բարեկամաբար թմրիթմփաղրեց ցնցոտիներով ծածկված նյա ուսին: Մուրացկանը շրջվեց. նախ նա զարմացավ, ապա ճանաչեց, և երկուսի դեմքերն էլ շոգացին, Հետո, ամենևին Հաշվի չառնելով Հանդիսատեսներին, գուլպայավաճառն ու վտիտ մուրացկանը սկսեցին ցածր ձայնով զրուցել՝ միմյանց ձեռքը բռնած, իսկ Կոպեն Տրույֆուի ցնցոտիները, փոփած անդաստակի ոսկեճամուկ դիպակին, նստելի վրա ձգված թրթուրի տպավորություն էին գործում:

Այս եզակի տեսարանի արտասովորությունը խելահեղություն ու զվարթության այնպիսի ազմուկ առաջացրեց սրահում, որ շուտով կարդինալը նկատեց դա: Նա կիսով չափ կուցավ և իր նստած տեղից շատ քիչ կարողանալով նկատել Տրույֆուի ղզվելի վերնագգեստը՝ բնականաբար մտածեց, որ մուրացկանը ողորմություն է խնդրում, և այդ Հանդիսությունից գայրացած՝ գոչեց.

– Պալատի պարոն բա՛յլ, գիտր գեցեք այդ զզվելիին:

– Աստված ու իր իսաչը, աե՛ր իմ կարդինալ, սա իմ բարեկամներուց մեկն է, – գոչեց Կոպրնոլը առանց Կոպենի ձեռքը բաց թողնելու:

– Յնծությո՛ւն, ցնծությո՛ւն,– գողաց ամբոխը: Այդ բոպեից սկսած՝ վարպետ Կոսյրնուլը Փարիզում ունեցավ, ինչպես Գենտում ունեւր, մեծ Համարում ժողովրդի մեջ, ստում է Ֆիլիպ դը Կոմինը, որովհետև այդ խառնվածքի մարդիկ Համարում ունենում են, երբ այդպես կարգազանց են լինում:

Կարդինալը կծեց շրթունքները: Նա կուացավ դեպի իր Հարեանը՝ Սենտ-ժընևիևի արբան և կիսաձայն ասաց.

– Ի՛նչ գվարճալի դեսպաններ է ուղարկում մեզ պարոն արքե-գուքսը՝ տիկին Մարգարիտի ժամանումն իմաց տալու Համար:

– Չերդ սրբազնությունը զուր տեղը քաղաքավարություն է անում այս ֆլամանդական մուլթների հետ. *Margaritas ante porcos*³⁰,– պատասխանեց արբան:

– Ավելի շուտ՝ ասացեք *Porcos ante Margaritam*³¹,– նկատեց կարդինալը ժպտալով:

Ամբողջ սքեմավոր չքախումբը զմայլվեց այս բառախաղից: Կարդինալը մի փոքր թեթևություն զգաց, այժմ նա քվիթ էր Կոպլենդի հետ, և իր բառախաղն էլ ծափահարվել էր:

Հիմա թող մեր ընթերցողներին նրանք, որոնք պատկերն ու գաղափարը ընդհանրացնելու կարողություն ունեն, ինչպես ընդունված է ասել այսօրվա ոճով, մեզ թույլ տան հարցնելու, թե պարզորոշ պատկերացնո՞ւմ են այն տեսարանը, որ ներկայացնում էր պալատի ընդարձակ զուգահեռագիծը այն պահին, երբ մենք սևեռեցինք մեր ուշադրությունը: Սրահի մեջտեղը, արևմտյան պատին հենված, բարձրանում է ոսկեճամուկ դիպակով ծածկված լայն ու փառահեղ անդաստակ, ուր փոքրիկ, սրակամար դռնից թափորի ձևով ներս են մտնում ծանրահայաց մարդիկ, որոնց անունները ճշճղան ձայնով ծանուցում է բարապանը: Առջևի աթոռներին բազմել են արդեն խիստ պատկառելի անձինք՝ պարուրված սպիտակ կզաքիսի մուշտակով,

30. [Մի՛ արկանեք] զմարգարիտան առաջի խոզաց (Ավետարանից):

31. Զխոզս առաջի Մարգարիտայ (լատ.):

Թավիշներով ու շիկակարմիր մետաքսով: Իրեն լուռ ու արժանապատիվ պահող անդաստակի շուրջը, ներքևում, դիմացը, ամենուրեք ծփում է մեծ բազմութուն և մեծ ժխոր: Հանդիսականների հազարավոր հայացքներ են սևեռված անգաստակում գտնվող ամեն մի դեմքի վրա և հազարավոր փսփսոցներ են արվում ամեն մի անվան մասին: Տեսարանն անկասկած հետաքրքրական է և արժանի՝ Հանդիսականների ուշադրության: Այնտեղ, ամենից վերջում, այդ ի՞նչ բան է իշառտնուկի նման՝ գույնզգույն ներկված չորս խեղկատակ վրան, չորսն էլ ներքևում: Իսկ ո՞վ է իշառտնուկի կողքի այն մարդը՝ սև, մաշված վերնազգեստով և դժգույն դեմքով: Ավա՛ղ, իմ սիրելի՛ ընթերցող, Պիեր Գրենգուարն է նա և նրա նախերգանքը:

Մենք բոլորս էլ ամբողջովին մոռացել էինք նրան:

Ահա հենց սրանից էր նա վախենում:

Կարդինալի ներս գալուց հետո նա չէր դադարել հուզվել իր նախերգանքը փրկելու համար: Ամենից առաջ հրամայել էր շվարածվարանամիտ դերասաններին շարունակել և շարունակել բարձր ձայնով: Ապա տեսնելով, որ ոչ ոք չի լսում, դադարեցրել էր, իսկ հետո, մոտավորապես քառորդ ժամվա ընթացքում, որքան տևել էր ընդմիջումը, նա անընդհատ դոփել էր ոտքերը, խլրտացել, հորդորել ժխտքտին և Լիենարդին, քաջայերել իր հարևաններին, որ պահանջեն շարունակել նախերգանքը: Բայց ամեն ինչ գուր էր անցել: Ոչ ոք իր հայացքը չէր կտրում կարդինալից, դեսպանությունից ու անդաստակից՝ տեսողական ճառագայթների այդ ընդարձակ շրջանակի միակ կենտրոնից: Պետք է կարծել նաև, և մենք ցավոք սրտի ենք ասում, որ նախերգանքն սկսում էր թեթևակի ձանձրացնել սրահը այն բոպեին, երբ նորին սրբազնությունը եկել էր այդպիսի անողոք ձևով շեղելու նրա ուշադրությունը: Վերջիվերջո, թե՛ անդաստակի, թե՛ մարմարե սեղանի վրա նույն բանն էր ներկայացվում – Երկրագործության ու Հողեորականության, Ազնվականության ու Վաճառականության կոնֆլիկտը: Եվ ներկաներից շատերը գերադասում էին

տեսնել զրանք պարզասլես ապրույ, շնչող, գործող, իրար հրող, մսե
և արյունն մարդկանց՝ Ֆլանդրիական այդ դեսպանության մեջ,
եպիսկոպոսական շքամբում, կարդինալի զգեստի, Կոպընոլի բաճ-
կոնակի տակ, քան թե չպարված, պճնված-զուգված, ուսանավորով
խոսող այսպես ասած՝ խրտվիլակների դեղին ու սպիտակ պատմու-
ճանների տակ, որոնցով պարուրել էր նրանց Գրենգուարը:

Սակայն երբ մեր բանաստեղծը տեսավ, որ հանդարտությունը մի
քիչ վերահաստատվեց, հզացավ այնպիսի մի հնարամտություն, որն
ամեն ինչ պետք է փրկել:

— Պարո՛ն,— ասաց նա՝ դառնալով դեպի իր հարևաններից մեկը,
համբերատար ու ազնիվ զեմքով մի գիրուկ մարդու,— ավելի լավ չի՞
լինի վերսկսեն:

— Ի՞նչը,— հարցրեց հարևանը:

— Ինչպե՛ս թե ինչը. միտերիսն,— ասաց Գրենգուարը:

— Ինչպես կու՞ղեք,— պատասխանեց հարևանը:

Այս կիսահավանությունը բավական էր Գրենգուարին, և սնձամբ
զլիսավորելով իր զործը՝ սկսեց ալազակել, որքան կարելի է ավելի խառն-
վելով ժողովրդին.— Վերսկսեցե՛ք միտերիսն, վերսկսեցե՛ք սկզբից:

— Գրո՛ղը տանի,— ասաց ժողովրդից Մոլենդլինոն,— այդ ի՞նչ են
երգում այնտեղ՝ ծայրում (որովհետև Գրենգուարը չորս մարդու աղ-
մուկ էր բարձրացնում): Ասեք խնդրեմ, ընկերնե՛ր, մի՞թե միտե-
րիսն վերջացած չէ: Դրանք ուզում են վերսկսել. ճիշտ բան չէ դա:

— Ո՛չ, ո՛չ, — գոռացին բոլոր ճեմարանականները:— Կորչի՛ միտ-
երիսն, կորչի՛:

Սակայն Գրենգուարը ետ չէր մնում, ավելի բարձր էր աղաղա-
կում.— Վերսկսեցե՛ք, վերսկսեցե՛ք:

Այդ ազմուկները գրավեցին կարդինալի ուշադրությունը:

— Պալատի պարո՛ն բայլ,— ասաց նա իրենից մի քանի քայլ հեռու
կանդնած մի բարձրահասակ, սևադեզ մարդու,— այդ խեղկատակ-
ները հո օրհնալի սկիհի առաջ չեն, որ այդպիսի գժոխային աղմուկ
են անում:

Պալատի բայլը մի տեսակ երկկենցաղ պաշտոնյա էր, դատավորական դասի չղջիկ, միաժամանակ առնևտի ու թռչունի, դատավորի ու զինվորի նմանողությամբ:

Նա մտոեցավ նորին սրբազնությանն ու թեև սաստիկ վախենալով նրա զժգոհությունն առաջացնելուց, կմկմալով բացատրեց ժողովրդի անպատշաճ սրբաբքի պատճառը. տասներկուսը եկել էր նորին սրբազնությունից առաջ, և դերասաններն ստիպված էին կղել սկսել՝ առանց սպասելու նորին սրբազնությանը:

Կարդինալը քահ-քահ ծիծաղեց:

– Հավատս վկա, Համալսարանի պարոն ուկտորն էլ երանի՛ այդպես աներ: Ի՞նչ է ձեր կարծիքը, տյար Գիյոմ Ռիմ:

– Սրբազա՛ն, – պատասխանեց Գիյոմ Ռիմը, – բավարարվե՛ք ներկայացման կեսից իուսաստիած լինելով: Դա էլ ինքնին օգուտ է:

– Այս սինլքորները կարո՞ղ են շարունակել իրենց իսկկատակությունը, – հարցրեց պալատի բայլը:

– Շարունակեցե՛ք, շարունակեցե՛ք, – պատասխանեց կարդինալը, – ինձ համար միևնույն է: Այդ ժամանակամիջոցում ես կկարգամ իմ աղոթագիրքը:

Պալատի բայլը առաջացավ անդաստակի եղբր՝ և ձեռքի շարժումով լռություն հաստատելուց հետո գոչեց.

– Քաղաքացիներ՛ը, ռամիկներ՛ ու բնակիչներ՛ը, որպեսզի բավարարվեն նրանք, որոնք պահանջում են վերոկսել, և նրանք, որոնք պահանջում են վերջացնել, նորին սրբազնությունը հրամայում է շարունակել:

Հարկ եղավ երկու կողմից էլ համակերպվիլ: Սակայն զրա համար հեղինակն ու հանդիսականները երկար ժամանակ ոխ պահեցին կարդինալի դեմ: Այսպիսով, դերակատարները նորից բեմի վրա սկսեցին իրենց ճոռոմախոսությունը, և Գրենգուարը հուսադրվեց, որ գոնե իր երկի կեսը կկտրի: Սակայն այդ հույսն էլ շուտով ի դերի ելավ նրա մյուս պատրանքների նման. լռությունը այսպես թե այնպես վերահաստատվել էր սրահում, սակայն Գրենգուարը չէր նկատել,

որ այն ըուպելին, երբ կարգինայր հրամայեց շարունակել ներկայացումը, անդաստակը դեռ լրիվ լցված չէր, և Ֆլամանդական դեսպաններից հետո եկել էին շքախմբին պատկանող այլ անձնավորություններ, որոնց անուններն ու կոչումները բարապանի ընդհատ-ընդհատ ճիշտով նետվելով նրա գիալոգի միջով՝ անհազին տակնուվրայություն էին առաջացնում այնտեղ: Եվ իրոք պատկերացրեք, որ ներկայացման ժամանակ, բարապանն իր կաղկանձանման ձայնով երկու չափատողի, հաճախ էլ՝ երկու կիսատողի միջև գոռում է այսպիսի միջանկյալ խոսքեր.

– Տյար Ժակ Շարմոլյո՛ւ՝ արքայական դատախազ եկեղեցական ասյանում:

– Ժեհան դը Հաուլե՛ սեպուհ, Փարիզ քաղաքի գիշերային պաշտպանության ասպետական ծառայության պետ:

– Տյար Գալիո դը Ժնուալակ՝ ասպետ, Բրյուսակի սենյոր, արքայական հրետանու պետ:

– Տյար Դրյո-Ռագլե՛ վերակացու Ջրերի ու անտառների տերն մեր թագավորի, Շամպայնի և Բրիի, ի երկիրն Ֆրանսիայի:

– Տյար Լուի դը Գրավիլ՝ ասպետ, խորհրդական և սենեկապան արքայի, ծովակալ Ֆրանսիայի, վերակացու Վենսանի անտառի:

– Պարոն Դընի Լը Մերսիե՛ վերակացու Փարիզի կուլյրերի տան:— Եվ այլն, և այլն, և այլն:

Անտանելի էր դառնում դա:

Այս տարօրինակ ուղեկցումը, որ խանգարում էր պիեսի ընթացքին հետևել, առավիլ ևս զայրացնում էր Գրենզուարին, որովհետև նա չէր կարող չհավատալ, որ հետաքրքրությունը հետզհետե աճում է, և միայն մի բան է պակասում իր երկին՝ ունկնդրել: Եվ իրոք դժվար էր պատկերացնել ավելի խորամիտ և ավելի դրամատիկական հյուսվածք: Նախերգանքի չորս պերսոնաժները ողբում էին իրենց անել դժվարության մեջ, երբ Վեներյան անձամբ-անձին (*vera incessu patuit dea*)³² ներկայացավ նրանց՝ հազած Փարիզ քաղաքի զինանշանը

32. Քայլվածքն ինքնին մատնում էր աստվածուհուն (Վիրգիլիոս):

Հանդիսացող Նավի պատկերը կրող գեղիցիկ պարեգոտ: Նա ինքն էր եկել պահանջելու ամենագեղեցիկ աղջկան խոստացված դոֆենին: Յուզիտերը, որի որոտի դղրոցը լսվում էր Հանդերձարանից, սատարում էր նրան, և աստվածուհին արդեն ուզում էր տանել, այսինքն՝ պարզապես ամուսնանալ պարոն Թագաժառանգի Հետ, երբ մի սպիտակ դամասկյան դիպակե զգեստ Հագած դեռատի աղջիկ, ձեռքին մարգարտածաղիկ (Ֆլանդրիայի օրիորդի անսքող անձնավորումը), եկավ մարտնչելու Վեներայի Հետ: Բեմական անակնկալ և Հանկարծակի փոփոխություն: Բավական վիճաբանելուց Հետո Վեներան, Մարգարիտը և մյուսները Համաձայնեցին գործի լուծումը Հանձնել սուրբ կույսի արդար դատաստանին: Կար մի ուրիշ գեղեցիկ դեր ևս՝ Միջագետքի արքա դոն Պեդրոյի դերը. սակայն այդքան ընդհատումներից Հետո դժվար էր պարզել, թե ինչ բանի էր նա: Այդ բոլոր գործող անձինք սանդուղքով էին բեմ բարձրացել:

Սակայն բանը բանից անցել էր. այդ գեղեցկություններից ոչ մեկը չզգացին, ոչ էլ Հասկացան: Կարդինալի ներս գալուն պես կարծես մի անտեսանելի և մոգական թել բոլոր Հայացքները Հանկարծակի քաշեց մարմարե սեղանից, տարավ անդաստակ, սրահի Հարավային ծայրից՝ դեպի արևմտյան կողմը: Ոչ մի բան չէր կարող կսխալողներն լսարանը. բոլոր Հայացքները մնում էին սևեռված այնտեղ. և՛ նոր եկողները, և՛ նրանց նզովված անունները, և՛ դեմքերը, և՛ Հագուստները անվերջ ուշացրիվ էին անում: Վհատեցնող էր դա: Բացի Ժեսքետից և Լիենարդից, որոնք երբեմն-երբեմն շրջվում էին, ելք Գրենգուլարը քաշում էր նրանց թևը, բացի Համբերատար գիրուկ Հարևանից, ոչ ոք չէր լսում, ոչ ոք չէր դիտում բոլորից լքված թշվառ մորալիտեն: Գրենգուլարը պրոֆիլներից բացի այլ դեմք չէր տեսնում:

Ինչպիսի՛ դառնությունք էր նա տեսնում միառփի ու պոեզիայի իր լաստակերտի կտոր-կտոր փլչելը: Եվ երևակայել, որ այդ բազմությունը՝ իր երկը լսելու անհամբերությունից մղված՝ քիչ էր մնացել ըմբոստանա՛ր պալատի պարոն բայլի դեմ: Իսկ Հիմա, երբ արդեն

կատարում էին, այլևս ոչ ոք ուշադրություն չէր դարձնում այդ նույն ներկայացմանը, որ սկսվել էր այնպիսի միահամուռ ցնծությունով: Ժողովրդի համակրություն մշտնջենական մակրնթացություն ու տեղատվություն: Մտածել, որ քիչ մնաց կախեին պալատի բայի սերժանտներին: Ի՛նչ ասես չէր տա նա, որպեսզի դարձյալ այդ մեղրածամում լիներ:

Սակայն բարապանի անախորժ մենախոսությունը զադարեց, ամենքն էլ եկել էին. Գրինդուարն ազատ շունչ քաշեց, դերասանները արհարար շարունակում էին: Բայց եկ տես, որ այդ ժամանակ հանկարծ վեր է կենում այսօր Կոսլընոլը՝ գուլպայազածառը, և ընդհանուր ուշադրություն պահին արտասանում է հետևյալ խայտառակ ճառը.

– Փարիզի պարոն քաղաքացիներ՝ և սեպուհներ, ես չեմ իմանում, Աստված ու նրա խաչը վկա, թե ինչ ենք անում մենք այստեղ: Ես տեսնում եմ ահա այնտեղ, այդ իշառտնուկի վրա, մարդիկ, սրունք կարծես ու գոմ են կոճկ իրար հետ: Ես չգիտեմ, թե դա այն է, որ դու ք անխնամ եք միտտերիտ: Բայց զվարճալի բան չէ, միայն լեզվով են կոչում և ուրիշ ոչինչ: Քառորդ ժամ է ահա, որ սպասում եմ առաջին հարվածին, բայց ոչինչ չի լինում: Վախկոտ մարդիկ են դրանք և միայն լուտանքներով են իրար ճանկոում: Պետք է մեղամարտիկներ բերել տայիք Լոնդոնից կամ Ռոսերգամից. և այն ժամանակ, խնդրեմ, բռունցքի այնպիսի հարվածներ կտեսնելիք, որ հրապարակից էլ լսեին հարվածների ձայնը, իսկ սրանք խղճահարություն են առաջացնում: Գոնե մի սրեկ մավրիտանական պար ցույց տային մեզ, կամ մի ուրիշ խեղկասակություն: Մա այն չէ, ինչ ասել էին ինձ. իսկ ինձ խոստացել էին ծաղրածուների տոն՝ պապի ընտրությամբ հանդերձ: Մենք էլ Կենտում մեր ծաղրածուների պապն ունենք, և այս հարցում ետ չենք մնում, Աստված ու նրա խաչը վկա: Բայց տեսեք, թե ինչպես ենք մենք անում, հավաքվում ենք բազմությունով. ինչպես այստեղ է. հետո ամեն մարդ իր գլուխը դուրս է հանում մի հասուկ ծակից և ծամածռություններ անում մյուսներին:

Ով ամենից ավելի այլանդակ անի, բոլորի հավանությամբ կընտրվի պապ. այս է բոլորը: Խիստ զվարճալի է դա: Կուզե՞ք, որ ձեր պապն էլ իմ երկրի ձեռով ընտրենք: Դա պակաս տաղտկալի կլինի, քան այս շատախոսներին լսելը: Իսկ եթե նրանք էլ են ուզում այդ անցքից ծամածոություն անել, ապա կարող են դառնալ խաղի մասնակից: Հը՞, ի՞նչ կասեք, պարո՛ն քաղաքացիներ: Այստեղ երկու սեռին պատկանող բավականաչափ արտառոց մարդկանց նմուշներ կան. որպեսզի կարողանանք ֆյամանդական ձեռով ծրծաղիլ, և բավական տգեղ դեմքեր կան, որպեսզի զվարճալի ծամածոություններ հուսանք:

Գրենգուարն ուզում էր պատասխանել, բայց ապչանքը, դայրույթն ու սրտնեղությունը կապիլ էին լեզուն: Բացի դրանից, ժողովրդականություն նվաճած գուլպայափաճառի առաջարկն այնպիսի խանդավառությամբ ընդունեցին սեպուհ կոչվելուց չոյված այդ քաղաքացիները, որ ամեն տեսակ դիմադրությունն անսոգուտ էր: Մնում էր միայն անձնատուր լինել հոսանքին: Գրենգուարը դեմքը ծածկեց զույգ ձեռքով, որովհետև թիկնոց չունենր, որպեսզի ծածկեր գլուխը, ինչպես Ագամեմնոն Տիմանտը:

V

ՔՎԱԶԻՄՈՂՈ

Մի ակնթարթում ամեն ինչ պատրաստվեց՝ Կոպրնոլի միտքն ի կատար ածելու համար: Գործի անցան քաղաքացիներ, ճեմարանականներ և դատական գրագիրներ: Մարմարե սեղանի դիմաց գտնվող փոքրիկ մատուռն ընտրվեց ծամածոությունների ցուցադրելու համար: Դռան վերևի գեղեցիկ վարդազարդի մի ապակին ջարդելուց հետո բացված քարե չրջանակից մրցակիցները պետք է դուրս հա-

նեին իրենց գլուխը: Այդ քարն շրջանակին հասնելու համար բավական էր բարձրանալ չգիտես որտեղից ճարված և մի կերպ իրար վրա դրված երկու տակառի վրա: Համաձայնության եկան, որ յուրաքանչյուր թեկնածու, մարդ թե կին (քանի որ կարող էին պապուհի էլ ընտրել), իր ծամածռության տպավորությունն անաղարտ ու ամբողջական պահելու համար, դեմքը պիտի ծածկեր և թաքնված մնար մատուռում, մինչև որ հասներ ցուցադրման իր հերթը: Մի վայրկյան չանցած՝ մատուռը լցվեց մրցակցողներով, որոնց վրա էլ փակեցին դուռը:

Կոպընոլն իր տեղից հրամաններ էր տալիս, ղեկավարում ու կարգադրում էր ամեն ինչ: Այդ իրարանցման ժամանակ կարգինալը, որ Գրենգուարից պակաս շիոթված չէր, գործեր ունենալու և երեկոյան ժամերգության դնալու պատրվակով հեռացել էր իր չբախմբի հետ, իսկ բազմությունը, որին այնքան հուզել էր նրա գալը, ամենեին էլ չէր անհանգստացել նրա մեկնելուց: Գիյոմ Ռիմը միակ մարդն էր, որ նկատեց նորին սրբազնության փախուստը: Ժողովրդի ուշադրությունը արեւի նման իր շրջանն էր կատարում, մեկնելով սրահի մի ծայրից, որոշ ժամանակ կենտրոնում կանգ առնելուց հետո, հիմա մյուս ծայրն էր հասել: Մարմարե սեղանը, դիպակապատ անդաստակը ունեցել էին ուշադրությունը գրավելու իրենց պահերը, հիմա էլ հերթը Լյուդովիկոս XI-ի մատուռինն էր: Ասպարեզն այժմ ազատ էր ամեն տեսակ խենթությունների համար: Մնացել էին միայն ֆլամաններն ու խաժամուժը:

Ծամածռություններն սկսվեցին: Քարե շրջանակից դուրս եկած առաջին դեմքը իր ետ շրջած, կարմիր կոպերով, երախի պես բացված բերանով և կայսրության շրջանի հուսարական երկարաճիտ կոշիկների նման ծալ-ծալ ճակատով այնպիսի անվախճան ծիծաղ առաջացրեց, որ Հոմերոսն այդ բոլոր գեղջուկներին աստվածների տեղ կընդուներ: Սակայն մեծ սրահը բնավ էլ Ոլիմպոս չէր և Գրենգուարի խեղճ Յուպիտերը ավելի լավ էր իմանում դա, քան որևէ մեկը: Հա-

Ջորդեց երկրորդ, ապա երրորդ ծամածուլթյունը, հետո մի ուրիշը, դարձյալ մի ուրիշը, և ամեն անգամ կրկնապատկվում էին ծիծաղն ու ոտքի դոփյուլնները: Այդ տեսարանի մեջ կար ինչ-որ յուրահատուկ գլխապտույտ, արբեցման ու դյուլթանքի ինչ-որ գորություն, որի մասին խիստ դժվար կլիներ պատկերացում տալ մեր օրերի և սալոնների ընթերցողին: Երևակայեցեք, ուրեմն, դեմքերի մի շարան, որոնք հաջորդաբար ներկայացնում են երկրաչափական բոլոր ձևերը՝ եռանկյունուց սկսած մինչև տրապեցիան, կոնից մինչև բազմանիստը, մարդկային բոլոր զգացումների արտահայտությունները՝ գայրույթից սկսած մինչև վավաշոտությունը, բոլոր տարիքները՝ նորածնի խորշոմներից սկսած մինչև մահամերձ պառավի կնճիռները, կրոնական բոլոր ուրվապատկերները՝ Պառուկից մինչև Բեհեզգեբուզը. կենդանիների բոլոր պրոֆիլները՝ երախից մինչև կտուցը, ղնչից մինչև կնճիթը: Երևակայեցեք նոր կամուրջի բոլոր այլանդակ կերպարանքները՝ Ժերմեն Պիլոնի³³ ձեռքի տակ քարացած այդ մղձավանջային գլխաքանդակները շունչ ու կյանք ստանան և իրար ետևից գան ու հրաբորբոք աչքերով նայեն ձեզ. Վենետիկի բարեկենդանի բոլոր դիմակներն իրար հաջորդեն ձեր աչքերի առաջ, մի խոսքով՝ մարդկային դեմքերի գեղադիտակ-կալեյդակոպ:

Խոլ գվարճությունը հետզհետե ավելի ֆլամանդական էր դառնում: Տենիեն³⁴ անգամ չէր կարողանա կատարյալ պատկերացում տալ դրա մասին: Պատկերացրեք Սալվատոր Թոգայի³⁵ պատերազմը՝ վերածված բաբոսյան խելահեղություն: Այլևս ո՛չ ճեմարանականներն էին երևում, ո՛չ դեսպանները, ո՛չ քաղաքացիները, ո՛չ տղամարդիկ, ո՛չ էլ կին. ո՛չ Կլոպեն Տրույֆուն էր ջոկվում, ո՛չ Ժիլ

33. Ֆրանսիացի քանդակագործ, կերտել է արքաների դամբարաններ, «Երեք գեղուհիները» և քանդակագարդել Փարիզի նոր կամուրջը (1535-1590):

34. Տենիե Կրտսեր (1610-1694), ֆլաման նկարիչ, կենցաղային պատկերների, տոների վարպետ վերարտադրող:

35. Սալվատոր Թոգա (1615-1673), իտալական անվանի նկարիչ, տխուր ու վայրագ սյուժեների սիրահար:

Լրկորնյուն, ո՛չ Մարի Չորսֆնաանոցը, ո՛չ էլ Ռորեն Պուսպենը. ամեն ինչ ջնջվել էր համընդհանուր սանձարձակութայան մեջ: Մեծ սրահը այլևս ոչ այլ ինչ էր, եթե ոչ անամոթութայան ու զվարճութայան մի հսկայական հնոց, որտեղ ամեն բերան մի ճիչ էր արձակում, ամեն մի աչք՝ կայծակ, ամեն մի դեմք ծամածուծություն անում, ամեն մի անձ ուրույն դիրք ունեւր, իսկ բոլորը միասին գոռում էին ու ոռնում: Այն տարօրինակ դեմքերը, որոնք հերթով գալիս էին և քարե շրջանակից կրճատում ատամները, կարծես կրակի մեջ նետված ծղոտե ջահեր լինեին: Եվ այդ ամբողջ խլրտացող ու բորբոքված բազմությունից, ինչպես գոլորշին բալնիքից, բարձրանում էր կծու, սուր, ծակող ու մոծակի թևերի պես բզզացող ժխոր:

– Վա՛յ, նզովվա՛ձ:

– Հապա նայիր այդ ռեխին:

– Է՛, բանի պետք չի:

– Իսկ մյո՞ւսը:

– Գիյմե՛թ Մոժերայուի, հապա նայիր ցուլի այդ զնչին. միայն կոտորներն են պակասում: Հո քո մարդը չի:

– Բա էն մյո՛ւսը:

– Պապի փորը վկա. դա ի՛նչ ծամածուծություն է:

– Պահո՛. այդ ի՞նչ խարդախություն է. միայն դեմքը պետք է ցույց տալ:

– Դա անիծած Պերեստ Կալբոթը կլինի: Այդ աղջկանից սպասելի է:

– Յնծությո՛ւն, ցնծությո՛ւն:

– Ես խեղդվեցի:

– Հապա սա՞, սականջները չի կարողանում ծակից դուրս հանել:

Եվ այլն, և այլն: Այնուամենայնիվ, արդարը հատուցենք մեր բարեկամ Ժեհանին: Այդ դիվահանդեսի ժամանակ նա դեռ նստած էր իր սյան ծայրին, ինչպես նավամանչուկը կայմի կատարին: Նա կաշվից դուրս էր գալիս աներևակայելի մոլեգնություն: Նրա բերանը լայն բացված էր, և այնտեղից արձակվում էր մի ճիչ, որ չէին լսում ոչ թե

այն պատճառով, որ կորչում էր ընդհանուր ժխորի մեջ, որքան էլ սա ուժգին լիներ, այլ որովհետև անկասկած հասնում-անցնում էր ընկալելի սուր Հնչյունների սահմանակետից, որ ըստ Սովյորի՝ վայրկյանում տասներկու հազար թրթռում է, իսկ ըստ Բիոյի՝ ութ հազար:

Ինչ վերաբերում է Գրենգուարին, ապա ընկճման առաջին պահն անցնելուց հետո, վերստացել էր իր զգաստությունը և փորձել ծառանալ իր հակառակորդների դեմ:— Շարունակեցեք,— երրորդ անգամ ասել էր նա իր դերասաններին՝ խոսող մեքենաներին, ապա մեծ-մեծ քայլերով ման գալով մարմարե սեղանի առաջ՝ հյրեմն ցանկություն էր ունենում ինքն էլ գնա իր հերթին մատուռի քարե շրջանակից գլուխը դուրս հանի թեկուզ հենց նրա համար, որպեսզի հաճույք ունենա այդ ապերախտ ժողովրդին ծամածուծություն անելու: «Բայց ոչ. դա մեզ վայել չէ. ո՛չ մի վրեժխնդրություն, պայքարենք մինչև վերջ,— կրկնում էր նա մտքում,— պոեզիայի իշխանությունը մեծ է ժողովրդի վրա. ես նրանց ետ կրեմմ: Կտեսնենք, թե ով կհաղթի՝ ծամածուծությունն՞րը, թե՞ գեղեցիկ մատենագրությունը»:

Ավա՛ղ, նա մնացել էր իր պիեսի միակ հանդիսատեսը:

Այժմ ավելի վատ էր, քան քիչ առաջ: Միայն մարդկանց կոնակներն էր նա տեսնում:

Բայց ես սխալվում եմ: Այն գիրուկ, համբերատար մարդը, որի կարծիքն էր հարցրել նա ճգնաժամային պահին, մնացել էր դեմքը թատրոնին դարձրած: Ինչ վերաբերում է ժիսքետին ու Լիենարդին, ապա նրանք վաղուց էին փախել:

Գրենգուարը սրտի խորքում խիստ զգացվեց իր միակ հանդիսատեսի հավատարմությունից: Նա մոտեցավ նրան և մեղմությամբ թափ տալով նրա թևը (որովհետև բարեմիտ մարդը հենվել էր ճաղերին ու նիրհում էր) ասաց.

— Ենորհակալ եմ ձեզ, պարո՛ն:

— Ինչի՞ համար, պարո՛ն,— պատասխանեց գիրուկը հորանջելով:

— Ես տեսնամ եմ, թե ինչն է ձանձրացնում ձեզ,— շարունակեց

բանաստեղծը.— այս անասելի ժխտոն է, որ թույլ չի տալիս ձեզ հանգիստ լսելու: Բայց անհոգ եղեք, ձեր անունը կանցնի հետևորդ սերունդներին: Խնդրեմ ասեք ձեր անունը:

— Իրնո Շատո՛ւ՝ Փարիզի Շատլևի կնքապահ, ձեր խոնարհ ծառան:

— Պարո՛ն, դուք մուսաների միակ ներկայացուցիչն եք այստեղ,— ասաց Գրենգուարը:

— Դուք շատ ազնիվ եք, պարո՛ն,— պատասխանեց Շատլևի կնքապահը:

— Դուք միակ անձն եք,— ասաց Գրենգուարը,— որ պատշաճորեն լսեցիք պիեսը: Ի՞նչ կարծիք կազմեցիք նրա մասին:

— Ա՛, հա՛,— գոչեց գիրուկ դատավորը կիսով չափ զարթնելով,— իրոք որ բավական գվարճալի է:

Հարկ եղավ, որ Գրենգուարը բավարարվի այդ գովեստով, որովհետև ծափահարությունների մի ոլորտ, խառնվելով խլացուցիչ գոչյուններին, կարճ կտրեց նրանց խոսակցությունը: Խենթերի պապն ընտրված էր:

— Ցնծությո՛ւն, ցնծությո՛ւն, ցնծությո՛ւն,— աղաղակում էր ժողովուրդն ամեն կողմից:

Իրոք սր հրաշալի էր այն ծամածուծությունը, որ շողշողում էր այդ ժամանակ վարդաքանդակի անցքից: Բոլոր հնգանկյուն, վեցանկյուն և անճոռնի դեմքերից հետո, որ իրար էին հաջորդել այդ շրջանակից և չէին կարողացել լրացնել այլանդակի այն իղեալը, որ խելահեղությունն ստեղծել էր մարդկանց բորբոքված երևակայության մեջ, քվեների մեծամասնություն ստանալու համար, այնուամենայնիվ, պետք էր այն փառահեղ ծամածուծությունը, որ զմայլեցրեց բազմությունը:

Ծափահարեց նույնիսկ վարպետ Կոպլենոլը, և Կլոպեն Տրույֆուն, որ մասնակցել էր մրցությունը (և Աստված գիտե, թե նրա դեմքի տգեղությունը ինչպիսի ուժգնության կարող էր հասնել), խոստովանեց իր պարտությունը: Մենք ևս նույնը կանենք, չենք փորձի գաղտփար տալ ընթերցողին քառանիստ քթի, այդ պայտածև բերա-

նի, թփանձան, չեկ հոնքից ծածկված այդ մանրիկ ձախ աչքի մասին, մինչպես աջ աչքը ամբողջովին անհետանում էր մի հսկայական կոծիծի տակ. չենք փորձի նկարագրել այդ ծուռումուռ, այս ու այն տեղ կոտրատված ատամները, ինչպես բերդի պարսպի որմածերպերն են, կարծրացած շրթուները, որի վրա պարզվում էր այդ ատամներից մեկը փղի ժանիքի նման, երկճյուղ կղակը և մանավանդ՝ այդ բոլորի վրա տարածված դեմքը՝ չարության, զարմանքի ու տխրության այդ խառնուրդը: Երևակայությամբ պատկերացրեք, եթե ուզում եք, այդ ամբողջությունը:

Միահամուռ պայթեցին հավանության բացականչությունները. բոլորն էլ նետվեցին դեպի մատուռը և այդտեղից դուրս բերին խենթների երանհիլի պուպին: Բայց այդ ժամանակ էլ զարմանքն ու զմայլանքը իրենց գագաթնակետին հասան. այդ ծամածռությունը նրա հենց իսկական դեմքն էր:

Ավելի շուտ նրա ամբողջ անձը ծամածռություն էր: Հսկայական գլուխ՝ ծածկված չեկ, ցից-ցից մազերով, երկու ուսերի միջև ահագին սապատ, որի հակադիրն զգացվում էր առջևից. ազդերի ու սրունքների մի տարօրինակ սխտեմ՝ իրարից այնքան խոտորած, որ ծնկների մոտ միայն կարող էին միմյանց հպվել և ղիմացից նայելիս նման էին կոթից միայն միացող երկու մանգաղի մահիկներին. իրարից հեռու ոտքեր, հրեշավոր ձեռքեր և այդ ամբողջ այլանդակության հետ զորություն, դյուրաշարժություն ու քաջություն ինչ-որ վտանգավոր քայլվածք, մի տարօրինակ բացառություն այն հավերժական կանոնի, ըստ որի՝ ուժը, ինչպես և գեղեցկությունը, բխում է ներդաշնակությունից: Այսպես էր ահա այն պապը, որ ընտրել էին իրենց համար ծագածունները:

Թվում էր, թե ջարդված և վատ փակցված հսկա էր նա:

Երբ կիկլոպյան այս նմուշը երևաց մատուռի շեմքում՝ անշարժ, պնդակազմ և համարյա այնքան լայն, որքան բարձրությունն էր՝ քառակուսի իր հիմքում, ինչպես ասում է մի մեծ մարդ, կեսը կար-

միր, կեսը մանուշակագուլյն իր վերնազգեստից՝ վրան արծաթագուլյն փոքր զանգեր, և մանսփանդ՝ նրա տգեղության կատարելությունից անմիջապես ամբոխը ճանաչեց և միաբերան աղաղակեց.

– Քվազիմոզոն է՝ ժամհա՛րը. Քվազիմոզոն է՝ Աստվածամոր տաճարի կո՛ւզը. միականի Քվազիմոզոն, ծուռոտն Քվազիմոզոն: Յնծությո՛ւն, ցնծությո՛ւն:

Ինչպես տեսնում ենք՝ խեղճ արարածը կարող էր մականունների ընտրություն կատարել:

– Զգո՛ւյշ կացեք, հղի՛ կանայք, – գոռում էին ճեմարանականները:

– Կամ ովքեր ցանկություն ունեն այդպիսին լինել, – վրա բերեց ժոռոններ:

Արդարև, կանայք ծածկում էին իրենց դեմքը:

– Օ՛, ի՛նչ զգվելի կապիկ է, – ասաց մի կին:

– Նույնքան չար, որքան տգեղ, – նկատեց մի ուրիշը:

– Սատանան է որ կա, – ավելացրեց երրորդը:

– Դժբախտաբար, ես ապրում եմ Աստվածամոր տաճարի մոտ և լսում եմ, թե ինչպես է նա գիշերը ման գալիս տանիքի վրա:

– Կատունների հետ:

– Միշտ մեր տանիքների վրա է:

– Ծիննելույզներից թալիսմաններ է գցում մեզ:

– Անցած գիշերը եկավ ու մեր ձեղունի լուսանցույցից ծամա-ծռություն արեց ինձ: Կարծեցի, թե տղամարդ է: Սաստիկ վախեցա:

– Ես վստահ եմ, որ դիվահանդես է գնում նա: Մի անգամ էլ ավել էր մոռացել մեր տանիքի կապարների վրա:

– Թո՛ւ, զգվելի դեմքով կուզլիկ:

– Թո՛ւ, չար ոգի:

– Փո՛ւ:

Տղամարդիկ ընդհակառակը՝ զմայլվել էին և ծափահարում էին:

Իրարանցման առարկա Քվազիմոզոն շարունակում էր կանգնած մնալ մատուռի շեմքին՝ մռայլ ու լրջազեմ՝ թողնելով, որ ուրախա-

նան իր վրա:

Մի ճամարանական (կարծեմ՝ Ռուրեն Պուսպենը) եկավ ու խիստ մոտիկից սկսեց ծիծաղել նրա վրա: Քվազիմոզոն բավականացավ նրա գոտուց բռնելով և ժողովրդի վրայից տասը քայլ այն կողմ շարտելով՝ առանց ծպտուն հանելու:

Վարպետ Կոպրնոլը սքանչացած մոտեցավ նրան:

— Աստված ու նրա խաչը վկա, սրբազան պապ, դու օժտված ես լավագույն տգեղությամբ, որ երբևէ տեսել եմ կյանքումս, ուստի արժանի ես պապ լինելու նաև Հոռոմում, ինչպես որ Փարիզում ես:

Այդ ասելիս ձեռքը գլարթությամբ դրեց նրա ուսին: Քվազիմոզոն չչարժվեց: Կոպրնոլը շարունակեց.

— Դու հենց այն թուկից փախածն ես, որի հետ ես կերուխում անելու մեծ փավագ ունեմ, թեկուզ և դա ինձ նստի տասներկու երկվեցյակ տուրնյան լիվր: Լավ չե՞մ ասում:

Քվազիմոզոն չպատասխանեց:

— Աստված ու նրա խաչը, — գոչեց գուլպայավաճառը, — Հո խուլ չե՞ս:

Իրոք որ նա խուլ էր:

Բայց և այնպես, նա սկսում էր համբերությունը կո՞րցնել Կոպրնոլի վերաբերմունքից և հանկարծ դառնալով նրա կողմը՝ ատամներն այնպիսի զարհուրելի ձևով կրճտեց, որ ֆլամանդացի հսկան ընկրկեց, ինչպես բուլդոզը կատվի առաջ:

— Խո՛ւլ է, — ասաց գուլպայավաճառը ֆլամանդական քահ-քահ ծիծաղով: — Աստված ու նրա խաչը վկա, անթևի պապ է սա:

— Օհո՛, ճանաչում եմ ես դրան, — գոչեց Ժեհանը, որ վերջապես իջել էր իր խոյակից՝ Քվազիմոզոյին մոտիկից տեսնելու համար, — սա իմ ավագ սարկավագ եղբոր ժամհարն է: Բարև, Քվազիմոզո:

— Մարդ Հո չի, սատանա է, — ասաց Ռուրեն Պուսպենը, որի անկումից առաջացած ցավերը դեռ չէին անցել: — Նայում ես դրան՝ կուզ է, ծուռոտն է, բայց քայլում է, նայում է քեզ, բայց միականի է, խո-

սում ես հետք, խուլ է: Գրողը տանի, բա ի՞նչ է անում իր լեզուն այդ Պոլիֆեմը⁵⁶:

– Երբ ու պինա՝ կխոսի, – ասաց մի պառավ կին, – խլացել է զանգահարելուց: Համբ չէ:

– Հենց դա էլ պակասում է նրան, – նկատեց Ժեհանը:

– Մեկ աչքն ավելի է, – ավելացրեց Ռոբեն Պուսպենը:

– Ամենին, – խնայյիտրին ասաց Ժեհանը: – Միականին կույրից ավելի անկատար է, նա գիտե, թե ինչ է պակասում իրեն:

Այդ միջոցին մուրաչկանները, բոլոր սպասավորները, բոլոր գրպանահատները միացած ճեմարանականներին, թափոր կազմած՝ գնացին դատարանի գրագիրների պահարանից բերելու խենթների պապի ստվարաթղթե խուլյրը և ծաղրական փիլոնը: Քվագիմոզոն առանց աչքը թարթելու և մի տեսակ հպարտ հեզությամբ թողեց, որ հագցնեն իրեն: Հետո նրան նստեցրին նախշված պատգարակի վրա: Մալրածուների ելլալը թյան տասներկու անգամ բարձրացրին նրան իրենց ուսերին, և մի տեսակ դառն ու արհամարհական ուրախություն չուրաց կիկոպի մուայլ դեմքի վրա, երբ իր ոտքերի տակ նա տեսավ այդ բոլոր գեղեցիկ, ուղիղ ու բարեկազմ մարդկանց: Ապա գջլուաների թափորը վայնասուեններով շարժվեց տեղից՝ ըստ սովորության շրջան կատարելու պալատի ներքին միջանցքներում, նախքան փոպսցներում ու քառուղիներում ման գալը:

56. Ամենանշանավոր կիկոպը. նեպասեծ որգին: Նրա միակ աչքը կուրացրեց Ուրխակը. սրին, իր ընկերների հետ, կիկոպը պահում էր համայն մտասկա իր քարանձավում:

ԷՍՄԵՐԱԼԴԱ

Մենք չափազանց ուրախ ենք, որ կարող ենք մեր ընթերցողներին հայտնել, թե ինչպես այդ ամբողջ իրարանցման ժամանակ Գրենգուարն ու նրա պիեսը մնացին անհողողոզ: Դերասանները Գրենգուարի կողմից հրահրվելով՝ չէին դադարել կատակերգր խաղալ, ինքն էլ չէր դադարել լսել: Նա համակերպվել էր ժխորին և որոշել էր զնալ մինչև վերջ՝ առանց հույսը կտրելու, որ հասարակությունը նորից ուշադրություն կդարձնի ներկայացմանը: Հույսի այդ նշույլը բոցավառվեց, երբ նա տեսավ, որ Քվազիմոդոն, Կոստանտինը և ծաղրածուների պապի խլացնող շքախումբը աղմուկ-աղաղակով դուրս եկան սրահից: Բազմությունն ազահաբար վազեց նրանց ետեից: «Շատ լավ, — ասաց նա ինքն իրեն, — բոլոր խառնակիչները կզնանկկորչեն»: Դժբախտաբար, բոլոր խառնակիչները հասարակությունն էին: Մեկ ակնթարթում մեծ սրահը դատարկվեց:

Ճիշտն ասած՝ դեռ մնում էին մի քանի հանդիսատես, ոմանք առանձին, ոմանք խմբված սյունների շուրջը՝ գոռոցոցներով ու իրարանցումից կշտացած կանայք, ձերուներին և երեխաներ: Մի քանի ճեմարանական հեծնելու ձևով մնացել էին պատուհանագողերին և դիտում էին հրապարակը:

— Ի՛նչ արած, — մտածեց Գրենգուարը, — այնուամենայնիվ, բավական մարդ կա, և կարելի է լսել իմ միստերիայի վերջը: Քիչ են թևև, բայց ընտիր հասարակությունն է, կրթված հասարակություն:

Քիչ հետո, այն սիմֆոնիան, որ պետք է մեծագույն տպավորություն գործեր սուրբ կույսի երևալու պահին, չկատարվեց: Գրենգուարը նկատեց, որ ծաղրածուների պապի թափոոր առել-տարել էր իր նվագախումբը:

– Շարունակեցիք սուսնց նրան,– ասաց նա ստոյիկաբար:

Նա մոտեցավ քաղաքացիների մի խմբի, որ, ինչպես թվացել էր նրան, իր պիեսի մասին էին խոսում: Եվ ահա նրա լսած խոսակցութեան պատառիկը:

– Դուք, տյա՛ր Շատընո, գիտե՞ք Նովոռոսյի ապարանքը, որ պարոն դը Նեմուրին էր պատկանում:

– Այո, այո, Բրաքի մատուռի դեմուղեմը:

– Արքունի գանձարանը այս քանի օրը վարձով տվեց դա զարդանկարիչ Գրյոմ Ալիքսանդրին՝ տարեկան վեց փարիզյան լիվրով և ութ սոլով:

– Ինչպե՛ս է բարձրանում վարձագիրը:

– Է-հե՛,– ասաց ինքն իրեն Գրենդուարը Հառաչելով,– գոնե մյուսները լսում են:

– Ընկերնե՛ր,– գոռաց Հանկարծ պատուհանի երիտասարդ խեղկատակներից մեկը:– Էսմերալդան, Էսմերալդան Հրապարակո՛ւմ է:

Այս խոսքը մոգական ազդեցութիւն գործեց: Սրահում մնացած բոլոր մարդիկ նետվեցին պատուհանները, մագլցեցին պատերը՝ տեսնելու Համար և կրկնելով՝ Էսմերալդա, Էսմերալդա:

Միաժամանակ դրսից լսվում էին ուժեղ ծափահարութիւններ:

– Ի՞նչ կարող է նշանակել դա՝ Էսմերալդա,– ասաց Գրենդուարը սրտամորմոք կերպով ձեռքերն իրար կցելով:– Ա՛խ, Աստվա՛ծ իմ, բոս երևույթին, հիմա էլ հերթը եկավ լուսամուտներին:

Նա շրջվեց դեպի մարմարե սեղանը և տեսավ, որ ներկայացումն ընդհատվել է: Հինց այն դրվագն էր դա, երբ պետք է Հայտնվեր Յուպիտերն իր շանթով: Բայց Յուպիտերն անշարժ կանգնել էր բեմի ներքևում:

– Միչել Ժիբո՛րն,– գոռաց զայրացած բսնաստեղծը,– ի՞նչ ես անում այդտեղ: Մի՞թե հիմա քո մուտքը չէ: Դե՛ ուրեմն բարձրացիր:

– Ավա՛ղ,– ասաց Յուպիտերը,– մի ճեմարանական ելարանը տարավ հենց հիմա:

Գրեկագուարը նայեց այնտեղ: Իրոք որ դերասանը ճիշտ էր ասում:
Ամեն կապ հանգույցի և լուծման միջև ընդհատված էր:

– Վա՛յ խայտառակ,– շշնջաց նա:– Եվ ինչո՞ւ է տարել այդ
ելարանը: –

– Որ գնա տեսնի էսմերալդային,– ողբագին պատասխանեց Յու-
պիտերը:– Ասաց՝ պա՛հ, ա՛յ քեզ մի ելարան, որ այստեղ ավելորդ է,
ու տարավ:

Վերջին հարվածն էր դա, և Գրեկագուարն ընդունեց համակեր-
պությամբ:

– Գրո՛ղը տանի ձեզ,– ասաց նա դերասաններին,– եթե ինձ
վճարեն, դուք էլ ձերը կստանաք:

Դրանից հետո նահանջեց նա գլխահակ, սակայն վերջինը, այն
գեներալի նման, որը լավ է կռվել:

Եվ պալատի խորհուրդը աստիճաններն իջնելով՝ մոլտում էր
ատամների արանքից.– Ավստրալիաների ու բոլնիերի ի՛նչ խաժամուժ են
այս փարիզցիները. գալիս են միստերիա լսելու, բայց ոչինչ չեն
լսում: Զբաղվեցին ամեն ինչով՝ Կլոպեն Տրուլֆուով, կարդինալով,
Կոպրնոլով, Քվազիմոդոյով ու սատանայով, բայց ամէնևին տիկին
սուրբ կույս Մարիամով: Եթե իմանայի, ձեզ, ինչպե՛ս չէ, կույս Մա-
րիամներ կտայի, ավարանե՛ր: Եվ ես, որ եկել էի դեմքեր տեսնելու,
կռնակներ տեսա միայն: Բանաստեղծ լինել և խաբեբա դեղավաճառի
հաջողությո՛ւն ունենալ: Ճիշտ է թեև, որ Հոմերոսն էլ ողորմություն
էր խնդրում հունական գյուղերում, որ Նագոնն էլ մեռավ մոսկով-
յանների մոտ աքսորված: Բայց թող սատանան կաշիս քերթի, թե
հասկանամ, ինչ են ուզում ասել իրենց էսմերալդայով: Նախ և
առաջ՝ այդ ի՞նչ բառ է. գնչուհրեն է, ի՞նչ է:

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

I

ԽԱՐԻՐԴԱՅԻՑ ՍՅԻԼԼԱ

Գիշերը շուտ է գալիս հունվարին: Փողոցներն արդեն մութ էին, երբ Գրենգուարը դուրս եկավ Արդարագատության պալատից: Այդ մութը դուր եկավ նրան. նա անհամբեր ուզում էր հասնել որևէ խավար ու ամայի նեղ փողոց, որպեսզի հանդարտ խորհրդածներ ինքն իրեն, որպեսզի փիլիսոփան առաջին կապը փաթաթեր բանաստեղծի վերքին: Բացի դրանից, փիլիսոփայությունը նրա միակ ապաստանն էր, որովհետև չէր իմանում ուր գիշերի: Իր առաջին թատերական փորձի շոնդայի ծախողումից հետո, նա չէր համարձակվում վերադառնալ իր բնակարանը Գրլնիե սյուռ-լ'Օ փողոցում, Չոր խոսի նավամատույցի դիմաց, որովհետև հույս ուներ, որ պարոն պրեռն կվճարի իրեն հարսնեղջուրի համար, ինքն էլ կվճարի Փարիզի երկկճղականինների տուրքի հարկահավաք պարոն Գիյոմ Դյու-Սիրին վեցամսյա բնակարանային վարձը, որ պարտք էր, այսինքն՝ փարիզյան տասներկու սոլ, այսինքն՝ տասներկուպատիկը այն արժեքի, ինչ ուներ նա աշխարհում՝ ներառյալ և գտապանը, շապիկն ու գլխարկը:

Ժամանակավորապես պատսպարվելով Սենտ-Շապլիի գանձատան կից բանտի դռնակի տակ և մի րոպե մտածելով, թե ինչ ապաստան ընտրի գիշերվա համար, քանի որ Փարիզի բոլոր սալահատակներից կարող է ընտրություն անել, հիշեց հանկարծ, որ անցած շաբաթ Հնակարկատների փողոցում, դատարանի մի խորհրդականի դռանը նկատել էր Ջորի հեծնելու համար շինված աստիճանամաստ և մտածել էր, որ կարիքի դեպքում այդ քարը հիանալի բարձ կլիներ որևէ մուրացկանի կամ բանաստեղծի համար: Նա շնորհակալություն հայտնեց

նախաիննամուծյանը՝ այդ լավ միտքն իրեն տալու համար: Բայց երբ պատրաստվում էր անցնել պալատի հրապարակով, որպեսզի հասնեք Միջնաքաղաքի ծուռուճուռ լաբիրինթոսին, որտեղ օձանման գալարվում են հետևյալ պառավ քույրերը՝ Տակառագործների, Հին Մահուղարանի, Հնակարկատների, Հրեաների և այլն փողոցները, որոնք այսօր էլ կան իրենց նոր կառուցված ինհարկանի տներով, տեսավ խենթների պապի թափորը, որ դուրս էր գալիս Արդարագատուծյան պալատի բակից և աղմուկ-աղաղակով, ջահերի մեծ հրավառուծյամբ և իր՝ Գրենգուլարի նվաղախմբով հորդում էր բակի միջով: Այդ պատկերը նորից բացեց նրա ինքնասիրության վերքերը, և նա փախավ: Նրա դրամատուրգիական ձախողման դառնուծյունը պատճառ էր դառնում, որ օրվա տոնը հիշեցնող ամեն ինչ կսկիծ առաջացնի և արյուն հոսեցնի նրա վերքից:

Նա ուզեց անցնել սուրբ Միքայել կամուրջով, բայց այդտեղ էլ վազվզում էին երեխաներ՝ հրթիռներով ու բոցավառ նիզակներով:

— Ժանտախտը տանի այդ հրթիռները, — ասաց Գրենգուլարը և իջավ դեպի Լուսայափոխաների կամուրջը: Կամրջագլխի տներից կախել էին երեք դրոշ, որոնց վրա պատկերված էին թագավորը, թագաժառանգը և Մարգարիտ Ֆլանդրիացին, վեց հատ էլ փոքր դրոշակ, որոնց վրա կային Ավստրիական դքսի, կարլինալ դր Բուլբոնի, պարոն դը Բոժյոյի, տիկին Ժաննա Ֆրանսուհու և Բուրբոնյան դքսի ապօրինի որդու և մեկն էլ չլիտեմ ում նկարները՝ բոլորն էլ ջահերով լուսավորված: Ամբոխը ղմայլվում էր:

— Երջանիկ մարդ է նկարիչ Ժեհան Ֆուրբոն, — ասաց Գրենգուլարը խոր հառաչելով և մեջքը դարձրեց դրոշներին ու դրոշակներին: Նրա առաջ ձգվում էր մի փողոց, Գրենգուլարին այնքան խավար ու ամայի թվաց դա, որ նա հույս ունեցավ, թե այդտեղ կխուսափի տոնակատարուծյան և՛ բոլոր թնդուճուճներից, և՛ բոլոր շողողողումներից: Եվ առաջացավ այդ փողոցով: Մի քանի վայրկյան հետո

ոտքը դիպավ խոչի. նա սայթաքեց ու ընկավ: Մայիսյան ծառն էր գտ-
որ դատական գրագիրները, ի պատիվ Հանդիսավոր օրվա, առավոտ-
յան դրել էին դատարանի մի նախագահի տան դռան առաջ: Գրեն-
գուարը հերոսաբար դիմագրավեց այդ նոր խոչընդոտը, վեր կացավ
և հասավ գետեղորին: Իր ետև թողնելով քաղաքացիական և քրեական
բանտերի աշտարակները և քայլելով արքայական այգու բարձր պա-
տի երկայնքով՝ չսալահատակված այդ ավազոտ վայրով, որտեղ ցեխը
հասնում էր նրա կոճերին, հասավ Միջնաքաղաքի արևմտյան ծայրին
և որոշ ժամանակ դիտեց Կովերի լաստավարի կղզին, որ անհետացել
է հետագայում բրոնզե ձիու և նոր կամուրջի կառուցմամբ: Ոսկա-
րում կղզյակը երևում էր նրան որպես մի սև զանգված՝ նրան բաժա-
նող սպիտակավուն ջրի նեղ շերտից այն կողմը: Աղոտ ճրագի լույ-
սից հագիվ էր նշմարվում այնտեղ փեթակի ձևով ինչ-որ հյուղակ,
որտեղ գիշերը պատսպարվում էր կովերի լաստավարը:

— Երջանի՛կ լաստավար, — մտածեց Գրենգուարը, — դու չես մտա-
ծում փառքի մասին և հարսնեղություններ չես գրում: Քո ի՛նչ
բանն է, թե թագավորներ են ամուսնանում, Բուրգունդական դքսու-
հիներ կան: Դու այլ մարգարիտ չես ճանաչում, բացի այն մարգար-
տածաղիկներից, որ ապրիլյան արոտավայրերը տալիս են քո կովե-
րին պոկոտելու-ուտելու: Մինչդեռ ես՝ բանաստեղծս, ենթարկվում
եմ սուլոցների և հիմա էլ դողդողում եմ, տասներկու սու պարտք
ունեմ և կոչիկներին ներբաններն այնքան թափանցիկ են, որ կարող
են ապակի լինել քո լապտերի համար: Ենորհակալ եմ, կովերի՛ լաս-
տավար, քո հյուղակը հանգստացնում է իմ տեսողությունը, մոռաց-
նում Փարիզը:

Այդ համարյա թե քնարերգական հափշտակությունից նրան արթ-
նացրեց Սեն-ժանի խոչոր, կրկնակ ճայթռուկը, որ հանկարծակի
պայթեց երանավիտ հյուղակից: Կովերի լաստավարն էր այդպես
մասնակցում տունի զվարճություններին և հրթիռներ էր կրակում:

Այդ ճայթռուկից փշաքաղվեց Գրեհնգուարի մարմինը:

— Անիծյա՛լ տոն,— գոչեց նա,— մի՞թե ամենուրեք պիտի հետապնդես ինձ: Ո՛հ, Աստվա՛ծ իմ, մինչև անգամ կոփերի լաստավարի մոտ:

Հետո նա նայեց իր ոտքերի առաջ հոսող Սենային և համակվեց սոսկալի փորձությունը:

— Օ՛, ինչպիսի՛ հաճությունը կխնդրվեի, եթե ջուրն այսքան սառն չլիներ:

Այդ ժամանակ հուսահատ որոշում կայացրեց: Քանի որ չէր կարող իույս տալ խենթերի պապից, Ժեհան Ֆուրրոյի դրոշակներից, մայիսյան ծառերից, հրթիռներից ու ճայթռուկներից, ապա համարձակորեն որոշեց նետվել տոնի կենտրոնը և գնալ Գրեհի հրապարակ:

«Գոնե,— մտածեց նա,— թիրևս հրավառությունից մի վտուվող փայտ ձեռք գցեմ ու տաքանամ և կարողանամ ընթրիքս անել արքայական այն շաքարե, գինանշանի ձևով պատրաստված երեք խոշոր կարկանդակների փշրանքներից, որ պիտք է դրվեն այդտեղ՝ քաղաքի հանրային բուֆետում»:

II

ԳՐԵՎԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Այժմ խիստ աննկատելի հետք է միայն մնացել այն ժամանակվա Գրեհի հրապարակից: Դա այն սքունչելի, փոքրիկ աշտարակաձև պատշգամբն է, որ գրավում է հրապարակի հյուսիսային անկյունը և որ ծածկված նրա քանդակաղարզերի աշխույժ, սուր եզրերը ջնջող անարգ ծեփի շերտով՝ գուցե և շուտով անհետանա, թաղվի նոր տների վարարումով, որ այնքան արագ լափում է Փարիզի բոլոր հին տների ճակատները:

Այն անձնավորությունները, որոնք մեզ պես չեն կարող անցնել Գրեթի Հրապարակից առանց խղճահարության ու համակրանքի մի հայացք նետելու Լյուդովիկոս XV-ի ժամանակից մնացած երկու ողորմելի շենքերի միջև խնդրված այդ փոքրիկ աշտարակաձև պատշգամբին, կարող են իրենց մտքում հեշտությամբ վերականգնել շինությունների այն ամբողջությունը, որին պատկանելիս է եղել նա, և գտնել այդտեղ տասնհինգերորդ դարի գոթական հին Հրապարակն ամբողջությամբ:

Այն ժամանակ էլ, ինչպես հիմա, անկանոն տրապեցիայի ձև ունենալ՝ եղերված մի կողմից զետափով, իսկ մյուս երեք կողմից՝ բարձր, նեղ ու մոայլատես տների շարքով: Ցերեկը կարելի էր հիանալ նրա շենքերի բաղմադանություններ, որոնք, բոլորն էլ, քարե կամ փայտե զարդաքանդակներ ունեին և արդեն միջնադարի տնային տարբեր ճարտարապետությունների կատարյալ նմուշներ էին ներկայացնում՝ տասնհինգերորդ դարից զնալով մինչև տասնմեկերորդը՝ սկսած քառանկյուն լուսամուտից, որ սկսում էր գործածությունից դուրս մղել սրածայր կամարը, մինչև ռոմանական կիսակլորը, որ գործածությունից դուրս էր մղվել սրածայր կամարի կողմից և դեռ նրա ներքևում զրավում էր Ռոյանի աշտարակ անունը կրող հին տան առաջին հարկը, Հրապարակի անկյունը Սենայի վրա, Կաշեգործների փողոցի կողմից: Գիշերը շենքերի այս զանգվածից երևում էր միայն ատամնադիժը սև տանիքների, որոնք Հրապարակի շուրջն էին պարզում սուր անկյունների իրենց շղթան: Այդ ժամանակի և այժմյան քաղաքների հիմնական տարրերություններից մեկն այն է, որ այժմ ճակատներն են նայում Հրապարակներին ու փողոցներին, իսկ այն ժամանակ՝ որմագագաթի եռանկյունակները: Երկու դար է ահա, ինչ տները շրջվել են:

Հրապարակի արևելյան կողմի կենտրոնում բարձրանում էր սերտորեն իրար կպչող երեք տնից կազմված մի ծանր ու խառնաճ շինություն: Դա կոչում էին նրա պատմությունը, նպատակն ու

ճարտարապետութիւնը բացատրող երեք անունով՝ Դոֆենի տուն, որովհետեւ Կառլոս V-ը թագաժառանգ եղած ժամանակ ապրել էր այնտեղ, Վաճառատուն, որովհետեւ ծառայում էր որպէս քաղաքապետարան, և Սյունազարդ տուն (domus ad piloria), իր երեք հարկերին նեցուկ հանդիսացող հաստ սյուների շարքի պատճառով: Քաղաքն այդտեղ գտնում էր այն ամենը, ինչ պետք է լավ քաղաքի համար, ինչպէս Փարիզը. մատուռ՝ Աստծուն աղոթելու համար, դատասարհ՝ նիստ գումարելու և կարիքի դեպքում արքայական պաշտոնյաներին հակահարված տալու համար, և ի լրումն դրանց՝ Հրետանիով ու հրազենով լի զինանոց, որովհետեւ Փարիզի քաղաքացիները գիտեն, որ բոլոր դեպքերում աղոթքն ու դատաւարութիւնը բավական չեն պաշտպանելու քաղաքի մենաշնորհ իրավունքները և միշտ էլ քաղաքապետարանի ձեղնասենյակներից որևէ մեկում պահում են որոշ քանակութեամբ ժանգոտած հնատիպ հրացաններ:

Գրեւի հրապարակն այդ ժամանակից ունեւր այն դժնդակ տեսքը, որ նրա համար պահել են այսօր էլ նրա հարուցած զգվելի վերհուշելը և Դոմինիկ Բոկազորի կառուցած այն մռայլ քաղաքապետարանը, որ փոխարինել է Սյունազարդ տանը: Պետք է ասել, որ մշտական կախադանն ու անարգանքի սյուներ, «արդարադատութիւնն ու ելարանը», ինչպէս այն ժամանակ էին ասում, իրար կողք-կողքի տնկված՝ սալահատակի մեջտեղը, բնավ էլ չէին օգնում, որ մարդիկ աչքերը չըջնն այդ ճակատագրական վայրից, որտեղ առույժ ու կենսալի այնքան էակներ են շունչ փչել, որտեղ հիսուն տարի հետո պետք է ծնվեր «Սնն Վալիեի տենդը»՝ կառափնարանի ազդած սարսափի այդ հիվանդութիւնը, բոլոր հիվանդութիւններից ամենահրեշափորը, որովհետեւ դա դալիս է ոչ թեւ Աստծուց, այլ՝ մարդուց:

Մխիթարական է մտածել (ասենք անցողակի), որ մահապատիժը, որը երեք հարյուր տարի առաջ դեռ իր երկաթե անիվներով, քարե կախադաններով, տանջանքի իր ամբողջ սարքերով, բոլորն էլ մշտական և սալահատակի մեջ ամրացված, խճողում էր Գրեւի հրապարակը.

Շուկան, Դոֆենի հրապարակը, Տրահուարի խաչի հրապարակը, Խոճկորենի շուկան, այդ զզվելի Մոնֆուկոնը, Սերժանտների ուղեկալը, Կատունների հրապարակը, Սեն-Դրնիի դարպասը, Շամպոն, Բոդե դարպասը, Սեն-ժակ դարպասը, չհաշվելով այն անհամար կախազան-եյարանները, որ դեռում էին դատելու իրավունք ունեցող պրեռները, եպիսկոպոսները, կանոնիկոսները, արքաները, վանահայրերը, չհաշվելով դատավճռական ինդիվիդուները Սենա գետում, միթարական է այսօր, որ հաջորդաբար իր զլահի բոլոր մասերը, տանջահարման իր պերճանքը, սրասի իր երեսկայութունն ու ֆանսագիան, իր խոշտանդումը, որի համար հինգ տարին մեկ վերափոխում էր կաշվե մահիճը Մեծ Շատյետում, այդ ամենը կորցնելուց հետո՝ ֆեոդալական հասարակութան այդ ձեր ինքնակալը, համարյա թե մեր օրենքներից ու քաղաքներից դուրս հանված, մեր անսահման Փարիզում ունի միայն մի անկյուն՝ Գրեի անպատիվ հրապարակը, միայն մի գլխիտին՝ գողունի, անհանգիստ, ամոթահար և կարծես միշտ վախեցած, որ կարող է բռնվել հանցանք կատարելիս, այնքան որ շուտ է անհետանում իր հարվածն իջեցնելուց հետո:

III

BESOS PARA GOLPES³⁷

Երբ Պիեռ Գրենգուարը հասավ Գրեի հրապարակը, սաստիկ մրսած էր: Նա ընտրել էր Զրադացյալների կամուրջը, որպեսզի խուսափի Լուժայափոխների կամուրջի խաժամուժից և ժեհան Ֆուրբոյի դրոշակներից, սակայն եպիսկոպոսի բոլոր ալրազացների անիվները ցեխսկողով էին արել նրան անցնելիս և նրա վերնագետը թրջվել էր, բացի դրանից՝ նրան թվում էր, թե իր պիեսի

³⁶ Համբույրների՝ հարվածների փոխարեն (լատ.):

տապալուճը ավելի է մրսկան դարձրել իրեն: Ուստի և նա շտապեց մոտենալ հրավառության խարույկին, որ փառահեղ վառվում էր հրապարակի մեջտեղը: Բայց մեծաթիվ բազմություն կար նրա շուրջը:

«Նգովիա՛ճ փարիզցիներ,— ասաց նա ինքն իրեն (որովհետև Գրենգուարը, որպես իսկական դրամատուրգ, սրամառիւր էր մենախոսելու),— ինչպե՛ս են կրակը փակել ինձնից, մինչդեռ այնքան կարիք ունեմ բուխարու թեկուզ մի անկյունի: Կոչիկներս ջուր են լցվել, պատճառը այդ անիծյալ այրաղացներ են, որ այնքան իրենց արցունքը թափեցին ինձ վրա: Սատանայի ծոցը զնա Փարիզի եպիսկոպոսը իր այրաղացների հետ: Շատ կուզենայի իմանալ, թե եպիսկոպոսի ինչին է պետք այրաղացը. չլինի՞ թե միտք ունի դատնալ ջրաղացպան եպիսկոպոս: Եթե դրա համար միայն իմ անհեծքն է պակասում, ապա տալիս եմ դա նրա տաճարին էլ, այրաղացներին էլ: Հապա մի տեսնենք այս անգործ-անպիտանները տեղից չե՞ն շարժվի: Հետաքրքիր է իմանալ, թե ինչ են անում: Տաքանում են. լա՛վ հաճույք է: Նայում են, թե ինչպես կվառվեր հարյուր խուրճ խռիվը, հիանալի՛ հանդես»:

Ավելի մոտիկից դիտելով նկատեց, որ շրջանակը շատ ավելի լայն էր, քան սլետք էր արքայական խարույկից տաքանալու համար և հանդիսատեսներն այդպես հավաքվել էին ոչ միայն հարյուր խուրճ խռիվի վառվելուց հրապուրված:

Բազմության ու կրակի միջև թողնված ընդարձակ տարածության պարում էր մի դեռատի աղջիկ:

Այդ դեռատի աղջիկը մարդկային էա՞կ էր արդյոք, թե թովչուհի կամ հրեչտակ. բանն այն է, որ Գրենգուարը սկեպտիկ փիլիսոփա, հեղնոդ բանաստեղծ լինելով հանդերձ՝ առաջին պահին չկարողացավ որոշել դա, այնքան էր դյուրիմիլ այդ շլացուցիչ տեսիլքով:

Բարձրահասակ չէր այդ աղջիկը, բայց այդպես էր թվում, այնքան համարձակ էր սլանում նրա նուրբ իրանը: Թուխ էր նա, սակայն

կարելի էր կռահել, որ յերեկով նրա մաշկը պետք է ունենա անդալուզուհիների և հռոմեացի կանանց գեղեցիկ, օսկիթուլյր ցուրք: Անդալուզյան էին նաև նրա գուլտրիկ, պստիկ ոտքերը, որովհետև սեղմն ու անդորրավետը միաձուլվել էին նրա սքանչելի կոշիկների մեջ: Պարուժ էր նա, պտտվում, հորձանք տալիս անփութորեն իր ոտքերի տակ նետված պարսկական գորգի վրա, և ամեն անգամ պտուլտ գործելիս, երբ նրա ճաճանչագեղ դեմքը անցնում էր ձեր առջևից, խոշոր ու սև աչքերը կայծակ էին նետում ձեզ:

Շրջապատողների հայացքները սևեռված էին նրա վրա, բոլոր բերանները բաց էին: Արդարև, երբ նա պարում էր այդպես՝ գողտրիկ ու մաքուր բազուկներով գլխից վեր պահած, բասկյան դափի չխկչխկոցի նվագակցութեամբ, բոռի նման բարակիրան, դյուրաբեկ ու աշխույժ, իր օսկեհոռու անծալ իրանակալով, ուռչող ու գուլնդգուլն շրջագգեստով, հոլանի ուսերով, նուրբ սրունքներով, որ երբեմն երեվում էին շրջագգեստի տակից, իր սև վարսերով և բոցաշող աչքերով, կարծես գերբնական էակ լիներ:

– Իսկապես որ սալամանդր է սա, – մտածեց Գրենգուլարը, – ջրահարս, աստիսծուհի, Մենսուլյան սարի բաքոսյան քրմուհի:

Այդ ըուպին «սալամանդրի» գիսակներից մեկն արձակվեց, և դեղին պղնձի մի կտոր, որ կապված էր դրան, ընկավ ցած:

– Ձէ՛-է, – ասաց Գրենգուլարը, – գնչուհի է:

Ցնդեց ամբողջ պատրանքը:

Աղջիկը վերսկսեց պարել, գետնից վերցրեց երկու սուր, ծայրերը հենեց իր ճակատին և սկսեց պտտեցնել իր պտուլտին հակառակ ուղղութեամբ: Արդարև, պարգապես գնչուհի էր նա: Սակայն որքան էլ հիասթափված լիներ Գրենգուլարը, այնուամենայնիվ, այդ պատկերն ամբողջութեամբ վերցրած՝ հմայքից ու կախարդանքից զերծ չէր նրա համար: Հրավառութեան խարույկը, որ լուսավորում էր նրան վառ ու կարմիր բոցով, աշխուժորեն վետվետում էր շրջան կազմած բազմութեան դեմքերի, դեռստի ալջկա թուխ ճակատի վրա, իսկ

հրապարակի խորքում, խառնվելով նրանց օրորվող սուվերններին, նե-տում էր դժգույն ցուք, մի կողմից՝ Սյուննապարզ տան սև ու կնճռոտ հին ճակատին, մյուս կողմից՝ կախաղանի քարե բազուկին:

Հրավառության խարույկից բուստրապույն դարձած հագարավոր դեմ-քերի մեջ կար մեկը, որ մյուսներից կարծես շատ ավելի էր հսկիչտակ-ված այդ պարուհուն դիտելով: Տղամարդ էր դա՝ խստահայաց, լուռ ու մռայլ կերպարանքով: Այդ մարդը, որի հագուստը շրջապատի բազմության պատճառով չէր երևում, երեսունհինգ տարեկանից ավելի չէր լինի, մինչդեռ ճաղատ էր, հաղիվ քունքերի վրա նկատ-վում էին ցանցառ և արդեն ալեխառն մազերի փնջիկներ, նրա լայն ու բարձր ճակատն սկսել էր ակոսվել կնճիռներով, սակայն խոր ընկած աչքերի մեջ շողշողում էր արտասովոր երիտասարդութուն, բոցկլտուն կյանք և ուժեղ կիրք: Նա աչքերն անլնդհատ սևեռած էր պահում գնչուհու վրա, և մինչդեռ տասնվեցամյա խոլ աղջիկը պարում ու թռչկոտում էր՝ բոլորին գլխաբացնելու համար, այդ մար-դու երազանքը կարծես ավելի ու ավելի էր մռայլում: Երբեմն-երբեմն նրա շրթունքների վրա իրար էին հանդիպում ժպիտն ու հառաչանքը, սակայն ժպիտն ավելի էր ցավագին, քան հառաչանքը:

Մանկամարդ աղջիկը շնչակաուր կանգ առավ վերջապես, և ժողո-վուրդը սիրով ծափահարեց նրան:

— Զալի՛, — կանչեց գնչուհին:

Եվ այն ժամանակ Գրենգուարը տեսավ, թե ինչպես է մոտենում մի սիրուն, սպիտակ, կայտառ, գվարթ ու փայլուն, ոսկեգոծ կոտոչնե-րով, ոսկեգույն տոտիկներով ու ոսկեգույն վզափուկով այծ, որին դեռ չէր նկատել և որ մինչ այդ մնացել էր գորգի մի անկյունում պզգած և դիտում էր իր տիրուհու պարը:

— Զալի՛, — ասաց պարուհին, — հիմա քո հերթն է:

Եվ նստելով՝ շնորհագեղորեն այծին մատուցեց բասկյան իր դափը:

— Զալի՛, — շարունակեց աղջիկը, — տարվա ո՞ր ամիսն է հիմա:

Այծը բարձրացրեց իր առջևի տոտիկը և մեկ անգամ խփեց դափին:

Արդարև, առաջին ամիսն էր: Բազմությունը ծափահարեց:

— Զայի՛, — Հարցրեց աղջիկը՝ բասկյան դափը մյուս կողմը չըջկելով, — ամսի ո՞ր օրն է այսօր:

Զային բարձրացրեց իր ոսկեգօծ տոտիկը և վեց անգամ հարվածեց դափին:

— Զայի՛, — շարունակեց գնչուհին՝ միշտ մի նոր ձևով պահելով դափը, — Հիմա ցերեկվա ժամը քանի՞սն է:

Զային իջկցրեց յոթ հարված: Նույն բուպեին Այունագարդ տան ժամացույցը խփեց յոթը:

Վոդոփուրդը դմայլված էր:

— Իրա մեջ կախարդություն կա, — ասաց բազմության միջից մի չարապույժ ձայն: Դա այն ճաղատ մարդու ձայնն էր, որ աչքը չէր կարում պնչուհուց:

Աղջիկը ցնցվեց ու շուռ եկավ, սակայն որոտացին ծափահարություններ և ծածկեցին դժուղակ բացականչությունը:

Եվ դրանք այնքան կատարելապես ջնջեցին աղջկա մտքից այդ չարապույժ խոսքը, որ նա շարունակեց Հարցեր տալ իր այծին:

— Զայի՛, ինչպե՞ս է տյար Գիշար Գրան-Ռեմին՝ քաղաքի ասրճանակակիրների զորապետը իրեն պահում Տյաունընդառաջի թափորի ժամանակ:

Զային կանգնեց եակի դույզ ուրբերի վրա, սկսեց մկկալ և քայլել այնպիսի հաճոյական լրջությամբ, որ հանդիսատեսները քահ-քահ ծիծաղեցին ասրճանակակիրների զորապետի այդ շահագրգռված բարեպաշտության նմանակերպությունը տեսնելով:

— Զայի՛, — շարունակեց դեռաօտի աղջիկը՝ քաջալերված այդ հարձույն Հաջողությունից, — ինչպե՞ս է քարոզ կարդում եկեղեցականատյանի արքայական դատարանը տյար ժակ Շարմոլյուն:

Այժմ նստեց իր հետույքին և սկսեց մկկալ՝ առջևի տոտիկներն այնպիսի տարօրինակ ձևով շարժելով, որ բացի վատ Փրանսերենից և վատ լատիներենից, ապա նրա ժեստը, շեշտը, կեցվածքը, ժակ Շարմոլյուն ամբողջովին այդտեղ էր:

Ամբոխն ավելի սաստիկ ծափահարեց:

— Սրբապղծությո՛ւն, աստվածանարգությո՛ւն.— գոչեց ճաղատ մարդը:

Գնչու հին մի անգամ էլ չբջջեց:

— Օ՛,— գոչեց նա,— էլի այդ չար մարդն է:

Ապա ստորին շրթունքը վերին շրթունքից առաջ տանելով՝ արեց մի զողորմիկ շրթնակծկում, որին նա ընտելացած էր թվում, կրունկի վրա պտույտ գործեց և սկսեց իր բասկյան դափի մեջ հավաքել բազմության պարզեններ:

Տեղում էին խոշոր ու մանր սպիտակ, դանգ, արծյանչան պլիկ զրամներ: Հանկարծ նա անցավ Գրենգուարի առջևից: Գրենդուարը ձեռքն այնպես անմտածված տարավ զուպանր, որ աղջիկը կանգ առավ:

— Թո՛ւ, գրողը տանի,— գոչեց բանաստեղծը գրպանի խորքում գտնելով իրականությունը, այսինքն՝ դատարկություն: Սակայն դեռ առի աղջիկը մնացել էր կանդնած և դավր պարզած, սպասելով՝ նստում էր իր խոշոր աչքերով: Գրենդուարի դեմքը ծածկվեց քրաինքի խոշոր կաթիլներով:

Եթե ողջ Պերուն ունենար իր գրպանում, անկասկած կտար սյարուհուն. սակայն Գրենգուարը Պերու չուներ և բացի զրանից՝ Ամերիկան դեռ հայտնագործված չէր: Բարեբախտաբար, մի անսպասելի պատահար օգնություն հասավ նրան:

— Կկորչե՞ս այստեղից, թե չէ, եգիպտական մորիխ,— գոռաց մի սուր ձայն, որ հրապարակի ամենամութ անկյունից էր գալիս: Աղջիկը սարսափահար շուռ եկավ: Դա ճաղատ մարդու ձայնը չէր այլևս, այլ կանացի ձայն՝ բարեպաշտական ու չար: Սակայն այդ ճիշդ, որ վախեցրեց գնչուհուն, ուրախացրեց այդ կողմում վխտացող երիտանների խումբը:

— Ռոյանի աշտարակի ապաշխարուհի՛ն է,— գոչեցին նրանք խառնիխուռն ծիծաղելով.— քրճենավորն է թշնամ: Չլինի՞ թե չի ընթրել: Քաղաքի բուֆետից որևէ կրճոն տանենք նրան:

Ամենքն էլ վազեցին դեպի Սյունազարդ տունը:

Այդ միջոցին Գրենգուարն օդովից պարուհու հուզմունքից և անհետացավ: Երեխաների ժխորը հիշեցրեց նրան, որ ինքն էլ չի ընթրել: Սակայն փոքրիկ չարածճիհները նրանից ավելի արագաչարժ ոտքեր ունեին, և երբ նա հասավ այնտեղ, երեխաները մաքուր սրբել էին: Ջէր մնացել նույնիսկ ֆունտը հինգ սուլ արժող խղճուկ հացը: Միայն պատի վրա երևում էին արքայական սլացիկ շուշաններ՝ վարդերին մեջընդմեջ, որ նկարել էր Մաթիոյ Րիտերնը 1434 թվին: Սակայն ողորմելի ընթրիք էր դա:

Անսխորժ բան է առանց ընթրելու քնել, ավելի աննսխանձելի բան է, երբ չես ընթրել և չգիտես, թե որտեղ պիտի քնես: Գրենգուարն ահա այսպիսի դրուձյան մեջ էր: Ո՛չ հաց, ո՛չ օթեան, նա տեսնում էր, որ կարիքն ամեն կողմից ճնշում է իրեն, այն էլ ինչպիսի՛ դժնի կարիք: Վաղուց էր նա հայտնագործել այն ճշմարտությունը, թե Յուդայա երկրի մարդկանց ստեղծել է մարդատյացության նոպայի պահին, և իմաստունի ճակատագիրը ողջ կյանքում նրա փիլիսոփայությունը պահում է պաշարման մեջ: Ինչ վերաբերում է իրեն, ապա ինքը այդպիսի լրիվ շրջապատում երբեք չէր տեսել, նա լսում էր, թե ինչպես իր ստամոքսը անձնատվության շեփոր է հնչեցնում, և չափազանց անհարմար էր գտնում, որ չար բախտը քաղցով հազթի իր փիլիսոփայությանը:

Այս տխուր խորհրդածությունը հետզհետե ավելի էր համակում նրան, երբ մի տարօրինակ, թեև քաղցրությունից ոչ զուրկ երգ հանկարծակի բնդհատեց նրան: Երիտասարդ գնչուհին էր երգում:

Նրա երգն էլ այնպես էր, ինչպես նրա պարը, ինչպես նրա գեղեցկությունը՝ անբացատրելի ու հմայիչ, այսպես ասած՝ ինչ-որ մաքուր, հնչեղ, օդային ու թևավոր բան: Այդ երգը ասես անընդհատ իրար հաջորդող փթթումներ լինեին, մելոդիաներ, անսպասելի դալայաներ, ապա պարզ ֆրազիներ՝ սուր ու սուլող նոտաներով համեմված, հետո գամմաների ուսույուններ, որոնք կմոլորեցնեին սոխակին էլ, սակայն

որոնց մեջ միշտ ներդաշնակություն կար. այնուհետև օկտավների մեղմ ծփանքներ, որոնք բարձրանում ու իջնում էին, ինչպես դեռատի երգչուհու լանջը: Նրա գեղեցիկ դեմքը բացառիկ արագաշարժությամբ հետևում էր երգի քմահաճություններին՝ ամենամանկազկանդ ներշնչումից սկսած մինչև ամենագուսպ արժանապատվությունը: Թվում էր, թե մերթ խելագար է, մերթ թագուհի:

Նրա երգի խոսքերը Գրենգուարին անծանոթ լեզվով էին և կարծես թե երգչուհուն էլ ծանոթ չէին, քանի որ երգին տված արտահայտությունը քիչ էր վերաբերում խոսքերի իմաստին: Հետևյալ քառատողն ահա ուրախությամբ էր պոռթկում նրա բերանից.

*Un cofre de gran riqueza
Hallaron dentro un pilar,
Dentro del, nuevas banderas,
Con figuras de expande...^m*

Իսկ մի վայրկյան հետո, այն շեշտից, որ տալիս էր երգչուհին հետևյալ քառատողին.

*Alarabes de cavallo
Sin roderse menar,
Con espadas, y los cuellos,
Ballestas de buen echar^m,—*

Գրենգուարն զգում էր, որ աչքերն արցունքակալում են: Այնուամենայնիվ, նրա երգից հառնում էր շատ ավելի ուրախություն, և նա էլ ասես երգում էր թռչունի պես՝ վճիտ ու անհոգ:

38. Մի սյան ներսում, գանձերով լի.

Մեղուկ գտան հրաշալի.

Այնտեղ կային նոր դրոշներ՝

Պատկերներով ահռելի (խապ.):

39. Զիբը հեծած շատ արարներ

Չեն հանդգնում շարժվել:

Թեև թրեր ունեն ձեռքին,

Ուսերին էլ հրահարներ (խապ.):

Գնչուհու երգը խոսովել էր Գրեկոսարի խորհրդածելու ընթացքը, սակայն այնպես, ինչպես կարապն է խոռովում ջրի անդորրը: Նա լսում էր մի տեսակ զմայանքով և ամեն ինչի մոռացմամբ: Երկար ժամերից ի վեր առաջին անգամն էր, որ նա տառապանք չէր գգում:

Սակայն կարճ տեսց այդ պահը:

Կանացի այն ձայնը, որ ընդհատել էր գնչուհու պարը, այժմ էլ ընդհատեց երգը:

– Ձայնդ կկտրե՞ս, թե չէ, դժոխքի ճպո՛ւռ,– գոռաց նա դարձյալ հրապարակի նույն խավար անկյունից:

Խեղճ «ճպուռը» անմիջապես լռեց: Գրեկոսարը խցկեց իր ականջները:

– Օ՛,– գոչեց նա,– անիծյալ ասամնաթափ սղոց, կտրատեցիր դու քնարը:

Այդ ժամանակ մյուս հանդիսատեսներն էլ մրթմրթում էին նրա պես:

– Գրո՛ղը տանի քրձենավորին,– ասում էին շատերը:

Եվ պառազ, անտեսանելի տոնատիափանը կարող էր չզղջալ գնչուհու դեմ ունեցած իր հարձակումների համար, եթե հանդիսատեսներն այդ րոպեին ուշացրիվ չլինեին ծաղրածուների պապի թափորից, որը բազմաթիվ փողոցներ ու քառուղիներ անցնելուց հետո՝ իր բոլոր ջահերով ու ամբողջ ժխորով մտնում էր Գրեկ հրապարակ:

Այս թափորը, որի մեկնելը Արդարագատուլթյան պալատից տեսան մեր ընթերցողները, ճանապարհին կազմակերպվել էր և ներդրավիլ Փարիզում եղած ամենայն անպիտան, պարապ գող և անդբաղ շրջմուրիկ, այնպես որ՝ Գրեկ հրապարակը հասնելիս պատկառելի տեսք ուներ:

Ամենից առաջ գալիս էր Գնչուհուտանը: Առջևում էր գնչուհուների դուքսը՝ ձին հեծած, շրջապատված իր հետիոտն կոմսերով, որ բռնել էին ձիու սանձը և ասպանդակները. նրանց հետևից գնչուհուներ ու գնչուհիներ՝ խառնիխուռն, փոքրիկ, ճղճղան երեխաներն ուսերին և

բոլորն էլ՝ դուքս, կոմս, հասարակ ժողովուրդ՝ ցնցոտիներով ու կեղծ զարդերով: Ապա գալիս էր արգոյի թագավորությունը, այսինքն՝ Ֆրանսիայի բոլոր գողերը՝ գասավորված ըստ արժանավորության կարգի, ըստ որում՝ գալիս էին նախ մանրերն ու չնչինները: Եվ այդպես, շարքում չորս-չորս մարդ, քայլում էին իրենց գիտական աստիճանի բազմապիսի նշաններով՝ այդ արտառոց ֆակուլտետում, մեծ մասը խեղանդամ՝ ոմանք կաղ, ոմանք ձեռնատ կամ անոտք, անականջ թզուկներ, ծաղկատար այլանդակներ, ընկնավորներ, քոստոներ, թուլաբազուկներ, ստահակներ, ողորմելիներ, խաբեբաններ, ցավագարներ, տնանկներ, սնանկ վաճառականներ, ծաղրասերներ, որբեր, գերչարամիտներ, մենակյաց գծուծներ – թվարկում, որ Հոմերոսին անգամ կհոգնեցներ⁴⁰: Մենակյաց գծուծներից և գերչարամիտներից կաղմված այդ պապընտիր հավաքի կենտրոնում դժվարությամբ էր նկատվում արգոյի արքան՝ մեծ քոեսը, պպած մի փոքրիկ սայլակի մեջ, որ քաշում էին երկու խոշոր շուն: Արգոյի

40. XV դ. Փարիզի բնակչության տականքի տարրեր տեսականորի այս թվարկումը հիրավի հոգնեցուցիչ է ոչ միայն իր գագրելի էությամբ ու բագմասլխությամբ, այլև գործածական բառապաշարով, հետևարար և ժամանակից վաղուց դուրս ընկած իրենց անուններով: Մեծ դժվարություններով մեզ հաղողից վերծանել դրանցից շատերը, որոնց մասին ավելլորդ չենք համարում տալ որոշ տեղեկություններ:

ա. Ընկնավոր - այն մուրացկանը, որ բերանի մեջ օճառի մի կտոր էր դնում՝ փրփուր հանելու համար, ինչպես հատուկ է այդ հիվանդությանը (saouleux):
բ. Քոստոներ - այս մուրացկանները հայտարարում էին, թե հրաշքով բուժվել են քոսից (calot):

գ. Թուլաբազուկներ - սրանք ճակատը կապում էին թաշկինակով և ձեռնում հիվանդ: Ուժեղ հոգակապումով դադարիցնում էին բազուկը շարժող արտերիան, ուշաթափվում փողոցներում և խաբում ոչ միայն կարեկից մարդկանց, այլև օգնության հասնող բժիշկներին (france-mitoux):

դ. Տնանկներ - սրանք ման էին գալիս իրենց ենթադրյալ կնոջ և ենթադրյալ երեխաների հետ, ցույց էին տալիս մի վկայական, ըստ որի՝ երկնքի կրակը (կայծակը) վառել է իրեն: տունն ու կայքը (rifodés):

ե. Սնանկ վաճառականներ - ման էին գալիս գուլգ-գուլգ, լավ վերնագգեստով, վատ կոշիկով և գոռում, թե եղել են վաճառական, բայց կրակը վառել է իրենց ունեցվածքը (marcandier): Մնթ. հեղինակի:

Թագավորութիւնից հետո գալիս էր Գալիլիայի կայսրութիւնը: Գի-
յոմ Ռուսոն՝ այդ կայսրութեան կայսրը, քայլում էր վսեմաճեմ, գինու-
բծերով սփռված իր ծիրանիով. նրա առջևից գնում էին իւրար հետ
ծեծկվող և պլուռիկոսյան հինավուրց ուղմապար պարող հտպիտ-
ներ, իսկ իրեն՝ Գիյոմին շրջապատել էին նրա մականակիրներն ու
սինլքորները և հաշվային գրասենյակների գրագիրները: Վերջապես
գալիս էր դատական գրագիրների համաքարութիւնն իր մայիսյան
ծաղկապսակ ծառերով, սև զգեստներով, դիվահանդեսի արժանի
երաժշտութեամբ և դեղին խոշոր մեղրամոմերով: Այդ բազմութեան
կենտրոնում, ծաղրածուների համաքարութեան մեծավորները իրենց
ուսերի վրա կրում էին մի պատգարակ, որն ավելի շատ մոմ ուներ,
քան Սուրբ Ժընևիևի տապանակը ժանտախտի օրերին: Իսկ այդ
պատգարակի վրա, գայիսոնը ձեռքին, փիլոնն ուսերին և խուլը
գլխին, փայլում էր ծաղրածուների նոր պասլը՝ Աստվածամոր
տաճարի ժամհարը, Սապատավոր Քվազիմոգոն:

Այս արտառոց թափորի յուրաքանչյուր հատվածն ուներ իր մաս-
նավոր նվագախումբը: Գնչուները թնդացնում էին իրենց աֆրիկյան
բալաֆոններն ու թմբուկները: Արգոյի մարդիկ, չափազանց քիչ
երաժշտական մի ժողովուրդ, ջութակից, ելջերափողից և XII դարի
գոթական ուլուրերից առաջ չէին գնացել: Ձկր առաջագիմել նաև
Գալիլիայի կայսրութիւնը. նրա նվագախումբի մեջ հազիվ էր նկատ-
վում արվեստի մանկութեան շրջանին պատկանող ինչ-որ ողորմելի
եռադի, որը դեռ կաշկանդված էր «ռե-լա-մի»-ի մեջ: Սակայն դարի
բոլոր ճոխութիւնները, սքանչելի կակոֆոնիայով, ծափալվում էին
ծաղրածուների պասլի շուրջը: Այդտեղ կային բարձր եռադի, ալտ
եռադի, առաջին թավ եռադի՝ չհաշված սրինգներն ու պղնձե գոր-
ծիքները: Ավա՛ղ, մեր ընթերցողները հիշում են, որ դա Գրենգուարի
նվագախումբն էր:

Իժվար է սլատկերել այն հպարտ ու երանավետ զվարթութեան
աստիճանը, որին հասել էր Քվազիմոգոյի տխուր ու զզվելի դեմքը

Արդարադատութեան պալատից մինչև Գրեկի հրապարակն ընթանալիս: Ինքնասիրութեան առաջին հրճութենքն էր դա, որ զգացել էր նա երբևէ: Մինչ այդ նա ճանաչել էր միայն նվաստացում, արհամարհանք դեպի իր վիճակը, զզվանք՝ դեպի իր անձը: Ուստի որքան էլ որ խուլ լիներ, վայելում էր, որպէս իսկական պապ, օվասնաններն այդ ամբոխի, որին ատում էր, որովհետև զգում էր, որ նա էլ իրեն է ատում: Ի՛նչ փուլթ, որ իր ժողովուրդը ծաղրածունների, անդամալուծ-հաշմանդամների, գողերի, մուրացկանների ոճմակ է. այնուամենայնիւ, ժողովուրդ էր դա, ինքն էլ՝ վեհապետ: Հետևաբար, լուրջ էր ընդունում այդ բոլոր հեղնական ծափահարությունները, ծիծաղելի հարգամեծարումները, որոնց, պետք է ասենք. թե բազմութունը իսառնում էր միանգամայն իրական վախի որոշ քանակութուն, որովհետև այդ սապատավորը հուժկու էր, այդ ծուռոտանին ղյուրաչարժ էր, այդ խուլը չար էր, երեք հատկութուն, որ չափավորում էին ծաղրի սիրահարներին:

Բայց մենք սրամազիր չենք հավատալու, որ ծաղրածունների նոր պապը հաշիվ էր տալիս իրեն այն զգացումների մասին, որ ուներ այժմ, և այն զգացումների մասին, որ ինքն էր առաջացնում ուրիշների մեջ: Այդ ձախողած մարմնում բնակվող ոգին էլ անհրաժեշտաբար ինչ-որ անկատար ու խուլ բան ուներ: Հետևաբար, այն, ինչ զգում էր նա այդ պահին, բացարձակապես տարտամ էր նրա համար, անորոշ ու խառն: Նրան համակում էր միայն ուրախությունը, տիրում էր հպարտութունը: Նրա մտայլ ու դժբախտ դեմքի շուրջը լուսաշող էր նկատվում:

Ուստի և առանց զարմանքի ու սարսափի չէր, որ նրան շրջապատող բազմութունը տեսավ, թե ինչպէս այն բոպեին, երբ Քվազիմոզոն իր կիսաարբեցած վիճակում հաղթական կերպով անցնում էր Սյունադարը տան առջևից, մի մարդ ամբոխի միջից խոյացավ և զայրույթի շարժումով խլեց նրա ձեռքից ոսկեզօծ փայտե գայիսունը՝ նրա խելացնոր պապութեան խորհրդանշանը:

Այդ մարդը, այդ հանդուգներ, այն ճաղատ ճակատով անձնավորութունն էր, որ քիչ առաջ խառնված գնչուհուն շրջապատած խմբին, շանթահարել էր խեղճ աղջկան սպառնալիքի և ատելության խոսքերով: Նա հոգևորականի հագուստով էր: Այն վայրկյանին, երբ նա դուրս եկավ բազմութունից, Գրենգուարը, որ մինչ այդ չէր նկատել նրան, ճանաչեց.

— Պահո՛ւ,— գոչեց նա զարմացած,— սա հո շերմեսի՞ իմ ուսուցիչն է՝ սարկավագապետ Կյոդ Ֆրոյոն: Ի՞նչ ցավ ու փորձանք է ուզում այդ խայտառակ միականուց: Այդպես կարող է իրեն բղիկ-բղիկ անել տալ:

Իրոք որ սարսափի ճիչ լսվեց: Ահեղ Քվազիմոզոն պատգարակից թռավ ցած, իսկ կանայք հայացքները շրջեցին, որպեսզի չտեսնեն, թե ինչպես պատառ-պատառ կանի սարկավագապետին:

Քվազիմոզոն մի ուսայունով հասավ քահանայի մոտ, դիտեց նրան և ծունկ չոքեց:

Քահանան նրա գլխից պոկեց խուլրը, կտորեց գայիսոնը, պատառոտեց կեղծ զարդերով նախշված նրա փիլոնը:

Քվազիմոզոն մնաց ծնկաչոք, խոնարհեց գլուխը և կցեց ձեռքերը: Ապա նրանց միջև սկսվեց նշաններից ու ժեստերից կազմված մի տարօրինակ խոսակցութուն, որովհետև ոչ մեկը չէր խոսում. քահանան՝ կանգնած, զայրացած ու սպառնալի, Քվազիմոզոն՝ գետնահակ, հեզ ու աղբստող: Բայց և այնպես, ակնհերև էր, որ Քվազիմոզոն կարող էր բթամատով էլ փշրել քահանային:

Վերջապես սարկավագապետը կոպտորեն թափահարելով Քվազիմոզոյի հզոր ուսը՝ նշան արեց, որ վեր կենա և հետևի իրեն:

Քվազիմոզոն վեր կացավ:

Այդ ժամանակ ծաղրածունների եզրայրակցութունը, առաջին շփոթութունից սթափվելուց հետո, ուզեց պաշտպանել այդպես հանկարծակի գահընկեց արված իր պապին: Գնչուները, արգոյի

41. Հերմիտիկոս (Հերմեսագիտութուն). ալքիմիայի այն ճյուղը, որ զբաղվում էր հասարակ մետաղները ազնիվ դարձնելու փորձերով:

մարդիկ և դատական գրագիրների համքարությունը հավաքվեց քահանայի շուրջը և սկսեց գոռգոռալ:

Քվազիմոդոն կանգնեց քահանայի առաջ, պրկեց իր ատիտիկ բռունցքների մկանները և նայեց պաշարողներին՝ կատաղած վագրի նման ատամները կրճտացնելով:

Քահանան նորից մռայլ խստություն տալով դեմքին՝ նշան արեց Քվազիմոդոյին և լուրի հեռացավ:

Քվազիմոդոն քայլում էր նրա առջևից՝ բազմությունը ցրելով իր ճամփից:

Երբ նրանք կտրեցին անցան բազմությունն ու հրապարակը, հետաքրքրասերների և պարսպ մարդկանց երամը ուզեց հետևել նրանց: Այն ժամանակ Քվազիմոդոն անցնելով վերջապահ՝ հետևեց սարկավագապետին, թիկունքը շրջած նրան՝ ետ-ետ քայլելով, գետնամած, խոժոռադեմ, հրեշատես, մագիրը փշաքաղված, մարմնի անդամներն իրար բերելով, լիզելով վարազի իր ժանիքները, վայրի գազանի պես մոնչալով և լուրի ձեռքի մի շարժումով կամ հայացքով հսկայական ծփանք առաջացնելով ամբոխի մեջ:

Վերջապես թողին, որ երկուսն էլ մտնեն մի նեղ ու մոլթ փողոց, ուր ոչ ոք սիրտ չարեց հետևել նրանց, որովհետև հենց միայն ատամները կրճտացնող Քվազիմոդոյի հրեշանման կերպարանքի ազդած երկյուղը փակում էր դրա մուտքը:

— Ա՛յ, հիանալի բան է սա, — ասաց Գրենգուարր: — Բայց, գրողը տանի, որտեղի՞ց ընթրելու հնար գտնեմ:

ԵՐԵՎՈՅԱՆ, ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՍԻՐՈՒՆ ԿՆՈՋ ՀԵՏԵՎԵԼՈՒ ԱՆՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրենդուարը հանձնված պատահականությանը սկսել էր հետևել գնչուհուն: Նա տեսել էր, թե ինչպես պարուհին իր այծի հետ մտել էր Դանակագործների փողոցը և ինքն էլ էր դիմել այնտեղ:

— Ինչո՞ւ չէ,— ասել էր նա ինքն իրեն:

Գրենդուարը՝ Փարիզի փողոցների փորձված փրիստփան, նկատել էր, որ ոչ մի բան այնպես չի նպաստում երազանքին, որքան սիրուն կնոջ հետևելը, առանց իմանալու, թե ուր է նա գնում: Իր ազատ կամքից այդպես ինքնարերարար հրաժարվելու մեջ, այն Ֆանտազիայի մեջ, որը ենթարկվում է մի ուրիշ Ֆանտազիայի, իսկ սա չի էլ կասկածում դրան, կա քմահաճ անկախություն և կույր հնազանդություն ինչ-որ խառնուրդ, ստրկություն ու ազատության միջակա մի բան, և դա դուր էր գալիս Գրենդուարին, որ գերազանցորեն խառն, անվճռական ու բարդ մաքի տեր էր, կողմնակից էր բոլոր ծայրահեղություններին, անընդհատ տատանվում էր մարդկային բոլոր հակումների միջև և մեկը մյուսով չեզոքացնում: Նա հաճությունը համեմատում էր իրեն Մուհամեդի գերեզմանի հետ, որը երկու մագնիսներից քաշվում է հակառակ ուղղություններով և անվերջ տարուերկվում բարձրի ու ցածրի, հրկնակամարի ու սալահատակի, անկման ու վերսլացման, զենիթի ու նազիրի միջև:

Եթե Գրենդուարն ապրեր մեր օրերում, ինչպիսի՞ գեղեցիկ տեղ կգրավեր նա կլասիկի և ռոմանտիկի միջև:

Բայց նա այնպիսի նախամարդ չէր, որ ապրեր երեք հարյուր տարի, և շա՛տ ցավալի է դա: Նրա բացակայությունն այնպիսի դատարկություն է, որ այժմ շատ է զգացվում:

Իսկ փողոցներում այդպես անցորդներին (մանավանդ՝ անցորդուհիներին) հետևելու համար, որ Գրենդուարը հաճությամբ էր անում, ավելի լավ տրամադրությունն չի կարող լինել, քան այն, երբ չգիտես, թե որտեղ գիշերես:

Եվ ահա իրիստ մտածկոտ քայլում էր նա դեռատի աղջկա ետևից, որն արագացնում էր քայլերը և վազեցնում իր գեղեցիկ այծին՝ անհնելով, որ քաղաքացիները քաշվում են աները, և յիակվում են գինեսները՝ միակ խանութները, որ բաց էին այդ օրը:

— Վերջիվերջո, — մտածեց Գրենդուարը, — պետք է, որ այդ աղջիկը որևէ կացարան ունենա, գնչուհիները բարևսիրտ են լինում: Ո՞վ գիտե...

Եվ ինչպիսի՜ գեղեցիկ մտքեր կային այն կախման կետերի մեջ, որ մտքում դնում էր նա այդ թերասուումից հետո:

Սակայն երբեմն-երբեմն անցնելով իրենց դռները փակող վերջին քաղաքացիների առջևից՝ նա որսում էր որևէ պատահիկ նրանց խոսակցությունից, որը խզում էր իր շողշողուն ենթագրությունների շղթան:

Քիչ առաջ երկու ծերուկ էին հանդիպել իրար:

— Վարպե՛տ Թիրո Ֆիռնիկլ, զգո՞ւմ եք, որ ցուրտ է:

(Գրենդուարն այդ գիտեր ձմռան սկզբից):

— Օ՛, շա՛տ ցուրտ է, վարպե՛տ Բոնիֆաս Դիգոմ: Վայ թե այնպիսի ձմեռ լինի, ինչպես երեք տարի առաջ, 80 թվին, երբ փայտի բեռը հասավ ութ սղի:

— Է՛, այդ ի՛նչ է որ, վարպե՛տ Թիրո, 1407 թվականի համեմատությունամբ, երբ սուրբ Մարտինի տոնից մինչև Տյառնընդառաջ ամեն ինչ սառեց, և այնպիսի կատաղությունամբ, որ դատարանի քարտուղարի գրիչը սառում էր ամեն մի երեք բառ գրելուց հետո՝ մեծ սենյակում, որով և ընդհատվեց դատավարություն արձանագրումը:

Քիչ այն կողմ երկու հարևանուհիներ էին գրուցում իրենց պատուհաններից, մոմեր բռնած, որ մշուշից ճրթճրթում էին:

– Ձեր ամուսինը պատմե՞լ է դժբախտ պատահարը, տիկի՛ն
Լա-Բուդրուք:

– Ոչ: Ի՞նչ է պատահել, տիկին Թյուրքան:

– Շատլեի նոտար պարոն Ժիլ Գոդենի ձին խրտնելով Ֆլաման-
ներից ու նրանց թափորից՝ գլորել է Սելեստինյան միաբանության
օբլատ⁴² պատվելի Ֆիլիպպո Ավրիլոյին:

– ձի՞ չտ:

– Միանգամայն:

– Ինչ-որ քաղաքացո՞ւ ձի. արդեն խայտառակություն է դա: Եթե
հեծելագործի ձի լիներ, ոչի՛նչ, վնաս չունի:

Եվ լուսամուտները փակվում էին, իսկ Գրենգուարի մտքերի թելն
արդեն կտրված էր լինում:

Բարեբախտաբար, նա շուտ էլ գտնում էր դա և նորից կապում
առանց դժվարության՝ շնորհիվ գնչուհու, շնորհիվ Ջալիի, որ շարու-
նակում էին քայլել իր առջևից. երկու նրբակազմ, գողտրիկ ու հրա-
պուրիչ արարածներ, որոնց փոքրիկ ոտքերը, գեղեցիկ ձևերը, շնոր-
հագեղ շարժումները զմայլեցնում էին Գրենգուարին, իրար էին
խառնվում նրա մտահայեցման մեջ: Իրենց խելացիությունը ու մտեր-
մությունը նրանք բանաստեղծին թվում էին երկու մանկամարդ
աղջիկ, իսկ թևերը՝ արագաշարժությամբ և քայլվածքի
ճարպկությամբ՝ երկուսն էլ այծ:

Սակայն փողոցները հետզհետե ավելի խավար, ավելի ամայի էին
դառնում: Կրակները հանգցնելու զանգը վաղուց էր ղողանջել, և ար-
դեն փողոցներում սակավաթիվ անցորդներ էին հանդիպում, պա-
տուհաններում՝ հազվադեպ լույսեր: Գրենգուարը գնչուհու ետևից
մտել էր նեղ փողոցների, քառուղիների ու անել նրբանցքների մանվա-
ծապատ բավիղր, որ շրջապատում է Սուրբ Անմեղների հնամենի

42. Այսպես էին կոչվում այն մարդիկ, որոնք իրենց ունեցվածքը տալով
միաբանությանը՝ ապրում էին այնտեղ. կամ հաշմանդամ զինվորները, որոնց
արքան ուղարկում էր վանք՝ ապրելու: Մնթ. Թարգմ.:

գերեղմանոցը և նման է կատվի խճճած թելի կաժի: «Ահավասիկ փողոցներ, որոնց ուղղութիւնները շատ քիչ տրամաբանութիւն ունեն», — մտածում էր Գրենդուարը՝ կորած այդ անհամար ուղորանների մեջ, որոնք անվերջ կարծես նույն տեղն էին բերում, բայց որտեղ մանկահասակ աղջիկը ընթանում էր իրեն խիստ ծանոթ թվացող ճանապարհով, առանց վարանելու և հետզհետե ավելի արագաքայլ: Իսկ Գրենդուարը ամենևին չէր իմանա, թե որտեղ էր ինքը, եթե փողոցի մի անկյուն անցնելիս չնկատեր Շուկայի հրապարակի անարգանքի սյան ութանկյուն դանգվածը, որի ծակոտկեն գաղաթը իր սեկտրվածքով որոշակի գծագրվում էր Վերդլայի փողոցի դեռ լուսավորմի պատուհանի վրա:

Մի քանի րոպե էր արդեն, ինչ նա գրավել էր սղջկա ուշադրութիւնը. գնչուհին մի քանի անգամ անհանգստութեամբ ետ էր նայել, մի անգամ էլ նույնիսկ կանգ էր առել և կիսաբաց փոփոց դուրս եկող լույսի շողից օգտվելով՝ ոտից գլուխ շեշտակի նայել էր նրան, ապա Գրենդուարը տեսել էր, որ այդ գնչուհից հետո աղջիկը նույն շրթնակծկումն էր արել, ինչ որ Գրեի հրապարակում, և շարունակել էր իր ճամփան:

Այդ շնորհագեղ շրթնակծկումն ստիպեց Գրենդուարին՝ մտածել: Անկասկած՝ արհամարհանք ու ծաղր կար դրա մեջ: Ուստի և նա խոնարհեց գլուխը, սկսեց համբել սալահատակի քարերը, հետզհետե ավելի հեռվից հետևել աղջկան, երբ մի փողոցի անկյունում, ուր տեսողութիւնից կորցրեց նրան, լսեց մի սուր ճիչ:

Գրենդուարն արագացրեց քայլերը:

Փողոցը բոլորովին մութ էր: Բայց և այնպէս, փողոցի անկյունում գտնվող սուրբ կույսի ոտքերի մոտ, երկաթե վանդակի մեջ վառվող ձեթով ներծծված խժուժը հնարավորութիւն տվեց Գրենդուարին նկատելու, որ գնչուհին մաքառում էր իր ճիչերը խլացնել ջանացող երկու մարդկանց բազուկների մեջ: Խեղճ այժը սարսափած՝ կախել էր եղջուրները և մկկում էր:

– Հասե՛ք, պարո՛ն պահակներ,– գոռաց Գրենգուարը և քաջաբար առաջ վազեց: Մանկամարդ աղջկան բռնած մարդկանցից մեկը շրջվեց դեպի նա: Քվազիմոդոյի ահեղ կերպարանքն էր դա: Գրենգուարը փախուստ չտվեց, բայց այլևս չառաջացավ:

Քվազիմոդոն մոտեցավ նրան, ձեռքի հակառակ կողմով հարվածելով՝ շարտեց գետին և արագությամբ թաղվեց խավարի մեջ՝ տանելով աղջկան, որ մետաքսե շարֆի նման ծալվել էր նրա ձեռքերի վրա: Քվազիմոդոյի ընկերը հետևում էր նրան, իսկ խեղճ այծը թախծազին մկկալով՝ վազում էր նրանց հետևից:

– Սպանո՛ւմ են, Հասե՛ք, սպանո՛ւմ են,– ճչում էր թշվառ գնչուհին:

– Կացե՛ք, թշվառականնե՛ր, և բաց թողեք այդ ցոփուհուն,– որոտալի ձայնով Հանկարծ գոռուց մի ձիավոր՝ մոտակա քառուղուց ընդոստ դուրս պրծնելով:

Արքայական նետաձիգ ջոկատի հրամանատար էր նա՝ ոտից-գլուխ գինված, մերկացրած սուրը ձեռքին:

Նա խլեց գնչուհուն ապշած Քվազիմոդոյի բաղուկներից, դրեց իր թամբի ընդլայնությամբ, և այն լուսպեին, երբ վտանգավոր կուզը գարմանքից սթափված հարձակվում էր նրա վրա իր որսը ետ խելուհամար, տասնհինգ թե տասնվեց նետաձիգ, որ մոտիկից հետևում էին իրենց հրամանատարին, վրա հասան՝ երկսայր սրերը ձեռքներին: Արքայական պահակազորի մի ջոկ էր դա, որ Փարիզի պրեոյության անվտանգության սխտ տյար Ռոբեր դ'Էստուսովիլի հրամանով հսկողություն էր կատարում:

Քվազիմոդոն շրջապատվեց, բռնվեց ու կապոտվեց, նա մոնչում էր, վրփրում, կծում, և եթե ցերեկ լիներ, կասկած չկա, որ սոսկ նրա դեմքը, բարկությունից էլ ավելի զզվելի դարձած, փախուստի կմատներ ամբողջ ջոկը: Սակայն գիշերով նա զինաթափված էր իր ամենահզոր զենքից՝ տգեղությունից:

Նրա ընկերն անհետացել էր պայթարի ժամանակ:

Գնչուհին շնորհագեղությամբ ուղղովեց սպայի թամբի վրա, գույգ ձեռքերը հենեց երիտասարդի ուսերին և մի քանի վայրկյան ակնասևեռ դիտեց նրան՝ կարծես գմայլված նրա գեղեցիկ տեսքից և մատուցած լավ օգնությունից: Այստեղ առաջինը խզելով լուսթյունը՝ հարցրեց, էյ ավելի քաղցրացնելով իր քաղցր ձայնը.

– Ինչպե՞ս է ձեր անունը, պարո՛ն դինվորական:

– Կապիտան Ֆերուս դը Շոտոպեր, պատրաստ ձեզ ծառայելու, գեղեցկուհի՛ս, – պատասխանեց սպան ուղղվելով:

– Շնորհակալ եմ, – ասաց գնչուհին:

Եվ երբ կապիտան Ֆերուսը սղալում էր բուրդունդյան ձևով ոլորած բեղերը, աղջիկը ձիուց սահեց ցած՝ գետնին ընկնող նետի պես և փախավ:

Կայծակն այդքան արագ չէր չքվի:

– Հռոմի պապի պորտը վկա... – գոչեց կապիտանը՝ հրամայելով, որ սեղմեն Քվազիմոդոյի կապանքները, – ես կգերադասեի պահել ցոփուհուն:

– Ի՛նչ արած, կապիտան՛ն, – ասաց նետաձիգներից մեկը, – սոխակը թռավ, չղջիկը՝ մնաց:

V

ԱՆՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գրենգուարն ընկնելուց շճած՝ մնացել էր սալահատակի վրա փռված, փողոցի անկյան բարի կույսի արձանի առաջ: Քիչ-քիչ ուշքի հկավ նա. մի քանի րոպե տարուբերվում էր մի տեսակ կիսաքուն երազանքի մեջ, որը սակայն իր քաղցրությունն ուներ և որտեղ գնչուհու և նրա այծի օդային կերպարանքները միաձուլվում էին

Քվագիմոդոյի բռունցքի ծանրությանը: Այդ վիճակը քիչ տեւեց: Մարմնի՝ սալահատակին հպված մասում զգացած ուժեղ սառնությունը հանկարծ սթափեցրեց նրան և վեր հանեց միտքը:

— Գրողը տանի, որտեղի՛ց է գալիս այս սառնությունը, — մտածեց նա և նոր միայն նկատեց, որ մասամբ առվի մեջ է ընկել:

— Սատանայի բաժին դառնա այդ կուզ կիկոպը, — մրթմրթաց նա ատամների միջից և փորձեց վեր կենալ: Սակայն շատ էր նա շշմած և ջարդված, ուստի և ստիպված եղավ մնալ նույն տեղում: Այնուամենայնիվ, մի ձեռքը բավական լավ էր գործում, այնպես որ՝ սեղմեց քիթը և համակերպեց իր վիճակին:

— Փարիզի ցեխը, — մտածեց նա (որովհետեւ վստահ էր, որ հենց առուն էլ կլինի իր օթեանը), — էլ ի՞նչ անես օթեանումդ, եթե ոչ լոկ երագես, Փարիզի ցեխը առանձնապես գարշահոտ է և պետք է մեծաքանակ ցնդող ու բորակային աղ պարունակի: Սա, իմիջիայլոց, տյար Նիկոլա Ֆլամելի և Հերմետիկոսների կարծիքն է...

Հերմետիկոս բառն անմիջապես նրա հիշողության մեջ վերակենդանացրեց սարկավագապետ Կլոդ Ֆրոլոյին: Նա հիշեց քիչ առաջ նշմարած բռուն պայքարի տեսարանը, երբ գնչուհին մաքառում էր երկու մարդկանց միջև, հիշեց, որ Քվագիմոդոն ուներ մի ընկեր, և ահա սարկավագապետի մոայլ ու ամբարտավան կերպարանքը տարտամորեն անցավ նրա մտքով: «Շատ տարօրինակ բան կլինե՞ր դա», — մտածեց նա և սկսեց այդ տվյալով և այդ հիմքի վրա կառուցել ենթադրությունների ֆանտաստիկ շենքը՝ փիլիսոփաների կարտոնե դղյակը: Հետո հանկարծ, մի անգամ ևս վերադառնալով իրականությանը՝ գոչեց.

— Է-հե՛, կարդին սառչում եմ:

Արդարեւ, նրա տեղը հետզհետե ավելի անտանելի էր դառնում: Առվի ջրի ամհն մի մոլեկուլը Գրենգուարի երակներից ճառագայթող ջերմությունից խլում էր մի մոլեկուլ, և նրա մարմնի ու առվի ջերմաստիճանների միջև սկսում էր ամենադաժան ձևով հավասարակշռութուն հաստատվել:

Բոլորովին այլ բնույթի մի անսխորթություն ևս պայթեց նրա գլխին:

Մի խումբ երեխաներ այն փոքրիկ բոկոտն վայրենիներից, որոնք բոլոր ժամանակներում չափչփիւ եծ Փարիզի սալահատակը ստահակ հավիտենական անունով և, երբ մենք էլ փոքր էինք, քար ևն չպրտել մեզ ամեն երեկո՝ դպրոցն արձակվելիս, որովհետև մեր շավաբները պատառոտված չէին, այդ պատանի խենթերի մի հույլ վազում էր դեպի այն քառուղին, որտեղ պառկած էր Գրենգուարը: Նրանք ծիծաղում էին ու գոռոռում՝ չափազանց քիչ մտածելով հարևանների քնած լինելու մասին և իրենց ետևից քարչ էին տալիս ինչ-որ անձև պարկ: Նրանց փայտե կոշիկների թխկթիկոցն անգամ բավական էր մեռելին արթնացնելու համար, իսկ Գրենգուարը, որ դեռ ամբողջովին մեռած չէր, մի քիչ բարձրացավ:

— Է-հե՛, Հեննըքեն Դանդե՛ն, էհե՛, Ժեհան Պենսըո՛ւրդ,— գոռում էին նրանք ամբողջ ուժով.— ծերուկ էստաչ Մուբոնը՝ փողոցի անկյուղնի երկաթավաճառը մեռել է: Գտել ենք նրա ծղուտի ներքնակը և տոնական հրավառություն պիտի անենք այսօր՝ ի պատիվ Ֆյամանների:

Եվ ահա ներքնակը գցեցին ուղիղ Գրենգուարի վրա, որի մոտ էին հասել՝ առանց տեսնելու նրան: Միաժամանակ նրանցյոց մեկը մի բուռ ծղոտ վերցրեց և տարավ վառեց սուրբ կույսի արձանի ճրագից:

— Խաչյա՛լ Քրիստոս,— մրթմրթաց Գրենգուարը,— ուրեմն հիմա էլ սաստիկ պիտի տաքանա՞մ:

Ճգնաժամային վայրկյան էր: Նա կարող էր անհյանելի դրուժյան մատնվել կրակի ու ջրի միջև, ուստի գերբնական ճիգ գործադրեց, ինչպես անում է այն դրամանենգը, որին պատրաստվում են խաչել և որն աշխատում է խույս տալ: Նա վեր կացավ, ներքնակը չպրտեց ստահակների վրա և փախավ:

— Սո՛ւրբ կույս,— գոչեցին երեխաները.— երկաթավաճառը վերադառնո՛ւմ է:

Եվ նույնպես փախան:

Ռազմադաշտը մնաց ծղոտե ներքնակին: Բելֆորեն, հայր Լը-ժյուժը և Կոռույեն հավաստում են, որ հաջորդ օրը թաղամասի հոգևորականությունը մեծ շուքով վերցրեց այդ ներքնակը և տարավ Սենտ-Օպորտյուն եկեղեցու գանձատունը, որտեղ լուսարարը մինչև 1789 թվականը բավական լավ եկամուտ էր ստանում Մոկոնսեյ փողոցի անկյունի սուրբ կույսի արձանի կատարած զարմանալի հրաշքը ցուցադրելով և պատմելով, որ արձանը, հենց միայն իր ներկայությամբ, 1482 թվականի հունվարի 6-ի լույս 7-ի արժանահիշատակ գիշերը հալածել էր դևը հանդուցյալ ժեհան Մուբոնից, որը սատանայի գլխին խաղ խաղալու համար մեռնելիս՝ չարամտորեն իր հոգին թաքցրել էր ներքնակի մեջ:

VI

ԿՈՏՐՎԱԾ ԿՈՒԺԸ

Որոշ ժամանակ ամբողջ արագությամբ վագելուց հետո, չիմանալով թե ուր, դիպչելով փողոցների բազմաթիվ անկյուններին, ցատկելով բազմաթիվ առուներ, կտրելով շատ նրբանցքներ, փակուղիներ, քառուղիներ, փախուստի և անցման տեղեր փնտրելով Շուկայի հին սալահատակի բոլոր ոլորաններում, իր խուճապային սարսափի մեջ խուզարկելով այն, որ խարտիաների գեղեցիկ լատիներենն անվանում է *tota via, cheminum et viaria*⁴³, մեր բանաստեղծը հանկարծ կանգ առավ՝ նախ շնչասպառ, ապա մտքում ծագած դիլեմայից բուկը կարծես թե սեղմված:

— Ինձ թվում է, տյա՛ր Պիեր Գրենգուար, — ասաց նա ինքն իրեն՝ մատը ճակատին դնելով, — որ դուք վազում եք խելագարի պես: Այդ փոքրիկ խուժանները պակաս չվախեցան ձեզնից, որքան դուք

43. Ամենայն ճանապարհ, ուղի ու պողոտա (լատ.):

նրանցից: Ինձ թվում է, կրկնում եմ ձեզ, որ դուք լսեցիք նրանց փայտե կոշիկների թխկթխկոցը՝ դեպի Հարավ փախչելիս, երբ զուր փախչում էիք դեպի Հյուսիս: Ուրեմն՝ երկուսից մեկը, կամ նրանք են փախել, և այն ժամանակ իրենց ներքնակը, որ Հավանաբար սարսափից մոռացել են, հենց այն Հյուրընկալ անկողինն է, որի հուսից եք վազում այս առավոտից, և որ տիկին սուրբ կույսը հրաշքով ուղարկում է ձեզ որպես վարձատրություն Հալթսական երթերով ու պարերով օժտված այն մորալիտեի, որ հորինել եք դուք ի պատիվ իրեն, կամ թե երեսնաները փախուստ չեն տվել, ուստի և վառել են ներքնակը, հետևաբար՝ դա հենց այն պատմական կրակն է, որ ձեզ պետք է զվարթանալու, հագուստները չորացնելու և տաքանալու համար: Երկու դեպքում էլ, լավ կրակ կամ լավ անկողին, այդ ներքնակը երկնքի պարզե է: Երանելի կույս Մարիամը, որ Մոկոնսեյ փողոցի անկյունում է, գուցե ժեհան Մուրոնին հենց դրա համար է մեռցրել, և ձեր կողմից խելագարություն է այդպես լեղապատառ փախչել, ինչպես պիկարոզացին Ֆրանսիացու առջևից՝ ձեր հուսը թողնելով այն, ինչ դուք առջևում եք փնտրում: Մի խոսքով՝ հիմար եք դուք:

Դրանից հետո նա ետ դարձավ և կողմնորոշվելով ու խուզարկելով, քիթը քամուն և ականջը սրած՝ աշխատեց գտնել երանելի ներքնակը, բայց իզուր: Նա պատահում էր միայն իրար հաջորդող տների, փակուղիների, ծուռուժուռ բավիղների, որոնց միջև մնում էր վարանած և անվերջ կասկածում էր՝ էլ ավելի շփոթված ու խճճված այդ խավար նրբանցքների լաբիրինթոսում, քան կլիներ նույնիսկ Տուրնելի դղյակի բավիղում: Վերջապես նրա համբերությունը հատավ, և նա հանդիսավոր կերպով բացականչեց.

– Անիծվե՛ն այս խաչմերուկները, սատանան է ստեղծել դրանք իր եղանի նմանություններ:

Այս բացականչությունը մի քիչ սփոփեց նրան, և ինչ-որ կարմրավուն ցուլք, որ նկատեց նա այդ ըոպեին մի նեղ ու երկար նրբուղու ծայրում, վերջնականապես բարձրացրեց նրա տրամադրությունը:

– Փառավորվես, տե՛ր,– ասաց նա,– Հենց այդտեղ է. դա էլ իմ ներքնակն է ահա վառվում:– Եվ իրեն համեմատելով գիշերը նավաբեկության ենթարկվող նավավարին՝ երկյուղածաբար ավելացրեց. *Salve, salve, maris stella!*⁴⁴

Այս մաղթանքի հատվածը սուրբ կույսի⁴⁵ն էր նա ուղղում, թե ներքնակին, մենք բացարձակապես չգիտենք:

Հագրվ էր նա մի քանի քայլ արել այդ զառիվայր, չսալարկված և հետզհետե ավելի ցեխոտ ու վայրէջ դարձող երկար նրբանցքով, երբ բավակսնին արտառոց բան նկատեց: Ամայի չէր այդ փողոցը. նրա երկայնքով, այս ու այնտեղ, սողում էին ինչ–որ անորոշ ու անձև գանգավածներ, ուղղվում էին դեպի փողոցի ծայրում առկայծող լույսը՝ այն ծանր միջասուների նման, որոնք գիշերը խոտի մի ցողունից մի ուրիշ ցողունի անցնելով՝ դիմում են դեպի հովվի խարույկը:

Ոչ մի բան այնպես արկածախնդիր չի դարձնում մարդուն, քան այն, երբ նա չի զգում իր քսակի տեղը: Գրենգուարը շարունակեց առաջանալ և շատ չանցած հասավ այդ թրթռուններից մեկին, որ ամենից ավելի ծուլորեն էր քարչ գալիս մյուսների ետևից: Մոտենալով դրան՝ նա տեսավ, որ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի թշվառական անսրունք հաշմանդամ, որ ոստոստում էր զույգ ձեռքերին հենվելով, ինչպես դաշտային վիրավոր սարդը, որի երկու ոտքերն են միայն մնացել: Այն վայրկյանին, երբ նա անցնում էր մարդկային դեմք ունեցող այդ սարդազգի մոտով, սա բարձրացրեց իր ողբազին ձայնը.

– *La buona mancia, signor! La buona mancia!*⁴⁵

– Սատանան քեզ տանի,– ասաց Գրենգուարը,– ինձ էլ քեզ հետ, եթե որևէ բան հասկանում եմ քո ասածից:

Եվ անցավ գնաց:

Նա հասավ այդ շարժվող գանգավածներից մի ուրիշին և ուշադիր նայեց: Անդամալույծ էր դա, թե՛ կաղ, թե՛ անձեռ, և այն աստիճան

44. Ողջու՛յն, ողջու՛յն. աստղի ծով (լատ.):

45. Ողորմություն արեք, սինյոր, ողորմություն արեք (իտ.):

կայդ ու անձեռ, որ նրան նեցուկ հանդիսացող անթացուպերն ու փայտե սրունքները որմնաղիրների քայլող լաստակերտի տեսք էին տալիս նրան: Գրեհնգուարը, որ սիրում էր վսեմ ու դասական համեմատությունները, մտքում համեմատեց նրան Վուլկանի կենդանի եռոտանու հետ:

Այդ կենդանի եռոտանին անցնելիս բարեկեց նրան, սակայն իր գլխարկը պահելով Գրեհնգուարի կզակի բարձրություն վրա՝ ածելվելու ափսեի նման գոռալով նրա ականջներին.

– *Senor caballero, para comprar un pedaso de pan?*⁴⁶

– Ինչպես երևում է, սա էլ կարող է խոսել, – ասաց Գրեհնգուարը, – բայց ինչ ծանր լեզու է: Եվ ինձնից ավելի երջանիկ է, քանի որ հասկանում է:

Ապա միտքը հանկարծակի այլ ուղղություն ստանալու պատճառով ձեռքը խփելով ճակատին՝ ասաց.

– Ի դեպ, ի՞նչ էին ուզում ասել այս առավոտ **Համերազա** գոչելով:

Նա ուզեց արագացնել քայլերը, սակայն երրորդ անգամ ինչ-որ բան փակեց նրա ճանապարհը: Այդ ինչ-որ բանը, կամ ավելի ճիշտ՝ ինչ-որ մեկը կույր մարդ էր, հրեայի դեմքով ու մորուքով մի փոքրիկ կույր, որ ձեռնափայտը թիավարելով շուրջը՝ դատարկության մեջ և առաջնորդվելով մի խոշոր շան կողմից, ոնգային և հունգարական շեշտով ասաց.

– *Facitote caritatem!*⁴⁷

– Փա՛ռք Աստու, – ասաց Գրեհնգուարը, – վերջապես պատահեցի մեկի, որ հասկանալի լեզվով է խոսում: Հավանաբար, ես խիստ ողորմատու տեսք ունեմ, որ այսպես ողորմություն են ինդրում ինձնից իմ քսակի ներկա վտիտ վիճակում: – Բարեկամ (և դարձավ նա դեպի կույրը), անցած շաբաթ ծախեցի իմ վերջին շապիկը, այսինքն.

46. Մինյոր ասպետ, մի կտոր հացի փող կողորմա՞ք (խսպ.):

47. Ողորմություն արեք (լատ.):

քանի որ դուք միայն Յիցերոնի լեզուն եք հասկանում, *Vendidi hebdomade nuper transita meam ultimam chemisam*⁴⁸.

Այս խոսքից հետո մեկքը շրջեց դեպի կույրը և շարունակեց իր ճամփան: Մականյն կույրն էլ միաժամանակ արագացրեց իր քայլերը: Եվ ահա իրենց հերթին հասնում են անդամալույծն ու անսրունքը սաստիկ շտապելով և փայտե ամանն ու անթացուպերը սալահատակին թրխկթրխկացնելուց մեծ աղմուկ առաջացնելով: Ապա երեքն էլ իրար հրմշտելով և քայլ առ քայլ Գրենգուարին հետևելով՝ սկսեցին իրենց երգը երգել.

– *Caritatem*⁴⁹, – երգում էր կույրը:

– *La buona mania!*⁵⁰ – երգում էր անսրունքը:

Իսկ կաղր բարձրացնելով երաժշտական ֆրազը՝ կրկնում էր.

– *Un pedaso de pan!*⁵¹

Գրենգուարը իցկեց ականջները:

– Իսկական Բարեկյոնի աշտարակաշինություն, – գոչեց նա և սկսեց վազել: Վազեց կույրը: Վազեց կաղը: Վազեց անսրունքը:

Եվ որքան ավելի էր Գրենգուարն առաջանում փողոցում, այնքան ավելի էին նրա շուրջը վխտում կույրեր ու կաղեր, ձեռնատներ, միականիներ և բորոտներ՝ իրենց վերքերով: Ոմանք դուրս էին գալիս տներից, ոմանք՝ կից նեղ փողոցներից, ոմանք՝ նկուղների օդանցքներից՝ ոռնալով, բառաչելով, ծղրտալով. բոլորն էլ կաղնիկաղ, լնգլնգալով, խուժելով դեպի լույսը և թավալվելով ցեխի մեջ, ինչպես իսխունջները անձրևից հետո:

Գրենգուարը, որին շարունակում էին հետևել երեք հետապնդողները, չիմանալով, թե ինչով կվերջանա դա, չփոթված գնում էր մյուսների հետ՝ շրջանցելով կաղերին, ցատկելով անսրունքների

48. Մախեցի սնցած շաբաթ իմ վերջին շապիկը (լատ.): Վերջին բառը՝ *chemisam*, պիտք է լինի *camisiam*, որից և առաջացել է ֆրանսերեն *chemise*-ը: Սիալն, ըստ երևույթին, Գրենգուարինն է:

49. Ողորմություն (լատ.):

50. Ողորմացեք (իտ.):

51. Մի կտոր հաց (իսպ.):

վրայից, ոտքերը դնելով խեղանդամների այդ մրջնանոցի մեջ այն անզլիացի նավապետի նման, որ խրվեց խեցգետնի մեջ փտառի մեջ:

Մտածեց ետ դառնալու փորձ անել: Բայց արդեն ուշ էր: Այդ ամբողջ լեգեոնը խռնվել էր նրա ետևը, իսկ երեք մուրացկանները պինդ բռնել էին նրան: Եվ շարունակեց քայլել՝ մղված թե՛ այդ անդիմադրելի ալիքից, թե՛ վախից ու գլխապտույտից, որ այդ ամենը նրա համար դարձնում էր մի գարհուրելի երազ:

Վերջապես նա հասավ փողոցի ծայրին: Այդ փողոցը դուրս էր գալիս մի ընդարձակ հրապարակ, ուր սփռված հազարավոր լույսեր առկայծում էին գիշերվա տարտամ մշուշի մեջ: Գրենգուարը նետվեց այդտեղ՝ հուսալով իր սրունքների արագությամբ խույս տալ այդ երեք խեղանդամ ուրվականներից, սր կառչել էին իրենից:

— *Onde vas, homme?*⁵² — գոռաց անդամալույծը՝ անթացուպերն այդտեղ նետելով և վազելով նրա ետևից մի գույգ այնպիսի հիանալի սրունքներով, որ երբեք այդպիսի երկրաչափական գիծ չէին գծել Փարիզի սալահատակի վրա:

Այդ միջոցին անսրունքն էլ ոտքի կանգնելով՝ իր երկաթապատ ծանր ամանը կոխեց Գրենգուարի գլուխը, իսկ կուլյրը շեշտակի նայեց նրան հրացայտ աչքերով:

— Որտե՞ղ եմ ես, — ասաց բանաստեղծը ահաբեկված:

— Հրաչքների բակում, — պատասխանեց մի չորրորդ ուրվական, որ մոտեցել էր նրանց:

— Հոգիս վկա, — շարունակեց Գրենգուարը, — ճիշտ եք ասում, քանի որ ահա կուլրերը տեսնում են, կազերը՝ քայլում: Բայց որտե՞ղ է Փրկիչը:

Շրջապատողները պատասխանեցին չարագուշակ քրքիջով: Թշվառ բանաստեղծը հայացքը ման ածեց իր շուրջը: Արդարև, նա գտնվում էր այն ահավոր Հրաչքների բակում, ուր երբեք պարկեշտ մարդը այդ ժամին ոտք չէր դրել, մոգական մի շրջանակ, որտեղ մտնելու սիրտ

52. Ո՛ւր ես գնում, մա՛րդ (իսպ.):

անող Շատլեի սպաներն ու պրեոյուժյան սերժանտները կտոր-կտոր արվելով՝ անհետանում էին. գողերի մի քաղաք, զգվելի կոծիժ Փարիզի դեմքի վրա, կոյուզի, որտեղից ամեն առավոտ դուրս էր վիժում և ուր ամեն երեկո նեխելու էր վերադառնում մոլուխյունների, մուրայկանուխյան և թափառաչրջիկուխյան այդ առուն, որ միշտ հորդում է մայրաքաղաքների փողոցներում, հրեշավոր մի փեթակ, ուր երեկոյան իրենց ավարով վերադառնում են հասարակարգի բոլոր իշամեկուները, խաբուսիկ անկեղանոց, որտեղ գնչուն, կարգաթող վանականը, մուրփած դպրոցականը, բոլոր ազգերին պատկանող անպիտաններ՝ իսպանացիներ, իտալացիներ, գերմանացիներ, ամեն կրոնի մարդիկ՝ հրեաներ, քրիստոնյաներ, մահմեդականներ, կռապաշտներ՝ ծածկված շինձու վերքերով, ցերեկը մուրացկանութուն են անում, գիշերը կերպարանափոխվում, ավաղակ են դառնում, մի խոսքով՝ հսկայական հանդերձարան, որտեղ այդ դարաչրջանում հագնվում ու հանվում էին բոլոր դերակատարները այն մշտնջենական կատակերգություն, որ խաղում են Փարիզի սալահատակի վրա գողութունը, պոռնկությունը և մայրցասպանությունը:

Ընդարձակ հրապարակ էր դա՝ անկանոն շրջագծով և վատ սալորված, ինչպես այն ժամանակվա Փարիզի բոլոր հրապարակները: Այս ու այնտեղ փայլում էին օջախներ, որոնց շուրջը վխտում էին տարօրինակ խմբեր: Ամենքն էլ գնում էին, գալիս, գոռում: Լսվում էին սուր ծիծաղներ, երեխաների ճղճոցներ, կանանց ձայներ: Այդ բաղմության ձեռքերը, գլուխները, որ լուսավոր Ֆոնի վրա սև էին երևում, հազարավոր արտառոց շարժումներ էին կատարում: Երբեմն-երբեմն գետնի վրա, որտեղ հսկայական անորոշ ստվերներին խառնված հրացուքն էր դողդողում, կարելի էր տեսնել որևէ թրե եկող շուն, որ նման էր մարդու, կամ շան նմանող որևէ մարդ: Ցնդերի և տեսակների սահմանները կարծես ջնջվում էին այդ քաղաքում, ինչպես դիվաթողովում: Տղամարդիկ, կանայք, անասուններ, տարիք, սեռ, առողջութուն, հիվանդություններ, ամեն ինչ կարծես համայնական էր այդ

բազմութեան մեջ, ամեն ինչ ընթանում էր միասին, խառնված, իրար վրա դրված, այդտեղ ամեն ոք մասնակից էր ամեն ինչի:

Խարույկների երհրուն ու անդոր յույսը թույլ էր տալիս Գրենգուլարին իր հոգեխոռով դրութեան ժիջից նկատելու ընդարձակ հրապարակի բոլորտիքը՝ հին տների մի զզվելի օղակ, որոնց որդնակեր, կծկված, կկգած ճակատները՝ յուրաքանչյուրն իր մեկ կամ երկու լուսավորված ձեղնապատուհաններով՝ խավարում նրան թվում էին պառավ կանանց վիթխարի գլուխներ, շուրջանակի շարված, հրեշատես ու քիթ-մոուլը ծոմռած և աչքերը թարթելով դեների շաբաթահանդեսը դիտելիս:

Մի նոր աշխարհ էր դա՝ անհայտ, անլուր, այլանդակ, սողացող, վխտացող ու ֆանտաստիկ:

Հետզհետե ազելի շշմելով և երեք մուրացկաններից, ինչպես երեք արջաններից բռնված, խլացած իր շուրջը խլրտացող և հաչող բազմաթիվ ուրիշ դեմքերից՝ չարաբախտ Գրենգուլարը աշխատում էր պահել մտածելու իր կարողութունը, որպեսզի հիշեր, թե իրո՞ք շաբաթ օր էր այդ: Սակայն նրա ջանքերը զուր էին, նրա հիշողություն և մտածողության թիւը կտրված էր, և կասկածելով ամեն ինչից, տատանվելով իր տեսածի և զգացածի միջև, հետևյալ անլուծելի հարցն էր տալիս իրեն.

– Եթե ես կամ, այս ամե՞նն էլ կա. եթե այս ամենը կա, ես էլ կա՞մ:

Այդ ժամանակ նրան շրջապատող վայրահաչ բազմությունից լսվեց որոշակի մի ձայն.

– Տանհնք թագավորի մոտ, տանհնք թագավորի մոտ:

– Սո՛ւրբ կույս, – մրմնջաց Գրենգուլարը, – այստեղի թագավորը նոխազ կլինի:

– Թագավորի մո՛տ, թագավորի մո՛տ, – կրկնեցին բոլոր ձայները:

Գրենգուլարին տարան: Ամեն մեկը ջանում էր իր ճանկը դնել նրա վրա: Սակայն երեք մուրացկանները իրենց որսը բաց չէին թողնում և ոռնալով իլում էին մյուսներից. – Մե՛րն է նա:

Բանաստեղծի՝ արդեն հալից ընկած վերնագգեստը վերջին շունչը
փչեց այդ պայքարի մեջ:

Այդ զարհուրելի հրապարակով անցնելիս նրա գլխապտույտը
փարատվեց: Մի քանի քայլ անելուց հետո իրականությունը զգացող-
ությունը վերագարձավ: Նա սկսում էր վարժվել շրջապատի մթնո-
լորտին: Առաջին վայրկյաններին բանաստեղծի գլխից կամ գուցե,
պարզապես և պրոզայիկ ձևով ասենք, նրա դատարկ ստամոքսից
բարձրացել էր ինչ-որ ծուխ, այսպես ասած՝ գոլորշի, որը տարածվե-
լով առարկաների և նրա միջև՝ թույլ էր տվել դրանք նշմարել մղձա-
վանջի անհեթեթ մշուշի միջով, երազների այն աղջամուղջի միջից,
որոնք երերացնում են բոլոր շրջագծերը, ծամածռում են բոլոր ձևե-
րը, կուտակում են առարկաները անասելի դեզերով, իրերը դարձնե-
լով քիմերաներ, իսկ մարդկանց՝ ուրվականներ: Քիչ-քիչ այդ զգայա-
խաբուծյանը հաջորդեց նվազ մոլորուն և սակավ խոշորացնող հա-
յացք: Իրականությունը պարզորոշ էր դառնում նրա շուրջը, բախ-
վում էր աչքերին, բախվում էր ոտքերին և փշուր-փշուր անում այն
սարսափելի պոեզիան, որով սկզբում շրջապատված էր զգացել իրեն:
Հարկադրված էր նկատել, որ ինքը քայլում ոչ թե Ստիքսի⁵³, այլ ցե-
խի մեջ, որ իրեն հրմշտվում են ոչ թե դևեր, այլ գողեր, որ խոսքը ոչ
թե իր հոգուն, այլ պարզապես մարմնին էր վերաբերում (քանի որ
նրան պակասում էր այն թանկարժեք հաշտարարը, որ այնքան ազ-
դեցիկ կիրպով կանգնում է ավազակի և պարկեշտ մարդու միջև –
քսակը): Վերջապես ավելի մոտիկից և ավելի սառնարյունությամբ
զննելով այդ խայտառակ խրախճանքը՝ դիվահանդեսից ընկավ
գինետուն:

Հրաչքների բակն, արդարև, ոչ այլ ինչ է, եթե ոչ գինետուն, սա-
կայն ավազակների գինետուն՝ որքան գինուց, նույնքան և արյունից
կարմրած: Երբ վերջապես ցնցոտիավորների պահակախումբը նրան

53. Ըստ հունական դիցաբանության՝ դժոխքի գետը, որ յոթ անգամ
պտտվում էր նրա շուրջը:

Հասցրեց երթի վախճանին, ապա նրա աչքերի առաջ բացված պատկերն ընդունակ չէր վերադարձնելու նրան պոնպիային՝ թեկուզ և դժոխքի պոնգիային: Ավելի, քան մինչ այդ, դա գինետան ճաշարանի պրոզայիկ և գոեհիկ իրականությունն էր ներկայացնում: Եթե մենք տասնհինգերորդ դարում չլինեինք, ապա կասեինք, որ Գրեհմոուարը Միքել-Անջելոյից իջել-հասել էր Կալոյին⁵⁴:

Մի լայն, կլոր սալաքարի վրա վառվող մեծ խարույկի շուրջը, որի բոցերը խաղում էին այդ պահին դասուսրկ եռոտանու շիկացած ոտքերի բոլորտիքը, մի քանի որդնակեր սեղան էր գրված այս ու այն տեղ, պատահած ձևով, և համաչափությունից ամենաքիչ հասկացողություն ունեցող որևէ ծառա չէր բարեհաճել զուգահեռ դասավորել կամ ուշք չէր դարձրել, որ դրանք չհատեն միմյանց այդպիսի անհարմար անկյուններով: Այդ սեղանների վրա շողշողում էին մի քանի սափոր, որոնցից ծորում էր գինի ու գարեջուր. իսկ այդ սափորների շուրջը խմբված էին գինուց ու կրակից շառագունած բազմաթիվ բաքոսյան դեմքեր: Մի տեղ մի ցմփոր ու կենսախինդ մարդ շոինդով համբուրում էր հաստլիկ ու մսուտ մի անառակուհու. ապա կեղծ գինվորի մի տիպ, հեգնաբան, ինչպես արգոտյան բարբառով էին ասում, սուլելով՝ իր կեղծ վերքի կապերն էր արձակում և առավտից հազարավոր կապերով փաթաթած իր առողջ ու հուժկու սրունքի թմբուկներն էր փարատում. դրանց հակառակ դիրքով նստած մի նիհար մարդ կաթնեղ խոտով ու ելլի արյունով իր սառած վերքն էր պատրաստում հաջորդ օրվա համար: Երկու սեղան այն կողմ մի սուտ բարեպաշտ, ուխտավորի լրիվ հագուստով, հեգելով կարդում էր Երկնային թագուհու ողբը՝ չմոռանալով սաղմոսային եղանակն ու ռնգախոսությունը: Քիչ հեռու մի ուրիշ երիտասարդ մուրացկան ընկնավորության դաս էր առնում մի ծեր սինլքորից,

54. Յրանսիական հայտնի գծանկարիչ-փորագրող (1592-1635): Նրա գլխավոր հերոսները մարդկային գանգվածներն են: Հակված է դեպի գրոտեսկը և ֆանտաստիկ-օրնամենտալ մոտիվները: Այս ոգով էլ գծանկարել է «Պատերազմի արհավիրքները» շարքը:

որը սովորեցնում էր բերանից փրփուրը հանելու արվեստը՝ մի կտոր օճառ ծամելով: Նրանց կողքին մի ջրգողությամբ կեղծ հրվանդ, իջեցնում էր իր ուռած մարմինը. դրա պատճառով ստիպված էին իրենց քիթը բռնել չորս թե հինգ գող կանայք, որոնք նույն սեղանի շուրջը վիճաբանում էին երեկոյան պահին գողացած մի երեսայի համար:

Այս բոլոր պատկերները, որոնք երկու դար հետո, այնքան ծիծաղելի թվացին արքունիքին, ինչպես Սովալն է ասում, որ արքայի համար դարձան ժամանց և ներածութուն՝ արքայական «Գիշեր» բալետին, որը բաժանված էր չորս մասի և կատարվում էր Փոքր Բուրբոնյան թատրոնում: «Երբեք, — ավելացնում է 1653 թվականի մի ականատես վկա, — Հրաչքների բակի հանկարծակի կերպարանափոխությունները ավելի հաջող չեն ներկայացվել: Բանսերադը բավական փեղկեղկ բանաստեղծություններով մեզ նախապատրաստեց դրան»:

Ամեն տեղից լսվում էին բարձր քրքիջ և լկտի երգեր: Յուրաքանչյուր մարդ իրենն էր անում՝ խծրծում ու հայհոյում էր, առանց հարևանին լսելու: Գավերն իրար կին գարկվում, գավերի բախումից ծնունդ էին առնում կռիվներ, իսկ կոտորված գավերը պատառոտում էին ցնցոտիները:

Մի խոշոր շուն ևսուկ թաթերին նստած՝ նայում էր կրակին: Մի քանի երեխա խառնված էին այդ խրախճանքին: Գողացված երեխան լալիս էր ու գոռգոռում: Մի ուրիշը, չորս տարեկան գիրուկ տղա, նստած խիստ բարձր մի նստարանի և ոտքերը կտխած, սեպանն էլ կզակին հասած, ոչ մի բառ չէր ասում: Երբորդն էլ մատով սեղանի վրա էր սարածում մոմից հոսող ճարպը: Վերջինը, խիստ փոքրիկ, ցեխի մեջ չոքած, համարյա կորած մի խոշոր կաթսայի մեջ, քերում էր նրա կողերը խեցեքեկորով. որից արձակված ծղրտոցից կուշաթափվեր Ստրապիվարիուսը⁵⁵:

Սարույկի մոտ կար մի տակառ, տակառի վրա՝ մի մուրացկան: Թագավորն էր դա իր գահին բազմած:

55. Իտալացի նշանավոր ջութակագործ (1644-1737):

Գրենգուարին բռնած երեք մուրացկանները բերեցին նրան այդ տակառի մոտ, և ամբողջ շվայտախուժմբը մի պահ լուեց, բացի կաթսայի մեջ կուացած երևխայից: Գրենգուարը ո՛չ համարձակվում էր շունչ քաշել, ո՛չ էլ աչքերը բարձրացնել:

— *Hombre, quita tu sombrero!*⁵⁶, — ասաց երեք սինլքորներինց մեկը, որոնց պաականելությունն էր Գրենգուարը, և նախքան սա կհասկանար, թե ինչ է նշանակում դա, մյուսը վերցրեց նրա գլխարկը՝ մի ողորմելի գլխանոց, ճիշտ է, բայց զեռ բալիսկան պիտանի անձրևային կամ արևոտ եղանակին: Գրենգուարը հառաչեց:

Այդ միջոցին թագավորը իր տակառի բարձունքից հարցրեց.

— Այս ի՞նչ խայտառակ արարած է:

Գրենգուարը ցնցվեց: Այդ ձայնը, թեև արտասրբոված սպառնալիքի շեշտով, հիշեցրեց մի ուրիշ ձայն, որ հենց այդ առավոտ առաջին հարվածն էր հասցրել իր միտտերիային՝ հանդիսատեսների միջից ոնգաձայն ծոր տալով. «Ողորմացե՛ք խեղճ աղքատին»: Նա բարձրացրեց գլուխը: Արդարև, Կլոպեն Տրույֆուն էր դա:

Կլոպեն Տրույֆուն իր արքայական նշանները կրելով հանդերձ՝ ոչ մի ցնցոտի չէր պակասեցրել կամ ավելացրել: Նրա բազուկի վերքը անհետացել էր արդեն: Նա բռնել էր սպիտակ կաշվե երիզներից հյուսված այնպիսի մի մարակ, որ այդ ժամանակ գործ էին ածում խորագանակիր ոստիկանները՝ բազմությանը ետ մղելու համար և որ անվանում էին *boullave*: Գլխին գրի էր կողավոր և վերևից ծածկված մի տեսակ գլխարկ, սակայն դժվար էր որոշել՝ մանկական գդա՞կ էր դա, թե՞ արքայական թագ, այնքան նման էր և՛ մեկին, և՛ մյուսին:

Սակայն Գրենգուարը հանձին շրաշքների բակի արքայի ճանաչելով մեծ սրահի նզովված մուրացկանին՝ չգիտես ինչու՝ մի քիչ գոտեսնդվել էր:

— Տյա՛ր, — թոթովեց նա, — տե՛ր իմ... վեհապե՛տ... ինչպե՞ս պետք է կոչեմ ձեզ, — ասաց վերջապես՝ հասնելով մեծարման գագաթնակետին և այլևս չիմանալով՝ ավելի բարձրանա՞, թե՞ իջնի:

56. *Մա՛րդ, հանի՛ր գլխարկդ (իսպ.)*:

— Տեր իմ, ձեր դ մեծութունն կամ ընկեր, կոչիր ինձ ինչպես կուզես: Բայց շտապիր: Ի՞նչ կարող ես ասել ի պաշտպանութիւն քեզ:

«Ի պաշտպանութիւն քե՛զ,— մտածեց Գրեենգուարը.— բնավ էլ Հաճելի բան չէ դա»: Եվ կովմայով ասաց.— Ես այն մարդն եմ, որ այս առափոտ...

— Սատանայի եղունգները վկա՛,— ընդհատեց Կլոպենը,— քո անունն ստա, խայտառա՛կ, և ուրիշ ոչի՛նչ: Լսի՛ր: Դու կանգնած ես կրիք Հզոր ինքնակայնիւրի առաջ, ես՝ Կլոպեն Տրուլֆուն, Թյունի արքա, Հաջորդը մեծ քոեսրի, գերագույն վեհապետ արգոյի Թագաւորութեան. Մաթիաս Հունգարի Սպիկային՝ դուքս Եգիպտոսի ու Բուհմիայի, այն դեղին ձերուկը, որ տեսնում ես այնտեղ՝ քուրջը գլխին կապած, Գիյոմ Ռուսոն՝ կայսր Գալիլիայի, այդ գիրուկը, որ մեզ չի լսում և գուրգուրում է ցոփուհուն: Մենք քո դատաւորներն ենք: Դու մտել ես արգոյի Թագաւորութիւնը՝ առանց արգոտյան լինելու, դու իսխտել ես մեր քաղաքի անխախտ օրենքները: Դու պետք է պատժես, եթէ իհարկե՛ս capon, franc mitou կամ rifodé չես, այսինքն՝ պարկեշտ մարդկանց արգոտյան բարբառով՝ գող, մուրացկան կամ չրջմուլիկ չես: Սրանցից մեկնումեկը չե՞ս արդոք: Արդարացիր, հոյսվիր քո Հատկութիւնները:

— Ավա՛ղ.— պատասխանեց Գրեենգուարը,— ես այդ պատիվը չունեմ: Ես Հեղինակն եմ...

— Այդքանը բավական է,— ասաց Տրուլֆուն՝ չթողնելով, որ վերջացնի:— Դու Հիմա կկախվես: Գործը միանգամայն պարզ է, պարոն պարկեշտ քաղաքացիներ, ինչպես դուք եք վարվում մերոնց ձեռ ձեզ մոտ, այնպես էլ մենք ենք վարվում ձերոնց Հետ մեզ մոտ: Այն օրները, որ դուք գործադրում եք մուրացկան Թափառաշրջիկների նկատմամբ, Թափառաշրջիկներն էլ գործադրում են ձեր նկատմամբ: Անշրածեշտ է, որ երբեմն-երբեմն պարկեշտ մարդու ծամածոժած գլուխը դուրս գա կաննկաթելի մանյակի միջից. դա գործին պատվաւորութիւնն է: Դե՛ , բարեկա՛մ, քրջերդ բաժանիր այս

օրիորդներին: Հիմա ես քեզ կախել կտամ թափառաշրջիկներին զվարճացնելու համար, դու էլ քսակդ կտաս նրանց, որ իմեն: Եթե որևէ կրոնական միմոսությունն ես ուզում անել, այնտեղ, սանդի մեջ մի շատ սիրուն, քարե հայր աստված կա, որ գողացել եմք Սեն-Պիեր-օ-Բյոֆ հկեղեցուց: Ես քեզ տալիս եմ չորս բոպե, որպեսզի հոգիդ զցես նրա գլխին:

Վերջացավ ահեղ ճառը:

— Լա՛վ ասաց, հոգիս վկա: Կլոպեն Տրույֆուն ճառում է սրբազան հայր պապի պես,— գոչեց Գալլիլիայի կայսրը՝ կոտրելով իր գավը սեղանի ոտքի տակ նեցուկ դնելու համար:

— Տյա՛րք իմ կայսրեր և արքաներ,— ասաց Գրենգուարը սառնասրտությամբ (չգիտես թե որտեղից վերադարձել էր նրա հաստատակամությունը և նա խոսում էր վճռականորեն),— դուք նկատի չեք առնում մի հասկամանք, իմ անունը Պիեր Գրենգուար է, ես այն բանաստեղծն եմ, որի մորախոսեն ներկայացրին այս առափոտ Արդարադատության պալատի մեծ սրահում:

— Ա՛, դո՛ւ ես, վարպե՛տ,— ասաց Կլոպենը:— Ես էլ այնտեղ էի, Աստծու գլուխը վկա: Շատ լավ, ընկե՛ր, իրավացի՞ է արդյոք, որ այս առափոտ մեզ ձանձրացնելու համար՝ երեկոյան չկախվես:

«Դժվար թե գլուխս փրկեմ», մտածեց Գրենգուարը և, այնուամենայնիվ, մի փորձ էլ արեց:

— Բայց ես չեմ հասկանում, թե ինչու բանաստեղծները դուստած չեն շրջմուխների շարքը: Թափառաշրջիկ էր եզոպոսը, մուրացկան էր Հոմերոսը, գող էր Մերկուրիոսը...

Կլոպենն ընդհատեց նրան.

— Ինչպես տեսնում եմ՝ դու ուզում ես գլխահան անել մեզ քո այդ կախարդական խոսքերով: Գրո՛ղը տանի, թույլ տուր քեզ կախեն առանց կոտրատվելու:

— Ներեցեք, տե՛ր իմ, արքա՛ թյունի,— առարկեց Գրենգուարը՝ համառորեն, քայլ առ քայլ վիճարկելով:— Դրա համար արժե նեղություն

քաշիլ... Մի՛ ըոպե... Լսեցեք ինձ... Առանց ինձ լսելու չեք
շատապարտի...

Արդարև, շուրջը տիրող ժխորը խլացնում էր նրա թշվառ ձայնը:
Փոքրիկ տղան ավելի մեծ ավյունով էր քերում իր կաթնան,
և ի լրումն ամենի՝ մի պառավ կին շիկացած եռոտանու վրա դրեց
հարկով լի տասկոց, որ կրակից այնպես էր տոտոնում, ասես նման էր
չիմակավոր ծաղրածուի ետևից վազող երեխաների խմբի աղմուկ-
աղաղակին:

Այդ միջոցին Կլուպին Տրույֆուն մի ըոպե իբր թե խորհրդակցեց
Եգիպտոսի դքսի և Գալիլիայի կայսեր հետ, որը բոլորովին հարբած
էր, ապա սուր ձայնով ճչաց.

– Սո՛ւս կացեք:

Եվ որովհետև կաթսան ու տապկոցը չէին լսում նրան և շարու-
նակում էին իրենց զուգերգը, նա ցած թռավ իր տակառից, մի քսցի
տվեց կաթսային, որ տասը քայլ գլորվեց երեխայի հետ մեկտեղ, ապա
մի քսցի էլ հասցրեց տապկոցին, որի ամբողջ ճարպը թափվեց կրա-
կի վրա, հետո խստահայաց բարձրացավ իր գահը առանց ուշք դարձ-
նելու երեխայի հեկեկանքներին, ոչ էլ պառավի մրթմրթոցներին, որի
ընթրիքը ցնդում էր որպես գեղեցիկ, սպիտակ բոց:

Տրույֆուն նշան արեց, և դուքսը, կայսրը, գերչարամիտներն ու
գերթշվառականները եկան, պայտաձև շարվեցին նրա շուրջը, կենտ-
ոնում թողնելով Գրենգուարին, որ մնում էր ուժեղ կալսնքի տակ:
Ցնցոտիների, քրջերի, փայլվուն-կեղծ զարդերի, եղանների, կացին-
ների, գինեթաթախ սրունքների, մերկ ու խոշոր բազուկների,
կեղտոտ, հանգած ու ապուշ դեմքերի կիսաշրջանակ էր դա: Մուրաց-
կանության այդ «կյոր սեղանի» մեջտեղը Կլուպին Տրույֆուն, որպես
այդ սենատի ղոժ, որպես այդ ավագանիի թագավոր, որպես պապ
այդ պապընտիր ժողովի, իշխում էր նախ իր տակառի բարձրություն-
եից, ապա ինչ-որ ամբարտավան, ամենհի ու ահեղ արտահայտու-
թյամբ, որից շողչողում էր նրա բիբը և նրա վայրենի պրոֆիլի մեջ

մեղմացնում էր ավազակային լացկանությունների գազանային տիպը: Թվում էր, թե վարագ է դա խողի դնչերի մեջ:

— Լսի՛ր,— ասաց նա Գրենգուարին՝ կոշտուկոսիտ ձեռքով շոյելով այլանդակ կզակը:— Ես հիմք չեմ գտնում, թե ինչու դու չպիտի կախվես: Ծիշտ է՝ դա կարող է զզվելի լինել քեզ, և շատ էլ հասկանալի է, որովհետև դուք՝ քաղաքացիներիդ վարժված չեք դրան և հասարակ գործը բարդ եք պատկերացնում: Վերջիվերջո, մենք քեզ վատություն չենք ուզում: Իսկ հիմա քեզ կառաջարկեմ գլուխդ փրկելու մի միջոց, ուզո՞ւմ ես դառնալ մեզ պես մարդ:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչ ազդեցություն գործեց այս առաջարկը Գրենգուարի վրա, որ տեսնելով, թե ինչպես կյանքը խույս է տալիս իրենից՝ սկսում էր թուլացնել իր պաշտպանությունը: Ուստի և եռանդագին կառչեց դրանից:

— Ուզում եմ, իհարկե, այն էլ ինչպե՛ս, — գոչեց նա:

— Համաձա՞յն ես անդամագրվել «կարճ սրի» եղբայրության,— հարցրեց Կլոպենը:

— Համաձայն եմ «կարճ սրի» եղբայրությանը, — պատասխանեց Գրենգուարը:

— Համաձա՞յն ես դառնալու ադատ քաղաքացիների դասի անդամ,— շարունակեց Թյունի թագավորը...

— Այո, ազատ քաղաքացիների դասի անդամ:

— Արգոյի թագավորության հպատա՞կ:

— Այո, արգոյի թագավորության:

— Շրջմուխկ-մուրացկա՞ն:

— Շրջմուխկ-մուրացկան:

— Հոգով-սրտո՞վ:

— Հոգով-սրտով:

— Ես քեզ պետք է հայտնեմ,— շարունակեց թագավորը,— որ այնուամենայնիվ կկախվես:

— Գրո՛ղը տանի,— գոչեց բանաստեղծը:

– Միայն թե,– անայլայլ շարունակեց Կլոպենը,– կկախվես քիչ ուշ, ավելի մեծ հանդիսավորությամբ, բարի քաղաք Փարիզի հաշվին, զնղնյիկ քարակերտ կախալանից և պարկեշտ մարդկանց ձեռքով: Մի մխիթարանք էլ դա է:

– Ինչպես ասում եք,– ասաց Գրենգուարը:

– Կան և ուրիշ առավելություններ: Որպես ւղատ քաղաքացի, ստիպված չես լինի վճարել ցեխը մաքրելու, աղքատների և փողոցի լապտերների համար, որոնց ենթակա են Փարիզի քաղաքացիները:

– Թող այսպես լինի,– պատասխանեց բանաստեղծը:– Համաձայն եմ: Ես չըջմոլիկ եմ, արգոյական, ազատ քաղաքացի, «կարճ սրի» անդամ, ինչ որ ուզեք. հենց առաջուց էլ այդպիսին էի, տեր արքա Թյունի, որովհետև փիլիսոփա եմ՝ *et omnia in philisophia, omnes in philisopho continentur*⁵⁷, ինչպես գիտեք:

Թյունի թաղավորը խոժոռեց հոնքերը:

– Ինչի՞ տեղ ես դնում ինձ, բարեկամ: Այդ ի՞նչ հունգարական հրեայի արգոյով ես երգում: Ես երբայերեն չեմ իմանում: Բանդիտ լինելու համար հարկ չկա հրեա լինել: Ես նույնիսկ է՛լ գողություն չեմ անում, ես դրանից բարձր եմ. սպանում եմ: Կոկորդահատ՝ այո՛, զրպանահատ՝ ո՛չ:

Գրենկուարն աշխատեց որևէ ներողություն սահեցնել այս կարճ խոսքերի արանքը, որ բարկությունից ավելի կցկտուր էին դառնում:

– Ներողություն եմ ինդրում, տե՛ր իմ: Սա երբայերեն չէ, այլ լատիներեն:

– Ես քեզ ասում եմ, որ հրեա չեմ,– շարունակեց Կլոպենն ավելի տաքացած,– և քեզ կախել կտամ, սինագոգի փորոտի՛ք, ինչպես նաև այս պատիկ հուղայնցի չարչուն, որ կանգնած է կողքիդ, և որին հույս ունեմ մի օր մեխված տեսնել հաշվասեղանին կեղծ դրամի պես, ինչպիսին է նա:

57. Ամենայն ինչ փիլիսոփայության մեջ է, ամեն ոք փիլիսոփան է պարունակում (լատ.):

Այս ասելիս Կլոպենը մատնացուցց արեց հունգարական փոքրիկ, մորուքավոր հրեային, որ կաշեյ էր Գրենդուարին իր «*fucitote caritatem*»-ով» և ուրիշ լեզու չհասկանալով՝ զարմանքով էր տեսնում, որ թագավորի վատ տրամադրությունը թափվում է իր դիշին:

Վերջապես վսեմափառ Կլոպենը հանդարտվեց:

– Ուրեմն, խաբե՞րա՛, ուզո՞ւմ ես շրջմոլիկ դառնալ, – Հարցրեց նա բանաստեղծին:

– Անկտակած, – պատասխանեց բանաստեղծը:

– Ուղեյը դեռ քիչ է, – սուսաց անհամբույր Կլոպենը. – բարյացակամությունը մի սոխ էլ չի ավելացնի ապուրին և միայն արքայություն գնալու համար է լավ. իսկ արքայությունն ու արգոն տարբեր բաներ են: Արգոյի մեջ ընդունվելու համար պետք է ապացույցես, որ մի որևէ բանի պիտանի ես. իսկ դրա համար պետք է խուզարկես խրտվիլակին:

– Կիտղարկեմ ամեն բան, ինչ հաճո է ձեզ, – պատասխանեց Գրենդուարը:

Կլոպենը նշան արեց: Մի քանի արգոտյան անջատվեցին շրջանակից և վերադարձան մի ընկեր հետո: Նրանք բերեցին երկու գերան, որոնց ներքևի ծայրը, վերջանում էր ծեփիչաձև տախտակներով, որով գերանները հեշտությունը կանգնում էին գետնի վրա: Երկու գերանների վերին ծայրերին հարմարեցրին մի հորիզոնագիր հեծան, իսկ այդ ամբողջությունը կազմեց մի շատ սիրուն, հեշտ փոխադրելի կախաղան, որի մի ակնթարթում տնկվելը Գրենդուարը բավականություն ունեցավ տեսնելու իր առաջ: Ոչ մի բան պակաս չէր, անգամ պարանը, որ շնորհագեղորեն ճոճվում էր հեծանի տակ:

– Ինչո՞վ են վերջացնելու դրանք, – ինքն իրեն Հարցրեց Գրենդուարը որոշ անհանգստությունով:

Ձանգերի գնդգնդոցը, որ լսեց նա նույն ընկերին, վերջ դրեց նրա անձկությունը. խրտվիլակ էր դա, որ արգոտյանները վզից կախում էին պարանից, մի տեսակ թռչուն ահաբեկող՝ կարմիր հագուստով և

այնքան շատ բոժոժներով ու փոքր զանգակներով պճնված, որ դրանցով կարելի էր զարդարել կաստիլյան երեսուն ջորու ասպասարքը: Այդ անհամար զանգերը որոշ ժամանակ զնգզնգացին պարանի տատանվելուց, հետո քիչ-քիչ մարեց նրանց ձայնը և վերջապես լռեց, երբ խրտվիլակը անշարժության մատնվեց ճոճանակի օրենքով, որը գահընկեց արեց ջրի և ավազի ժամացույցները:

Այդ ժամանակ Կլոպենը Գրենդուարին մատնացույց անելով խրտվիլակի տակ զրված հին, երերուն նստարանը՝ հրամայեց.

– Բարձրացի՛ր դրա վրա:

– Գրողի ծոցը, – առարկեց Գրենդուարը, – վզակոթս կարող է ջարդվել: Չե՛ր նստարանը կաղում է Մարցիալի երկտող ոտանավորների պես. մի ոտքը վեցաչափ է, մյուսը՝ հնգաչափ:

– Բարձրացի՛ր, – կրկնեց Կլոպենը:

Գրենդուարը բարձրացավ նստարանի վրա և գլուխն ու բազուկները բավականաչափ տարուբերելուց հետո, կարողացավ գտնել իր ծանրության կենտրոնը:

– Իսկ հիմա, – շարունակեց Թյունի արքան, – աջ ոտքդ պտտիր ձախ սրունքիդ շուրջը և տնկվիր ձախ ոտքիդ ծայրին:

– Տե՛ր իմ, ուրեմն դուք անպատճառ ուզում եք, որ իմ որևէ անդամը ջարդե՞մ, – ասաց Գրենդուարը:

Կլոպենը գլուխն օրորեց:

– Լսի՛ր, բարեկամ, շատ ես դու խոսում: Հիմա երկու խոսքով ասեմ բանի էությունը. կկանգնես ոտքիդ ծայրին, ինչպես որ ասուցի, այդպիսով կկարողանաս հասնել խրտվիլակի գրպանին, որը կխուզարկես ու կհանես այնտեղ գտնվող քսակը: Եվ եթե անես դա, առանց մեկ հատիկ զանգի ձայնի, լավ. կդառնաս արգոյի անդամ: Մեզ կմնա միայն մի բան՝ ութ օր ղնգատել քեզ:

– Աստծու փո՛րը վկա, – գոչեց Գրենդուարը. – հազիվ թե կարողանամ: Իսկ եթե զանգակները զնգզնգացնե՞մ:

– Կկախվես: Հասկանո՞ւմ ես:

– Լավ չեմ հասկանում, – պատասխանեց Գրենգուարը:

– Ուրեմն մի անգամ էլ լսի՛ր: Կիւղարկես խրտվիլակը և կհանես նրա քսակը. եթե այդ գործողութեան ժամանակ թեկուզ մի զանգակ ձայն հանի, կկախվես: Հասկացա՞ր:–

– Լավ, հասկացա, – ասաց Գրենգուարը:– Հետո՞:

– Իսկ եթե կարողանաս քսակը հանել և բոժոժների ձայն չլսվի, դու կհամարվես շրջմուխիկ և ութ օր շարունակ ծեծ կուտես: Հիմա անկասկած հասկացար, չէ՞:

– Ոչ, տե՛ր իմ, դարձյալ չհասկացա: Ո՞րն է իմ օգուտը. մի դեպքում կախվել, մյուս դեպքում՝ ծեծվել:

– Եվ համարվել շրջմուխիկ, – վրա բերեց Կլոպենը. – շրջմուխիկ. քի՞չ է դա: Քո շահն է պահանջում քեզ ծեծել, որպեսզի վարժվես հարվածներին դիմանալ:

– Շատ շնորհակալ եմ, – պատասխանեց բանաստեղծը:

– Դե՛ շուտ, շտապիր, – գոչեց թագավորը՝ ոտքը խփելով տակառին, որը թնդաց խոշոր թմբուկի պես:– Խուղարկիր խրտվիլակը, և վերջացնենք: Մի վերջին անգամ էլ զգուշացնեմ քեզ, եթե մի բոժոժի զնգոց էլ լսեմ, դու կգրավես խրտվիլակի տեղը:

Արգոտյանների ուժակը ծափահարութեամբ ընդունեց Կլոպենի խոսքերը և բոլորածե կարվեց կախադանի շուրջը այնպիսի անողոք հուճոցով, որ Գրենգուարը տեսավ, թե ինչպես ինքը զվարճացնում է միայն նրանց և կարող է ամեն ինչ սպասել նրանցից: Մի հույս էր ուրեմն մնում նրան՝ իրեն հարկադրված վտանգավոր գործողութեան մեջ հաջողութուն ունենալու խախուտ հույսը: Եվ որոչեց այդ ռիսկն անել՝ նախօրոք ջերմագին ազաչանք ուղղելով խրտվիլակին, որին պետք է կողոպտեր և որին մեղմելը ավելի հեշտ կլիներ, քան թե շրջմուխիկ-մուրացկաններին: Այդ անհամար զանգակները իրենց պղնձե փոքրիկ լեզուներով՝ նրան թվում էին կծելու և Ֆլշալու պատրաստված իժերի բաց երախներ:

– Ա՛խ, – ասում էր նա խիստ ցած ձայնով, – հնարավո՞ր է, որ իմ կյանքը կախված լինի այս բոժոժներից ամենափոքրի նվազագույն

երևում է:— Մ՛հ,— ավելացնում էր նա երկյուղածաբար ձեռքերը կցելով,— Հնչակնե՛ր, մի՛ Հնչեք, գանգակնե՛ր, մի՛ զնգաք, բոժոժնե՛ր, մի՛ չխչխկաք:

Ապա մի քանիք ևս փորձեց գործադրել Տրույֆուի վրա:

— Իսկ եթե հանկարծ քամի փչի՞,— հարցրեց նա:

— Կլախովեա,— պատասխանեց Կլոպենն առանց երկմտելու:

Տեսնելով, որ ո՛չ ժամկեա, ո՛չ հետաձգում կարող է ստանալ, ո՛չ էլ խույս տալու ճար գտնել՝ նա վճռականորեն ձեռնամուխ եղավ վերջին միջոցին. աջ ոտքը պտտեց ձախի շուրջը, բարձրացավ ձախ ոտքի ծայրին և թևը պարզեց... սակայն այն վայրկյանին, երբ ձեռք ավելի խրտվիլակին, նրա մարմինը, որ միայն մեկ ոտքին էր հենված, երևալուց նստարանի վրա, որը երեք ոտք ունեւր միայն: Նա ուզեց մեքենայաբար հեկվել խրտվիլակին և հավասարակշռութունը կորցնելով՝ ծանրաբեռն լնկավ գետին, իլացած խրտվիլակի հազարավոր գանգակների ճակատագրական ցնցումից, իսկ խրտվիլակը տեղի տալով նրա ձեռքի մյուսին՝ նախ մի պտույտ գործեց իր շուրջը, ապա փառահեղորեն սկսեց ճոճվել երկու գերանների միջև:

— Անե՛ձք,— գոչեց նա լնկնելիս և մեռածի պես մնաց անշարժ, դեմքը հոպին:

Այնուամենայնիվ, նա լսեց իր գլխավերևում ահավոր ղողանջը, և՛ արյուտյանների դիվային քրքիջը, և՛ Տրույֆուի ձայնը, որ ասում էր.

— Հապա՛, բարձրացրեք այդ անպիտանին ու պինդ-պինդ կախեցեք:

Գրենգուարը վեր կացավ: Խրտվիլակն արդեն հանել էին՝ նրան տեղ պատրաստելու համար:

Արդույանները բարձրացրին նրան նստարանի վրա: Կլոպենը մոտեցավ. պարանր պցեց Գրենգուարի վիզը և թփթփացնելով ուսին՝ ասաց.

— Կե՛ս բարով. բարեկա՛մ: Հիմա արդեն չես կարող խույս տալ, եթե նույնիսկ սրբազան պապի աղիքներն ունենաս:

Կ՛հացեք բարս մարեց Գրենգուարի շրթուեքներին: Նա հայացքը ման անեց շուրջը. բայց ո՛չ մի հույս. բոլորն էլ ծիծաղում էին:

– Բեյվիյն-դը-լ՝ էտուալ, – սասաց Թյունի թագավորը մի հսկա շրջմայիկի, որը դուրս եկավ շարքերից՝ մազլցելու հեծանի վրա:

Բեյվիյն-դը-լ՝ էտուալը ճարպկորեն հասավ հորիզոնագլի հեծանին, իսկ մի վայրկյան հետո Գրենգուարը աչքերը բարձրացնելով՝ սարսափով տեսավ նրան պագած իր գլխավերևում, հեծանի վրա:

– Իսկ հիմա, – շարունակեց Կլուպեն Տրույֆուն, – հենց որ ծափ տամ, դու, Անդրի-լը-Ռուժ, ծնկի մի հարվածով նստարանը դեռ կչարտես, իսկ դու, Ֆրանսուա Շանտ Պրյուն, կկախվես այս անայիտանի ոտքերից, դու էլ, Բեյվիյն, կնետվես դրա ուսերի վրա: Եվ երեքդ էլ մեկ անգամից, հասկացա՞ք:

Գրենգուարը սարսռաց:

– Պատրա՞ստ եք, – հարցրեց Կլուպեն Տրույֆուն Գրենգուարի վրա հարձակվելու պատրաստ հրեք արգոտյաններին: Թշվառ մահապարտը անցկացրեց սարսափելի սպասման մի վայրկյան, հրը Կլուպենը ոտքի ծայրով հանդարտորեն կրակի մեջ էր քշում արքադի մի քանի շյուղ, որոնց չէր հասել բոցը:

– Պատրա՞ստ եք, – կրկնեց նա և բացեց ձեռքերը ծափ տալու համար:

Մի վայրկյան ևս և ամեն ինչ վերջացած կլիներ: Նա կանպ առավ կարծես հանկարծակի մի մտքից ազդարարված:

– Մի վայրկյան, – սասաց նա, – ես մի բան եմ մոռացել...: Սովորություն կա, որ ոչ մի տղամարդու չկախենք, առանց հարցնելու, թե որևէ կին չի՞ ուղու՞մ նրան: Ընկե՛ր, սա քո վերջին ապավինն է: Դու պետք է ամուսնանաս կամ մի շրջմոլիկուհու, կամ պարանի հետ:

Գնչուական այս օրենքը, որքան էլ արտառոց թվա ընթերցողին, այսօր էլ երկար-բարակ գրված է անգլիական հին օրենսդրութայն մեջ: Կարդացեք Բրինգտոնի «Դիտողությունները»:

Գրենգուարը շունչ քաշեց: Կես ժամվա ընթացքում երկրորդ անգամն էր ահա, որ նա վերադառնում էր կյանքին: Ուստի և չէր համարձակվում շատ էլ հավատալ գրան:

— Հապա՛, — գոռաց դարձյալ իր տակառի վրա բարձրացած Կոպենը, — Հապա՛, կանա՛յք, աղջիկնե՛ր, ձեր մեջ, կախարդից սկսած մինչև նրա կատուն, կա՞ ձեր մեջ որևէ լրբուհի, որ ուզենա այս լրբին: Հապա՛, Կոյետ Սայլապան, էլիզաբեթ Տրուվեն, Սիմոնա Ժողուին, Մարի Ուոնացցուկ, Տոնն Լոլլոդ, Բերարդ Ֆանուել, Միշել Ժընայ, Կլոդ Ակսանջ կրծող, Մաթյուրին Ժիրորու, Հապա՛, Իզաբո լա-Թիերի, եկեք-տեսեք, ձրի տղամարդ է, ո՞վ է ուզում:

Գրենգուարն այդ թշվառ վիճակում անշուշտ այնքան էլ բաղձալի չէր: Շրջմուխկուհիները ներկայացան այդ առաջարկությունից շատ քիչ զգացված: Դժբախտ մահապարտը լսեց, որ նրանք պատասխանում էին. — Ձէ՛, չէ՛, կախեցեք, դրանից բոլորն էլ կզվարճանան:

Այնուամենայնիվ, բազմությունից դուրս եկան երեք կին և մոտեցան գննելու Գրենգուարին: Առաջինը մի խոշոր, գիրուկ աղջիկ էր՝ քառակուսի դեմքով: Սա ուշադրությամբ տնտղեց փիլիսոփայի խղճուկ վերնադեպստը. դա մաշված և ափելի էր ծակծկված, քան թե շագանակ խորովելու կրակարանը: Աղջիկը ծամածռություն արեց:

— Հնացած քուրջ է, — մրթմրթաց նա և դիմելով Գրենգուարին՝ հարցրեց. — Հապա՛, տեսնե՞ք թիկնոցդ:

— Կորցրել եմ, — պատասխանեց Գրենգուարը:

— Իսկ գլխա՞րկդ:

— Վերցրին ինձնից:

— Բա կոշիկնե՛րդ:

— Սկսում են գրկվել կրունկներից:

— Քսա՞կդ:

— Ավա՛ղ, — կմկմաց Գրենգուարը, — մի գրոշ անգամ չունեմ:

— Դե՛ թող՝ որ քեզ կախեն, և շնորհակալություն հայտնիր, — եզրափակեց շրջմուխկուհին և շուռ եկավ:

Երկրորդը՝ մի պառավ, սև, կնճռոտած, զգվելի և այնքան տգեղ կին, որ կարող էր բիծ լինել Հրաշքների բակում, պտտվեց Գրենգուարի շուրջը: Գրենգուարը դողում էր՝ մտածելով, որ սա կարող է ուզել իրեն: Սակայն պառավը ատամների արանքից ասաց.

– Շատ է նիհար, – և հեռացավ:

Երրորդը դեռատի աղջիկ էր, բավական թարմ և ոչ այնքան տպեղ:

– Փրկեցե՛ք ինձ, – ցածր ձայնով ասաց նրան խնդճ մահապարտը:

Աղջիկը խղճահարուժյան արտահայտությամբ զննեց Գրենգուարին, խոնարհեց աչքերը, մի ծալք կաղմեց շրջագրեստի վրա և մնաց անվճռական: Գրենգուարը հայացքով հետևում էր նրա բոլոր շարժումներին: Հուլիսի վերջին նշույն էր դա:

– Ոչ, – ասաց վերջապես դեռատի աղջիկը, – ո՛չ: Գիտո՞մ երկարայտը կծեծի ինձ: – Եվ քաշվեց բազմության մեջ:

– Բախտ չունես, ընկե՛ր, – ասաց Կոպիներ և ուղիղ կանգնելով իր տակառի վրա՝ գոչեց: – Ոչ ոք չի՞ ուզում, – նմանեցնելով աճուրդ վարողի շեշտին՝ ի մեծ ուրախություն ամենքի. – ոչ ոք չի՞ ուզում, մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, – և շրջվելով դեպի կախաղանը՝ գլխի նշան արեց. – աճուրդը մնաց ձեզ:

Բեկվիյն-դը-լ՝ էտուալը, Շեկ Անդրին և Ֆրանսուա Սալոր երգողը մոտեցան Գրենգուարին:

Այդ միջոցին մի ձայն լսվեց արգոտյանների միջից.

– Համերա՛լդան, Համերա՛լդան:

Գրենգուարը ցնցվեց ու շրջվեց այն կողմը, որտեղից գալիս էին ձայները: Բազմությունը ճեղքվեց և ճանապարհ տվեց մի անարատ և լուսաշող արարածի: Գնչուհին էր դա:

– Համերա՛լդա, – գոչեց Գրենգուարը իր այլալվածություն միջից՝ ալաւած այն հանկարծակիությունից, որով այդ մոպական բառը շողկապում էր ցերեկվա բոլոր հիշողությունները:

Այդ անզուգական արարածը կարծես հրապույրի ու գեղեցկության իր իշխանությունը գործադրում էր մինչև իսկ Հրաչքների բակում: Արգոյի տղամարդիկ ու կանայք կամացուկ շարվում էին նրա ճամփի վրա և նրանց բիրտ դեմքերը պայծառանում էին, երբ Համերալդան նայում էր նրանց: Գնչուհին թեթե քայլվածքով մոտեցավ մահապարտին: Գեղեցիկ Զալին հետևում էր նրան: Գրենգուարն ավելի մեռած էր, քան թե կենդանի: Աղջիկը մի րոպե լռելյայն զննեց նրան:

— Ուզում եք կախե՞լ այս մարդուն, — ասաց նա լրջորեն կլուպենին:
— Այո, քո՛ւյր, — պատասխանեց Թյունի արքան, եթե միայն դու
չառնես նրան որպես ամուսին:

Պարուհին ստորին շրթունքով գեղեցիկ շրթնակծկում արեց:

— Առնում եմ նրան, — ասաց նա:

Գրենգուարն այդտեղ Հաստատապես Հավատաց, որ ինքը առա-
վոտից երազի մեջ է և սա էլ դրա շարունակությունն է:

Արդարև, այս հեղադարձությունը, թեև խիստ հաճելի, բայց շատ
ուժգին էր:

Արձակեցին կախված օղակը և բանաստեղծին իջեցրին նստարա-
նից: Հուզմունքն այնքան սաստիկ էր, որ նա ստիպված էր նստել:

Եգիպտոսի դուքսը, առանց որևէ խոսք ասելու, մի փոքրիկ կուժ
բերեց: Գնչուհին կուժը տվեց Գրենգուարին և ասաց.

— Ջարկեցեք գետնին:

Կուժը չորս կտոր եղավ:

— Եղբա՛յր, — ասաց Եգիպտոսի դուքսը՝ ձեռքերը դնելով նրանց
ճակատներին, — սա քո կինն է. քո՛ւյր, սա քո ամուսինն է: Չորս
տարով: Գնացե՛ք:

VII

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳԻՇԵՐ

Մի քանի ըուպե հետո մեր բանաստեղծը գտնվում էր սուր կամա-
րակապ առաստաղ ունեցող մի փոքրիկ, անլուսամուտ ու տամուկ սեն-
յակում: Նա նստած էր սեղանի առաջ, որը այլ բան չէր պահանջում,
եթե ոչ մի քանի փոխառություններ կատարել հենց այդտեղ, պատից
կախված ուտելիքների պահարանից, և հեռանկարում ունենալով լավ
անկողին՝ վայելում էր մի սիրուն աղջկա ներկայությունը: Ամբողջ
իրադարձությունը ասես թովչապատկեր լիներ: Նա սկսում էր լրջորեն

Հավատալ, որ ինքը կախարդական հեքիաթների կերպար է, ուստի և երբեմն-երբեմն աչքերը ման էր ածում իր շուրջը՝ փնտրելու, թե արդյոք դեռ այդտե՞ղ է թևավոր գուլյգ եղջերվաքաղններ լծված հրեղեն կառքը, որը միայն կարողացել էր այնքան արագությամբ Տարտարոսից դրախտ փոխադրել իրեն: Երբեմն էլ Համառորեն Հայացքը սևեռում էր իր վերնազգեստի ծակերին, որպեսզի կառչած մնար իրականությանը և բոլորովին չկորցնեք ոտքի տակի հողը: Երևակայական տարածությունների մեջ տարուրերվող նրա բանականությունը միայն այդ թելով էր պահվում:

Դեռատի աղջիկը կարծես ամենևին ուշադրություն չէր դարձնում նրան, նա գնում էր, գալիս, տեղափոխում որևէ նստարան, գրուցում իր այծի հետ, սիրուն շրթնակծկում անում այսուայնտեղ: Վերջապես նա նստեց սեղանի մոտ, և Գրենգուարը կարողացավ ուզածի չափ դիտել նրան:

Ընթերցող՝, դուք մի ժամանակ երևիս եք եղել և գուցե բավական բախտավոր եք, որ դեռևս Հիմա էլ երևիս եք մնացել: Անկարելի է, որ ավելի քան մեկ անգամ (ինչ վերաբերում է ինձ, ապա ես դրան հատկացրել եմ շատ օրեր՝ կյանքիս ամենալավ կիրառած օրերը), արևաշող մի օր, կարկաչահոս առվի սփին, թփից թուփ անցնելով՝ հետևած չլինեք որևէ կանաչ կամ կապույտ շերտափակով, որը Հատու անկյուններ գծելով՝ կոտրում է իր թռիչքի ուղղությունը և Համբուրում բոլոր հյուղերի ծայրերը: Հիշում եք, թե ինչպիսի սիրավառ հետաքրքրությունք մեր միտքն ու Հայացքը կառչում էր բոսորագույն ու կապուտակ թևերի սուլող ու բզկացող հովմապտույտին, որի մեջ ծփում էր աննշմարելի մի ձև, որ քողարկված էր իր իսկ շարժման արագությամբ: Այդ սղեղեն արարածը, որ տարտամորեն գծագրվում էր թևերի թրթռումի միջից, ձեզ թվում էր ցնորական, երևակայական, թվում էր, թե անկարելի է ձեռք տալ նրան, անհնար է տեսնել: Բայց երբ վերջապես շրտեփակով նստում էր որևէ եղեգի ծայրին, և դուք, շունչը պահած, կարող էիք դիտել նրա երկար, շղարշանման թևերը, էմալանման երկար շրջազգեստը, բյուրեղապակե

յուրյոց զնդերը՝ նրա աչքերը, ինչպիսի՛ զարմանք էիք ապրում դուք և ինչպիսի՛ վախ՝ տեսնելով, որ այդ ձեռը նորից հեռացավ որպես ստվեր և արարածը դարձավ քիմերա՝ ցնորք:

Վերհիշեցեք այդ տալավորությունները և հեշտությամբ կպատկերացնեք, թե ինչ էր զգում Գրենդուարը՝ իր տեսանելի և շոշափելի ձևի տակ դիտելով այդ էսմերալդային, որին մինչ այդ նշմարել էր միայն պարի, հրգի ու իրարանցման հողմապտույտի միջով:

Հետզհետե սովելի խորանալով իր երազանքի մեջ և աչքերով տարտամորեն հետևելով դնչուհուն՝ մտածում էր նա. «Ահա թե ի՛նչ է էսմերալդան՝ երկնային էակ, փողոցներում պարող, այնքա՛ն շատ և այնքան քիչ: Նա՛ էր, որ այս առավոտ վերջին հարվածը հասցրեց իմ միստերիային, հենց նա էլ այս երեկոյան փրկեց իմ կյանքը: Իմ չա՛ր ոգի, իմ բարի՛ հրեշտակ: Գեղեցի՛կ կլին է, պատիվս վկա, և անշուշտ խելագարության աստիճան սիրում է ինձ, որ այդ ձեռով տիրացավ ինձ: Ի դեպ, — ասաց նա ինքն իրեն՝ հանկարծ վեր կենալով իրականի այն զգացողությամբ, որ նրա բնավորության ու փրիստփայլության էությունն էր, — չգիտեմ, թե ինչպես է արվում դա, բայց ես նրա սմուսինն եմ»: Այս միտքը գլխում ու աչքերի մեջ՝ նա այնպիսի մարտական, միաժամանակ և կնամեծար ձևով մոտեցավ դեռատի աղջկան, որ նա ընկրկեց:

— Ի՞նչ եք ուզում ինձնից, — հարցրեց նա:

— Մի՞թե դա հարցնելու բան է, սյաշտելի՛ էսմերալդա, — պատասխանեց Գրենդուարը այնպիսի կրքոտ շեշտով, որ ինքն էլ զարմացավ իր խոսելու եղանակից:

Գնչուհին աչքերը լայն բացեց:

— Ձեմ հասկանում, թե ինչ եք ուզում ասել:

— Ինչպես թե, — ասաց Գրենդուարը՝ հետզհետե սովելի սաքանալով և մտածելով, որ վերջվվերջո ինքը գործ ունի Հրաչքնելի բակի առաքինության հետ միայն, — մի՞թե ես քոնը չեմ, քաղցրի՛կ բարեկամուհի, և դու էլ՝ իմը:

Եվ խիստ պարզամտորեն գրկեց աղջկա մեջքը:

Գնչուհու իրանը դուրս պրծավ Գրենգուարի ձեռքերից օձաձկան նման: Նա խցիկի մի ծայրից ցատկեց մյուսը, կոացավ և ուղղվեց՝ մի փոքրիկ դաշույն ձեռքին, նախքան Գրենգուարը ժամանակ կունենար տեսնելու, թե որտեղից դուրս եկավ այդ դաշույնը: Էսմերալդան զայրացած էր ու խորխտ, շրթունքներն ուռած էին, ունեզերր լայնացած, այտերը՝ կարմրած խնձոր, բիբերը կայծեր էին արձակում: Նույն պահին Էսմերալդայի առաջ կանգնեց սպիտակ այծը և մարտական ձևով Գրենգուարին դեմ արեց գեղեցիկ, ոսկեգօծ ու խիստ սրածայր կոտոշներով զինված ճակատը: Այս բոլորը կատարվեց մեկ ակնթարթում:

Շերիփակոթը⁵⁸ վերածվեց բողբի և ուրիշ բան չէր ուզում, եթե ոչ խայթել:

Մեր փրկիտփան մնաց շվարած՝ ապշած հայացքը փոխնիփոխ սևեռելով այժի ու դեռատի աղջկա վրա:

— Սո՛ւրբ կույս, — ասաց նա վերջապես, հրբ ապշանքը մի քիչ անցնելով՝ թույլ տվեց նրան խոսել. — ահավասիկ երկու դյուցազնուհիներ: Գնչուհին էլ իր կողմից խզեց լուռթյունը.

— Ինչպես երևում է, դու էլ խիստ համարձակ անախտանի մեկն ես:

— Ներեցեք, օրիս՛րդ, — ասաց Գրենգուարը ժպտալով: — Հապա ինչո՞ւ ինձ առաք ձեզ ամուսին:

— Թողնեի ուրեմն՝ որ քեզ կտխեի՞ն:

— Նշանակում է, — շարունակեց բանաստեղծը մի քիչ հիասթափված իր սիրային հույսերից, — ինձ հետ ամուսնանալով՝ ուրիշ նպատակ չունեի՞ք, բացի ինձ կախաղանից ազատելուց:

— Ուրիշ էլ ի՞նչ նպատակ կարող էի ունենալ:

Գրենգուարը կծեց շրթունքները:

— Շատ լավ, — ասաց նա, — երևում է, որ ես դեռ բավական հաղթական չեմ կուպիդոնյան գործերում, ինչպես կարծում էի: Բայց այդ դեպքում էլ ի՞նչ կարիք կար ջարդելու այն խեղճ կուժը:

58. Demoiselle բառը ֆրանսերեն նշանակում է կ' օրիորդ, կ' շերիփակոթ, որով և ստացվում է անթարգմանելի բառախաղ:

Սակայն էսմերայդայի դաշույնը և այժի եղջուրները շարունակում էին մնալ պաշտպանվելու դիրքում:

— Օրիո՛րդ էամերալդա,— ասաց բանաստեղծը,— զենքերը ցած չեննք: Ես Շատլիի դատական գրագիր-կատարածու չեմ և չեմ հայտնի, որ դուք պարոն պրևոյի հրամաններին և արգելքին հակառակ ու նրա քթի տակ դաշույն եք կրում Փարիզում: Բայց և այնպես, հավանաբար, գիտեք, թե ինչպես Նոել Լեկրիվենը ութ օր առաջ դատապարտվեց փարիզյան տասը սու տուգանքի՝ կարճ սուր կրելու համար: Կրկնում եմ՝ դա իմ գործը չէ և ես վերադառնում եմ մեր Խնդրին: Երդվում եմ արքայության իմ բաժնով, որ ձեզ չեմ մոտենա՝ առանց ձեր համաձայնության և թույլտվության: Միայն թե ընթրիք տվիք ինձ:

Ըստ էության՝ Գրենգուարը, պարոն Դեպրեոյի նման⁵⁹, «չատ քիչ վավաշոտ» էր: Նա այն ասպետական և հրացանակիրյան բնավորություններից չէր, որոնք գրոհով են տիրանում աղջիկներին: Միտո հարցում, ինչպես և որևէ այլ գործում, նա կողմնակից էր սպասման և միջին ուղիների: Եվ լավ ընթրիքը, հաճելի զրուցակցի ներկայությունը, մանավանդ երբ քաղցած էր, նրան թվում էր հիանալի միջնախաղ սիրային արկածի նախաբանի և հանգույցի լուծման միջև:

Գնչուհին չպատասխանեց: Նա անփութորեն շրթնակծկում արեց, թոչունի պես տնկեց գլուխը, ապա քահ-քահ ծիծաղեց: Եվ փոքրիկ դաշույնն անհետացավ, ինչպես հայտնվել էր, իսկ Գրենգուարը չկարողացավ տեսնել, թե որտեղ է մեղուն թաքցնում իր խայթոցը:

Մի րոպե հետո սեղանի վրա դրված էին տարեկանի հաց, իոզաճարպի մի շերտ, մի քանի կնճռոտած խնձոր և մի գավ գարեջուր: Գրենգուարն սկսեց ողևորությունը ուտել: Լսելով նրա երկաթե պատառաքաղի և ֆայսնես պնակի կատաղի չխկչխկոցը՝ կկարծեիր, թե նրա ամբողջ սերը վեր է ածվել ախորժակի:

59. Ակնարկությունը վերաբերում է կլասիցիզմի տեսաբան և բանաստեղծ Նիկոլա Բուայոյին, որի ազգանունն է:

Դեռատի աղջիկը նրա առաջ նստած լուելյայն դիտում էր նրա ուտելը, ակներևաբար զբաղված մի ուրիշ մտածմունքով, որին երբեմն-երբեմն ժպտում էր, մինչդեռ նրա գոգտրիկ ձեռքը շոյում էր քնքշորեն ծնկների վրա պարզած խնկացի այծի գլուխը:

Դեղին մեղրամոմը լուսավորում էր շատակերության ու երազանքի այդ պատկերը:

Սակայն իր ստամոքսի առաջին կռկռոցները լոեցնելուց հետո Գրենգուարը մի տեսակ կեղծ ամոթ զգաց՝ տեսնելով, որ միայն մի խնձոր է մնացել:

– Դուք չե՞ք ուտում, օրիորդ էսմերալդա, – հարցրեց նա:

էսմերալդան գլխով բացասական պատասխան տվեց, իսկ նրա մտախոհ հայացքը բարձրացավ ու սեեովեց խցիկի կամարակապ առաստաղին:

«Ի՞նչ գրողով է զբաղված, – մտածեց Գրենգուարը և նայելով նրա դիտածին՝ ավելացրեց: – Անկարելի է, որ կամարի պորտաբարի վրա քանդակված այդ գաճաճի ծուռտիկ դեմքը դրավի նրա ամբողջ ուշադրութունը: Սատանան տանի, ես ինքս կարող եմ մրցել նրա հետ ու շահել»:

Նա բարձրացրեց ձայնը.

– Օրիորդ:

էսմերալդան կարծես չէր լսում: Գրենգուարն ավելի բարձրաձայն կրկնեց.

– Օրիորդ էսմերալդա:

Ապարդյուն, դեռատի աղջկա միտքն ուրիշ տեղ էր, և Գրենգուարի ձայնը նրան վերադարձնելու զորութուն չուներ: Բարեբախտաբար, միջամտեց այծը՝ սկսելով կամացուկ քաշել իր տիրուհու թևքը:

– Ի՞նչ ես ուզում, Զալի՛, – հարցրեց գնչուհին աշխուժորեն՝ կարծես ընդոստ արթնացած:

– Քաղցած է, – ասաց Գրենգուարը՝ սքանչացած, որ կարող է խոսակցութուն սկսել:

էամերալդան սկսեց մանրել հացը, որ Զալին շնորհագեղորեն ուտում էր տիրուհու ափից:

Գրենգուարն այլևս ժամանակ չսովեց նրան վերադառնալու իր անընտանեկն և խիզախեց մի փափուկ հարց տալ նրան:

– Ուրեմն՝ դու ք չե՞ք ուզում, որ ես լինեմ ձեր ամուսինը:

Մանկամարդ աղջիկը շեշտակի նայեց նրան և ասաց.

– Ոչ:

– Իսկ ձեր սիրեկա՞նը, – շարունակեց Գրենգուարը:

Գնչուհին սիրուն շրթնակծկում արեց և սլատասխանեց.

– Ոչ:

– Ձեր բարեկա՞մը, – վրա բերեց Գրենգուարը:

էամերալդան սովի շեշտակի նայեց նրան և մի վայրկյան մտածելուց հետո՝ պատասխանեց.

– Գուցե:

Փիլիսոփաներին այնքան սիրելի այդ «գուցեն» համարձակութուն սովեց Գրենգուարին:

– Իսկ դու ք գիտե՞ք, թե ինչ բան է բարեկամութունը, – հարցրեց նա:

– Այո, – պատասխանեց գնչուհին. – դա նշանակում է՝ լինել քույր և եղբայր, երկու հոգիներ, որ դիպչում են իրար՝ առանց խառնվելու, ինչպես ձեռքի երկու մատները:

– Իսկ սե՞րը, – շարունակեց Գրենգուարը:

– Օ, սե՛րը, – կրկինց էամերալդան՝ ձայնը դողդոջ, աչքերը շողշողուն:

– Դա նշանակում է լինել երկու, և միաժամանակ՝ մեկ: Մի տղամարդ և մի կին, որ միաձուլվում՝ դառնում են մեկ հրեշտակ: Երկիրքն է դա:

Փողոցների պարուհին այդպես խոսելիս այնքան գեղեցիկ էր, որ առանձնապես շանթահարում էր Գրենգուարին և կատարելապես համապատասխան էր թվում նրա խոսքերի գրեթե արեելյան հափշտակվածութունը: Նրա վարդագույն ու անարատ շրթունքները թեթևակի ժպտում էին, անմեղ ու պայծառ ճակատը երբեմն

մթապնում էր նրա մտածմունքներից, ինչպես Հայելին՝ արտաշնչում-
մից, երկար ու խոնարհած սև թարթիչներից ճաճանչում էր մի տե-
սակ աննկարագրելի լույս և նրա դեմքին տալիս էր այն իդեալական
անուշությունը, որ հետագայում «գտավ Ռաֆայելը կուսության,
մայրության և աստվածության միասնական համասն կետում:

Այնուամենայնիվ, Գրենգուարը շարունակեց.

– Իսկ ինչպե՞ս պետք է լինել՝ ձեզ դուր գալու համար:

– Պետք է լինել տղամարդ:

– Հապա ես ի՞նչ եմ:

– Տղամարդը գլխին ունի սաղավարտ, ձեռքին՝ սուր, իսկ կրունկ-
ներին՝ ոսկե խթաններ:

– Շատ լավ, ուրեմն առանց ձիու՝ չկա տղամարդ: Սիրո՞ւմ եք
դուք որևէ մեկին:

– Սիրո՞վ:

– Սիրով:

Գնչու հին մի փոքր մտածեց, ապա առանձնակի շեշտով պատաս-
խանեց.

– Շուտով կիմանամ:

– Իսկ ինչո՞ւ ոչ այսօր, – վրա բերեց բանաստեղծը քնքշապին: –
Եվ ինչո՞ւ ոչ ինձ:

Համերալդան մի խիստ հայացք նետեց նրան:

– Ես կսիրեմ միայն այնպիսի մարդու, որը կկարողանա պաշտպա-
նել ինձ:

Գրենգուարը կարմրեց և ընդունեց դա ի գիտություն: Ակներև
էր, որ դեռաժի աղջիկն ակնարկում էր այն սակավ օգնությունը, որ
մատուցել էր ինքը այն ճգնաժամային հանգամանքներում, որոնց
մատուցել էր Համերալդան երկու ժամ առաջ: Նա վերհիշեց այս դեպ-
քը, որ ջնջված էր երեկոյան մյուս արկածներից: Եվ խփեց ճակատին:

– Ի դեպ, օրի՞րդ, ես հենց դրանից պետք է սկսեի: Ներեցեք
իմ խենթ մտացրիվությունը: Ինչպե՞ս կարողացաք խույս տալ
Քվազիմոզոյի ճիրաններից:

Այս հարցումը սարսուռացրեց գնչուհուն:

– Օ՛, զարհուրելի՛ կուզը, – ասաց նա՝ ձեռքերով ծածկելով դեմքը և շարունակելով դողալ ասես սաստիկ ցրտից:

– Իսկապե՛ս զարհուրելի՛, – վրա բերեց Գրենգուարը՝ առանց հրաժարվելու իր մտքից. – բայց ինչպե՞ս կարողացաք խուլյա տալ նրանից:

Էսմերալդան ժպտաց, հառաչեց և մնաց լուռ:

– Գիտե՞ք, թե ինչու էր հետևել ձեզ, – շարունակեց Գրենգուարը՝ ջանալով ճանապարհը շեղելով վերադառնալ իր հարցին:

– Չգիտեմ, – ասաց մանկահասակ աղջիկը և աշխուժորեն ավելացրեց. – իսկ դուք, որ հետևում էիք ինձ, ինչո՞ւ էիք հետևում:

– Հավատա վկա, ես ինքս էլ չգիտեմ, – պատասխանեց Գրենգուարը:

Հաջորդեց մի փոքր լռություն: Գրենգուարն իր դանակով խզբզում էր սեղանը: Դեռատի աղջիկը ժպտում էր և կարծես պատի միջով ինչ–որ բան էր դիտում: Հանկարծ նա սկսեց երգել հազիվ արտաբերվող ձայնով.

Quando las pintadas aves

*Mudas estan, y la tierra...*⁶⁰

և հանկարծակի էլ ընդհատելով՝ սկսեց շոյել Զալիին:

– Ի՛նչ սիրուն կենդանի ունեք, – ասաց Գրենգուարը:

– Սա իմ քույրն է, – պատասխանեց աղջիկը:

– Ինչո՞ւ են ձեզ էսմերալդա անվանում, – հարցրեց բանաստեղծը:

– Չգիտեմ:

– Այնուամենայնիվ:

Գնչուհին ծոցից հանեց ինչ–որ երկարաձև, փոքրիկ քսակ, որ կախված էր նրա վզից կլոր բուսահատիկներից կազմված շղթայով: Այդ քսակը, որից քաֆուրի ուժեղ բույր էր գալիս, պատված էր

60. Երբ խայտառակները

Լուռ են. հողն էլ... (խալ.):

կանաչ մետաքսով և իր մեջ ունեւր մի խոշոր, կանաչ ապակե ուլունք՝
զմրուխտի⁶¹ նման:

– Գուցե սրա համար է, – ասաց աղջիկը:

Գրեհգուարն ուզեց վերցնել–նայել քսակը: Գնչուհին ընկրկեց.

– Ձեռք չտաս, թալիսման է դա: Կամ դրա թովչանքը կվնասի
քեզ, կամ դու կվնասես նրան:

Բանաստեղծի հետաքրքրասիրութունը հետզհետե աճում էր:

– Ո՞վ է Ձեզ տվել դա, – հարցրեց նա:

Էսմերալդան մատը դրեց բերանին և թալիսմանը թաքցրեց
ծոցում: Գրեհգուարը փորձեց ուրիշ հարցեր տալ, սակայն զնչուհին
հազիվ էր պատասխանում:

– Ի՞նչ է նշանակում էսմերալդա բառը:

– Չգիտեմ, – ասաց աղջիկը:

– Ի՞նչ լեզվի բառ է:

– Կարծեմ՝ զնչուհերեն է:

– Իմ մտքով էլ անցել էր, – ասաց Գրեհգուարը: – Ֆրանսիայից
չե՞ք դուք:

– Չգիտեմ:

– Ձեր ծնողները կա՞ն:

Էսմերալդան սկսեց մի հին եղանակով երգել.

Հայրս թռչուն է,

Մայրիկս էլ՝ թռչնիկ.

Ջուրն անցնում եմ անմակույկ,

Ջուրն անցնում եմ աննափակ.

Մայրըս թռչնիկ է,

Հայրիկս էլ՝ թռչուն:

– Շատ լավ է, – ասաց Գրեհգուարը: – Քանի՞ տարեկան էիք, երբ
Ֆրանսիա եկաք:

– Շատ փոքր էի:

61. Զմրուխտ՝ ֆրանսերեն՝ émeraude, իսպաներեն՝ esmeralda:

– Իսկ Փարի՞զ:

– Անցած տարի: Այն պահին, երբ Պապական դարպասից ներս էինք մտնում, օգուտ թույլում էր շամբուտների շիկահավը: Օգոստոսի վերջն էր. ես ասացի՝ ձմեռը խիստ կլիինի:

– Այդպես էլ եղավ, – ասաց Գրենգուարը՝ զմայլված, որ խոսակցութունն այդպես սկսվում է: – Ամբողջ ձմռանը արտաշնչում էի մատներիս, որ տաքանան: Ուրեմն՝ դուք մարգարեանալու ձի՞րք ունեք:

Գնչուհին վերադարձավ իր լակոնիզմին:

– Ոչ:

– Այն մարդը, որին անվանում եք Եգիպտոսի դուքս, ձեռքերդ պահի՞տն է:

– Այո:

– Բայց և այնպես, նա մեզ ամուսնացրեց, – անհամարձակ նկատեց բանաստեղծը:

Էսմերալդան իր սովորական, գեղեցիկ շրթնակծկումն արեց:

– Ես նույնիսկ քո անունը չգիտեմ:

– Իմ անո՞ւնը. խնդրեմ՝ Պիեր Գրենգուար:

– Ես մի ավելի գեղեցիկ անուն գիտեմ:

– Չա՛ր աղջիկ, – գոչեց բանաստեղծը: – Վնաս չունի, դուք ինձ չեք բարկացնի: Բայց լսեցեք, գուցե և ինձ սիրեք՝ ավելի լավ ճանաչելուց հետո, և բացի դրանից, դուք այնքան վստահ կերպով պատմեցիք ձեր պատմությունը, որ ես էլ իմը պետք է մի փոքր պատմեմ: Ուրեմն՝ դուք գիտեք, որ իմ անունը Պիեր Գրենգուար է, ինքս էլ Գոնեսի հարկահան նոտարի ռոգան եմ: Հորս կախեցին բուրգուղացիները, մորս էլ պիկարդացիք մորթեցին Փարիզի պաշարման ժամանակ, սրանից քսան տարի առաջ: Ուրեմն՝ վեց տարեկանից որբ եմ եղել և ոտքերիս տակ, որովես ներքան, ունեցել եմ Փարիզի սալահատակը: Զգիտեմ, թե ինչպես անցկացրի վեցից մինչև տասնվեց տարեկան գառնալուս շրջանը: Մի տեղ պտղավաճառուհին էր մի սալոր տալիս,

մի ուրիշ տեղ՝ հացափսածառն էր մի կտոր հացի կեղև տալիս, իսկ երեկոյան պարեկները բռնում ու տանում էին բանտ, որտեղ գտնում էի մի խուրձ ծղոտ: Այդ բոլորը, ինչպիս տեսնում եք, չխանգարեցին, որ ես հասակ քաշեմ ու նիհարեմ: Ձմեւը տաքանում էի արևով, դր Սանս ապարանքի գավթի տակ, և շատ ծիծաղելի բան էի համարում, որ սուրբ Հովհաննու խարույկը ամռան շոգին են վառում: Տասնվեց տարեկան դառնալուց հետո որոշեցի որևէ վիճակ ստեղծել ինձ համար: Իրար ետևից փորձեցի ամեն ինչ: Դարձա գինւոր, սակայն բավականաչափ քաջ չէի: Դարձա վանսական, բայց բավականաչափ բարեսլաշտ չէի և, բացի դրանից, կարգին խմել չեմ կարողանում: Հուսահատված՝ դարձա աշակերտ մեծ կայքինով աշխատող աստղճագործների մոտ, սակայն բավականաչափ ուժեղ չէի: Ավելի շուտ՝ ուսուցիչ լինելու հակում ունեի, ճիշտ է՝ կարգալ չգիտեի, բայց դա մեծ սլատճառաբանութուն չէ: Որոշ ժամանակ անց նկատեցի, որ ամեն ինչի համար մի որևէ բան պակասում է ինձ, և տեսնելով, որ ոչ մի բանի պիտանի չեմ, իմ ազատ կամքով ու ցանկությամբ դարձա բանաստեղծ և հանպարհ: Դա այնպիսի պրավոմուք է, որ միշտ կարելի է ընդգրկել, ելք թափառաշրջիկ ես, և սովելի լավ է, քան գողութուն անելը, ինչպես խորհուրդ էին տալիս ինձ իմ բարեկամներից մի քանի ավագակ տղաներ: Բարեբախտաբար, մի գեղեցիկ օր հանդիպեցի Աստվածամոր տաճարի սլատվելի սարկավագապետ տեր հայր Կլոդ Ֆրոլոյին: Նա հոգ տարավ ինձ, և այսօր ես նրան եմ պարտական, որ իսկական գրագետ եմ, որ դիտեմ լատիներեն՝ սկսած Ցիցերոնի «Վասն պարտուց»-ից մինչև սելեստինյան հայրերի դամբանականները, և անգետ չեմ ո՛չ սիսոլաստիկայի, ո՛չ քերթողական արվեստի, ո՛չ տաղաչափության, ո՛չ էլ ալքիմիայի՝ այդ իմաստութունների իմաստության մեջ: Ես եմ հեղինակը այն միստերիայի, որ ներկայացրին այսօր այնքան մեծ հաջողությամբ և անհամար բաղմության ներկայությամբ, Արդարադատության սլատի լեփլեցուն դահլիճում: Ես գրել եմ նաև մի գիրք, որ վեց հարյուր էջ

կլինի, 1465 թվականի հրաշք գիսաստղի մասին, որից մի մարդ խելագարվեց: Մի քիչ էլ հրետանային գործից տեղյակ լինելով՝ աշխատել եմ Մոգի այն խոշոր ումբանետի վրա, որը, ինչպես գիտեք, պայթեց Շառանտոնի կամրջի վրա, հենց փորձարկման օրը, և հետաքրքրասիրներից սպանեց քսանչորս մարդ: Ինչպես տեսնում եք, ես ամուսնու այնքան էլ վատ թեկնածու չեմ: Ես գիտեմ նաև բաղմաթիվ խիստ գեղեցիկ հնարք-ձեռնախաղեր, որ կսովորեցնեմ ձեր այծին, ինչպես օրինակ՝ Փարիզի եպիսկոպոսի, այդ նյությալ փարիսեցու նմանակերպուծյունն անել, որի ալրաղացները Ջրաղացուանների կամուրջի ամրողջ երկարուծյամբ ցելս են ցայտեցնում անցորդների վրա: Բացի դրանից, իմ միստերիան ահագին արծաթ դրամ կրերի ինձ, եթե վճարեն: Մի խոսքով՝ ես ձեր տրամադրուծյան տակ եմ, ես էլ, իմ խելքն էլ, իմ գիտուծյունն էլ, իմ գրվածքներն էլ, և պատրաստ եմ ապրել ձեզ հետ, օրիորդ, ինչպես որ հաճո լինի ձեզ՝ ժուժկալ կամ պարթապին, մարդ ու կին, եթե հարմար գտնեք, քույր ու եղբայր, եթե ավելի հարմար համարեք:

Գրենգուարը լուց՝ սպասելով իր ճառի ազդեցությանը դեռատի աղջկա վրա: Բայց նա աչքերը հառել էր գետնին:

– **Ֆերուս**, – ասում էր նա կիսաձայն: Ապա դառնալով դեպի բանաստեղծը՝ հարցրեց. – Ի՞նչ է նշանակում **Ֆերուս** բառը:

Գրենգուարն այնքան էլ չհասկանալով, թե ինչ կապ կարող էր լինել իր ճառախոսությունից և այս հարցումի միջև, այնուամենայնիվ, դժգոհ չէր, որ կարող է փայլել իր գիտուծյամբ: Ուստի և խրոխտ դիրք ընդունելով՝ պատասխանեց.

– Լատիներեն բառ է և նշանակում է՝ **աղև**:

– Արև՛, – գոչեց աղջիկը:

– Դա անունն է մի այնպիսի՝ գեղեցիկ նետաձիգի, որ Աստված էր⁶², – ավելացրեց Գրենգուարը:

62. Գրենգուարի ակնարկը վերաբերում է Ապոլոնին, որը աստվածն էր պատգամախոսների, բժշկության, բանաստեղծության, սրվեստների, ցերեկվա ու արևի: Այս վերջին հանգամանքով կոչվում էր նաև Ֆերուս:

– Աստված,– կրկնեց գնչուհին, և նրա շեշտի մեջ մտախոհ ու կրքոտ բան կար:

Այդ ընդհանուր նրա ապարանջաններից մեկը պոկվեց ու ընկավ: Գրենգուարն աշխուժորեն կուսցավ՝ վերցնելու և երբ ուղղվեց, մանկահասակ աղջիկն ու այծը անհետացել էին: Նա լսեց նրիցի ճուռոց, այդ կացարանին կից մի ուրիշ խցիկի փոքրիկ դուռն էր այդպես փակվում դրսից:

– Գոնե անկողին թողե՞լ է ինձ, – ասաց մեր փիլիսոփան:

Նա շրջան կատարեց խցիկում: Քնելու հարմար կահույք չկար, բացի մի բավական երկար փայտե սնդուկից՝ կախարիչն էլ քանդակված: Երբ Գրենգուարը մեկնվեց դրա վրա, ունեցավ այն զգացողութթյունը, որ մոտավորապես նման էր Միկրոմեգասի՝⁶³ գգացողութթյանը, երբ նա իր ամբողջ հասակով պառկեց Ալսյան լեռների վրա:

– Դե՛հ, պետք է համակերպվել, – ասաց նա որքան կարող էր հարմարվելով սնդուկի վրա:– Բայց և այնպես, տարօրինակ հարսանեկան գիշեր է: Ափսո՛ս. կոտրված կուժով օրինականացած այս ամուսնութթյան մեջ ինչ-որ միամիտ և անդրձրհանգիյան բան կար, որ դուր էր գալիս ինձ:

63. Վոլտերի Համանուն փիլիսոփայական պատմվածքի Հերոսի անունը, որը կազմված է հունարեն միկրո (փոքր) և մեգաս (մեծ) բառերից և գործածված է չարամտորեն՝ ընդդեմ Ֆոտընոլի. նշանակում է «փոքր մեծ մարդ»:

ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐԸ

Փարիզի Աստվածամոր տաճարն այսօր էլ անկասկած հոյակապ ու փառահեղ կերտվածք է: Սակայն հնանալով հանդերձ որքան էլ գեղեցիկ մնացած լինի, այնուամենայնիվ, չես կարող չհառաչել և չվրդովվել՝ տեսնելով այն անհամար ավերվածքներն ու վթարում-ները, որ ժամանակն ու մարդը միաժամանակ հասցրել են սլատկա-ռելի հուշարձանին՝ Հարպանք չտածելով Կառլոս Մեծին, որ դրել է նրա առաջին քարը, և Ֆիլիպ Օգոստոսին, որ դրել է վերջինը:

Մեր մայր եկեղեցիների հին թագուհին հանդիսացող այս կոթողի դեմքի որևէ կնճիռի կազքին միշտ գտնում ես մի սպի: *Tempo edax, homo edacior*⁶¹, որ ես հաճությամբ կթորգմանեի այսպես՝ ժամանակը կույր է, մարդը՝ տխմար:

Եթե մենք ընթերցողի հետ ժամանակ ունենայինք մեկիկ-մեկիկ քննելու հնադարյան տաճարի վրա դրոշմված ավերածությունյան տարբեր հետքերը, սպա կտեսնեիրք, որ ժամանակի բաժինը կլիներ նվազողույնը, իսկ մարդկանց, մանավանդ՝ արվեստի մարդկանց բաժինը՝ հոռեգույնը: Ես պարտավորված եմ ասել «արվեստի մարդկանց», որովհետև վերջին երկու դարի ընթացքում եղել են այդպիսի անհատներ, որոնք վերադրել են իրենց ճարտարապետի կոչումը:

Ամենից առաջ, մի քանի գլխավոր օրինակ բերելու համար, ասենք, որ անկասկած քիչ են ճարտարապետական այնպիսի գեղեցիկ էջերը, ինչպես այս տաճարի ճակատը, որտեղ մեր աչքի դիմաց, հաջորդաբար և բոլորը միասին, երևում են սրածայր կամարով

⁶¹Վ. ժամանակն սպառիչ է, մարդն ավելի սպառիչ (լատ.):

փորված երեք ավագ դռները, դրանց վերևում՝ արքայական քսանութ որմնախորչերի ասեղնագործված ու ժանյականման շերտը. ապա՝ կենտրոնական վիթխարի վարդագարդը, երկու կողմից ունենալով մեկական մեծ պատուհան, ասես քահանան սարկավագի ու ենթասարկավագի միջև, այնուհետև՝ երեքնուկի ձևով առաստաղված կամալաշարի բարձր ու նյրակերտ վերնասրահը, որ իր բարակ սյուների վրա պահում է ծանր հարթակը, և վերջապես, երկու սև ու զանգվածային աշտարակներն իրենց թերթաքարե քիվածակերով. փառահեղ ամբողջության ներլույսնակ մասերը՝ իրար վրա բարձրացած՝ որպես հինգ հսկայական հարկ: Կանգնում են դրանք մեր աչքի առաջ բոլորը միասին և անխռով քանդակագործական անհամար մանրամասներով, արձաններով ու երկաթադրվագներով՝ Հզորապես շաղկապված ամբողջի խաղաղ վեհություն հետ: Մի տեսակ քարեղեն լայնարձակ սիմֆոնիա, մեկ մարդու ու մեկ ժողովրդի ախտանական կերտվածքը, ամբողջությամբ միասնական և բարյ. ինչպես «Իլիականը» և «Ոռմանսերոները»⁶⁵, որոնց քույրն է մի ամբողջ դարաշրջանի բոլոր ուժերի հանրագումարի հրաշագեղ արգասիքը, որի յուրաքանչյուր քարի վրա տեսնում եք արտիստի հանճարով օժտված բանվորի երևակայության ժայթքումը հարյուրավոր ձևերով, մի խոսքով՝ մարդկային Հզոր ու արգասավոր ստեղծագործության մի նմուշ, ինչպես աստվածային արարչությունը, որից կարծես թե հափշտակել է նրա կրկնակ հատկանիշը՝ բազմադասնությունն ու հավերժությունը:

Այն, ինչ հիմա ասացինք ճակատի մասին, պետք է ասենք ամբողջ եկեղեցու մասին, և այն, ինչ ասում ենք Փարիզի մայր տաճարի մասին, պետք է ասել նաև միջին դարերի քրիստոնեական բոլոր տաճարների մասին: Ինքնին ծնունդ առած այս արվեստի մեջ ամեն ինչ հարակցվում է տրամաբանականին և համաչափությունը: Չափել հսկայի ոտքի բթամատը, նշանակում է՝ ամբողջովին չափել նրան:

65. Իսպաներեն բառ է, նշանակում է յոթնավանկ, տուն-տուն գրված պոեմների ժողովածու՝ հերոսական կամ սրտառուչ սյուժեով:

Վերադառնանք Աստվածամոր տաճարի ճակատին այն վիճակում, ինչպես տեսնում ենք այժմ, երբ երկյուղածորեն գնում ենք Հիանալու խստահայաց ու հզոր մայր եկեղեցով, որը, ինչպես նրա ժամանակագիրներն են ասում, սարսափեցնում է՝ *quae mole sua terrorem incutit spectantibus*:⁶⁶

Այսօր այդ ճակատին պակասում է երեք կարևոր բան. նախ՝ տասնմեկ աստիճան ունեցող սանդուղքը, որ ժամանակին գետնից բարձրացնում էր նրան, երկրորդ՝ արձանների ստորին շարքը, որ գրավում էր երեք մայր դռների խորշերը, ապա՝ առաջին հարկի վերնասրահը գարդարող Ֆրանսիական ամենահին արքաների քսանութ արձանների վերին շարքը՝ սկսած Քրիզևերտից մինչև Ֆրիդպ-Օդոստոսը, «արքայական խնձորը»՝ մականը ձեռքին:

Ժամանակը ջնջել է սանդուղքը՝ անդիմադրելի ու դանդաղ հարատևությամբ բարձրացնելով Միջնաբաղաքի մակերեսը: Սակայն ժամանակը տաճարի վեհատեսիլ բարձրությանը նպաստող տասնմեկ աստիճանները մեկիկ-մեկիկ լափել տալով Փարիզի սալահատակի այդ մակընթացությանը, թերևս ավելի է վերադարձրել նրան, քան թե խլել է, որովհետև հենց ժամանակն էլ սփռել է այդ ճակատի վրա դարերի այն մուգ երանգը, որ հուշարձանների ծերությունը դարձնում է նրանց գեղեցկության հատկանիշը:

Սակայն ո՞վ է ցած գցել արձանների երկու շարքը, ո՞վ է դատարկ թողել որմնախորշերը, ո՞վ է կնիտրոնական ավագ դռան ճիշտ մեջտեղը փորել այն նոր ու օտարոտի սրածայր կամարը, ո՞վ է համարձակվել այդ տափակ ու ծանր, Լյուդովիկոս XV-ի ոճով դրվագված փայտե դուռը գետնից այդտեղ՝ Բիսկորնետի արարական ոճի զարդաքանդակների կողքին: Մեր օրերի մարդիկ՝ ճարտարապետներն ու արվեստագետները:

Իսկ եթե մտենք տաճարի ներսը, դարձյալ հարց կտանք՝ ո՞վ է ցած գցել սուրբ Քրիստափորի վիթխարի քանդակը, որ առածի կարգ էր

66. Որի վիթխարի զանգվածը սարսափեցնում է գիտողներին (լատ.):

անցել նույն տիպի սրձանների մեջ, ինչպես Արդարադատության պալատի մեծ սրահը՝ դահլիճների մեջ, ինչպես Ստրասբուրգի մայր եկեղեցու նետասլաց զանգակատունը՝ այլ զանգակատների մեջ: Հապա այն բյուրավոր սրձանները՝ չոֆած, կանդած, ձի հծած, տղամարդ, կին, երեխա, արքա, եպիսկոպոս, զինվորական, քարե, մարմարե, ոսկե, արծաթե, անգամ՝ մեղրամոմե, որ լցնում էին եկեղեցու նավի⁶⁷ և երգեցիկ դասի բոլոր սյունամեջերը, ո՞վ է վայրենաբար ավերել-սրբել դրանք: Այնուամենայնիվ, ոչ ժամանակը:

Իսկ ո՞վ է տապանակներով և նշխարատուփերով փառահեղորեն զարդարված գոթական հինավուրց խորանի տեղը դրել հրեշտակների գլուխներով ու ամպերով բեռնված այն մարմարե ծանր քարադամրանը, որ կարծես թե Վալ-վը-Գրաս եկեղեցուց կամ Հաշմանդամների պալատի տաճարից պոկված ճարտարապետական մի նմուշ լինի: Մ՞վ է հիմարաբար քարե այդ ծանր անախրոնիզմը մուցրել Հերկանտուսի կերտած կարլովինգյան սալահատակի մեջ: Լյուդովիկոս XIII-ի ցանկությունը կատարող Լյուդովիկոս XIV-ը չէ՞ արդյոք:

Իսկ ո՞վ է դրել այն սալիտակ, սառն ապակիները գուլյնգուլյն ապակե պատկերների տեղ, որոնք մեր Հայրերի զմայլած Հայացքները վարանմունքի էին մատնում՝ գրավելով մերթ ավազ դռան վարդազարդի, մերթ էլ՝ խորանի սրբարանի սրակամար լուսամուտի վրա: Եվ ի՞նչ կասեր տասնվեցերորդ դարի տիրացուն, եթե տեսներ վառ գեղին ներկը, որով մեր վանդայ արքեպիսկոպոսները քսոտել են իրենց մայր եկեղեցին: Նա կվերհիշեր, որ դա այն գուլյնն է, որով դահիճը ներկոտում էր **չարագործաբնակ** շենքերը, կվերհիշեր Փոքր-Բուրբոնյան ապարանքը, որ նույնպես ամբողջովին գեղին էր ներկված գունզատաբլի դավաճանության համար, «այնպես թունդ ու լավ պատրաստված դելին ներկը, — ասում է Սովալը, — որ մի դարուց

67. Եկեղեցիների այն մասը, որ տրևմտյան դռնից սկսվելով՝ հասնում է ճակատային խորանին (ՈՇ): Թորոս Թորոմանյանը գործածում է նաև «թև» տերմինը: Եկեղեցիները կարող են ունենալ նաև կողմնային նավեր, որոնք գլխավորից բաժանվում են հաստահեղույս սյուներով:

ավելի ժամանակամիջոցը դեռ չի կարողացել ջնջել նրա գույնը»։ ևս կկարծեր, որ սրբավայրը պղծված է, և կփախչեր:

Իսկ եթե բարձրանանք մայր եկեղեցու վերնամասը և առանց կանց առնելու բարբարոսական հազարավոր ու ամեն տեսակ արարք-ների առաջ՝ հարցնենք՝ ի՞նչ են արել այն գողտրիկ փոքր զանգակատուներ, որ հենվում էր խաչաթևերի հատման կետի վրա և լինելով իր հարևան Սենտ-Շապելի նետասլաց զանգակատնից (որ նույնպես քանդվել են) ոչ պակաս նյութակերտ ու ոչ պակաս համարձակ՝ սլանում էր երկինք, աշտարակներից շատ ավելի բարձր, սուր, հնչեղ, ծակոտ-կենդուսանցիկ: Բարձրաճաշակ մի ճարտարապետ (1787) մասնատել է դա և կարծել է, թե բավական է վերքը սքողել կապարե այն լայն մոմյաթով, որ կաթնայի կափարիչի է նման:

Այսպես են ահա վարվել միջնադարի այն հրաշագեղ արվեստի հետ համարյա ամեն մի երկրում, մանավանդ՝ Ֆրանսիայում:

Աստվածամոր տաճարի ավերածությունների մեջ կարելի է տեսնել երեք տեսակ վնասվածք, և երեքն էլ հոշոտում են տարբեր խորությամբ: Նախ և առաջ ժամանակը, որ անզգալիորեն պոկոտել է տեղ-տեղ և ամբողջովին ժանգոտել մակերեսը, երկրորդ՝ քաղաքական ու կրոնական հեղաշրջումները, որոնք իրենց բնույթով կույր ու բարկ լինելով՝ խառնիխուռն գրոհել են նրա վրա, պատառոտել են քանդակներից ու երկաթադրվագներից կազմված նրա փարթամ գգեստները, փչացրել են վարդազարդերը, փչրել արաբեսկներից և արձանիկներից գործված նրա մանյակները, հանել են նրա արձանները՝ միթ զրանց խուլրի, մերթ էլ՝ թագի պատճառով, և վերջապես՝ երրորդ՝ հետզհետե ավելի անհեթեթ ու անմիտ դարձող մոդաները, որոնք Վերածնություն անարխիական, սակայն փարթամագեղ շեղումներից սկսած՝ իրար են հաջորդել ճարտարապետության անխուսափելի անկման ընթացքում:

Մոդաներն ավելի են վնաս հասցրել, քան թե հեղաշրջումները: Դրանք կտրել-հանել են կենդանի մարմնից, հարվածել են այդ

արվեստի բուն կմախքին, հոշոտել, իոււզել, կազմայուծել ու սպանել են հուշարձանը թե՛ ձևի ու խորհրդանշանի, թե՛ նրա տրամաբանութեան ու գեղեցկութեան տեսակետից: Հետո էլ գրանք՝ այդ մոդաները, վերակառուցել են. հավակնութեան, որ գոնե չեն ունեցել ո՛չ ժամանակը, ո՛չ էլ հեղաշրջումները: Ելնելով «նուրբ ճաշակից»՝ մոդաները անամոթաբար դրել են գոթական ճարտարապետության կոթողի վերքերի վրա իրենց միտրյա ոլլորմնի պաճուճանքները՝ մարմարե ժուպպեները, մետաղե զիլի-բիզիները՝ ձվաձև, ոլորուն պճնանքների, զարդագորգների, ծաղկաշղթանների, ծուպերի, քարեղեն բուցերի, բրունզե ամպիրի, գիրուկ ամուրների, սոգսած քերովբեների մի իսկական բորոտություն, որ սկսում է լափել արվեստի դեմքը Կատարինե Մեդիչիի ադոթարանում. իսկ երկու դար հետո, խոշտանկելով ու ծամածռելով՝ ստիպում է շունչը փչել կոմսուհի Դյուբարիի արդուզարդի սենյակում:

Այսպիսով, ամփոփելով մեր նշած կետերը, կրկնենք, որ երեք տեսակ ավերածություն այլանդակում է այսօր գոթական ճարտարապետությունը: Մակերեսի կնճիւններն ու կոթիւնները արել է ժամանակը: Բռնի հարվածները, բիրտ արարքների հետքերը, ճմլվածքներն ու կոտրվածքները հեղաշրջումների գործն են՝ Լյութերից սկսած մինչև Միրարոն: Հաշմուճները, անդամահատումները, կմախքի խախտումները, «վերականգնումները» Վիտրյուվի ու Վինյուլի հետևորդ արհեստավոր պրոֆեսորների հունական, հռոմեական և քարաբարոսական տիպի գործն են: Այս սքանչելի արվեստը, որ ստեղծել էին վանդաբները, սպանեցին ակապեմիաները: Դարերին, հեղաշրջումներին, որոնք, համենայն դեպս, ավերում են անկողմնակալութեամբ և մեծաբար, միացավ պատենտավոր ու երդվյալ գիտնական ճարտարապետների բաղմուճությունը՝ փչացնելով գիտակցաբար և վատ ճաշակի ընտրողութեամբ: Լյուդովիկոս XV-ի ոճի կնճուռ սալաթի տերևները ղնելով գոթական ժանյակների տեղ՝ ի մեծ փառս Պարթենոնի: Դա այն է, ինչ որ էշի քացին մեռնող առյուծին. դա վախճանն է զառամած

կազնու, որի մաշը կատարյալ դարձնելու համար խոցում, կրծում ու հերձոտում են թրթուրները:

Որքա՛ն հեռու է այն ժամանակը, երբ Ռոբերտ Սենալիսը Փարիզի Աստվածամոր տաճարը համեմատելով Եփեսոսի հռչակավոր 'Իրանայի տաճարի հետ, որ այնքան զովաբանել էին Հին Հեթանոսները և որ անմահացրեց Հերոստրատին, գաղղիական մայր եկեղեցին համարում էր «ավելի պատվական՝ թե՛ լայնությունով, թե՛ երկարությունով, թե՛ բարձրությունով և թե՛ կառուցվածքով»⁶⁸:

Անկախ այս ամենից, նկատենք, որ Փարիզի Աստվածամոր տաճարը չի կարելի համարել լրիվ, վերջացած, որոշակի կոթող: Դա այլևս ռոմանական ոճի եկեղեցի չէ, ոչ էլ դեռ լիովին գոթական տաճար: Այս կերտվածքը չի կարող տիպար լինել: Փարիզի Աստվածամոր տաճարը, ինչպես Տուրյուսի աբբայարանը, չունի այն շինությունների խստամբեր ու զանգվածային թիկնեղությունը, կլոր ու լայն կամարակապ առաստաղը, սառցային մերկությունը և փառահեղ պարզությունը, որոնց հիմնականը կլոր կամարն է: Սա ձվաձև-սրածայր⁶⁹ կամարի հոյակապ, թեթև, բազմաձև, խիտ, ցցունքները փշաքաղած, նորափթիթ արտագրանքը չէ, ինչպես Բուրժի մայր եկեղեցին է: Անկարելի է այս տաճարը դասել մուսլի, խորհրդավոր, ցած և կիսակլոր կամարից ասես ճխլված եկեղեցիների հին ընտանիքում, որոնք, առաստաղից բացի, եզրիպտական են, բոլորն էլ առեղծվածային, քրմական ու սիմվոլիկ, իրենց զարդարանքների մեջ՝ ավելի ծանրաբեռնված շեղանկյունիներով ու զիգզագներով, քան թե ծաղիկներով, ավելի ծաղիկներով, քան կենդանիներով, ավելի կենդանիներով, քան մարդկանցով, ավելի շուտ՝ եպիսկոպոսի, քան թե ճարտարապետի կերտվածք են, արվեստի առաջին վերափոխությունը՝ ամբողջովին

68. Histoire gallicane, liv. II, pèroche 3, fo 130, p. 1. (Մնթ. Հեղինակի):

69. Գոթական ճարտարապետության համար հատկանշական ogive կամարը թորոս թորամանյանը թողնում է նույնությունով, երբեմն էլ «ձվաձև» թարգմանելով, այլ Հեղինակներ՝ «նետաձև»: Մենք գերապասեցինք տալ երկու բառով՝ «ձվաձև-սրածայր»: Մնթ. թարգմանչի:

Համակված աստվածիշխանական ու ռազմական ուժով, որ արժատ է նետում Բյուզանդական կայսրության մեջ և վերջանում «Լյւհիմ Նվաճողի»⁷⁰ օրոք: Անկարելի է մեր մայր տաճարը դասել այն բարձր, օղային, ապակի պատկերներով ու քանդակներով Հարուստ, սուր ձևերով, խրոխտ կեցվածքով օժտված, Համայնական ու քաղաքացիական (որպես քաղաքական սիմվոլներ), ազատ, քմածին ու անսանձ եկեղեցիների մյուս ընտանիքում, որ արվեստի հրկրորդ փոխակերպությունն է, այլևս ոչ թե առեղծվածային, անխախտ ու քրմական, այլ գեղարվեստական է, առաջադիմական ու ժողովրդային և սկիզբ է առնում խաչակրությունների վերադարձից հետո, վերջանում Լյուդովիկոս XI-ի օրոք: Փարիզի Աստվածամոր տաճարը զուտ ռոմանական ծագում չունի, ինչպես առաջիններն ունեն, ոչ էլ զուտ արարական ծագում, ինչպես երկրորդ խմբի եկեղեցիները:

Սա անցման շրջանի կոթող է: Սաքսոնացի ճարտարապետը նոր էր վերջացրել եկեղեցու նալի առաջին սյունների Հաստատելը, երբ խաչակրություններից բերված սրածայր կամարը եկավ որպես նվաճող բազմիու ռոմանական լայն խոյակների վրա, որոնք կյոր կամարակապը պետք է պահեին միայն: Դրանից հետո ձվաձև-սրածայր կամարը տիրակալ դառնալով կառուցեց եկեղեցու մնացած մասը: Թեև իր Հանդես գալու ժամանակ անփորձ ու անհամարձակ, այնուամենայնիվ, ծավալվում է, լայնանում, բայց և զուսպ մնում, ու դեռ չի համարձակվում վեր սլանալ խիստ սրածայր գմբեթներով ու նույնքան սրակամար առաստաղներով: Կարծես թե նա դեռ զգում է ռոմանական ոճի ծանր սյունների Հարեանությունը: Իմիջիայլոց, ռոմանական ոճից գոթականին անցնելու շրջանի այդ գինքերը ուսումնասիրություն համար նույնքան արժեքավոր են, որքան մաքուր ոճերի նմուշները: Դրանք արտահայտում են արվեստի մի

70. Նորմանդիայի դուքս, արչավեց Անդլիա, Հաղթեց Հարուդ արքային և դրից մի նոր դինաստիայի հիմքը՝ Հենվելով խիստ ռազմական և հիերարխիական սզնվականության վրա (1027-1087):

նրբություն, որն առանց դրանց կկորչեր: Դա ձվածե-սրածայր կամարի պատվաստն է կլոր կամարի վրա:

Հատկապես Փարիզի Աստվածամոր տաճարը այդ այլատեսակի հետաքրքրական մի նմուշն է: Պատկառելի հուշարձանի ամեն մի կողմը, ամեն մի քարը ոչ միայն Ֆրանսիայի պատմության, այլև գիտության ու արվեստի պատմության մի էջն է: Այստեղ գլխավոր մանրամասնությունները միայն նշելու համար, որպես օրինակ բերենք փոքր Կարմիր դուռը, որ համարյա թե հասնում է տասնհինգերորդ դարի գոթական ոճի նրբություններին, մինչդեռ՝ տաճարի նավի սյուները, իրենց ծավալով ու ծանրությամբ, հասնում են Սեն-ժերմեն-դե-Պրեի կարողինդյան արքայարանին: Կարծես թե այդ դռան և այդ հաստահեղույս սյուների միջև վեց դար կա: Ավագ դռան սիմվոլների մեջ ալքիմիկոսներն անգամ կգտնեն իրենց գիտության բավարար մի համառոտագրություն, որի կատարյալ առեղծվածը Աեն-ժակ-դը-լա-Բուշըյի եկեղեցին էր: Այսպիսով, ռոմանական արքայարանը, ալքիմիական եկեղեցին, գոթական արվեստը, սաքսոնական արվեստը, ծանր, կլոր հաստահեղույս սյուներ, որ հիշեցնում է Գրիգոր VII պապի ժամանակը, ալքիմիական սիմվոլիկան, որով Նիկոլա Ֆլամելը⁷¹ նախերգել է Լյութերին⁷², պապական միասնությունը, հերձվածը, Սեն-ժերմեն-դե-Պրեն, Սեն-ժակ-դը-լա-Բուշըրին, ամեն ինչ հալեցված է, միակցված ու զոդված Աստվածամոր տաճարում: Այս կենտրոնական ու ծնող տաճարը մի տեսակ քիմերա է Փարիզի հին եկեղեցիների մեջ և ունի մեկի գլուխը, մյուսի անդամները, երրորդի գավակը, բոլորից որևէ մի բան:

Կրկնում ենք, այս խառն ոճի կառուցվածքները նվազ հետաքրքրական չեն թե՛ արվեստագետի և թե՛ հնությունների սիրահարի ու պատմաբանի համար: Նրանք զգացնում են, թե ճարտարապետությունն

71. Ֆլամելը (1330-1418), որ Փարիզի համալսարանում երդվյալ գրող է եղել, ըստ պանդուխտների համարվել է կախարհ և ալքիմիկոս:

72. Լյութերը (1483-1546) նույնպես կարծում էր, թե հաճախ սատանա է տեսնում և թանաքամանը շարժում էր Բեհեզգերուդի գլխին:

ինչ չափով նախնական է (նույնն են ասյացուցում նաև կրկնույյան շինությունների հետքերը, եղիպտոսի բուրգերը, հնդկական վիթխարի մեհյանները), քանի որ սրանք ասյացուցում են, թե ճարտարապետության ամենախոշոր կոթողները շատ ավելի քիչ չափով անհատական, քան թե հասարակության դործեր են, ավելի շուտ ժողովուրդների ստեղծագործությունն են աշխատանքի ընթացքում, քան թե հանճարեղ մարդկանց մտքի պոռթկում, այն շտեմարանն են, որ թուլնում է որևէ մի ազգ, այն դիզվածքն են, որ դարերն են ստեղծում, մարդկային հասարակության հաջորդական գոյորշիացումներից մնացած դիրտն են, մի խոսքով՝ տեսակների կազմվելն են: Ժամանակի ամեն մի ծվանք հուշարձանի վրա դնում է իր նստվածքը, ամեն մի ցեղ՝ իր շիրտը, յուրաքանչյուր անհատ բերում է իր քարը: Այդպես են անում ջրաշունները, այդպես են անում մեղուները, այդպես են անում մարդիկ: Ճարտարապետության մեծ սխմուլ Բարեկունն ինքնին փեթակ էր:

Մեծ կոթողները, ինչպես և մեծ լեռները, դարերի աշխատանքի արդյունք են: Երբեմն արվեստը ձևափոխվում է, իսկ դրանք դեռ ավարտված չեն՝ *pendent opera interrupta*⁷³, և անհոտով շարունակվում են ըստ ձևափոխված արվեստի: Նոր արվեստը հուշարձանն ընդունում է այն վիճակում, ինչ կետի նա հասել է, կեղևակալում է նրան, նմանեցնում իրեն, զարգացնում ըստ իր երևակայության և ավարտում, եթե կարողանում է: Այդ գործը կատարվում է անխուփ, առանց ջանքի ու հակազդեցության, ըստ բնական ու հանդարտ օրենքի: Նա պատվաստ է, որ կպչում է, բուսահայտթ, որ շրջան է կատարում, սածիլ, որ բռնում է: Արդարև, նույն հուշարձանի բազմաթիվ բարձրությունների վրա կատարվող բազմաթիվ արվեստների այս հաջորդական զոդումների մեջ կա շատ մեծ հատորների նյութ, երբեմն էլ՝ մարդկության ընդհանուր պատմությունը: Այդ խոշոր զանգվածների մեջ ջնջվում են մարդը, արվեստագետը, անհատը,

73. Ընդհատված գործերը կանգ են առել (Վիրգիլիոս, լատ.):

չի մնում հեղինակի անունը, այնտեղ ամփոփվում ու ի մի է գումարվում մարդկային միտքը: Ժամանակը ճարտարապետն է, ժողովուրդը՝ որմնագիրը:

Այստեղ քննություն առնելով միայն եվրոպական քրիստոնեական ճարտարապետությունը՝ Արևելքի մեծ կառուցվածքների հետաժին քույրը, այդ վիթխարի կազմավորման մեջ կտեսնենք իրար վրա դրված և իրարից որոշակի տարրերովոդ երեք գոտի՝ ռոմանական գոտի⁷⁴, գոթական գոտի, Վերածնությունյան գոտի, որ մենք հաճությամբ կանվանենք հունա-հռոմեական: Ռոմանական շերտը, որ ամենահինն է և ամենախորը, որպես հատկանիշ ունի կլոր կամարը, որը նորից է երևում հունական սյան վրա հենված Վերածնությունյան ժամանակակից ու վերին շերտի մեջ: Սրածայր-ձվածե կամարը գտնվում է երկուսի միջև: Այս երեք շերտերից բացառապես մեկին պատկանող հուշարձանները միանգամայն որոշակի են, միասնական ու լրիվ: Օրինակ՝ Ժյուժինեթի աբբայարանը, Ռեյմսի մայր եկեղեցին, Օւլիանի Սուրբ խաչ տաճարը: Սակայն կրեք գոտիները խառնվում և զուգվում են եզրերից, ինչպես գոյնևրը՝ արևի սպեկտրի մեջ: Դրանից էլ առաջացել են խառն ոճի հուշարձաններ, նրբերանգների և անցման շրջանի կոթողներ: Մեկի ստորին մասը ռոմանական է, միջինը՝ գոթական, վերնամասը՝ հունա-հռոմեական: Այդ նրանից է, որ վեց հարյուր տարի է տեղի դրա շինարարությունը: Այսպիսի նմուշը հազվագյուտ է: Հտամպի դղյակի դիտանոց-աշտարակը դրա մի նմուշն է: Սակայն ավելի հաճախ են հանդիպում երկու կազմավորում ունեցող հուշարձանները: Այգպիսին է Փարիզի Աստվածամոր տաճարը՝ ձվածե-սրակամար մի կառուցվածք, որ իր առաջին հաստահեղույս սյուներով

74. Սա այն է, որ ըստ տեղի, կլիմայի և ցեղի՝ կոչվում է լոմբարդական, սաքսոնական և բյուզանդական: Սրանք չորս քույր-ճարտարապետություններ են և իրար գուգահեռ զարգացած. յուրաքանչյուրն ունի իր մասնավոր հատկանիշը, սակայն բխում է նույն սկզբունքից՝ կլոր կամարից: *Factes non omnibus una,*

Non diversa tamen, qualem, և այլն: («Բոլորն էլ միազեմ չեն, բայց խիստ նման են»): Մեթ. հեղինակի:

մտնում է այն ռոմանական շերտը, ուր մտել են նաև Սեն-Դյունի ավագ դուռը և Սեն-ժերմեն-դե-Պրե եկեղեցու նավը: Այդպիսին է Բոչերվիլի կանոնիկոսյան կիսագոթական ժողովարանի գեղեցիկ սրահը, որտեղ ռոմանական շերտը հասնում է շենքի կեսին: Այդպիսին է Ռուանի մայր եկեղեցին, որ ամբողջովին գոթական կլիներ, եթե իր կենտրոնական սրածայր գմբեթի գագաթնամասը չհասներ Վերածնության շերտին⁷⁵:

Ձմռանանք ասել, որ այս բոլոր նրբերանգներն ու տարբերությունները կատարվում են միայն շենքերի արտաքինի մեջ: Արվեստը միայն մաշկն է փոխում, իսկ քրիստոնեական եկեղեցու բուն կառուցվածքին ձեռք չի տրված, նրա ներքին կմախքը, մասերի տրամաբանական դասավորությունը մնացել է նույնը: Ինչպիսին էլ որ լինի տաճարի քանդակված և ասեղնադրված ծածկույթը, ներքևում, այնուամենայնիվ, գտնում ենք, թեկուզ և սաղմնային, նախնական ձևով, հռոմեական բազիլիկան: Նա մշտնջենապես ծավալվում է գետնի վրա՝ ըստ նույն օրենքի: Անփոփոխ կերպով իրար խաչաձև հատող նույն նավ-թևերն են, որոնցից վերին ճյուղը՝ ավագ խորանի սրբարանը, կլորանալով կազմում է երգեցիկ դասը. միշտ նույն կողմնային թևերն են՝ ներքին թափորների համար, մատուռների համար, մի տեսակ կողմնային զբոսարաններ, որտեղ կենտրոնական նավն դուրս է գալիս սյունարանքներից: Սրանք գծելուց ու հաստատելուց հետո՝ մատուռների, ավագ դռների, զանգակատների և սլաքաձև գմբեթների թիվը փոփոխվում է անհաշիվ կերպով՝ ըստ դարի, ժողովրդի ու արվեստի երևակայության: Պաշտամունքի արարողությունը նախատեսվելուց ու ապահովվելուց հետո ճարտարապետությունն անում է այն, ինչ իրեն լավ է թվում: Արձաններ, ապակեպատկերներ, վարդազարդեր, արաբեսկներ, ժանեկագարդեր, խոյակներ, խորաքանդակներ՝ այս բոլոր հնարանքները զուգորդում

75. Հենց այն գագաթնամասը, որ փայտակերտ էր, կայծակից վառվեց 1823 թվականին: (Մնթ. հեղինակի):

է իրեն հարմար թվացող լողարիթմների համաձայն: Դրանից էլ առաջանում է այդ կոթողների արտաքին սքանչելի բազմազանությունը, որոնց հիմքում այնքան կարգ ու միասնություն կա: Ծառի բունն աներեր է, ճյուղավորումներն են քմահաճ:

II

ՓԱՐԻԶԸ ԹՈՉՈՒՆԻ ԹՈՒՉՔԻՑ

Մենք փորձեցինք ընթերցողի համար վերանորոգել Փարիզի Աստվածամոր այս հրաշագեղ տաճարը: Համառոտակի նշեցինք այն գեղեցկությունների մեծ մասը, որ ուներ նա տասնհինգերորդ դարում և որ այժմ պակասում են նրան, բայց մենք անտես առանք կարեւոր՝ Փարիզի համայնապատկերը, որ այդ դարերում կերեւար նրա աշտարակների բարձունքից:

Արդարև, գունգուկատների հաստ սլատը ուղղահայաց գծով ծակող խափար, պարուրաձև սանդուղքի վրա երկար ժամանակ խարխափելուց հետո, երբ վերջապես մեկ անգամից դուրս էիք գալիս երկու բարձր: օդով ու լույսով հեղեղված հարթակներից մեկը, ինչպիսի՛ գեղեցիկ պատկեր էր բացվում ամեն կողմից ձեր աչքերի առաջ. *sui generis*⁷⁶ մի տեսարան, որի գալափարը հեշտությամբ կարող են կազմել մեր այն ընթերցողները, որոնք բախտ են ունեցել տեսնել գոթական մի քաղաք՝ ամբողջական, լրիվ, միասեռ, որոնցից դեռ մի քաղաք մնացել են՝ Նյուրնբերգը Բավարիայում, Վիտտորիան՝ Իսպանիայում, և կամ թե՛ ավելի փոքր նմուշներ, միայն թե՛ լավ պահպանված, ինչպես Վիտրեն Բրետանյում, Նորդհաուզենը Պրուսիայում:

Երեք հարյուր հիսուն տարի առաջիա Փարիզը, տասնհինգերորդ դարի Փարիզը արդեն հսկայական քաղաք էր: Մենք՝ ժամանակակից

76. Ինքնատիպ, ուրույն (լատ.):

փարիզցիներս ընդհանրապես սխալվում ենք, կարծելով, որ Փարիզի տարածութունը շատ է ավելացել դրանից հետո: Լյուդովիկոս XI-ից հետո Փարիզն աճել է մեկ երրորդից ոչ ավելի: Անկասկած, նա շատ է կոցրել իր գեղեցկութունից, քան թե շահել մեծությամբ:

Ինչպես հայտնի է՝ Փարիզը ծնվել է Միջնաբաղաքի հիմնավորյց կղզու վրա, որը օրորոցի ձև ունի: Այդ կղզու ավազուտ սուրը նրա առաջին սամանագիծն էր, Սենան՝ նրա առաջին խրավանդը: Շատ դարեր Փարիզը մնաց որպես կղզի երկու կամուրջով, մեկը՝ հյուսիսից, մյուսը՝ հարավից, և երկու կամրջագլխով, որոնք միաժամանակ և դարպասներն ու ամրոցներն էին՝ Մեծ Շատյեն աջ ափին և Փոքր Շատյեն՝ ձախ ափին:

Այնուհետև, առաջին դինաստիայի արքաներից սկսած, խիստ նեղվածք զգալով իրեն այդ կղզու մեջ և այլևս չկարողանալով այլ կերպ ծավալվել՝ Փարիզն անցավ ջուրը: Այն ժամանակ թե՛ Մեծ, թե՛ Փոքր Շատյեններից այն կողմ, պարիսպների ու աշտարակների առաջին գոտին սկսեց կտրել դաշտը Սենայի երկու կողմում: Այդ հին շրջապարսպից անցած դարում դեռ մի քանի հետքեր մնացել էին. այսօր միայն հիշատակն է մնացել, տեղ-տեղ էլ՝ ավանդական սնունդները՝ Բոդե կամ Բուզուլայն դարպասը՝ *porta Baguada*: Քիչ-քիչ տների հոսանքը քաղաքի սրտից միշտ դեպի դուրս մղվելով՝ հեղեղում է, կրծում, մաշում ու ջնջում այդ շրջապարիսպը: Ֆլիպ-Օգոստոսը մի նոր ամբարտակ է կառուցել տալիս նրա համար: Նա բանտարկում է Փարիզը խոշոր, հաստ, բարձր ու ամուր աշտարակների շրջագծային շղթայի մեջ: Ավելի քան մեկ դար տները սեղմվում են իրար, կուտակվում իրար վրա, բարձրացնում իրենց մակարդակն այդ ավազանում, ինչպես ջուրը ջրամբարի մեջ: Նրանք սկսում են նաև խորանալ, հարկ-հարկի վրա են դնում, իրար վրա բարձրանում, ժայթքում են վեր, ինչպես ամեն մի ճնշված հեղուկ, և ահա որը որ կարողանար իր գլուխը հարևաններից վեր բարձրացնել, նա էլ մի քիչ շունչ կբաշեր: Փողոցը ավելի ու ավելի էր խորանում ու

նեղանում, ամեն մի հրապարակ կուտակվում էր շենքերով ու անհետանում: Վերջապես տները դուրս են ցատկում Ֆիլիպ-Օգոստոսի պարսպից և զվարթագին ցրվում դաշտում՝ անկանոն ու ծուռ ու շիտակ, ինչպես խույս տված կալանավորներ: Այդտեղ նրանք տեղավորվում են հանգստավետ, դաշտից այգիներ են կտրում իրենց համար, շունչ են քաշում:

1367 թվականից սկսած՝ քաղաքն այնքան է հորդում դեպի արվարձանները, որ հարկ է զգացվում մի նոր պարսպի, մանավանդ՝ գետի աջափնյա կողմից: Եվ Կառլոս V-ը կառուցել է տալիս դա: Սակայն Փարիզի պես քաղաքը անընդհատ աճում է, և այդպիսի ոստանները միայն դառնում են մայրաքաղաք: Դրանք ձագարներ են, ուր հոսելու են գալիս որևէ մի երկրի աշխարհագրական, քաղաքական, բարոյական ու մտավոր վտակները, մի ժողովրդի բոլոր բնական հակումները, դրանք քաղաքակրթության ջրհորներ և այսպես ասած՝ նաև կոյուղիներ են, որտեղ առևտուրը, արդյունաբերությունը, միտքը, ժողովուրդը, այն ամենը, ինչ հյուսվորվում է, ինչ կյանք է, ինչ որ ազգի հոգին է, դրվում է և կուտակվում անընդհատ, կաթիլ-կաթիլ, դար առ դար: Եվ ահա Կառլոս V-ի պարիսպն ունեցավ նույն ճակատագիրը, ինչ որ Ֆիլիպ-Օգոստոսի պարիսպը: Տասնհինգերորդ դարի վերջից ոտք դրին նրա մյուս կողմը, անցան, իսկ արվարձաններն ավելի հեռու վազեցին: Տասնվեցերորդ դարում թվում է, թե այդ պարիսպը նահանջում է աչքի առջևից, ավելի ու ավելի է խորանում հին քաղաքի մեջ, այնքան որ՝ մի նոր քաղաք է արագությունը թանձրանում դրսում: Այսպիսով, տասնհինգերորդ դարից սկսած, քանի որ այդտեղ էլ կանգ պիտի առնենք, Փարիզն արդեն մաշել էր պարիսպների երեք համակենտրոն շրջանակները, որոնք, ժյուլիեն կարգուրացի ժամանակ, այսպես ասած՝ սաղմնավորվում էին Մեծ և Փոքր Շատյենների մեջ: Հզոր քաղաքը իրար հսկից տրաքացրել էր իր երեք պարսպադուռները, ինչպես երեսան, որ մեծանալով՝ պատռում է անցած տարվա հագուստները: Լյուդովիկոս XI-ի օրոք տների այդ

ծովի միջից տեղ-տեղ վեր էին ցցվում հին պարիսպներից մնացած ավերվող աշտարակների մի քանի խմբեր, ինչպես բլուրների գագաթները հեղեղման ժամանակ, որպես հին Փարիզի արշիպելագներ՝ սուզված նոր Փարիզի մեջ:

Այդ օրվանից հետո Փարիզը դարձյալ կերպարանափոխվել է, դժբախտաբար, մեր աչքերի համար, սակայն նա հալթահարել-անցել է մի շրջապարիսպ ևս՝ Լյուդովիկոս XV-ինը, ցեխից ու թփից շինված այն ողորմելի պարիսպը, որ արժանի էր իրեն կառուցող թագավորին, արժանի էր այն բանաստեղծին, որ երգել է դա.

*Le mur murant Paris rend Paris murmurant*⁷⁷.

Տասնհինգերորդ դարում Փարիզը ղեռ բաժանված էր բոլորովին որոշակի ու անջատ-անջատ երեք քաղաքի, և յուրաքանչյուրն ուներ իր կերպարանքը, իր հատուկ նշանակութունը, բարբերը, սովորույթները, իր մենաշնորհներն ու պատմութունը. դրանք էին՝ Միջնաքաղաքը (Միտե), Համալսարանն ու Քաղաքը: Միջնաքաղաքը, որ գրավում էր ամբողջ կղզին, ամենահինն էր, ամենափոքրը և մյուս երկուսի մայրը, և նրանց միջև էլ սեղմված (թող մեզ ներվի համեմատութունը), ինչպես փոքրիկ պառավ կինը երկու բարեկազմ, գեղեցիկ աղջիկների միջև: Համալսարանը գրավում էր Սենայի ձախ ափը՝ Տուրնելից սկսած, մինչև Նելի աշտարակը, կետեր, որոնք այսօրվա Փարիզում համապատասխանում են՝ մեկը Գինու շուկային, մյուսը՝ Փողերանոցին: Նրա պարիսպը աղեղնաձև և բավական լայն կտրում էր այն դաշտը, որտեղ ժյուլիենը շինել էր իր բաղանիքները: Սուրբ ժընևիևի սարն այդտեղ շրջափակված էր: Պարիսպների այդ աղեղի գագաթնակետը Պապական դարպասն էր, այսինքն՝ մոտավորապես Պանթեոնի այժմյան տեղը: Բուն Քաղաքը, որ Փարիզի երեք հատվածներից ամենամեծն էր, փռված էր աջ ափին: Նրա առափնյա գիծը, որ հաճախակի ընդհատվում կամ կտրատվում էր բազմաթիվ

77. Գեղեցիկ բառախաղ է. «Փարիզը պատող պարիսպը Փարիզը դարձնում է մրթմրթան» (Ֆր.):

կետերում, անցնում էր Սենայի երկայնքով՝ Բիյի աշտարակից մինչև Բուա աշտարակը, այսինքն՝ այն կետից, որտեղ Հիմա Առատություն Շտեմարանն է, մինչև այն կետը, որտեղ Հիմա Տյուրիլրին է: Այս չորս կետերը, որտեղ Սինան կտրում էր մայրաքաղաքի շրջապարիսպը՝ Տուրնելն ու Նելի աշտարակը թողնելով ձախում, Բիյի և Բուա աշտարակներն աջ ափի վրա, կոչվում էին գերազանցապես **Փարիզի չորս աշտարակները**: Քաղաքն ավելի խոր էր մտնում դաշտերի մեջ, քան Համալսարանը: Քաղաքի պարսպի (Կառլոս V-ի) գագաթնակետը գտնվում էր Սեն-Դընի և Սեն-Մարտեն դարպասների մոտ, որոնց տեղը փոխված է:

Ինչպես քիչ առաջ ասացինք, Փարիզի այս երեք բաժանումներից յուրաքանչյուրը ինքնին մի քաղաք էր, սակայն խիստ յուրահատուկ, որպեսզի կարողանար լրիվ լինել, այնպիսի քաղաք, որ չէր կարող ապրել առանց մյուս երկուսի: Դրա համար էլ ամեն մեկն ուներ իր հատուկ տեսքը: Միջնաքաղաքում շատ էին եկեղեցիները, Քաղաքում՝ պալատները, Համալսարանում՝ ուսումնական հաստատությունները: Հին Փարիզի երկրորդական ինքնատիպություններն ու ուղեծնայություն կամայականությունները այստեղ չհիշատակելով՝ ընդհանուր գծերով ասենք, նկատի ունենալով միայն ամբողջություններն ու միակերպությունները կամուսյալ իրավասությունների այդ քառսի մեջ, որ կյզին ենթակա էր եպիսկոպոսին, աջ ափը՝ առևտրականների ավագին, ձախ ափը՝ ռեկտորին, իսկ բոլորը միասին՝ Փարիզի պրեռյին, որը արքայական և ոչ թե քաղաքապետական պաշտոնյա էր: Միջնաքաղաքումն էր Աստիածամոր տաճարը, Քաղաքում՝ Լուվրը և Քաղաքապետարանը, Համալսարանում՝ Սորբոնը: Քաղաքում էր գտնվում Կենտրոնական շուկան, Միջնաքաղաքում՝ Գլխավոր Հիվանդանոցը (Օթել-Դիյո), Համալսարանում՝ Պրե-օ-Կլերկը⁷⁸: Այն հանցանքները, որ կատարում էին ճեմարանականները ձախ ափում, իրենց Պրե-օ-Կլերկում,

78. Սեն-ժերմեն-դե-Պրե արքայարանի առջև տարածված դաշտը, Հին Փարիզի ուսանողության դրսսանքի և մենամարտության ժամադրությունների վայրը:

քննվում էին կղզում՝ Արդարադատութեան պալատում, և պատժվում էին աջ ափում՝ Մոնֆոկոնում, հի՞ծ միայն ոեկտորը Համալսարանն ուժեղ, իսկ արքային թույլ Համարելով չմիջամտեր, որովհետև ճեմարանականներն իրենց մոտ կախովելու առանձնաշնորհումն ունեին:

(Անցողակի նշենք, որ առանձնաշնորհումների մեծ մասը, իսկ դրանց միջ կային սրանից շատ ավելի կարևորները, կորզել էին թագավորներից՝ ապստամբութունների և խռովութունների միջոցով: Այդպես է եղել անհիշատակելի ժամանակներից սկսած, թագավորը զիջում է միայն այն դեպքում, երբ ժողովուրդն արգեն խլում է: Կա մի հին շնորհադիր, որ միամտորին խոսում է հպատակների հավատարմության մասին.— *Civibus fidelitas in rages, quae tamen aliquoties seditionibus interrupta, multa peperit privilegia*⁷⁹.)

Տասնհինգերորդ դարում Սենա գետը հինգ կղզի էր ողողում Փարիզի պարսպից ներս. Լուվրի կղզին, որտեղ այն ժամանակ ծառեր կային, իսկ այժմ միմիայն փայտ կա, կովերի փոխադրման կղզին և Աստվածամոր տաճարի կղզին, երկուսն էլ ամայի, բացի մի խարխուլ տնակից, երկուսն էլ եպիսկոպոսի ավատ (տասնյոթերորդ դարում այս երկու կղզիներն իրար են միացել, շենքերով ծածկվել, և այժմ Սեն-Լուի ենք անվանում), վերջապես Միջնաբաղաբի կղզին և նրա ծայրի մոտ էլ Կովերի լաստավարի կղզյակը, որ հետագայում ծածկվել-ջնջվել է նոր կամուրջի հողապատնեշի տակ: Միջնաբաղաբն այդ ժամանակ ուներ հինգ կամուրջ, երեքը աջ կողմից՝ Աստվածամոր տաճարի և Լուճայափոխների քարաշեն կամուրջները և Զրադայպանների փայտե կամուրջը, երկուսն էլ ձախ ափից՝ քարաշեն Փոքր և փայտաշեն Սուրբ Միքայելի կամուրջները, բոլորն էլ՝ տներով ծածկված: Համալսարանն ուներ վեց դարպաս, որ կառուցել էր Ֆիլիպ-Օդոստոսը. դրանք էին՝ Տուրնիկից սկսած Սեն-Վիկտոր, Բորգել,

79. Քաղաքացիների հավատարմությունը կառավարողներին, որ սակայն հազվադեպ ընդհատվում է ապստամբություններով, ավելացրել է նրանց մենաշնորհները (լատ.):

Պապական, Սեն-ժակ, Սեն-Միշել և Սեն-ժերմեն դարպասները: Բուն Քաղաքն ուներ վից դարպաս, որ կառուցել էր Կառլոս V-ը, այն է՝ Բիլի աշտարակից սկսած Սենտ-Անտուան, Տամպլ, Սեն-Մարտեն, Սեն-Դրնի, Մոնմարտր և Սենտ-Օնորե դարպասները: Բոլոր դարպասներն էլ ամուր էին, նմանապես և գեղեցիկ, մի հանգամանք, որ չի նվազեցնում ամրութիւնը: Լայն ու խոր խրամանդը, որ վարարումների ժամանակ լցվում էր Սենայի արտահոսող ջրով, ողողում էր պարիսպների ստորոտը Փարիզի շուրջը: Գիշերը փակում էին դարպասները, քաղաքի երկու ծայրակետերում գետը պատնեշում էին երկաթե հաստ շղթաներով, և Փարիզը հանգիստ քնում էր:

Թռչունի թռիչքից դիտելիս՝ այս երեք ոստանները՝ Միջնաքաղաքը, Համալսարանն ու Քաղաքը՝ յուրաքանչյուրն առանձին ներկայացնում էին տարօրինակորեն խճճված փողոցների մանվածապատ մի հյուսվածք: Սակայն առաջին հայացքից էլ ակներև էր դառնում, որ քաղաքի երեք հատվածները միասնական մի մարմին են կազմում: Անմիջապես տեսնում էիր երկու երկար, զուգահեռ փողոց՝ առանց ընդհատվելու ու թեքվելու, համարյա թե ուղղագիծ, որ միասին կտրում էին երեք քաղաքներն էլ՝ մի ծայրից մյուսը, հարավից հյուսիս, Սենա գետի նկատմամբ ուղղահայաց: Դրանք կապում էին երեք քաղաքները, իրար միախառնում, մեկնումեկի բնակիչներին անընդհատ թափում, տեղափոխում մյուսի պարիսպներից ներս և երեքը դարձնում մեկ: Այդ փողոցներից առաջինը Սեն-ժակ դարպասից հասնում էր Սեն-Մարտեն դարպասին և կոչվում էր՝ Համալսարանում Սեն-ժակ փողոց, Միջնաքաղաքում՝ Հրեական փողոց, Քաղաքում՝ Սեն-Մարտեն փողոց, և երկու անգամ կտրում էր գետը՝ Փոքր կամուրջ և Աստվածամոր տաճարի կամուրջ անուններով: Երկրորդը, որ լա-Հարպ էր կոչվում ձախ ափում, Տակառագործների փողոց՝ կղզում, Սեն-Դրնի փողոց՝ աջ ափում, Սուրբ Միքայելի կամուրջ՝ Սենա գետի մի թևի վրա, Լուսնայափոխների փողոց՝ մյուս թևում, Համալսարանի Սուրբ Միքայելի դարպասից հասնում էր Քաղաքի

Սեն-Դընի դարպասին: Տարբեր անուններ ունենալով հանդերձ՝ միշտ նույն երկու փողոցներն էին դրանք, սակայն մայր փողոցներ, ծնող փողոցներ, Փարիզի երկու զարկերակները, եռյակ քաղաքի մյուս բոլոր երկները սկիզբ էին առնում նրանցից կամ միախառնվում էին նրանց:

Անկախ այս երկու գլխավոր, տրամագծային փողոցներից, որոնք Փարիզը ծայրեծայր կտրում էին լայնքից, ընդհանուր էին ամբողջ մայրաքաղաքին, Քաղաքն ու Համալսարանն ունեին իրենց մասնավոր պողոտան, որ ընթանում էր երկայնքով, Սենային զուգահեռ և իր ճանապարհի վրա ուղիղ անկյունով կտրում էր երկու արտերիսալ փողոցները: Այսպիսով, Քաղաքում ուղիղ գծով, Սենտ-Անտուան դարպասից իջնում էին մինչև Սենտ-Օնորե դարպասը. Համալսարանում Սեն-Վեկտոր դարպասից Սեն-Փերմեն դարպասը: Այս երկու մայրուղիները խաչաձևվելով առաջին երկուսի հետ, կազմում էին այն հենքը, որի վրա հանգչում էր Փարիզի փողոցների՝ ամեն ուղղությամբ հանգուցված ու սեղմված դեղալյան ցանցը⁸⁰: Այս ցանցի անըմբռնելի գծագիրն ուշադրությամբ քննելիս, բացի դրանից, կարելի էր նկատել լայնացած խուրճերի նմանող լայն փողոցների երկու փունջ, մեկը Համալսարանում, մյուսը՝ Քաղաքում, որ կամուրջներից բացվելով՝ ձգվում էին դեպի դարպասները:

Երկրաչափական այդ հատակագծից որոշ բան դեռ այսօր էլ գոյություն ունի:

Իսկ Հիմա մենք կջանանք ցույց տալ, թե այդ ամբողջությունը ինչպե՞ս էր երևում Աստվածամոր տաճարի աշտարակների բարձունքից 1482 թվականին:

Ենչակտուր վիճակում տաճարի զագաթին հասած դիտողի աչքի առաջ փռվում էր նախ տանիքների, ծխնելույզների, փողոցների, կամուրջների, հրապարակների, սրածայր գմբեթների ու զանգակատների

80. Դեղալ, Հին Հունաստանի ճարտարպետ, կառուցել է Կրետի լաբիրինթոսը, որտեղ բանտարկվեց Մինոտավրոսը. ապա և ինքը՝ Մինոսի հրամանով: Դեղալյան, նշանակում է՝ անելանելի, խճճված լաբիրինթոս:

լացուցիչ պատկերը: Մեկ անգամից նրա Հայացքը պարուրում էին իվի սրբատաշ եռանկյունակը, սրածայր տանիքը, պատերի մկյուններից առկախ աշտարականման սենյակը, տասնմեկերորդ արի քարե բուրգը, տասնհինգերորդ դարի թերթաքարե կոթողը, լոր ու մերկ դիտանոց-աշտարակը, եկեղեցու քառակուսի ու կարեա սսեղնագործված աշտարակը, և՛ մեծը, և՛ փոքրը, և՛ զանգվածաինը, և՛ օգեղենը: Հայացքը երկար ժամանակ կորչում էր այդ լարիինթոսի ամեն մի խորխորատում, որտեղ չկար ոչ մի այնպիսի բան, որ չունենար իր ինքնատիպությունը, իր իրավացիությունը, իր հանարը և գեղեցկությունը, չկար ոչ մի բան, որ թխած չլիներ արվեսուից՝ սկսած նկարագարող ու քանդակագրվագ ճակատ, ատաղձն արոաքին ամրակներ, ցածլիկ դուռ և առկախ՝ առաջ գցված հարկեր ունցող ամենափոքր սնից, մինչև արքայական Լուվրը, որ այդ դաաշըջանում աշտարակների սյունաշար ուներ: Բայց այն գլխավոր անգվածները, որ առանձնապես ակներև էին դառնում, երբ աչքն կսում էր վարժվել շինությունների այդ քառսին, հետևյալներն են.

Ամենից առաջ Միջնաքաղաքը: Միջնաքաղաքի կղզին, ինչպես սսում է Սովալը, որի խառնիխուռն բառակույտի մեջ երբեմն պաաահում են գեղեցիկ դարձվածքներ, Միջնաքաղաքի կղզին ասես փղմի մեջ խրված և հոսանքից Սենայի մեջտեղը քշված մի խոշոր ավ լինի: Քիչ առաջ մենք բացատրեցինք, որ տասնհինգերորդ արում այդ նավը հինգ կամուրջով կապված էր գետի երկու ափին: Նավի այս ձևը նկատել են նաև զինանշան հորինողները, որովնեակ դրանից է առաջացել, և ոչ թե նորմանների պաշարումից, ըստ նավների և Պասքիեի, այն նավը, որ պատկերված է Փարիզ քաղաքի ին զինանշանի վրա: Վերծանել կարողացող մարդու համար հերայիկան՝ զինանշանների գիտությունը, հանրահաշիվ է, առանձին մի եզու: Միջին դարի սմբողջ երկրորդ կեսի պատմությունը գրված է ինանշանների մեջ, ինչպես որ առաջին կեսի պատմությունը տմանական եկեղեցիների սիմվոլիզմի մեջ: Սրանք ֆեոդալիզմի հիտուգլիֆներն են՝ աստվածապետություն հիերոգլիֆներից հետո եկած:

Այսպիսով, ամենից առաջ աչքի էր զարնում Միջնաքաղաքը՝ նա-
 վի հետնամասն ուղղած դեպի արևելք, իսկ նավացուուկը՝ դեպի
 արևմուտք: Դառնալով դեպի նավացուուկը՝ առջևդ կբացվեր հին
 տանիքների մի անհամար նախիր, որոնց վրա լայնորեն կլորանում էր
 Սենտ-Շապելի դասը պսակող կապարապատ տանիքը՝ նման իր աշ-
 տարակ-տնակը շալակած փղի գավակին, միայն թե այստեղ այդ աշ-
 տարակը ամենահամարձակ, ամենաբաց, ամենից ավելի փայտաքան-
 դակ ու ցանցկեն սրածայր գմբեթն էր, որի ժանեկանման կոնի միջից
 կարելի էր երկինքը տեսնել: Տիրամոր տաճարի առաջ, ամենամոտիկ
 կողմից, գավթի դիմաց, բացվում էին երեք փողոց՝ հին տներով
 շրջապատված գեղեցիկ հրապարակի վրա: Այդ հրապարակի հարա-
 վային կողմում կուացել էին Օթել-Դիյո հիվանդանոցի կնճռոտած ու
 ծոռված ճակատը և կարծես թե բշտիկներով ու կոծիծներով ծածկ-
 ված տանիքը: Ապա աջից ու ձախից, արևելքից ու արևմուտքից,
 Միջնաքաղաքի այնուամենայնիվ այդքան նեղ շրջապարիսպի միջից
 բարձրանում էին նրա քսանմեկ եկեղեցիների զանգակատները. այդ
 եկեղեցիները տարբեր դարաշրջանների էին և ամեն մեծուխյան ու
 ձևի՝ սկսած Սեն-Դյուի-դյու-Պա՝ carcer Glaucini ռոմանական ոճի
 ցածրիկ ու որդնակեր զանգակատնակից մինչև Սեն-Պիեր-օ-Բյոֆի և
 Սեն-Լանդրիի նուրբ, ասեղնաձև զանգակատները: Աստվածամոր
 տաճարի ետևը, հյուսիսային կողմում, փռվում էր վանքը իր գոթա-
 կան վերնասրահներով. հարավում եպիսկոպոսի կիսառոմանական
 ոճի ապարանքը, արևելքում՝ Տերենի ամայի ծայրամասը: Տների այդ
 կուտակման մեջ, քարակերտ, բայց և լուսանցիկ, բարձր խույրերի մի-
 ջից, որ այն ժամանակ պսակում էին նույնիսկ պալատների տանիքի
 ամենավերին պատուհանները, աչքը զանազանում էր նաև այն ապա-
 րանքը, որ կառուս VI-ի օրոք քաղաքը նվիրել էր ժյուվենալ դե
 Գ՝Յուրսենին⁸¹. քիչ ավելի հեռու՝ Պալյու շուկայի ձյութապատ

81. Փարիզի դատավոր, վաճառականության պետ, պետական գործիչ (1360-
 1431): Որդիները նույնպես եղել են պետական գործիչներ:

կրպակները. ավելի հեռու՝ Սեն-ժերմեն-լը-Վիյոյի նոր սրբարանը, որ երկարաձգվեց 1458 թվին, Ֆե փողոցի մի ծայրի հաշվին, իսկ դրանից այն կողմ՝ բազմամարդ մի քառուղի, փողոցի անկյունում կանգնեցված անիվ-պատժարան, Ֆիլիպ-Օգոստոսի սալահատակի մի գեղեցիկ կտոր՝ ձիերի ոտքերի համար հատկապես գծափորված մի սքանչելի սալարկ, որ տասնվեցերորդ դարում այնքան անհաջող կերպով փոխարինվեց Լիգայի սալահատակ կոչված ողորմելի խճապատամբ. ապա մի ամայի հետնաբակ՝ մեջը պարուրածև սանդուղքի թափանցիկ աշտարակ, ինչպես շինում էին տասնհինգերորդ դարում, և որի մի օրինակը դեռ կարելի է տեսնել այժմ Բուրգոնե փողոցում: Եվ, վերջապես, Սենտ-Շապելի աջ կողմը, դեպի արևմուտք, Արդարագատության պալատը աշտարակների իր խումբն էր բազմեցրել ջրի ափին: Միջնաքաղաքի արևմտյան ծայրը ծածկող արքայական այգիների բարձրաբերձ ծառերը քողարկում էին Կովերի փոխադրման կղզյակը: Ինչ վերաբերում է գետին, ապա Աստվածամոր տաճարի աշտարակների բարձունքից նա չէր երևում Միջնաքաղաքի երկու կողմից էլ. Սենա գետն անհետանում էր կամուրջների տակ, կամուրջներն էլ՝ տների տակ:

Եվ երբ հայացքը սահելով այդ կամուրջներից, որոնց վրա շինված տների տանիքները, ջրի գոյուղիներից վաղաժամ մզվելով, կանաչին էին տալիս, անցներ դեպի ձախ, դեպի Համալսարան, ապա ամենից առաջ ուշադրութունը կգրավեր աշտարակների մի հաստ ու ցածրիկ խուրձ՝ Փոքր Շատլեն, որի բերանաբաց գավիթը լափում էր Փոքր կամուրջի ծայրը: Իսկ երբ ձեր հայացքը ափից սահելով արևելքից հասներ արևմուտք, Տուրնելից մինչև Նել աշտարակը, ապա կընդգրկեր քանդակազարդ հեծաններ, գույնզգույն ապակիներ ունեցող և հարկ հարկի վրա կախված տների մի երկար շարք, քաղաքացիների տների քիվային եռանկյունակների մի անվախճան գիզգազ, որ ստեպ-ստեպ կտրվում էր որևէ փողոցի բերանով, երբեմն էլ՝ որևէ խոշոր, քարաշեն ապարանքի ճակատով կամ անկյունով. իր բակերով

ու պարտեղներով, թևերով ու մասնաշենքերով անկաշկանդ բազմել էր այդ ապարանքը նեղ, իրար սեղմված տների այդ կույտի մեջ, ինչպես մեծ իշխանը գեղջուկների շրջապատում:

Գետափին կար հինգ թե վեց այդպիսի ապարանք, սկսած Լոռենի տնից, որը, Բերնարդինյան վանքի հետ, բաժանում էր Տուրնեյի հարևան խոշոր, շրջափակված տարածությունը, մինչև Նել ապարանքը, որի գլխավոր աշտարակը սահմանագծում էր Փարիզը, և որի սրածայր տանիքները տարվա մեջ երեք ամիս իրենց սև եռանկյունիներով աղեղնաձև ծածկում էին մայր մտնող արևի հրաշեկ սկավառակը:

Ասեմք նաև, որ Փարիզի այդ ափը շատ ավելի քիչ առևտրական կետեր ուներ, քան թե մյուսը: Ծնամարանականներն ավելի էին ալմկում այնտեղ ու խոնվում, քան թե արհեստավորները, և ճիշտն ասած՝ գետափ էլ չկար այնտեղ, բացի Սուրբ Միքայելի կամուրջից մինչև Նելի աշտարակն ընկած տարածությունը, Սենի մնացած գետափը մերթ մերկ ավազուտ էր, ինչպես Բերնարդինյան վանքից այն կողմ, մերթ էլ՝ տների կուտակում, որոնց ոտքերը ջրի մեջ էին, ինչպես երկու կամուրջների միջև էր:

Այդտեղ տիրում էր լվացարարուհիների ժխորը, աղմկում էին նրանք, շաղակրատում ու երգում առավոտից մինչ երեկո, գետի ամբողջ երկայնքին և չմփչմփոցով թակում սպիտակեղենը, ինչպես մեր օրերում են անում: Դա Փարիզի սակավ ուրախ վայրերից չէր:

Համալսարանը միակտուր զանգված էր երևում աչքին, մի ծայրից մյուսը ասես միասեռ ու կուռ ամբողջություն լիներ: Նրա հազարավոր խիտ, սրանկյուն, իրար փակչած տանիքները, որ համարյա նույն երկրաչափական տարրերից էին կազմված, վերևից դիտելիս նույն նյութի բյուրեղների տպավորություն էին գործում: Փողոցների քմահաճ խորխորատները տների այդ զանգվածը չէին կտրատում խիտ անհամաչափ մասերի: Քառասուներկու կուլեջները սփռված էին բավական հավասար հեռավորությամբ և ամեն տեղ էին: Այդ

գեղեցիկ շենքերի բազմապիսի ու զվարճալի կատարները նույն ոճի արգասիքն էին, ինչպես այն պարզ տանիքներինը, որոնցից վեր էին բարձրանում, և վերջին հաշվով՝ երկրաչափական նույն ձևի քառակուսի կամ խորանարդ աստիճան էին: Այդպիսով, նրանք բարդացնում էին ամբողջականը՝ առանց խախտելու, լրացնում էին՝ առանց ծանրաբեռնելու: Երկրաչափությունն ինքնին ներդաշնակություն է:

Մի քանի գեղեցիկ ապարանքներ սքանչելի ցցվածքներ էին գծում ձախ ափի նկարչագեղ ձեղնահարկերի վերևում, այս ու այն կետում. դրանցից են՝ Նևերի վանատունը, Հռոմի վանատունը, Ռեյմսի վանատունը, որ հիմա չկան, Կլյունի ապարանքը, որ դեռ գոյություն ունի ի միսիթարություն արվեստագետի, սակայն որի աշտարակը մի քանի տարի առաջ այնքան անմտորեն պսակագերծեցին: Կլյունի մոտ կար գեղեցիկ, կլոր կամարներով զարդարված մի հռոմեական պալատ՝ Հուլիանոս կայսեր ջերմուկ-ապարանքը: Կային նաև բազմաթիվ արքայարաններ ավելի զուսպ գեղեցկությամբ, ավելի խստաշունչ մեծություններ, քան ապարանքները, սակայն ոչ նվազ գեղեցիկ, ոչ նվազ մեծ: Ամենից ավելի ուշադրություն էին գրավում՝ Բերնարդինների արքայարանն իր երեք զանգակատներով, սուրբ Ժնևիկի արքայարանը, որի տակավին կանգուն մնացած քառակուսի աշտարակը ափսոսալ է տալիս մնացածը. Սորբոնը՝ կեսը կոլեջ, կեսը վանք, որից այժմ մնացել է այնքան զմայլելի մի նավը. Մաթյուրեյան միաբանության քառակող, գեղեցիկ մենաստանը, նրա հարևան սուրբ Բենեդիկտոսի մենաստանը, որի պատերից ներս ժամանակ ունեցան հապճեպորեն թատերասրահ շինել այս գրքի յոթերորդ և ութերորդ հրատարակությունների միջև ընկած շրջանում. կորդելիերներին արքայարանը իր երեք, կիպ-կիպ շինված հսկայական քիվային եռանկյունակներով, սուրբ Օգոստինոսի միաբանության մենաստանը, որի շնորհագեղ, սուր-սլացիկ գմբեթը, Նելի աշտարակից հետո, երկրորդ ժանեկազարդն էր Փարիզի արևմտյան կողմի այդ մասում: Կոլեջները, որ ըստ էության միջակա օղակ են մենաստանի ու աշխար-

հի միջև, միջակա տեղ էլ գրավում էին ապարանքների ու արքայա-
րանների հոյակապ շարքի մեջ՝ նրբագեղությամբ տոգորված խստու-
թյամբ, պալատներից նվազ թեթև քանդակներով, վանքերից նվազ
լուրջ ճարտարապետությամբ: Դժբախտաբար, ոչինչ էլ մնացել այս
հուշարձաններից, որոնց մեջ գոթական արվեստը այնքան ճշգրտու-
թյամբ սահմանագծում էր հարստությունն ու տնտեսումը: Եկեղեցի-
ները (բազմաթիվ ու փարթամագեղ էին դրանք Համալսարանում և
եկել ու իրարից քիչ հեռու շարվել էին ճարտարապետության բոլոր
դարաշրջաններից՝ սկսած Սեն-ժյուլիենի կլոր կամարակապից, մինչև
Սեն-Սևերենի սրածայր ձվաձև կամարակապը) տիրապետում էին
ամեն ինչի վրա, և որպես մի նոր ներդաշնակություն ներդաշնակու-
թյունների այդ զանգվածում, դրանք ստեպ-ստեպ ճեղքում էին քի-
վային եռանկյունակների բազմապատիկ բեկ-բեկ գիծը սուր-սլացիկ
գծազարդ գմբեթներով, կամարաբաց զանգակատներով, բարակ,
ասեղանման կատարներով, որոնց գիծը նույնպես ոչ այլ ինչ է, եթե
ոչ տանիքների սուր անկյան սքանչելի չափազանցումը:

Համալսարանի թաղամասը բլրոտ էր: Սուրբ Ժընեկի բլուրը նրա
հարավ-արևելյան կողմում մի հսկայական ուռույց էր կազմում, և
Աստվածամոր տաճարի գագաթից արժեք նայել այդ բազմաթիվ նեղ
ու ծուռուժուռ փողոցներին (այժմ՝ Լատինական թաղամասը), տների
այդ ողկույզներին, որոնք այդ բարձունքի կատարից փռվելով ամեն
ուղղությամբ՝ անկարգ, ու գրեթե գահավեժ վազում են նրա լանջերն
ի վայր՝ մինչև գետափ, և թվում է, թե շատերն ընկնում են, շատերն էլ
նորից վեր են մագլցում, իսկ բոլորն էլ անխտիր կառչել են միմյանցից:
Հազարավոր սև կետերի մշտական մի հոսանք, որ խաչաձևվում էր
փողոցների սալահատակի վրա, խողտացնում էր աչքերը. ժողովուրդն
էր դա՛ դիտված այդ բարձրությունից ու այդ հեռավորությունից:

Եվ վերջապես, այդ անհամար տանիքների, սրածայր վերասլաց
գմբեթների, ելևէջող շենքերի մեջ, որոնք տարօրինակ ձևով ծալում,
կծկում ու բեկբեկում էին Համալսարանի սահմանագիծը, մեջընդմեջ

երևում էր մամոտտ պատի մի հաստ կտոր, կլոր, ղանգվածային աշտարակ, քաղաքային ատամնավոր դարպաս՝ ամրոցի նմանությամբ. Ֆիրիպ-Օգոստոսի շրջափակն էր դա: Դրանից այն կողմ կանաչին էին տալիս մարգագետինները, սլանում ճանապարհները, որոնց երկայնքին դեռ ձգվում էին արվարձանի սակավաթիվ տները, որոնք ինչքան հեռանում, այնքան հատուկենտ էին դառնում:

Այդ արվարձաններից մի քանիսը կարևոր նշանակություն ունեին, ամենից առաջ, Տուրնելից սկսած, գալիս էր Սեն-Վիկտոր արվարձանը՝ Բիևրի վրա շինված իր միակամար կամուրջով, իր արբայարանով, որտեղ կարելի էր կարգալ Լյուդովիկոս Գիրուկի սապանագիրը՝ *epitaphium Ludovic Grossi*, իր եկեղեցիով, որի ութանկյուն սրածայր գմբեթը շրջապատված էր տասնմեկերորդ դարի չորս փոքրիկ զանգակաաներով (էտամպում կարելի է տեսնել մի այդպիսին, որ դեռ չեն քանդել): Ասլա՝ Սեն-Մարսո ավանը, որն արդեն երեք եկեղեցի և մի վանք ուներ. այնուհետև, ձախ կողմ թողնելով Գորլենների ջրաղացն ու նրա չորս սպիտակ պատերը՝ երևում էր Սեն-Ժակ արվարձանը և նրա քառուղու քանդակադրվագ գեղեցիկ խաչը. Սեն-Ժակ-դյու-Հո-Պա եկեղեցին, որ այն ժամանակ գոթական էր, սրածայր ու սքանչելի. Սեն-Մագլուար եկեղեցին՝ տասնչորսերորդ դարի գեղեցիկ նավով, որ Նապոլեոնը դարձրեց խոտի պահեստ. Նոտր-Դամ-դե-Շան եկեղեցին, որտեղ բյուզանդական խճանկարներ կային: Վերջապես, բաց դաշտում թողնելով Շարտրյոգների վանքը՝ Արդարագատություն պալատին ժամանակակից այդ չքեղ հուշարձանը իր մասնատված փոքր պարտեզներով և Վովերի վատահամբավ ավերակներով, հայացքն արևմտյան կողմում ընկնում էր Սեն-Ժերմեն-դե-Պրեի ռոմանական երեք ասեղանման սուր գմբեթների վրա: Սեն-Ժերմեն ավանը, որ արդեն մի մեծ համայնք էր, տասնհինգ թե քսան փողոց ուներ. Սեն-Սյուլպիսի սրածայր զանգակատունը նշում էր ավանի անկյուններից մեկը: Հենց դրա մոտ էլ գտնվում էր Սեն-Ժերմենի տոնավաճառի քառակող շրջափակը.

որտեղ հիմա շուկան է. այնուհետև արբայարանի պատժարանը՝ մի գեղեցիկ, կլոր աշտարակ, վրան արճիճն մի կոն. կղմինդրի գործարանը ավելի հեռու էր, ինչպես նաև Փռի փողոցը, որ տանում էր դեպի համայնքի փուռը, իսկ բլրակի վրա էլ հողմադասը, ապա հիվանդանոցը՝ մեկուսի ու վատանուն մի տնակ: Սակայն ուշադրութունը գրավող և հայացքը երկար ժամանակ իր վրա գամողը հենց արբայարանն էր: Կասկածից դուրս է, որ թե՛ որպես եկիղիցի և թե՛ որպես իշխանական դաստակերտ պատկառելի տեսք ունեցող այդ վանքը, արբայական պալատը, որտեղ թեկուզ մի գիշեր անցկացնելը պատիվ էին համարում Փարիզի եպիսկոպոսները, նրա ճաշասրահը, որին ճարտարապետը սովել էր մայր եկեղեցու պատկեր, գեղեցկութունն ու փառահեղ վարդադարդ, սուրբ կույսի այդ չքեղ մատուռը, հոյակապ ննջարանը, ընդարձակ այգիները, իջնող կափույրը, բարձրացվող կամրջակը, ատամնավոր շրջապարիսպը, որ կտրատում էր մերձակա մարգագետինների կանաչ զանգվածը, այդ բակերը, որտեղ շողշողում էին գորականների գինքն ու զրահը հոգևորականների ոսկեճամուկ թիկնոցների միջից, և այդ ամենը խմբված ու դասավորված կտրականար և բարձրաբերձ, սրածայր, ոռոմանական ոճի հրեք գմբեթների շուրջը, որոնք պատշաճորեն նստել էին գոթական վերնասրահներին, — սքանչելի պատկեր էր կազմում հորիզոնի վրա:

Երբ վերջապես Համալսարանը երկար դիտելուց հետո շրջվում էիր դեպի աջ ափը, դեպի բուն Քաղաքը, տեսարանն անմիջապես փոխվում էր: Արդարև, Քաղաքը, որ Համալսարանից թեև շատ ավելի մեծ էր, այնուամենայնիվ, միակերպ չէր: Առաջին իսկ հայացքից երևում էր, որ նա բաժանված է չափազանց որոշակի բազմաթիվ զանգվածների: Նախևառաջ քաղաքի արևելյան այն մասում, որը հիմա էլ իր անունը ստանում է այն ճահճից (մառն), ուր Կամյուլոթենը⁸² քաջեց ու տիղմի մեջ նստեցրեց Կեսարին, իրար

82. Գալլիերի (գաղիացիների) պարագլուխ, որ պաշտպանեց Փարիզը Հուլիոս Կեսարի զորքերի դեմ և սպանվեց ճակատամարտում (Ք. ա. 52 թ.):

վրա էին կուտակվել պալատները և հասնում էին գետի ջրին: Համարյա թե իրար կից չորս ապարանք՝ Ժուհն, Սանսը, Բարբոն և Թագուհու օթեանը, անդրադարձնում էին Սենա գետի մեջ նրբակերտ աշտարակներով կտրատված իրենց թերթաքարե տանիքները: Այս չորս դաստակերտները լցնում էին ամբողջ տարածությունը Նոնենդիեր փողոցից մինչև Սելեստենների աբբայարանը, որի ասեղանման սրածայր գմբեթը նրբագեղորեն բարձրացնում, ավելի ցայտուն էր դարձնում քիվային եռանկյունակների և ատամնաձև հրակնատների նրանց գիծը: Այդ փառաշուք ապարանքների առաջ, գետի վրա կռացած մի քանի կանաչավուն, խղճուկ տնակներ չէին խանգարում տեսնել նրանց ճակատների գեղեցիկ անկյունները, քարաշրջանակ լայն, քառակուսի պատուհանները, ձվաձև-սրակամար գավիթներն իրենց վայրի արձաններով, միշտ որոշակի կտրվող նրանց պատերի աշխուժացնող զգվածքները և ճարտարապետութան այն բոլոր չքնաղագեղ անակնկալները, որոնց պատճառով թվում է, թե գոթական արվեստը ամեն մի հուշարձանի մեջ նոր ձևով է կազմում իր զուգակցումները: Այդ պալատների ետևը, բոլոր ուղղություններով, ձգվում էր, երբեմն միջնաբերդի պես միաձույլ, ցանկապատված ու ատամնավոր, երբեմն էլ՝ մենաստանի նման խոշոր ծառերով քողարկված այն զարմանահրաշ Սեն-Պոլ դաստակերտի հսկայական ու բազմաձև շրջապարիսպը, որտեղ Ֆրանսիայի թագավորը կարող էր փառահեղ հարմարություններով հյուրընկալել գահաժառանգի և Բուրգունդիայի դքսի նման բարձրատոհմիկ քսաներկու իշխան՝ նրանց ծառանների ու շքախմբի հետ, բացի մեծ ավատներից ու կայսրից, երբ նրանք գալիս էին Փարիզը տեսնելու, ինչպես նաև առյուծներից, որոնք իրենց առանձին ապարանքն ունեին այդ արքայական պալատում: Այստեղ նկատենք, որ տոհմիկ իշխանի օթեանը այն ժամանակ բաղկացած էր լինում առնվազն տասնմեկ սրահից՝ սկսած շքասենյակից մինչև աղոթասենյակը, չխոսելով արդեն վերնասրահների, բաղանիքների ու քրտնարանների և այլ «ավելորդ տեղերի»

մասին, որոնցով օժտված էր ամեն մի օթեկան, չխոսելով արքայի յուրաքանչյուր հյուրի առանձին այգիների մասին, չխոսելով խոհանոցների, մառանների, սեղանահարդարման պարագանների սենյակների և օթեկանի ընդհանուր ճաշարահանների, ինչպես նաև հետնաբակների մասին, որտեղ քսաներկու գլխավոր պատրաստարաններ կային՝ հացի փոխից սկսած մինչև մատովակարանը. չխոսելով արդեն բազմաթիվ խաղարանների՝ ճոկանախաղի, գնդախաղի, ձիով օղակախաղի մասին, չխոսելով հավանոցների, ձկնարանների, գազանանոցների, ախոռների, գոմերի, գրադարանների, զինանոցների և զինաձուլարանների մասին: Ահա թե ինչ էր այն ժամանակ արքայական պալատը, Լուվրը կամ Սեն-Պոլը. քաղաք՝ քաղաքի մեջ:

Այն աշտարակից, որտեղ մենք կանգնած ենք, Սեն-Պոլ ապարանքը, համարյա թե կես ծածկված այն չորս խոշոր օթեկաններով, որոնց մասին քիչ առաջ խոսեցիք, դարձյալ խիստ պատկառելի և սքանչելի տեսք ունեն: Այդտեղ որոշակի երևում էին այն երևք ապարանքները, որ Կառլոս V-ը միացրել էր իր սլալատին, թեև գույնզգույն պատուհաններով և փոքր սյուներով զարդարված երկար ճեմելիները դրանք հմտորեն զոդել էին հիմնական շենքին. Պրտի-Մյուսի ապարանքը ժանեկազարդ ճաղերով, որ գեղեցիկ երիզում էին նրա տանիքը, արբա Սեն-Մորի ապարանքը, որ դղյակ-ամրոցի էր նման իր հաստ աշտարակով, հրակնատներով, հրածերպերով, երկաթե դիտանոցներով, սաքսոնյան լայն դարպասի վրա էլ արքայի տոհմանշանը՝ բարձրացվող-իջեցվող կամուրջի գույգ խոռոչների միջև, և ասլա էտամպի կոմսի ապարանքը, որի դիտանոցը, գապաթը փլած, կյոր էր երևում ձեզ, թեև աքլորի կատարի պես բեկ-բեկ էր: Այս ու այնտեղ տեսնում էիք երեք-չորս բազմամյա կաղնիներ, որոնց խիտ սաղարթները ասես վիթխարի, անտերև ծաղկակաղամբ լինեին, ձկնավազանների վճիտ, լույսով ու ստվերով ծփուն ջրերի մեջ խայտում էին կարապները, ապա բազմաթիվ բակեր, որոնց գեղանկար ծայրերն էին երևում. Առյուծների ապարանքը՝ սաքսոնյան կարճ հաստահեղույս սյուների

վրա հենված սրածայր ցածր կամարներով, երկաթե ճաղերով ու մշտական մոնչոցով, իսկ այդ բոլորի վրա Ավետման տաճարի թեփուկավոր, վերասյաց գմբեթը: Ձախ կողմում Փարիզի պրեռյի դաստակերտը՝ շրջապատված չորս նրբաքանդակ, ակոսավոր, ոչ խոշոր աշտարակներով, կենտրոնում, խորքում՝ Սեն-Պոլի բուն ապարանքը՝ իր բազմապատկված ճակատներով և Կառլոս V-ի ժամանակից սկսած հաջորդական ճոխացումներով՝ խառն ոճի հարակից կառուցվածքներով, որոնցով երկու դարից ի վեր ծանրաբեռնել էր նրան ճարտարապետների երեակայությունը՝ նրա մատուռների սրածայր գագաթներով, երկարաձիգ ճեմելիների քիվերի եռանկյունակներով, բոլոր քամիներից պտտվող տանիքային հաղարավոր հողմադրոշներով և երկու կից աշտարակներով, որոնց կոնաձև տանիքը, իր հիմքի մոտ ատամնաձև, նման էր սրածայր և եզրերը վեր բարձրացրած գլխարկի:

Շարունակելով բարձրանալ դեպի հեռու, գետնի վրա ձգվող պալատների այդ ամֆիթատրոնի հարկերը և անցնելով Քաղաքի տանիքների մեջ փորված խոր հեղեղատը, որ Սենտ-Անտուան փողոցի ուղեգիծն էր նշում, աչքը հասնում էր Անդուլեմի դաստակերտին՝ բազում դարերի ընթացքում կառուցված մի ընդարձակ շինության, որտեղ կային հարակից կառուցումներ, բոլորովին նոր ու խիստ ճեմակ, որոնք ամբողջությանը միաձուլվում էին այնպես, ինչպես կարմիր կարկատանը կապույտ բաճկոնակին: Բայց և այնպես, ժամանակակից պալատի չափազանց սուր և բարձր տանիքը, որ կարծես փառաբանում էր քանդակագարդ ջրհորդաններով և ծածկված արճիճեթերթերով, որոնց վրայով հազարավոր ֆանտաստիկ արաբեսկների ձևով զալարվում-փաթաթվում էին ոսկեգօծ պղնձե կայծկլտացող զարդադրվազներ, այնքան զարմանալի ձևով ոսկեդրվագված այդ տանիքը նաղեկազեղ վեր էր սլանում հին շենքի թուխ ավերակների միջից, որի հաստ ու հին աշտարակները ծերանալուց տակառների պես տոգած, խարխուլթյունից իրենց վրա կռացած և վերից վար ճեղքվելով՝ նման էին կոճակներն արձակած գեր մարդկանց փորին:

Դրա ետևը բարձրանում էր Տուրնել պալատի ասեղի նման սուր գմբեթների անտառը: Աշխարհում ոչ մի տեղ, ո՛չ Շամրորում⁸³, ո՛չ Ալհամբրայում⁸⁴, մարդկային աչքն ավելի մոգական, ավելի օդային, ավելի կախարդական բան չէր կարող տեսնել, քան սյուցիկ գմբեթների, դանգակատնակների, ծխնելույզների, հողմադրողների, պարուրածե և պտուտակածե սանդուղքների, կարծես թե կտրող գործիքով հատկապես ծակծկված լաստերների, տաղավարների, իլիկածե փոքր աշտարակների, կամ ինչպես այն ժամանակ էին անվանում, տուրնելների, այդ բարձրաբուն անտառը, բոլորն էլ տարբեր ձևի, տարբեր բարձրության ու դիրքի: Թվում էր, թե դա մի վիվիսարի քարակերտ շախմատատախտակ էր:

Տուրնելի աջ կողմում տեսնում էիք իրար մեջ մտած, թանաքի նման սև, հսկայական աշտարակների մի փունջ, որոնք, այսպես ասած, իրար էին կապված բոլորածե խրավանդով. նրա դիտանոց-աշտարակը շատ ավելի հրակնատներ, քան թե լուսամուտի բացվածքներ ուներ, բարձրացող-իջնող կամուրջը միշտ տնկված, վանդակադուռը միշտ փակված էր. Բաստիլյն էր դա: Աշտարակների ատամնաշարի արանքներից ցցված այդ սև, կոուցանման բաները, որ դուք հեռվից ջրհորգանների տեղ կընդունելիք, խնդանոթներն էին:

Նրանց հրետագնդի սպառնալիքի տակ, ահեղ շինության ստորոտում, երևում է ահա իր երկու աշտարակների միջև պատասպարած Սենտ-Անտուանի դարպասը:

Տուրնելից այն կողմ, մինչև Կառլոս V-ի պարիսպը, կանաչի ու ծաղիկների փարթամ հաջորդումներով փռվում էր արքայական արտերի ու զրոսայգիների թավշանման գորգը, որոնց մեջ կարելի էր ճանաչել, իր ծառերի ու ծառուղիների լաբիրինթոսից, հռչակավոր Դեդալուս սյգին, որ Լյուդոլֆիլիս XI-ը նվիրել էր Կուակտիեին:

83. Շամրորի գլխակը գտնվում է Ֆրանսիայում՝ Լուար և Շեր գեպարտամենտում, Օպիանի մոտակայքում:

84. Մավր արքաների կառուցած նշանավոր պալատ (XIII դ.) Իսպանիայի Գրենադա քաղաքում:

Այս բժշկի աստղագիտարանը բարձրանում էր լաբիրինթոսի վրա որպես Հաստ, մեկուսի սյուն, վրան էլ մի տնակ՝ որպես խոյակ: Այդ լաբորատորիայում գարհուրելի աստղագուշակություններ են արվել:

Այդտեղ Հիմա Արքայական հրապարակն է:

Ինչպես ասացինք՝ պալատների թաղամասը, որի մասին ջանացինք մի փոքր գաղափար տալ ընթերցողին, թեև միայն ամենանշանավոր շինությունները թվելով, ծածկում էր այն անկյունը, որ Կառլոս V-ի պարիսպը կազմում է Սենա գետի հետ՝ արևելքում: Քաղաքի կենտրոնը գրավել էր բնակչության տների կույտը: Արդարև, այդտեղ էլ դուրս էին գալիս Միջնաբաղաքի երեք կամուրջները աջ ափի վրա, իսկ կամուրջները նախ տներ, հետո միայն պալատներ շինելու խթան են հանդիսանում: Քաղաքացիների տների այդ կույտը, որոնք իրար էին սեղմված, ինչպես բջիջները փեթակի մեջ, ուներ իր գեղեցկությունը: Որևէ մայրսքաղաքի տանիքները, ինչպես ծովի ալիքները, մեծափառ պատկեր են ներկայացնում:

Նախևառաջ խաչաձևվող ու խճճված փողոցները այդ տների գանգավածի մեջ հարյուրավոր զվարճալի գծագրություններ էին առաջացնում: Շուկաների շուրջը հարյուրավոր ճաճանչներ նետած աստղեր էին կազմվել: Սեն-Դընի և Սեն-Մարտեն փողոցներն իրենց անհամար ճյուղավորություններով իրար կողքից բարձրանում էին գույգ Հաստ ծառերի պես, որոնք խառնում էին իրենց ճյուղերը, ապա ծուռումուռ գծերով Գաջագործների, Ապակեգործների, Ջուլհակների և այլ փողոցները օձագալար ձգվում էին բոլորի միջով: Կային նաև քիվերին կառուցված եռանկյունակների այդ քարեղեն ծովի ծփանքից վեր բարձրացող գեղեցիկ շինություններ: Ահա այդպիսի գեղեցիկ շենքերից էր Շատլեն, Լուժայափոխների կամրջագլխի մոտ, որի ետևում երևում է, թե ինչպես է Սենան փրփրում Ջրաղացպանների կամուրջի տակի ջրաղացների անիվներից, սակայն դա ոչ թե հոռոմեական Շատլեն էր, ինչպես ժյուլիեն Կարգուրացու օրոք, այլ տասներեքերորդ դարի Փեոդալական մի աշտարակ՝ շինված այնպիսի

կարծր քարից, որ երեք ժամվա ընթացքում բրիչը բռունցքի հաստու-
թյունից ավելի չէր տաշում: Դրանցից էր Սեն-ժակ-դը-լա-Բուշրրի
եկեղեցու քառակուսի, փարթամ զանգակատունը՝ քանդակազարդե-
րից բոլորովին բթացած իր անկյուններով և արդեն սքանչելի, թեև
տասնհինգերորդ դարում դեռ ավարտված չէր (սլակասում էին հատ-
կապես այն չորս հրեշները, որ դեռ այսօր էլ տնկված նրա տանիքի
անկյուններին՝ կարծես թե չորս սֆինքսներ լինեն, որոնք նոր Փարի-
զին առաջարկում են լուծել հին Փարիզի հանելուկը: Քանդակագործ
Թոն կանգնեցրեց դրանք 1526 թվականին միայն և իր աշխատանքի
համար ստացավ քսան ֆրանկ): Դրանցից էին Սյունագարդ տունը՝
ճակատը Գրեի հրապարակի վրա, որի մասին մեր ընթերցողին ար-
դեն որոշ գաղափար տվել ենք մենք, ապա Սեն-ժերվե եկեղեցին, որ
հետագայում փչացրել են «նուրբ ճաշակի» ավագ դուռ ավելացնե-
լով, Սեն-Մերի եկեղեցին, որի հին ձվաձև-սրածայր կամարները հա-
մարյա թե դեռ կլոր կամարներ էին. Սեն-ժան եկեղեցին, որի վերձիգ
սքանչելի սուր գմբեթը առածի կարգ էր անցել: Կային նաև ուրիշ
քսան հուշարձաններ, որոնք չէին քաշվում իրենց սքանչելիքները
թաքցնել այդ սև, նեղ ու խոր փողոցների քառասների մեջ: Ավելացրեք
նաև քարե քանդակազարդ խաչերը, որոնք շատ ավելի, քան մշտա-
կան կախաղանները, լցնում էին փողոցների հատման կետերը, այնու-
հետև Անմեղների գերեզմանոցը, որի ճարտարապետական շրջապա-
րիսպը նշմարվում էր հեռվում, տանիքներից վեր: Այդտեղ էր և Շու-
կայի անվապատի սյունը, որի գագաթը երևում էր Կոստնրի փողոցի
երկու ծխնելույզի արանքից, ապա Տրահուարի խաչ եկեղեցու ելարա-
նը բազմությունից սև երևացող նույն քառուղու վրա. Հացահատիկի
չուկայի շրջանակաձև շարված խղճուկ տները. Ծիլիպ-Օգոստոսի հին
պարսպի բեկորները, որ նկատվում էին այս ու այն տեղ, տների մեջ
կորած, բաղեղներից կարծես թե փորփրված աշտարակներ էին, քանդ-
ված դարպասներ, խարխլված ու այլանդակված պատերի բեկորներ:
Այդտեղ էր նաև գետափնյա փողոցը՝ իր հազարավոր կրպակներով և

արևածոր սպանդանոցներով: Ավելացրեք նաև նավերով ծածկված Սենա գետը խոտի նավամատույցից մինչև Եպիսկոպոսական դատարանը, և դուք աղոտ պատկերացում կկազմեք այն մասին, թե ինչ էր ներկայացնում Քաղաքի կենտրոնական տրապեցիան 1482 թվականին:

Պալատների ու տների այդ երկու թաղամասերի կողքին Քաղաքի ընդհանուր պատկերի երրորդ տարրը արքայարանների երկար գոտին էր, որ երիզում էր նրա գրեթե ամբողջ շրջագիծը՝ արևելքից արևմուտք և Փարիզը շրջապատող ամրուկյունների շղթայի ետևում կազմում էր փանքիռի ու մատուռների երկրորդ, ներքին գոտին: Օրինակ՝ ուղիղ Տուրնելի զբոսայգու մոտ, Սենտ-Անտուան փողոցի և Տամպլի Նոր փողոցի միջև գտնվում էր Սենտ-Կատրին վանքն իր ընդարձակ մշակվող հողերով, որոնք Փարիզի պարսպով էին միայն սահմանագծվում: Տամպլի Հին և Նոր փողոցների միջև գտնվում էր Տամպլ վանքը՝ աշտարակների մի չարագուշակ փունջ, բարձր, մեկուսի ու ցցված ատամնավոր, ընդարձակ շրջապարսպի մեջտեղը: Տամպլի Նոր փողոցի և Սեն-Մարտեն փողոցի միջև՝ Սեն-Մարտենի արքայարանը. նրա պարտեզների մեջ գտնվում էր ամրացված, հոյակապ տաճարը, որի աշտարակների գոտին և զանգակատների խուլյրը գեղեցկության ու հզորության կողմից զիջում էին միայն Սեն-ժերմեն-դե-Պրեին: Սեն-Մարտեն և Սեն-Դրնի փողոցների միջև ձգված էր երրորդության վանքի շրջափակը: Եվ վերջապես, Սեն-Դրնի և Մոնտորգոյլ փողոցների միջև Դստերք աստծո մենաստանը: Դրա մոտ էլ նշմարվում էին Հրաշքների բակի փտած տանիքները և քարերը թափված շուրջանակի պատվարը: Դա միակ պիղծ օղակն էր, որ խառնվել էր վանքերի այդ բարեպաշտական շղթային:

Եվ վերջապես, չորրորդ առանձնախումբը, որ որոշակի գծագրվում էր և՛ ավի տանիքների կուլտի մեջ և գրավում էր պարսպի արևմտյան անկյունն ու գետափն ի վայր, Լուվրի ստորոտում սեղմված պալատների ու ապարանքների մի նոր հանգույց էր: Ֆիլիպ-Օգոստոսի հինավուրց Լուվրը, այդ վիթխարի շենքը, որի մեծ

աշտարակը իր շուրջն էր համախմբում ուրիշ քսաներեք ամրակուռ աշտարակներ, չհաշված փոքր աշտարակները, հեռվից թվում էր, թե մտցված է Ալանսոնի ապարանքի և Բուրբոնյան Փոքր պալատի գոթական տանիքների մեջ: Աշտարակներից կազմված այդ հիդրան, Փարիզի հսկա պահապանը՝ իր մշտապես տնկած քսանչորս գլուխներով, իր հրեշավոր, կապարապատ կամ թերթաքարե, թեփուկանման գավակներով, բոլորն էլ մետաղե փայլերով շողշողուն, ապշեցուցիչ գեղեցկութամբ ավարտում էր Քաղաքի շրջագիծն արևմտյան կողմից:

Այսպես էր ահա քաղաքացիական տների այն հսկայական կույտը, որ հռոմեացիներն անվանում էին *insula* (կղզի), աջ ու ձախ կողմերից եզերված պալատների զույգ շարքերով, որոնց մեկի պսակը Լուվրն էր, մյուսինը՝ Տուրնելը, հյուսիսից ելիզված արքայարանների և մշակված փակ տարածությունների երկար գոտիով. այդ բոլորը նայողին թվում էր որպես միաձուլ ու գոյված ամբողջություն: Այդ հազարավոր շենքերի վրա, որոնց կղմինդրով ու թերթաքարերով ծածկված տանիքները հատում էին իրար՝ չափազանց արտառոց շղթաներ գծելով, բարձրանում էին աջ ափի քառասունչորս եկեղեցիների նախշված, ծալ-ծալ և գծազարդ զանգակատները: Բյուրավոր փողոցներ կտրատում էին տների այդ զանգվածը: Որպես սահմանագիծ մի կողմից ձգվում էին քառակուսի աշտարակներով ընդմիջված բարձր պարիսպները (Համալսարանի պարիսպների աշտարակները կլոր էին), մյուս կողմից՝ կամուրջներով կտրատված և բազմաթիվ նավերով ակոսված Սենը: Ահա տասնհինգերորդ դարի Քաղաքը:

Պարիսպներից այն կողմ, դարպասների մոտ իրար էին սեղմվել մի քանի արվարձան, սակայն ոչ այնքան բազմաթիվ և ավելի ցրված, քան Համալսարանի արվարձանները: Դրանք էին՝ Բաստիլյի ետևում, կրուա-Տորենի տարօրինակ արձանների և Սենտ-Անտուան-դե-Շանի արքայարանի կամարանեցուկների շուրջը ծվարած մի քսան հյուղակները. ապա արտերի մեջ կորած Պոպենկուերը, գլինհտուն-ճաշարանների

ուրախ գյուղ Լակուերտիյը, Սեն-Լորան ավանը՝ իր եկեղեցիով, որի զանգակատունը հեռվից կարծես ավելանում էր Սեն-Մարտեն քաղաքային դարպասի սրածայր աշտարակներին. Սեն-Դընի արվարձանը Սեն-Լանդրի ընդարձակ շրջապարիսպով: Մոնմարտրի դարպասից այն կողմ՝ սպիտակ պարիսպներով շրջապատված Գրանժ-Բատըլիերն էր. դրա ետևը՝ Մոնմարտյը՝ կավճային իր լանջերով, որ այդ ժամանակ նույնքան եկեղեցի ուներ, որքան հողմաղաց, և որ այժմ պահել է միայն հողմաղացները, որովհետև հասարակությունը հիմա միայն մարմնական հաց է պահանջում: Վերջապես, Լուվրից այն կողմ երևում էր մարգագետինների մեջ ձգված Սենտ-Օնորե արվարձանը, որ այն ժամանակ արդեն խիստ ընդարձակ էր, ապա կանաչին էր տալիս Փոքր-Բրեստայնը և սփռվում էր ինճկոսների շուկան, որի կենտրոնում էր գտնվում այն զարհուրելի կյոր հնոցը, ուր նետում ու եռացնում էին դրամանենդներին: Լա-Կուերտիյի և Սեն-Լորանի միջև, ամառի դաշտավայրի մեջ պղպած մի բարձունքի կատարին, ձեր աչքն արդեն նկատել էր ինչ-որ շենք, որ հեռվից նման էր մերկացած հիմքի վրա դեռ կանգուն այունաչարի ավերակի: Դա ոչ որևէ Պարթենոն էր, ոչ էլ Ոլլիմպյան Զևսի տաճար. Մոնֆոկոնն էր դա:

Այժմ, եթե այսքան շենքերի թվարկումը, որքան էլ որ մենք ցանկացանք համառոտակի անել դա, ընթերցողի մեջ չի ճապողացրել հին Փարիզի ընդհանուր պատկերը մեր նկարագրության ընթացքում, մենք կամփոփենք դա մի քանի բառով: Կենտրոնում էր Միջնաքաղաքի (Միտեի) կղզին, որ իր ձևով նման էր մի հսկայական կրիայի և կղմինդրապատ, ուստի և՛ թեփուկավոր ու թաթի նմանող իր կամուրջները դուրս էր հանում տանիքների գորշ պատյանի տակից: Զախ ափի վրա էր Համալսարանի միակտուր, սեղմ, խիստ տրապեցիան. աջ ափին՝ Քաղաքի ընդարձակ կիսաշրջանակը՝ այգիներով ու հուշարձաններով ավելի հարուստ: Երեք մասերն էլ՝ Միջնաքաղաքը, Համալսարանն ու Քաղաքը, անհամար փողոցներով կտրտված էին: Ծայրից ծայր կտրում-անցնում էր Սենան՝ «ստնտու Սենան»,

ինչպես Հայր Դյու-Բրյոնն է ասում, կզգինհրով, կամուրջնհրով ու նստիքով խցկված: Շուրջըտուրը անծայրածիր դաշտավայր, կտրտված ամեն տեսակ մշակվող հողերով, սփռված գեղեցիկ դյուղերով, ձախ ավին Իսին, Վանվրը, Վոժիրարը, Մանուսթը, Փանտիյին՝ իր կյոռ ու քառակուսի զույգ աշտարակնհրով և այլն, աջ կողմում՝ մի քսան այլ գյուղեր, Կոնֆլանից սկսած մինչև Վիլ-լ'Էվեկը: Հորիզոնը եզերում էր բոլորակաձև դասավորված բլուրների շերտը՝ ավազանի պատվարի նման: Վերջապես, հեռվում, արևելքում, Վենսանը իր քառանկյունի յոթ աշտարակնհրով, Հարավում՝ Բրեստը՝ իր փոքր սրածայր աշտարակնհրով, հյուսիսում՝ Սեն-Դրնին՝ իր ասեղանման սրածայր գմբեթով, արևմուտքում՝ Սեն-Կլուն՝ իր դիտանոց-աշտարակով: Ահա այն Փարիզը, որ Աստվածամոր տաճարի աշտարակների կատարից տեսնում էին 1482 թվականին ապրող ազոսպիները:

Բայց և այնպես, այս քաղաքի մասին է Վոլտերն ասել, որ Լյուդովիկոս XIV-ից առաջ նա միայն չորս գեղեցիկ հուշարձան ուներ՝ Սորբոնի գմբեթը, Վալ-դը-Գրասը, նոր Լուվրը, չորրորդն էլ լավ չեմ հիշում, թերևս՝ Լյուքսեմբուրգը: Բարեբախտաբար, Վոլտերը, այնուամենայնիվ, գրել է «Կանդիդը» և, այնուամենայնիվ, մարդկության երկար շարանում իրար հաջորդած բոլոր մարդկանց մեջ նա ամենից ավելի դիվային ծիծաղ ունեցող անձնավորությունն է: Իմիջիայլոց, սա ապացուցում է, որ կարող ես լինել հանճարեղ մարդ և ոչինչ չհասկանալ այն արվեստից, որի գիտակը չես: Ձէ՞ որ Մոլիերը կարծում էր, թե մեծ պատիվ է անում Ռաֆայելին և Միքել-Անջելոյին՝ նրանց անվանելով իրենց դարի այդ Մինյադները⁸⁵:

Բայց վերադառնանք Փարիզին և տասնհինգերորդ դարին:

Այդ ժամանակ Փարիզը ո՛չ միայն գեղեցիկ քաղաք էր, այլև միատարր քաղաք, միջնադարի ճարտարապետությունից ու պատմությունից արդյունք, քարեղին ժամանակագրություն: Դա երկու շերտից՝ ռոմանական և գոթական շերտերից կազմված քաղաք էր, քանի որ

85. Նիկոլա և Պիեր Մինյար եղբայրները XVII դ. նկարիչներ են:

Հոռմեական շերտը վաղուց էր ջնջված, բացի Հուլիանոս կայսեր ջերմուկ-ապարանքից, որտեղ նա դեռ դուրս էր պոռթկում միջին դարերի հաստ կեղևից: Ինչ վերաբերում է կելտական շերտին, ապա դրա նմուշն անգամ չէին գտնում ջրհորներ փորելիս:

Հիսուսն տարի հետո, երբ Վերածնությունը եկավ այդ խստաշունչ, բայց և այնքան բազմազան միասնությունը խառնելու իր երևակայությունների ու սիստեմների շլացուցիչ շքեղությունը, Հոռմեական կլոր կամարների, Հունական սյուների և գոթական իջեցված կամարակապի իր շոայությունները, այնքան ջերմաշունչ ու իդեալական իր քանդակագործությունը, արարեսկների ու ականթատերեկների իր առանձնակի նախասիրությունը, Լյութերին ժամանակակից իր ճարտարապետական հեթանոսությունը, — Փարիզը թերևս ավելի գեղեցկացավ, սակայն աչքին ու մտքին նվազ ներդաշնակ դարձավ: Սակայն փոռահեղություն այդ պահը կարճ տևեց, վերածնությունն անկողմնակալ չեղավ, նա չբավարարվեց շինելով, այլև ուզեց տապալել, թեև ճիշտ է, որ տևող կարիք ուներ: Հետևաբար, գոթական Փարիզը միայն մի պահ կատարյալ եղավ: Հազիվ էին ավարտել Սեն-ժակ-դը-Լա-Բուշըրի կառուցումը, երբ սկսեցին քանդել հին Լուվրը:

Այնուհետև մեծ քաղաքը շարունակեց օրավուր կերպարանափոխվել: Իր հերթին ջնջվեց գոթական Փարիզը, որի տակ ջնջվել էր ռոմանական Փարիզը: Բայց կարո՞ղ ենք ասել, թե ինչպիսի Փարիզը փոխարինեց նրան:

Կա Կատրին դը Մեդիչիի Փարիզը՝ Տյուրիլրիում⁸⁶։ Կա Հենրի II-ի Փարիզը՝ Քաղաքապետարանամ, երկուսն էլ դեռ նուրբ ճաշակի

86. Մենք վրդովմունքով ու կսկիծով տեսանք, որ մտածում էին մեծացնել, վերափոխել, շտկել, այսինքն՝ առավել ավերել այդ սքանչելի պալատը: Մեր ժամանակների ճարտարապետների ձեռքը խիստ ծանր է, որպեսզի դիպչի Վերածնության այդ նրբակերտ շենքին: Այնուամենայնիվ, մենք Հույս ունենք, որ նրանք չեն համարձակվի: Բացի դրանից, Տյուրիլրիի այդ ավերումը հիմա ոչ միայն այնպիսի բռնություն ակտ, որից հարբած վանդալն անգամ կկարմրեր, այլև դավաճանական ակտ կլիներ: Տյուրիլրին տասնվեցերորդ դարի արվեստի գլուխգործոց չէ միայն, այլև տասնիններորդ դարի

չենքիր. կա Հենրի IV-ի Փարիզը՝ Արքայական հրապարակում. աղյուսե ճակատներով, քարե անկյուններով և թերթաքարե տանիքներով եռագույն տներ, կա Լյուդովիկոս XIII-ի Փարիզը Վալ-դը-Գրասում. այդ ճարտարապետության մեջ կա ճիւլված ու կարճահասակ մի բան, կամարակապները նման են զամբյուղի կոթի, սյուների մեջ ինչ-որ ցմփորություն, իսկ գմբեթի մեջ՝ սապատավորություն կա. այնուհետև Լյուդովիկոս XIV-ի Փարիզը Ինվալիդների սլալատում՝ մեծ, փարթամ, ոսկեզօծ ու սառն. Լյուդովիկոս XV-ի Փարիզը Սեն-Սյուլպիտում՝ խոյակներ, ժապավենների հանգույցներ, ամպեր, որդնազարդեր և եղբրդատերևներ՝ բոլորն էլ քարե. Լյուդովիկոս XVI-ի Փարիզը Պանթեոնում՝ Հռոմի սուրբ Պետրոսի տաճարի վատ ընդօրինակումը (չենքն էլ անհաջող կքել է, որից գծերը չեն ուղղվել). Հանրապետության Փարիզը Բժշկական դպրոցում՝ հունականի ու հռոմեականի մի խղճուկ խառնուրդ, որ Կոլիզեոմին կամ Պարթենոնին այնպես է նմանվում, ինչպես III տարվա կոնստիտուցիան Մինոսի օրենքներին. ճարտարապետության մեջ դա անվանում են մեսիդորյան ոճ. կա Նապոլեոնի Փարիզը՝ Վանդոմի հրապարակում, փառահեղ է դա՝ թնդանոթներից թափված բրոնզե սյունը. կա Հանրապետության Փարիզը՝ Բորսայում. խիստ սպիտակ սյունաշարը պահում է խիստ ողորկ քիվն ու ֆրիզը, չենքը քառակուսի է և նստել է քսան միլիոն:

Այս հատկանշական շենքերից յուրաքանչյուրին շաղկապվում են զանազան թաղամասերում սփռված բավականաչափ տներ՝ իրենց ոճի, պատկերի և դիրքի նմանակերպությամբ, և գիտակ մարդու

պատմության մի էջը: Այդ պալատն այլևս արքային չի պատկանում, այլ պատկանում է ժողովրդին: Ուրեմն՝ թողնենք այնպես, ինչպես կա: Մեր հեղափոխությունը երկու անգամ նշան է դրել նրա ճակատին: Նրա երկու ճակատներից մեկի վրա կան օգոստոսի 10-ի հրետազնւների, մյուսի վրա՝ հուլիսի 29-ի հրետազնւների հետքերը: Ուրեմն՝ սուրբ է նա: Փարիզ, 7 ապրիլի 1831

Հինգերորդ հրատարակության ծանոթագրություն (Ծնթ. հեղինակի):

աչքը հեշտությամբ է նկատում դա ու որոշում թվականը: Երբ կարողանում ես տեսնել, ապա դարի ոգին և արքայի կերպարանքը գտնում ես նույնիսկ դռան մուրճի մեջ:

Ժամանակակից Փարիզն որևէ ընդհանուր կերպարանք չունի: Դա բազմաթիվ դարերի նմուշների հավաքածու է, և ամենագեղեցիկներն անհետացել են: Մայրաքաղաքն աճում է միայն տներով և ինչպիսի՛ տներով: Այն թափով, որ ընթանում է Փարիզը, ապա ամեն հիսուն տարին մեկ կվերափոխվի: Հետևաբար, նրա ճարտարապետության պատմական նշանակությունը ջնջվում է ամեն օր: Հուշարձանները հետզհետե ավելի սակավաթիվ են դառնում, և թվում է, թե դրանք քիչ-քիչ կուլ են դնում, սուզվում տների մեջ: Մեր հայրերի Փարիզը քարակերտ էր, մեր զավակների Փարիզը գաջե կլինի:

Ինչ վերաբերում է նոր Փարիզի ժամանակակից հուշարձաններին, ապա մենք հաճությամբ հրաժարվում ենք դրա մասին խոսելուց: Բանն այն չէ, որ մենք ըստ արժանվույն չենք հիանում նրանով: Պարոն Սուֆլոյի կառուցած Սուրբ Ժյուսկեի եկեղեցին անկասկած Սավոյայի ամենաընտիր կարկանդակն է, որ երբևէ պատրաստվել է քարից: Պատվո Լեգեոնի պալատը նմանապես խիստ պատվական հրուշակեղենի մի կտոր է: Հացահատիկների Շուկայի գմբեթը խոշոր ելարանի վրա դրված անգլիական ջոքեյի գդակ է: Սեն-Սյուլպիսի աշտարակները ոչ այլ ինչ են, եթե ոչ երկու հաստ սրինգ, ասենք դա էլ մի ձև է. ինչպես որևէ մի ուրիշը, իսկ ծուռ ու ծամածուռություն անող հեռագրական սյունը հաճելի անակնկալ է նրանց տանիքի վրա: Սուրբ Թոք եկեղեցու ավագ դուռը կարելի է իր փառահեղությունը համեմատել միայն սուրբ Թոմաս Աքվիտանցու եկեղեցու ավագ դռան հետ: Նա ունի նաև խաչելության բարձրաքանդակ ինչոր նկուղում և ոսկեյօժ փայտե արև: Վերին աստիճանի հրաշագե՛ղ բաներ են դրանք: Բուսաբանական այգու լաբիրինթոսի լապտերն էլ չափազանց հնարամիտ բան է: Ինչ վերաբերում է դրամական Բորսային, որն ըստ սյունաշարի՝ հունական է, պատուհանների և դռների

կրոր կամարով՝ հռոմեական, լայն ու ցածիլիլ առաստաղով՝ Վերածնության ոճով է, ապա անկասկած չսփառանց անսխալական և անխառն հուշարձան է. ապացույցը, որ պսակված է այնպիսի ատտիկյան ցած վերնահարկով, որ Աթենքում անգամ չի եղել, գեղեցիկ ուղիղ գիծն այս ու այնտեղ շնորհագեղորեն կտրտել են վառարանի խողովակները: Ավելացնենք նաև, որ եթե ըստ կանոնի որևէ հուշարձանի ճարտարապետությունը պետք է համապատասխանի նրա նշանակմանը այնպես, որ այդ նշանակումը հենց շենքի տեսքից էլ հայտնի լինի, ապա մնում է սքանչանալ այնպիսի հուշարձանով, որն անխտիր կերպով կարող է լինել արքայի ապարանք, համայնքների պալատ, քաղաքապետարան, կոլեջ, ձիամարզարան, ակադեմիա, պահեստ, դատարան, թանգարան, զորանոց, դամբարան, տաճար ու թատրոն: Իսկ առայժմ բորսա է: Բացի դրանից, հուշարձանը պետք է հարմարեցված լինի կլիմային: Այս մեկը, ակնհերևարար, շինված է մեր սառն ու անձրևոտ երկնքի համար: Նա համարյա թե տափակ տանիք ունի, ինչպես Արևելքում, այնպես որ, երբ ձյուն է գալիս, ավլում են, և աներկբա է, որ տանիքը շինվում է ավելի ու համար: Իսկ ինչ վերավերում է այն նշանակմանը, որի մասին խոսում էինք քիչ առաջ, ապա նա հիանալի կերպով կատարում է. դա բորսա է Ֆրանսիայում, ինչպես որ մեհյան կլիներ Հունաստանում: Ծիչտ է՝ ճարտարապետը բավական նեղություն է քաշել ժամացույցի թվատախտակը թաքցնելու համար, որովհետև դա կաղավաղեր ճակատի գեղեցիկ գծերի մաքրությունը, բայց փոխարենը տվել է հուշարձանի շուրջը շուրջը կառուցած այդ սյունաշարը, որի տակ կրոնական մեծ տոներին փառահեղորեն կարող է զարգանալ դրամական փոխանակություն գործակալների ու առևտրական միջնորդների թեորիան:

Այդ բոլորն, անկասկած, մեծափարթամ հուշարձաններ են: Ավելացնենք դրան բազմաթիվ զվարճալի, գեղեցիկ ու պես-պես փողոցները, ինչպես, օրինակ՝ Ռիվոլի փողոցն է, և ես հույս չեմ կտրում, որ Փարիզը օդապարիկից դիտելիս կներկայացնի գծերի այն ճոխությունը,

մանրամասնությունների առատությունը, պատկերների բազմազանությունը, այն ինչ որ փառահեղ պարզի մեջ է, իսկ անսպասելին՝ գեղեցիկի, որ հատկանշական է տամա խաղալու տախտակին:

Որքան էլ սքանչելի թվա այսօրվա Փարիզը, այնուամենայնիվ, վերականգնեցեք տասնհինգերորդ դարի Փարիզը, վերակառուցեք դա ձեր մտքում: Պայծառ ցերեկով նայեցեք պայծառ գմբեթների, աշտարակների ու զանգակատների այդ գմայլելի ցանկապատի միջով: Հսկայական քաղաքի մի ծայրից մյուսը տարածեցեք, իսկ կղզիների ծայրերի մոտ ճեղքեցեք, կամուրջների կամարների տակ էլ ծալեցեք օդից ավելի հաճախակի շապիկ փոխող Սենա գետը իր լայն, կանաչ ու դեղին ջրազանգվածներով: Կապույտ հորիզոնի վրա որոշակի գծեցեք այդ Հին Փարիզի գոթական պրոֆիլը, ծփացրեք նրա շրջագծերը անհամար ծխնելույզներին կառույց ձմռան մշուշի մեջ, ապա սուղեցեք դա խորը գիշերվա գիրկը և շենքերի այդ մուսյլ լաբիրինթոսի մեջ դիտեցեք խավարի ու լուսի արտառոց խաղը, նետեցեք այնտեղ լուսնի մի շող, որ տարտամորեն գծագրի նրան և մառախուղի միջից երևան աշտարակների խոշոր գլուխները: Կամ թե վերցրեք այդ սև սիլուետը և ավելի թանձրացնելով սրածայր գմբեթների ու քիվային եռանկյունակների հազարավոր սուր անկյունների գծերը՝ շնածկան ծնոտից ավելի ատամնավոր այդ սիլուետը ցայտուն դարձրեք մայրամուտի պղնձագույն երկնքի վրա: Եվ հետո համեմատեցեք:

Իսկ եթե դուք ուզենաք ունենալ Հին քաղաքի այնպիսի տպավորություն, որ նորն այլև չի կարող տալ ձեզ, ապա որևէ մեծ տոնի առավոտյան, Զատիկի կամ Հոգեգալուստի արևածագին բարձրացեք վեր հառնած այնպիսի տեղ, որտեղից կարողանաք ընդգրկել ամբողջ մայրաքաղաքը և սպասեցեք զանգերի զարթոնքին: Դուք կտեսնեք, որ երկնքից տրված ազդանշանի վրա, որովհետև արևն է դա տալիս, այդ հազարավոր եկեղեցիները կցնցվեն մեկ անգամից: Նախ կլսեք ցիրուցան զանդահարություններ՝ մի եկեղեցուց մյուսը նետվող, ինչպես նվագածուներն են իրար իմաց տալիս, որ սկսելու ժամանակն է:

Ապա հանկարծ կտեսնեք, որովհետև կարծես թե ականջն էլ որոշ ընդհանրություն տեսնում է, թե ինչպես նույն վայրկյանին յուրաքանչյուր զանգակատնից ասես բարձրանում է աղմուկի մի սյուն, ներդաշնակության մշուշ: Սկզբում ամեն մի զանգի ղողանջը բարձրանում է ուղիղ, ջինջ, այսպես ասած՝ մյուսներից մեկուսի, դեպի առավոտյան լուսագեղ երկինքը. ապա քիչ-քիչ սաստկանալով՝ նրանք ձուլվում են իրար, միախառնվում, լուծվում միմյանց մեջ, դառնում մի սքանչելի համերգ: Դա այլևս ուրիշ բան չէ, եթե ոչ հնչեղ ղողանջների մի զանգված, որ հառնում է անընդհատ անթիվ-անհամար զանգակատներից, ծփում է, թրթռում, ոստոստում ու հողմապտույտ տալիս քաղաքի վրա և հորիզոնից այն կողմ է մղում այդ խլացուցիչ ճոճումների շառավիղը:

Սակայն ներդաշնակության այդ ծովը քառս չէ: Որքան էլ լայնազորոզ ու խոր լինի նա, այնուամենայնիվ, բնավ չի կորցնում իր թափանցիկությունը. դուք կտեսնեք, որ զանգահարումներից առանձին, օձագալար խույս է տալիս նոտաների յուրաքանչյուր խումբը: Դուք կարող եք հետևել մերթ թավ, մերթ ճղճղան դիալոգին, որ ծավալվում է մայր զանգակի ու կոչնակի միջև. դուք կտեսնեք, թե ինչպես են օկտավները մի զանգակատնից ցատկում մյուսը. դուք կնկատեք, թե ինչպես են դրանք արծաթե զանգից սլանում թևավոր, թեթև ու զրնգուն, և հակառակը՝ բեկ-բեկ ու կաղ ընկնում փայտե կոչնակից: Դրանց մեջ դուք հիանում եք այն հարուստ գամմայից, որ անընդհատ մեկնում ու ընկնում է սուրբ Եվատատիոսի եկեղեցու յոթ զանգերից. դուք կտեսնեք, թե ինչպես այդ ամենի միջով վազում են արագասահ ու ջինջ նոտաներ, մի երեք-չորս լուսաշող զիզգագներ են կատարում, ապա կայծակների պես մարում: Այնտեղ Սեն-Մարտենի արքայարանն է երգում սուր ու բեկ-բեկ, այստեղ՝ Բաստիլյի չարագուշակ ու անախորժ ձայնն է լսվում. մյուս ծայրում Լուվրի մեծ աշտարակն է՝ իր ցածր, բաս ղողանջով: Արդարադատության պալատի զանգանվազը ամեն կողմ անդադար սփռում է իր զմայլելի

դայ՝ այսօր, որոնց վրա հավասար ընդմիջումներով ընկնում են Աստվածամոր տաճարի գիտանոց-աշտարակի ծանր ահագանգերը և կայծեր, են ժայթքեցնում նրանցից, ինչպես մուրճի հարվածները՝ զնդանից:

Մեղրնյամեջ դուք կտեսնեք, որ անցնում են ամեն ձևի հնչյուններ. զրանք Սեն-ժերմեն-դե-Պրեի եռյակ գանգախմբերի ղողանջներն են: Հետո այդ վսեմ հնչյունների գանգվածը ժամանակ առ ժամանակ բացադասվում է և ճանապարհ տալիս Ավե Մարիայի արագասահ ղողանջին, որ պայթում ու ճարճատում է աստղափնջի նման: Ներքևում, համերգի ամենախոր մասում, դուք տարտամորեն կլսեք եկեղեցիների ներքին երգը, որ կարծես թե դուրս է մղվում նրանց թրիտացող կամարներից:

Ինչ իսուք, որ դա էլ լսվելու արժանի մի օպերա է: Սովորաբար, ցիլիկր Փարիզից հառնող ժխորը քաղաքի խոսակցությունն է, գիշերվանը՝ նրա շնչառությունը, իսկ հիմա, այգաբացի այս ժամին՝ նրա հրդր: Ականջ դրեք, ուրեմն, զանպակատների այդ համերգին, սփռեցեք դրա վրա կես միլիոն մարդկանց մրմունջը, գետի հավիտենական տրտունջը, քամու անվախճան հեքը, հսկայական երգեհոնների նման հորիզոնի բլուրների վրա բազմած չորս անտառների հեռավոր ու թավ կվարտետր. կիսանրանգով մեղմեցեք այն, ինչ չափից ավելի խռպոտ ու սուր է կենտրոնական զանպահանդեսի մեջ, և ասացեք, թե աշխարհում ավելի ճոխ, ավելի գվարթ, ավելի ոսկեփայլ ու ավելի շլացուցիչ րան ճանաչում եք, քան զանգերի ու կոչնակների այդ ժխորը, քան երաժշտության այդ հնոցը, քան պղնձի այդ երկու հազար ճայները հրեք հարյուր տոնաչափ բարձրության վրա գտնվող քարե սրինգներով միտամանակ նվագելիս, քան այդ ժամին նվագախումբ դարձած քալսպր, քան փոթորկի պես պոռթկուն այդ սիմֆոնիան:

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

I

ԲԱՐԻ ՀՈԳԻՆԵՐ

Տասնվեց տարի էր արդեն անցել այն օրից, որի մասին խոսում ենք այստեղ, երբ կանաչ կիրակիի մի գեղեցիկ առավոտ, պատարագից հետո, մի կենդանի արարած դրվեց Փարիզի Աստվածամոր տաճարի գավթի ձախակողմյան պատի մեջ շինված փայտե մահճակի վրա, սուրբ Քրիստափորի այն մեծ պատկերի դիմաց, որին նայում էր ասպետ տյար Անտուան դե Գ'էսարի քարաքանդակ, ծնկաչոք արձանը՝ 1413 թվականից սկսած մինչև այն օրը, երբ մարդկանց խելքին փչել էր ցած գցել և՛ սուրբին, և՛ հավատացյալին: Սուբուրություն էր դարձել այդ փայտե մահճակի վրա դնել ընկեցիկ երեսաներին՝ հանրային պթաստությունը հանձնելու համար: Այդտեղից ով ուզենար, կվերցնե: Փայտե մահճակի առաջ պղնձե մի գանձանակ կար ողորմության համար:

Կենդանի արարածի այն նմանակերպը, որ Փրկչի 1467 թվականի կանաչ կիրակիի առավոտը պառկած էր այդ փայտե մահճակի վրա, կարծես թե ծայր աստիճան արժարժում էր դրա շուրջը խոնված բավական մեծ բազմության հետաքրքրասիրությունը: Բազմությունը մեծ մասամբ կազմված էր գեղեցիկ սեռի անհատներից, որոնք համարյա թե պառավ կանայք էին միայն:

Առաջին շարքում մահճակի վրա ամենից ավելի կուացել էին չորս կին, որոնց, ըստ իրենց մոխրագույն, սքեմանման համագգեստի, կարելի էր համարել որևէ բարեպաշտական միաբանության անդամ: Ես կարծում եմ, թե պատճառ չկա, որ պատմությունը գալիք սերունդներին չփոխանցի այս չորս գաղտնապահ ու պատվարժան կանանց անունները. Ագնես լա-Հերմ, Ժեհաննա դը-լա-Տարմ, Հենրիետ

լա-Գոտիեր և Գոչեր լա-Վիոլետ, չորսն էլ այրի, չորսն էլ էտիեն-
Նոգրիի միաբանութեան բարի կանայք, իրենց մայրապետի թույլ-
տվութեամբ և Պիեր դ'Այիի կանոնադրութեան համաձայն՝ տնից
դուրս էին եկել քարոզ լսելու:

Բայց եթե սուրբ կույսի համարձման միաբանութեան այդ քույ-
րերը տվյալ դեպքում հարգում էին Պիեր դ'Այիի կանոնադրու-
թյունը, ապա անկասկած հաճութեամբ խախտում էին Միշել դը
Բրաչի և Պիգայի կարդինալի կանոնները, որոնք տմարդի կերպով
պատվիրում էին նրանց լուել:

– Այս ի՞նչ բան է, քո՛ւյր իմ, – հարցնում էր Ագնեսը Գոչերին՝
նայելով այնտեղ դրված փոքրիկ արարածին, որ այդքան հայացքնե-
րից սարսափահար՝ ճղճղում ու պրկվում էր փայտե մահճակի վրա:

– Ի՞նչ կլինի մեր վիճակը, – ասում էր Ժեհաննան, – եթե հիմա
սկսել են այսպիսի երեխաներ ծնել:

– Ես երեսաներից բան չեմ հասկանում, – նորից մեջ ընկավ Ագ-
նեսը, – բայց իմ կարծիքով՝ մեղք ենք գործում, որ դիտում ենք սրան:

– Սա երեխա չէ, Ագնե՛ս:

– Օրապակաս կապիկ է, – նկատեց Գոչերը:

– Երկնային նշան է, – ավելացրեց Հենրիետ լա-Գոտիերը:

– Ուրեմն՝ սա երրորդն է *Laetare-ի*⁸⁷ տոնից հետո, – նկատեց Ագ-
նեսը, – որովհետև ութ օր չկա, ինչ մի հրաշք էլ կատարվեց, ուխտա-
վորներին ծանակողը այնքան աստվածաբար պատժեց Օբերվիլիեի
Աստվածամոր ձեռքով, իսկ դա երկրորդ հրաշքն էր այս ամսվա մեջ:

– Խայտառակութեան իսկական ճիվաղ է այս իբր թե ընկեցիկ
երեխան, – ասաց Ժեհաննան:

– Այնպես է ճիճղում, որ տիրացուն անգամ կարող է խլանալ, –
վրա բերեց Գոչերը: – Դե՛, ձայնդ կտրի՛ր, փոքրիկ Գոռզոռան:

– Եվ երևակայո՛ւմ ես, Ռեյմսի պարոն արքեպիսկոպոսն է այս խայ-
տառակությունն ուղարկում Փարիզի պարոն արքեպիսկոպոսին, –
ավելացրեց լա-Գոտիերը՝ ձեռքերը կցելով:

87. Ըստ կաթողիկ եկեղեցու՝ Մեծ պահքի չորրորդ կիրակին: Բառացի՝ ցնձա՛ (լատ):

– Իմ կարծիքով՝ սա գազան է, – ասաց Ազնես լա-Հերմը, – անասուն, հրեայի ու մատակ խոզի արտադրանք, պարզապես ոչ քրիստոնեական, պիղծ բան, որ պետք է գցել ջուրը կամ կրակի մեջ:

– Ես հույս ունեմ, որ ոչ ոք չի թախանձի, որ տան իրեն, – ասաց լա-Գոտիերը:

– Մ՛հ, Աստված իմ, – գոչեց Ազնեսը, – որքա՛ն եմ կարեկցում այն խեղճ ստնտուններին, որ այնտեղ, նեղ փողոցի ստորին մասում, որով իջնում են դեպի գետը, ուղիղ սրբազան եպիսկոպոսի տան կողքի ընկեցիկ երեխաների տան մանուկներին են կերակրում: Ի՛նչ պիտի անեն խեղճերը, եթե այս փոքրիկ հրեչին տանեն նրանց կուրծք տալու: Ես ավելի շուտ ծիծ կտայի որևէ վամպիրի:

– Որքա՛ն միամիտ է այս խեղճ լա-Հերմը, – վրա բերեց Ժեհաննան: – Որ՞թե դուք չեք տեսնում, քո՛ւյր իմ, սր այս փոքրիկ հրեչն առնվազն չորս տարեկան է, այնպես որ՝ նա այնքան չէր ախորժի ձեր ստիճքը, որքան խորովածը:

Արդարև, նորածին չէր այդ «փոքրիկ հրեչը» (մենք էլ խիստ դժվարանում ենք այլ կերպ անվանել նրան): Դա չափազանց կոշտ ու կոպիտ ու խլրտուն զանգված էր՝ լսցկված կտավն տոպրակի մեջ, որի վրա դրոշմված էր այդ ժամանակվա Փարիզի եպիսկոպոս գերապայծառ Գիյոմ Շարտիեի անվան իրար հյուսված սկզբնատառերը, և որից դուրս էր գալիս գլուխը: Այլանդակ բան էր այդ գլուխը՝ վրան չեկ մազերի մի անտառ, մեկ հատ աչք, բերան ու ատամներ: Աչքը լալիս էր, բերանը ճչում, իսկ ատամներն այլ բան չէին պահանջում, եթե ոչ կծել: Ամբողջ զանգվածը ջղաձգվում-մաքառում էր տոպրակի մեջ՝ ի մեծ ապշանք բազմության, որ շարունակ ստվարանում և փոփոխվում էր նրա շուրջը:

Տիկին Ալոիզ դը Գոնպրորիեն, հարուստ և աղնվական մի կին, որ բռնել էր մոտավորապես վեց տարեկան մի սիրուն աղջկա ձեռքը և իր ոսկեղջյուր, բարձրադիր գլխանոցի վրա քարշ էր տալիս մի

երկար քող, անցնելիս կանգ առավ մահճակի առաջ, մի բոպե նայեց դժբախտ արարածին, երբ նրա գողտրիկ դատրիկը՝ Ֆլյոր-դը-Լիս դը-Գոնդըլորիեն, ամբողջովին մետաքսե ու թավշե զգեստներ հագած, իր սիրուն մատը դրած մահճակից կախված մշտական ցուցանակին՝ հեղելով կարգում էր. «Ընկեցիկ երեխաներ»:

— Ճիշտ եմ ասում,— գոչեց տիկինը զզվանքով ետ շրջվելով,— ես կարծում էի, որ այստեղ միայն երեխաներ են դնում:

Նա շուռ եկավ՝ գանձանակի մեջ նետելով մի արծաթ ֆլորին, որ զրնգաց պղնձե մանր փողերին դիպչելով և ստիպեց էտիեն-Հոգրիի միաբանություն խեղճ բարի կանանց աչքերը չառել:

Մեկ բոպե հետո անցավ արքայական նոտարապետ, լրջատես ու գիտնական Ռոբեր Միստրիկոլը՝ մի ձեռքին հսկայական պատարագամատյան, մյուս ձեռքով պահած իր կնոջը՝ ազնվադուստր Գիյմետ լա-Մերեսին, այսպիսով՝ երկու կողմից ունենալով երկու կանոնավորիչ՝ հոգևոր ու աշխարհիկ:

— Ընկեցիկ երեխա՛,— ասաց նա՝ արարածին զննելուց հետո,— և գտնված ըստ երևույթին Ֆլեդեթոն⁸⁸ գետի պատնեջի վրա:

— Միայն մի աչք է երևում,— նկատեց տիկին Գիյմետը,— մյուսի տեղը կոծի՞ծ է:

— Կոծի՞ծ չէ,— վրա բերեց տյար Ռոբեր Միստրիկոլը,— ձու է դա և պարունակում է սրան հար և նման մի ուրիշ դե, որն ունի մի ուրիշ փոքրիկ ձու, որը պարունակում է մի ուրիշ սատանա և այդպես շարունակաբար:

— Ինչի՞ց գիտեք այդ,— հարցրեց Գիյմետ լա-Մերեսը:

— Գիտեմ պարոտ ու պատշաճ ձևով,— պատասխանեց նոտարապետը:

— Պարոն նոտարապետ,— հարցրեց Գոչերը,— ի՞նչ եք գուշակում դուք այս ընկեցիկ կոչիցյալ երեխայի առթիվ:

— Մեծագույն դժբախտություններ,— պատասխանեց Միստրիկոլը:

88. Դժոխքի գետ, որով ոչ թե ջուր, այլ կրակ էր հոսում (ըստ հունական դիցաբանության):

— Օ՛ր, Աստված իմ,— ասաց հավաքվածներից մի պառավ կին,— իբր թե քիչ էր անցած տարվա սոսկալի ժանտախտը, սա էլ վրան, և դեռ ասում են, որ անպլիացիք պատրաստվում են իջնել Հարֆլյոյի դաշտը:

— Գուցե և դրա պատճառով թագուհին չկարողանա սեպտեմբերին Փարիզ գալ, — նկատեց մի ուրիշ կին:— Առևտուրն արդեն շատ վատ է ընթանում:

— Ես կարծում եմ,— գռչեց ժեհաննա դը-լա-Տարմը,— ավելի լավ կլիներ Փարիզի ռամիկների համար, որ այս փոքրիկ վհուկին պառկեցնեին ոչ թե տախտակի, այլ ցախի խրձի վրա:

— Բոցավա՛ռ խրձի վրա,— ավելացրեց պառավը:

— Ավելի խոհեմ բան կլիներ,— ասաց Միստրիկուլը:

Մի քանի ռոպե էր, ինչ երիտասարդ մի քահանա ունկնդրում էր միանձնուհիների դատողություններն ու նոտարապետի խրատները: Նրա դեմքը խիստ էր, ճակատը լայն, հայացքը՝ թափանցող: Նա լռիկ ճանապարհ բացեց բազմության մեջ, զննեց փոքրիկ վհուկին և ձեռքը պարզեց նրա վրա: Ճիշտ ժամանակն էր, որովհետև բոլոր բարեպաշտուհիներն արդեն շրթունքներն էին լիզում «բոցավառ խրձի» հեռանկարից:

— Ես որդեգրում եմ այս երեխային,— ասաց քահանան:

Եվ դնելով նրան իր սքեմի մեջ՝ տարավ: Ներկաները ապշած հայացքներով հետևեցին նրա հեռանալուն: Մեկ ռոպե հետո նա անհայտացավ այդ ժամանակ եկեղեցուց վանքը տանող Կարմիր դռնով:

Առաջին զարմանքն անցնելուց հետո ժեհաննա դը-լա-Տարմը կուցավ լա-Գոտիերի ականջին.

— Ես ձեզ ասում էի, այնպես չէ՞, քո՛ւյր իմ, որ այդ երիտասարդ հոգևորականը՝ պարոն Կլոդ Ֆրուլոն, կախարդ է:

ԿԼՈՂ ՖՐՈԼՈ

Կլող Ֆրոլոն, իրոք, սովորական մարդ չէր:

Նա սերում էր այն միջին տեղը գրավող ընտանիքներից մեկից, որոնց վերջին զարի անպարկեշտ լեզվով՝ անխտիր անվանում էին բարձր քաղքենիություն կամ մանր ազնվականություն: Այս ընտանիքը Պակլե եղբայրներից ժառանգել էր Տիրչապ ավատը, որ ենթակա էր Փարիզի եպիսկոպոսին և ուրի քսանմեկ տները երկար դատավարությունների առարկա էին եղել եկեղեցական ատյանում, տասներեքերորդ դարում: Կլող Ֆրոլոն, որպես այդ ավատի տեր, մեկն էր այն հարյուր քառասունմեկ սենյորներից, որոնք ավատային տուրքի հավակնություն ունեին Փարիզում և նրա արվարձաններում, այնպես որ՝ նրա անունը, որպես այդպիսին, երկար ժամանակ արձանագրված է եղել տյար Ֆրանսուա լը Ռեին պատկանող Տարկանվիլ կալվածքի և Տուրի կանոնիկոսության միջև, Սեն-Մարտեն-դե-Շանում պահ տրված ցուցակներում: Կլող Ֆրոլոյի ծնողները նրան մանկութունից կանխորոշել էին հոգևորական սպասավորության: Սովորեցրել էին նրան լատիներեն կարդալ, վարժեցրել էին հայացքը խոնարհել և ցածր խոսել: Դեռ երեսնա էր նա, երբ հայրը գիշերօթիկ տվեց նրան Տորչիի ճեմարանում, Համալսարանի քաղաքամասում: Ահա այդտեղ էլ մեծացել էր նա պատարագամատյան և բառգիրք սերտելով:

Իսկ այնպես, ի բնե տխուր տղա էր նա, ծանրաբարո, լուրջ: Պարպում էր եռանդագին և յուրացնում էր շուտ: Դասամիջոցների բարձր ճիչեր չէր արձակում, քիչ էր իսառնվում Ֆուլար փողոցի ժոնրայի գինսրբուքին, չէր իմանում, թե ինչ բան է *dare alapas et capillos laniare*⁸⁹, և ոչ մի ձևով չէր մասնակցել 1463 թվականի այն

89. Ապտակներ հասցնել և մազեր պոկել (լատ.):

ըմբոստութիւնը, որ տարեգիրներն արձանագրում են այս ծանրա-
կշիռ վերնագրով. «Համալսարանի վեցերորդ խոռվութիւն»։ Հագ-
վադեպ էր պատահում, որ նա ծաղրի Մոնտեպյու դպրանոցի խեղճ
ճեմարանականներին՝ նրանց *carpette-ների*⁹⁰ համար, որից և առա-
ջացել էր նրանց մականունը, կամ Դորման ճեմարանի թոշակառու-
ներին՝ գազաթր կլոր ածիւելու և նրանց եռագույն՝ ծափի կապույտ և
մանիշակագույն վերնադեբաստի համար – *azurini coloris et bruni*,
ինչպես ասում է Չորս թագի կարդինալի կոնգակը։

Բայց դրա փոխարեն Սեն-ժան-դը-Բովի փողոցի բոլոր մեծ ու
փոքր դպրոցների մշտական այցելուն էր։ Առաջին աշակերտը, որին
Սեն-Պիեր-դը-Վալի արքան կանոնական իրավունքի դասախոսու-
թիւնն սկսելու պահին նկատում էր միշտ իր ամբիոնի դեմուղեմը,
Սեն-Վանդրեթեզիլ դպրոցի հաստահեղույս սյունին փակչած Կլոդ
Յրոյուն էր՝ զինված ելջուրե թանաքամանով, փետուրե գրիչը կրծե-
լիս, մաշված ծնկին դրած տետրում արագ-արագ գրելիս, իսկ ձմեռը՝
արտաշնչելով մատները տաքացնելիս։

Առաջին ունկնդիրը, որին եկեղեցական օրենսդրութեան դոկտոր
պատվելի Միլ դ'Իլիեն տեսնում էր շնչակտուր եղած Շեֆ-Սեն-Դրնի
դպրոցի դռները բացվելուն վրա հասնելիս, Կլոդ Յրոյուն էր։ Այնպես
որ, պատանի աքեղան տասնվեց տարեկան հասակում կարող էր միս-
տիկական աստվածաբանութեան մեջ գլուխ դնել եկեղեցու որևէ հոր
հետ, կանոնական աստվածաբանութեան մեջ՝ եկեղեցական ժողովի
որևէ ներկայացուցչի հետ, իսկ սխոլաստիկ աստվածաբանութեան
մեջ՝ Սորբոնի որևէ դոկտորի հետ։

Աստվածաբանութեան հաշիվը վերջացնելուց հետո նա անձնատուր
եղավ եկեղեցական օրենսդրութեանը։ «Մայր որոշումներ»-ից անցավ
«Կառլոս Մեծի Հրովարտակներ»-ին, և զիտութեան ծարափից մղված՝
հաջորդաբար լափեց Հիփսալի եպիսկոպոս Թեոգորի, Վորմսի եպիսկո-
պոս Բուշարի, Շարտրի եպիսկոպոս Իվի հրովարտակ-կոնգակները.

90. Աքեմ, երկար պարեզոտ (հին ֆր.)։

ապա Կառլոս Մեծի հրովարտականներին հաջորդած՝ Գրատիանոսի «Պապական հրովարտականների ժողովածուն», ապա Գրիգոր IX-ի ժողովածուն, հետո էլ՝ Հոնորիոս III-ի *Super specula*-ն⁹¹: Նրա համար պարզ ու մեկին դարձավ քաղաքացիական և կանոնական իրավունքների միջև մղված սլայքարի ու աշխատանքի այն երկարատև ու անհանգիստ ժամանակաշրջանը միջնադարյան քառսի մեջ, որ սկսել էր Թեոդոր եպիսկոպոսը 618 թվականին և վերջացրել էր Գրիգոր պապը՝ 1227 թվականին:

Եկեղեցական օրենսդրությունը մարսելուց հետո, նա նետվեց բժշկություն և ազատ արվեստների վրա: Ուսումնասիրեց բուժիչ խոտերի, ապա սպեղանիների գիտությունը, դարձավ գիտակ անձ տենդի ու ջերմի, ճմլվածքների ու ջարդվածքների, վերքերի ու թարախոտ պալարների հարցում: Ժակ դ'Էպարսը կարող էր ընդունել նրան որպես ֆիզիկոս բժիշկ, Ռիշար Հելենը՝ վիրահատ բժիշկ: Նա հաջորդաբար անցավ ազատ արվեստների բոլոր աստիճանները՝ լիցենզիոս, մագիստրոս և դոկտոր: Ուսումնասիրեց լատին, հույն և եբրայական լեզուները՝ եռյակ սրբարանը, ուր շատ քչերն էին խիզախում այն ժամանակ մտնել: Գիտություն ձեռք բերելու և ամբարելու իսկական տենդով էր նա բռնված: Տասնութ տարեկան հասակում չորս ֆակուլտետներն էլ ավարտել էր: Այդ երիտասարդին թվում էր, թե կյանքը միայն մեկ նպատակ ունի՝ իմանալ:

Այդ ժամանակաշրջանումն էր ահա, որ 1466 թվականի սաստիկ ամառն առաջացրեց այն մեծ ժանտախտը, որ ավելի քան քառասուն հազար մարդ տարավ Փարիզի դերկոմսություն շրջանից և, իմիջիայլոց, ասում է ժան դը-Տրուա տարեգիրը, «առքայի աստղագուշակ տյար Արնուին՝ այր հույժ առաքինի, իմաստուն ու զվարճախոս»: Համալսարանի քաղաքամասում լուր տարածվեց, որ հիվանդությունը առանձնապես մեծ ավերածություն է կատարել Տիրշապ վաղոցում,

91. «Ի նմանություն» (լատ.): Պապական կոնդակները կոչվում են իրենց առաջին բառերով:

որտեղ, իրենց ավատական կալվածքում, ապրում էին Կլոդի ծնողները: Երիտասարդ ճեմարանականը խիստ տաղնապահար վագեց Հայրական տունը: Երբ ներս մտավ, Հայրն ու մայրը վախճանվել էին նախորդ օրը: Կենդանի էր մնացել վոքթը, խանձարուրով փաթաթված եղբայրը, որ անտիրական ճչում էր օրորոցում: Ամբողջ ընտանիքից միայն նա էր մնացել: Երիտասարդը գրկեց մանկանը և մտածկոտ դուրս եկավ: Մինչ այդ, նա ապրել էր միայն գիտություն մեջ, իսկ այժմ սկսում էր ապրել կյանքում:

Այս դժբախտությունը ճգնաժամ առաջացրեց Կլոդի կյանքի մեջ: Տասնինը տարեկանում որբանալով ու դառնալով ընտանիքի մեծը՝ դաժանորեն զգաց, որ դպրոցական երազանքներից կանչվում է դեպի աշխարհի իրականությունը: Եվ այդ ժամանակ կարեկցանքից մղված՝ սիրով ու անձնվիրությունամբ համակվեց այդ երեխայի՝ իր եղբոր Հանդեպ: Տարօրինակ ու սրտառուչ բան էր այդ մարդկային սերը նրա համար, որ մինչ այդ միմիայն գլուխ էր սիրել:

Այդ համակրանքը զարգանալով՝ հասավ արտասովոր աստիճանի. այդ անաղարտ հոգու մեջ դա համարյա թե դարձավ առաջին սեր: Մանկությունից անջատված լինելով իր ծնողներից, որոնց հազիվ էր ճանաչել, թաղված և կարծես թե պաշարված իր գրքերի մեջ, ամենից առաջ ուսումնասիրելու և սովորելու ծարավ, մինչ այդ բացառելու ուշադիր իր մտքին, որը խորանում էր գիտությունամբ, ուշադիր իր երեկակայությունը, որը ճոխանում էր գրքերով, խեղճ ճեմարանականը դեռ ժամանակ չէր ունեցել զգալու իր սրտի տեղը: Այդ կրտսեր եղբայրը, որ ոչ հայր ուներ, ոչ մայր, այդ փոքրիկ մանկիկը, որ երկնքից հանկարծակի ընկնում էր նրա թևերի վրա, նոր մարդ դարձրեց նրան: Նա տեսավ, որ Սորբոնի մտազննություններից և Հոմերոսի բանաստեղծություններից բացի, աշխարհում ուրիշ բան էլ կա, որ մարդը համակրությունների կարիք ունի, որ կյանքն, առանց քնքշանքի ու սիրո, ոչ այլ ինչ է, եթե ոչ չսր, ճղճղան ու ճռնացող մեխանիզմ: Միայն թե նա երեկայեց (որովհետև այն տարիքում էր,

երբ պատրանքները դեռ պատրանքներով են փոխարինվում), որ արե-
նակցական և ընտանեկան համակրանքները միակ անհրաժեշտն են,
և սիրո արժանի փոքր եղբայրը բավական է իր ամբողջ գոյությունը
լցնելու համար:

Այսպես ահա նա անձնատուր եղավ իր փոքրիկ ժեհանի սիրունյ՝
արգեն խոր, տաքարյուն ու կենտրոնացած բնավորության ավյունով:
Այդ սիրուն, խարտյաշ, վարդագույն ու գանգրահեր, անօգնական ու
փխրուն էակը, այդ որբը, որ այլ հենարան չուներ, բացի մի ուրիշ որ-
բից, հուզում էր նրան մինչև հագու խորքը: Եվ որովհետև ծանրա-
խոհ մտածող էր, սկսեց խորհրդածել ժեհանի մասին անսահման
գթասրտությամբ: Նա սկսեց մտահոգվել նրանով ու հոգ տանել,
ինչպես խիստ դյուրաբեկ և թանկարժեք իրի: Երեխայի համար նա
դարձավ ավելի, քան եղբայր, եղավ նրա մայրը:

Փոքրիկ ժեհանը կորցրել էր իր մորը, որի կաթով էր դեռ սնվում,
ուստի և Կոդր սանտուռի հանձնեց նրան: Բացի Տիրչապի ավատից,
նա ժառանգել էր հորից նաև Մուլին ավատը, որ ենթակա էր Ժան-
տիյի քառակուսի աշտարակին. դա հողմաղաց էր Վինչեստր (Բի-
սետր) դղյակի մոտակա բլրի վրա: Հողմաղացի տիրոջ կինն ուներ
կրծքի մի սիրուն երեխա և Համալսարանից հեռու չէր: Կլոդն էլ
անձամբ նրան տարավ հանձնեց իր փոքրիկ ժեհանին:

Դրանից հետո զգալով, որ քաշելու լուծ ունի, կյանքը խիստ լրջո-
րեն ընդունեց: Փոքր եղբոր մասին մտածելը ոչ միայն լցրեց նրա դա-
սամիջոցը, այլև դարձավ նրա ուսումնառության նպատակը: Եվ որո-
չեց ամբողջովին նվիրվել այնպիսի ապագայի, որի համար պատասխա-
նատու կլինեիր Աստու առաջ, և երբեկից այլ ամուսին, այլ երեխա
չունենալ, բացի իր եղբոր երջանկությունից և բախտավորությունից:
Հետևաբար, ավելի քան երբևէ, կապվեց իր հոգևորական կոչմանը:
Նրա արժանիքները, գիտությունը, Փարիզի եպիսկոպոսի անմիջական
վասալը լինելու հանգամանքը լայնորեն բաց էին անում եկեղեցու
դռները նրա առաջ: Քսան տարեկան հասակում, Վատիկանի հատուկ

թուլլտվութիամբ, նա ձեռնադրվեց քահանա և, որպես Աստվածամոր տաճարի ամենաերիտասարդ վանահայր, սպասավորում էր այն խորանում, որը պատարագը ուշ ժամի մատուցելու պատճառով կոչվում է *altare pigrorum*⁹².

Այդտեղ է՛լ ավելի, քան երբևիցե խորասուզված իր սիրելի գրքերի մեջ, որոնցից կտրվում էր միայն մեկ ժամով, որպեսզի վաղեր Մուլեն կալվածքը, նա կարողացավ իր տարիքի համար այնքան հազվադեպ գիտութիամբ ու խստամբեր կյանքով վաստակել մենաստանի հարգանքն ու հիացմունքը: Այդտեղից՝ մենաստանից էլ նրա գիտնականի հռչակը տարածվեց ժողովրդի մեջ, որտեղ, ինչպես հաճախ էր պատահում այդ դարաշրջանում, մի քիչ վերափոխվելով՝ դարձել էր կախարդի հռչակ: Եվ ահա Կանաչ կիրակիի օրը, երբ նա վերադառնում էր ծուլյերի համար պատարագ մատուցելուց իրենց խորանում, որը երգեցիկ դասի դռան մոտ էր գտնվում, տաճարի կենտրոնական նավի աջ կողմում, սուրբ կույսի պատկերի առաջ.— նրա ուշագրուկթունը գրավեց ընկեցիկ երեխաների մահճակի շուրջը ձգրտացող պառավ կանանց խումբը:

Այդ ժամանակ էլ նա մտեցավ այնքան ատելի դարձած և սպառնալիքի տակ գտնվող դժբախտ, փոքրիկ արարածին: Նրա տալանապալի վիճակը, այլանդակուկթունը, լքված լինելը, իր փոքր եղբորը հիշելը, ապա այն հրեշապատկերը, որ հանկարծ համակեց նրա միտքը— եթե ինքը մեռնեք, ապա իր սիրելի պստիկ ժեհանն էլ կարող էր անտեր-անտիրական նետվել ընկեցիկ երեխաների տախտակի վրա.— այս ամենը միանգամից անցավ նրա մտքով, մեծ կարեկցանք առաջացրեց նրա մեջ, և նա վերցրեց-տարավ մանկանը:

Երբ երեխային տուպրակից դուրս հանեց, տեսավ, որ, սրդարև, խիստ այլանդակն է նա: Խեղճ փոքրիկ դեռ կոծիժ ունեք ձախ աչքի վրա, գլուխը մտած էր ուսերի մեջ, ողնաշարը աղեղնաձև էր, կրծոսկրը՝ դուրս ցցված, սրունքները՝ ծուռ: Սակայն կենսունակ էր

92. Ծուլյերի խորան (լատ.):

Թվում նա, ու թիւ անկարելի էր իմանալ, թե ինչ լեզվով է թոթովում, այնուամենայնիւ, նրա ճիշդ որոշ ուժի և առողջութեան նշան էր: Կլոդի կարեկցանքն աճեց այդ տգեղութեանից, նա սրտում ուխտեց մեծացնել այդ երևիսային ի սեր իր եղբոր, որպեսզի ապագայում ինչպիսի մեղանչումներ էլ որ կատարի փոքրիկ Ժեհանը, գոնե ունենա իր համար արված այս գթասրտութուն-չքմեղանքը: Դա մի տեսակ բարի գործերի ավանդադրում էր իր փոքր եղբոր անվամբ, բարի արարքների գանձանակ, որ ուզում էր նախօրոք լցնել նրա համար, որպեսզի պատանի չարաճճին կարիքի դեպքում պետք ունենա այդ դրամին՝ միակը, որ ընդունվում է իբրև վճար դրախտ մտնելիս:

Նա մկրտեց իր որդեգրած երեխային և անունը դրեց Քվազիմոդոն⁹³, գուցե նշելու համար այն օրը, երբ գտել էր նրան, գուցե և ցանկանալով այդ անունով հատկանշել, թե որքա՛ն անկատար էր այդ ողորմելի արարածը, որքա՛ն թերի էր նա ուրվագծված: Արզարև, միակսնի, սապատավոր, ծուռոտն Քվազիմոդոն ոչ այլ ինչ էր, եթե ոչ մոտավորապես մարդ:

III

IMMANIS PECORIS CUSTOS, IMMANIOR IPSE⁹⁴

1482 թվականին Քվազիմոդոն մեծացել էր արդեն: Մի քանի տարի էր ահա, որ նա դարձել էր Աստվածամոր տաճարի ժամհարը՝ իր հոգեհայր Կլոդ Ֆրոլոյի շնորհիվ, որը Ժողայի սարկավագապետ էր դարձել իր սյուզերենն (գերիշխան) Լուի դը-Բոմոնի շնորհիվ, սա

93. Քվազիմոդոն է կոչվում Զատկին հաջորդող առաջին կիրակին. ըստ հայ եկեղեցու՝ կանաչ կամ նոր կիրակի: Քվազիմոդոն լատիներեն նշանակում է նաև մոտավորապես:

94. Ամեհի հոտի հովիվը հովվողներից ավելի աճեհի է (լատ.):

էլ 1472 թվականին, Գիյոմ Շարտիեի մահվանից հետո, դարձել էր Փարիզի եպիսկոպոս՝ շնորհիվ ոչսրմությամբ աստուծո Լյուդուվիկոս XI արքայի սուփրիչ և Շարտիեի հովանավոր Օլիվիե լը-Դենի:

Այսպիսով, Քվադրիմոդոն Աստվածամոր տաճարի ժամհարն էր:

Ժամանակի ընթացքում ստեղծվել էր ժամհարին եկեղեցուն միացնող ինչ-որ մտերիմ կապ: Իր անհայտ ծնունդի և այլանդակ կաղամվածքի կրկնակի ճակատագրականությամբ սշխարհից կտրված, մանկությունից այդ երկու անհաղթահարելի շրջանակների մեջ բանտարկված դժբախտ արարածը վարժվել էր ոչինչ չտեսնել այս աշխարհում եկեղեցու պատերից այն կողմը, որումք ապաստան էին տվել նրան իրենց ստվերի տակ: Նրա մեծանալուն ու զարգանալուն զուգրնթաց՝ Աստվածամոր տաճարը հաջորդաբար եղիլ էր նրա համար հավիթ, բույն, տուն, հայրենիք, տիեզերք:

Եվ կասկածից դուրս է, որ մի տեսակ խորհրդավոր և վաղեմի ներդաշնակութուն գոյութուն ունիր այդ հակի և այդ հուշարձանի միջև: Երբ դեռ բոլորովին փոքր հասակում նա ծուռումուռ և ոստյուններով քարչ էր գտնիս նրա խավար կամարակապների տակ իր մարդկային տեսքով ու անասունի անդամներով, թվում էր, թե բնական սողուն է այդ խոնավ ու մռայլ սալահատակի վրա, որտեղ ռոմանական խոյակների ստվերը այնքան արտառոց ձևեր էր գծում:

Ավելի ուշ, երբ նա առաջին անգամ մեքենայաբար կառչեց աշտարակների պարանին, կախվեց դրանից, որից զանգերը ղողանջեցին, նրա հոգեհայր Կլոդը այն տպավորութունն ստացավ, թե մանկան լեզուն բացվեց և սկսեց խոսել:

Այսպես ահա քիչ-քիչ, բայց շարունակաբար զարգանալով մայր եկեղեցու հովանու տակ, այդտեղ ապրելով, այդտեղ էլ քնելով, այդտեղից գրեթե երբեք դուրս չգալով, ամեն թույն ենթարկվելով նրա խորհրդավոր ճնշմանը՝ ի վերջո նմանվեց նրան, դրվագվեց նրան, այսպես ասած՝ դարձավ նրա բաղկացուցիչ մասը: Քվադրիմոդոնի ցցուն անկյունները մտնում-ագուցվում էին (թող ներվի մեր այս

Համեմատությունը) հուշարձանի ներս ընկնող անկյունների մեջ, և թվում էր, թե նա ոչ միայն դրա բնակիչն է, այլև բնական պարունակությունը: Կարելի է ասել նաև, որ նա Համարյա թե ընդունել էր նրա ձևը, ինչպես խխունջն է ընդունում իր խեցու ձևը: Դա նրա բնակարանն էր, նրա որջը, նրա կճեպը: Ծեր տաճարի և նրա միջև այնքան բնազդական ու խոր համակրանք կար, այնքան մազնիսական ձգողականություն և այնքան նյութական ձգողականություն, որ որոշ չափով նա կպել էր դրան, ինչպես կրիան՝ իր պատյանին: Խորդուբորդ մայր եկեղեցին նրա խեցեպատյանն էր:

Ավելորդ է նախազգուշացնել ընթերցողին, որ նա տառացի կերպով չընդունի այն համեմատությունները, որ մենք ստիպված ենք գործածել այստեղ՝ արտահայտելու Համար մարդու և հուշարձանի այս բացառիկ, համաչափ, անմիջական ու գրեթե համանյութ գույգի միացումը: Նմանապես ավելորդ է ասել, թե ինչ աստիճան ընտելացել էր Քվազիմոդոն ամբողջ տաճարին՝ այդքան երկար ու մտերիմ համակեցությունը: Այդ կացարանը հարմար էր նրան, չկար որևէ խորուքություն, ուր Քվազիմոդոն թափանցած չլիներ, ոչ մի բարձրություն, որ մագլցած չլիներ: Հաճախ էր պատահել, որ մագլցի տաճարի բազմաթիվ բարձրություններ ունեցող ճակատը՝ օգտվելով միայն քանդակների խորդուբորդություններից: Աշտարակները, որոնց արտաքին մակերեսի վրա հաճախ էին տեսել նրան սեպածև պատն ի վեր սողոսկող մոզեսի պես մագլցելիս, այնքան բարձր, այնքան սպառնալի ու ահարկու այդ երկու երկվորյակ հսկաները ոչ գլխապտույտ էին պատճառում նրան, ոչ սարսափ, ոչ էլ սասանեցնող ցնցում: Տեսնելով, որ այդ աշտարակները այնքան հեզ են նրա ձեռքերի տակ, այնքան հեշտ մագլցելի, կարող էիր կարծել, որ Քվազիմոդոն ընտելացրել է դրանց: Վիթխարի տաճարի վիհերի միջև ցատկատելով, մագլցելով ու խայտալով՝ նա որոշ չափով դարձել էր կապիկ ու քարայծ, ինչպես Կալարրիայի⁹⁵ երեխաներն են քայլելուց

95. Նահանգ Իտալիայի Հարափային ծայրամասում:

առաջ լողալ սովորում և ամենամատաղ տարիքից ծովի հետ են խաղում: Բացի դրանից, ոչ միայն նրա մարմինն էր կարծես թե ձևավորված ըստ մայր եկեղեցու, այլ նաև՝ հոգին: Ի՞նչ վիճակի մեջ էր նրա հոգին, ի՞նչ ծալքեր ուներ, ի՞նչ ձև էր ընդունել այդ հանգուցավոր ծրարի տակ, այդ վայրենի կյանքում: Դժվար էր որոշել: Քվազիմոդոն ծնվել էր միականի, սապատափոր, կաղ: Մեծագույն դժվարությամբ ու համբերությամբ էր կլոդ Ֆրոլոն կարողացել խոսել սովորեցնել նրան: Սակայն խեղճ ընկեցիկը կարծես չար աստղի տակ էր ծնվել, տասնչորս տարեկան հասակում դառնալով Աստվածամոր տաճարի ժամհարը՝ ենթարկվեց մի նոր դժբախտության, որը լրացրեց նրա այլանդակությունը. գանգերը պայթեցրին նրա ականջների թմբուկները, և նա խլացավ: Միակ դուռը, որ բնությունը լայն բացած էր թողել աշխարհի առաջ, հանկարծ ու ընդմիջտ փակվեց: Եվ փակվելով՝ խափանեց ուրախության ու լույսի միակ ճառագայթը, որ դեռ թափանցում էր Քվազիմոդոյի հոգու մեջ: Եվ նրա հոգին թաղվեց խոր խավարի մեջ: Թշվառ արարածի մեկամաղձությունը դարձավ անբուժելի ու կատարյալ, ինչպես նրա այլանդակությունն էր: Ավելացնենք նաև, որ այդ խլությունը որոշ չափով համրացրեց նրան, որովհետև ուրիշներին ծիծաղելու տեղիք չստյուլ համար, իր խլանալն զգալուց հետո, հաստատապես որոշեց լուռ մնալ. և խզում էր դա միայն այն ժամանակ, երբ մենակ էր: Նա կամովին կապեց այդ լեզուն, որ կլոդ Ֆրոլոն այնքան նեղություն քաշելուց հետո էր միայն բաց արել: Ահա այդ էր պատճառը, որ երբ անհրաժեշտությունն ստիպում էր խոսել, նրա լեզուն ընդարմացած էր լինում, անճկուն, ինչպես այն դուռը, որի ծխնինները ժանգոտվել են:

Եթե մենք հիմա փորձեինք այդ հաստ ու կարծր կեղևի միջով թափանցել-հասնել Քվազիմոդոյի հոգուն, եթե կարողանայինք պեղել այդ վատ կառուցված կազմվածքի խորքերը, եթե մեկ հնարավորություն տրված լիներ ջահի լույսով դիտել այդ անթափանցիկ օրգանների ետևը, հետազոտել այդ մթամած էակի խավար ներքինը,

յուսավորել նրա մութ անկյունները, անհեթեթ փակուղիները և հանկարծ ուժեղ յույս նետել այդ քարայրի խորքում շրթայված հոգու վրա, ապա, անկասկած, մենք այդ դժբախտ հոգին կգտնենք խղճալի, ծյուրած ու ծռմոված վիճակում, ինչպես Վենետիկի Կապարածածկ բանտի կալանավորները, որոնք ծերանում են խիստ ցած ու կարճ քարե արկղի մեջ երկտակ ծալված:

Կասկած չկա, որ ոչին ծյուրում է անկատար մարմնի մեջ: Քվաղիմոզոն հազիվ էր զգում, որ իր ներսում կուրորեն շարժվում է իր պատկերին հար և նման հոգին: Առարկաներից ստացած նրա տպավորությունները, մտքին հասնելուց առաջ, ենթարկվում էին զգալի բեկման: Նրա ուղեղը առանձնահատուկ միջավայր էր, այդտեղ մտնող բոլոր մտքերը դուրս էին գալիս բոլորովին ազավաղված: Այդ բեկմանը ենթարկված մտածողությունը, բնականաբար, անկանոն էր ու խտտոր:

Դրանից էլ առաջանում էին տեսողական հազարավոր պատրանքներ, դատողության հազարավոր մոլորումներ, հազարավոր շեղումներ, որոնց մեջ խարխափում էր նրա միաքը՝ մերթ խենթ, մերթ ապուշ:

Այդ չարաղետ մտավիճակի առաջին արդյունքն այն էր, որ նա հստակ հայացք չէր կարող նետել իրերի վրա: Նա համարյա թե ոչ մի անմիջական ըմբռնում չէր ընկալում դրանցից: Արտաքին աշխարհը շատ ավելի հեռու էր թվում նրան, քան թե մեզ:

Նրա դժբախտության երկրորդ արդյունքն այն էր, որ նա չարացավ: Իրոք որ նա չար էր, որովհետև վայրենի էր, իսկ վայրենի էր նրա համար, որ տգեղ էր: Նրա խառնվածքի մեջ տրամաբանություն կար, ինչպես կա մերի մեջ:

Այնքան արտակարգ զարգացած նրա ուժը նմանապես նպաստում էր չար լինելուն: *Malus puer robustus*⁶⁶, — ասում է Հոբսը:

Բայց և այնպես, արդարության դեմ չմեղանչելու համար սսենք, որ չարությունը գուցե և բնածին չէր նրան: Մարդկանց մեջ

կատարած առաջին իսկ քայլերից զգացել, հետո էլ տեսել էր. որ անպատվում են իրեն, նշավակում ու վանում: Մարդկային խոսքը նրա համար միշտ էլ ծաղր էր կամ անեծք: Մեծանալով՝ միայն ատելություն էր գտել իր շուրջը: Եվ ընկալել էր դա: Նա գրավել էր ընդհանուր չարությունը: Եվ վերցրել էր այն գեները, որով վիրավորել էին իրեն:

Այդ բոլորից հետո նա ցավով էր միայն իր դեմքը դարձնում զեպի մարդիկ: Բավականանում էր միայն տաճարով, որտեղ մտրմարե շատ մարդիկ կային՝ թագավորներ, սրբեր, եպիսկոպոսներ, որոնք գոնե չէին քրքջում նրա երեսին և նայում էին նրան խաղաղ ու բարյացակամ հայացքով: Մյուս հրեյների ու դեերի արձանները ատելություն չէին տաժում նրա՝ Քվազիմոդոյի հանդեպ, քանի որ ինքն էլ շատ էր նման նրանց: Նրանք ավելի շուտ ծաղրում էին մյուս մարդկանց: Սրբերը Քվազիմոդոյի բարեկամներն էին և որհնում էին նրան, հրեյներն էլ նրա բարեկամներն էին և պահպանում էին նրան: Ուստի և երկարատև զեղումներ էր ունենում նրանց հետ: Որևէ արձանի առաջ պզգած՝ երբեմն ժամերով խոսում էր միայնակ նրա հետ: Եթե մեկը ներս մտներ, նա փախչում էր սերինազ երգելիս հանկարծակիի բերված սիրահարի պես:

Եվ մայր եկեղեցին ոչ միայն նրա համար հասարակություն էր, այլև տիեզերք, այլև բովանդակ բնությունը: Նա պատին հենված այլ ծառաշար չէր երազում, բացի մշտափթիթ գունազարդ ապակափեղկերից, այլ սաղարթաստվեր, բացի այն քարեղեն տերևափնջերից, որ փթթում ու թռչնիկներով բռնավորվում են սաքսոնյան խոյակների թավուտի մեջ, այլ լեռներ, բացի եկեղեցու վիթխարի աշտարակներից, այլ օվկիանոս, բացի դրանց ստորոտում ժխոր արձակող Փարիզից:

Այն, ինչ նա ամենից ավելի էր սիրում մայրենի կոթողի մեջ. ինչ զարթեցնում էր նրա հոգին և բանալ էր տալիս նրա խղճուկ թևերը, որ այնքան խղճալի ձևով ծալած էր պահում տաճարն իր քարայրում, ինչ նրան երբեմն երջանկացնում էր, զանգերն էին: Քվազիմոդոն

սիրում էր այդ զանգերը, շոյում էր, խոսում հետները և հասկանում նրանց: Ակսած եկեղեցու խաչաթևի վրա բարձրացող սրածայր գմբեթի փոքր զանգափնջից մինչև ավագ դռան մեծ զանգը՝ բոլորն էլ քնքշագին սիրում էր: Խաչաթևի զանգակատունն ու երկու աշտարակները նրա համար ասես երեք խոշոր վանդակ լինեին, որոնց թռչունները, իր ձեռքով արթնացած, միայն իր համար էին երգում: Բայց և այնպես, այդ զանգերն էլ խլացրել էին նրան, սակայն մայրերը հաճախ ամենից ավելի այն զավակին են սիրում, որն ամենից ավելի է տառապեցրել իրենց:

Ծիչտ է նաև, որ դրանց ձայնը միակն էր, որ նա դեռ կարողանում էր լսել: Այդ իմաստով՝ ամենից ավելի մեծ զանգն էր սիրում: Դրան էր գերադասում այդ աղմկարար աղջիկների ընտանիքից, որոնք խլրտում էին նրա շուրջը տոնական օրերին: Այդ խոշոր զանգը կոչվում էր Մարիամ. դա միակն էր հարավային աշտարակում իր քրոջ՝ Ժակլինի հետ, որ ավելի փոքրահասակ զանգ էր և ավելի փոքր վանդակի մեջ էր արգելափակված՝ առաջինի կողքին: Այդ մեկը Ժակլին էր կոչվում Ժակ Մոնտեգյուի կնոջ անունով, որովհետև Ժակն էր նվիրել եկեղեցուն: Բայց դա չէր խանգարել, որ Ժակը հետո երևա Մոնֆոկոնում, առանց գլխի: Երկրորդ աշտարակում կար ուրիշ վեց զանգ և վերջապես՝ վեց ուրիշ փոքրն էլ բնակվում էին խաչաթևի զանգակատանը՝ փայտե կոչնակի հետ, որը հնչեցնում էին միայն ավագ հինգշաբթի, միջօրեից հետո, մինչև Զատիկի առավոտյան նախօրյակը: Այսպիսով, Քվադրիմոդոն տասնհինգ զանգ ուներ իր կանանոցում, սակայն նախասիրյալը խոշոր Մարիամն էր:

Նեչտ չէ պատկերացնել նրա հրճվանքը մեծ զոզանջի օրերին: Այն բոսպին, երբ ավագ սարկավազը արձակում էր նրան ու ասում՝ գնացե՛ք, նա զանգակատան պտուտակաձև սանդուղքն ավելի արագ էր բարձրանում, քան մի ուրիշը կիջներ: Ծնչակտուր մտնում էր նա մեծ զանգի օդային սենյակը, մի պահ զննում էր նրան սիրով ու ինքնամոտի, ապա կամացուկ խոսքն ուղղում էր նրան, ձեռքով

փաղաքշում, ինչպես երկար ճանապարհ կտրելու՝ պատրաստ լավ ձիուն: Խղճում էր նրան այն նեղության համար, որ կրելու էր շուտով: Այդ առաջին փաղաքշանքներից հետո ձայն էր տալիս աշտարակի ստորին հարկում գտնվող իր օգնականներին՝ սկսել: Սրանք կախվում էին պարաններից, պտուտանիվը ճռնչում էր և մետաղե հսկայական թաղարը դանդաղ շարժվում: Քվազիմոդոն հայացքով հետևում էր դրանք և նրա սիրտը տրոփում էր:

Ջանգի լեզվակը առաջին անգամ թուջե կողերին զարնվելուց ցնցվում էր այն փայտակերտը, որի վրա հաստատված էր: Քվազիմոդոն էլ թրթռում էր զանգի հետ:— Վա՛յ,— գոչում էր նա խելահեղորեն ծիծաղելով: Այդ միջոցին գլխավոր զանգի շարժումն արագանում էր և որքան ավելանում էր նրա գծած անկյան բացվածքը, այնքան ավելի լայն, ֆոսֆորափայլ ու բոցաշող էր դառնում Քվազիմոդոյի աչքը:

Վերջապես սկսվում էր մեծ զանգահարությունը, ցնցվում էր ամբողջ աշտարակը, փայտակերտները, արճճե թիթեղները, սրբատաշ քարերը՝ ամեն ինչ ճռնչում էր միանգամից, սկսած հիմքի ցցերից մինչև ծածկի անկյունները գարդարող երեքնուկաձև զարդերը: Այն ժամանակ Քվազիմոդոյի եռալը հասնում էր սաստիկ փրփրակալման, նա վազում էր այս ու այն կողմ, ոտից գլուխ դողդողում աշտարակի հետ: Շղթայագերծ ու մոլեգնած զանդը իր բրոնդե երախն էր փոխն ի փոխ դարձնում դեպի աշտարակի մերթ այս, մերթ այն պատի բացվածքը, որտեղից դուրս էր ժայթքում այն փոթորկային շունչը, որ լսում էին չորս լիոյից: Քվազիմոդոն կանգնում էր այդ բաց երախի առաջ և ըստ զանգի երթ ու դարձին՝ պպում էր, վեր կենում, շնչում այդ տապալող հեքը, դիտում՝ մերթ իրենից երկու հարյուր ոտնաչափ ցած գտնվող խոր հրապարակն այնտեղ վիտացող բազմությամբ, մերթ էլ՝ պղնձե հսկայական լեղվակը, որ վայրկյան առ վայրկյան գալիս էր ոռնալու նրա ականջին: Միայն դա էր լսում նա, միայն այդ զնգոցն էր, որ նրա համար խախտում էր տիեզերական

յոսթիոնը: Այդտեղ էր նա հրճվում, ինչպես թռչունն արևի տակ: Եվ հանկարծ գանգի խելահեղությունը վարակում էր նրան, հայացքը դառնում էր արտասովոր, սպասում էր նրա մոտենալուն, ինչպես սարդն է սպասում ճանճին, և ընդոստ ու խելակորույս նետվում էր նրա վրա: Եվ ահա կախված վիճի վրա, գանգի ահեղ ճոճումից տարուրերվելով՝ Քվազիմոգոն բռնում էր հրեշի ականջ-կանթերը, ծնկներով սեղմ գրկում նրան, գույգ կրունկներով խթանում և ամբողջ բախումով ու իր մարմնի ամբողջ ծանրությունը կրկնապատկում զուղանջի մոլեգնությունը:

Այդ միջոցին ցնյվում էր աշտարակը, իսկ Քվազիմոգոն գոռում էր ու կրճտում աստամները, նրա շեկ մազերը փշաքաղվում էին, կուրծքը գայրնայի փուքսի հեք էր արձակում, աչքը բոցեր էր ժայթքում, և հրեշալիոր գանգը շնչակտուր վրնջում էր նրա տակ: Եվ այն ժամանակ էլ ո՛չ Աստվածամոր տաճարի մայր գանգ կար, ո՛չ էլ Քվազիմոգոն. այլ կար երազասպասկեր, հողմապտույտ, մրրիկ, աղմուկին հեծած գլխասլույտ, սուրացող գավակին հեծած ոգի, մի տարօրինակ կենտուվրոս⁹⁷ կեսը մարդ, կեսը գանգ, մի տեսակ զարհուրելի Աստուֆ⁹⁸, որ սլանում է կենդանի, բրնձի, թեկավոր հրաշք-ձիու վրա:

Այդ տարօրինակ էակի ներկայությունը ամբողջ մայր եկեղեցու մեջ պտտեցնում էր կյանքի ինչ-որ շունչ: Թվում էր, թե նրանից հաւնում է (համենայն դեպս, այդպես էին ասում ամբոխի հարածուն սնահավատությունները) ինչ-որ խորհրդավոր գոլորշի, շունչ տալիս Աստվածամոր տաճարի բոլոր քարերին և տրոփում հինավուրց եկեղեցու խոր ընդերքները: Բավական էր, որ իմանային, թե այդտեղ է նա, որպեսզի

97. Ըստ հունական դիցաբանության՝ վայրենի մարդկանց մի ցեղ էր դա Թեսալիայում: Պիրթոս արքայի հարսանիքին ասպատակելու եկան և կատապի կովից հետո բնաջնջվեցին: Հետագայում կենտուվրոս կոչվեցին կես մարդ, կես ձի երևակայական էակները:

98. Անգլիական առասպելական իշխան, հայտնի է իր թուվուհուց նվեր ստացած իր գալարափողով, որի սուր, ծակող ու ահավոր ձայնին ոչ մի մահկանացու չէր կարող դիմանալ:

Հավատային, թե տեսնում են վերնասրահների ու ավազ դռների հազարավոր արձանների շարժվելը: Եվ ճիշտ որ. մայր եկեղեցին կարծես թե մի հյու-հնազանդ արարած լիներ նրա ձևաքի տակ. նրա կամքին էր սպասում իր հաստ ձայնը բարձրացնելու համար, դյուխված ու լցված էր Քվադրիմոդոյով, ինչպես րնտանի ոգով: Կարծես թե նա շունչ էր տալիս վիթխարի Հուշարձանին: Արդարև, այդտեղ էլ նա, կարծես թե բազմապատկվելով լինում էր տաճարի բոլոր կետերում: Երբեմն մարդիկ սարսափով էին որևէ աշտարակի ամենարարձր կետում նշմարում մի արտառոց թզուկի, որ չորեքթաթ մազլցում, օձագալար սողում էր ու վեր բարձրանում, դրսից իջնում էր անգուենդի վրա, ելուստից ելուստ ցատկում ու փոփոբում-պեղում որևէ քանդակակիրտ գորգոնայի⁹⁹ ներսը. Քվադրիմոդոն էր դա, որ քանդում-ավերում էր ագռավների բույներ: Երբեմն էլ եկեղեցու որևէ իսավար անկյունում մարդիկ բախվում էին մի տեսակ կենդանի, պպղած ու խոժոռադեմ քիմիրայի. Քվադրիմոդոն էր դա, որ միտք էր անում: Երբեմն էլ որևէ մի զանգի տակ նշմարում էին մի հսկայական գյուխ և այլսնդակ անդամների ինչ-որ կապոց՝ պարանի ծայրից մոլեզնորեն ճոճվելիս. Քվադրիմոդոն էր, որ հկեսցէի կամ հրեշտակ տյառնի ժամերգության զանդն էր հնչեցնում: Գիշերը հաճախ տեսնում էին, թե ինչպես զզվելի մի արարած թափառում է աշտարակները պսակող և խորանի տանիքի շրջապատը ելերող ժանյակի նման կտրասված նուրբ ճաղերի վրա. դա էլ Աստվածամոր տաճարի սապատսավորն էր:

Այն ժամանակ, ինչպես հարևաններն էին ասում, եկեղեցին ինչ-որ ֆանտաստիկ, գերրնական, զարհուրելի տեսք էր ընդունում. այս ու այնտեղ բացվում էին աչքեր ու բերաններ, լսվում էր քարեղեն շների հաչոց, առասպելական օձերի ֆշչոց, հրեշների մոնչյուն.

99. Փարիզի Աստվածամոր տաճարի քիվիրին կան բազմաթիվ քիմերաների արձաններ, որոնցից են և գորգոնաները: Ըստ հունական դիցաբանության՝ դրանք երեք քույրեր էին՝ զարհուրելի տեսքով և իրենց նայողներին կարող էին քար դարձնել:

ւրոնք վիզը պարզած ու երախաբաց՝ հսկում էին գիշեր-ցերեկ սհազին տաճարի շուրջը: Եվ եթե Մննդյան տոնի գիշերն էր, երբ լարժես թե ձայնը խուպտած մեծ զանգը հավատացյալներին լանչում էր կեսգիշերվա լուսավառ պատարագին, տաճարի մուայլ նակատն այնպիսի տեսք ուներ, որ թվում էր, թե ավագ դուռը լա-
հում է բազմությունը, վարդաքանդակն էլ դիտում է նրան: Եվ այդ սմենը գալիս էր Քվազիմոդոյից: Եգիպտոսը կրնդուններ նրան որպես սյդ տաճարի Աստված, միջնադարը համարում էր նրան դրա դեւ-
հինչդեռ նա եկեղեցու հոգին էր:

Այն աստիճան նրա հոգին էր, որ նրանք, որոնք գիտեն, թե Քվա-
չիմոդոն գոյություն է ունեցել, Աստվածամոր տաճարը այսօր թվում է նրանց ամայի, անշունչ ու մեռած: Զգում են, որ ինչ-որ բան անհե-
ռացել է: Այդ հսկայական մարմինը դատարկ է. կմախք է նա, հոգին
հեկնել է այնտեղից, երևում է միայն նրա տեղը և ուրիշ ոչինչ: Դա
նման է զանգի, որի վրա ակնախոռոչներ կան, բայց չկա այլևս
հայացքը:

IV

ՇՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՏԵՐԸ

Այնուամենայնիվ, կար մի մարդկային էակ, որին Քվազիմոդոն
աացառում էր մյուսների հանդեպ տաժած չարությունից ու ատելու-
թյունից, և որին սիրում էր նույնքան, գուցե և ավելի, քան իր եկե-
ղեցին. դա Կլոդ Ֆրոլոն էր:

Շատ պարզ էր դրա պատճառը: Կլոդ Ֆրոլոն ընկալել էր նրան,
որդեգրել, սնուցել ու դաստիարակել: Փոքր հասակում նա սովորու-
թյուն ուներ ապաստանել Կլոդ Ֆրոլոյի սրունքների մեջ, երբ շները
հաչելով ու երեխաները աղմկելով ընկնում էին նրա ետևից: Կլոդ

Ճրոլոն խոսել, կարգալ ու գրել էր սովորեցրել նրան: Վերջապես, Կլոդ Ճրոլոն դարձրել էր նրան ժամհար: Հետևաբար, մեծ զանգը Քվազիմոդոյին կնուլթյան տայ, նշանակում էր Զուլիետին տայ Ռոմեոյին:

Ուստի և Քվազիմոդոյի երախտագիտությունը խոր էր, կրքոտ ու անսահման, և չնայած այն բանին, որ նրա հոգեհոր դեմքը հաճախ էր մռայլ ու խիստ լինում, նրա խոսքը՝ սովորաբար կարճ, անհամբույր ու հրամայական, այնուամենայնիվ, այդ երախտագիտությունը ոչ մի վայրկյան չէր փոխվում: Ավագ սարկավագը Հանձին Քվազիմոդոյի ունեւր ամենախոնարհ ստրուկը, ամենահնազանդ ծառան, ամենաարթուն շունը: Թշվառ ժամհարի խլանալուց հետո, նրա և Կլոդ Ճրոլոյի միջև հաստատվել էր նշանների լեզուն՝ խորհրդավոր և նրանց միայն հասկանալի: Այսպիսով, սարկավագապետը միակ մարդկային արարածն էր, որի հետ Քվազիմոդոն շարունակում էր հաղորդակցել: Այս աշխարհում նա հարաբերություն ուներ երկու բանի՝ Աստվածամոր տաճարի և Կլոդ Ճրոլոյի հետ:

Ոչ մի բան չէր կարող համեմատվել սարկավագապետի ժամհարի վրա ունեցած իշխանության և ժամհարի սարկավագապետի հանդեպ տածած անձնվեր մտերմության հետ: Բավական էր, որ Կլոդը մի նշան անի և նրան հաճույք պատճառելու մտադրություն ցույց տա, որպեսզի Քվազիմոդոն Աստվածամոր տաճարի աշտարակներից նետվի ցած: Զարմանալի բան էր, թե ինչպես այդ ամբողջ ֆիզիկական ուժը, որ արտակարգ զարգացման էր հասել Քվազիմոդոյի մեջ, կուրորեն դրված էր մի ուրիշի արամադրության տակ: Այդտեղ անշուշտ կար և՛ որդիական անձնվիրություն, և՛ ծառայական հավատարմություն, բայց կար նաև մի մաքի դյուլթվելը մի ուրիշ մաքի կողմից: Դա մի ողորմելի, ձախողակ և անճկուն մտակառուցվածք էր, որ գլուխը կախում և աղերսագին հայացք էր ընդունում բարձր ու խոր, հզոր ու գերադաս իմացության առջև: Վերջապես, ամենից ավելի դրա մեջ կար և՛ երախտագիտություն, այն աստիճան ծայրագույն

երախտագիտութիւն, որ մենք չենք կարող որևէ բանի հետ համեմատել: Դա այն առաքինութիւններից չէ, որոնց լավագուշն օրինակները կարելի լինի մարդկանց մեջ գտնել: Ուստի և մենք կասենք, որ Քվադրիմոդոն այնպես էր սիրում սարկավագապետին, ինչպես երբեք չունը, ձին ու փիղը չեն սիրել իրենց տիրոջը:

V

ԿԼՈԴ ՅՐՈՂՈՅԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1482 թվականին Քվադրիմոդոն մոտավորապես քսան տարեկան էր, իսկ Կլոդ Յրոլոն՝ մոտավորապես երեսունվեց: Մեկը մեծացել էր, մյուսը ծերանում էր:

Կլոդ Յրոլոն այլևս Տորչիի դպրանոցի պարզ ճեմարանականը չէր, ոչ էլ մի փոքր երևիայի գործագութ հովանավորը և երիտասարդ ու երազող փիլիսոփան, որ շատ բան գիտեր և շատ բան էլ անգիտանում էր: Դա մի խստակրոն, ծանրախոհ, մռայլ քահանա էր, հոգինների փոխանորդ, Ժողայի պարոն սարկավագապետ, եպիսկոպոսի երկրորդ ջահընկալը, որ իր ուսերի վրա ուներ Մոնլերիի և Շատոֆորի երկու կարգերիցութիւնների, ինչպես նաև գյուղական հարյուր յոթանասունչորս ծխերի կառավարումը: Պատկառելի և մռայլ անձնավորութիւն էր նա, որի առաջ դողում էին երգեցիկ դասի շապիկավոր ու բաճկոնավոր տղաները, տիրացուները, Սուրբ Օգոստինոսի միաբանները, Աստվածամոր տաճարի առավոտյան դպիրները, երբ նա գանդաղաքայլ անցնում էր դասի բարձր կամարսկապի տակից՝ սիգաճեմ, մտածկոտ, թևերը խաչաձևած և գլուխն այնքան կրծքին հակած, որ ամբողջ դեմքից երևում էր միայն լայն, ճաղատ ճակատը:

Սակայն տեր Կլոդ Յրոլոն չէր հրաժարվել ո՛չ գիտութիւնից, ո՛չ էլ իր փոքր եղբոր կրթութիւնը հետևելուց՝ իր կյանքի երկու

գլխավոր զրադմուռներին: Բայց ժամանակի ընթացքում ինչ-որ դառնություն էր խառնվել այնքան քաղցր այդ զրադմուռներին: Լավագույն խոզածարպն էլ շատ մնալուց կծվում է.— ասում է Պոլ Դիակրը: Փոքրիկ Ժեհան Ֆրոլոն, մականվանյալ դյու Մուլեն (Ջրաղաց-պան) այն վայրի պատճառով, որտեղ խնամվել էր, չէր մեծացել այն ուղղությամբ, ինչ կլողն էր ցանկացել: Ավագ եղբայրը հուսացել էր տեսնել աստվածավախ, հնազանդ, լրջմիտ ու պատվարժան աշակերտ: Մինչդեռ փոքր եղբայրը, ինչպես այգեպանի ջանքերն ի դերև հանող մատղաշ ծառերը, որոնք համառորեն աճում են օդ ու արև եկող կողմից, աճում ու փարթամանում և խիտ ու փայլուն գեղեցիկ ճյուղեր էր արձակում միայն ծուլության, տգիտության ու անառակության կողմից: Իսկական դե էր նա, չափազանց անկարգ, որից տեր կլողը խոժոռում էր հոնքերը, բայց և վերին աստիճանի ծիծաղաշարժ ու ճարպիկ էր, որի համար մեծ եղբայրը ժպտում էր:

Կլողը տվել էր նրան այն նույն Տորչիի դպրանոցը, որտեղ ինքը անց էր կացրել ուսումնառության և ինքնամիտի խորհրդածության առաջին տարիները: Նա սաստիկ վշտանում էր, որ մի ժամանակ Ֆրոլոն ազգանունը իբրև տիպար ներկայացնող այդ սրբարանն այժմ խայտառակվում էր նրանից: Դրա համար նա երբեմն չափազանց խիստ ու չափազանց երկար քարոզներ էր կարդում Ժեհանի գլխին, որ անվեհեր կերպով լսում էր: Վերջիվերջո, պատանի ստահակը բարի սիրտ ուներ, ինչպես տեսնում ենք բոլոր կասակերգությունների մեջ: Սակայն քարոզը լսելուց հետո նույն անխոփությամբ վերսկսում էր իր գայթակցելի ու խայտառակ արարքների ընթացքը: Մերթ ջարդում էր որևէ «դեղնակտուցի» (այսպես էին անվանում Համալսարանը նոր ընդունվածներին) ի նշան բարի գալուստի. թանկարժեք ավանդույթ, որ խնամքով պահվել ու հասել է մինչև մեր օրերը: Մերթ գրգռում էր ճեմարանականների որևէ բանդայի, սրանք էլ դասականորեն՝ *quasi classico excitati*¹⁰⁰, հարձակվում էին

100. Համարյա չեփորահարությամբ գրգռված (լատ.):

գինետուն-ճաշարանի վրա, հետո ծեծում էին գինետան տիրոջը սրա-
վարժության փայտե թրերով և ուրախ-զվարթ կողոպտում գինետու-
նը, մինչև նկուղի գինու տակառները ծակելը: Եվ կամ թե մի գեղե-
ցիկ լատիներեն գեկուցագիր, որ Տորչիի դպրանոցի փոխդաստիարա-
կը ողբալի տեսքով ներկայացնում էր տեր Կլոդին հետևյալ վշտալի
դիտողությունը լուսանցքի վրա՝ *Rixa; prima causa vinum optimum*
*potatum*¹⁰¹: Եվ վերջապես, ասում էին (տասնվեց տարեկան պատանու
համար զարհուրելի արարք), որ նրա սանձարձակությունները շատ
անգամ հասնում էին Գլատինյի փողոցը:

Այս բուլդոզի պատճառով Կլոդը տխրած և իր մարդասիրական
զգացմունքներից հուսահատված՝ ավելի մեծ հափշտակություններ
նետվել էր դիտություն՝ այդ քրոջ գիրկը, որը գոնե չի ծիծաղում ձեր
քթին և միշտ հատուցում է ձեզ, թեև երբեմն մի քիչ մաշված դրա-
մով, այն հոգատարության համար, որ տաժեղ եք նրան: Այսպիսով,
նա հետզհետե ավելի գիտնական էր դառնում, միաժամանակ և, իբրև
բնական հետևանք, հետզհետե ավելի խիստ՝ որպես քահանա, և ավե-
լի տխուր՝ որպես մարդ: Մեզնից յուրաքանչյուրի համար որոշ գու-
գահեռականություն կա մեր իմացականության, մեր բարքերի ու
բնավորության միջև, որոնք զարգանում են առանց ընդհատվելու և
խզվում են միայն կյանքի մեծ հեղաշրջումների ժամանակ:

Քանի որ Կլոդ Ֆրոլոն պատանեկությունից արդեն ծանոթացել էր
մարդկային դրական, հայտնի և թույլատրված գիտելիքների համար-
յա թե ամբողջ շրջանակին, ապա ստիպված էր կանգ առնել կամ *ubi*
desiit orbis-ի¹⁰² վրա, կամ ավելի առաջ գնալ և իր ուշիմ մտքի ան-
հազ գործունեության համար այլ սնունդներ փնտրել:

Իր սեփական պոչը կծող օձի հնադարյան սիմվոլը ամենից ավե-
լի գիտությունն է հարմար գալիս: Ինչպես երևում է՝ Կլոդ Ֆրոլոն
զգացել էր դա: Բազմաթիվ ծանրակշիռ մարդիկ հավաստում էին, որ

101. Տուրուզմից. առաջին պատճառը՝ լավ խմված գինին (լատ.):

102. Որտեղ փակվում է աշխարհը (լատ.):

նա մարդկանց իմացության *fas*-ն¹⁰³ սպառելուց հետո, համարձակվել էր թափանցել *nefas*-ի¹⁰⁴ մեջ: Ասում էին, որ նա իրար ետևից համտես է արել իմացության ծառի բոլոր ինձորները և քաղցից թե զգվանքից մղված՝ ի վերջո կրծել էր արգելված պտուղը: Ինչպես մեր ընթերցողները տեսան, նա մասնուկցել էր մերթ աստվածաբանների խորհրդակցությանը Սորբոնում, փիլիսոփայության ու դպրությունների գիտնականների ժողովներին Սենտ-Հիլերում, պապական կոնգակները մեկնաբանող վարդապետների դիսպուտներին Սեն-Մարտենում, բժիշկների ժողովներին Աստվածամոր տաճարի օրհնած ջրի սրահում՝ *ad cupa Nostrae-Dominae*: Նա կերել-լափել էր բոլոր թուլլատրված ու հանձնարարված կերակուրները, որ չորս ֆակուլտետներ կոչվող այդ չորս իոհանոցները կարող էին պատրաստել ու մատուցել ուշիմությանը, և հագնեցել էր ավելի շուտ, քան թե քաղցը կմեղմանար: Այնուհետև նա վարեց ու անցավ առաջ, իջավ ավելի խոր, այդ ամբողջ վերջացած, նյութական ու սահմանափակ գիտության տակուտակը և թերևս վտանգելով իր հոգին՝ նստեց քարանձավում, ալքիմիկոսների, աստղագուշակների և փիլիսոփայական քարը փնտրողների այն խորհրդավոր սեղանի առաջ, որի սկզբնավորողները միջնադարում Ավերոնսը, Գիյոմ Փարիզցին ու Նիկոլա Ֆլամելն էին, և որը Արևելքում, յոթհյուղյա աշտանակի լույսի ներքո, հասնում է Սողոմոնին, Պյութագորասին ու Զրուգաշտին:

Իրավացի թե անիրավ, համենայն դեպս՝ այսպես էին ենթադրում:

Աներկբա է, որ սարկավապապետը հաճախ էր այցելում Սուրբ Անմեղների գերեզմանոցը, որտեղ, ճիշտ է, թաղված էին նրա հայրն ու մայրը 1466 թվականի ժանտախտի մյուս զոհերի հետ, սակայն շատ ավելի քիչ բարեպաշտ էր երևում նրանց շիրմի խաչի, քան թե այն տարօրինակ կերպարանքների նկատմամբ, որոնցով ծածկված էր հենց կողքին գտնվող Նիկոլա Ֆլամելի և կողմ Պերնելի¹⁰⁵ շիրմը:

103. Թուլլատրված (լատ.):

104. Անթուլլատրելի (լատ.):

105. Նիկոլա Ֆլամելի կինը:

Կասկած չկա, որ նրան Հաճախ էին տեսնում Լոմբարդացիների փողոցը կտրելով՝ Գրողների ու Սարիվոյի փողոցների անկյունում գտնվող մի փոքրիկ տուն գաղտնագողի մտնելիս: Այդ այն տունն էր, որ շինել էր Նիկոլա Ֆլամելը և որտեղ էլ մեռել՝ մոտ 1417 թվականին, իսկ դրանից հետո միշտ անբնական մնալով՝ սկսում էր ավերակի վերածվել, այնքան, որ բոլոր երկրների ալքիմիկոսներն ու փուլքս փչողները մաշել էին նրա պատերը՝ թեկուզ միայն իրենց անուններն այդտեղ փորագրելու համար: Մի քանի հարեան պնդում էին նույնիսկ, որ մի անգամ օդանցքից տեսել են, թե ինչպես սարկավագապետ Կլոդը բահով փորփրում էր այն երկու նկուղիների հողը, որոնց քարաշեն նեցուկներն ամբողջովին խզրզված էին անհամար ոտանավորներով ու ծածկագրերով՝ Հենց Նիկոլա Ֆլամելի ձեռքով: Ենթադրում էին, որ Ֆլամելն այդ նկուղիներում էր թաղել փիլիսոփայական քարը, և ալքիմիկոսները երկու դար շարունակ, Մաժիստրիից սկսած մինչև հայր Պասիֆիկո չարչարել էին այդ հողը մինչև այն օրը, երբ այնքան դաժանորեն փորփրված ու տակնուվրա արված տունը նրանց ոտքերի տակ վերջապես փոշիացավ:

Աներկբա է նաև, որ սարկավագապետը սկսել էր արտակարգ սեր ցուցաբերել Աստվածամոր տաճարի սիմվոլաքանդակ ավագ դռան՝ այդ կախարդական քարատառ էջի հանդեպ, որ փորագրել էր Գիյոմ Եպիսկոպոս Փարիզցին և անկասկած գեհենի էր դատապարտվել՝ այդպիսի դժոխային նախերգանք ավելացնելով այն սրբազան պոեմին, որ մշտնջենապես երգում է հուշարձանի մնացած մասը: Սարկավագապետ Կլոդին վերագրում էին նաև այն, որ խորապես զննելուսումնասիրել էր Կուրբ Քրիստափորի այն երկար, վիթխարի ու հանելուկային արձանը, որ այդ դարաշրջանում ցցված էր գավթի մուտքի մոտ և որին ժողովուրդն անվանում էր Գորշ պարոն: Բայց այն, ինչ ամեն ոք կարող էր անձամբ տեսնել, այդ այն անվախճան ժամերն էին, որ անց էր կացնում նա Հաճախ գավթի պատվարի վրա նստած և զննում էր ավագ դռան քանդակները, ուսումնասիրում մերթ

Հիմար կույսերին՝ իրենց շրջված ճրագներով, մերթ էլ իմաստուն կույսերին՝ իրենց ուղիղ ճրագներով, երբեմն էլ հաշվում էր այն ազուպի հայացքի անկյունը, որ ձախակողմյան ավագ դռան վրա է քանդակված և նայում է եկեղեցու ներսի ինչ-որ խորհրդավոր կեսի, որտեղ, անկասկած, թաքցված է փիլիսոփայական քարը, եթե իհարկե Նիկոլա Ֆլամելի նկուղում չէ:

Այստեղ անցողակի կերպով ասենք, որ Աստվածամոր տաճարի համար բացառիկ բախտ էր այդ դարում՝ սիրվել այդպես երկու տարբեր ձևով և այնքան երկյուղածությամբ, իրար ամենևին չնմանող երկու հակնների՝ Կլոդի ու Քվազիմոդոյի կողմից: Մեկը՝ մի տեսակ բնազդական ու վայրենի կիսամարդ՝ սիրում էր եկեղեցին իր գեղեցկության, բարեկերտության ու այն ներդաշնակության համար, որ հառնում էր նրա սքանչելի ամբողջությունից: Մյուսը՝ պիտական ու վառ երևակայության տեր քահանան նրա նշանակության, նրա շուրջը հյուսված առասպելաբանությունների, պարունակած իմաստի, ճակատի քանդակների տակ սփռված խորհրդանշանների համար, որպես առաջին տեքստ՝ մագաղաթի երկրորդ տեքստի¹⁰⁶ տակ, մի խոսքով՝ այն առեղծվածի համար, որ հավերժորեն առաջադրում է նա մեր իմացությանը:

Վերջապես, կասկածից դուրս է, որ սարկավագապետը հարմարեցրել էր իրեն երկու աշտարակներից այն մեկի մեջ, որը նայում է Գրեկի հրապարակին, զանգակների վանդակի կողքին, մի փոքրիկ, չափազանց գաղտնի խցիկ, ուր ոչ ոք չէր մտնում, նույնիսկ եպիսկոպոսը, ինչպես ասում էին, առանց նրա թույլտվության: Այդ խցիկը, որ գտնվում է համարյա թե աշտարակի ծայրին, ազուպների բնների արանքում, ժամանակին շինել էր տվել եպիսկոպոս Հյուգո Բրզանսոնցին¹⁰⁷, կախարդությամբ զբաղվելով այդտեղ: Ոչ ոք

106. Տպագրությունից և թղթի գյուտից առաջ Հաճախ, մագաղաթի թանկության պատճառով, գրված տեքստը ջնջում ու նորն էին գրում: Դա կոչվում էր պալիմփսեստ:

107. Hugo II de Bisucio, 1326-1332: Մեթ. Հեղինակի:

չգիտեր, թե ինչ է պարունակում այդ խցիկը, բայց Տերրենի առափնյա ավազուտից հաճախ էին տեսել, թե ինչպես գիշերը, աշտարակի ետևի կողմում եղած նրա փոքրիկ լուսանցույցում կարճ ու հավասար ընդմիջումներով երևում, անհետանում ու նորից էր երևում ինչ-որ կարմիր, ընդհատ-ընդհատ ու տարօրինակ լույս, որ կարծես հետևում էր փուքսի հևասպառ շնչառությանը և ավելի շուտ գալիս էր բոցից, քան թե լապտերից: Խավարում և այդպիսի բարձրության վրա բացառիկ տպավորություն էլ գործում դա, և բարի կանայք ասում էին.— Տեսե՛ք, սարկավագապետը փչո՛ւմ է, դժո՛խքն է ճարճատում այնտեղ:

Վերջիվերջո, այդ բոլորի մեջ կախարդության ցայտուն ապացույց չկար, բայց և այնպես, այդքան ծուլան էլ բավական էր ենթադրելու համար, որ տակը կրակ կա, ուստի և սարկավագապետը բավական ահեղ հուշակ էր ձեռք բերել: Այնուամենայնիվ, մենք պետք է նկատենք, որ Եգիպտոսի բոլոր գիտությունները, մեռելահամայությունը, կախարդությունը, նույնիսկ ամենաանմեղը՝ բնական կախարդությունը, ավելի կատաղի թշնամի, Աստվածամոր տաճարի ատյանի պարոնների առաջ ավելի անգուլթ կերպով մերկացումներ անող չունեին, ինչպես սարկավագապետը: Լիներ դա անկեղծ սարսափ կամ «հասե՛ք, գող կա» աղաղակող ավագակի ճարպիկ խաղ, այնուամենայնիվ, այդ չէր խանգարում կանոնիկոսների ժողովի իմաստուն գլուխներին, որ սարկավագապետին համարեն դժոխքի գավիթը մտնելու համարձակված, գաղտնագիտության խորխորատներում մոլորված, ծածուկ գիտությունների խավար ոլորտներում խարխափող մարդ: Ժողովուրդն էլ այս դեպքում չէր սխալվում. մի քիչ թեկուզ խորաթափանց միտք ունեցող ամեն ոք Քվազիմոդոյին համարում էր դե, Կլոդ Ֆլուդյին՝ վհուկ: Ակներև էր, որ ժամհարը պետք է ծառայեր սարկավագապետին մի որոշ ժամանակ, որից հետո պետք է տաներ նրա հոգին որպես վարձահատուցում: Հետևաբար, սարկավագապետը, հակառակ իր վարած խստամբեր կյանքին, վատ անուն

ուներ բարի հոգիների շրջանակում, և չկար բարեպաշտի որևէ անվարձ քիթ, որ կախարդի հոտ չառներ նրանից:

Եվ եթե տարիների հոլովման հետ անդուևդներ էին գոյացել նրա գիտության մեջ, ապա այդպիսիք գոյացել էին նաև նրա սրտում: Համենայնդեպս, ստիպված էին այդպես կարծիք գննելով նրա գեմքը, որտեղ հոգու ճաճանչելը տեսնում էին մութ սամպի միջով: Ինչի՞ արդյունք էր նրա լայն, ճաղատ ճակատը, շարունակ խոնարհած գլուխը, հառաչելուց մշտապես բարձրացած այդ կուրծքը: Ինչպիսի՞ գաղտնի միտք էր ժպտեցնում նրա բերանն այդքան դառնությամբ, երբ նույն պահին խոթոռած հոնքերն իրար էին մոտենում կովիու պատրաստվող զույգ ցուլերի նման: Ինչո՞ւ նրա մնացած մազերն արդեն ալիհառն էին: Այդ ի՞նչ ներքին կրակ էր, որ երբևմն ցայտում էր նրա հայացքի մեջ այն աստիճան, որ նրա աչքերը նմանվում էին հնոցի պատում փորված ծակերի:

Հողեկան բուռն գերզբազվածության այդ նշանները բարձր ուժգնության էին հասել մասնավանդ այն շրջանում, երբ տեղի էր ունենում այս պատմությունը: Շատ անգամ հրգեցիկ դասի տղաներից մեկնումեկը մեծակ հանդիպելով նրան եկեղեցում՝ սարսափահար փախել էր, այնքան որ տարօրինակ ու վառվառն էր նրա հայացքը: Շատ անգամ ժամերգության պահին իր կողքի հարևանը լսել էր, որ նա հրգեցողությանը՝ *ad omnem tonum-ին*¹⁰⁸, խառնում էր անհասկանալի միջանկյալ խոսքեր: Շատ անգամ «կանոնիկոսարանը լվացող» Տերրենի լվացարարուհին սարսափով նկատել էր եղունգների ու գալարված մատների նշաններ ժողայի սարկավագապետի ժամաշապկի վրա:

Բայց և այնպես, նա կրկնապատկում էր իր խստակրոնությունը և ավելի քան երբևէ օրինակելի եկեղեցական էր: Թե՛ իր դիրքով, թե՛ բնավորությամբ միշտ հեռու էր մնացել կանանցից, և թվում էր, թե ատում է նրանց ավելի, քան երբևիցե: Որևէ մետաքս շրջագգեստի շրջունն անգամ բավական էր, որ կնգուղն աչքերի վրա քաշի: Այս

108. Ընդհանուր եղանակին (լատ.):

Հարցում այնքան նախանձախնդիր ու հաստատակամ էր նա, որ երբ տիկին Բոժյոն՝ արքայի դուստրը, 1481 թվականի դեկտեմբեր ամսին այցելութան եկավ Աստվածամոր տաճար, Կլոդ Ֆրոլոն խստորեն ընդդիմացավ նրա ներս մտնելուն՝ հիշեցնելով եպիսկոպոսին Սև Մատյանի 1334 թ. Սուրբ Բարթոլոմեոսի նախատոնակի թվականով նշված այն հոդվածը, որը վստեք մտնել արգելում էր ամեն մի կնոջ «ով ուզում է լինի՝ ծեր կամ մանկամարդ, տիրուհի կամ նաժիշտ», որի վրա եպիսկոպոսն ստիպված էր եղել վկայակոչել պապական պատվիրակ Օդոյի հրամանագիրը, որը բացառում է որոշ բարձրաստիճան տիկինների՝ *aliquae magnates mulieres, quae sine scandalo evitari non possunt*¹⁰⁹: Սակայն սարկավագապետը դրան էլ բողոքեց՝ առարկելով, որ պապական նվիրակի հրամանագիրը, գրված լինելով 1207 թվականին, հարյուր քսանյոթ տարով վաղեմի էր Սև Մատյանից, հետևարար և փաստապես՝ զորությունը կորցրած: Եվ հրաժարվել էր երևալ իշխանուհու առաջ:

Բացի այդ ամենից, մարդիկ նկատել էին, որ որոշ ժամանակից ի վեր նրա զգվանքը կրկնապատկվում էր գնչուհիների ու բոչաների հանդեպ: Նրա միջնորդութամբ եպիսկոպոսը հատուկ հրովարտակ էր արձակել, որով գնչուհիներին արգելվում էր պարել ու թմբկահարել տաճարի հրապարակում, և միաժամանակ քրքրում էր եկեղեցական ատյանի բորբոսնած արխիվները՝ ի մի հավաքելու համար այն դեպքերը, երբ կախարդները, մարդ թե կին, դատապարտված են եղել խարույկի կամ կախաղանի՝ նոխազներով, մերուններով ու այծերով հանդերձ կախարդություն անելու համար:

109. Մի քանի անվանի կանանց, որոնց այցելութունից չի կարելի խուսափել՝ առանց գայթակղության աղմուկ հարուցելու (լատ.):

ԱՆԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն ասացինք, սարկավազապետին ու ժամհարին շատ քիչ էր սիրում մայր եկեղեցու շրջակայքում ապրող թե՛ ունեոր, թե՛ հասարակ բնակչությունը: Երբ Կրոն ու Քվազիմոզոն միասին դուրս էին գալիս, իսկ դա հաճախ էր պատահում, և մարդիկ տեսնում էին նրանց անցնելը, տերն առջևից, ծառան ետևից, Աստվածամոր տաճարի թաղամասերով, նեղ ու մռայլ փողոցներով, բազմաթիվ վատ խոսքեր, հեզնական երգեր ու գռեհիկ սրտահայտություններ ուղեկցում ու տանջում էին նրանց, եթե միայն Կրոն Ֆրոյուն գլուխը բարձր պահած չքայլեր՝ ցուցադրելով շփոթահար ծաղրարարներին իր խիստ, համարյա թե սգոստափառ ճակատը: Իսկ դա շատ հազվադեպ էր պատահում:

Երկուսն էլ իրենց թաղամասում նման էին այն «բանաստեղծներին», որոնց մասին Ռեյնիեն ասում է.

Ի՛նչ մարդ ասես չի ընկնում պոետների ետևից.

Ինչպես հավքերն են վազում բուերին հալածելիս:

Մերթ որևէ փողոցային ծածկամիտ մանչուկ էր իր մաշկն ու ոսկորները վտանգի մատնում, որպեսզի Քվազիմոզոյի սապատի մեջ գնդասեղ խրելու անասելի հաճույքն ունենա: Մերթ՝ մի դեռատի, գեղեցիկ աղջիկ, զվարթ ու ավելի անպատկառ, քան պետք էր, քսվում էր քահանայի սև սքեմին նրա քթի տակ երգելով՝

*Niche, niche, le diable est pris*¹¹⁰

Հեզնական երգը: Երբեմն էլ գավթի աստիճանների վրա, ստվերում շարանով պղպած պառավների այլանդակ խումբն էր շաղակրատում սարկավազապետի ու ժամհարի անցման ուղու վրա և, անիծելով, հետևյալ խրախուսական ողջույնն էր նետում նրանց. «Իհա՛րկե, մեկի հոգին կառուցված է այնպես, ինչպես մյուսի մարմինը»:

110. Ընկալ ծա՛կը, սատանան բռնվե՛ց (Ֆր.):

Եվ կամ թե ճեմարանականների կամ հետեակազորի խմբերն իրենց խաղն ընդհատելով՝ միասին ոտքի էին կանգնում և զասական ողջույն տալով՝ որևէ լատիներեն բայականչություն էին անում, ինչպես *Eia! eia! Claudius cum claudio!*¹¹¹

Բայց մեծ մասամբ այդ լուտանքներն աննկատելի էին մնում քահանային ու ժամհարին: Այդ բոլոր չքնաղ խոսքերը լսելու համար Քվազիմոդոն շատ էր խուլ, իսկ Կլոդը՝ շատ մտազբաղ:

111. Էյ-հեյ, Կլոդը կազի հետ (բառախաղ. լատիներեն *claudus* նշանակում է կաղ, իսկ Կլոդ անվան լատիներեն ձևը *կլավդիոս* է):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՐՔ

I

ABBAS BEATI MARTINI¹¹²

Տեր Կռոզի Հոչակը շատ հեռու էր տարածված: Այդ Հոչակը նա ձեռք բերեց մոտավորապես այն ժամանակ, երբ Հրաժարվեց տեսնել տիկին ղը Բոժյոյին և ընդունեց այնպիսի մի այցելութուն, որի հիշատակը շատ երկար պահեց:

Մի երեկո սարկավագապետը ժամերգութունից նոր էր վերադարձել Աստվածամոր տաճարի իր կանոնիկոսյան խուցը: Այդ խուցը, բացի թիրևս մի անկյունում կուտակված մի քանի սպակե սրվակներից, որոնք լի էին բավական կասկածելի, բայց ավելի շուտ ալքիմիական արտապատկերող փոշով, ոչ մի արտառոց կամ խորհրդավոր բան չուներ: Պատերի վրա, այս ու այնտեղ, կային մի քանի մակագրութուններ, սակայն դրանք հարգարժան հեղինակներից քաղված՝ գիտական կամ բարեպաշտական մաքուր խրատներ էին: Սարկավագապետը պղնձե եռակտուց ճրագի լույսի տակ նստել էր ձեռագիր մատյաններով ծանրարհանված մի ընդարձակ, կաշեպատ սնդուկի առաջ: Նա արմունկը հենել էր Հոնորիոս Օտյունցու *de Pruedestinatione et libero Arbitro*¹¹³ լայն բացված գրքին և խոր մտազբաղությամբ թերթում էր նոր բերած մի մեծածավալ, տպագիր մատյան, որ միակն էր նրա խցիկում որպես մամուլի արտադրանք:

Նրա խորհրդածութունն ընդհատեց դռան բախումը:

— Մ՛վ է, — ձայն տվեց գիտնականը այն քաղցած շան սիրալիր շեշտով, որին խանգարում են կրծի իր ոսկորը:

Դրսից մի ձայն պատասխանեց.

112. Երանելի սուրբ Մարտինի աբբան (լատ.):

113. Վասն նախասահմանման և ազատ կամքի (լատ.):

– Ձեր բարեկամ ժակ Կուակտիենն:

Կլոդը գնաց բացեց դուռը:

Արդարև, արքայի բժիշկն էր, մոտ Հիսնամյա մի մարդ, որի խստահայաց դեմքը մի քիչ չափավորված էր խորամանկ հայացքով: Նրա հետ կար և մի ուրիշ մարդ: Երկուսն էլ հստակ էին սկյուռի մուշտակներով զարդարված, հերձաքարի գույնի, գոտիկավոր ու սեղմ պատմուճան, դրել նույն կտորից ու նույն գույնի գդակներ: Նրանց ձեռքերը մտցված էին թեքերի մեջ, ոտքերը չէին երևում պատմուճանների, աչքերը՝ գդակների տակից:

– Աստված ինձ օգնական, տյա՛րք, – ասաց սարկավագապետը՝ ներս առնելով նրանց, – այսպիսի պատվավոր այցելութուն չէի սպասում այս ժամին: – Եվ այսպես մեծարանքով խոսելով հանդերձ՝ անհանգիստ ու խուզարկու հայացքով զննում էր նրանց:

– Ամենևին էլ ուշ չէ այցելելու համար այնպիսի երևելի գիտնականի, ինչպիսին է հայր Կլոդ Ֆրոլո Տիրշապեցին, – պատասխանեց բժիշկ Կուակտիենն, որ Ֆրանս-կոնտեյան իր առոգանությունամբ ծոր էր տալիս բոլոր նախադասությունները երկարաքղանցք շրջագեստի առքուփառքով:

Դրանից հետո բժշկի ու սարկավագապետի միջև սկսվեց մեծարանքով ու սիրալիրությամբ լի այն նախաբանը, որ այդ դարաշրջանում, ըստ հաստատված սովորություն, նախորդում էր գիտնականների բոլոր զրույցներին և բնավ էլ չէր խանգարում, որ նրանք ամբողջ սրտով ատեն միմյանց: Չմոռանանք նշել, որ այսօր էլ այդպես են անում: Գիտնականի յուրաքանչյուր բերան, որ հաճոյախոսում է մի ուրիշ գիտնականի, մեղրոտ մազձի աման է:

Կլոդ Ֆրոլոյի՝ ժակ Կուակտիենին արած շնորհավորությունները վերաբերում էին այն բազմութիվ աշխարհիկ առավելություններին, որ հարգարժան բժիշկը կարողացել էր իր այնքան նախանձելի պաշտոնի ընթացքում քաղել արքայի յուրաքանչյուր հիվանդությունից, ավելի լավ և ավելի անվրեպ ալքիմիայի գործածությամբ, քան թե փիլիսոփայական քարի հետապնդումն էր:

– Հիրավի, պարո՛ն բժիշկ Կուսակտիբ, մեծագույն ուրախությամբ իմացա, որ ձեր քրոջ որդին՝ մեծահարգ տյար Պիեր Վերսեն, եպիսկոպոսություն է ստացել: Ամիսնի եպիսկոպոսն է, այնպես չէ՞:

– Այո, պարո՛ն սարկավագապետ, շնորհիվ և ողորմածությամբ Աստուծո:

– Գիտե՞ք դուք, թե որքան փառահեղ տեսք ունեիք Մենդյան տոնին, հաշվային պալատի ընկերակցության գլուխն անցած, պարո՛ն նախագահ:

– Փոխնախագահ, տե՛ր Կլոդ, ավա՛ղ, և ոչ ավելի:

– Ի՞նչ դրության մեջ է Սենտ-Անդրե-դե-գ՛Արկ փողոցի ձեր սրանչեջի տունը, որ ճամարիտ մի Լուվր է: Շատ եմ հավանում դուան վրա քանդակված ծիրանի ծառն իր գլարճալի բառախաղով՝ à l'abri-côtier¹¹⁴.

– Ավա՛ղ, տե՛ր Կլոդ, շատ թանկ է ինձ վրա նստում այդ ամբողջ կառուցվածքը: Որքան բարձրանում է շենքը, այնքան ավելի քայքայվում եմ ես:

– Դե լա՛վ, մի՞թե ձեզ չեն պատկանում Արդարադատության պալատի բանտերի ու օժանդակ շենքերի եկամտունեքը, նրա շրջափակում գտնվող բոլոր տների, խանութների, խցիկների ու կրպակների վարձագիրը: Դա նշանակում է ունենալ հիանալի կթու կով:

– Պուսսիի դղյակային կառավարչությունն այս տարի ոչ մի եկամուտ չտվեց ինձ:

– Բայց Տրիելի, Սեն-Ջեմսի, Սեն-ժերմին-ան-Լեյի ձեր ուղեվճարները միշտ էլ լավ են եղել:

– Հարյուր քսան լիվր, այն էլ՝ ոչ փարիզյան:

– Ունեք նաև արքայի խորհրդականի պաշտոնը: Դա արդեն անխախտ է:

114. Միրանենի՝ abricotier բառը կիսելով՝ ստացվել է abri-côtier, այսինքն՝ «առափնյա ապաստարան», որից և բառախաղը:

– Այո՛, եղբայրակի՛ց Կլոզ. բայց Պուլինյիի այդ անիծյալ սենյորու-
թյան կալվածքը, որի շուրջն այնքան աղմուկ են բարձրացնում,
միջին Հաշվով՝ վաթսուեն ոսկի էքյուէ էլ չի բերում տարեկան:

Այս սիրալիր խոսքերի մեջ, որ տեր Կլոզն ուղղում էր ժակ
Կուակտիեին, կար այն հեգնական, կծու ու խուլ կերպով ծաղրա-
կան շեշտը, այն տխուր ու դաժան ժպիտը, որով գերազանց, բայց
ապերջանիկ մարդը մի րոպե զվարճանալու համար խաղում է ու-
միկ մարդու կոպիտ բարեկեցութեան հետ: Նրա զրուցակիցը չէր
նկատում դա:

– Երգվում եմ հոգովս, որ շատ ուրախ եմ ձեզ այսպես քաջառողջ
տեսնելով. – ասաց ի վերջո Կլոզը՝ սեղմելով նրա ձեռքը:

– Շնորհակալ եմ, տե՛ր Կլոզ:

– Ի դեպ, – գոչեց տեր Կլոզը, – ինչպե՞ս է ձեր արքայական
հիվանդի դրութիւնը:

– Լավ չի վճարում նա իր բժշկին, – պատասխանեց Կուակտիեն՝
մի հայացք նետելով ընկերոջ կողմը:

– Կարծո՞ւմ եք, քա՛վո՛ր Կուակտիե, – նկատեց ընկերը:

Զարմանքի ու հանդիմանութեան շեշտով ասված այս խոսքը այդ
անծանոթ անձնավորութեան վրա գրավեց սարկավազապետի ուշադ-
րութիւնը, որ ճիշտն ասած՝ ոչ մի րոպե հայացքը լիովին չէր կտրել
նրանից այն պահից ի վեր, ինչ նա ոտքը ներս էր դրել իր խուցի
չեմքից: Հաշիլի էին առնված հաղարավոր նկատառումներ, որպեսզի
Կլոզ Ծրոլոն համաձայնի ընդունել դոկտոր ժակ Կուակտիեին՝ Լյու-
դովիկոս XI արքայի ամենագոր բժշկին՝ այդպիսի ընկերակցութեամբ:
Այնպես որ, նրա արտահայտութեան մեջ ոչ մի բարեհաճո բան չկար,
երբ ժակ Կուակտիեն ասաց.

– Ի դեպ, տե՛ր Կլոզ, ես ինձ հետ բերել եմ ձեր մի եղբայրակցին,
որ լսելով ձեր հռչակը՝ ուզում է տեսնվել ձեզ հետ:

– Պարոնը գիտութեամբ մարդ է, – հարցրեց սարկավազապետը՝
խորաթափանց հայացքը սեռուելով Կուակտիեի ընկերոջ վրա: Եվ

անծանոթի հոնքերի տակ նկատեց իր հայացքից ոչ պակաս ծակող ու ոչ պակաս անվստահուլթյամբ լի մի հայացք: Ինչքան որ ճրագի աղոտ լույսը թույլ էր տալիս տեսնել, ապա մոտավորապես վաթսուն տարեկան, միջահասակ, կարծես թե հիվանդ ու զառամած ծերուկ էր դա: Նրա պրոֆիլը, թեև խիստ քաղքենիական դիմագծերով, ինչ-որ հզոր ու խիստ բան ունեւր, նրա բիրը շողշողում էր հոնքերի խիստ խոր կամարի ներքո, ինչպես լույսը քարանձավի խորքում, իսկ ցած՝ մինչև քիթն իջեցրած և եղրահակ գլխարկի տակ զգացվում էին լայն ակոսները՝ տաղանդավոր ճակատի նշանները:

Նա ինքն էլ հանձն առավ պատասխանելու սարկավագապետի հարցին.

— Մեծահարգ վարպետ,— ասաց նա ծանրակշիռ շեշտով,— ձեր համրավը հասավ ինձ էլ, և ես ցանկացու ձեր խորհուրդն առնել: Ես սոսկ գաւառական խղճուկ մի այնպիսի եմ, որ իր մաշիկները հանում է գիտնականի սենյակը մտնելուց առաջ: Լավ է իմանաք իմ անունը՝ քավոր Տուրանժո:

«Բացառիկ անուն սեպուհի համար»,— մտածեց սարկավագապետը, բայց և այնպես զգաց, որ գտնվում է ուժեղ ու լուրջ մարդու առաջ: Իր բարձր իմացութեան բնույթով նա գուշակեց, որ քավոր Տուրանժոյի մուշտակապատ գլխարկի տակ կա մեկը, որի իմացութեանն իրենից պակաս չէ, և զննելով այդ լրջախոհ դեմքը, այն հեզնական ժպիտը, որ խաղաց նրա՝ Կլոդ Յորոյի մոայլ դեմքի վրա՝ ժակ Կուակտիեի ներկայութեան պատճառով, քիչ-քիչ ցրվեց, ինչպես վերջալույսը իջնող գիշերվա հորիզոնի վրա: Նա նորից նստեց լոկ ու մոայլ՝ իր խոշոր թիկնաթոռին, արմունկը ստվորական տեղը զրավեց սեղանի վրա, ճակատն էլ կռթնեց ձեռքին: Մի քանի րոպե խորհրդածելուց հետո՝ նշան արեց երկու այցելուներին, որ նստեն, և դիմեց քավոր Տուրանժոյին.

— Եկել եք իմ խորհուրդն իմանալու, վարպետ, և ո՞ր գիտութեան վերաբերյալ:

– Մեծահա՛րգ, – պատասխանեց քափոր Տուրանժոն, – ես հիվանդ եմ, աստիկ հիվանդ: – Լսել եմ, որ դուք էլ մի մեծ էսկուլապ¹¹⁵ եք, ուստի և եկել եմ բժշկական մի խորհուրդ հարցնելու ձեզ:

– Բժշկակա՛ն, – ասաց սարկավագապետը գլուխն օրորելով: Եվ չարժես թե մի վայրկյան կենտրոնանալուց հետո շարունակեց. – Քափո՛ր Տուրանժո, քանի որ այդ է ձեր անունը, չրջեցեք ձեր գլուխը և ե՛մ պատասխանը կւտնեք պատի վրա գրված:

Քափոր Տուրանժոն հնազանդվեց և կարգաց իր գլխավերևում, պատի վրա փորագրված մակագրութունը. «Բժշկութունը երազների բույրն է: Յամլլիկոս¹¹⁶»:

Բայց բժիշկ ժակ Կուակտինն, որ դժկամությամբ էր լսել իր ընկերոջ հարցումը, տեք Կյոզի պատասխանից էլ ավելի դժգոհ մնաց: Նա կոացավ և քափոր Տուրանժոյի ակունջին ցածր ձայնով, որպեսզի սարկավագապետը չլսի, ասաց.

– Չէ՞ որ ես ձեզ նախագգուշացրի, որ նա խենթ է, իսկ դուք ուզեցիք տեսնել նրան:

– Բայց կարող է պատահել, որ այդ խենթը միանգամայն իրավացի լինի, դուտոր ժակ, – պատասխանեց քափորը նույն շեշտով և դառն ժպիտով:

– Ինչպես հաճո է ձեզ, – նկատեց Կուակտինն չոր-չոր: Ապա դիմելով սարկավագապետին՝ ասաց. – Շատ արագաշարժ եք դուք գործի մեջ, տեք Կյոզ, և ձեզ համար դժվարութուն չի հարուցում Հիպոկրատը, ինչպես որ կուպկին՝ կադինը: Բժշկութունը երա՛գ: Ես կարծում եմ, որ եթե ղեկավաճառները և սպեղանի պատրաստողներն այստեղ լինեին, չէին կարող զսպել իրենց և ձեզ չբարկոծել: Ուրեմն՝ դուք բացասում եք սիրագեղերի աղյեցութունը արյան և սպեղանիների ազդեցութունը՝ մկանի վրա: Դուք բացասում եք ծաղիկների ու

115. Ապոլլոնի որդին, բժշկության Աստվածը: Հիվանդներին բուժելով չբավարարվելով՝ սկսեց հարութուն տալ մեռելներին, որի համար պատժվեց Ջևհեց: Սովորական լեզվի մեջ նշանակում է բժիշկ:

116. Նոր պատոնական դատոցի հուն փեխոսոփա (IV դ.):

մետաղների այն հավերժական դեղատուները, որ կոչվում է աշխարհ՝
բնություն, և ստեղծված է հատկապես այն հավերժական հիվանդի
համար, որ կոչվում է մարդ:

– Ես ո՛չ դեղատուներն եմ բացասում, ո՛չ էլ հիվանդը, – ասաց տեր
Կլոդը սառն-սառն: – Ես բժշկին եմ բացասում:

– Ճիշտ չէ՞, ուրեմն, – վրա բերեց Կուակտինն եռանդազին, – որ
հոդատապը ներքին մկնատում է, որ հրագների վերքը կարելի է բու-
ժել խորոված մուկ դնելով վրան, որ պարտ ու պատշաճ ձևով ներ-
մուծված երիտասարդ արյունը երիտասարդացնում է ձեր հրակները:
Ճիշտ չէ՞ միթե, որ երկու անգամ երկու անում է չորս, նախ
emprostathonos¹¹⁷ է տեղի ունենում, ապա opistathonos¹¹⁸:

Սարկավագապետն առանց հուզվելու պատասխանեց.

– Կան որոշ բաներ, որոնց մասին ես յուրովի կարծիք ունեմ:

Կուակտինն գայրույթից կարմրեց:

– Է-հե՛, իմ բարի Կուակտին՛, չբարկանանք, – նկատեց քափոր
Տուրանժոն: – Պարոն սարկավագապետը մեր բարեկամն է:

Կուակտինն հանդարտվեց՝ կիսաձայն մրթմրթալով.

– Վերջիվերջո, խնեթ է նա:

– Աստված վկա, վարպե՛տ Կլոդ, – ասաց քափոր Տուրանժոն փոքր
լռությունից հետո, – դուք ինձ դժվարին կացության եք մատնում:
Ես եկել էի ձեզնից երկու խորհուրդ ստանալու, մեկը վերաբերում էր
իմ առողջությանը, մյուսն իմ աստղին:

– Եթե այդ է ձեր մտահոգությունը, – պատասխանեց սարկավա-
գապետը, – դուք, պարո՛ն, շատ լավ կանեիք, եթե ձեր շունչը
չկտրեիք իմ սանդուղքը բարձրանալուց: Ես ո՛չ բժշկությանն եմ
հավատում, ո՛չ էլ աստղագիտությանը:

– Հիրավի՞, – գոչեց քափորը զարմացած:

Կուակտինն ծիծաղում էր բռնազբոսիկ կիրպով:

117. Զղերի ձգտում՝ մարմինն առաջ ծռելու:

118. Զղերի ձգտում՝ մարմինը մեջքի վրա ծռելու:

– Ձե՞ք տեսնում, որ խենթ է,– ասաց նա ցածր ձայնով քավոր Տուրանժոյին:– Ձի՛ հավատում աստղագիտության:

– Երեակայության ինչպիսի՛ ձև,– ասաց տեր Կլոզը,– որ աստղի լուրաքանչյուր ճառագայթը որևէ մարդու գլխին հասնող մի թել է:

– Ինչի՞ն եք ուրեմն հավատում,– գռչեց քավոր Տուրանժոն:

Սարկավագապետը մի բուսի մնաց անվճռական, ապա նրա դեմքի վրա գծագրվեց մի մռայլ ժպիտ, որ կարծես երևան էր հանում նրա պատասխանը.

– *Credo in Deum*¹¹⁹.

– *Dominum notrum*¹²⁰,– ավելացրեց քավոր Տուրանժոն՝ խաչակնքելով երեսը:

– Ամե՛ն,– ասաց Կուակտինն:

– Մեծահարգ վարպետ,– շարունակեց քավորը,– հոգիս հրճվում է՝ տեսնելով ձեզ այսպիսի բարեպաշտությամբ համակված: Բայց լինելով այդպիսի մեծ գիտնական, մի՞թե դուք հասել եք այն աստիճանին, որ այլևս չեք հավատում գիտությանը:

– Ոչ,– պատասխանեց սարկավագապետը՝ բռնելով քավոր Տուրանժոյի թևը, և խանդավառության կայծը վառվեց նրա անփայլ բիրի մեջ,– ո՛չ, ես չեմ բացասում գիտությունը: Ես այնքան երկար ժամանակ գետնատարած ու եղունգներս գետնի մեջ մխրճելով չեմ սողացել քարանձավի անհամար ճյուղավորությունների միջով, որպեսզի իմ առաջ՝ հեռվում, խավար գետնողու ծայրում չնկատեմ ինչ–որ լույս, բոց, անտարակույս, այն կենտրոնական լուսաճաճանչ լաբորատորիայի ցուբը, որտեղ համբերատարներն ու իմաստունները նշմարել են Աստծուն:

– Բայց վերջապես ի՞նչն եք դուք համարում ճիշտ ու աներկբա,– ընդհատեց Տուրանժոն:

– Այբիմիան:

119. Հավատում եմ Աստծուն (լատ.):

120. Տեառն մերոյ (լատ.):

– Գրո՛ւր տանի,– գոչեց Կուակտիենն,– ալքիմիան, տե՛ր Կլոդ, անշուշտ, իր իրավացիուն՝թյունն ունի, բայց ինչո՞ւ պարսավել բժշկությունն ու աստղագիտությունը:

– Ոչի՛նչ է մարդուն վերաբերող ձեր գիտությունը, ոչի՛նչ է երկնքին վերաբերող ձեր գիտությունը,– տիրաբար վրա բերեց սարկավագապետը:

– Դա նշանակում է անխնա վարվել էպիդավրոսի¹²¹ և ալգեայի¹²² հետ,– առարկեց բժիշկը ծաղրական շեշտով:

– Լսեցե՛ք, տյա՛ր ժակ: Ես անկեղծորեն եմ խոսում: Ես արքայի բժիշկը չեմ և նորին վսեմությունը Դեդալոս այգին չի նվիրել ինձ, որպեսզի համաստեղությունները զննեմ այնտեղ: Մի՛ բարկացեք և ինձ լսեցեք: Ի՞նչ ճշմարտություն եք քաղել դուք, ես չեմ ասի բժշկությունից, որ այնքան էլ անմիտ բան չէ, այլ՝ աստղագիտությունից: Թվեցե՛ք խնդրեմ ակոսաձև դրության առավելությունները, զիրու՛Ֆ և զեֆիրոդ թվերով արված գյուտերը:

– Մի՞թե դուք կհերքեք անրակոսկրի ծածուկ առնչական ուժը, և որ ամբողջ ողբհաղորդակությունը դրանից է բխում,– առարկեց Կուակտիենն:

– Մոլորությո՛ւն, տյա՛ր ժակ, ձեր ֆորմուլներից ոչ մեկը իրականությանը չի հասնում: Մինչդեռ ալքիմիան իր հայտնագործություններն ունի: Մի՞թե դուք կառարկեք, սրինակի համար, հետևյալ հետևություններին.– հազար տարի գետնի տակ պահված սառույցը դառնում է բյուրեղեն ապառաժ. արճիճը բոլոր մետաղների նախամայրն է, քանի որ ոսկին մետաղ չէ, այլ՝ լույս: Արճիճը կարիք չունի չորս շրջանի, ամեն մի շրջանը երկու հարյուր տարի, որպեսզի հաջորդաբար անցնի արճիճի վիճակից կարմիր մկնդեղի վիճակին,

121. Հին Հունաստանի քաղաք Արգոլիդում. էդեյան ծովի ափին: Էսկուլապի նրա տաճարի պատգամախոսի մոտ հիվանդներ էին գալիս ամբողջ Հունաստանից:

122. Հին Հույները ալգեա անունն էին տալիս Բաբելոնին, որը նույնպես բժշկության և կախարդության երկիր էր համարվում:

կարմիր մկնդիլի վիճակից՝ անագի, անագից՝ արծաթի:— Փաստե՞ր են սրանք, թե ոչ: Սակայն հավատալ անրակոսկրի ուժին, գծերին ու աստղերին, դա նույնքան ծիծաղելի է, ինչպես որ Մեծ Կաթայի¹²³ բնակիչների հետ հավատանք, որ պիրոլ երգեցիկ թռչունը վերածվում է խլուրդի, իսկ ցորենի հատիկները՝ ծածանազգի ձկների:

— Ես ուսումնասիրել եմ այբիմիան՝ մետաղագիտության դիտոթյունը,— գոչեց Կուակտինեն,— և հաստատում եմ...

Սակայն կրակ կտրած սարկավապապետը չթողեց, որ ափարտի.

— Իսկ ես ուսումնասիրել եմ բժշկությունը, աստղագիտությունն ու այբիմիան: Այստե՛ղ է միայն ճամարտությունը (այս խոսքերն ասելիս նա սնդուկի վրայից վերցրեց մի սրվակ այն փոշով լի, որի մասին քիչ վերևը խոսեցինք), այստե՛ղ է միայն լույսը: Հիպոկրատեսը երազ է, Ուրանիան՝ երազ է, Հերմեսը՝ միտք է: Ոսկին արեգակն է. ոսկի պատրաստել, նշանակում է՝ աստվածուհի: Ահա միակ գիտությունը: Ես ձեզ ասում եմ, որ պեղել-սպառել եմ բժշկությունը և աստղագիտությունը. դրանք ոչի՛նչ են և ունայն: Մարդկային մարմի՞նը՝ մշուշ ու աղջամուղջ, աստղե՞րը՝ նմանապես:— Եվ հոր ու ողևնչված կեցվածքով նորից բազմեց իր բազկաթոռին:

Քավոր Տուրանժոն լսիկ զննում էր նրան: Կուակտինեն ջանում էր ծաղրել, աննկատելի կերպով վեր էր գցում ուսերը և ցածր ձայնով կրկնում.

— Խե՛նթ է, խե՛նթ:

— Իսկ զարմանահրաշ նպատակին հասե՞լ եք,— ասաց հանկարծ Տուրանժոն:— Ոսկի պատրաստե՞լ եք:

— Եթե պատրաստած լինեիր,— պատասխանեց սարկավապապետը՝ դանդաղորեն արտաբերելով իր բառերը մտածող մարդու նման,— ասպա Ֆրանսիայի թագավորը կկոչվեր Կլոզ, և ոչ թե Լյուգովիկոս:

Տուրանժոն հոնքերը կծկեց:

— Ի՛նչ եմ ասում,— շարունակեց տեր Կլոզը արհամարհանքի

123. Եվրոպական միջնադարյան մատենագիրներն այսպես էին անվանում Ջինաստանը:

չեչտով:— Ինչի՞ս պետք կլինիր ֆրանսիական գաճը, երբ ես կկարողանայի վերականգնել Արևելյան կայսրութիւնը:

— Հաջողութիւն,— գոչեց քաւորը:

— Ո՛հ, թշվա՛ռ խենթ,— մրմնջաց Կուակտինն:

Սարկավագապետը կարծես թե իր մտքերին պատասխանելով՝ շարունակեց.

— Բայց ոչ, ես դեռ սողում եմ. դեմքս ու ծնկներս պլոկում եմ ստորերկրյա ճանապարհի խիճերին դիպցնելուց: Ես նշմարում եմ և ոչ թե դնում, հեզում եմ և ոչ թե կարողում:

— Եվ երբ կարդալ իմանաք, ոսկի կպատրաստե՞ք.— Հարցրեց քաւորը:

— Ո՛վ է կասկածում դրան,— ասաց սարկավագապետը:

— Այդ դեպքում, Տիրամայրն էլ գիտե, որ դրամի մեծ կարիք ունեմ ես և հաճութեամբ կուզենամ կարդալ սովորի ձեր գրքերը: Ասեք ինդրեմ, արժանահա՛րգ վարպետ, ձեր գիտութիւնը թշնամի կամ անախորժ չէ՞ Տիրամորը:

Քաւորի այս հարցումին տեր Կլոդը բավականացավ խաղաղ մեծամտութեամբ պատասխանելով.

— Ո՛ւմ սարկավագապետն եմ ես:

— Ճիշտ եք ասում, վարպետ: Շատ լավ, կրարեհաճեի՞ք արդյոք նախակրթել ինձ: Կհամաձայնեի՞ք, որ հեզիմ ձեզ հետ:

Կլոդը Սամուել դատավորի մեծափառ ու քահանայապետական դիրքն ընդունեց.

— Ծերո՛ւկ, շատ ավելի երկար տարիներ են պետք, քան թե մնացել է ձեզ, ձեռնարկելու համար այդ ուղևորութիւնը խորհրդավոր իրերի միջով: Ձեր գլուխն ալեզարդ է: Այդ քարանձավից դուրս են գալիս ճերմակած մազերով, սակայն մոռնում են այնտեղ միայն սև մազերով: Գիտութիւնը կարող է միայնակ վարել, թառամեցնել ու չորացնել մարդկային դեմքը և կարիք չունի, որ ծիրութիւնը խորշոմած դեմքեր մատուցի իրեն: Իսկ եթե, այնուամենայնիվ, ձեր այդ տարիքին այնքան մեծ ցանկութիւն ունեք հաղորդակից լինելու այդ

գիտութեանը և վերծանելու իմաստունների վտանգավոր այրուբներ, եկեք ինձ մոտ, ինչո՞ւ չէ, կիրորձեմ: Ձեզ՝ խեղճ ծերունուդ, ես չեմ ասի՝ գնացեք տեսեք բուրգերի դամբանասրահները, որոնց մասին խոսում է Հինն Հերոդոտը, ո՛չ էլ Բաբելոնի աղյուսե աշտարակը, ո՛չ ևս հնդկական էլիինգա սպիտակ մարմարակերտ մեհյանի հսկայական սրբարանը: Ես էլ ձեզ պես չեմ տեսել խալդյան շենքերը՝ կառուցված ըստ Սիկրայի¹²⁴ սրբազան ձևի, ո՛չ Սողոմոնի տաճարը, որ քանդված է, ո՛չ էլ Իսրայելի արքաների դամբարանի քարե դռները, որ խորտակված են: Մենք կրավարարվեք Հերմեսի գրքի հատվածներով, որոնք այստեղ են: Ես ձեզ կրացատրեմ սուրբ Քրիստափորի արձանի էությունը, որ սերմնացանի խորհրդանշանն է, ինչպես նաև՝ Սուրբ Մատրան ավագ դռան վրայի այն երկու հրեշտակների խորհրդանշանը, որոնցից մեկի ձեռքը ամանի, մյուսի ձեռքը՝ ամպերի մեջ է...

Այստեղ ժակ Կուակտինն, որին սարկավագպետի մոլեգին առարկությունները, այսպես ասած, ձիուց ցած էին բերել, նորից նստեց թամբին և ընդհատեց նրան այն գիտնականի հաղթական շեշտով, որը նույն ձևով հատուցում է մի ուրիշ գիտնականի.

— Erras, amice Claudi¹²⁵: Խորհրդանշանը թիվ չէ: Դուք Օրփեոսին Հերմեսի տեղ եք ընդունում:

— Դուք ինքներդ եք սխալվում, — առարկեց խստորեն սարկավագպետը: — Դեղալուսը վերնահիմքն է, Օրփեոսը՝ պատը, Հերմեսը՝ շենքը, այսինքն՝ ամբողջը: Դուք կգաք, երբ ցանկանաք, — շարունակեց նա՝ դառնալով դեպի Տուրանժոն, — ես ձեզ ցույց կտամ նիկոլա Ֆլամելի քուրայի տակ մնացած ոսկու մասնիկները, որոնք կհամեմատեք Գիյոմ Փարիզեցու ոսկու հետ: Ես ձեզ կսովորեցնեմ հունարեն *peristera*¹²⁶ բառի ծածուկ հատկությունները: Սակայն նախևառաջ կսովորեցնեմ ձեզ իրար ետևից կարդալ այրուբների մարմարե տառերը, գրքի գրանիտի չջրը: Գիյոմ եպիսկոպոսի և Սեն-Ժան-լը-Ռոնի ավագ

124. Հին խալդական տաճարները, որոնք աստիճան առ աստիճան նեղանում էին:

125. Սխալվում ես, բարեկամ Կլոդ (լատ.):

126. Աղավնի:

դռնից կանցնեք Սուրբ Մատուռը, հետո՝ Նիկոյա Ֆլամելի տունը
Մարիվոյի փողոցում, նրա շիրիմը, որ Սուրբ Անմեղների գերեզմա-
նոցում է, ապա նրա երկու հիվանդանոցները Մոնմորանսի փողո-
ցում: Ես ձեզ կսովորեցնեմ կարդալ այն հիերոգլիֆները, որոնցով
ծածկված են Սեն-ժերվե հիվանդանոցի ավագ դռան և Երկաթեղենի
փողոցի երկաթե չորս հաստ շրջանակները: Մենք միասին կհե-
գենք նաև Սեն-Կոմի, Սեն-ժրնևիև-դե-գ'Արլանի, Սեն-Մարտենի,
Սեն-ժակ-դը-լա-Բուլլըրի... ֆասագները:

Երկար ժամանակ էր արդեն, որ Տուրանժոն, ուրքան էլ ուշիմ լիներ
նրա հայացքը, կարծես այլևս չէր հասկանում տեր Կլոդի խոսքերը:

— Աստված ձեզ հետ, — ընդհատեց նա սարկավագապետին, — այդ
ի՞նչ գրքեր են:

— Ահա դրանցից մեկը, — պատասխանեց տեր Կլոդը:

Եվ բանալով խուցի պատուհանը՝ մատնացուլյց արեց Աստվածա-
մոր հսկայական տաճարը, որ աստղազարդ երկնքի վրա գծագրելով
իր երկու աշտարակների, քարակերտ կողերի և հրեշավոր մեջքի
սիլուետը՝ թվում էր քաղաքի կենտրոնում նստած մի վիթխարի,
երկզխանի սֆինքս:

Սարկավագապետը մի քանի վայրկյան լուռ ու մունջ դիտեց հսկա-
յական հուշարձանը, ապա աջ ձեռքը, հառաչելով, պարզեց դեպի
սեղանի վրա բացված տպագիր գիրքը. իսկ ձախ ձեռքը դեպի Աստ-
վածամոր տաճարը և տխրագին հայացքը շրջելով գրքից դեպի
եկեղեցին՝ ասաց.

— Ավա՛ղ, սա կսպանի նրան:

Կուակտիեն, որ այդ միջոցին շտապ մոտեցել էր գրքին, չկարո-
ղացավ չգոչել.

— Է-հե՛, ի՞նչ մի վտանգավոր բան կա սրա մեջ. *Glossa in episto-
las D. Pauli. Norimbergae, Antonius Koburger. 1474*¹²⁷. Նոր բան չէ:

127. «Մեկնութիւ թղթոցն սրբոյ Պօղոսի». Նյուրնբերգ, Անտոնիոս Կոբուր-
գեր, 1474 (լատ.: Վերոհիշյալ գրքի վերնագիրը):

Իեր Լոմբարի՝ իմաստուն խոսքերի վարպետի գիրքն է: Արդյո՞ք
րա համար, որ սպագի՞ր է:

– Հենց այդ է, այո,– պատասխանեց Կլոդը, որ կարծես սուզված
տր մտահայեցության մեջ՝ մնացել էր կանգնած, ծալած ցուցամատը
եղմած Նյուրնբերգի նշանավոր տպարանից դուրս եկած մեծածա-
սլ գրքին: Հետո նա ավելացրեց հետևյալ խորհրդավոր խոսքերը.

– Ավա՛ղ, ավա՛ղ, փոքր բաները հաղթում են մեծերին, մի ատամը
աղթահարում է մի մեծ զանգված: Նեղոսի մուկը սպանում է կոկոր-
իլոսին, թրածուկն սպանում է կետին, գիրքն էլ կսպանի հուշարձանը:

Վանքի ճրագմարիչի ազդանշանը հնչեց այն րոպեին, երբ ժակ
ուռակտիեն խիստ ցածր ձայնով մրթմրթում էր իր հավիտենական
րկներգը. – Խենթ է նա,– որին ընկերն այս անգամ պատասխանեց. –
ն էլ այդպես եմ կարծում:

Այդ այն ժամն էր, երբ ոչ մի օտարական չէր կարող մնալ վանքի
ըջափակում: Այցելուները մեկնեցին:

– Վարպե՛տ,– ասաց Տուրանժոն՝ հրաժեշտ տալով սարկավագա-
պետին,– ես սիրում եմ գիտնականներին ու մեծ մտքերը և հատուկ
արգանք եմ տածում ձեր նկատմամբ: Վաղը եկեք Տուրնել պալատ
հարցրեք Տուր քաղաքի Սեն-Մարտենի արքային:

Սարկավագապետն իր խցիկը մտավ ապշած՝ հասկանալով վեր-
պետ, թե ինչ մարդ էր այդ քավոր Տուրանժոն¹²⁸, և վերհիշելով
Սեն-Մարտեն-դը-Տուրի վանական իրավաթղթերի ժողովածուի այս
ատվածը. *Abbas beati Martini scilicet rex Franciae, est canonicos de
consuetudine et habet parvum praebendam quam habet sanctus
venantius, et debet sedere in seda thesaurarii.*¹²⁹

128. Կուր քաղաքի բնակիչներին կոչվում էին նաև տուրանժո:

129. Սուրբ Մարտին մենաստանի արքան համարվում է արքա Ֆրանսիայի
և կանոնիկոս է ըստ սուլթուլթյան և ունի փոքր ծուխ, այն, որ պատկա-
նում է սուրբ Վենանտիոս եկեղեցուն, իսկ վանական ժողովում
պարտավոր է նստել զանձապետի տեղում (լատ.):

Պնդում էին, որ այդ օրվանից հետո սարկավագապետը հաճախակի խորհրդակցություններ էր ունենում Լյուդովիկոս XI -ի հետ, երբ նորին վսեմութունը Փարիզ էր գալիս, իսկ տեր Կլոդի ունեցած պատիվը ստվերում էր Օլիվիե-լը-Դենին և ժակ Կուակտիեին, որն ըստ իր սովորության՝ վատաբանում էր նրան արքայի մոտ:

II

ՍԱ ԿՍՊԱՆԻ ՆՐԱՆ

Մեր ընթերցողուհիները մեզ կներեն, որ մի րոպե կանգ առնենք և փնտրենք-իմանանք, թե ինչ միտք էր թաքնված սարկավագապետի «Սա կսպանի նրան: Գիրքը կսպանի հուշարձանը» հանելուկային խոսքերի տակ:

Մեր կարծիքով այդ միտքն ուներ երկու կողմ: Նախ՝ քահանայի մի միտքն էր դա. հոգևորականի սարսափը նոր գործակալից՝ տպագրության արվեստից, սրբարանի սպասավորի սոսկումն ու շլացումը Գուտենբերգի լուսասփյուռ մամուլից: Ամբիոնն ու ձեռագիրը՝ բանավոր խոսքն ու գրավոր խոսքը, տագնապի էին մատնվում տպագրական խոսքից. որոշ չափով դա նման էր այն ճնճողուկի ահաբեկված ապշանքին, որ տեսնում է, թե ինչպես է Լեգեոն հրեշտակը բացում իր վեց միլիոն թևերը: Դա ճիշն էր այն մարգարեի, որն արդեն լսում է ազատագրված մարդկության ժխորն ու խլրտումը, որը ապագայում տեսնում է, թե ինչպես իմացությունն ու միտքը խարխուլում են կրոնը, կարծիքը գահընկեց է անում հավատը, աշխարհը թոթափում է Հռոմի իշխանությունը: Դա կանխատեսումն էր այն փրիխոփայի, որը տեսնում է, թե ինչպես մամուլի շնորհիվ թև առած մարդկային միտքը գոլորշու պես վեր է բարձրանում աստվածաբանական կաշկանդիչ անոթից: Դա սարսափն էր այն զինվորի, որը

տեսնելով պղնձե բաբանը՝ ասում է. — Աշտարակը կխորտակվի: Դա նշանակում էր, որ մի նոր զորութուն է հաջորդելու մի այլ զորության: Դա նշանակում էր, որ մամուլը սպանելու է եկեղեցին:

Սակայն այս առաջին և, անտարակույս, ամենապարզ մտքի տակ, մեր կարծիքով, կար մի ուրիշ, ավելի նոր միտք՝ առաջինի հետևությունը, ավելի դժվար նկատելի և ավելի հեշտ հերքելի, նմանապես ամբողջովին փիլիսոփայական մի տեսակետ, որ բխում էր ոչ միայն քահանայից, այլև գիտնականից և արվեստագետից: Դա այն նախազգացումն էր, որ մարդկային միտքը փոխելով իր ձևը՝ կփոխեր նաև արտահայտվելու եղանակը, որ յուրաքանչյուր սերնդի հիմնական միտքը այլևս չպիտի գրվեր նույն նյութով և նույն ձևով, որ այնքան ամուր և այնքան երկարատև քարե դիրքը իր տեղը պիտի զիջեր է՛լ ավելի ամուր և է՛լ ավելի դիմացկուն թղթին: Այս իմաստով էլ՝ սարկավազի տարտամ բսնածևը ունեւր մի երկրորդ իմաստ. դա նշանակում էր, որ մի նոր արվեստ գահազրկելու էր մի ուրիշ արվեստ, այսինքն՝ տպագրությունը կսպաներ ճարտարապետությունը:

Արդարև, քաղաքակրթության ծագումից մինչև քրիստոնեական թվականության տասնհինգերորդ դարը ներառյալ, ճարտարապետությունը եղել է մարդկության մեծ գիրքը, մարդու հիմնական արտահայտությունը իր զարգացման տարբեր աստիճաններում՝ լինի դա որպես ուժ, լինի իմացություն:

Երբ առաջին ցեղերի հիշողությունն իրեն ծանրարեռնված զգաց, երբ մարդկության հուշերի բեռն այնքան ծանրացավ ու խառնաչփոթ դարձավ, որ մերկ ու թուշող խոսքը ճանապարհը կորցնելու վտանգին մատնվեց, ապա այդ հուշերը դրեցին գետնի վրա ամենատեսանելի, ամենասուեական ու միաժամանակ ամենարնական ձևով: Յուրաքանչյուր ավանդույթ գրոշմեցին որևէ հուշարձանի մեջ:

Առաջին հուշարձանները այն ժայռակտորներն էին, «որոնց երկաթը չէր դիպչի», ասում է Մովսեսը: Ծարտարապետությունն սկսվեց այնպես, ինչպես սկսվում է ամեն մի գրություն: Նախևառաջ,

այբուբենն էր դա: Տնկում էին մի ուղղահայաց քար, և դա տառ էր, իսկ ամեն մի տառը հիերոգլիֆ էր, ամեն մի հիերոգլիֆի վրա էլ հանգչում էր գաղափարների մի խումբ, ինչպես խոյակը՝ սյան վրա: Այդպես արեցին առաջին ցեղերը՝ ամենուրեք, նույն պահին և ամբողջ աշխարհի մակերեսին: Կիլոերի «տնկած քարը» գտնում են և՛ ասիական Սիրիում, և՛ Ամերիկայի պամպասներում:

Բառերը հետագայում կազմվեցին: Քարը քարի վրա դրին, իրար կցեցին այդ գրանիտե վանկերը: Խոսքը փորձեց որոշ շարակցումներ անել: Կիլտական դոլմենն ու կրոմլեսը, էտրուսկյան տումուլուսը¹³⁰, եբրայական գալգալը¹³¹ բառեր են: Մի քանիսը, հստակպես տումուլուսը, հատուկ անուններ են: Երբևմն էլ, երբ շատ քար և ընդարձակ տարածություն ունեին, գրում էին ամբողջական նախադասություն: Կառնակի¹³² հսկայական քարակույտն արդեն մի ամբողջ բանաձև է:

Եվ վերջապես, գրեցին գրքեր: Ավանդությունները ծնել էին նշանագրեր, որոնց տակ անհետանում էին իրենք, ինչպես ծառի բունն իր սաղարթի տակ: Այդ բոլոր նշանագրերը, որոնց հավատում էր մարդկությունը, հետզհետե աճում, բաղմապատկվում էին՝ ավելի ու ավելի խաչավորվելով ու բարդանալով: Առաջին հուշարձաններն այլևս բավական չեն դրանք պարունակելու համար, ուստի և հորդում են ամեն կողմից, մանավանդ որ՝ այդ հուշարձանները հագիվ են արտահայտում իրենց նման նախնական, պարզ, մերկ ու դետրի վրա պռակած ավանդությունը: Նշանագիրը՝ սիմվոլը, կարիք ուներ փթթելու շինության մեջ: Եվ այն ժամանակ ճարտարապետությունը զարգացավ մարդկային մտքի հետ, դարձավ հազարգլխանի ու հազարաբազուկ մի հսկա և այդ ամբողջ երեքուն սիմվոլիկան դրոշմեց ու հաստատեց հավերժական, տեսանելի ու շոշափելի ձևով: Մինչդեռ Դիդալը, որ ուժի սիմվոլն է, չափում էր. Օրփեոսը, որ իմացություն

130. Դամբանարժուր:

131. Ատորերկրյա գերեզմանակույտ:

132. Բնակավայր է Ֆրանսիայի Մորբիհան դեպարտամենտում, օվկիանոսի ափին:

սիմվոլն է, երգում էր, ապա սյուներ, որ ինքնին տառ է, կամարաշարը, որ վանկ է, բուրգը, որ բառ է, միաժամանակ շարժման մեջ դրվելով երկրաչափության և պոեզիայի օրենքների կողմից՝ խմբվում էին, համադրվում, զոդվում, իջնում, բարձրանում, իրար կցվում գետնի վրա, հարկ-հարկ իրար վրա նստում ու դեպի երկինք միտում, մինչև որ դարաշրջանի ընդհանուր գաղափարի թելադրությամբ գրեցին այն սքանչելի գրքերը, որոնք նմանապես սքանչելի հուշարձաններ էին՝ էկլիիզայի մեհյանը, Ռամզեսի դամբարանը Եգիպտոսում, Սողոմոնի տաճարը:

Մայր գաղափարը՝ խոսքը, ոչ միայն այս բոլոր հուշարձանների էություն, այլև ձևի մեջ էր ներգրված: Օրինակ՝ Սողոմոնի տաճարը ոչ թե պարզապես Սուրբ գրքի կազմն էր, այլև հենց Սուրբ գիրքն էր: Նրա համակենտրոն գոտիներից յուրաքանչյուրի վրա քահանաները կարող էին կարգալ ակներև ցուցադրված ու թարգմանված խոսքը և այդպես սրբարանից սրբարան հետևելով նրա ձևափոխություններին՝ բռնեցին դա իր վերջին խորանում, նրա ամենաշոշափելի ձևի մեջ, որը տակավին ճարտարապետությունն էր: Այսպիսով, խոսքը պարփակված էր շինություն մեջ, սակայն նրա պատկերը իր արտաքինի մեջ էր, ինչպես մարդու դեմքը՝ մուսիան, ամփոփող տապանի վրա:

Ավելին. շենքերի արտահայտած գաղափարը հառնում էր ոչ միայն նրանց ձևից, այլև նրանց համար ընտրված վայրից: Նայած այն բանին, թե արտահայտվող սիմվոլը մուսյլ էր կամ զվարթ, ըստ այդմ էլ՝ Հունաստանն իր լեռները պսակում էր աչքին ներդաշնակ մեհյանով, Հնդկաստանը փորում էր իր լեռների ընդերքը, որպեսզի այնտեղ տաշեր-կերտեր գրանիտե հսկայական փղերի շարանի վրա հենված իր ստորերկրյա անճոռնի կուստունները:

Այսպիսով, աշխարհի առաջին վեց հազար տարիների ընթացքում, Հնդկաստանի անհիշելի ժամանակներից մնացած կուստից մինչև Քյոլնի մայր եկեղեցին, ճարտարապետությունը եղել է մարդկության

մեծագուշակ գիրքը՝ գրությունը: Եվ սա այնքան ճիշտ է, որ ոչ միայն ամեն տեսակ կրոնական սիմվոլ, այլև մարդկային յուրաքանչյուր միտք իր էջն ու իր հուշարձանն ունի այդ վիթխարի գրքի մեջ:

Յուրաքանչյուր քաղաքակրթություն սկսվում է աստվածապետությամբ և վերջանում ժողովրդապետությամբ՝ դեմոկրատիայով: Մենդիխանությանը հաջորդող ազատության այս օրենքը դրված է ճարտարապետության մեջ, որովհետև, մենք պնդում ենք այս կետը, չպետք է կարծել, որ շինարարական արվեստը հզոր ու ընդունակ է միայն տաճար կառուցելու, կրոնական առասպելաբանություններն ու սիմվոլներն արտահայտելու, իր քարեղեն էջերի վրա օրենքի խորհրդավոր տախտակները հիերոգլիֆներով քանդակագրելու: Եթե այդպես լիներ, ապա, քանի որ յուրաքանչյուր մարդկային հասարակության մեջ գալիս է մի շրջան, երբ սրբազան սիմվոլը մաշվում ու ջնջվում է ազատ մտքի ճնշման տակ, երբ մարդը ճողոպրում է քահանայի իշխանությունից, երբ փիլիսոփայությունների և կառավարման սիստեմների մակաճուլթը կրծում է կրոնի դեմքը, — ճարտարապետությունը չպիտի կարողանար վերարտադրել մարդկային մտքի այն նոր վիճակը, մի էջի վրա դրված նրա թերթերը դատարկ կլինեին մյուս կողմից, նրա երկասիրությունը կլիներ թերի, դիրքն էլ անկատար: Բայց այդ այդպես չէ:

Օրինակ՝ վերցնենք միջնադարը, որ շատ ավելի հստակ ենք տեսնում, որովհետև մեզ ավելի է մոտ: Իր սկզբնական շրջանում, երբ աստվածապետությունը կազմակերպում էր Եվրոպան, երբ Վատիկանը միացնում ու իր շուրջն էր վերադասավորում Հռոմի այն տարրերը, որ կազմված էին Կապիտոլի շուրջը ավերակ փռված Հռոմից, երբ քրիստոնեությունն սկսում էր նախորդ քաղաքակրթության բեկորների մեջ փնտրել հասարակության բոլոր շերտերը և նրա ավերակներով վերստեղծում էր մի նոր հիերարխիական աշխարհ, որի կամարակապ առաստաղի միջնագողիչ քարը հոգևորականությունն էր, ապա այդ ժամանակ այդ քառսից սկսում է առաջ գալ, հետո էլ

քրիստոնեության շնչի, բարբարոսների ձեռքի տակ մեռած հունական ու հռոմեական ճարտարապետությունների վզատակների տակից քիչ-քիչ հառնում է ռոմանական խորհրդավոր ճարտարապետությունը՝ եգիպտոսի ու Հնդկաստանի աստվածապետական կառուցվածքների քույրը, մաքուր կաթոլիկության անեղծ խորհրդանշանը, պապական միասնության անփոփոխ հիերոգլիֆը:

Արդարև, այդ ժամանակի ամբողջ միտքը դրված է ռոմանական այդ մռայլ ոճի մեջ: Այդուեղ ամենուրեք զգում ես իշխանություն, միասնություն, անթափանցություն ու բացարձակը, այսինքն՝ Գրիգոր VII պապը: Ամենուրեք քահանան, ոչ մի դեպքում մարդը, ամեն տեղ կաստան, ոչ մի տեղ ժողովուրդը:

Բայց վրա են հասնում խաչակրաց արշավանքները: Դա ժողովրդական լայն շարժում էր, և ժողովրդական ամեն մի մեծ շարժում, ինչ էլ որ լինեն նրա պատճառներն ու նպատակը, իր վերջին նստվածքից միշտ բխեցնում է ազատության ոգին: Նոր երևույթներ են սկսում լույս աշխարհ գալ: Եվ ահա սկիզբ է սունում ժակերիաների¹³³, պրագերիաների¹³⁴ ու լիգաների¹³⁵ շրջանը: Իշխանությունը խարխլվում է. միասնությունը երկրիեղկվում: Ֆեոդալիզմը աստվածապետությունից պահանջում է բաժանել իշխանությունն իրար միջև՝ սպասելով, որ անխուսափելիորեն վրա հասնի ժողովուրդը և, ինչպես միշտ, առյուծի բաժինն ինքը վերցնի: *Quia nominor leo*¹³⁶.

Ազնվականությունը ծակում, դուրս է գալիս հոգևորականության տակից, քաղաքային համայնքն էլ ազնվականության տակից:

133. Գյուղացիական ապստամբություն Ֆրանսիայում, XIV դարում (ծագում է ժակ՝ հակոր անունից, որը խիստ տարածված էր գյուղացիության շրջանում):

134. Ապստամբություն Ֆրանսիայում XV դարում: Հուլյանների (Չեխիա) ապստամբության հետ ունեցած արտաքին նմանության համար կոչվեց Պրահա քաղաքի անունով՝ պրագերիա:

135. Կաթոլիկ ազնվականների դաշնակցություն Ֆրանսիայում XVI դ. կրոնական պատերազմների շրջանում, երբ ուժեղ պայքար էր մղվում կալվինյանության և ընդհանրապես՝ բողոքականների դեմ:

136. Քանզի կոչվում եմ առյուծ (լատ.):

Փոխվում է Եվրոպայի դեմքը: Եվ, համեցեք, փոխվում է նաև ճարտարապետության դեմքը: Քաղաքակրթություն նման՝ նա էլ չըջում է էջը, և ժամանակների նոր ոգին պատրաստ է գտնում դա՝ իր թելադրությանը գրելու համար: Խաչակրաց արշավանքներից ճարտարապետությունը վերադառնում է բերելով սրածայր կամարը, ինչպես ժողովուրդները՝ ազատության ոգին: Եվ ահա, երբ Հռոմը քիչ-քիչ սկսում է մասնատվել, մեռնում է նաև ռոմանական ճարտարապետությունը: Հիերոգլիֆը փախչում է մայր եկեղեցուց և գնում տոհմանչան դառնալու՝ դղյակների դիտանոց-աշտարակների վրա՝ ֆեոդալիզմին փայլ տալու համար: Մայր եկեղեցին ինքն էլ՝ երբեմնի այնքան դավանական այդ կառուցվածքը, այդ օրվանից նվաճվելով քաղաքացիական դասի, համայնքի ու ազատության կողմից, խույս է տալիս քահանայից և ընկնում արվեստագետի իշխանության տակ: Արվեստագետը շինում է դա իր ուզած ձևով: Մնաք բարո՛ւյ, խորհրդավորություն, առասպելաբանություն, օրենք: Հրամեցե՛ք, ձեզ մատուցվում է հրեակայություն ու քմայք: Բավական է, որ քահանան ունենա իր տաճարն ու խորանը, այլևս ոչ մի բան չի ասի: Չորս պատերը արվեստագետին են: Ճարտարապետական գիրքն այլևս չի պատկանում հոգևորականությանը, կրոնին, Հռոմին, այլ՝ երեակայությանը, պոեզիային, ժողովրդին: Դրանից են բխում այն ճարտարապետության սրընթաց ու անհամար կերպարանափոխությունները, որն ընդամենը երեք դար է տևել, և որոնք այնքան ապշեցուցիչ են վեց թե ութ դար տևած ռոմանական ճարտարապետության լճացած անշարժությունից հետո:

Բայց և այնպես, արվեստն առաջ է ընթանում հսկայի քայլերով: Ժողովրդի հանճարն ու ինքնատիպությունը կատարում են այն գործը, որ մինչ այդ եպիսկոպոսներն էին անում: Ամեն մի սերունդ անցնելիս իր տողն է գրում այդ գրքում: Նա տաճարների ճակատից քերում է ռոմանական հիերոգլիֆները, և շատ մեծ բան է, եթե մարդ կարողանա այս ու այնտեղ, նրա դրած նոր սիմվոլի տակից, նկատել

դոգման: Ժողովրդի հագցրած պաճուճանքը հազիվ է թույլ տալիս նշմարել կրոնական կմախքը:

Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի՛ ազատություն էին տալիս իրենց այն ժամանակի ճարտարապետները նույնիսկ եկեղեցիների նկատմամբ: Մի տեղ ասես օղահյուսված խոյակների վրա անամոթաբար զուգավորվել են վանականներն ու միանձնուհիները, ինչպես Փարիզի Արդարադատության պալատի Բուխարինների դահլիճում, մի ուրիշ տեղ՝ Նոյ նահապետի գլխին եկած փորձանքն է քանդակված իր ամբողջ մերկությունը, ինչպես Բուրժի մայր եկեղեցու կենտրոնական ավագ դռան տակ. և կամ թե՛ մի հարբած վանական՝ էջի ականջներով և գինու թասը ձեռքին՝ ծիծաղում է ամբողջ միաբանության քթին, ինչպես Բոչերվիլի աբբայարանի լվացարան-սեղանի վրա:

Քարով գրվող մտքի համար այդ դարերում գոյություն ունեւր այնպիսի ազատություն, որը լիովին կարող է համեմատվել մամուլի մեր ժամանակակից ազատության հետ: Դա ճարտարապետության ազատությունն էր: Այդ ազատությունը շատ հեռու է գնում: Երբեմն մի ավագ-դուռ, ճակատամաս կամ եկեղեցին ամբողջովին՝ պարունակում է այնպիսի սիմվոլիկ իմաստ, որը բացարձակապես խորթ է պաշտամունքին կամ նույնիսկ թշնամական է եկեղեցուն: Տասներեքերորդ դարից սկսած՝ Գիյոմ Փարիզցին, Նիկոլա Ֆլամելն էլ՝ տասնչորսերորդ դարում գրել են այդպիսի գայթակղիչ էջեր: Սեն-ժակ-դը-լա-Բուլլըրին ամբողջովին ընդդիմություն արտահայտող եկեղեցի էր:

Այդ դարերում միտքը միայն այս ասպարեզում էր ազատ, դրա համար էլ ամբողջովին գրվում էր հուշարձան կոչվող այդ գրքերում: Հուշարձանի այդ ձևն ընդունելով՝ միտքը կտեսներ, թե ինչպես հասարակական հրապարակում դահիճը խարույկի է մատնում իրեն (միտքը) ձեռագրի ձև ունենալիս, եթե, իհարկե, բավական անխոհեմ լինեւր այդ վտանգավոր քայլն անելու: Այսպիսով, ասպարեզ գալու համար չունենալով այլ միջոց, բացի ճարտարապետությունից, միտքն ամեն կողմից վազում էր այնտեղ: Դա է պատճառը, որ

այդքան շատ մայր տաճարներ ծածկում են Եվրոպան, և դրանց թիվն այնքան վիթխարի է, որ դժվարանում ես հավատալ նույնիսկ ստուգելուց հետո: Հասարակության բոլոր նյութական և բոլոր մտավոր ուժերը գուգամիտում էին դեպի նույն կետը՝ ճարտարապետությունը: Այդպիսով, Աստուծոն եկեղեցիներ կառուցելու պատրվակով՝ արվեստը զարգանում էր սքանչելի համաչափություններով:

Այդ դարաշրջանում ով բանաստեղծ էր ծնվում, դառնում էր ճարտարապետ: Զանգվածների մեջ սփռված հանճարը, որ Ֆեոդալիզմը ամեն կողմից ճնշել էր պղնձե վահանների ծածկույթի նման, ելք էր գտնում միայն ճարտարապետության կողմից, հորդում էր այդ արվեստի մեջ, և նրա իլիականներն ընդունում էին մայր եկեղեցիների ձև: Մյուս բոլոր արվեստները ենթարկվում էին ճարտարապետությանը և ձևավորվում ըստ նրա թելադրանքի: Դրանք մեծ գործի բանվորներն էին: Ճարտարապետը, որ բանաստեղծ էր ու վարպետ, իր անձի մեջ ամբողջացնում էր նաև քանդակագործությունը, որ նախշում էր նրա ֆասադները, նկարչությունը, որ լուսագարդում էր նրա գույնագույն ապակիներով պատուհանները, երաժշտությունը, որ շարժման մեջ էր դնում նրա զանգիրը և հնչեցնում երգեհոնները: Մինչև իսկ խեղճ պոեզիան, բուն պոեզիան, որ համառում էր իր ողորմելի գոյությունը պահել ձեռագրերի մեջ, ստիպված եղավ, որևէ բան լինելու համար, գալ ու տեղավորվել հուշարձանի մեջ՝ օրհներգի կամ շարականի ձևով, այսինքն՝ վերջին հաչվով կատարելու նույն դերը, որ կատարել էին էսքիլեսի ողբերգությունները Հունաստանի քրմական տոնահանդեսների մեջ, Գիրք Մենդոսը՝ Սողոմոնի տաճարում:

Այսպիսով, մինչև Գոտտեմբերգը, ճարտարապետությունն է մարդու հիմնական, համաշխարհային գիրն ու գրվածքը: Այս գրանիտե գիրքը, որ սկսել է Արևելքը և շարունակել է հունական ու հռոմեական հին աշխարհը, վերջին էջը միջնադարին գրել տվեց: Իմիջիայլոց, կաստայի ճարտարապետությանը ժողովրդական ճարտարապետությունը հաջորդելու այս ելևույթը, որ մենք նկատեցինք միջին

դարևրում, նույնանման շարժումով տեղի է ունենում մարդու իմացության ընթացքում, պատմության մյուս մեծ դարաշրջաններում: Այստեղ Համառոտակի ցույց տալու համար այդ օրենքը, որ մանրամասնորեն շարադրելու համար հատորներ են պետք, նշենք վերին Արևելքը՝ նախնական շրջանի օրրանը, որտեղ հնդկական ճարտարապետությանը հաջորդեց փյունիկյանը՝ արաբական ճարտարապետության այդ արգասավոր մայրը. անտիկ աշխարհում, եգիպտական ճարտարապետությունից հետո, որի լոկ տարբերակներն են էտրուսկական ոճը և կիկլոպյան հուշարձանները, գալիս է հունական ճարտարապետությունը, որի լոկ շարունակությունն է կարթագենյան գմբեթով ծանրաբեռնված հռոմեական ոճը. իսկ ավելի նոր ժամանակներում՝ ռոմանական ճարտարապետությանը հաջորդում է գոթականը: Եվ եթե երկատենք ճարտարապետության այս երեք շարքերը, ապա երեք անդրանիկ քույրերի՝ հնդկական, եգիպտական և ռոմանական ճարտարապետությունների մեջ կգտնեք միևնույն սիմվոլը, այսինքն՝ աստվածապետություն, կաստա, միասնության սկզբունք, դոգմա, առասպելաբանություն և Աստված, իսկ երեք կրտսեր քույրերի՝ փյունիկյան, հունական և գոթական ճարտարապետությունների մեջ, ինչպիսին էլ որ լինի նրանց բնույթին հատուկ տարբերությունը, գտնում ենք դարձյալ նույն նշանակությունը, այսինքն՝ ազատություն, ժողովուրդ, մարդ:

Հնդկական, եգիպտական կամ ռոմանական շինությունների մեջ միշտ գգում ես քահանային, հենց միայն քահանային, թեկուզ և նա կոչվի բրահմին, մոգ կամ պապ: Սակայն նույնը չէ ժողովրդական ճարտարապետությունների մեջ: Սրանք ավելի ճոխ ու չքեղ են և նվազ սուրբ: Փյունիկյան ճարտարապետության մեջ զգացվում է վաճառականը, հունականի մեջ՝ Հանրապետականը, գոթականի մեջ՝ քաղաքի բնակիչը:

Աստվածապետական ամեն մի ճարտարապետության գլխավոր հատկանիշներն են՝ անփոփոխություն, առաջադիմությունից

սարսափելը, ավանդական գծերի պահպանումը, սկզբնական նմուշներին նվիրագործումը, մարդու և բնության բոլոր ձևերի մշտական ենթարկումը սիմվոլի անհասկանալի քմահաճություններին: Դրանք խրթին գրքեր են, որ իրազեկները միայն կարող են վերծանել: Բացի դրանից, ամեն մի ձև, անգամ ամեն մի տձևություն, իմաստ ունի այնտեղ, և դա անբռնաբարելի է դարձնում նրան: Մի՛ պահանջեք հնգկական, եփյապտական կամ ռոմանական շինություններից, որ վերափոխեն իրենց գծագիրը կամ քայրելավեն քանդակները: Ամեն մի կատարելագործում սրբապղծություն է նրանց համար: Այդ ճարտարապետությունների մեջ դոգմայի աներերությունը կարծես թե տարածված է քարի վրա՝ որպես մի երկյորդ քարացածություն:

ժողովրդական ճարտարապետությունների գլխավոր հատկանիշներն, ընդհակառակը, բազմազանությունն է, առաջադիմությունը, ինքնատիպությունը, ճոխությունն ու մշտական շարժումը: Դրանք արդեն բավականաչափ անջատված են կրոնից, ուստի և մտածում են իրենց գեղեցկություն մասին, խնամք են տանում դրան, սնիտնջ կերպով բարելավում արձանների ու արտեբսկների իրենց զարդարանքը: Դարի հետ են ընթանում նրանք և ունեն ինչ-որ մարդկային բան, որ անընդհատ խառնում են աստվածային սիմվոլին, որի անունով էլ դեռևս կերտվում են: Դրա պատճառով է, որ այդ հուշարձանները թափանցում են ամեն մի հոգու, ամեն մի երևակայության մեջ, ու թեև դեռ սիմվոլիկ, բայց դյուրըմբռնելի են, ինչպես բնությունը: Աստվածապետական ու այս ճարտարապետությունն իրարից տարբերվում են այնպես, ինչպես սրբազան-տաճարական լեզուն՝ ժողովրդական լեզվից, Հիերոգլիֆը՝ արվեստից, Սողոմոնը՝ Ֆրդիասից:

Եթե ամփոփենք այն ամենը, ինչ ասվեց այստեղ խիստ համառոտակի, զանց առնելով հազարավոր ապացույցներն ու մանրամասնություններին վերաբերող առարկությունները, ապա կհասնենք հետևյալին. մինչև տասնհինգերորդ դարը ճարտարապետությունը եղել է մարդկության տարբերության գլխավոր մատյանը, այդ

ժամանակամիջոցում աշխարհում չի ծագել որևէ թեկուզ փոքրիշատե բարդ գաղափար, որ հուշարձանի ձևով չարտահայտվի. յուրաքանչյուր ժողովրդական գաղափար, ինչպես և ամեն մի կրոնական օրենք, ունեցել է իր հուշարձանները, և վերջապես, մարդկային ցեղը որևէ կարևոր բան չի մտածել, որ քարի մեջ կամ քարի վրա դրած չլինի: Իսկ ինչո՞ւ, որովհետև ամեն մի միտք, լինի կրոնական թե փլիսոփայական, շահագրգռված է մշտնջենական լինելու, որովհետև մեկ սերունդ տոգորած գաղափարը ուզում է ուրիշ սերունդներ էլ տոգորել-հուզել, ինչպես նաև իր հետքը թողնել: Եվ ահա տեսեք, թե որքա՞ն անհաստատ է ձեռագրի անմահությունը, և որքա՞ն ավելի ամուր, երկարատև ու դիմացկուն է հուշարձան-գիրքը: Գրավոր խոսքը ջնջելու համար բավական է մի ջահ կամ մի թուրք: Կառուցված խոսքը խորտակելու համար անհրաժեշտ է հասարակական հեղաշրջում, երկրային տակնուվրայություն: Բարբարոսներ են անցել Կոլիզեոմի վրայով, ջրհեղեղ է թերևս անցել բուրգերի վրայից:

Ամեն ինչ փոխվում է տասնհինգերորդ դարում:

Մարդկային միտքը հայտնագործում է մշտնջենական դառնալու ոչ միայն ավելի երկարատև և ավելի դիմացկուն, այլև ավելի հեշտ ու ավելի պարզ միջոց: Ճարտարապետությունը գահընկեց է արվում: Օրփեոսի քարեղեն տառերին հաջորդելու են գալիս Գուտենբերգի արճիճե տառերը:

ԳԻՐՔԸ ԿՍՊԱՆԻ ԵՆԵՔԸ

Տպագրության գյուտը պատմության ամենամեծ իրադարձությունն է՝ մայր հեղափոխությունը: Դա մարդկության մտքի արտահայտության բոլորովին փոխված նոր ձևն է: Դրանով մարդկային միտքը դեն է գցում մի ձև և ընկալում մի ուրիշը: Դա այն սիմվոլիկ օձի շապկի լրիվ ու վերջնական փոխումն է, որով Ադամից սկսած ներկայացրել են խելքը:

Միտքը տպագիր ձև ստանալուց հետո՝ ավելի անկորչելի է դառնում, քան երբևիցե, որովհետև թևավոր է, անորսալի, անջնջելի: Նա

խառնվում է օդին: Ճարտարապետութեան դարաշրջանում միտքը դառնում էր լեռ ու հզորապես տիրանում դարին ու վայրին: Այժմ նա վերածվում է թռչունների երամի ու սլանում ամեն կողմ և միաժամանակ՝ գրավում օդի ու տարածութեան բոլոր կետերը:

Կրկնում ենք, ո՞վ չի տեսնում, որ այս ձևով միտքն ավելի անեղծ է: Կարծր ու ամուր վիճակից այժմ դառնում է աշխույժ, տևականությունից անցնում է անմահութեան: Կարելի է, իհարկե, փշրել զանգվածը, բայց ինչպե՞ս կարելի է ջնջել ամենուրեքությունը: Եթե ջրհեղեղ պատահի, լեռը երկար ժամանակ կմնա ջրերի տակ, իսկ թռչունները կշարունակեն սավառնել, և եթե լոկ մի տապան ծփա այդ աշխարհավեր ջրերի վրա, թռչունները կնստեն տապանին, կլողան նրա հետ, միասին ներկա կլինեն ջրերի նվազումին, իսկ այդ քառսից դուրս եկող նոր աշխարհը արթնանալիս կտեսնի, որ իր գլխավերևում թևավոր ու կենդանի սավառնում է ընկղմված աշխարհի միտքը: Եվ երբ տեսնում ենք, որ միտքն արտահայտելու այդ ձևը ոչ միայն ամենաապահովն է, այլև ամենապարզը, ամենահարմարը, բոլորի համար գործածականը, երբ մտածում ենք, որ նա հարմարանքների ծանր բեռ չի քարշ տալիս իր հետ, մեծ սարքավորում չի պահանջում, երբ համեմատում են այն միտքը, որ ստիպված է թարգմանվել հուշարձանի, շարժման մեջ է դնում չորս-հինգ այլ արվեստներ և տոննաներով ոսկի, քարերի մի ամբողջ սար, փայտակերտների մի ահագին անտառ, բսնվորների մի ամբողջ բանակ, երբ դա համեմատում են գրքի ձև ընդունած մտքի հետ, որին բավական է մի քիչ թուղթ, մի քիչ թանաք ու մի գրիչ, ապա կարելի՞ է արդյոք զարմանալ, որ մարդկային խելքը հրաժարվում է ճարտարապետութունից՝ հօգուտ տպագրութեան: Գետի սկզբնական հունը հանկարծ կտրեցնք նրա մակերեսից ցած փորված ջրանցքով և կտեսնեք, որ գետը կհեռանա իր հունից:

Եվ ահա տեսեք, թե ինչպես տպագրութեան գյուտից հետո ճարտարապետութունն աստիճանաբար չորանում է, գոսանում ու

մահանում: Դուք կզգաք, որ ջուրն իջնում է, հյուսիսը ցամաքում, և ժամանակների ու ժողովուրդների միտքը հեռանում նրանից:

Այդ սառեցումը գրեթե անզգալի է տասնհինգերորդ դարում, որովհետև մամուլը դեռ շատ տկար է ու անզոր և շատ-շատ կարող է հզոր ճարտարապետությունից կորզել նրա կյանքի գերառատությունն ավելցուկը: Սակայն տասնվեցերորդ դարից սկսած՝ ակներև է դառնում ճարտարապետության հիվանդությունը, նա այլևս գերազանցորեն հասարակության մտքերը չի արտահայտում, թշվառական ձևով դառնում է կլասիկ արվեստ, գաղղիականից, եվրոպականից, տեղականից վեր է ածվում հունականի ու հռոմեականի, ճշտից ու ժամանակակիցի՝ կեղծ-անտիկի: Ահա այդ անկումն էլ անվանում են Վերածնություն: Բայց և այնպես, հոյակապ անկում, որովհետև գոթական հինավուրց հանճուրը, Մայնց քաղաքի տպագրական վիթխարի մամուլի ետևը մայր մտնող այդ արևը իր վերջին ճաճանչներով դեռ որոշ ժամանակ էլ կթափանցի լատինական կամարաշարերի և կորնթական սյունաշարերի այդ խառնակազմ դեզի մեջ:

Մայրամուտի այդ արևն էլ ահա մենք համարում ենք արշալույս:

Սակայն այն օրվանից, երբ ճարտարապետությունը դառնում է մյուսների վիճակն ունեցող մի արվեստ, հենց որ նա դադարում է համապարփակ արվեստ, ինքնակալ արվեստ, բռնակալ արվեստ լինելուց, այլևս կորցնում է մյուս արվեստները կաշկանդած պահելու ուժը: Նրանք էլ ազատագրվում են, փշրում ճարտարապետության լուծը, և ամեն մեկն իր ուզած կողմը գնում: Դրանցից յուրաքանչյուրը շահում է այդ ապահարգանից: Մեկուսացումը մեծացնում է ամեն մեկին: Քանդակագործությունը դառնում է արձանագործություն, պատկերագրությունը՝ նկարչություն, եկեղեցական կանոնադրությունը՝ երաժշտություն: Կարծես թե մի կայսրություն անդամահատվում է իր Ալեքսանդրի մահվանից հետո, և դրա նահանգները դառնում են առանձին թագավորություններ:

Դա էլ ծնունդ է տալիս Ռաֆայելին, Միքել-Անջելոյին, Ժան Գու-
ժոնին¹³⁷, Պալեստրինային¹³⁸՝ շլացուցիչ տասնվեցերորդ դարի այդ
պայծառություններին:

Արվեստների Հետ միաժամանակ ազատագրվում է միտքը ամեն
կողմից: Միջին դարերի Հերետիկապետներն արդեն լայն խորշեր էին
բացել կաթոլիկության մարմնի վրա: Տասնվեցերորդ դարը փշրեց
կրոնական միասնությունը: Տպագրությունից առաջ բարեփոխումը
լուկ Հերձված կլիներ, իսկ տպագրությունը դարձրեց դա Հեղափո-
խություն: Վերացրեք մամուլը, և ահա Հերետիկոսությունը ջլատ-
ված է: Ծակատագրական է թե նախախնամության գործ, բայց և
այնպես, Գուտենբերգը Լյութերի նախակարապետն է:

Իսկ երբ միջնադարի արևը բոլորովին մայր մտավ, երբ գոթական
Հանճարն ընդմիշտ Հանգավ արվեստի Հորիզոնում, ճարտարապե-
տությունը շարունակեց ավելի ու ավելի աղոտանալ, գունաթափվել
ու ջնջվել: Տպագրված գիրքը՝ հուշարձանը կրժող այդ որդը, ծծում
է նրա հյուսիսը, լափում նրան: Նա զրկվում է իր պահուստներին,
տերևաթափվում ու նիհարում է աչքի առաջ: Այլևս ճղճիմ է նա,
խեղճ, ոչինչ: Այլևս ոչինչ չի արտահայտում նա, ոչ նույնիսկ մի
ուրիշ ժամանակի արվեստի հուշը: Թողնված իր բախտին, լքված
մյուս արվեստների կողմից, որովհետև մարդկային միտքն է լքում
նրան, նա արվեստագետներ չկարողանալով ճարել՝ արհեստավորներ
է կանչում: Գույնզգույն ապակիներից կազմված գարդանկարների
փոխարեն՝ պատուհանները ծածկվում են պարզ ապակիներով: Քան-
դակագործին Հաջորդում է քարտաշը: Մնաք բարո՛վ ամենայն կեն-
սահյուսթ, ամենայն ինքնատիպություն, կյանք և ուշիմություն: Դար-
ձած մի ողբալի մուրացկան՝ քարչ է գալիս նա արհեստանոցներում

137. Ֆրանսիացի նշանավոր քանդակագործ ու ճարտարապետ (1515-^o).

մասնակցել է Լուվրի. Էկուան դղյակի գարդարմանը: Փարիզի Անմեյններ
շատրվանի Հեղինակն է:

138. Եկեղեցական երաժշտության բարեփոխիչ, իտալացի կոմպոզիտոր
(1524-1594):

և ընդօրինակումներով գլուխ պահում: Միքել-Անջելոն, որ տասնվեցերորդ դարից սկսած՝ անկասկած զգում էր նրա մեռնելը, հղացավ մի վերջին միտք, հուսահատ միտք: Արվեստի այդ տիտանը Պանթեոնը դրեց Պարթենոնի վրա և ստեղծեց Հռոմի Սուրբ Պետրոս տաճարը: Մեծ, հոյակապ մի կերտվածք, որ արժանի էր եզակի մնալու, ճարտարապետության վերջին ինքնատիպությունը, հսկա արվեստագետի ստորագրությունը քարեղեն հսկայական մատյանի տակ, որը փակվում էր:

Մեռնում է Միքել-Անջելոն, իսկ ի՞նչ է անում ուրվականի ու ստվերի վիճակում իրեն վերապրած այդ թշվառ ճարտարապետությունը: Վերցնում է Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարը և պատճենահանում է, նմանակերպը շինում: Դա դառնում է մոլություն, և ինքնին արգահատելի է: Յուրաքանչյուր դար ունի իր Հռոմի Սուրբ Պետրոսը, տասնյոթերորդ դարում Վալ-դը-Գրասն է, տասնութերորդ դարում՝ Սենտ-Փրնէիւր: Լոնդոնն ունի իրենը, Պետերբուրգն իրենը: Փարիզն ունի այգլիսի երկու-երեք տաճար: Անիմաստ մի կտակ, զառամած և մեռնելուց առաջ մանկամտության մեջ ընկնող մի արվեստի վերջին զառանցանքը:

Եթե այդպիսի հատկանշական հուշարձանների փոխարեն, որոնց մասին խոսեցինք քիչ առաջ, քննենք տասնվեցերորդ կամ տասնյոթերորդ դարերի արվեստի ընդհանուր պատկերը, ապա հետաճման և հյուժախտի նույն երևույթները կնկատենք: Ֆրանսուա II-ից հետո հուշարձանի ճարտարապետական ձևը հետզհետե ավելի է ջնջվում և ցայտուն դարձնում երկրաչափական ձևը, ինչպես նիհարած հիվանդի կմախքը: Արվեստի գեղեցիկ գծերը տեղի են տալիս երկրաչափության սառն ու անողոք գծերին: Շենքն այլևս չենք չէ, այլ ինչ-որ բազմանիստ: Եվ սակայն ճարտարապետությունը տանջվում է այդ մերկությունը ծածկելու համար: Ահա հունական ֆրոնտոնը՝ ներդրված Հռոմեական ֆրոնտոնի մեջ և կամ հակառակը: Եվ դա միշտ նույնն է՝ Պանթեոնը Պարթենոնի մեջ, այսինքն՝ Հռոմի Սուրբ

Պետրոսի տաճարը: Ահա Հենրի IV-ի ժամանակների աղյուսե, սակայն քարե անկյուններով տներ, ահա Արքայական հրապարակը, Դոֆինի հրապարակը: Ահա Լյուդովիկոս XIII-ի շրջանի եկեղեցիները՝ ծանր, ցածրիկ, գետնահաս, կծկված, պտակված սապատանման գմբեթով: Ահա մագարիսյան շրջանի ճարտարապետությունը՝ Ջորս Ազգերի կոլեջի իտալական վատ նմանակերպը: Ահա Լյուդովիկոս XIV-ի պալատները՝ արքունական տիպի երկար, անհրապույր գորանոցներ՝ սառցաշունչ ու ձանձրալի: Ահա վերջապես Լյուդովիկոս XV-ի դարաշրջանը՝ իր եղբերդատերևի ու ճիճվահետքերի նմանող նախշերով, իր բոլոր կոծիծներով ու սնկանման ելուստներով, որոնք այլանդակում են այդ զառամած, ատամնաթափ, բայց և պչրամոլ ճարտարապետությունը: Ֆրանսուա II-ից մինչև Լյուդովիկոս XV-ը հիվանդությունն անեց երկրաչափական պրոգրեսիայով: Արվեստը ոսկորների վրա քաշած կաշի ունի միայն և թշվառ հոգևարքի մեջ է:

Իսկ այդ միջոցին ի՞նչ է դառնում տպագրությունը: Ճարտարապետությունից հեռացող այդ ամբողջ կյանքը գնում է նրա մոտ: Ինչ չափով ճարտարապետությունն ընկնում է, այն չափով էլ տպագրությունն ուռչում ու մեծանում է: Ուժերի այն քանակը, որ ծախսում էր մարդկությունը հուշարձաններ կառուցելու, սրանից հետո ծախսում է գրքեր տպագրելու վրա: Ուստի և տասնվեցերորդ դարից սկսած՝ մամուլը ուճանալով ու հասնելով հյուծվող ճարտարապետության մակարդակին, պայքարում է նրա դեմ և սպանում: Տասնյոթերորդ դարում նա արդեն բավական ինքնիշխան է, բավական հաղթական և իր հաղթանակի մեջ այնքան ապահով, որ կարող է գրական մեծ դարի տոնահանդես տալ աշխարհին: Լյուդովիկոս XIV-ի արքունիքում երկար ժամանակ հանգստանալուց հետո նա դարձյալ ձեռքն է առնում Լյութերի հին սուրը, դրանով զինում է Վոյտերին և ժխորաձայն վազում է գրոհելու այն հին եվրոպայի վրա, որի ճարտարապետական արտահայտությունն արդեն սպանել էր: Նա ամեն ինչ կործանել էր այն պահին, երբ վերջանում էր

տասնութերորդ դարը: Տասնիններորդ դարում ձեռնամուխ կլինի վերականգնմանը:

Արդ, հարցնում ենք մենք, երեք դարուց ի վեր այդ երկու արվեստներից ո՞րն է ներկայացնում մարդկային միտքը: Մ՞րն է նրա թարգմանը: Մ՞րն է արտահայտում ոչ միայն նրա դրական ու սխուլաստիկ հափշտակությունները, այլև նրա լայնահոծ, խոր ու համաշխարհային շարժումը: Մ՞րն է առանց խզման և առանց անջրպետի մշտապես դիպվում մարդկային ցեղին՝ այդ առաջ շարժվող հազարտանանի հրեշիս զուգընթաց: Ծարտարապետությունը, թե՞ տպագրությունը:

Տպագրությունը: Չարժե խաբել ինքն իրեն, ճարտարապետությունը մեռած է, մեռած է անդառնալիորեն, սպանված է տպագիր գրքի ձեռքով, սպանված է, որովհետև նվազ տևական է, սպանված է, որովհետև ավելի թանկ է նստում: Ամեն մի մայր եկեղեցի մեկ միլիարդ արժե: Պատկերացրեք հիմա, թե ինչպիսի գումարներ պետք կլինի ներդնել ճարտարապետության գիրքը նորից գրելու համար, երկրի երեսը նորից հազարավոր այդպիսի շենքերով ծածկելու և այն դարաշրջաններին վերադառնալու համար, երբ ականատես վկաների ասելով՝ հուշարձանների թիվն այնքան մեծ էր, «որ կարծես թե աշխարհը թափ տալով իրեն՝ դեն էր գցել իր հին հազուստները եկեղեցիների ճերմակ զգեստ հագնելու համար»: Այսինքն՝ *Erat enim ut si mundus, ipse excutiendo semet, rejecta vetustate, candidam ecclesiarum vestem induerat.* (GLABER RADUL—PHUS).

Մինչդեռ գիրքն անմիջապես պատրաստվում է, այնքան էժան է և կարող է խիստ հեռու գնալ: Էլ ինչպե՞ս զարմանաս, որ մարդկային ամբողջ միտքը հոսում է այս գառիվայրով: Սա իհարկե չի նշանակում, որ ճարտարապետությունն այս ու այնտեղ դեռ չի կանգնեցնի որևէ գեղեցիկ հուշարձան, մեկուսացած գլուխ-գործոց: Տպագրության իշխանություն օրոք, ժամանակ առ ժամանակ, իհարկե, կարող է շինվել, իմ ենթադրությամբ, որևէ սյուն՝ մի ամբողջ բանակի ձեռքով և թնդսնոթներից ձուլված պատիճով, ինչպես որ

ճարտարապետութեան իշխանութեան օրոք իլիականներ ու ռոմանսերոներ, մահաբահրաթաններ ու նիբելունգներ էին սակողովում մի ամբողջ ժողովրդի ձեռքով, իրար վրա կուտակված ու միաձուլված բեկորներից: Հանճարեղ ճարտարապետի հայտնվելու մեծ պատահակալութիւնը կարող է տեղի ունենալ և քսաներորդ դարում, ինչպես Դանթեի առաջ գալը տասներեքերորդ դարում: Սակայն ճարտարապետութիւնն այլևս հասարակական արվեստ, կոլեկտիվ ու տիրապետող արվեստ չի լինի: Մարդկութեան մեծ պոեմը, մեծ կոթողը, մեծ ստեղծագործութիւնն այլևս չի կառուցվի, այլ կտպագրվի:

Եվ եթե այսուհետև ճարտարապետութիւնը պատահմամբ ոտքի կանգնի, ապա այլևս տիրակալ չի լինի: Նա կենթարկվի գրականութեան օրենքին, որ մի ժամանակ ինքն էր ճարտարապետութիւնից ստանում: Երկու արվեստների փոխադարձ դիրքերը խիստ կփոխվեն: Կասկածիդ դուրս է, որ ճարտարապետութեան դարաշրջանում պոեմները, ճիշտ է՝ սակավաթիվ, նման էին հուշարձաններին: Հնդկաստանում Վիասան սաղարթախիտ է, տարօրինակ, անանցանելի, ինչպես կռատունը: Եգիպտական արևելքում պոեզիան, հուշարձանների նման, ունի գծերի վեհութիւն ու հանդարտութիւն, հին հունաստանում՝ գեղեցկութիւն, պայծառութիւն, անդորր, քրիստոնեական եվրոպայում՝ կաթոլիկական վսեմութիւն, ժողովրդական միամտութիւն, վերանորոգման դարաշրջանի փարթամ ու փայլուն բուսակալութիւն: Աստվածաշունչը նման է բուրգերին, իլիականը՝ Պարթենոնին, Հոմերոսը՝ Յիդիասին: Դանթեն տասներեքերորդ դարում՝ նշանակում է ռոմանական վերջին եկեղեցին. Շեքսպիրը տասնվեցերորդ դարում՝ գոթական վերջին տաճարը:

Այսպիսով, ամփոփելու համար այն ամենը, որ մինչև այստեղ ասացինք՝ անհրաժեշտաբար անկատար և կցկտուր ձևով, կրկնենք՝ մարդկային ցեղը ունի երկու գիրք, երկու մատյան, երկու կտակարան՝ ճարտարապետութիւնն ու տպագրութիւնը, քարե աստվածաշունչը և թղթե աստվածաշունչը: Դարերի ընթացքում այնքան լայն բացված այդ երկու աստվածաշունչները դիտելիս, անկասկած, թույլատրելի է

սփսոսալ գլխանիտե գրության ակներև փառահեղությանը, որպես
յուեանաշար, նախագուռ ու կոթող ձևակերպված այդ հսկայական այ-
ուրեքները, մարդու ստեղծած այդ մի տեսակ լեռները, որ ծածկում
են աշխարհը և անցյալը՝ բուրգերից սկսած մինչև զանգակատները,
Քեոփոց մինչև Ստրասբուրգ: Անցյալը այդ մարմարե էջերի վրա
պետք է կարգալ: Պետք է հիանալ ու անընդհատ թերթել ճարտարա-
պետության գրած գիրքը, սակայն չպետք է ուրանալ այն կոթողի
Տեծությունը, որ իր հերթին, բարձրացնում է տպագրությունը:

Վիթխարի է այդ կոթողը: Ես չգիտեմ, թե ո՞ր վիճակագիրը հաշ-
վել է, որ եթե իրար վրա դնեն Գուտենբերգից մինչև այսօր մամու-
լից գուրս եկած բոլոր գրքերը, ապա կարելի կլինի լցնել երկրա-
չնդից մինչև լուսին եղած տարածությունը: Սակայն այս տեսակ մե-
նություն մասին չէ, որ մենք ուզում ենք խոսել: Այնուամենայնիվ,
երբ փորձում ես մտքումդ ի մի բերել տպագրության՝ մինչև մեր
չրերը տված արտագրանքի ամբողջական գումարը, ապա այդ
ամբողջությունը մեզ չի՞ թվա արդյոք որպես ամբողջ աշխարհին
հենված մի անծայրածիր կառուցվածք, որի վրա անդուլ ու անդա-
շար աշխատում է մարդկությունը և որի հրեշավոր գլուխը կորած է
սպագայի թանձր մշուշում: Դա իմացություն մըջնանոցն է: Դա այն
փեթակն է, ուր բոլոր երևակայությունները՝ այդ ոսկեգույն
մեղունները, բերում են իրենց մեղրը:

Այդ կառուցվածքը հազար հարկ ունի: Նրա բազրիքների մոտ,
այս ու այնտեղ, բացվում են գիտության խավարչտին քարանձավ-
ները, որոնք միմյանց հատում են նրա ընդերքում: Նրա մակհրեսի
վրա, ամենուրեք, արվեստը շողշողացնում է մեր աչքի առաջ իր
արարեսկները, վարդաբանդակներն ու ժանյակները: Այնտեղ ամեն
մի անհատական գործ, որքան էլ քմահաճ ու մեկուսացած թվա, ունի
իր տեղն ու ելուստը: Ներդաշնակությունը բխում է ամեն ինչից:
Շեքսպիրի մայր եկեղեցուց սկսած մինչև Բայրոնի մզկիթը, հազարա-
վոր զանգակներ խառնիխուռն դիպվում են համաշխարհային մտքի
այդ ոստանի վրա: Նրա վերնահիմքի վրա նորից նոր գրել են

մարդկության մի քանի հին անուններ, որ ճարտարապետությունը չէր արձանագրել: Մուտքի ձախ կողմում գրվագել են Հոմերոսի սպիտակ մարմարե հին խորաքանդակը, աջ կողմում՝ բազմալեզու Աստվածաշունչն է տնկել իր յոթ գլուխները: Ռոմանսերոյի հիդրան փշաքաղվում է քիչ այն կողմը, ինչպես նաև մի քանի ուրիշ խառնածին ձևեր՝ Վեդաներն ու Նիրելունգները:

Չմոռանանք ասել, որ այդ հրաշակերտ շենքը մնում է անսպարտ: Մամուլը՝ այդ տիտանական մեքենան, որ անդադար մղում-հանում է Հասարակության մտավոր հյուսթը, անդուլ կերպով նոր նյութեր է ժայթքում իր կերտվածքի համար: Ամբողջ մարդկությունը շինարարական լաստակների վրա է: Ամեն մի միտք որմնադիր է: Ամենահամեստը իր խոռոչն է փակում կամ իր քարը դնում: Ռետիֆ դը-լա-Բրետոնը¹³⁹ գաջի կտորտանքով լի իր կողովն է շալակած բերում: Ամեն օր բարձրանում է մի նոր քարաշար: Յուրաքանչյուր գրողի ինքնուրույն և անհատական մուծումից անկախ՝ տեղի են ունենում նաև կոլեկտիվ մուծումներ: Տասնութերորդ դարը տվեց Հանրագիտարանը, հեղափոխության դարաշրջանը՝ «Մոնիտյորը»¹⁴⁰:

Անկասկած, դա էլ մի կառուցվածք է, որ անվերջ մեծանում ու լեռնանում է սպիրալների ձևով, այդտեղ էլ լեզուների խառնաչփոթություն կա, անվախճան գործունեություն, անխոնջ աշխատանք, բովանդակ մարդկության կատաղի մրցություն, իմացականությանը խոստացված ապաստարան ընդդեմ մի նոր ջրհեղեղի, ընդդեմ բարբարոսների ողողման: Դա էլ մարդկության երկրորդ Բաբելոնի աշտարակն է:

139. Ֆրանսիացի գրող, ուտոպիստ (1734-1806):

140. Ֆրանսիական բուրժուական առաջին հեղափոխության ժամանակ հիմնադրված թերթ, հետագայում, մինչև 1869 թ., կառավարութայն պաշտոնական օրգանը:

ՎԵՑԵՐՈՐԴԻ ԳԻՐՔ

I

ԱՆԿՈՂՄԵԱԿԱԼ ՀԱՅԱՑՔ ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Փրկչական 1482 թվականին խիստ երջանիկ անձնավորություն էր ազնվական ու ասպետ, Բեյնի սեպուհ, Իվրիի և Մարչ նահանգի Սենտ-Անդրիի բարոն, արքայական խորհրդատու և սենեկապան, ինչպես նաև Փարիզի պրեոյության պետ Ռոբեր դ'Էստուտվիլը: Մտավորապես տասնյոթ տարի էր արդեն, որ նա 1465 թվականի նոյեմբերի 7-ին, գիսաստղի¹⁴¹ տարին, թագավորից ստացել էր Փարիզի պրեոյության պետի այդ փառավոր պաշտոնը, որ ավելի չուտ ավատություն էր, քան թե պաշտոնավարություն: *Dignitas, quae cum non exigua potestate politiam concernente, atquae praerogativis multis et iuribus conjuncta est*¹⁴².— ասում է Ժոաննես Լյոմնոուսը: Զարմանալի էր, որ 82 թվականին ազնվագարմ մի անձ կատարում է արքայական ծառայություն, որի նշանակման դրությունները հաստատված էին այն թվին, երբ Լյուդովիկոս XI-ի ապօրինի դուստրը ամուսնացավ Բուրբոնի դքսի ապօրինի որդու հետ: Ճիշտ այն օրը, երբ Ռոբեր դ'Էստուտվիլը փոխարինեց Ժակ դը Վիլիբին որպես Փարիզի պրևո, տյար Ժեհան Դովեն փոխարինեց պարոն Հելի դը Թորետին որպես դատական պալատի առաջին նախագահ, Ժեհան Ժուվրնել դե

141. Այս գիսաստղը, որի դեմ Կալիստրատոս պապը Բորջիայի հորեղբայրը, հրամայեց հունրային մողթանքներ կատարել, այն է, որ նորից կերևա 1835 թվականին: Մնթ. հեղինակի:

142. Պաշտոն, որ պետական ոչ փոքր իշխանության հետ միացած է բազմաթիվ մենաշնորհներով և իրավունքներով (լատ.):

զ՝Ուրսեներ գրավում էր Պիեռ դը Մորվիլիեի պաշտոնը որպես Ֆրանսիայի գերագույն դատավորի, Ռենյո դե Դորմանը ի դերև էր հանում Պիեռ Պյուեի հույսը պալատին ներկայացվող դիմումների կառավարչի պաշտոնի նկատմամբ: Ահա թե նախագահի, գերագույն դատավորի և դիվանի կառավարչի պաշտոնները քանի՛ գյուխների վրա ման էին եկել այն օրվանից հետո, ինչ Ռուբեր դ՛էստուտվիլը ստացել էր Փարիզի պրեռոյի պաշտոնը:

Այդ պաշտոնը տրված էր նրան ի պահպանութուն՝ ասում էին արքունի հրամանագրերը, և արդարև, նա լավ էր պահում դա: Փակչել էր նա դրան, միաձուլվել և այնպես էր նույնացել, որ խուսափել էր Լյուդովիկոս XI-ի պաշտոնափոխութուններ անելու մոլագարութունից, չէ՞ որ այդ չվստահող, բարկացնել սիրող և աշխատունակ արքան ջանում էր հաճախակի նշանակումներով և պաշտոնահանումներով պահել իր իշխանության ճկունութունը: Ավելին, ազնիվ ասպետը կարողացել էր իր պաշտոնը որդուն փոխանցելու իրավունք ձեռք բերել, և երկու տարի էր արգեն, ինչ ազնվատոհմ դինակիր ժակ դ՛էստուտվիլի անունը փայլում էր նրա անվան կողքին Փարիզի պրեռոյության պաշտոնագրերում: Հաղվալես և անկասկած մեծագույն շնորհ: Ճիշտ է՝ Ռոբեր դ՛էստուտվիլը քաջ զինվորական էր եղել, օրինապահորեն իր դրոշը բարձրացրել էր Հանրային բարօրության լիգայի դեմ և մատուցել էր թագուհուն, նրա Փարիզ մտնելու օրը, 14... թվականին անուշեղենից շինված մի զմայլելի եղջերու: Բացի դրանից, նա արքայական դատարանի նախագահ և ոստիկանապետների պրեռոյար Տրիստան լ՛էրմիտի մտերիմ բարեկամն էր:

Ինչպես տեսնում ենք՝ իրիստ քաղցր ու հաճելի կյանք էր վարում տյար Ռոբերը: Նախ՝ ստանում էր հիանալի ոռճիկ, որին միանում և կախվում էին, որպես հավելյալ ողկույզներ նրա որթատունկին, պրեռոյության քաղաքացիական ու քրեական դատարանների դիվանապետության եկամուտները, ապա Փոքր Շատլեի քաղաքացիական ու քրեական ստորին ատյանների եկամուտները, չհաշվելով Մանտի

և Կորբեյի կամուրջների փոքրաքանակ անցավճարները, Փարիզի հացահատիկի վերակացուի փայտ չափողների և աղ կշռողների վրա դրված տուրքի մասնահանուամները: Ավելացրեք դրան կեսը կարմիր և կեսը շագանակագույն զգեստներով պճնված քաղաքամասային պետերի և թաղապետների հեծյալ զբոսանքների ժամանակ, նրանց զլուխն անցած, իր մարտական գեղեցիկ հագուստը և Մոնլերիի ճակատամարտում ծռմուված սաղավարտը ցուցադրելու և մյուսների փայլը նսեմացնելու հաճույքը (այդ հագուստը հիմա էլ կարող եք տեսնել և զմայլվել. քանդակված է դա նրա տապանի վրա Նորմանդիայի Վալմոն արքայարանում): Բացի դրանից, քի՞չ բան է միթե կատարյալ իշխանություն ունենալ քաղաքային պահակազորքի, Շատլեի դռնապահի և պահակախմբի վրա, Շատլեի երկու դատավորների (*auditores castelleti*), տասնվեց քաղաքամասերի տասնվեց կոմիսարների, Շատլեի բանտապետի, ավատային չորս սերժանտների, հարյուր քսան հեծյալ սերժանտների, հարյուր քսան մահակակիր սերժանտների, գիշերապահության ասպետի ու նրա գիշերապահի, սրա ենթագիշերապահի, սրա փոխգիշերապահի և սրա վերջնագիշերապահի վրա: Քի՞չ բան է գործագրել բարձր և ստորին արդարադատություն, ունենալ քննելու, կախելու ու նշավակելու իրավունք, չհաշվելով առաջին ասյանում (*in prima instantia*՝ ինչպես խարտիաներն են ասում) մանր գործերը քննելու իրավունքը Փարիզի դերկոմսության մեջ, որ այնքան փառապանծ կերպով օժտել են յոթ ազնվապետական դատարաններով: Կարելի՞ է պատկերացնել ավելի հաճելի բան, քան կալանավորելն ու դատաստան տեսնելը, ինչպես անում էր ամեն օր տյար Ռոբեր դ'Էստուտվիլը Մեծ Շատլեում, Ֆիլիպ-Օգոստոսի լայն ու բարձրալիք, ձվաձև-սրածայր կամարակապների տակ, և ըստ իր սովորության՝ ամեն երեկո գնալ Գալիլեի փողոցում, Արքայական պալատի շրջապատում գտնվող իր գեղեցիկ տունը, որ ստացել էր որպես օժիտ իր կնոջից՝ տիկին Ամբրուազ դը Լորբից, և հանգստանալ այնտեղ այն հոգնությունից հետո,

որ պատճառով էր նրան որևէ թշվառականի գիշերելու ուղարկելը «Մաշկահանման փողոցի այն փոքրիկ կացարանը, որ Փարիզի պրեռններն ու քաղաքամասերի պետերը դարձրել էին բանտ, որպիսին ուներ տասնմեկ ոտնաչափ երկարություն, յոթ ոտնաչափ և չորս մատնաչափ լայնություն և տասնմեկ ոտնաչափ բարձրություն»¹⁴³:

Եվ տյար Ռոբեր դ'Էստուտվիլը ուներ ոչ միայն Փարիզի պրեռոյի ու դերկոմսի իր մասնավոր դատավարությունը, այլև աչքի ու ատամի բաժին ուներ արքայի գերագույն դատական օրգանում: Չկար որևէ փոքրիշատե բարձրաստիճան մարդու գլուխ, որ նրա ձեռքից չանցներ՝ նախքան դահճի կողմից կտրվելը: Սա ինքն էր գնացել Բաստիլ Սենտ-Անտուան և վերցրել Նեմուրի դքսին ու տարել Շուկայի հրապարակ՝ մահապատժի ենթարկելու, Գրեի հրապարակ, դարձյալ մահապատժի համար, տարել էր պարոն դը Սեն-Պոլին, որ գոռգոռում ու բողոքում էր՝ ի մեծ հրճվանք պարոն պրեռոյի, որը չէր սիրում պարոն գուենդստաբլին:

Կասկածից դուրս է, որ այս ամենը շատ ավելի էին, քան պետք էր երջանիկ ու փառահեղ կյանք վարելու և մի օր էլ նշանակալի տեղ գրավելու համար Փարիզի պրեռոների այն հետաքրքրական պատմություն մեջ, որից իմանում ենք, թե ինչպես Ուդար դը Վիլնյովը մի տուն ուներ Մսավաճառների փողոցում, Գիյոմ դը Հանժեն գնեց Մեծ ու Փոքր Սափոան, Գիյոմ Թիբուն Սենտ-ժրնեկի միանձնուհիներին նվիրեց Կլոպեն փողոցի իր տները, որ Հյուզ Օբրիոն ապրում էր Խոզուկ դաստակերտում, և ուրիշ այդպիսի սնային փաստեր:

Այնուամենայնիվ, կյանքը խաղաղ և ուրախ անցկացնելու այսքան պատճառներ ունենալով հանդերձ, տյար Ռոբեր դ'Էստուտվիլը 1482 թվականի հունվարի 7-ին արթնացավ չափազանց մռայլ ու կռվարար տրամադրությամբ: Թե ինչից էր այդ վատ տրամադրությունը, ինքն էլ չէր կարող ասել: Արդյոք այն պատճառով, որ երկինքն ամպամած էր, որ Մոնլերիի ճակատամարտից մնացած նրա

143. Պետական կալվածների ցուցակ, 1383: Ծնթ. Հեղինակի:

Հին թրագոտու ճարմանդը լավ չէ՞ր ձգված և խիստ զինվորականորեն էր սեղմում պրեոյական նրա զիրուկ իրանը: Այն պատճառով արդյոք, որ փողոցով, նրա լուսամուտների տակից, անյեղ էին, առանց իրեն բանի տեղ դնելու, անառակ սինլքորներ՝ ամեն մի շարքում չորսական մարդ, առանց շապկի վերնագգեստ հագած, ծակ զլխարկներով, մախարներն ու շշիւր կողքից կախած: Այն տարտամ նախագգացո՞ւմն էր արդյոք պատճառը, որ ապագա թագավոր Կառլս VIII-ը եկող տարի պրեոյության եկամուտներից խուզելու էր երեք Հարյուր յոթանասուն լիւր տասնվից սոլ և ութ դրնիւ: Ընթերցողը կարող է դրանցից ընտրութիւն կատարել. ինչ վերաբերում է մեզ, ապա մենք հակամետ ենք կարծելու, որ նա վատ էր տրամադրված հենց այն պատճառով, որ տրամադրութիւնը վատ էր:

Բացի դրանից, տոնի հաջորդած առավոտ էր դա, տաղտկալի մի օր ամենքի և մանսւփանդ այն պաշտոնյայի համար, որը պարտավոր է ավել-մաքրել բոլոր թե՛ իրական, թե՛ փոխաբերական աղտոտութիւնները, որ առաջացնում է տոնը Փարիզում: Իրա հետ նաև այն, որ նա պետք է նիստ ունենար Մեծ Շատլեում: Իսկ մենք նկատել ենք, որ դատավորները սովորաբար այնպես են գործը դասավորում, որ դատական նիստի օրը լինի նաև նրանց վատ տրամադրութիւն օրը, որպեսզի միշտ լինի մեկը, որի վրա հարմար ձևով կարողանան սրտի մաղձը թափել արքայի, օրենքի և արդարադատութիւն անունից: Սակայն նիստն սկսվել էր առանց նրան: Ռոբեր դ'Էստուտվիլի տեղակալները քաղաքացիական, քրեական և մասնավոր ատյաններում կատարում էին նրա գործն ըստ սովորականի, և առավոտյան ժամը ութից սկսած մի քանի տասնյակ քաղաքացիներ և քաղաքացուհիներ, խռնված ու կուտակված Ստորին Շատլեի խավար սրահի մի անկյունում, կաղնեփայտե ամուր պատվարի և պատի միջև, բերանբաց ներկա էին քաղաքացիական և քրեական այն արդարադատութիւն քաղմսուգան ու զվարճալի տեսարանին, որ պատահած ձևով, ուզած կերպ խառնելով՝ կատարում էր պարոն պրեոյի տեղակալ, Շատլեի դատավոր տյար Տլորիան Բարբըղիները:

ՍյուսՀը փոքր էր, ցածր, կամարակապ սուսստաղով: Խորքում դրված էր արքայական շուշանանշաններով զարդարված սեղան՝ կաղ նեփայտե քանդակադրվագ, խոշոր բաղկաթողով, որ պրեռոյինն էր ու թափուր, ձախ կողմում էլ նստարան՝ ընթերակա դատավոր տյար Ֆլորիանի համար: Ավելի ցած նստած էր քարտուղարը և գրոտում էր, իսկ դռան մոտ, սեղանի առաջ կանգնած էին պրեռոյության բազմաթիվ սերժանտներ՝ մանուշակագույն բրգե բաճկոնակներով, սպիտակ խաչ կրծքի վրա: Քաղաքապետության երկու սերժանտ, Տուսենյան կեսը կարմիր, կեսը կապույտ կուրտիկ հագած, պահակություն էին անում մի ցածրիկ, փակ դռան առջև, որ նկատվում էր խորքում, սեղանի ետևը: Հաստ պատի մեջ փորված մի նեղ, սրածայր կամարով պատուհան էր միայն հունվարյան աղոտ նշույլով լուսավորում երկու անհեթեթ կերպարանք՝ կամարակապ առաստաղի կենտրոնական շաղկապի տեղը, կանթիղակերպ քանդակված քարե քմահաճ գլխին և սրահի խորքում, արքայական շուշանանշան դիպակի վրա բազմած դատավորին:

Եվ իրոք. պատկերացրեք պրեռոյական սեղանի առաջ, արմունկնեիրին հենված, դատական թղթերի երկու կապոցի միջև, ոտքը թիագույն մահուդե իր երկար գզեստի տտունին դրած, դեմքը պարուրած գառան սպիտակ մուշտակի մեջ, որից կարծես թե պոկված էին նրա հոնքերը, կարմրադեմ, դաժանասես, աչքը թարթող, վեհափառությամբ իր այտերի ճարպը կրող, որոնք կզակի տակ իրար էին միանում, Շատլեի երկրորդ դատավոր Ֆլորիան Բարբրդիենին:

Չմոռանանք ասել, որ Ֆլորիանը խուլ էր. փոքր թերություն դատավորի համար: Բայց չնայած դրան՝ տյար Ֆլորիանը դատում էր անբողոքարկելի և պարտ ու պատշաճ ձևով: Կասկած չկա, որ դատավորի համար բավական է լսողի տեսք ունենալ, և հարգարժան Բարբրդիենը առավել ևս լավ էր կատարում այս պայմանը, լավ դատավարության միակ՝ էական պայմանը, քանի որ նրա ուշագրությունը չէր կարող ցրել ոչ մի ազմուկ:

Բացի դրանից, լսարանում կար նրա արարքների ու ժեստերի մի անգուլթ վերահսկիչ՝ Հանձին մեր փոքրիկ բարեկամ, երեկվա ճեմարանական ժեհան Ֆրոյո դյու Մուլենի, այդ «ցրիչի», որին վստահ կարող էիր Հանդիպել Փարիզում ամենուրեք, բացի դասատուների ամբիոնի առջևից:

— Հապա մի տե՛ս, — ասում էր նա կամացուկ իր ընկերոջը՝ Ռոբեն Պուսպենին, որ նրա կողքին ցածր ձայնով ծղրտում էր, երբ ինքը մեկնաբանում էր իրենց աչքի առաջ կատարվող տեսարանները, — ժեհաննետոն դյու Բյուխսոնն է՝ նոր շուկայի նշանավոր ծուլի սիրուն աղջիկը: Արևս վկա, ծերուկը դատապարտում է աղջկան, տնաքանդը ոչ միայն ականջից է զուրկ, այլև աչքից: Փարիզյան տասնհինգ սուլ և չորս դրնիե երկու հատ վարդարան կրելու համար: Մի քիչ թանկ է: *Lex duri carminis*¹⁴⁴: Իսկ այս մե՞կն ով է: Ա՛, Ռոբեն Շիեֆ-դը-Վիլն է՝ օղազրահ շինողը: — Հիշյալ արհեստը սովորելու և վարպետ ճանաչվելու համա՞ր: — Ընդունելության վճարն է ուրեմն: — Պա՛հ, այս ի՞նչ է. երկու ազնվականներ այդ գջլոտների մեջ. էդլե դը Սուենը, Հյուտեն դը Մային: Երկուսն էլ ասպետ, *corpus-Christi*¹⁴⁵: Ա՛, տե՛ս է. գառ են խաղացել: Հապա ե՞րբ մեր ռեկտորին կտեսնենք այստեղ: Փարիզյան հարյուր լիվր տուգանք հօգուտ արքայի: Բարբըղիները հուկ է տալիս խուլի պես, և իսկապես էլ խուլ է: Ես կուզենամ լինել իմ սարկավազապետ եղբայրը, եթե դա խանգարի ինձ խաղալ՝ խաղալ ցերեկը, խաղալ գիշերը, ապրել խաղալով, մեռնել խաղալով, շապկիս վրա խաղալուց հետո՝ խաղալ հոգուս վրա: Սո՛ւրբ կույս, ի՛նչ աղջիկներ են. գալիս են իրար ետևից սիրուն գառնուկներս. Ամբրուակ Լեքյուլե՛րը, Իգաբո-լա-Պեյնե՛տը, Բերարդ Փիրոնե՛նը: Բոլորին էլ ճանաչում եմ, Աստված վկա: Տուգանե՛լ, տուգանե՛լ: Դե հիմա կսովորեք ոսկեճամուկ գոտիներ կապել: Փարիզյան տասը սուլ, պճնամոլներ: Պա՛հ, այդ քավթառ դատավորի դնչին

144. Խստաշունչ օրենք (լատ.):

145. Քրիստոսի մարմինը [վկա] (լատ.):

մտիկ, խուլ ու տխմարին տես, է՛: Վա՛յ, տունդ քանդվի, ծանրամարմին Ֆլորիան, հաստազլուխ Բարբրդիեն. տես, է՛, սեղան նստեց, ուտում է հայցվորին, ուտում է դատական գործը, ուտում, ծամում, զխկվում, փորը լցնում: Տուգանք, լքված կայքի եկամուտ, սակ, հարկ, օրինական ծախք, ոռճիկ, շահ ու վնաս, գեհեն, բանտ ու զնդան, կապանք վճարով, բոլորն էլ դրա համար Մենդյան տոնի շաքարահաց են և Սուրբ Հովհաննու նշագաթա: Մի նայի՛ր այդ խոզին: Ըհը՛, էլի մի սիրահարված կին. Թիրո-լա-Թիրոզն է, ո՛չ ավել, ո՛չ պակաս: Գլատինյի փողոցից դուրս գալու մեղադրանքով: Դա՞ ում տղան է: Ժիեֆրուա Մարոնը՝ հեծելագործի այդ նետածիգը: Նզովել է հայր աստծու անունը: Տուգանե՛լ լա-Թիրոզին, տուգանել ժիեֆրուային, տուգանել երկուսին էլ: Քավթառ խուլ, երևի երկու գործերն իրար հետ չփոթել է: Տասով մեկ գրազ կգամ, որ նա աղջկան վճարել կտա հայհոյելու համար, հեծելակին էլ՝ սիրաբանելու համար: Մտի՛կ արա, Ռոբե՛ն Պուսպեն. արդյոք ո՞ւմ են ներս բերելու: Տես ինչքա՛ն պահակազորքեր կան: Զևուր վկա, ոհմակի բոլոր քերծեններն այդտեղ են: Հավանաբար, որսի ամենամեծ գաղանն է: Վարազը: Հա՛, հա՛, այդպես է, Ռոբե՛ն, այդպես է: Այն էլ՝ շատ խոշորը: Հերկուլեսը վկա, երեկվա մեր վեհապետն է, խենթերի պապը, մեր ժամհարը, մեր միականին, մեր կուզը, մեր ծամածուղը: Քվազիմոզոն է...

Եվ իրոք նա էր:

Քվազիմոզոն էր՝ օղակապված, հանգուցված, կաշկանդված և մեծաթիվ պահակախմբի հսկողության տակ: Նրան շրջապատող պահակազորքերի ջուրը գլխավորել էր անձամբ գիշերային հսկողության պետը, որի կրծքին ասեղնագործված էր Ֆրանսիայի զինանշանը, կռնակին էլ՝ քաղաքի զինանշանը: Իսկ Քվազիմոզոն, իր այլանդակությունից բացի, չունեի որևէ այնպիսի բան, որ կարողանար արգարացնել նիզակների և հրահարանների այդ ցուցադրումը, նա մուսյլ էր, լուռ ու հանդարտ: Նրա միակ աչքը հագիվ երբեմն-երբեմն գաղտագողի ու ցասկոտ հայացք էր նետում իրեն պարուրած կապանքներին:

Նույնպիսի մի հայացք նետեց նա իր շուրջը, սակայն այնքան մարած ու քնած հայացք, որ կանայք մատնացույց էին անում նրան իրար՝ ծիծաղելու համար միայն:

Մինչ այս, մինչ այն՝ կրտսեր դատավոր սյար Ֆլորիանը ուշադրությամբ թերթեց Քվազիմոդոյի դեմ կազմված հայցի թղթապանակը, որ մատուցեց նրան քարտուղարը, և այդպես թեթևակի հայացք նետելուց հետո, կարծես թե մի ընդհանուր մտախառնակություն էր առնում հարցաքննության սկսելիս, նախապես գիտեր մեղադրյալի անունը, կոչումը, հանցանքները, նախապատրաստած առարկություններ էր անում նախատեսված պատասխաններին և կարողանում էր հարցաքննության բոլոր խճճվածքներից դուրս գալ՝ այնքան էլ կռահել չտալով իր խլուժյունը: Գործի թղթապանակը նրա համար այն էր, ինչ որ շունը՝ կույրի համար: Եթե պատահեր, որ այդ ֆիզիկական թերությունը այս ու այնտեղ դավաճանի նրան որևէ անկապակից միջամտությամբ կամ անմիտ հարցումով, ապա դա ոմանք ընդունում էին որպես մտքի խորություն, ոմանք էլ՝ տկարամտություն: Երկու դեպքում էլ՝ դատարանի պատիվը ոչ մի ձևով չէր անվանարկվում, որովհետև ավելի լավ է, որ դատավորը հռչակվի տկարամիտ կամ խորամիտ, քան խուլ: Հետևաբար, նա չափազանց հոգատար էր, որ իր խլուժյունը սքողված մնա բոլորից, և սովորաբար այնքան լավ էր հաջողացնում դա, որ, վերջիվերջո, իրեն էլ պատրանք էր ազդում, մի բան, որ շատ ավելի հեշտ է, քան կարծում են: Բոլոր սապատավոր մարդիկ գլուխը բարձր են ման գալիս, բոլոր կակազները ճարտասանություն են անում, բոլոր խուլները ցածր են խոսում: Իսկ ինչ վերաբերում է Ֆլորիանին, ապա նա կարծում էր, որ ականջները մի քիչ անհնազանդ են: Դա միակ զիջումն էր, որ այդ հարցում անում էր նա հանրային կարծիքին, անկեղծության և իր խիղճը քննելու ընդունելուն:

Քվազիմոդոյի գործն այդպես լավ որոճալուց հետո՝ նա գլուխը ետ գցեց և աչքերը կիսով չափ փակեց՝ ավելի վեհաշուք տեսք և

անկողմնակալությունն ցուցաբերելու համար, այնպես որ՝ այդ պահին նա և՛ խուլ էր, և՛ կույր, երկու պայման, առանց որոնց կատարյալ դատավոր չի կարող լինել: Ահա այդ պատկառազդեցիկ դիրքով էլ նա սկսեց հարցաքննությունը:

– Ձեր անո՞ւնը:

Ահավասիկ մի հանգամանք, որ «օրենքով նախատեսված» չէր, այսինքն, որ մի խուլ կարող է հարցաքննել մի ուրիշ խուլի:

Քվազիմոդոն, որին ոչ մի բան չէր ազդարարում, թե հարցում է ուզողված իրեն, շարունակում էր շեշտակի նայել դատավորին և չէր պատասխանում: Խուլ դատավորը, որին ոչ մի բան չէր ազդարարում, թե մեղադրյալն էլ խուլ է, կարծեց, թե նա պատասխանեց, ինչպես անում էին բոլոր մեղադրյալները, և իր մեքենական ու ապուշային ինքնավստահությամբ շարունակեց.

– Շատ լավ: Քանի՞ տարեկան եք:

Քվազիմոդոն այս հարցին էլ չպատասխանեց, և դատավորը բավարար համարելով դա՝ շարունակեց.

– Իսկ հիմա ասեք ձեր հասարակական վիճակը:

Միշտ նույն լուսթյունը: Բայց ներկաներն արդեն սկսում էին փսփսալ և իրար նայել:

– Բավական է, – շարունակեց անայլայլ դատավորը, երբ ենթադրեց, որ մեղադրյալն սպառեց իր երրորդ պատասխանը: – Դուք մեղադրվում եք մեր առաջ, *primo*¹⁴⁶, գիշերվա հանդիսուր խռովելու մեջ. *secundo*¹⁴⁷, բռնաբարություն և անպատիվ արարքի փորձ կատարելու մեջ՝ մի թեթևաբարո, *in praejudicium meretricis*¹⁴⁸ անձի նկատմամբ. *tertio*¹⁴⁹, ըմբոստություն և օրինազանցություն երևան բերելու մեջ՝ մեր տեր թագավորի հրամանակատար նետաձիգների հանդեպ: Բացատրություն տվեք այս բոլոր կետերի մասին: Քարտուղա՛ր, գրե՛լ եք այն ամենը, որ ասաց մեղադրյալը մինչև հիմա:

146. Առաջին, նախ (լատ.):

147. Երկրորդ (լատ.):

148. Ի վնաս պոռնիկի (լատ.):

149. Երրորդ (լատ.):

Այս չարաբաստիկ հարցը այնպիսի բուռն, այնպիսի խելահեղ, վարակիչ և միահամուռ քրքիջ բարձրացրեց քարտուղարից սկսած մինչև բազմության շարքերի մեջ, որ երկու խուլերն անգամ՝ դատավորն ու մեղադրյալը, չկարողացան չնկատել դա: Քվազիմոդոն արհամարհանքով տնկելով իր սապատը՝ շուռ եկավ, մինչդեռ տյար Ֆյորիանը, նրա պես զարմացած և ենթադրելով, որ հանդիսատեսների ծիծաղը առաջացավ մեղադրյալի որևէ անհարգալիր առարկությունից, իսկ դա ինքը նկատեց Քվազիմոդոյի այդ ձևով ուսերը թափ տալուց, վրդովված գոչեց.

— Ձեր տված պատասխանը, խայտառակ, արժանի է փոկապատժի: Գիտե՞ք, թե ում հետ եք խոսում:

Այս սաստուճը անընդունակ էր կասեցնել ընդհանուր զվարթության պոռթկումը: Դա այնքան անհեթեթ ու այնքան այլանդակ թվաց բոլորին, որ խելահեղ ծիծաղը համակեց նույնիսկ քաղաքամասերի պետերի վարչության պահակախմբի սերժանտներին՝ նիզակակիր սպասավորների առանձնահատուկ տեսակին, որոնց տխմարությունը միատեսակ էր իրենց համագգեստի նման: Միայն Քվազիմոդոն պահեց իր լրջությունը այն իրավացի պատճառով, որ ոչինչ չէր հասկանում իր շուրջը կատարվող անցուղարձից: Դատավորը հետզհետե ավելի զայրանալով՝ հարմար դատեց շարունակել միևնույն տոնով՝ հույս ունենալով դրանով մեղադրյալին ներարկել այնպիսի սարսափ, որն ազդեր բազմության վրա և նորից լրջության վերադարձներ:

— Ուրեմն ի՞նչ, դուք, խայտառակության ու կողոպուտի վարպետ, ձեզ թույլ եք տալիս կարևորություն չտալ Շատլեի դատավորին՝ Փարիզի ժողովրդական ոստիկանության հանձնակատար պաշտոնյային, որի վրա պարտականությունն է դրված փնտրել-գտնել ոճրագործությունները, հանցագործություններն ու վատ արարքները, վերահսկել բոլոր արհեստները և արգելել մենաշնորհը, հետևել սալահատակները լավ պահելուն. արգելել թե՛ ընտանի, թե՛ վայրենի,

Թե՛ ջրային թռչունների ձեռքից ձեռք առուծախ անելը, ստուգել վառելիքայտի և ուրիշ տեսակ փայտեղենի չափումը, քաղաքը մաքրել ցեխից, իսկ օդը վարակիչ հիվանդություններից, մի խոսքով՝ շարունակ զբաղվել Հանրային օգուտով, առանց վարձատրության և ուժեղի հույս ունենալու: Գիտե՞ք արդյոք, որ իմ անունն է Ֆլորիան Բարբրդիեն՝ պարոն պրեոյի սեփական տեղակալը և բացի դրանից՝ կոմիսար, Հարցաքննիչ, վերահսկիչ և քննիչ՝ ունենալով հավասար իշխանություն և՛ պրեոյության, և՛ բայության ատյանում, և՛ վերահսկողության և՛ քաղաքացիական ու ոճրադատական առաջին ատյանում:

Ոչ մի պատճառ չկա, որ խուլ մարդու հետ խոսող մի ուրիշ խուլ կանգ առնի: Աստված գիտե, թե բարձր ճարտասանության ծովում ամենայն ուժգնությամբ թիավարող տյար Ֆլորիանը երբ և որտեղ ցամաք կիջներ, եթե խորքի ցածրիկ դուռը հանկարծ չբացվեր և ճանապարհ չտար պարոն պրեոյին:

Նրա մտնելուց տյար Ֆլորիանն իր խոսքը չընդհատեց, սակայն կրունկների վրա կիսապտույտ գործելով՝ մի վայրկյան առաջ Քվազիմոդոյին շանթահարող իր ճառը ընդոստ ուղղելով պրեոյի վրա, ասաց.

– Տե՛ր իմ, այստեղ ներկա մեղադրյալի դեմ ես պահանջում եմ այնպիսի պատիժ, որ հաճո լինի ձեզ՝ արդարադատության նկատմամբ ծանր ու ապշեցուցիչ թերահարգանք ցուցաբերելու համար:

Եվ շնչասպառ նստեց տեղը՝ սրբելով քրտինքի խոշոր կաթիլները, որ թափվում էին ճակատից և արցունքների պես թրջում նրա առաջ փռված մագաղաթները: Պարոն Ռոբեր դ'էստուտվիլը հոնքերը խոժոռեց և ուշադրության այնպիսի հրամայական ու նշանակալի ժեստ արեց Քվազիմոդոյին, որ խուլը որոշ բան հասկացավ դրանից: Պրեոն խստությամբ հարցրեց նրան.

– Այդ ի՞նչ ես արել, ստահակ, որ ընկել ես այստեղ:

Խեղճ ողորմելին ենթադրելով, որ պրեոն իր անունն է հարցնում, խզեց իր սովորական լռությունը և խոպոտ ու կոկորդային ձայնով պատասխանեց.

– Քվազիմոդո:

Պատասխանն այնքան քիչ էր համապատասխանում հարցումին, որ խելահեղ ծիծաղը նորից սկսեց շրջան կատարել, իսկ պարոն Ռոբերն էլ գայրույթից շոտագունած գոչեց.

– Ի՞նչ է, ինձ վրա՞ էլ ես ծիծաղում, թոկից փախած սրիկա՛:

– Աստվածամոր տաճարի ժամհարը,– պատասխանեց Քվազիմոդոն՝ կարծելով, թե պետք է հայտնել դատավորին իր ով լինելը:

– Ժամհար՝,– վրա բերեց պրևոն, որ, ինչպես քիչ առաջ ասացինք, առավոտյան բավական վատ տրամադրույթյամբ էր արթնացել, և նրա գայրույթը բորբոքվելու համար այդպիսի արտառոց պատասխանների կարիք չուներ:– Ժամհար, ես կհրամայեմ, որ ճիպտոները եղանակ նվազեն քո մեջքի վրա Փարիզի քառուղիներում: Հասկանո՞ւմ ես, սինլքո՛ր:

– Եթե իմ տարիքն եք դուք ուզում իմանալ,– պատասխանեց Քվազիմոդոն,– իսպա կարծում եմ, թե սուրբ Մարտինի տոնին քսանս կլրանա:

Այս անգամ արդեն չափ-սահմանն անցավ, պրևոն այլևս չկարողացավ դիմանալ:

– Ի՞նչ, դու արհամարհում ես պրևոյությո՞ւնը: Պարոն մահակակիր սերժանտնե՛ր, այս խայտառակին կտանեք Գրեի հրապարակի պաստարանը, մեկ ժամ կծեծեք ու կպտտեցնեք անիվի վրա: Նա ինձ կհատուցի սրա համար, վկա է Աստված: Ես ուզում եմ նաև, որ ներկա դատաստանի մասին մունեստիկն սզդարարի, չորս շեփորահարների մասնակցությամբ, Փարիզի դերկոմսության յոթ ղղյակապետություններում:

Քարտուղարն սկսեց անմիջապես կազմել դատավճիռը:

– Աստված ու նրա փորը վկա, ի՛նչ եմ ասել, շա՛տ լավ դատաստան կտրեց,– գոչեց իր անկյունից պստիկ ճեմարանական ժեհան Ֆրոլո դյու Մուլենը:

Պրևոն շրջվեց և նորից շանթարձակ աչքերը սևեռեց Քվազիմոդոյի վրա:

– Ինձ թվաց, թե թշվառականը ասաց աստծու փորը վկա: Քարտուղա՛ր, ավիլացրիք փարիզյան տասներկու դընիե տուգանք՝ Հայ-հոյեղու Համար, կեսը Հատկացնելով սուրբ Եփեսոսիոս եկեղեցու Հասույթին: Ես առանձնակի բարեպաշտություն եմ տածում սուրբ Եփեսոսիոսին:

Մի քանի րոպեում կազմվեց դատավճիռը: Նրա պարունակությունը սլարգ էր ու Հակիրճ: Փարիզի պրեռյության և դերկոմսության սովորույթը գեռևս չէին մշակել նախագահ Թիբո Բայեն և արքայական դատախազ Ռոժե Բարմը. այդ դարաշրջանում նա դեռ չէր խճճված դատավարական կնճռտությունների այն սաղարթախիտ, բարձրաբերձ ծառով, տասնվեցերորդ դարի սկզբին տնկեցին այնտեղ այդ երկու իրավախորհրդատուները: Ամեն ինչ սլարգ էր այնտեղ, Հապճեպ ու Հասկանալի: Ուղղակի դիմում էին դեպի նպատակը և յուրաքանչյուր արահետի անթուփ և անուղրան ծայրին տեսնում էին անվապատիժ, կախաղան կամ անարգանքի սյուն: Համենայնդեպս, գիտեին, թե ուր են գնում:

Քարտուղարը դատավճիռը ներկայացրեց պրեռյին, որն իր կնիքը դրոշմեց նրա վրա և դուրս եկավ իր շրջապայությունը շարունակելու մյուս դատարաններում այնպիսի տրամադրություններ, որ այդ օրը կարող էր բազմամարդ դարձնել Փարիզի բոլոր կալանատները: Ժեհան Ֆրոլոն և Ռոբեն Պուսպենը ծիծաղում էին քթի տակից: Քվազիմոզոն դիտում էր այդ ամենը անտարբեր ու զարմացած արտահայտությամբ:

Բայց այն ժամանակ, երբ տյար Ֆլորիան Բարբրդիենը իր Հերթին կարգում էր դատավճիռը ստորագրելու համար, քարտուղարը խղճահարություն զգաց թշվառ դատապարտվածի համար և սրտով որոշ թեթևացում ստանալու հույսով՝ որքան կարող էր մոտեցավ դատավորի ականջին և Քվազիմոզոյին ցույց տալով՝ ասաց.

– Այս մարդը խուլ է:

Նա հույս ունենր, որ այդ ֆիզիկական թերութեան ընդհանրութիւնը տյար Ֆլորիանի գութը կշարժի հօգուտ դատապարտվածի: Բայց նախ, ինչպես արդեն նշեցինք, տյար Ֆլորիանը վստահ էր, որ իր խլութեանը չեն նկատում, երկրորդ՝ այնքան ծանր էր նրա ականջը, որ նա քարտուղարի ասածից ոչ մի բառ չլսեց, սակայն ուզեց ցույց տալ, որ լսեց, ուստի և պատասխանեց.

– Հա՞, դա արդեն ուրիշ բան է. ես այդ չէի իմանում: Մեկ ժամ ևս անարգանքի սյունին, որ այդպես է:

Եվ ստորագրեց դատավճիռը այդ լրացումով:

– Շատ էլ լավ եղավ,– ասաց Թորեն Պուսպենը, որ ռի ունենր Քվազիմոդոյի դեմ,– սրանից հետո տեսնենք ինչպես կոպիտ կվարվի մարդկանց հետ:

II

ՄԿԱՆ ԾԱԿԸ

Թող ընթերցողը մեզ թույլ տա վերադարձնել նրան Գրեկի հրապարակ, ուր մինք, Գրենգուարի հետ, թողեցինք երեկ երեկո՝ էսմերալդային հետեկելու համար: Առավոտյան ժամը տասն է. ամեն ինչից տոնի հաջորդ՝ օրվա տպավորութիւնն է զգացվում: Սալահատակը ծածկված է մնացորդներով՝ ժապավենի կտորներ, լաթեր, սաղսփարտի գարգմանակի փետուրներ, ջահերի մոմի կաթիլներ, հանրային կերուխումի փշրանքներ: Այս ու այնտեղ թրև են գալիս, ինչպես մենք ենք ասում, քաղաքացիների խմբեր, ոտքով շուռումուռ են տալիս հրավառութիւնից մնացած մարած խանձողներ, ոգևորվում են Սյունազարդ տան առաջ՝ վերհիշելով նախորդ երեկոյի գեղեցիկ զարդարանքը և որպես վերջին հաճույք՝ դիտելով այսօր լոկ մեխերը: Այդ խմբերի միջով իրենց տակառն են գլորում խնձորօղի և գարեջուր

վաճառողները: Անցուղարձ են անում գործով դբադված մի քանի անցորդներ: Զրուցում են առևտրականները և խանութների շնորհից կանչում են միմյանց: Տոնը, դեսպանները, Կոպրնոլը, ծաղրածուների պապը բոլորի խոսակցության առարկան են. կարծես ամեն մեկն ուզում է ավելի լավ բամբասել և ամենից ավելի ծիծաղել:

Բայց չորս Հեծյալ սերժանտ, որ քիչ առաջ եկան ու կանդնելին սեղանաձև պատժարանի չորս անկյուններում, արդեն իրենց շուրջն են համախմբել հրապարակում սփռված ամբոխի զգալի մասը, որ հուսալով տեսնել թեկուզ մի փոքրիկ պատժի ի կատար ածումը՝ դատապարտում է իրեն անչարժու թյան ու ձանձրոյթի:

Եթե հիմա ընթերցողը հրապարակի բոլոր կետերում տեղի ունեցող այդ աշխույժ և ազմկալի պատկերը տեսնելուց հետո իր հստակ գրքը դարձնի Ռուսների աշտարակի այդ հնադարյան, կիսագոթական և կիսառոմանական շենքին, որ արևմտյան կողմից անկյուն է կազմում գետափնյա փողոցի հետ, կկարողանա ճակատամասի անկյունում նկատել հայրուստ մանրանկարներով զարդարված մի հաստ, հանրային ժամագիրք, որ անձրևներից պաշտպանված է փոքրիկ ծածկով, իսկ գողերից՝ երկաթե ձողերով, որոնք, այնուամենայնիվ, թույլ են տալիս թերթիկ մատյանը: Այդ ժամադրքի կողքին կա նեղ, սրակամար, հրապարակի վրա նայող և խաչաձև իրար ամրացրած երկաթե երկու ձողով փակված մի լուսանցույց: Դա միակ բացվածքն է, որ թույլ է տալիս մի քիչ օդ և մի քիչ էլ լույս մտնի այդ հնադարյան տան պատի հաստության մեջ, մայթի բարձրությամբ շինված անգուռ խցիկը: Այդ խցիկում տիրող անդորրը ավելի խոր և լուսթյունը ավելի մուսյլ է թվում այն պատճառով, որ շուրջը վիտում ու աղմկում-ծղրտում է հանրային մի հրապարակ՝ Փարիզի ամենարագամարդ ու ժխորալի հրապարակը:

Այդ խցիկը նշանավոր էր Փարիզում մոտավորապես երեք դարից ի վեր, այն օրվանից, երբ տիկին Ռուսանդը՝ Ռուսների աշտարակի տիրուհին, ի նշան խաչակրաց արշավանքում սպանված իր հոր սգի.

փորել էր տվել դա իր սեփական տան պատի մեջ, որպեսզի ընդմիջտ փակվի այդտեղ՝ իր ապարանքից պահելով միայն այդ կացարանը, որի դուռը ծածկված էր պատով, իսկ լուսանցույցը ամառ-ձմեռ բաց էր, և մնացած ամբողջ հարստությունը տալով աղքատներին ու Աստծուն: Վշտաբեկ տիկինն, արդարև, քսան տարի մահվան էր սպասել այդ վաղաժամ ձեռք բերած գերեզմանի մեջ՝ գիշեր-ցերեկ աղոթելով իր հոր հոգու համար, քնելով մոխրի վրա, մի քար անգամ չունենալով որպես բարձ, հագած սև քուրձ և ապրելով միայն այն հացով ու ջրով, որ գթասիրտ անցորդներն էին դնում լուսանցույցի եզրին, այդպիսով, ողորմություն անելուց հետո, ինքն էր այժմ ստանում: Մեռնելիս, մյուս գերեզմանն անցնելու պահին, այս գերեզմանն առհավետ կտակել էր սգավոր կանանց՝ մայրերի, այրիների ու աղջիկների, որոնք իրենց կամ այլոց համար աղոթելու մեծ կարիք կունենային և կուզեին այն ողջ-ողջ թաղվել մեծ վշտի կամ մեծ ապաշխարության մեջ: Ժամանակի աղքատները փառավոր հուղարկավորություն էին կատարել նրա համար իրենց արցունքներով ու օրհնություններով, սակայն ի մեծ կսկիծ նրանց, բարեպաշտ տիկինը եկեղեցու կողմից սուրբ չէր ճանաչվել՝ հովանավորողներ չունենալու պատճառով: Այն աղքատները, որոնք մի քիչ ամբարիշտ էին, հույս ունեին, որ գործը ավելի հեշտ գլուխ կգա արքայության մեջ, քան Հռոմում, ուստի և պասյի փոխարեն, իրենք էին աղոթել Աստծուն՝ հանգուցյալի սրբությունն ընդունելի անելու համար: Մեծ մասը բավականացել էր Ռոլանդի հիշատակը քուրբ պահելով և նրա ցնցոտիները մասունք դարձնելով: Քաղաքն էլ իր կողմից, տիկնոջն ընդօրինակելով, հիմնել էր մի աղոթագիրք, որ ամբացրել էին խցիկի լուսանցույցի մոտ, որպեսզի անցորդները ժամանակ առ ժամանակ կանգ առնեն այն տեղ աղոթելու համար, և աղոթքն էլ հիշեցնի ողորմություն տալը, որպեսզի տիկին Ռոլանդի նկուղը ժառանգած խեղճ ապաշխարուհիները քաղցից ու մոռացությունից չմեռնեն:

Այս տեսակ գերեզմանները այնքան էլ հազվագյուտ բաներ չէին միջնադարյան քաղաքներում: Հաճախ ամենաբանուկ փողոցում,

ամենախայտաբղետ ու խլացուցիչ աղմուկով լի շուկայում, հենց մեջտեղը, ձիերի ոտքերի տակ, սայլերի անիվների տակ կարելի էր հանդիպել ինչ-որ նկուղի, ջրհորի, պատնեշված ու վանդակապատված խցիկի, որի մեջ գիշեր-ցերեկ իր հոժար կամքով աղոթում էր որևէ մշտնջինական ողբուկոծի, որևէ մեծ քափուխյան նվիրված մարդկային էակ:

Եվ այն բոլոր խորհրդածուծությունները, որ այսօր կառաջացնել մեր մեջ այդ արտառոց պատկերը, տան ու գերեզմանի, գերեզմանոցի ու քաղաքի մի տեսակ միջակա օղակը եղող այդ զարհուրելի խցիկը, մարդկային համայնքից կտրված և այսուհետև մեռածների հետ հաշվվող այդ կենդանի արարածը, խավարի մեջ ձեռքի իր վերջին կաթիլն սպառող այդ ճրագը, փոսի մեջ թպրտացող կյանքի այդ նշույլը, քարե տուփի մեջ արձակվող այդ շունչը, այդ ձայնը, այդ հավիտենական աղոթքը, դեպի մյուս աշխարհը դարձած այդ դեմքը, արդեն մի ուրիշ արեգակից լուսավորվող այդ աչքերը, գերեզմանի պատին հպված այդ ականջը, մարմնի մեջ բանտարկված այդ հոգին և զնդանում բանտարկված այդ մարմինը, և մսից ու գրանիտից կազմված այդ կրկնակ ծածկույթի տակ գտնվող պատժապարտ հոգու, մրմունջը – այս ամենից ոչինչ չէր իմանում բազմությունը: Այդ դարաշրջանի քիչ դատողություն անող և սակավ զգայուն բարեպաշտությունը կրոնական այդպիսի արարքի մեջ այդքան շատ կողմեր չէր տեսնում: Ամբողջությամբ էր նա ընկալում երևույթը և հարգում, մեծարում, կարիքի դեպքում՝ նույնիսկ սրբագործում էր զոհաբերումը, սակայն չէր վերլուծում դրա տառապանքները և քիչ էր իդեալահարկում դրա վրա: Ժամանակ առ ժամանակ որևէ օրապահիկ էր տանում ողորմելի ապաշխարողին, ծակից նայում էր՝ ո՞ղջ է նա դեռ, չէր իմանում նրա անունը, հագիվ էր հիշում, թե քանի տարի առաջ էր սկսել նա մեռնել, իսկ այն օտարականին, որը հարցուփորձ էր անում այդ նկուղի մեջ փտող կենդանի կմախքի մասին, հարևանները պարզապես պատասխանում էին՝ «ապաշխարող է», եթե տղամարդ էր, կամ՝ «ապաշխարողուհի է», եթե կին էր:

Այն ժամանակներում ամեն ինչին էին այդպես նայում՝ առանց մետաֆիզիկայի, առանց չսփազանցության, առանց խոչորացույց սպակու, սովորական աչքով: Մանրադիտակը դեռ հնարված չէր ո՛չ նյութական, ո՛չ էլ հոգեկան երևույթների համար:

Անկախ այն բանից, որ քաղաքների ծոցում այդպես ներփակվելը քիչ էր զարմացնում մարդկանց, այնուամենայնիվ, ինչպես քիչ վերևում նկատեցինք, իրականում այդպիսի դեպքերը հաճախակի էին: Աստծուն աղոթելու և ապաշխարելու այդպիսի խցիկներ բավականաչափ կային Փարիզում և գրեթե բոլորն էլ գրավված էին: Ճիշտ է՝ հոգևորականությունն էլ հոգ էր տանում, որ դատարկ չմնան, որովհետև դա կարող էր համարվել հավատացյալների ջերմեռանդու-թյան նվագում, և բորոտներ էին դնում այնտեղ, երբ ապաշխարող-ներ չէին լինում: Բացի Գրեկի հրապարակի այդ կացարանից, մեկն էլ կար Մոնֆոկոնում, մեկն էլ՝ Անմեղների գերեզմանոցում, մի ուրիշն էլ՝ չգիտեմ ճիշտ որտեղ, կարծեմ՝ Կլիշոն դաստակերտում, շատ ուրիշներ էլ զանազան այլ վայրերում, որոնց հետքերը մնացել են սովանդությունների մեջ, քանի որ խցիկներն այլևս չկան: Համալսա-րանն էլ իր ապաշխարանոցներն ուներ: Սուրբ Ժընևիեի բլրի վրա մի տեսակ միջնադարյան Հոբ երեսուն տարի ապաշխարության յոթ սաղմոսները երգեց նստած Ջրամբարի հատակում, աղբակույտի վրա, վերջացնելուց հետո նորից սկսելով, գիշերն ավելի բարձրաձայն սաղմոսերգելով՝ *magna voce per umbras*¹⁵⁰: Եվ այսօր էլ հնություն-ներն ուսումնասիրողը կարծես դեռ լսում է նրա ձայնը՝ **Խոսող Ջրհոբ փողոցը մանելիս:**

Վերադառնալով Ռոլանի աշտարակի խցիկին՝ պետք է ասենք, որ ամենևին թափուր չի եղել նա: Տիկին Ռոլանդի մահանալուց հետո, շատ հազվադեպ, մեկ կամ երկու տարի է դատարկ մնացել: Բազմա-թիվ կանայք էին եկել այդտեղ՝ մինչև կյանքի վախճանը ողբալու ծնողներին, սիրեկաններին կամ իրենց սխալները: Փարիզյան չարա-խոսությունը, որ միջամտում է ամեն բանի, նույնիսկ ամենաքիչ

150. Ահեղ ձայն է խավարի (լատ.):

չափով իրեն չվերաբերող խնդիրների, հավակնում էր, որ շատ քիչ այրի կանայք էր տեսել այնտեղ:

Ըստ դարաշրջանի սովորությունն՝ պատի վրա դրված որևէ լատիներեն իմաստալից խոսք նշում էր գրադեստ անցորդներին այդ խցիկի բարեպաշտական նշանակումը: Մինչև տասնվեցերորդ դարի կեսը պահպանվել էր այդ սովորույթը՝ դռան վերևը գրված հակիրճ նշանաբանով բացատրել շենքի իմաստը: Օրինակ՝ Ֆրանսիայում, Տուրվիլի սենյորական տան բանտի դռնակի վերևում դեռ կարելի է կարդալ *Sileto et spera*¹⁵¹, Իռլանդիայում, Ֆորտեբքյու զոյակի մեծ դռան վերևում խփված տոհմանշանի ներքև՝ *Forte scutum, salus ducum*¹⁵², Անգլիայում, Կուպրր կոմսերի հյուրընկալություն գոյակի գլխավոր մուտքի վրա՝ *Tuum est*¹⁵³: Բանն այն է, որ այդ դարերում յուրաքանչյուր շենք մի միտք էր սլարունակում:

Քանի որ Ռոյանի աշտարակի պատնեջված խցիկը դուռ չուներ, ապա ռոմանական ոճի խոշոր տառերով փորագրել էին լուսանցույցի վերևում հետևյալ երկու բառը.

TU, ORA¹⁵⁴

Իսկ ժողովուրդը, որի առողջ դատողությունն այնքան նրբություններ չի տեսնում մակագրությունների մեջ և *Ludovico magno* (Լյուդովիկոս մեծ) հաճությունք լատիներենից թարգմանում է *Անն-Դրնիի դարպաս, այս խալար, մոայլ ու խոնավ խոռոչին տվել էր Trou-aux Rats*¹⁵⁵: Թերևս պակաս վսեմ բացատրություն, քան մյուսը, սակայն ավելի գեղեցիկ:

151. Լոիր և հուսա (լատ.):

152. Ամուր վահանը դքսերի փրկությունն է (լատ.):

153. Բոնն է (լատ.):

154. Դու, աղսթիր (լատ.):

155. Արդարև, ֆրանսերեն *Trou-aux rats* (տրու-օ-ռա), մկան ծակ, բառերը գրիթե համահնչուն են լատիներեն *TU, ORA* (տու, օրա) բառերին:

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԽՄՈՐԻՑ ԹԽՎԱԾ ԲԼԻԹԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այն ժամանակ, երբ տեղի էր ունենում այս պատմութիւնը, Ռուս-նի աշտարակի խցիկը զբաղեցված էր: Եթե ընթերցողը ցանկանում է իմանալ, թե ում կողմից, ապա բավական է, որ նա լսի երեք հարգելի սանամայրերի խոսակցութիւնը, որոնք այն ժամանակ, երբ մինք մեր ուշադրութիւնը սեռեռել էինք Մկան ծակի վրա, դիմում էին Հենց այդ կողմը՝ գետափի երկայնքով, Շատլեից բարձրանալով դեպի Գրեւի հրապարակը:

Այդ կանանցից երկուսը հագնված էին Փարիզի բարեկեցիկ քաղաքացուհիներին պատշաճ ձևով: Նրանց նուրբ ու ճերմակ վզաքողերը, նուրբ բրդե՝ կարմիր ու կապույտ շերտավոր շրջագեստը, սրունքի վրա բարձև պրկված, անկյունները գունավոր ասեղնագործված, օղակահյուս սպիտակ գուլպաները, շիկագույն կաշուց, քառանկյունի, սև կրունկներով կոշիկները, մանավանդ՝ նրանց գլխանոցները՝ ժանյակներով ու ժապավեններով զարդարված այն կոտոշաձև գլխարկը, որ հիմա էլ դեռ կրում են Շամպայնի գեղջկուհիները՝ մրցելով ռուսական կայսերական թիկնապահ գնդի գրեկադերներին հետ, — ցույց էին տալիս, որ նրանք պատկանում էին հարուստ վաճառականների կանանց այն դասին, որ միջին տեղն է գրավում սպասավորների կոչած կին և տիկին շերտերի միջև: Նրանք ոչ մատանիներ էին կրում, ոչ էլ ոսկե խաչեր, բայց շատ հեշտ էր նկատել, որ դա աղքատութեան պատճառով չէր, այլ պարզապես տուգանքի չենթարկվելու համար: Նրանց ընկերուհին էլ մոտավորապես նույն ձևով էր պնդվել, սակայն նրա հագնվածքի և շարժումների մեջ կար մի բան, որը մատնում էր գավառական նոտարի կնոջ: Հենց միայն այն բանից, որ գոտին կոնքից շատ բարձր էր, երևում էր,

որ նա վաղուց չէ, ինչ Փարիզում էր: Ավելացրեք դրան ծալ-ծալ վզաքողը, ժապավենն հանգույցները կոշիկների վրա, շրջագետտի զոլերը, որ փոխանակ ըստ երկայնքի՝ ըստ լայնքի էին ձգված, և հազարավոր ուրիշ թերություններ, որոնցից կվրդովվեր նուրբ ճաշակը:

Առաջին երկուսը քայլում էին այն փարիզուհիների առանձնահատուկ քայլվածքով, որոնք գավառացի կանանց ցույց են տալիս Փարիզը: Գավառացի կինը բռնել էր մի թմբլիկ երեխայի ձեռքը, որ իր հերթին ձեռքին պահել էր մի տուուզ բլիթ:

Մենք ստիպված ենք վրդովմունքով ավելացնել, որ եղանակի սաստկության պատճառով տղան թաշկինակը փոխարինել էր իր լեզվով:

Տղան ոչ թե քայլում էր, այլ քարշ էր տրվում, *non passibus aequis*¹⁵⁶, ինչպես Վիրգիլիոսն է ասում, և ամեն վայրկյան գայթում էր, որից գոռգոռում էր մայրը: Ճիշտ է՝ նա ավելի շատ բլիթին էր նայում, քան թե սալահատակին: Կասկած չկա, որ որևէ լուրջ պատճառ թույլ չէր տալիս նրան կրծել բլիթը, որովհետև բավարարվում էր միայն քնքշագին դիտելով: Սակայն մայրն ինքը պետք է տաներ բլիթը, որովհետև դաժանություն էր տանտալյան¹⁵⁷ տանջանք պատճառել թշեղ, գիրուկ տղային:

Երեք խաթուններն էլ (տիկին բառը այդ դարերում վերապահված էր միայն ազնվական կանանց) խոսում էին միաժամանակ:

– Շտապենք, Մահի՛տ խաթուն, – ասում էր երեքից ամենադեռատին, որը և ամենագիրուկն էր, գավառացի կնոջը: – Շատ եմ վախենում ուշանալուց. Շատելում ասում էին, որ իսկույն ևեթ պատժավայրը կտանեն նրան:

156. Անհավասար քայլերով (լատ.):

157. Ըստ հունական դիցաբանություն՝ երբ աստվածները այցի եկան Լիդիայի թագավոր Տանտալոսին, նա իր որդու՝ Պելոպսի անդամները հրամցրեց՝ նրանց աստվածությունը փորձելու համար: Ջուրը նրան նետեց Տարտարոս և դատապարտեց տանջվելու սաստիկ ծարավի ու քաղցի միջև: Տանտալյան տանջանք նշանակում է՝ ցանկություն ձախողում, երբ մոտ էր կատարվելուն:

– Է՛, ինչե՛ր եք ասում, Ուղարդ-Մյունիե խաթուն,– վրա բերեց մյուս փարիզուհին:– Երկու ժամ պիտի մնա պատժանիվի վրա: Ժամանակ շատ ունենք: Երբեք անվապատիժ տեսե՞լ եք, իմ սիրելի Մահի՛ետ:

– Այո, Ռեյմսում,– պատասխանեց գավառացի կինը:

– Է-է՛հ, ի՞նչ պիտի լինի որ ձեր այդ Ռեյմսի անվապատիժը: Մի չնչին վանդակ, որի մեջ գյուղացիներին են միայն պատեցնում: Դատարկ բան է դա:

– Միայն գյուղացիներին,– գոչեց Մահիետը,– Մահուդի շուկայո՞ւմ, Ռեյմսո՞ւմ: Ինչպե՛ս չէ. այնպիսի՛ խայտառակ ոճրագործներ ենք տեսել այդտեղ, նույնիսկ հայր ու մայր սպանած մարդիկ: Գյուղացիներ: Մ՞ւմ տեղ եք դուք մեզ դնում, ժերվե՛զ:

Գավառացի կինն անկասկած քիչ էր մնացել, որ զայրանար իրենց պատժասեղանի պատիվը գցելու փորձի համար, բարեբախտաբար, խոհեմ Ուղարդ-Մյունիե խաթունը ժամանակին խոսակցության նյութը փոխեց:

– Հա՛, ի դեպ, Մահիե՛տ խաթուն, ի՞նչ կարծիք ունեք ֆլամանդական մեր դեսպանների մասին: Ռեյմսումն է՞լ այդպիսի շքեղազարդ դեսպաններ լինում են:

– Խոստովանում եմ, որ միայն Փարիզում կարելի է դրանց նման ֆլամանդցիներ տեսնել:

– Այդ դեսպանություն մեջ տեսա՞ք այն հաղթանդամ դեսպանին, որը գուլպայավաճառ է,– հարցրեց Ուղարդը:

– Այո,– պատասխանեց Մահիետը,– Սատուրնին է նման:

– Հապա այն գիրո՞ւկը, որի դեմքը նման էր տկ՛ուր փորի,– շարունակեց ժերվելը:– Հապա այն պատլի՞կը, որի մանրիկ աչքերը շրջանակված էին պղկված, հերձած ուղտափշի գլխի նմանող կարմիր կոպերով:

– Տեսնելու արժանի բանը դրանց ձիերն են,– ասաց Ուղարդը,– զուգված– զարդարված իրենց երկրի ձևով:

— Մ, սիրելի՛ս, — ընդհատեց նրան գավառացի Մահիտը, իր հերթին գերազանցութեան շեշտ ընդունելով, — Հապա ի՞նչ կասեիք դուք, եթե Ռեյմսում տեղի ունեցած թաղադրույթյան հանդեսի ժամանակ, ճի թվականին, սրանից տասնութ տարի առաջ, տեսնեիք իշխանների և արքայական չքախմբի ձիերը: Ամեն տեսակ զարդ ու սթար՝ մի քանիսինը Դամասկոսի դիպակից, ոսկեճամուկ մահուդից՝ սամույրի մուշտակով ընդմիջված, մյուսներին էլ թավշե սթար՝ կզաքիսի պոչերով մուշտակված. մնացածներն էլ՝ բոլորն էլ ոսկե ու արծաթե խոշոր, ծայրը տուռզ ծոպերով զարդարված: Եվ որքա՛ն փող պետք է ծախսված լիներ դրանց համար: Հապա ձիերին հեծած գեղեցիկ, պատանի մանկրավիկները:

— Դա չի խանգարում, — չոր-չոր առարկեց Ուդարդը, — որ Ֆլամանների ձիերն էլ չափազանց գեղեցիկ չլինեն, իսկ իրենք էլ փառավոր ընթրիքի հրավիրվեցին երեկ, վաճառականների պարոն պրեոյի մոտ, քաղաքապետարանում, որտեղ մատուցել էին նրանց շաքարով բովված նուշ, համեմունքներով անուշված գինի, շաքարեղեն և ուրիշ հազվագյուտ ուտելիքներ:

— Ինչե՞ր եք ասում, հարևանուհի՛, — գոչեց ժերվիզը: — Հրավիրքը պարոն կարդինալի մոտ էր, Բուրբոնյան Փոքր պալատում են ֆլամաններն ընթրել:

— Ամենևին ոչ. քաղաքապետարանում էր:

— Ոչ, ոչ, Բուրբոնյան Փոքր պալատում էր:

— Այնքա՛ն լավ էր քաղաքապետարանում, — խայթող շեշտով շարունակեց Ուդարդը, — դուրսը Սկոլարբլն էլ լատիներեն ճառ է արտասանել, որից խիստ գոհ են մնացել ֆլամանները: Ինձ պատմել է իմ ամուսինը, որ երգվյալ գրադարանապետ է:

— Այնքա՛ն լավ էր Բուրբոնյան Փոքր պալատում, — ոչ նվազ աշխուժութեամբ պատասխանեց ժերվիզը. — Եվ ահա թե ինչ է մատուցել նրանց պարոն կարդինալի մատուցակը՝ համեմունքներով անուշված գինի, վարդագուլյն ու կարմիր՝ տասներկու կրկնակ

կվարթ, Լիոնի կրկնակ նշագաթա՝ ոսկեզօծ, քսանչորս արկղիկ, այդ-
քան էլ մոմ՝ յուրաքանչյուրը երկու ֆնտանոց, վեց կիսատակառ էլ
Բոնի գինի՝ սպիտակ ու վարդագույն, ամենալավը, որ կարողացել են
գտնել: Կարծում եմ, որ սա հաստատ է: Ես իմացել եմ դա իմ ամուս-
նուց, որ Հիսնյակի պետ է քաղաքամասային ներկայացուցիչների
խորհրդում և Հենց այս առավոտ Ֆլամանդական դեսպաններին հա-
մեմատում էր Տեր Հովնանի և Տրապիզոնի կայսեր դեսպանների
Հետ, որ եկել էին Փարիզ Միջագետքից վերջին թագավորի օրոք և
ականջներին օղեր ունեին:

— Ճիշտն այն է, որ դրանք ընթրել են քաղաքապետարանում, —
առարկեց Ուդարդը՝ ամենևին չհուզվելով պարզեցների այդ ցուցա-
դրական թվարկումից: — Ասում են, որ մեծ խորտիկների և քաղցրա-
վենիների այդպիսի չքեղությունն լաված չի եղել, ինչպես այնտեղ էր:

— Իսկ ես էլ ասում եմ ձեզ, որ լը-Սեկն է սպասավորել նրանց՝ քա-
ղաքային վարչության սերժանտը, Բուրբոնյան Փոքր պալատում, և
Հենց դա է մոլորության մեջ գցել ձեզ:

— Իսկ ես ասում եմ՝ քաղաքապետարանում:

— Բուրբոնյան Փոքր պալատում, սիրելի՛ս, այնքան ստույգ, որ
մոզական լապտերներով լուսավորել էին «Հոլյա» բառը, որ գրված է
ավագ դռան ճակատին:

— Քաղաքապետարանո՛ւմ, քաղաքապետարանո՛ւմ, նույնիսկ
Հյուստոն-լը-Վուարը սրինգ էր նվագում:

— Ես ձեզ ասում եմ ոչ:

— Ես էլ ձեզ ասում եմ՝ այո:

— Ես ձեզ ասում եմ ոչ:

Գիրուկ բարի Ուդարդը պատրաստվում էր առարկել և վեճը կա-
րող էր հասնել մագերը քաջջելուն, եթե հանկարծ Մահիետը չգոչեր.

— Հասլա մի նայեցեք այնտեղ՝ կամրջի ծայրին հավաքված
մարդկանց: Դրանց մեջտեղում ինչ-որ բան կա, որ դիտում են:

— Ճիշտ որ, — ասաց Ժերվեզը, — դափի ձայն եմ լսում: Կարծում
եմ, որ փոքրիկ Սմերալդան է իր այծի Հետ միմոսություններ անում:

Դե չո՛ւտ, Մահիբ՛տ, արագացրեք ձեր քայլերը, երեխային էլ քարշ տվեք: Փարիզ եք եկել նրա հետաքրքրական պատկերները տեսնելու համար, երեկ Ֆլամաններին տեսաք, այսօր էլ գնչուհուն պետք է տեսնեք:

— Գնչուհի՞ն,— գոչեց Մահիբտը ճանապարհից հանկարծ ետ դառնալով և իր տղայի ձեռքն ուժգնորեն սեղմելով:— Աստված ինձ պահպանի դրանից, նա կգողանա իմ երեխային: Ե՛կ, էստա՛չ:

Եվ գետափով սկսեց վազել դեպի Գրեկի հրապարակը այնքան ժամանակ, մինչև որ կամուրջը մնաց իրենից խիստ ետ: Սակայն երեխան, որին քարշ էր տալիս, ընկավ ծնկների վրա, և մայրը շնչասպառ կանգ առավ: Ուղարդն ու Ժերվեզը հասան նրան:

— Ինչպե՞ս թե այդ գնչուհին կգողանա ձեր երեխային: Տարօրի՛նա՛կ երեակայությունն ունեք:

Մահիբտը մտածկոտ արտահայտությամբ օրորեց գլուխը:

— Տարօրինակն այն է,— նկատեց Ուղարդը,— որ քրձեննավորն էլ նույն կարծիքն ունի գնչուհիների մասին:

— Քրձեննավորն ո՞վ է,— հարցրեց Մահիբտը:

— Քույր Գյուղյուլն է,— պատասխանեց Ուղարդը:

— Քույր Գյուղյուլն ով է,— վրա բերեց Մահիբտը:

— Իրոք որ ռեյմսից եք, քանի որ չեք իմանում,— պատասխանեց Ուղարդը:— Մկան ծակի ապաշխարուհին է:

— Ինչպե՞ս թե,— հարցրեց Մահիբտը,— այն խեղճ կի՞նը, որին բլիթ են տանում:

Ուղարդը գլխով հաստատական պատասխան տվեց:

— Հենց նա է: Շուտով կտեսնեք նրան Գրեկի հրապարակին նայող նրա լուսանցույցից: Նա էլ նույն կարծիքն ունի, ինչ որ դուք, Եգիպտոսից եկած թափառաչրջիկների մասին, որոնք դափ են գարնում և բախտագուշակություն են անում ժողովրդի մեջ: Չդիտես թե ինչն է պատճառ եղել, որ նա այդպես սարսափում է բոշաններից ու գնչուներից: Բայց դուք, Մահիբ՛տ, դո՞ւք ինչու եք այդպես փախչում նրանցից, հենց որ տեսնում եք:

– Օ՛,– պատասխանեց Մահիետը՝ զույգ ձեռքով բռնելով իր տղայի կրոր գլուխը,– ես չեմ ուզում, որ ինձ էլ պատահի այն, ինչ պատահեց Պաքետ Շանտրֆլյորիին:

– Օ՛, ահավասիկ մի պատմութուն, որ պետք է մեզ պատմեք, իմ բարի՛ Մահիետ,– ասաց Ժերվեզը՝ բռնելով նրա թևը:

– Ինչո՞ւ չէ, կպատմեմ,– պատասխանեց Մահիետը,– բայց տեսնում եմ, որ դուք էլ միայն փարիզցի եք, որ չեք իմանում դա: Ուրեմն պետք է, որ ձեզ ասեմ – բայց կարիք չկա, որ պատմութունն անելու համար կանգ առնենք – ձեզ ասեմ, որ Պաքետ Շանտրֆլյորիին տասնութ տարեկան սիրուն աղջիկ էր, երբ ես էլ այդպիսին ու այդքան էի, այսինքն՝ սրանից տասնութ տարի առաջ, և հանցավորը նա է, որ այսօր ինքն էլ ինձ պես չէ, այսինքն՝ բարի, գիրուկ ու թարմ, երեսունվեց տարեկան մայր՝ ամուսնու ու մի տղայի տեր: Իմիջիայրոց, տասնչորս տարեկանից արդեն նրա ժամանակն անցած էր: Ուրեմն՝ նա դուստրն էր Ռեյմսի նավերի վրա գուսանութուն անող Գիրերտոյի, հենց այն գուսանի, որը նվագեց Կառլոս VII արքայի առաջ, նրա թագադրության օրը, երբ արքան Սլլերիից սկսած իջնում էր մեր Վել գետով մինչև Մյուլիգոն, երբ տիկին Կուլյան¹⁵⁸ էլ նավի վրա էր: Ծերունի հայրը մեռավ, երբ Պաքետը փոքր երեխա էր և ոչ ոք չուներ, բացի մորից: Այդ մայրն էլ ուներ միայն մի եղբայր՝ պարոն Մաթիո Պրադոնը, որ թուջե իրերի և կաթսանների վարպետ էր Փարիզում, Պարեն-Գաուլեն փողոցում, և մեռավ անցած տարի: Ինչպես տեսնում եք, Պաքետը ընտանիքի աղջիկ էր: Մայրը, դժբախտաբար, բարեմիտ կին էր և Պաքետին ոչինչ չսովորեցրեց, բացի ասեղնագործելուց և խալալիքներ շինելուց, որը սակայն չէր խանգարում փոքրիկին մեծանալ, բայց աղքատ մնալ: Երկուսն էլ ապրում էին Ռեյմսում, գետափնյա Ֆուլպեն փողոցում: Ուշք դարձրեք սրան, ինձ թվում է, որ հենց դա դժբախտացրեց Պաքետին: Ե՛լ թվականին, մեր թագավոր Լյուդովիկոս Տասնմեկերորդի, Աստված պահի նրան,

158. Օոլիանի կույր՝ Ժաննա դ'Արկ:

Թագադրութեան տարին, Պաքետն այնքան ուրախ ու սիրուն աղջիկ էր, որ ամենուրեք անվանում էին նրան Շանտըֆլյորի¹⁵⁹: Խեղճ աղջիկ: Գեղեցիկ ատամներ ուներ նա և սիրում էր ծիծաղել՝ ցուցադրելու համար դրանք: Բայց ինչպես գիտենք, ծիծաղել սիրող աղջիկը գնում է լացի ճանապարհով: Սիրուն ատամները կործանում են սիրուն աչքերը: Այդպես էր ահա Շանտըֆլյորին: Նա ու մայրը դժվարութեամբ էին իրենց ապրուստը վաստակում, գուսանի մահվանից հետո շատ էին ընկել, ասեղնագործություն անելով շաբաթական վեց դրնիներից ավելի չէին շահում, որ երկու արծվանշան լիար էլ լրիվ չի անում: Ո՛ւր էր այն ժամանակը, երբ հայր Գրեբերտոն փարիզյան տասներկու սոլ էր վաստակում միայն մի թագադրությունից, այն էլ՝ մեկ երգով: Մի ձմեռ էլ, այդ նույն 61 թվականին, մայր ու աղջիկ ո՛չ մի կտոր փայտ չուներին, ո՛չ էլ խոփ, իսկ ցուրտը սարսափելի էր: Դրանից Պաքետի դեմքն այնքան հաճելի կարմրեց, որ տղամարդիկ նրան անվանում էին Պաքետ, բայց մեծ մասը Պաքրետ¹⁶⁰: Հենց դա էլ կործանեց նրան: — Էստա՛չ, այդ ի՞նչ եմ տեսնում, կրծո՞ւմ ես բլիթը:— Շատ չանցած, մի օր էլ եկեղեցի եկավ՝ ոսկե խաչը վզին: Տասնչորս տարեկան հասակում: Տեսնվա՞ծ բան է դա: Ամենից առաջ գլխահան արեց նրան երիտասարդ դերկոմս զը Կոնմոնտրոյը, որի հայրենական կալվածքը Ռեյմսից երեք-քառորդ լիյո է հեռու, հետո անցավ արքայական ձիավար տյար Անրի դը Տրիանկուրին, ապա ավելի ստորագաս՝ բանակի սերժանտ Շիար դը Բոլիոնին, այնուհետև շարունակ իջնելով՝ արքայական մսահատ Գեուի Օրերժոնին, հետո թագաժառանգի սափրիչ պարոն Մասե դը Ֆրեպյուսին, ապա արքայական խոհարար Թեկենեն լը-Մուլանին, և այդպես հետզհետե անցնելով նվազ երիտասարդին ու նվազ ազնվականին՝ ընկավ վինահար գուսան Գիյոմ Ռասինի, հետո էլ՝ լապտերագործ Թիերի-լը-Մեուի

159. Ծաղկած երգ, երգածաղիկ (Ֆր.):

160. Զտակածաղիկ. դաշտային մարգարիտ, ծաղկում է վաղ գարնանը, գատկին, որից և առաջացել է նրա անունը:

ձեռքը: Այնուհետև խեղճ Շանտրֆլյորին արդեն դարձավ բոլորի սեփականություն. արդեն հասել էր իր ոսկեդրամի վերջին սուին: Էլ ի՛նչ ասեմ ձեզ, խաթո՛ւն տիկնայք. թագադրության ժամանակ, նույն ճյ թվականին, նա էր բանակի անառականոցների պետի անկողինը տաքացնողը: Այո, և այդ բոլորը մե՛կ տարվա մեջ:

Մահիետը հառաչեց և սրբեց աչքերի մեջ կուտակված արցունքը:

– Ոչ մի բանով էլ արտասովոր չէ այդ պատմությունը, – ասաց ժերվեզը, – և այդ բոլորի մեջ ո՛չ գնչու եմ տեսնում, ո՛չ էլ երեխա:

– Համբերություն, – շարունակեց Մահիետը, – երեխա, այո, չուտով մեկը կտեսնեք: – 66 թվականին, սրանից տասնվեց տարի առաջ, հենց այս ամսին, սուրբ Պողոսի տոնի օրը, Պաքետը մի փոքրիկ աղջիկ ունեցավ: Խեղճը սաստիկ ուրախացել էր, վալուց էր ցանկանում երեխա ունենալ: Նրա մայրը, որ բարեսիրտ կին էր և միայն մի բան էր կարողացել անել՝ աչքը փակել այդ ամենի վրա, մեռած էր արդեն: Պաքեսն այլևս աշխարհում ոչ ոք չուներ, որին սիրեր, չուներ նաև ոչ ոք, որ նրան սիրեր: Իր մեղանչելու հինգ տարիների ընթացքում Շանտրֆլյորին ողորմելի արարած էր դարձել: Մենակ էր նա, մենակ այս կյանքում, նրան մատնացույց էին անում փողոցներում, ծանակի ու սուլոցների ենթարկում, ծեծում էին քաղաքապահները, ծիծաղում-ծաղրում քրջոտ երեխաները: Բացի դրանից, նա դարձել էր քսան տարեկան, իսկ քսան տարին ձերբություն է սիրավաճառ կանանց համար: Նրա խելառությունն սկսում էր բերել միայն այնքան օգուտ, որքան նախկին ասեղնագործությունն արհեստը, ամեն մի խորշոմ զրկում էր նրան մի էքյուից. ձմեռը դաժան շրջան էր դառնում նրա համար, փայտն այլևս հաղվագյուտ բան էր նրա օջախում, հացն էլ՝ պահարանում: Այլևս չէր կարողանում աշխատել, որովհետև դառնալով հեշտասեր՝ դարձել էր ծույլ, և շատ ավելի էր տառապում, որովհետև դառնալով ծույլ, դարձել էր և հեշտամոլ: – Համենայնդեպս, այսպես է բացատրում Սեն-Ռեմիի պարոն ավագերեցը, թե ինչու այդ կարգի կանայք ավելի ցուրտ և ավելի քաղցածություն են զգում, քան մյուս՝ աղքատ կանայք, երբ արդեն ձերացած են լինում:

– Լավ,– նկատեց ժերվեզը,– բայց ո՞ւր մնացին գնչուները:

– Մի րոպե էլ համբերի՛ր, ժերվե՛զ,– վրա բերից Ուդարզը, որի ուշադրութունը նվազ անհամբեր էր:– Եթե ամին ինչ հայտնի լինի սկզբից, էլ ի՞նչ կմնար վերջը: Շարունակեցիք, Մահիե՛տ, խնդրում եմ: Ի՞նչ եղավ այդ թշվառ Շանտրֆլյորին:

Մահիետը շարունակեց.

– Ուրեմն՝ խիստ տխուր էր նա. չափազանց թշվառ և այնքան էր լաց լինում, որ այտերը փոս ընկան: Սակայն նա կարծում էր, թե իր ամբողջ ամոթով, խելառ կենցաղով ու լքված վիճակով հանդերձ պակաս ամոթահար, պակաս խելառ ու լքված կլինեի ինքը, եթե աշխարհում ունենար որևէ բան կամ մի էակ. որին կարողանար սիրել, կամ որը կարողանար իրեն սիրել: Անհրաժեշտ էր, որ այդ սիրելին լինեի երեխա, որովհետև երեխան միայն կարող է անմեղ լինել այդ գործում: Նա համոզվել էր դրան, երբ փորձել էր սիրել մի գողի՝ միակ մարդը, որ կկարողանար ցանկալ Պաքետին. սակայն շատ ժամանակ չանցած՝ նկատել էր, որ գողը արհամարհում է իրին: Սեր վաճառող այդ կանանց պետք է սիրեկան կամ զավակ՝ նրանց սրտի դատարկութունը լցնելու համար, այլապես իրիստ դժբախտ են նրանք: Չկարողանալով սիրեկան գտնել, Պաքետը ցանկութունը փոխեց՝ ուզեց երեխա ունենալ և որովհետև չէր դադարել աստվածավախ լինելուց՝ մշտապես աղոթում էր Աստծուն: Վերջապես բարի Աստված զթաց նրան և մի փոքրիկ աղջիկ պարգևեց: Ես ձեզ չեմ պատմի, թե ինչպես էր նա հրճվել, մոլագար կերպով արցունք էր թափում, փաղաքշում ու համբուրում էր մանկանը: Նա ինքն էր սնուցում իր երեխային, խանձարուր էր պատրաստել նրա համար իր անկողնի վրա մնացած միակ վերմակից և այլևս ոչ ցուրտ էր զգում, ոչ քաղց: Գեղեցկացավ նա դրանից: Պառաված աղջիկը գեռատի մայր է դառնում: Տարփածուները նորից մեջտեղ եկան, վերադարձան՝ տեսնելու Շանտրֆլյորիին. նա հաճախորդներ գտավ իր ապրստիքի համար և այդ բոլոր խայտառակութունից ստացածը հատկացրեց մանկան

չորերի, գլխանոցների, կրծկալների, ժանեկազարդ բլուզների ու ատլասե փոքրիկ գդակների՝ չմտածելով նույնիսկ մի վերմակ գնելու մասին:— Պարո՛ն էստաշ, ես ձեզ արդեն ասացի, որ բլիթը չուտեք:— Կասկած չկա, որ փոքրիկ Ագնեսը,— այդ էր երեխայի անունը, մկրտության անունը, որովհետև Շանտըֆլյորին վաղուց արդեն ազգանուն չունեի,— կասկած չկա, որ այդ մանկիկը շատ ավելի էր պարուրված ժապավեններով ու ասեղնագործերով, քան Դոֆինեի սենյորի դուստր: Իմիջիայլոց, ուներ և մի զույգ այնպիսի կոշիկ, որ անկասկած Լյուդովիկոս XI-ն էլ չի ունեցել: Նրա մայրն ինքն էր կարել և ասեղնագործել, դրանց մեջ ներդրել էր պաճուճելու իր ամբողջ հնարամտությունը և սուրբ կույսի զգեստին վայել բոլոր զարդերը: Դրանք վարդագույն, ամենագողտրիկ մաշիկներն էին, որ երբևէ մարդ տեսել է: Նրանց երկարությունը կարող էր լինել շատ-շատ իմ բթամատի չափ, և պետք է տեսնեիք, թե ինչպես են մանկական փոքրիկ տոտիկները դուրս գալիս մաշիկներից, որպեսզի հավատալիք, թե մտել են դրանց մեջ: Արդարև, այնքա՛ն պստլիկ, սիրուն ու վարդագույն էին այդ տոտիկները, ավելի վարդագույն, քան մաշիկների ատլասը:— Երբ դուք երեխաներ ունենաք, Ուզա՛րդ, կիմանաք, որ ոչ մի բան այնպես գեղեցիկ չէ, որքան այդ մանրիկ տոտիկները և պստլիկ թաթիկները:

— Իմ ուզածն էլ այդ է,— ասաց Ուզարդը հառաչելով,— բայց ես սպասում եմ, որ պարոն Անդրի Մյունիեն այդ հաճելի ցանկությունն ունենա:

— Ասեմ նաև,— շարունակեց Մահիետը,— որ Պաքետի երեխայի միայն տոտիկները չէր, որ գեղեցիկ էին: Ես տեսա նրան, երբ չորս ամսական էր միայն, Ամուրի պես գեղեցիկ էր նա: Աչքերն ավելի մեծ էին, քան բերանը, մազերը նուրբ, սև ու սքանչելի և արդեն գանգրվում էին: Երևելի սևաչ ու սևահեր գեղեցկուհի կդառնար տասնվեց տարեկան հասակում: Նրա մայրը օրավուր ավելի էր գժվում նրա վրա: Գուրգուրում էր նրան, համբուրում, խտտացնում,

լողացնում, զուգուժ-զարդարում, համարյա ուտում: Խենթանալու աստիճան հոգի էր տալիս նրա համար և գոհություն էր հայտնում Աստծուն: Մանավանդ՝ նրա սիրուն տոտիկները անվախճան զմայլանքի աղբյուր էին, խելահեղ հրճվանքի առարկա: Նրա շրթունքներն անվերջ փակչած էին այդ տոտիկներին, նա չէր կարող ուշքի գալ դրանց փոքրության վրա հիանալուց: Մտցնում էր փոքրիկ մաշիկների մեջ, հանում, սքանչանում, զմայլվում դրանցով, դեմ էր անում լույսին ու դիտում, խղճահարվում էր՝ փորձելով, որ իր անկողնի վրա վարժվեն քայլել, և հաճությամբ ամբողջ կյանքը կանցկացնեն ծնկաչոք, որպեսզի կոչիկ հագցնեն այդ ոտքերին ու հասներ, ինչպես մի Հիսուս մանկան:

— Գեղեցիկ պատմություն է ու հետաքրքրական, — ասաց ժերվեզը ցածր ձայնով. — բայց որտե՞ղ մնաց զնչուն այդ բոլորի մեջ:

— Իսկույն կասեմ, — վրա բերեց Մահիետը: — Մի օր էլ զարմանալի տեսքով ինչ-որ ձիավորներ եկան Ռեյմս: Աղքատ ու թափառաշրջիկ մարդիկ էին դրանք և լափլփում էին երկիրը իրենց դքսի ու կոմսերի առաջնորդությամբ: Նրանց դեմքն արևախանձ էր, մազերը գանգուր, ականջներին էլ արծաթե օղբեր ունեին: Կանայք ավելի տգեղ էին, քան տղամարդիկ: Կանանց դեմքն ավելի սև էր և միշտ բաց, մարմինը ծածկված էր անպիտան քլջով, պարանոցներից հյուսված ինչ-որ հին սավան էլ ուսի վրա կապած, մազերն էլ, իսկական ձիու պոչ: Նրանց ոտքերի միջև խլրտացող երեխաները վախ կպատճառեին կապիկներին: Մի խոսքով՝ բանադրվածների ոհմակ: Այդ ամբողջ խաժամուժը Ռեյմս էր եկել ուղիղ ստորին Եփպատոսից՝ Լեհաստանի վրայով: Պապը, ինչպես ասում էին, խոստովանեցրել էր նրանց և որպես ապաշխարություն, հրամայել էր յոթ տարի շարունակ ման գալ աշխարհում՝ առանց անկողին մտնելու, դրա համար էլ կոչվում էին ապաշխարողներ և գարչելի հոտ էին արձակում: Բանից դուրս եկավ, որ մի ժամանակ սարակինոս էին եղել նրանք, հետևաբար՝ հավատում էին Յուզիտերին և Տուրի տասը լիվր փող էին պահանջում

գայիսոն ու խույր կրող բոլոր արքեպիսկոպոսներից, եպիսկոպոսներից ու արքաներից: Եվ այդ բանն անուժ էին պապական ինչ-որ կոնդակի զորությամբ: Ռեյմս էին եկել Ալջերիայի թագավորի և Գերմանիայի կայսեր անունից մարդկանց բախտը գուշակելու: Կարող եք ինքներդ էլ հասկանալ, որ հենց դա էլ բավական էր նրանց մուտքը քաղաք արգելելու համար: Եվ ահա ամբողջ ոհմակը ամենայն հաճությամբ ճամբար դրեց Բրեն դարպասի մոտ, այն բլրակի վրա, որտեղ հողմադրաց կա, կավճահանման հին ծակերի կողքին: Ռեյմսի բոլոր բնակիչներն էլ գնում էին նրանց տեսնելու: Նրանք էլ նայում էին ձեր ձեռքին և զարմանահրաշ գուշակություններ անում, կարող էին նույնիսկ Հուգայի համար գուշակել, որ նա կդառնա Հռոմի պապ: Այնուամենայնիվ, վատ լուրեր էին պտտվում նրանց մասին, թե երևյալներ են գողանում, գրպան են կտրում և մարդու միս են ուտում: Խնկացի մարդիկ անմիտներին ասում էին.— Մի՛ գնացեք այնտեղ.— բայց և այնպես, իրենք էլ գնում էին թաքուն: Ընդհանուր վարակի պես էր: Փաստն այն է, որ այնպիսի բաներ էին ասում, որոնցից կարգինալն անգամ կապչեր: Մայրերը մեծապես ուրախանում պարծենում էին իրենց երեխաներով այն օրվանից սկսած, որ գնչուհիները նրանց ձեռքի մեջ կարդացել էին հեթանոսներն ու թուրքերն գրված ամեն սևասկ հրաշալիքներ: Մի մոր տղան դառնում էր կայսր, մյուսինը՝ պապ, երրորդինը՝ զորավար: Խնդճ Շանտրֆլյորին էլ համակվեց հետաքրքրասիրությամբ և ուզեց իմանալ, թե ինչ ուներ ինքը, թե իր սիրուն, փոքրիկ Ագնեսն էլ մի օր չէ՞ր դառնա Հայաստանի կայսրուհի կամ մի այլ բան: Եվ ահա իր աղջկան տարավ գնչուների մոտ: Գնչուհիներն սկսեցին հիանալ երեխայով, գուրգուրել, համբուրել իրենց սև բերաններով, հիանալ նրա փոքրիկ թաթիկներով, ավա՛ղ, ի մեծ հրճվանք նրա մորը: Նրանց զմայլանքը գագաթնակետին հասավ մանավանդ գողտրիկ տոտիկների և սիրուն մաշիկների առթիվ: Երեխան դեռ մեկ տարեկան էլ չէր լինի, բայց արդեն թոթովում էր, ժպտում մորը պստիկ խենթուկի պես, գիրուկ էր ու

կլորիկ, արքայութեան հրեշտակների հազարավոր թովիչ ժեստեր էր անում: Եվ ահա երեխան խիստ սարսափեց գնչուհիներից ու սկսեց լաց լինել: Սակայն մայրն ավելի ուժգին համբուրեց նրան ու թողեց գնաց՝ զմայլած այն երջանիկ բախտից, որ Ագնեսի համար հայտնել էին գուշակուհիները: Նա կդառնար գեղեցկուհի, առաքինություն մարմնացում, թագուհի:

Եվ Պաքեռը վերադարձավ Ֆու-Պեն փողոցի իր խղճուկ տնակը՝ խիստ հպարտ, որ թագուհի է ետ բերում այնտեղ: Հաջորդ օրը օգտվելով այն հարմար բոպեից, երբ մանկիկը քնել էր իր անկողնում (որովհետև միշտ իր հետ էր քնեցնում), զուռը կամացուկ կիսաբաց ծածկեց և շտապեց Չորանոցի փողոցի մի հարևանուհու մոտ՝ պատմելու, թե կդա մի օր, երբ իր աղջկա՝ Ագնեսի սեղանին սպասավորաթյուն կանեն Անգլիայի թագավորն ու Եթովպիայի արհիդուքսը, և հարյուրավոր ուրիշ հրաշալի անակնկալներ:

Այնտեղից վերադառնալուց հետո, սանդուղքը բարձրանալիս ոչ մի ձայն չլսելով՝ նա մտածեց. «Տե՛ս, է, չի էլ արթնացել»: Սակայն տեսավ, որ դուռը ավելի է բաց, քան ինքն էր թողել: Այնուամենայնիվ, խեղճ մայրը ներս մտավ ու վազեց դեպի անկողինը... Երեխան է՛լ այնտեղ չէր, անկողինը դատարկ էր: Երեխայից այլևս ոչինչ չէր մնացել, բացի փոքրիկ, սիրուն մաշիկներից մեկը: Նա դուրս սլացավ սենյակից, թռավ սանդուղքից ցած և գլուխը պատերին խփելով սկսեց գոռալ.— Երեխա՛ս, ո՞ւմ մոտ է երեխաս, ո՞վ է տարել երեխաս:— Փողոցն ամայի էր, տունը մեկուսացած, և ոչ ոք չկարողացավ որևէ բան ասել նրան: Նա չափչփեց քաղաքը, խուզարկեց փողոցները, ողջ օրը վազվզեց դեսուդեն՝ խելացնոր, մոլորված, սարսափելի, հոտոտելով բոլոր դռներն ու պատուհանները՝ ձագերը կորցրած՝ ամենհի գաղանի նման: Շնչասպառ հեռում էր նա՝ հերարձակ, դարհուրիկ տեսքով, իսկ աչքերի մեջ այնպիսի կրակ կար, որից չորանում էին արցունքները: Նա կանգնեցնում էր անցորդներին ու գոռում.— Աղջի՛կս, իմ աղջի՛կը, իմ փոքրիկ, սիրուն աղջի՛կը. ով վերադարձնի

իմ աղջկան, ես կդառնամ նրա աղախինը, նրա շան աղախինը և եթե ուզի, թող իմ սիրտն ուտի:— Նա Հանդիպեց Սեն-Ռեմիի պարոն ավագերեցին ու ասաց.— Պարոն՝ ավագերեց, եղունգներովս հող կվարեմ, միայն թե վերադարձրեք իմ երեխային:— Չսփազանց սրտամմլիկ բան էր, Ուգարդ: Ես տեսա մի շատ խստասիրտ մարդու՝ դատախազ պարոն Պոնս Լակաբրին, որ նույնպես լաց էր լինում՝ ասելով.— Խեղճ մայր:

Երեկոյան նա վերադարձավ իր տունը: Նրա բացակայության ժամանակ Հարևանուհիներից մեկը տեսել էր, թե ինչպես երկու գնչուհի գաղտագողի մտել էին այնտեղ՝ ինչ-որ փաթեթ բռնած, ապա դուրս էին եկել, և դուռը փակելուց հետո շտապ փախել էին: Նրանց մեկնելուց հետո Պաքետի տնից մանկական ճիչի նմանող ձայներ էին լսվել: Մայրը սկսեց քրքջալ, ասես թև առած՝ բարձրացավ սանդուղքը, կարծես թե թնդանոթով խորտակեց դուռը ու ներս մտավ... Եվ զարհուրելի բան տեսավ, Ուգարդ: Իր պստիկ, անուշիկ Ագնեսի փոխարեն, այնքան կարմրաթշիկ, ու թարմ աղջկա փոխարեն, Աստծու այդ ճշմարիտ պարզևի փոխարեն՝ նա տեսավ մի փոքրիկ հրեշ՝ զգվելի, կաղ, միականի, տձև խեղանդամ, որ ճղճղալով քարչ էր գալիս հատակի վրա: Շանտրֆլորին սարսափահար փակեց աչքերը:— Ա՛խ, — գոչեց նա, — մի՞թե կախարդ կանայք իմ աղջկան կերպարանափոխել ու դարձրել են այս զարհուրելի անասունը: Մարդիկ հապշտապ առան ու տարան այդ փոքրիկ ծուռոտնին: Պաքետը կխելագարվեր նրանից: Դա սատանային անձնատուր եղած որևէ գնչուհու հրեշավոր ժառանգն էր, թվում էր մոտավորապես չորս տարեկան և խոսում էր այնպիսի լեզվով, որ ամենևին էլ մարդկային չէր արտաբերում էր անհնարին-անհավանական բառեր:

Շանտրֆլորին հարձակվել էր փոքրիկ մաշիկի վրա. միակ բանն այն ամենից, որ սիրել էր նա: Եվ այնքան երկար ժամանակ մնաց այդպես անշարժ, անձայն, անծպտուն, որ կարծեցինք, թե մեռել է: Հանկարծ ամբողջ մարմնով սարսուաց, մոլեգնորեն համբուլներ դրոշմեց իր մասունքի վրա այնպիսի լացուկոծ անելով, որ կասեիր թե սիրտը պայթեց: Հավատացնում եմ ձեզ, որ մենք բոլորս էլ լաց էինք

լինում: — Ա՛խ, իմ փոքրի՛կ աղջիկ, իմ սիրո՛ւն փոքրիկ աղջիկ, որ-
տե՞ղ ես դու,— ասում էր նա, և մեր սիրտը կտոր-կտոր էր լինում:
Հիմա էլ, որ հիշում եմ, լաց եմ լինում: Դե, գիտե՞ք, էլի, որ մեր զա-
վակները մեր միս ու արյունն են:— Իմ խեղճ էստաշ, որքա՛ն սիրուն
ես դու: Եթե իմանայի՞ք, թե ի՞նչ խելոքն է: Երեկ ինձ ասում էր.— Ես
ուզում եմ դառնալ ընտիր հեծելազորի գինվոր: Իմ սիրելի էստաշ,
իսկ եթե ես քեզ կորցնե՛մ:

Շանտրֆլյորին հանկարծ վեր կացավ, սկսեց վազվզել Ռեյմսի փո-
ղոցներում և գոռգոռալ.— Դեպի գնչուների ճամբա՛րը, շո՛ւտ, դեպի
գնչուների ճամբա՛րը: Պահակազորքեր տվե՞ք վհուկ կանանց վառե-
լու համար:— Բայց գնչուները մեկնել էին: Սև մուկ գիշեր էր:
Հնարավոր չէր հետապնդել նրանց:

Հաջորդ օրը, Ռեյմսից երկու լիյո հեռու, Գիյոյի և Տիլուայի միջև
գտնվող թփուտում, գտան մի մեծ խարույկի մնացորդը, մի քանի
ժապավեն, որ պատկանել էին Պաքետի երեխային, արյան կաթիլներ
և այծի կտոր: Այդ գիշերը հենց շաբաթ օրվա լույս կիրակի գիշերն
էր, հետևաբար՝ այլևս կասկած չկար, որ գնչուները շաբաթահանդես
էին կատարել այդ մացառուտում ու լափել էին երեխային Բեհեդգե-
բուդի ընկերակցությամբ, ինչպես մահմեդականների մեջ է արվում:
Երբ Շանտրֆլյորին իմացավ այս զարհուրելի բաները, լաց չեղավ,
չրթունքները շարժեց կարծես թե խոսելու համար, բայց չկարողա-
ցավ: Հաջորդ օրը նրա մագերն արգեն ալեխառն էին: Իսկ մյուս օրն
անհետացավ:

— Իսկպես որ սարսափելի պատմություն է, որից բուրգունդա-
ցին անգամ լաց կլիներ,— ասաց Ուդարդը:

— Ես այլևս չեմ զարմանում,— ավելացրեց Ժերվեզը,— որ գնչու-
ների ազդած վախն այդպես հալածում է ձեզ:

— Եվ շատ լավ էլ արեցիք,— շարունակեց Ուդարդը,— որ քիչ
առաջ փախաք ձեր էստաշի հետ, որովհետև սրանք էլ լեհական
գնչուներ են:

– Ո՛չ, ո՛չ,– առարկեց ժերվեզը:– Ասում են, որ Իսպանիայից և Կատալոնիայից են գալիս դրանք:

– Կատալոնիայի՞ց, Հնարավոր է,– ասաց Ուդարդը:– Պոլոնիայից, Կատալոնիայից, Վալոնիայից. ես միշտ էլ չփոթում եմ այդ երեք նահանգները: Մի բան միայն կասկածից դուրս է, այն, որ դրանք գնչու են:

– Եվ որոնք, անտարակույս, բավականաչափ երկար ատամներ ունեն, որ կարող են փոքր երեխաներ ուտել,– ավելացրեց ժերվեզը:– Ես չէի զարմանա, եթե Սմերալդան էլ մի քիչ երևիա կերած լիներ՝ շրթունքները գեղեցիկ կծկելով հանդերձ: Նրա սպիտակ այծը այնպիսի չարահճի-խորամանկ բաներ է անում, որ անպայման տակը որևէ սատանայուծյուն կա:

Մահիետը քայլում էր լուռ ու մունջ: Նա խորասուզված էր այն մտախոհուծյան մեջ, որ մի որոշ չափով որևէ կսկծալի պատմուծյան շարունակուծյունն է և դադարում է միայն այն ժամանակ, երբ նրա սասանումը թրթռումից թրթռումի անցնելով, տարածվում ու հասնում է սրտի ամենավերջին լարերին: Այդ միջոցին ժերվեզը հարցրեց նրան.

– Վերջիվերջո, չիմացա՞ն, թե ինչ եղավ Շանտրֆլյորին:

Մահիետը չպատասխանեց: Ժերվեզն իր հարցումը կրկնեց նրա թևը թափահարելով և անուըն տալով: Մահիետը կարծես մտածմունքներից սթափվեց:

– Ի՞նչ եղավ Շանտրֆլյորին,– ասաց նա՝ մեքենայաբար կրկնելով այն բառերը, որոնց տպավորուծյունը խիստ թարմ էր իր ականջում, ապա ջանք թափելով՝ իր ուշադրուծյունը այդ բառերի իմաստի վրա կենտրոնացնելու համար, աշխուժորեն շարունակեց.

– Ո՛չ, երբեք չիմացան:

Եվ փոքր դադարից հետո ավելացրեց.

– Ոմանք ասում էին, թե տեսել են նրան երեկոյան մթնշաղին Ֆրեշամբո դարպասից դուրս գալիս, ոմանք էլ՝ լուսաբացին Բազե

հին դարպասից: Մի աղքատ մարդ գտել էր նրա ոսկե խաչը՝ կտիս-ված այն դաշտի քարե խաչից, որտեղ տոնավաճառ է լինում: Այդ այն խաչն էր, որ կործանել էր Պաքետին 61 թվականին, նրա առաջին սիրեկան՝ զեղեցիկ դերկոմս Կորմոնտրոյի նվերն էր դա: Պաքետը երբեք չէր ցանկացել զրկվել դրանից, որքան էլ որ թշվառ վիճակի էր մատնվել: Կառչած էր դրան այնպես, ինչպես կյանքից: Ուստի, երբ տեսանք, որ հրաժարվել է այդ խաչից, բոլորս էլ մտածեցինք, որ մեռել է: Սակայն Կաբարե-լե-Վոտի մարդկանցից մի քանիսն ասում էին, թե տեսել են նրան Փարիզի ճանապարհին՝ խճերի մեջ ոտաբո-բիկ քայլելիս: Բայց այդ դեպքում պետք է, որ Վելի դարպասից դուրս եկած լիներ, այնպես որ՝ այդ ամենն իրար չեն բռնում: Իմ կարծիքով՝ ամենահավանականն այն է, որ Վելի դարպասից է նա դուրս եկել, բայց մեկնել է այս աշխարհից:

– Ես ձեզ չեմ հասկանում, – ասաց ժերվեզը:

– Վելը գետի անունն է, – պատասխանեց Մահիետը տխուր ժպիտով:

– Խեղճ Շանտըֆլյորի, – ասաց Ուգարդը ցնցվելով, – խեղդվե՛լ է ուրեմն:

– Խեղդվե՛լ է, այո, – շարունակեց Մահիետը, – ո՛վ կարող էր բա-րի հայր Գիբերտոյին ասել, երբ նա Տենքոյի կամրջի տակից, հո-սանքն ի վայր անցնում էր գետը՝ երգելով իր նավակում, որ մի օր էլ նրա սիրելի փոքրիկ Պաքետը կանցներ այդ կամուրջի տակով, բայց առանց երգի ու նավակի:

– Իսկ փոքրիկ մաշի՞կը, – հարցրեց ժերվեզը:

– Մոր հետ էլ անհետացավ, – պատասխանեց Մահիետը:

– Խեղճ փոքրիկ մաշիկ, – գոչեց Ուգարդը:

Ուգարդը, որ գիրուկ ու զգայուն կին էր, ամենայն գոհունակու-թյամբ կհառաչեր Մահիետի հետ, սակայն ավելի հետաքրքրասեր ժեր-վեզը չէր սպառել իր հարցումները:

– Իսկ ի՞նչ եղավ հրեշը, – հարցրեց նա հանկարծ Մահիետին:

– Ո՛ր հրեշը, – հարցրեց նա:

– Այն փոքրիկ գնչու հրեշը, որ կախարդ կանայք թողել էին Շանտըֆլյորի մոտ՝ նրա աղջկա փոխարեն: Ի՞նչ արիք նրան: Հույս ունեմ, որ նրան էլ գցեցիք գետը:

– Ամենևին,– պատասխանեց Մահիետը:

– Ինչպե՞ս թե, ուրեմն վառեցի՞ք: Ըստ էության՝ դա ավելի ճիշտ է, քանի որ երեխան էլ կախարդ էր:

– Ոչ մեկը, ոչ մյուսը, ժերվի՛գ: Պարոն արքեպիսկոպոսը հետաքրքրվեց գնչու երեխայով, դիվահան արեց նրան, մկրտեց, ամենայն հոգատարութեամբ դեռ հանեց նրա մարմնից և ուղարկեց Փարիզ, որպեսզի ղնեն Աստվածամոր տաճարի տախտակե մահճակի վրա՝ որպես ընկեցիկ երեխա:

– Այդ եպիսկոպոսներն է՛լ,– ասաց ժերվեզը մրթմրթալով,– որ գիտնական են, ուրեմն էլ ոչ մի բան ուրիշների պես չեն անում: Հապա՛, ձեզ եմ հարցնում, Ուդա՛րդ, ինչպե՞ս կարելի է սատանային ղնել ընկեցիկ երեխաների մահճակի վրա, քանի որ, անկասկած, այդ փոքրիկ հրեշը հենց սատանան էր: Շատ լավ, Մահիետ, իսկ ի՞նչ արին Փարիզում: Ես միանգամայն վստահ եմ, որ ոչ մի գթասիրտ մարդ չուզեց վերցնել դրան:

– Չգիտեմ,– պատասխանեց ռեյմսցին,– հենց այդ ժամանակ էր, որ իմ ամուսինը նոտարական գրասենյակ գնեց Բերյուում, քաղաքից երկու լիյո հեռու, և այլևս մենք չգրադվեցինք այդ պատմութեամբ, մանավանդ որ՝ Բերյուու առաջ են գտնվում Սերնեյի երկու բլրակները, որոնք տեսողութունից ծածկում են Ռեյմսի մայր եկեղեցու զանգակատները:

Այսպես խոսելով՝ երեք արժանահարգ քաղաքացուհիները հասել էին Գրեի հրապարակը: Այդ պատմութեամբ տարված՝ նրանք, առանց կանգ առնելու, անցել էին Ռուլանի աշտարակի հանրային աղոթագրքի առջևից և մեքենայաբար դիմում էին դեպի պատժարանը, որի շուրջ վայրկյան առ վայրկյան աճում էր բազմությունը: Հնարավոր է, որ այդ պահին բոլորի հայացքներն իր վրա գրավող տեսարանը ամբողջովին մոռացներ Մկան ծակը և այն կանգառումը, որ նրանք

որոշել էին կատարել այդտեղ, եթե վեց տարեկան թմբուկ էստաշը, որի ձեռքից քարչ էր տալիս Մահիետը, հանկարծ չհիշեցնեիր նրանց այդ ճանապարհը կտրելու պատճառը:

— Մայրի՛կ, — ասաց նա, կարծես թե որևէ բնազդից դրոյված, որ կանգնած էր Մկան ծախի առաջ, — հիմա կարո՞ղ եմ բլիթն ուտել:

Եթե էստաշն ավելի ճարտիկ լինեիր, այսինքն՝ պակաս որերամուլ, դեռ էլի կապասեր և վերադարձին միայն, Համալսարանի թաղամասում, պարոն Անդրի Մյունիեի բնակարանում, (Մաղամ-լու-վալանս փողոցում, երբ Սեն գետի երկու բազուկները և Միջնաքաղաքի հինգ կամուրջները կմնային Մկան ծախի և իրենց տան միջև, կտար այդ համեստ հարցը. «Մայրի՛կ, հիմա կարո՞ղ եմ բլիթն ուտել»:

Հենց այդ հարցն էլ, որ անխոհեմ էր այն պահի համար, երբ տվեց էստաշը, արթնացրեց Մահիետի ուշադրությունը:

— Ի դեպ, — գռչեց նա, — քիչ մնաց մոռանայինք ապաշխարուհուն: Հապա՛, ցույց տվեք տեսնեմ ձեր Մկան ծախը, որ այս բլիթը տամ նրան:

— Անմիջապես, — ասաց Ուդարդը, — հոգեշահ գործ կլինի:

Բայց այդպես չէին էստաշի հաշիվները:

— Վա՛յ, իմն է բլիթը, — ասաց նա՝ ուսերը հաջորդաբար շփելով մերթ աջ, մերթ ձախ ականջին, որ այդպիսի դեպքերում դժգոհության գերագույն նշանն է:

Երեք կանայք ետ դարձան, և երբ հասան Ռոլանի աշտարակի տան մոտ՝ Ուդարդն ասաց մյուս երկուսին.

— Լավ չէ, որ երեքս էլ միանգամից նայինք Մկան ծախը, դա կարող է խրտնեցնել ապաշխարուհուն: Դուք երկուսդ ձևացեք, թե «Տեր մեր» եք կարողում ժամագրքի մեջ, ես էլ քիթս կմոտեցնեմ լուսանցույցին, քրձենսովորն ինձ մի քիչ ճանաչում է: Ես ձեզ իմաց կտամ, թե երբ կարող եք մոտենալ:

Եվ միայնակ գնաց դեպի լուսանցույցը: Այն պահին, երբ նրա հայացքը թափանցեց ներս, խորունկ խղճահարուցյուն դրոշմվեց նրա

դիմագծերի վրա, և այդ ուրախ ու թարմ կերպարանքն այնքան հանկարծակի իր արտահայտութիւնը և գույնը փոխեց, որ կարծես թե արևի շողքից անցած լուսնի շողքի տակ. նրա աչքերը խոնավացան, բերանն այնպես կծկվեց, ինչպես այն ժամանակ, երբ պատրաստվում են լաց լինել: Մեկ րոպե հետո նա մատը դրեց շրթունքներին և նշան արեց Մահիետին, որ մոտենա:

Մահիետը եկավ հուզված, լուիկ և ոտքի ծայրերի վրա քայլելով, ինչպես մահամերձի անկողնին մոտենալիս:

Իրոք, խիստ տխուր պատկեր բացվեց երկու կանանց աչքի առաջ, երբ նրանք անշարժ և առանց ծպտուն հանելու նայում էին Մկան ծակի վանդակապատ լուսանցույցից:

Խցիկը նեղ էր, ավելի լայն, քան թե խոր, սրանկյուն կամարակապ առաստաղով և ներսից դիտելիս բավական նման էր եպիսկոպոսական խուլրի ներսի կողմին: Նրա հատակը ծածկած մերկ սալաքարերին, մի անկյունում նստած, ավելի ճիշտ՝ պզգած էր մի կին: Նրա կզակը հենված էր ծնկներին, որ խաչաձևած զույգ բազուկները ուժգնորեն սեղմում էին կրծքին: Այդպես ինքն իր վրա ծալված, ինչ-որ թխագույն քուրճ հագած, որ լայն ծալքերով ամբողջովին փաթաթել էր նրան, հրկար, ալեխառն վարսերը առջևից ցած կախված, որ ծածկելով դեմքը՝ սրունքների վրայով հասնում էին ոտքերին, առաջին հայացքից մի տարօրինակ ձև էր ներկայացնում նա խցիկի խավարչտին ֆոնի վրա, մի տեսակ թուխ եռանկյունի, որ լուսանցույցից ընկնող շողքը կտրում էր երկու որոշակի նրբերանգով՝ մեկը մուգ, մյուսը՝ լուսավոր: Դա մեկն էր այն կեսը ստվերոտ ու կեսը լուսավոր ուրվականներից, որ տեսնում ենք երազում և կամ թե Գոյայի զարմանալի նկարներում, գունատ, անշարժ, դժուրակ, պզգած գերեզմանի վրա և կամ թե կոթնած զնդանի վանդակաձողերին: Դա ո՛չ կին էր, ո՛չ էլ տղամարդ, ո՛չ կենդանի էակ, ո՛չ էլ որոշակի ձև, այլ ինչ-որ պատկեր, մի տեսակ տեսիլք, որտեղ իրար հատում էին իրականն ու երևակայականը, ինչպես լույսն ու ստվերը: Մինչ գետինը սփռված նրա

մազերի տակից հազիվ էր նկատվում նիհարած ու խստահայաց պրոֆիլը. հազիվ էր նրա զգեստը ցույց տալիս կարծր ու սառն հատակի վրա պրկված մերկ ոտքի ծայրը: Սուգի այդ ծածկույթի տակ նշմարվող մարդկային այդ թերի ձևը սարսուռ էր առաջացնում:

Այդ արարածը, որ կարծես թե դրոշմված էր սալաքարին, թվում էր, թե ո՛չ շարժվել կարող է և ո՛չ էլ մտածելու և շնչելու է ընդունակ: Կտավե այդ բարակ քուրձի տակ, հունվար. ամսին պառկած գրանիտե մերկ սալահատակի վրա, առանց կրակի, զնդանի խավարի մեջ, որի շեղակի լուսանցույցը դրսից սառնաշունչ քամի էր ներս թողնում, իսկ արև՝ երբևք, այդ կինը կարծես թե չէր տառապում, ոչ էլ զգում էր: Թ՛վում էր, թե նա զնդանի հետ քարացել է, եղանակի հետ սառույց է դարձել: Նրա ձեռքերը կցված էին, աչքերը՝ սևեռուն: Առաջին հայացքից ուրվականի տեղ կղնհիր նրան, երկրորդ հայացքից՝ արձանի: Այնուամենայնիվ, նրա կապտած շրթունքները ժամանակ առ ժամանակ թեթևակի բացվում էին հառաչից ու դողում, սակայն նույնքան անկենդան ու նույնքան մեքենայաբար, որքան քամուց միմյանցից հեռացող տերևները:

Այնուամենայնիվ, նրա անփայլ աչքերից երբեմն խույս էր տալիս մի անպատմելի հայացք, խոր, ցավազին, անայլայլ հայացք՝ մշտապես սևեռված խցիկի մի անկյունին, որը դրսից հնարավոր չէր տեսնել, այնպիսի հայացք, որ կարծես թե այդ տապնապահար հոգու բոլոր մույլ մտքերը կապում էր ինչ-որ խորհրդավոր առարկայի հետ:

Ահա այսպիսին էր այն էակը, որ իր կացարանի համար ստանում էր «փակյալ ապաշխարուհի», իսկ հագուստի համար՝ «քրձենավոր» անունը:

Երեք կանայք, որովհետև ժերվեզն էլ միացել էր Մահիետին և Ուղարդին, նայում էին լուսանցույցից: Նրանց գլուխները խափանում էին զնդանի ազոտ լույսը, թեև թշվառ արարածը, որին այդպիսով զրկում էին լույսի նշույլից, կարծես թե ուշք չէր դարձնում նրանց:

– Չանհանգստացնենք նրան, – ասաց Ուղարդը ցածր ձայնով. – իր հափշտակության մեջ է, ազոթում է:

Սակայն Մահիետը Հարաճուն անձկությամբ էր զննում նրա դեղնած, սմբած, դիսասխտիվ գլուխը և նրա աչքերը լցվում էին արցունքով:

— Որքա՛ն տարօրինակ բան է,— մրմնջաց նա:

Եվ կարողացավ գլուխը մտցնել լուսանցուլյցի ճաղերից ներս ու Հայացքը Հասցնել մինչև այն սնկյունը, որի վրա անփոփոխ կերպով գամված էր դժբախտ կնոջ Հայացքը: Երբ նա գլուխը լուսանցուլյցից դուրս հանեց, դեմքը ոլողված էր արցունքներով:

— Ինչպե՞ս եք դուք անվանում այս կնոջը, — Հարցրեց նա Ուղարդին:

— Քույր Գյուղյուլ եմք անվանում,— պատասխանեց Ուղարդը:

— Իսկ ես նրան անվանում եմ Պաքետ Շանտըֆլյորի,— ասաց Մահիետը:

Այն ժամանակ մատը բերանին դնելով՝ ապշած Ուղարդին նշան արեց, որ գլուխը լուսանցուլյցից ներս մտցնի ու նայի:

Ուղարդը նայեց և այն անկյունում, որին մնայլ Հափշտակությամբ սեեւված էր ապաշխարուհու Հայացքը, տեսավ վարդագույն ատլասե, բազմաթիվ ոտկե ու արծաթե մանր զանակներով ասեղնագործված մի մաշիկ:

Ուղարդից Հետո նայեց ժերվեզը, և երեք կանայք դիտելով դժբախտ մորը՝ սկսեցին լաց լինել:

Բայց և այնպես, ո՛չ նրանց Հայացքները, ո՛չ էլ նրանց արցունքները չսթափեցրին ապաշխարուհուն: Նրա ձեռքերը մնացին իրար կցված, շրթունքներն անբարբառ, աչքերը սևեռուն, և նրա պատմությունն իմացույթի սիրտը կտոր-կտոր էր լինում այդպես ակնասևեռ դիտված մաշիկից:

Երեք կանայք սակավին ոչ մի բառ չէին արտաբերել, չէին էլ Համարձակվում խոսել՝ նույնիսկ ցածր ձայնով: Այդ խոր լռությունը, այդ ծանր վիշտը և մեծ ինքնամոռացությունը, որտեղ ամեն ինչ անհետացել էր, բացի մի բանից, նրանց վրա գործում էր զատկի կամ

ծննդյան տոնի մայր խորանի տպավորութիւն: Նրանք լուռ էին, ինքնամփոփ և պատրաստ ծունկ չոքելու: Նրանց թվում էր, թե մտել են եկեղեցի, որտեղ Խափարման գիշերվա արարողութիւնն է կատարվում:

Վերջապէս ժերվեզը, որ երեքից ամենահետաքրքրասերն էր, ուստի և ամենից ավելի քիչ զգայունը, փորձեց խոսեցնել արաշխարուհուն:

— Քո՛ւյր, քո՛ւյր Գյուղյուլ:

Նա այս կանչը կրկնեց երեք անգամ՝ ամեն անգամ ձայնը բարձրացնելով: Արաշխարուհին չշարժվեց, ո՛չ մի բառ, ո՛չ մի հայացք, ո՛չ մի հառաչ, կյանքի ո՛չ մի նշան: Ուղարղն էլ իր հերթին ավելի քաղցր ու փաղաքշտկան ձայնով կանչեց.

— Քո՛ւյր, քո՛ւյր սուրբ Գյուղյուլ:

Նույն լուսթիւնն ու անշարժութիւնը:

— Տարօրինա՛կ կին է,— գռչեց ժերվեզը,— և հրանոթից անգամ չի սթափվի:

— Գուցե և խուլ է,— ասաց Ուղարղը հառաչելով:

— Գուցե և կույր,— ավելացրեց ժերվեզը:

— Գուցե և մեռած,— վրա բերեց Մահիտը:

Կասկած չկա, որ եթե հոգին դեռ չէր հեռացել այդ անշարժ, ասես լեթարգիական քուն մտած մարմնից, համենայն դեպս, քաշվիլ ու թաքնվել էր այնպիսի խորխորատներում, որտեղ արտաքին աշխարհի ու ձայների զգացողութիւնն այլևս չի հասնում:

— Ստիպված կլինենք բլիթը դնել պատուհանի մեջ,— ասաց Ուղարղը,— բայց որևէ տղա կարող է վերցնել: Ինչպե՞ս ուրեմն սթափեցնենք սրան:

Հստաչը, որ մինչ այդ ամբողջ ուշքը տվել էր այդտեղից անցած մի փոքրիկ սայլակի, որին լծել էին մի խոշոր շուն, հանկարծ նկատեց, որ իրեն առաջնորդող երեք կանայք լուսանցույցից դիտում են ինչոր բան, և ինքն էլ հետաքրքրասիրութիւնից բորբոքված՝ բարձրացավ մի անկյունաքարի վրա, կանգնեց ոտքերի ծայրերին և կարմիր, գիրուկ դեմքը կպցնելով բացվածքին՝ գոռաց.

– Մայրի՛կ, թողեք ես էլ նայեմ:

Այդ մանկավան թարմ, ջինջ, հնչեղ ձայնից ցնցվեց ապաշխարուհին: Նա գլուխը շրջեց պողպատե զսպանակի չոր ու ընդոստ շարժումով, երկար, ոսկրացած ձեռքերը ետ մղեցին մազերը ճակատից, և նա երեխայի վրա սևեռեց զարմացած, հուսահատությամբ ու դառնությամբ լի աչքերը: Այդ հայացքը կայծակի պես կարճ տևեց:

– Աստվա՛ծ իմ, – գոչեց նա հանկարծ՝ գլուխը ծնկների մեջ թաքցնելով, և թվում էր, թե նրա խոպոտ ձայնը անցնելիս պատառոտում է սիրտը: – Գոնե ուրիշների երեխաներին մի՛ ցույց տվեք ինձ:

– Բարի լույս, տիկի՛ն, – ասաց մանչուկը լրջությամբ:

Այնուամենայնիվ, այդ ցնցումը, այսպես ասած՝ արթնացրեց ապաշխարուհուն: Երկարատև մի սուրսուռ անցավ նրա ողջ մարմնով՝ ոտից գլուխ, և ատամները կափկափեցին: Նա կիսով չափ բարձրացրեց գլուխը և արմուկները հենելով ազդերին՝ ոտքերն էլ կարծես տաքացնելու համար փեղի մեջ առնելով, ասաց.

– Օ՛, ի՛նչ ցուրտ է:

– Խե՛ղճ կին, – ասաց Ուդարդը խոր կարեկցությամբ, – մի քիչ կրակ չէի՞ք ուզենա:

Նա գլուխը բացասաբար օրորեց:

– Շատ լավ, – շարունակեց Ուդարդը մի շիջ պարզելով նրան, – ահա ձեզ համեմունքով գինի, խմեցեք, կտաքացնի ձեզ:

Նա դարձյալ գլուխն օրորեց, շեշտակի նայեց Ուդարդին ու պատասխանեց.

– Զուր:

Ուդարդը պնդեց.

– Ոչ, քո՛ւյր, դա հունվարին խմելու բան չէ: Պետք է մի քիչ գինի խմեք և ուտեք եփպտացորենի ալյուրից պատրաստված այս բլիթը, որ ձեզ համար ենք թխել:

Նա ետ մղեց Մահիետի պարզած բլիթը և ասաց.

– Սև հաց:

– Որ այդպես է, – վրա բերեց նույնպես կարեկցանքով համակված ժերվեզը և արձակելով իր բրդե վրկասլը, – վերցրեք այս ուսնոցը, որ մի քիչ ավելի տաք կալահի, քան թե ձերը: Գցեցեք ձեր ուսերին:

Ապաշխարուհին մերժեց ուսնոցը, ինչպես շիշն ու բլիթն էր մերժել, և պատասխանեց.

– Քուրձ:

– Բայց վերջապես նկատեցեք, որ երեկ տոն էր, – շարունակեց բարեսիրտ Ուղարդը:

– Իհարկե նկատում եմ, – պատասխանեց ապաշխարուհին, – քանի որ երկու օր է, ինչ ջուր չկա իմ թասի մեջ: – Եվ մի փոքր լուելուց հետո՝ ավելացրեց. – Հենց որ տոն է լինում, ինձ մոռանում են: Եվ լավ են անում: Ինչո՞ւ պիտի մարդիկ մտածեն իմ մասին, երբ ես չեմ մտածում նրանց մասին: Հանգած կրակին սառն մոխիր:

Եվ կարծես թե այդքան խոսելուց հոգնած՝ գլուխը նորից կախեց ծնկների վրա: Պարզամիտ ու գթասիրտ Ուղարդը, որ նրա վերջին խոսքերից եզրակացրեց, թե դեռ տրտնջում է ցրտից, միամտորեն պատասխանեց.

– Ուրեմն մի քիչ կրակ բերե՛ք:

– Կրա՛կ, – ասաց քրձենավորը տարօրինակ շեշտով, – բայց մի քիչ էլ կրակ կանե՞ք այն խեղճ, փոքրիկ աղջկա համար, որ տասնհինգ տարի է ահա, ինչ հողի տակ է:

Նրա բոլոր անդամները դողացին, ձայնը կերկերաց, աչքերը փայլեցին: Նա բարձրացավ ծնկների վրա, հանկարծ պարզեց ճեփճեմակ ձեռքը դեպի երեխան, որ գարմացած հայացքով նայում էր նրան:

– Տարե՛ք այս երեխային, – գոչեց նա: – Շուտով այստեղից կանցնի գնչուհին:

Այն ժամանակ նա բերանքսիվայր ընկավ գետին և ճակատը զարնվեց սալաքարին՝ այնպիսի ձայն հանելով, ինչպես քարը քարին

գիպչելուց է առաջանում: Երեք կանայք կարծեցին, որ նա մեռավ: Սակայն մի րուպե հետո շարժվեց, և կանայք տեսան, որ արմուկնկնե-րին և ծնկներին հենվելով՝ առաջանում է նա դեպի այն անկյունը, որ-տեղ գտնվում էր պստիկ մաշիկը: Այլևս նրանք չհամարձակվեցին նայել թշվառին, այլևս չտեսան նրան, սակայն լսեցին անհաշիվ համ-բույրներ ու հառաչանք, որոնք խառնված էին սրտակեղեք ճիչերի և այնպիսի խուլ հարվածների, ինչպես լինում է գլուխը պատին խփե-լիս: Ապա մի այդպիսի հարվածից հետո՝ այնքան սաստիկ, որ երեք կանայք էլ երերացին, այլևս ոչինչ չլսվեց:

– Ձլինի՞ թե սպանեց իրեն, – գոչեց ժերվիզը՝ համարձակվելով գլուխը պատուհանից ներս մտցնել: – Քո՛ւյր, քո՛ւյր Գյուդյուլ:

– Քո՛ւյր Գյուդյուլ, – կրկնեց Ուդարդը:

– Ա՛խ, Աստվա՛ծ իմ, այլևս չի շարժվում, – շարունակեց ժերվիզը, – չլինի՞ թե մեռել է: Գյուդյո՛ւլ, Գյուդյո՛ւլ:

Մահիետը, որ մինչ այդ հեղձուկից չէր կարողանում խոսել, ջանք գործադրեց:

– Սպասեցեք, – ասաց նա, ապա կուացավ լուսանցույցի վրա, – Պաքե՛տ, – կանչեց նա, – Պաքե՛տ Շանտըֆլյորի:

Այն երեխան, որ մանկամտորեն փչում է լավ չվառվող ճայթռու-կի պատրույգին, որ ի վերջո տրաքում է նրա աչքերի մեջ, ավելի չի սարսափի, որքան սարսափեց Մահիետը այն ազդեցութունից, որ գործեց հանկարծակի քույր Գյուդյուլի խցիկը նետված այդ անունը:

Ապաշխարուհին ցնցվեց ողջ մարմնով, վեր կացավ, կանգնեց և այնպիսի շանթարձակ աչքերով խոյացավ դեպի լուսանցույցը, որ Մահիետան ու Ուդարդը և մյուս կրինն ու երեխան ընկրկեցին մինչև գետսփի ճաղերը:

Այդ միջոցին ապաշխարուհու շարագուշակ կերպարանքը երևաց լուսանցույցի փանդակից ու փակչեց նրան:

– Օ՛, հո՛, – աղաղակում էր նա ահավոր ծիծաղով, – գնչուհի՛ն է ինձ կանչում:

Այդ միջոցին պատժարանում կատարվող տեսարանն իր վրա գամեց իրա վայրագ հայացքը:

Նրա ճակատը սարսափից կծկվեց, և նա իր օթեանից գուրս պարզեց կմախքացած բազուկները և հոգեարքի խոխուռոցին նմանող ձայնով գոռաց.

— Ուրեմն նորի՞ց դու ես, զնչո՞ւ աղջիկ, էլի դո՞ւ ես ինձ կանչում, երեսայի՛ գող: Դե՛ լավ, անիծվե՛ս դու, անիծվե՛ս, անիծվե՛ս, անիծվե՛ս:

IV

ՄԻ ԱՐՑՈՒՆՔ ՄԻ ԿԱԹՒԼ ՋՐԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս խոսքն, այսպես ասած, շողկապ է այն երկու տեսարանների միջև, որոնք զուգահեռ կերպով զարգացան մինչև հիմա միևնույն պահին, յուրաքանչյուրն իր հատուկ թատերարհմում. մեկն այն է, որ հիմա կարգացիք, Մկան ծակում, մյուսը, որ հիմա կկարդաք. պատժարանի ելարանի վրա: Առաջին տեսարանին վկա էին միայն այն երևք կանայք, որոնց հետ ծանոթացավ հիմա ընթերցողը. երկրորդի հանդիսատես էր այն ամբողջ բազմությունը, որ ինչպես տեսանք քիչ վերևում, հավաքվում էր Գրեկի հրապարակը՝ պատժարանի ու կախողանի շուրջը:

Առավոտյան ժամը յոթից պատժասեղանի չորս անկյուններում պահակ կանգնած քաղաքապահ չորս զինվորներ այդ բազմությանը հուսադրել էին տեսնելու դատավճռի այնպիսի ի կատար ածումն, անշուշտ, ոչ թե կախողան հանում, այլ մորակառնում, ականջահատում, վերջապես՝ մի այդպիսի հետաքրքրական բան, և բազմությունն այնքան արագ էր ստվարացել, որ չորս պահակազինվորները չափազանց մոտիկից շրջապատվելով՝ մի քանի անգամ

կարիք էին ունեցել «սեղմել» նրան, ինչպես այդ ժամանակ էին սսում՝ խարազանի ծանր հարվածներով և ձիերի գավակներով:

Այդ բազմութունը, որ վարժված էր հրապարակային դատապարտիժներին երկար սպասել, այնքան էլ անհամբերութուն չէր ցուցաբերում: Նա զվարճանում էր՝ դիտելով պատժասեղանը, որ չափաչանց պարզ կառուցվածք ուներ՝ մոտ տասը ոտնաչափ բարձրությամբ քարաշար խորանարդ էր, մեջտեղը՝ փոս: Անտաշ քարից շինված, խիստ սեպածե աստիճանները, որ գերապատիվ ձևով ելարան էին անվանում, տանում էին դեպի վերին հարթակը, որի վրա երևում էր հորիզոնական դիրքով հաստատված կաղնեփայտե զանգվածային մի անիվ: Դատապարտվածին, ծնկաչոք և բազուկները կռնակին ծալած, կապում էին այդ անիվին: Փայտե մի ձող, որ շարժման մեջ էր դնում այդ փոքրիկ շինությունն ներսում ծածկված ճախարակը, պտտեցնում էր միշտ հորիզոնական դիրքում գտնվող այդ անիվը և այդպիսով դատապարտվածի դեմքը հաջորդաբար ներկայացնում էր հրապարակի բոլոր կետերին: Դրա համար էլ սսում էին «ոճրագործին պտտեցնել»:

Ինչպես տեսնում ենք՝ Գրեկի հրապարակի պատժասեղանը բոլորովին զուրկ էր Շուկայի անարգանքի սյան գեղեցկությունից: Ծարտարապետական ո՛չ մի բան, ո՛չ մի հոյակապություն, ո՛չ երկաթե խաչ կրող տանիք կար, ո՛չ ութանկյուն լատներ, ո՛չ էլ նրբակերտ-բարակ սյուներ, որ տանիքի եզրին հասնելիս փթթում էին ականթով ու ծաղիկներով զարդարված խոյակներով, ո՛չ էլ եղջերվաքաղների ու ճիվաղների ձև ունեցող ջրհորգաններ, ոչ ևս քարի մեջ խոր դրվագված նուրբ քանդակներ:

Ուրեմն հանդիսականներն ստիպված էին բավարարվել հասարակ քարե չորս պատերով, խճաքարից շինված երկու ներքնախորշերով և դրանց կողքին ցցված նիհար, մերկ ու անճոռնի քարե կախաղանով:

Գոթական ճարտարապետության սիրահարների համար խիստ անպիտան հյուրասիրություն կլիներ դա: Ծիշտ է՝ գոթական

ճարտարապետության նկատմամբ ոչ ոք այնքան անտարբեր չէր, որքան միջնադարյան պատվական բացերի անները, որոնց շատ քիչ էր մտահոգում անարգանքի սյան գեղեցկությունը:

Վերջապես բերեցին դատապարտվածին՝ սայլակի հետևամասին կապված, իսկ երբ բարձրացրին նրան հարթակի վրա, և հրապարակի բոլոր կետերից մարդիկ կարողացան տեսնել նրան պարաններով ու փոկերով կապկպված պատժարանի անիվին, ծիծաղով ու բացականչություններով լի որոտընդոստ հարայհրոց բարձրացավ հրապարակում: Ճանաչել էին Քվազիմոդոնին:

Իսկապես նա էր: Տարօրինակ էր նրա վերադարձն այդտեղ: Այժմ նա կապված էր այն նույն հրապարակի պատժանիվին, որտեղ նախորդ օրը ողջունել էին նրան, ծափահարել ու միահամուռ կերպով հռչակել ծաղրածուների պապ ու իշխան, Եգիպտոսի դքսի, Թյունի արքայի և Գալիլիայի կայսեր ուղեկցությունը: Հավաստի է միայն այն, որ ամբողջ բազմության մեջ չկար ո՛չ մի մարդ, ո՛չ իսկ մերթ հաղթական, մերթ էլ դատապարտյալ Քվազիմոդոն, որ իր մտքում որոշակի կատարեր այդ զուգադրումը: Այդ տեսարանին պակասում էին Գրենգուարը և նրա փրկիսոփայությունը:

Շուտով Միշել Նուարեն՝ մեր տիրակալ արքայի երզվյալ շեփորահարը լսելու նշան տվեց այդ ռամիկներին և հայտարարեց դատավճիռը՝ ըստ պարոն պրեռոյի կարգադրության ու հրամանի: Հետո պաշտոնազգեստ հագած իր մարդկանց հետ կանգնեց սայլակի ետևը:

Անտարբեր Քվազիմոդոն աչքն անգամ չէր թարթում: Ամեն մի դիմադրություն անհնարին էր դարձված նրա համար հենց այն բանով, որ այդ դարաշրջանի քրեական դատավարության ոճով կոչվում էր «կապանքների ուժգնություն և ամրություն», իսկ դա նշանակում է, որ փոկերն ու շղթաները հավանաբար մտնում էին նրա մարմնի մեջ: Իմիջիայրոց, բանտերից ու թիարաններից է գալիս այդ ավանդույթը և չի էլ ջնջվել, որովհետև մեզ նման քաղաքակիրթ, մեղմ ու մարդկայնական ժողովրդի մեջ ձեռնակապերը հոգատարություն

գահում են դա (տաժանակիրութունն ու գիլիոտինն էլ փակագծի լեջ առած):

Քվագլիմոդոսն թողել էր, որ ուղած տեղը տանեն իրեն, Հրեն, փոստդրեն, բարձրացնեն, կապեն ու կտակպեն: Ոչ մի բան հնարավոր էր կուահել նրա դեմքից, եթե ոչ վայրենու կամ ապուշի գարմանքը: Գիտեին, որ նա խուլ է, հիմա էլ կարող էին ասել, թե կույր է:

Քվագլիմոդոսին չոքեցրին կյոր տախտակի վրա. նա էլ անմուռնչ հնազանդից: Շապիկն ու վերնազգեստը իջեցրին մինչև գոտկառեկը. նա չդիմադրեց: Խճճեցին նրան փոկերի ու օղակների մի նոր փստեմի մեջ. նա թողեց, որ հանգուցեն ու կապեն: Միայն երբեմն-իրեմն սաստկաձայն փնչում էր այն հորթի նման, որի գլուխը յախվում է մսագործի սայլակի եզրից ու ճոճվում:

— Հաստագլուխն է, հա՛,— ասաց ժեհան Յրուդ դյու Մուլենն իր արեկամ Ռոբեն Պուսպենին (որսվհետև այդ երկու ճեմարանականները հետևել էին գատապարտյալին, ինչպես պետք էր ենթադրել),— ոուփի մեջ փակված բզեցից ավելի բան չի հասկանում:

Բագմության մեջ ծայր առավ քրքիջը, երբ մարդիկ տեսան Քվալիմոդոսի մերկ սալասալը, ուղտի լանջին նմանող կուրծքը, անճոռնի ու մազոտ ուսերը: Այդ համընդհանուր ուրախության ժամանակ, քաղաքային պաշտոնադրեստ հաղած մի կարճահասակ, հուժկու ռեսքով մարդ բարձրացավ պատժարանի հարթակը և կանգնեց դատապարտյալի կողքին: Նրա անունն արագությամբ անցավ ամբոխի մի ծայրից մյուսը: Շատևի երզվյալ խոշտանգող վարպետ Պիերա Տորտրյուն էր դա:

Ամենից առաջ նա պատժարանի մի անկյունում դրեց մի սև ավալի ժամացույց, որի վերին անոթը լի էր կարմիր ավազով և որտեղից սփաղը սորում էր ստորին անոթի մեջ, ապա հանեց իր երկհավասար լույնի վերնապկատոր: Այդ ժամանակ մարդիկ տեսան, որ նրա աջ Նևոբից կախվեց մի բարակ մտրակ՝ ծայրին սպիտակ, փայլուն, հանլուցավոր, հյուսված, երկաթե մազիլներով զինված երկար փոկեր:

Ձախ ձեռքով նա անփութորեն շապկի թևքն էր քշտում աջ ձեռքի շուրջը՝ մինչև ուսատակը:

Այդ միջոցին Փեհան Ֆրոլոն խարտյաչ ու գանգուր գլուխը բազմությունից վեր բարձրացրած (ղրա համար նա նստել էր Ռորեն Պուսպենի ուսերին), գոռում էր.

— Եկեք-տեսե՛ք, պարոնա՛յք և տիկնա՛յք, հենց հիմա անառարկելիորեն մտրակահարման է ննթարկվելու տյար Քվագիմոդոն՝ իմ եղբոր, ժողայի պարոն սարկավապապետի ժամհարը՝ արեւլյան ինչոր ծիծաղելի ճարտարապետության նմուշ, մեջքը գմբեթածե, սրունքներն էլ ոլորած սյան նման:

Եվ ամբոխը քահ-քահ ծիծաղում էր, մանավանդ՝ երեսաներն ու դեռատի աղջիկները:

Վերջապես խոշտանգողը ոտքը խփեց պատժարանի հարթակին, և անիվն սկսեց պտտվել: Քվագիմոդոն երեքաց իր կապանքների տակ: Այն ապուշ արտահայտությունը, որ վայրկենապես դրոշմվեց նրա այլանդակ դեմքի վրա, կրկնապատկեց քրքիջներն ամեն կողմ:

Եվ հանկարծ, այն վայրկյանին, երբ անիվն իր պտույտի ընթացքում վարպետ Պիերային ներկայացրեց Քվագիմոդոյի հրեշավոր կռնակը, վարպետ Պիերան բազուկը բարձրացրեց. նուրբ փոկերը ծղրտալով շաչեցին օդում օձերի խրձի նման և կատաղաբար իջան թշվառականի ուսերի վրա:

Քվագիմոդոն կարծես հանկարծակի արթնացած՝ ուստեց իր տեղում: Նա սկսում էր հասկանալ: Նա գալարվեց կապանքների մեջ, զարմանքի ու ցավի ուժգին կծկումը աղավաղեց նրա դեմքի մկանները, բայց նա ոչ մի հառաչ չարձակեց: Միայն գլուխը գցեց ետ, հետո աջ ու ձախ՝ շարունակելով ճոճել, ինչպես անում է ցուլը, երբ շնաճանճը խայթում է նրա կողը:

Առաջինին հաջորդեց երկրորդ հարվածը, ապա երրորդը, հետո մյուսը, դարձյալ ու շարունակ: Ո՛չ անիվի պտույտն էր դադարում, ո՛չ էլ հարվածների տեղալը: Շուտով ժայթքեց արյունը: Եվ մարդիկ

տեսան, թե ինչպես հազարավոր թեղիների նման արյունը հոսեց սապատավորի սև ուսերի վրա և բարակ փոկերը օդը ճեղքող իրենց ոլորապտուկտի ընթացքում արյունը կաթիլ-կաթիլ սկսեցին ցողել բազմության վրա:

Քվագիմոգոն, Համենայնդեպս արտաբուստ, վերստացել էր իր սկզբնական անտարբերությունը: Նա նախ աննկատելիորեն, առանց արտաքին մեծ ցնցումի ու ճիգի, փորձեց կտրատել իր կապանքները: Մարդիկ տեսան, որ նրա միակ աչքը բոցավառվեց, մկանները պրկվեցին, անդամներն իրար մոտեցան և փոկերն ու բարակ շղթաները ձգվեցին: Ճիգը հղոր էր, գերմարդկային, հուսահատ, սակայն պրևտյուկյան հին կապանքները դիմացան: Ճտնտացին միայն, և ուրիշ ոչինչ: Քվագիմոգոն ուժասպառ կծկվեց: Նրա դեմքի ապուշային արտահայտությունը հաջորդեցին դառնությունն ու խոր հուսահատությունը: Նա փակեց իր միակ աչքը, գլուխը խոնարհեց կրծքի վրա և կարծես մահացավ:

Դրանից հետո այլևս չչարժվեց նա: Ոչ մի բան չկարողացավ որևէ շարժում անել տալ նրան, ո՛չ արյունը, որ շարունակում էր հոսել, ո՛չ հարվածները, որոնց սաստկությունն աճում էր, ո՛չ խոշտանգողի բարկությունը, որ նույնպես բորբոքվում էր ու դատավճռի գործադրումից հարբում, ո՛չ էլ սարսափելի փոկերի շաչյունը, որ ավելի սուր ու ավելի շոռաչուն էին, քան արևադարձային խոշոր բղբերի թաթերի արձակած սուլոցը:

Վերջապես, Շատլեի մի սևազգեստ կատարածու, որ սև ձի հեծած՝ պատիժը գործադրելու սկզբից կանգնած էր ելարանի կողքին, սև էրենոսափայտե իր ճիպտը պարզեց դեպի ավազի ժամացույցը: Խոշտանգողը կանգ առավ: Կանգ առավ և անխլվ: Դանդաղ կերպով բացվեց Քվագիմոգոնի աչքը:

Մտրակահարումը վերջացած էր: Երգվյալ խոշտանգողի երկու ծառաները բարձրացրին դատապարտյալի արնաթաթավ ուսերը, ինչ-որ սպեղանիով շփեցին, որով իսկույն ևեթ փակվեցին բոլոր

վերքերը, և գցեցին նրա մեջքին մի տեսակ դեղին գոգնոց, որ նման էր քահանայական շուրջառի: Այդ միջոցին Պիերա Տորտերյուն արնաթաթախ կարմիր փոկերը մզում էր սպաշատակի վրա:

Բայց ամեն ինչ վերջացած չէր Քվադրիմոդոյի համար: Նա դեռ պետք է կրեր պատժարանի վրա մնալու այն մեկ ժամն էլ, որ տյար Ֆլորիան Բարբրդիենը այնպիսի՝ արդարադատությամբ ավելացրել էր տյար Ռոբեր դ'էստուտովիլի դատավճռին՝ ի մեծադուռն փառս ժան դը Կյուսենի ֆիզիոլոգիական և հոգեբանական հին բառախաղի՝ *Surdus absurdus*¹⁶¹:

Հետևաբար, ավազի ժամացույցը չըջեցին և սապատավորին թողին տախտակին կապված, որպեսզի արդարադատությունը լիովին կատարված լինի:

Ժողովուրդը, մանավանդ միջնադարում, հասարակության մեջ այն է, ինչ որ երեխան՝ ընտանիքում: Որքան ժամանակ նա մնա նախնական տգիտության, բարոյական ու մտավոր կրտսերության այդ վիճակում, նրա, ինչպես և երեխայի մասին կարելի է ասել.

Անգութ է այդ տարիքը:

Մենք արդեն ցույց ենք տվել, որ Քվադրիմոդոյին ատում էին, ճիշտ է՝ բազմաթիվ պատճառներով: Հազիվ թե այդ բազմության մեջ գտնեիր մի հանդիսատես, որ Աստվածամոր տաճարի չարաչք կուզից գանդատվելու հիմք չունենար կամ չկարծեր, թե ունի: Պատժարանի վրա նրա երևալը միահամուռ ուրախություն պատճառեց, և դաժան պատիժը, որին ենթարկվեց նա, և այն արգահատելի դիրքը, որի մեջ թողին նրան, ոչ միայն չմեղմացրին խաժամուժին, այլ ավելի սաստկացրին նրա ատելությունը՝ զինելով զվարճության ու ծաղրի խայթոցով:

Ուստի, երբ բավարարված էր Հանրային վրեժխնդրությունը, ինչպես այսօր էլ գոհակաբանում են դատավորական քառանկյունի գզակ զնոզները, եկավ հազարավոր անհատական վրեժներ լուծելու հերթը:

161. Խուլը տիմար է (լատ.):

Այստեղ էլ, ինչպես Արդարադատության պալատի Մեծ սրահում, պոռթկացին մանավանդ կանայք: Բոլորն էլ որևէ ոխ ունեին նրա դեմ, ոմանք նրա չար արարքների, ոմանք էլ՝ նրա տգեղության Համար: Ամենակատաղիները վերջիններն էին:

– Օ՛, Նեոի ծնունդ,– ասում էր մի կին:

– Ավելի կոթ Հեծնող,– գուռում էր մի ուրիշը:

– Ողբերգական զմայելի ծամածռություն,– ոռնում էր երրորդը,– որը նրան ծաղրածուների պապ կղարձներ, եթե այսօրվա փոխարեն երեկ լիներ:

– Սա էլ լավ է, իսկական պատժարանի ծամածռություն,– վրա էր տալիս մի պառավ,– բայց ե՞րբ պիտի անի կախաղանի ծամածռությունը:

– Անիծած ժամհար, ե՞րբ պիտի քո մեծ զանգը կոխես գլուխդ ու Հարյուր ոտնաչափ էլ գետնի տակ մտնես:

– Բայց եկ ու տես, որ այս դե՛ն է «Հրեշտակ տյառնի» զանգերը տալիս:

– Թո՛ւ, խո՛ւլ, միականի՛, կո՛ւզ Հրեշ:

– Այսպիսի այլանդակ ուխտը ավելի շուտ կվիժեցնի Հղիությունը, քան բոլոր դեղ ու դարմանները:

Իսկ երկու ճեմարանականները՝ Ժեհան դյու Մուլենը և Ռոբին Պուսպենը լիաթոք հրգում էին Հետևյալ ժողովրդական կրկնելիքը.

Կախվողին՝

Հաստ պարան.

Այլանդակին՝

Խարազան:

Տեղում էին Հազարավոր ուրիշ լուտանքներ, սուլոցներ, անեծքներ, ծիծաղ, քարեր այս ու այն կողմից:

Քվազիմոդոն խուլ էր թեև, բայց շատ լավ տեսնում էր, իսկ բազմության կատաղությունը պակաս եռանդուն չէր դրոշմված մարդկանց դեմքերին, քան խոսքերի մեջ, մանավանդ որ՝ քարերի Հարվածները բացատրում էին քրքիջների իմաստը:

Սկզբում նա գսպեց իրեն: Սակայն քիչ-քիչ նրա համբերությունը, որ կարծրացել էր խոշտանգողի մտրակի տակ, թուլացավ ու տեղի տվեց բնազդների այդ բոլոր խայթոցների առաջ: Աստուրիական ցուլը, որ քիչ է ջլայնանում պիկագոսի հարձակումներից, կատաղում է շներից ու բանդերի/իերոններից:

Նախ նա դանդաղորեն սպառնալից մի հայացք ման ածեց ամբոխի վրա: Բայց քանի որ կապկպված էր, ապա նրա հայացքն անզոր եղավ քշելու իր վերքը կծող այդ ճանճերը: Այն ժամանակ նա սկսեց խլրտալ իր կապանքների մեջ, և նրա կատաղի ուսոյունները ճարճատեցրին պատժարանի հին անիվը իր տախտակների վրա: Սակայն այդ ամենի արդյունքը եղավ այն, որ ավելի սաստկացան ծաղրն ու լուտանքները:

Դրանից հետո թշվառականը չկարողանալով կտրել կաշկանդված գագանի իր կապը, նորից հանդարտվեց, միայն ժամանակ առ ժամանակ կատաղության հառաչը բարձրացնում էր նրա կրծքի բոլոր խոռոչները, նրա դեմքի վրա ո՛չ ամոթ էր երևում, ո՛չ էլ կարմրություն: Նա շատ էր հեռու հասարակական վիճակից և խիստ մոտ բնության վիճակին, որպեսզի իմանար, թե ինչ բան է ամոթը: Բացի դրանից, մի՞թե խայտառակությունն զգալի է այլանդակության այդ կետում: Սակայն զայրույթը, ատելությունն ու հուսահատությունը այդ զգովելի դեմքի վրա իջեցնում էին հետզհետե ավելի մռայլող, հետզհետե էլեկտրականություն մեծացնող ավելի լցվող մի ամպ: Եվ կիկլոպի աչքից հազարավոր շանթեր էր արձակում այդ էլեկտրականությունը:

Սակայն այդ ամպը մի վայրկյանով պայծառացավ, ելք բազմությունը ճեղքելով անցնում էր ջորի հեծած մի քահանա: Խեղճ դատապարտյալի դեմքը մեղմացավ, հենց որ հեռվից նկատեց նա այդ ջորին ու այդ քահանային: Նրան համակած զայրույթին հաջորդեց մի տարօրինակ ժպիտ՝ լի քաղցրություն, հեղուկություն և անպատմելի քնքշանքով: Որքան ավելի էր մոտենում քահանան, այնքան ավելի որոշ էր դառնում՝ այդ ժպիտը, դառնում ավելի հստակ ու հրճվալի:

Դժբախտ մարդը կարծես թե իրեն փրկողի գալուստն էր ողջունում: Բայց և այնպես, այն բոսիս, երբ ջորին բավականաչափ մոտ էր պատժարանին և նրա հեծյալը կարող էր ճանաչել դատապարտյալին, քահանան խոնարհեց իր աչքերը, հանկարծ ետ դարձավ, ուժգին խթանեց ջորուն, կարծես թե շտապում էր ազատվել նվաստացնող բացականչութուններից և քիչ էր մտահոգվում, որ այդպիսի դուրսից մեջ գտնվող մի թշվառական կարող է ճանաչել իրեն ու բարևել:

Այդ քահանան սարկավագապետ դոն Կլոդ Ֆրոյուն էր:

Ավելի սև ամպ իջավ Քվադրմոգոյի դեմքին: Որոշ ժամանակ ևս ժպիտը խաղաց այնտեղ, սակայն դառն, հուսահատ, չափազանց տխուր ժպիտ:

Ժամանակն անցնում էր: Առնվազն մեկ ու կես ժամ էր, ինչ նա այդտեղ էր՝ պատառոտված, խոշտանգված, անդադրում կերպով ծաղրված և համարյա թե քարկոծված:

Հանկարծ նա նորից, կրկնապատիկ հուսահատութամբ խլրտաց իր կապանքների մեջ, որից երեբաց նրան կրող ամբողջ փայտակերտը, և խզելով լուսթյունը, որ համառորեն պահել էր մինչ այդ՝ ազաղակեց այնպիսի խոպոտ և կատաղի ձայնով, որ ավելի շատ նման էր հաչոցի, քան թե մարդկային ճիչի, և որը խլացրեց սուլոցների ու գոչյունների ժխորը:

— Զո՛ւր:

Մայրահեղ կարիքի այդ բացականչութունը ոչ միայն կարեկցանք չհարուցեց, այլ ընդհակառակը՝ ավելի սաստկացրեց ելարանը շրջապատած փարիզյան միամիտ խաժամուժի զվարճութունը: Եվ մենք պետք է նկատենք, որ այդ խաժամուժը, գանգվածաբար և բազմությամբ վերցրած, այդ դարաշրջանում պակաս դաժան և պակաս բիրտ չէր, քան թափառաշրջիկների ու մուրացիկների այն զղվելի ոճմակը, որի մոտ մենք արդեն տարել ենք ընթերցողին, և որը պարզապես հասարակ ժողովրդի ամենաստորին խափն էր: Ոչ մի ձայն չլսվեց դժբախտ դատապարտյալի շրջապատից, եթե չհաչվենք այն, որ

ծաղրեցին նրա ծարավը: Կասկած չկա, որ այդ պահին նա շատ ավելի այլանդակ ու զղվելի էր, քան թե իղճալի՝ իր շառագունած ու քրտնաթոր դեմքով, մոլորուն հայացքով, տանջանքից ու զայրույթից փրփրակալած բերանով, կիսով չափ կախված լեզվով: Հարկ է ասել նաև, եթե նույնիսկ այդ ամբոխի մեջ գտնվեր որևէ գթասիրտ քաղաքացի կամ քաղաքացուհի, որ ուզենար մի թաս ջուր տանել այդ պատժապարտ թշվառ էակին, ապա անարգանքի սյան անարգ աստիճանների մասին ամոթի ու խայտառակության այնպիսի նախապաշարմունք էր իշխում, որ դա բավական էր բարի սամարացուն վանելու համար:

Մի քանի րոպե անց Քվազիմոդոն հուսահատ մի հայացք մանածեց բազմության վրա և ավելի սրտակեղեք ձայնով կրկնեց:

— Զո՛ւր:

Եվ բոլորն էլ հռհռացին:

— Սա՛ խմիր, — գոռում էր Ռոբեն Պուսպենը՝ չպրտելով նրա դեմքին առվի մեջ թաթախած սպունգը: — Ա՛ն, զզվելի՛ խոււ, ես քո պարտապանն եմ:

Մի կին քար չպրտեց նրա գլխին՝ գոչելով.

— Հիմա կսովորես, թե ինչպես կարելի է գիշերվա կեսին քո նզոված զանգահարությամբ արթնացնել մեզ:

— Հապա՛, որդյա՛կ, — ոռնում էր մի անդամալույծ՝ ջանալով իր անթացուպը դիպցնել Քվազիմոդոյին, — էլ մեզ աչքով կտա՞ս Աստվածամոր տաճարի աշտարակների վրայից:

— Ա՛յ քեզ ջրի գավ, — վրա էր բերում մի ուրիշ մարդ՝ մի ջարդված փարջ չպրտելով նրա կրծքին: — Դու ես հանցավորը, որ իմ կինը երկու գլխանի երեխա բերեց հենց միայն այն պատճառով, որ դու անցար նրա կողքից:

— Իսկ իմ կատուն էլ՝ վեցթաթանի ձագ, — ծղրտում էր մի պառավ՝ կզմինդր նետելով նրան:

— Զո՛ւր, — երրորդ անգամ կրկնեց Քվազիմոդոն հեալով:

Այդ րոպեին նա տեսավ, որ խաժամուժը ետ-ետ է գնում: Բազմությունից դուրս եկավ տարօրինակ ձևով հագնված մի դեռատի

աղջիկ: Նրան ընկերակցում էր ոսկեգօծ եղջյուրներով մի փոքրիկ, սպիտակ այծ, իսկ աղջիկը բռնել էր բասկյան մի դափ:

Քվազիմոդոյի աչքը շողշողաց: Այդ այն գնչուհին էր, որին ինքը փորձել էր առևանգել նախորդ գիշերը, անսպասելի վիրավորանք, որի համար տարտամորեն զգում էր, թե պատժում են իրեն ահա այս պահին: Մինչդեռ բնավ էլ դա չէր պատճառը, որովհետև նա պատժվել էր խուլ լինելու և մի ուրիշ խուլի կողմից դատվելու դժբախտության համար: Հետևաբար, նա չկասկածեց, որ աղջիկը նույնպես գալիս է վրեժ լուծելու և մյուսների պես իր վերջին հարվածը տալու:

Արդարև, Քվազիմոդոն տեսավ, որ նա արագ բարձրանում է ելարանը: Զայրույթից ու վրդովմունքից խեղդվում էր նա. կուզենար փլցնել անարգանքի այդ կառուցվածքը, և եթե նրա աչքի կայծը կարողանար շանթահարել, սպա գնչուհին հոգմացրիվ կլիներ հարթակին հասնելուց առաջ:

Առանց ոչ մի խոսք ասելու՝ աղջիկը մոտեցավ դատապարտյալին, որն ապարդյուն կերպով ջղաձգվեց նրանից խուսափելու համար, բայց աղջիկն իր գոտուց արձակելով դդմաչիշը՝ կամացուկ մոտեցրեց թշվառականի պապակած շրթունքներին:

Այդ ժամանակ մինչ այդ չոր ու սաստիկ վառվող աչքից հոսեց մի խոշոր արցունք, որ դանդաղորեն գլորվեց նրա այլանդակ և հուսահատությունից երկարատև կծկված դեմքի վրայով: Դա թերևս առաջին արցունքն էր, որ երբևիցե թափել էր այդ դժբախտը:

Սակայն նա կարծես մոռացել էր ծարավը: Գնչուհին անհամբերությամբ գեղեցիկ կծկեց իր շրթունքները և ժպտալով՝ դդմաչի փողը դրեց Քվազիմոդոյի պարզած բերանին: Քվազիմոդոն խմեց երկար կումերով. ծարավից վառվում էր նա:

Խմելը վերջացնելուց հետո, թշվառ էակը երկարացրեց իր սև շրթունքները՝ անկասկած համբուրելու այն գեղեցիկ ձեռքը, որ օգնության էր հասել իրեն: Սակայն դեռատի աղջիկը, որ թերևս զերծ չէր անվստահությունից, և հիշում էր գիշերվա բռնության փորձը՝

քաշեց իր ձեռքը այն երեխայի սարսափահար շարժումով, որը վախենում է որևէ գազանի կծելուց:

Այդ ժամանակ խեղճ խուլը սևեռեց նրա վրա կշտամբանքով և անպատմելի տխրությամբ լի հայացքը:

Որտեղ էլ ասես սրտառուչ կլինենր այդպիսի պատկերը, մի գեղեցիկ, թարմ, անարատ ու հրապուրիչ, և միաժամանակ թույլ աղջիկ այնքան երկյուղածորեն օգնության է վազում թշվառության մի այլանդակ գոհի: Անարգանքի սյունին սքանչելի ու վսեմ էր այդ պատկերը:

Բազմությունն անգամ համակվեց դրանով և ծափ տալով՝ սկսեց գոռալ.

– Կեցցե՛, կեցցե՛, ցնծություն՛ւն, ցնծություն՛ւն:

Այդ բոպեին էր ահա, որ ասյաշխարուհին իր ծակի լուսանցույցից պատժարանի վրա նկատեց գնչուհուն և շարտեց նրան իր չարագուշակ նգովքը.

– Անիծվե՛ս դու, գնչո՛ւ աղջիկ, անիծվե՛ս դու, անիծվե՛ս:

V

ԲԼԻԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ

Համերալդան գույնը գցեց և երերալով իջավ անարգանքի սյունից: Ապաշխարուհու ձայնը դեռ հետապնդում էր նրան.

– Իջի՛ր, իջի՛ր, գնչո՛ւ գող, մի օր կբարձրանաս այդտեղ:

– Քրձենափորի էծերը էլի եկել են, – շնջալով ասացին մարդիկ և դրանով էլ ամեն ինչ վերջացավ, որովհետև այդպիսի կանանցից վախենում էին, և դա էլ նրանց դարձնում էր սուրբ-անձեռնմխելի: Այդ դարերում հեշտությունը չէին հարձակվում գիշեր-ցերեկ աղոթողի վրա:

Հասա՛վ Քվաղիմոդոյին ետ տանելու ժամանակը: Նրա կապանքներն արձակեցին, և բազմութունը ցրվեց:

Մեծ կամուրջի մոտ Մահիետը, որ վերադառնում էր այդտեղից իր երկու ընկերուհիների հետ, հանկարծ կանգ առավ:

— Ի դեպ, էստա՛շ, ի՞նչ ես արել բլիթը, — հարցրեց նա:

— Մայրի՛կ, այն ժամանակ, երբ դուք խոսում էիք այդ ծակի մեջ եղած կնոջ հետ, — պատասխանեց նա, — մի խոշոր շուն մոտեցավ ու կրծեց բլիթը, դրա վրա ես էլ մնացածը կերա:

— Ինչպե՞ս թե, պարո՛ն, բուրն էլ կերա՞ք:

— Ոչ, մայրի՛կ, նախ շունը կերավ: Ասացի նրան, թե չի կարելի, բայց նա չլսեց: Դրանից հետո ես էլ կերա:

— Սարսափելի տղա է, — ասաց մայրը ժպտալով և միաժամանակ հանդիմանելով: — Գիտե՞ք ինչ, Ուդարդ, Շառլըրանժի մեր այդու ամբողջ կեռասը միայն սա է ուտում: Դրա համար էլ պապն ասում է, որ զորալար կդառնա: Հապա մեկ էլ տեսնեմ այդպիսի բան եք արել, պարո՛ն էստաշ: Հասկացա՞ր, տոզած շատակե՛ր:

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԳԻՐՔ

I

ԹԵ ԻՆՉ ՎՏԱՆԳ ԿԱ ԻՐ ԳԱՂՏՆԵՒՔԸ ԱՅՄԻՆ ՎՍՏԱՀԵԼՈՒ ՄԵՋ

Շատ շաբաթներ էին անցել:

Մարտի առաջին օրերն էին: Արևը, որին շրջասուլթյան մեր դասական նախահայր Դյուբարտան դեռ չէր անվանել մոմերի մեծ դուքս, այնուամենայնիվ, պակաս զվարթ ու շողշողուն չէր փայլում: Գարնան այն գեղեցիկ ու հաճելի օրերից մեկն էր, որ ամբողջ Փարիզը, դուրս գալով հրապարակներն ու դրոսսավայր փողոցները, տոնում է կիրակի օրվա պես: Պայծառ, ջերմ ու անդորրավետ այն օրերի մեջ կա մի որոշ պահ, երբ պետք է գնալ ու զմայլվել Աստվածամոր տաճարի ավազ դռան վրա. այդ այն ժամն է, երբ արևն արդեն արևմուտք իջած՝ Համարյա շեշտակի է նայում մայր եկեղեցուն: Նրա ճառագայթները հետզհետե ավելի հորիզոնական դառնալով՝ դանդաղորեն քաշվում են հրապարակից, բարձրանում տաճարի ուղղաձիգ ճակատն ի վեր և ստվերից դուրս են բերում հազարավոր բարձրաքանդակներ, երբ կենտրոնական վիթխարի վարդազարդը բոցավառվում է զարբնի հնոցի ցուքերից փայլատակող կիկլոպյան աչքի նման:

Ճիշտ այդ ժամն էր:

Վերջալույսից շառագունած մայր եկեղեցու դեմուգեմը, հրապարակի և Գավթի փողոցի անկյունը գրավող գոթական ոճի մի փառահեղ տան մուտքի վրա շինված՝ քարակերտ պատշգամբում մի քանի դեռատի աղջիկ ծիծաղում ու զրուցում էին՝ ամեն տեսակ շնորհագեղութուն ցուցաբերելով ու խնկթութուն անելով: Նրանց սրածայր, մարգարտակուռ գլխարկների կատարից մինչև կրունկները հասնող երկար քողերից, ուսերը ծածկող, բայց և այնպես, ըստ դարաշրջանի

առինքնող մողայի, կուսական գեղեցիկ լանջի ծնունդը նշմարելի դարձնող ասեղնագործ քանկունակի նրբությունից, վերին շրջագեստից շատ ավելի մեծարժեք ստորին շրջագեստի փարթամությունից (հրաշալի՝ գյուտ), այդ ամենը պարուրող սևգուսից, մետաքսից ու թավչից, և մանավանդ՝ նրանց անգործութունն ու ծուլութունը վկայող ձեռքերի սպիտակությունից դատելով՝ հեշտ էր գուշակել, որ ազնվական ու հարուստ ժառանգորդներ են նրանք:

Արդարև, օրիորդ Ֆլյոր-դը-Լիս դը Գոնդըլորիենն ու նրա ընկերուհիներն էին դրանք՝ Դիանա դը Բրիստոյը, Ամլոտ դը Մոնմիչելը, Կոլմբ դը Գայֆոնտենը և փոքրիկ Շանշըվրիենն՝ բոլորն էլ ազնվատոհմ ընտանիքների աղջիկներ, որ այդ ժամին հավաքվել էին այրի տիկին Գոնդըլորիեի մոտ՝ մոնսենյոր դը Բոժյոյի և նրա կնոջ պատճառով, որոնք ապրիլին պետք է Փարիզ գային և այդտեղ պատվո նաժիշտներ ընտրեին թագաժառանգի կնոջ՝ տիկին Մարգարիտի համար, երբ գնային Պիկարդիա՝ ընդունելու նրան Ֆլամանդացիներից: Հետևաբար, երեսուն լիո շրջագծի վրա եղած բոլոր ազնվականները հետամուտ էին ձեռք բերելու այդ շնորհը՝ հօգուտ իրենց դստերի, և նրանցից շատերն արդեն բերվել կամ ուղարկվել էին Փարիզ: Սրանց էլ իրենց ծնողները վստահել էին գաղտնապահ ու պատկառելի տիկին Ալոիզ դը Գոնդըլորիեին, որ արքայական նետաձիգների նախկին պետի այրին էր և իր մինուճար աղջկա հետ մեկուսացած կյանք էր վարում Փարիզում՝ Աստվածամոր տաճարի և Գավթի փողոցի հրապարակում գտնվող իր տանը:

Այդ պատշգամբը, որտեղ դեռատի աղջիկներն էին, հաղորդակից էր Ֆլանդրիական շիկագույն կաշով փարթամորեն պաստառված և ոսկեզօծ ճյուղանկարներով դրոշմված սենյակի հետ: Առաստաղը զուգահեռաբար գծող հեծանները զվարճացնում էին տեսողութունը հազարավոր ներկված կամ ոսկեզօծ տարօրինակ քանդակապատկերներով: Այս ու այնտեղ՝ դրված դրվագազարդ արկղերի զմայլելի էմալը խտտացնում էր մարդու աչքը, ֆայանսե վարագի մի գլուխ

պսակում էր պնակակալ սքանչելի դարակը. որի երկաստիճան լինելը ցույց էր տալիս, որ տանտիրուհին դրոշ կրելու իրավասու ասպետի կինը կամ այրին էր: Խորքում, վերից վար գինանշաններով ու տոհմադրոշմներով զարդարված բարձր բուխարու կողքին, կարմիր թավշով պսաված փարթած բաղկաթուին նստած էր տիկին զը Գոնգրյուրին, որի հիսունհինգ տարիները զրված էին ոչ միայն նրա հագուստների, այլև դեմքի վրա: Նրա կողքին կանգնած էր ըսվական խրոխտ տեսքով, թեև մի քիչ դատարկ ու պարծնկոտ մի կրիտասարդ, մեկն այն սիրուն տղաներից, որոնց հետ բոլոր կանայք էլ համամիտ են լինում, չնայած այն բանին, որ լուրջ ու դիմագետ մարդիկ նրանց վերաբերյալ ուսը թոթվում են: Այդ երիտասարդ ասպետը կրում էր արքայական աղեղնաձիգների վաշտապետի փայլուն համազգեստ, որ չափազանց նման էր Յուպիտերի այն տարագին, որի վրա ընթերցողը կարողացավ հիանալ այս պատմության առաջին գլխում, հետևաբար՝ մենք նրան չենք հոգնեցնի մի երկրորդ նկարագրությունը:

Օրիորդների մի մասը նստած էր սևնյակում, մի մասն էլ պատշգամբում, ոմանք Ուտրեխտի թավշով պատված քառակուսի, անկյուններին ոսկեճամուկ ցցուներներ ունեցող բարձրի վրա, ոմանք էլ՝ ծաղիկների ու մարդկանց քանդակներով դրվագված կաղնիփայտե նստարաններին: Ամեն մի օրիորդ իր ծնկների վրա պահել էր մի խոշոր ասեղնագործի մի մասը, իսկ մի ծայրն էլ ընկած էր հատակը ծածկող խարի վրա: Բոլորն էլ միասնաբար ասեղնագործում էին դա:

Նրանք զրուցում էին իրար հետ այն դեռատի աղջիկների հավաքույթի շուկաներով ու խեղդված կիսածիճաղներով, որոնց մեջ կա մի երիտասարդ: Երիտասարդը, որի ներկայությունն իսկ բավական է գործի դնելու կանացի ամեն տեսակ ինքնասիրությունը, կարծես թե շատ քիչ էր հետաքրքրվում դրանով, և մինչդեռ օրիորդներից յուրաքանչյուրը ջանում էր գրավել նրա ուշադրությունը, ապա նա կարծես թե զբաղված էր իշայծյամի մորթի իր ձեռնոցով թրագոտու ճարմանդը չփելով:

Ժամանակ առ ժամանակ տարիքոտ տիկիներ կամացուկ որևէ բան էր հարցնում նրան, նա էլ իր կարողության չափ պատասխանում էր մի տեսակ անվարժ ու հսրկադրական քաղաքավարությամբ: Այն ժպիտներից, իմաստալից փոքր նշաններից և աչքի ակնարկներից, որ նետում էր տիկին Ալոիդն իր դստեր՝ Ֆլյոր-դը-Լիսի կողմը կապիտանի հետ կամացուկ խոսելիս, հեշտ էր կռահել, որ խոսքը երիտասարդի և Ֆլյոր-դը-Լիսի միջև գլուխ եկած, անշուշտ, մոտալուտ նշանադրությանը կամ ամուսնությանն էր վերաբերում: Սակայն դատելով սպայի շփոթված սառնությունից՝ կարելի էր ասել, որ համենայն դեպս՝ նրա համար խոսքն այլևս սիրո մասին չէր կարող լինել: Նրա ամբողջ տեսքն արտահայտում էր մտահոգություն ու տաղտուկ, որ կայագործի մեր փոխիյտենանտներն այսօր սքանչելի կերպով կթարգմանեին այսպես. «էսպե՞ս էլ շան պարհակ»:

Բարեմիտ տիկիներ, որ բոլոր սիրավառ մայրերի նման խելքը թոցնում էր իր դստեր համար, չէր նկատում սպայի թույլ խանդավառությունը և ամեն կերպ ջանում էր ցածր ձայնով նկատել տալ նրան, թե որքա՛ն անհամար կատարելություններով է Ֆլյոր-դը-Լիսը մտցնում իր ասեղը կամ կծկում իր կաժը:

— Հապա՛, կրտսե՛ր կուզեն,— ասում էր նա՝ քաշելով սպայի թևը՝ ականջին խոսելու համար:— Հապա մի նայեցեք, հիմա կուանում է նա:

— Ճիշտ որ,— ասում էր երիտասարդը և նորից թաղվում իր մտացրիվ ու սառցային լուռության մեջ: Մի րոպե հետո հարկ էր լինում նորից կուանալ, և տիկին Ալոիդն ասում էր.

— Երբևիցե տեսե՞լ եք ավելի գրավիչ և ավելի կենսուրախ դեմք, քան ձեր նշանածինը: Նրանից ավելի ճերմակամորթ ու խարտիչահեր կարո՞ղ է լինել, հապա անթերի ձեռքե՞րը. հապա պարանո՞ցը, որ զմայլեցնելու համար ընդունում է կարապի բոլոր ձևերը: Լինում են րոպեներ, որ ես նախանձում եմ ձեզ, և որքան բախտավոր եք դուք, որ տղամարդ եք, փուչ ստահա՛կ: Ճիշտ չէ՞ միթե, որ իմ Ֆլյոր-դը-Լիսը

պաշտելու աստիճան գեղեցիկ է, և դուք էլ խելահեղորեն սիրահարված եք նրան:

– Անտարակույս,– պատասխանեց սպան՝ ուրիշ բանի մասին մտածելով:

– Բայց խոսեցեք հետը,– ասաց հանկարծ տիկին Ալոիզը՝ հրելով նրա ուսը,– որևէ բան ասացեք նրան, շատ եք ամաչկոտ դարձել:

Իսկ մենք կտրող ենք հավաստել մեր ընթերցողներին, որ ամաչկոտությունը կապիտանի ո՛չ առաքինությունն էր, ո՛չ էլ թերությունը: Բայց և այնպես, նա փորձեց՝ անել այն, ինչ պահանջում էին նրանից:

– Գեղանի՛ կուզին,– ասաց նա՝ մոտենալով Ֆլյոր-դը-Լիսին,– ո՞րն է այս ձեր ասեղնագործած պատկերի նյութը:

– Գեղեցի՛կ կուզեն,– պատասխանեց Ֆլյոր-դը-Լիսը վրդովմունքի թեթև շեշտով, – արդեն երեք անգամ ասել եմ ձեզ. նեպտունի քարայրն է:

Ակներև էր, որ Ֆլյոր-դը-Լիսը շատ ավելի լավ էր հասկանում վաշտապետի սառն վերաբերմունքի ու մտացրիվության իմաստը: Սպան զգաց, որ անհրաժեշտ է մի որևէ խոսակցություն սկսել:

– Եվ ո՞ւմ համար է այդ ամբողջ նեպտունաբանությունը,– հարցրեց նա:

– Սենտ-Անտուան-դե-Շան արքայարանի համար,– պատասխանեց Ֆլյոր-դը-Լիսն՝ առանց աչքերը բարձրացնելու:

Կապիտանը բռնեց ասեղնագործի մի անկյունը:

– Իմ գեղանի՛ կուզին, ո՞վ է այս հաստիլիկ հեծյալ գինյորը, որ թշերն ուռցրած՝ շեփոր է փչում:

– Տրիտոնն է,– պատասխանեց օրիորդը:

Ֆլյոր-դե-Լիսի կարճ խոսքերի մեջ միշտ էլ մի քիչ նեղացած լինելու շեշտ կար: Երիտասարդը հասկացավ, որ անխուսափելի էր մի որևէ բան ասել նրա ականջին, որևէ տափակություն, հաճոյախոսություն, միևնույն է, թե ինչ: Ուստի և կուսցավ, բայց չկարողացավ

բանել իր երևակայութեան մեջ ավելի գորովագին, ավելի մտերմական
յրևէ բան, քան հետևյալը.

— Ինչո՞ւ համար ձեր մայրը շարունակ հագնում է զինադրոշմնե-
տով զարդարված այնպիսի մի սլատմուճան, որ Կառլոս VII-ի ժամա-
նակվա մեր տատիկներն էին հագնում: Ասացեք ուրեմն նրան, գեղա-
ւի՛ կուպին, որ դա հիմա նրբաճաշակ չէ և նրա շրջագրեստի վրա
տոհմանչանի ձևով ասեղնագործված ծխնին ու դափնին¹⁶² տալիս են
նրան քայլող բուխարու ծածկույթի տեսք: Հիրավի, հիմա այլևս ոչ
դք չի նստում իր տոհմադրոշի վրա, երգվում եմ:

Ֆլյոր-դը-Լիսը բարձրացրեց նրա վրա կշտամբանքով լի իր աչքերը:

— Միակ բա՞նն է դա, որի համար երգվում եք ինձ,— ասաց նա
շածր ձայնով:

Այդ միջոցին բարի տիկին Ալոիզը զմայլված տեսնելով, որ նրանք
այդպես կռացած շշնջում են, ասում էր՝ խաղալով իր ժամագրքի մե-
տաղե փականների հետ.

— Սիրո ինչպիսի՛ հուզիչ պատկեր:

Զինվորականը հետզհետե ավելի ճնշվելով՝ նորից ապավինեց
ասեղնագործին.

— Արդարև, սքանչելի աշխատանք է,— ասաց նա:

Այս խոսքի վրա ճերմակամորթ ու խարտիշահեր, դամասկյան կա-
պույտ դիպակով բարեսես պճնված մի ուրիշ գեղեցկուհի ամոթխա-
ծութեամբ համարձակվեց մի հարց տալ Ֆլյոր-դը-Լիսին՝ հուսալով,
որ գեղեցիկ զինվորականը կպատասխանի դրան.

— Իմ սիրելի՛ Գոնդըլորիե, դուք տեսե՞լ եք Ռոշ-Գյուլոնի ապա-
րանքի ասեղնագործ գորգերը:

— Այդ այն ապարանքը չէ՞, որի շրջափակում գտնվում է Լուվրի
հանդերձապետուհու այգին,— ծիծաղելով հարցրեց Դիանա դը Բրիս-
տոյը, որ գեղեցիկ ատամներ ուներ, ուստի և ծիծաղում էր ամեն առիթով:

162. Տիկին Ալոիզի ազգանունը՝ Գոնդըլորիե (Gondelaurier) կազմված է
gond (ծխնի) և laurier (դափնի) բառերից:

– Որտեղ գտնվում է նաև Փարիզի նախկին պարսալի այն խոշոր, հին աշտարակը, – ավելացրեց գեղեցիկ ու թարմ, դանդուր սև մազերով Ամլոտ դը Մոնմիշելը, որ սովորությունն ուներ հասոաչելու, ինչպես որ Դիանան ծիծաղելու, առանց իմանալու, թե ինչու:

– Իմ սիրելի Կոլոմբ, – նկատեց տիկին Ալոիզը, – դուք այն ապարանքի մասին չե՞ք խոսում, որ պատկանում էր պարոն դը Բաբվիլին՝ Կառլոս VI-ի օրոք: Հիրավի, գեղեցիկ ասեղնագործ գորգեր կան այնտեղ:

– Կառլոս VI, Կառլոս VI արքան, – մրթմրթաց երիասասարդ սպան՝ ոլորելով իր բեղերը: – Ասովա՛ծ իմ, ինչպիսի՛ հին բաներ է հիշում բարի տիկինը:

Տիկին Գոնգըլլորինն շարունակեց.

– Իրոք, գեղեցիկ ասեղնագործներ են, այնքան մեծարժեք աշխատանք, որ համարվում են բացառիկ:

Այդ միջոցին Բերանժեր դը Շանշըվրիեն՝ յոթ տարեկան փոքրիկ, նրբակազմ աղջիկը, որ պատշգամբի երեքնուկաձև բացվածքից նայում էր հրապարակին, գոչեց.

– Հապա նայեցեք, գեղեցիկ կնքամայր Ֆլյոր-դը-Լիս, այդ սիրուն պարուհուն, որ պարում ու դափ է զարկում շինական քաղաքացիների կենտրոնում:

Արդարև, լսվեց բասկյան դափի սուր թմբկահարումը:

– Բոհեմիայից եկած ինչ-որ գնչուհի, – ասաց Ֆլյոր-դը-Լիսը՝ անփութորեն շրջվելով դեպի հրապարակը:

– Տեսնե՛նք, տեսնե՛նք, – գոչեցին նրա աշխույժ ընկերուհիները և միահամուռ կերպով վազեցին պատշգամբի եզրը, մինչդեռ Ֆլյոր-դը-Լիսն իր նշանածի սառնությունից մտածկոտ դանդաղորեն հետևեց նրանց, իսկ վաշտապետը թեթևություն զգալով այդ միջադեպից, որ վերջակետ էր դնում անհարմար դարձած խոսակցությանը, նորից քաշվեց սենյակի խորքը՝ պահակությունից հանված զինվորի գոհ արտահայտությամբ: Մինչդեռ խիստ հաճելի ու հմայիչ

պարտականութիւնն էր գեղանի Ֆլյոր-դը-Լիսի մոտ պահակութիւնն անելը և այդպես էլ թվացի էր նրան մինչ այդ. սակայն կապիտանի սիրտը քիչ-քիչ բթացի էր, մոտայուտ ամուսնութեան հեռանկարը օրավուր ավելի էր սառեցնում նրան: Բացի դրանից, անկայուն բնավորութեան տեր էր և, արժե՞ արդո՞ք ասել, մի քիչ էլ գռեհիկ ճաշակ ունէր: Չնայած բարձրազնվական ծագումին՝ հեծելագորային ծառայութեան մեջ ձեռք էր բերել գուզագլի բազմաթիվ սովորութիւններ: Գինետունը դուր էր գալիս նրան, ինչպես նաև այն ամենը, ինչ հետևում է դրան: Նա շատ լավ էր գգում իրեն հայհոյանքի ու լկտի խոսքերի, ռազմի մարդու հաճոյախոսութեան, դյուրամատչելի գեղեցկուհիների և հեշտ հաջողութիւնների մթնոլորտում: Չնայած այն բանին, որ իր ընտանիքում ստացել էր որոշ կրթութիւն և հաճելի շարժումներ, այնուամենայնիվ, քանի որ խիստ երիտասարդ էր՝ սկսել երկիրը չափչփել, շատ շուտ էր սկսել կայագորից կայագոր թափառել, օրըստօրե աղնվականի փայլը ջնջվում էր հեծելագորի թրակապի բիրտ չփումից: Մարդկային հարգանքի վերջին մնացորդից մղված՝ ժամանակ առ ժամանակ Ֆլյոր-դը-Լիսին այցելելով հանդերձ, կրկնակի ճնշված էր զգում նրա ներկայութեամբ, նախ այն պատճառով, որ իր սերը ցրելով ամեն տեսակ վայրերում, շատ քիչ էր պահել օրիորդի համար, և ապա այդքան բազմաթիվ, պրկված, զգուշութեամբ հագնված, բարեկիրթ ու գեղեցիկ աղջիկների շրջանում անվերջ դողում էր՝ մտածելով, որ հայհոյելու վարժված իր բերանը հանկարծ սանձը բաց թողնի և գինետնային խոսք թուցնի: Պատկերացնո՞ւմ եք, թե ի՞նչ տպավորութիւն կգործեր:

Բացի դրանից, այդ ամենը նրա մեջ միանում էր իր պերճաշնորհութեան, չքեղ հագուստի և գեղեցիկ արտաքինի մասին ունեցած մեծ հավանութիւններին: Ով ինչպես ուզում է, թող լուծի այս հարցերը, ես միայն պատմաբան եմ:

Մի քանի րոպե էր ահա, որ նա, մտազբաղ կամ բնավ էլ չմտածելով, լուռումունջ հենված էր բուխարու քանդակագարդ շրջանակին,

երբ Ֆլյոր-դը-Լիսը հանկարծ շուռ գալով դիմեց նրան: Վերջիվերջո, խեղճ աղջիկը նեղացել էր նրանից՝ հակառակ իր սրտի թելադրանքին:

— Գեղեցի՛կ կուզեն, կարծեմ թե դուք եք մեզ պատմել, թե ինչպես երկու ամիս առաջ, գիշերային հսկողության ժամանակ մի փոքրիկ գնչուհու եք ազատել մի տաս-տասներկու գողերի ձեռքից:

— Կարծեմ թե այո, պատմել եմ, գեղանի՛ կուզին,— պատասխանեց վաշտապետը:

— Գուցե և այս գնչուհին է, որ հիմա պարուժ է այնտեղ՝ գավթի առաջ,— ասաց Ֆլյոր-դը-Լիսը:— Եկեք նայեցեք, իմ գեղեցի՛կ կուզեն Ֆերուս, գուցե ճանաչեք:

Հաշտվելու ծածուկ ցանկությունն էր զգացվում այն հրավերի մեջ, որ անում էր դեռատի աղջիկին իր մոտ գալու համար, ինչպես նաև զինվորականին անուճով կանչելու մեջ: Կապիտան Ֆերուս դը Շատոպերը (որովհետև հենց նա է կանգնած ընթերցողի աչքի առաջ այս գլխի սկզբից) դանդաղ քայլերով մոտեցավ պատշգամբին:

— Հապա՛,— ասաց նրան Ֆլյոր-դը-Լիսը՝ իր ձեռքը քնքշապին դնելով Ֆերուսի բազկին:— Նայեցեք այդ շրջանակի կենտրոնում պարող փոքրիկ աղջկան: Ձեր գնչուհին չէ՞ արդյոք:

Ֆերուսը նայեց ու ասաց.

— Այո, ճանաչում եմ իր այծից:

— Օ՛, իսկապես շատ սիրուն այծիկ է,— ասաց Ամլոտը՝ հիացմունքից ձեռքերը կցելով:

— Իսկ նրա եղջյուրներն իսկապե՞ս ոսկուց են,— հարցրեց Բերանժերը: Տիկին Ալոիզն առանց իր բազկաթոռից շարժվելու՝ ասաց.

— Դա այն գնչուհիներից չէ՞, որ եկան անցած տարի Ժիբար դարպասից:

— Տիկին՛ն մայր իմ,— ասաց քաղցրությամբ Ֆլյոր-դը-Լիսը,— այդ դարպասն այսօր կոչվում է Դժոխքի դարպաս:

Օրիորդ Գոնդըլորիեն գիտեր, թե վաշտապետի համար որքան անախորժ էին իր մոր հնացած արտահայտությունները: Եվ իրոք,

Ֆերուսը սկսեց արդեն ստամենքի միջից ծաղրանքով կրկնել.—
Ժիրար դարպաս՛ւր, ժիրար դարպաս՛ւր: Այդ նրա համար է, որ
անցկացնի Կառլոս VI արքային:

— Կնքամայր,— գոչեց Բերանժերը, որի շարունակ պտտվող
աչքերը հանկարծ բարձրացել էին դեպի Աստվածամոր տաճարի
աշտարակների ծայրը:— Մ՛վ է այդ սև մարդը այնտեղ՝ վերևում:

Բոլոր աղջիկներն էլ հայացքները հառեցին այնտեղ: Հիրավի, մի
մարդ էր կռթնել Գրեի հրապարակին նայող հյուսիսային աշտարա-
կի գազաթի բազրիքին: Քահանա էր նա: Որոշակի երևում էր նրա
եկեղեցական հագուստը և գույգ ձեռներին հենած դեմքը: Նա արձա-
նից ավելի չէր շարժվում: Նրա շեշտակի հայացքը սեեռված էր հրա-
պարակին: Դա կարծես նման էր այն ցինի անշարժությունը, որ
ճնճղուկների բույն է հայտնագործել և ուշադիր դիտում է:

— Ժողայի պարոն սարկավագապետն է,— ասաց Ֆլյոր-դը-Լիսը:

— Շատ սուր տեսողություն ունեք դուք, եթե այստեղից ճանա-
չում եք նրան,— նկատեց Գայֆոնտենը:

— Ինչպե՛ս է դիտում փոքրիկ պարուհուն,— վրա բերեց Դիանա
դը Քրիստոյը:

— Խող զգուշանա գնչուհին,— ասաց Ֆլյոր-դը-Լիսը,— որովհետև
սարկավագապետը չի սիրում դրանց:

— Շատ ցավալի է, որ այդ մարդը այդպես դիտում է աղջկան,—
ավելացրեց Ամլոտ դը Մոնմիշելը,— որովհետև շլացուցիչ է պարում
աղջիկը:

— Գեղեցիկ կուզեն Ֆերո՛ւս,— ասաց հանկարծ Ֆլյոր-դը-Լիսը,—
քանի որ դուք ճանաչում եք այդ փոքրիկ գնչուհուն, նշան արեք, որ
գա այստեղ: Մեկ կղվարճացնի դա:

— Այո՛, այո՛,— գոչեցին բոլոր ղեռատի աղջիկները ծափ տալով:

— Բայց դա խենթություն է,— պատասխանեց Ֆերուսը:— Անկաս-
կած, մոռացել է նա ինձ, ես էլ նրա անունը չգիտեմ: Այնուամենայնիվ,
սրիորդնե՛ր, քանի որ դուք այդպես եք ցանկանում, հիմա կփորձեմ:—

եվ պատշգամբի բազրիքից կռանալով՝ սկսեց կանչել, — փոքրի՛կ, փոքրի՛կ:

Այդ ժամանակ պարուհին չէր թմբկահարում: Նա շրջեց գլուխը դեպի այն կողմը, որտեղից լսվում էր կանչը. նրա փայլող աչքերը սեւեւվեցին Ֆեբուսի վրա, և նա կտրուկ ընդհատեց պարը:

— Փոքրի՛կ, — կրկնեց զինվորականը և մատով նշան արեց, որ գա:

Դեռատի աղջիկը դարձյալ նայեց նրան, ապա շտապուհեց, կարծես թե այտերը բոցավառվեցին, և դափը թևի տակ գնելով՝ ապշած հանդիսատեսների միջով ուղղվեց դեպի այն տան դուռը, որից կանչում էր նրան Ֆեբուսը, դանդաղ, երբերուն քայլերով և այն թռչունի խռովահույզ հայացքով, որը ենթարկվում է օձի դյուրման:

Մի րոպե հետո դռան գորգավարադուլը բարձրացավ, և գնչուհին երևաց սենյակի շեմքի վրա՝ կարմրած, շիոթիված, խոշոր աչքերը խոնարհած և չհամարձակվելով այլևս մի քայլ անել:

Բերանժերը ձեռքերն իրար իսփեց:

Սակայն պարուհին շարունակում էր անշարժ մնալ դռան շեմքին: Նրա հայտնվելը բացառիկ ազդեցություն էր գործել դեռատի աղջկուհիների խմբի վրա: Աներկրա էր, որ գեղեցիկ սպային դուր գալու տարտամ ու անորոշ ցանկությունը համակել էր այդ բոլոր սրիորդներին, որ շքեղ համազգեստը նրանց բոլոր պչրանքների թիրախն էր և սպայի գալուց հետո նրանց միջև մղվում էր մի խուլ, ծածուկ մրցակցություն, որը հաղիվ էին խոստովանում իրենք իրենց, բայց որը, այնուամենայնիվ, ամեն րոպե երևան էր գալիս նրանց ժեստերի ու խոսքերի մեջ: Սակայն քանի որ բոլորն էլ մոտավորապես նույնչափ գեղեցիկ էին, ապա պայքարում էին հավասար գնեքերով, և յուրաքանչյուրը կարող էր հաղթության հույս ունենալ:

Գնչուհու գալը միանգամից խախտեց այդ հավասարակշռությունը: Այնքան բացառիկ էր նրա գեղեցկությունը, որ այն վայրկյանին, երբ նա երևաց սենյակի շեմքի վրա, թվաց, թե տարածեց այնտեղ իրեն հատուկ մի լույս: Այդ նեղվածք սենյակում, պաստառների

ու փայտաքանդակչի հրի այդ մուսայլ շրջանակի մեջ նա անհամեմատ ավելի գեղեցիկ ու լուսաշող էր, քան հանրային հրապարակում: Նա կարծես թե ջահ լիներ, որ բացօթյա լույսից բերում են մութ տեղ: Ազնվագարմ օրիորդներն ակամա շլացան նրանից: Ամեն մեկը մի տեսակ վիրավորված զգաց իր գեղեցկությունը: Ուստի և նրանց ուղեմաճակատը (ներեցեք մեր այս արտահայտությունը) անմիջապես փոխվեց, թեև նրանք ոչ մի բառ չասացին: Բայց շատ լավ էին հասկանում իրար միտքը: Կանանց բնազդներն իրար ըմբռնում և միմյանց պատասխանում են ավելի շուտ, քան տղամարդկանց մտքերը: Նրանց համար թշնամի էր հայտնվել, բոլորն էլ զգացին դա, հետևաբար և դաշնակցեցին իրար հետ: Մի կաթիլ գինի բավական է մի ամբողջ բաժակ ջուր կարմրացնելու համար. գեղեցիկ կանանց հավաքույթի տրամադրությունը փչացնելու համար բավական է, որ հայտնվի ավելի գեղեցիկ մի կին, մանավանդ՝ երբ մեկ տղամարդ կա միայն:

Դրա համար էլ չափազանց սառն ընդունեցին գնչուհուն: Վերից վար դիտեցին նրան, ապա իրար նայեցին, և ամեն ինչ ասված էր. նրանք հասկացել էին միմյանց: Սակայն դեռուտի աղջիկն այն աստիճան հուզված էր, որ չէր համարձակվում թարթիչները բարձրացնել, սպասում էր, որ խոսեն իր հետ:

Նախ վաշտապետը խզեց լուռությունը:

— Ազնի՛վ խոսք, — ասաց նա իր անվահեր ու տափակ ինքնավստահություններ, — զմայլելի արարած է: Ի՞նչ կարծիքի եք դուք, գեղեցի՛կ կուզին:

Այս դիտողությունը, որ մի ուրիշ, ավելի նրբանկատ հիացողը գոնե ցածր ձայնով կասեր, ի վիճակի չէր ցրելու կանացի նախանձը, որ աչալուրջ դիտորդի նման կանգնել էր գնչուհու առաջ:

Ձյոդր-դը-Լիսը արհամարհանքի արվեստական քաղցրությունը պատասխանեց.

— Վատ չէ:

Մյուսները փսփսում էին:

Վերջապես տիկին Ալուիզը, որ պակաս նախանձ չէր, որովհետև նախանձում էր իր աղջկա համար, ասաց պարուհուն.

– Մոտեցեք, փոքրի՛կ:

– Մոտեցեք, փոքրի՛կ, – ծիծաղելի արժանապատվությամբ կրկնեց Բերանժերը, որ հազիվ նրա ազդրին հասներ:

Գնչուհին առաջացավ դեպի ազնվատոհմ տիկինը:

– Գեղեցի՛կ մանկիկ, – ճոռոմ շեշտով ասաց Ֆերուսը՝ ինքն էլ մի քանի քայլ առաջանալով դեպի գնչուհին, – չլիտեմ, թե ձեր կողմից ճանաչվելու գերագույն երջանկությունն ունե՞մ...

Պարուհին ընդհատեց սպային՝ անհուն քնքշանքով լի հայացքը ժպտազին սեեռելով սպայի վրա:

– Օ՛, այո, – ասաց նա:

– Լավ հիշողություն ունի, – նկատեց Ֆլյոր-դը-Լիսը:

– Բայց որքան արագ խույս տվիք այն երեկո, – շարունակեց Ֆերուսը: – Հո չե՞ք վախենում ինձանից:

– Օ՛, ոչ, – պատասխանեց գնչուհին:

«Օ, այո»-ից հետո «Օ, ոչ» արտաբերելու շեշտի մեջ կար ինչ-որ անպատմելի բան, որից Ֆլյոր-դը-Լիսը վիրավորվեց:

– Ձեր փոխարեն, գեղեցկուհի՛, – շարունակեց սպան, որի լեզուն բացվում էր փողոցային մի աղջկա հետ խոսելիս, – ինձ թողիք մի անճոռնի արարած, միականի ու կուզ. կարծեմ ես լիսկոպոսի գանգերը հնչեցնողին: Ինձ հայտնեցին, թե ինչ-որ սարկսվապասիսի ապօրինի գավակն է և ի ծնե դե: Տարօրինակ էլ անուն ունի, կոչվում է Չորս Եղանակների պահք, կրկնազատիկ, Բարեկենդան, այդպիսի մի բան, մի խոսքով՝ գանգատոնի անուն: Ուրեմն նա համարձակվում էր առևանգել ձեզ, կարծես թե դուք ստեղծված լինելիք ժամհարների համար: Սա արդեն չափից դուրս է: Ի՞նչ էր ուզում ուրեմն այդ բուն: Հապա՛, ասացեք:

– Ձեմ իմանում, – պատասխանեց աղջիկը:

– Ինչպիսի՛ հանդգնություն, ինչ-որ ժամհար աղջիկ է առևանգում մի որևէ դերկոմսի պես. շինականի մեկը ուզում է ազնվապատկան

Թռչուն որսալ: Մ՞՞վ է լսել այսպիսի բան: Բայց և այնպես, թանկ վճարեց դրա համար: Վարպետ Պիրեա Տորտըրյուն մեկն է այն ձիապահ-նեւրից, որոնք քերում են անպիտան մարդկանց մարմինը, և եթե ձեզ հաճելի է, ասեմ, որ ձեր ժամհարի մաշկը հիանալի կերպով մշակեց նա:

– Խեղճ մարդ,– ասաց գնչուհին, որի մեջ այդ խոսքերը վերականգնանացնում էին անարգանքի սյան տեսարանը:

Վաշտասպետը քրքջաց:

– Վա՛յ, ելի լսելք, նույնքան տեղին է այդ գթասրտությունը, որքան փետուրը խոզի հետույքին: Թող ես Հռոմի պապի նման ցմփոր լինեմ, եթե...

Եվ իսկույն խոսքը կտրեց:

– Ներեցեք, տիկնա՛յք, կարծեմ թե քիչ մնաց հիմար բան ասիի:

– Փո՛ւ, պարո՛ն,– ասաց Գայֆոնտենը:

– Այդ արարածի լեզվով էլ խոսում է,– կիսաձայն ավելացրեց Յլյոր-դը-Լիսը, որի վրդովմունքն աճում էր բոպե առ բոպե: Այդ վրդովմունքը բնավ էլ չպակասեց, երբ նա տեսավ, որ սպան զմայլված է գնչուհու՞մ և մանավանդ ինքն իրենով, պտույտներ է գործում կրունկի վրա միամիտ ու զինվորական կոպիտ հաճոյախոսություն անելով:

– Հոգիս վկա, շատ սիրուն այջիկ է:

– Բավական վայրենավարի հագնված,– վրա բերեց Դիանա դը Քրիստոյը՝ ժպտալով և գեղեցիկ ատամները ցուցադրելով:

Այս նկատույթյունը լույսի շող եղավ մյուս աղջիկների համար, ցույց ավեց նրանց գնչուհու խոցելի կողմը: Զկարողանալով խայթել նրան գեղեցկության համար՝ հարձակվեցին հագուստի վրա:

– Ճիշտ որ այդպես է, փոքրի՛կ,– ասաց դը Մոնմիշելը,– որտեղի՞ց ես սովորել այդպես՝ առանց վզնոցի ու լանջակալի ման գալ փողոցներում:

– Շրջագդեստն այնքան կարճ է, որ մարդ կարող է սալսուալ,– ավելացրեց Գայֆոնտենը:

– Սիրելի՛ս, – բավական թթու շեշտով վրա բերեց Ճլյոր-դը-
Լիսը, – մի օր էլ հեծյալ պահակները կրոնեն ձեզ այդ ոսկեզօծ գոտու
համար:

– Փոքրի՛կ, փոքրի՛կ, – նկատեց դը Քրիստոյը՝ չարամտորեն
ժպտալով, – եթե պարկեզտությամբ թեք հագցնելիք քո բազուկներին,
այդպես չէին խանձվի արևից:

Արդարև, այդ տեսարանն արժանի էր ավիլի խելացի հանդիսատե-
սի, քան Ճերուսը. նա կտեսներ, թե ինչպես այդ գեղեցիկ աղջիկներն
իրենց թունավոր ու զայրացած լեզուներով գալարվում, սողոսկում
ու ջղաձգվում են փողոցների պարուհու շուրջը, թե որքան դաժան
ու նազելագեղ են նրանք և չարամտորեն փորժում ու քննադատում
են զանակներից ու կեղծ պննանքներից կազմված նրա խղճուկ ու
տարօրինակ արդուգարդը: Միծաղը, հեգնական ու նվաստացուցիչ
խոսքերն այլևս վախճան չունեին: Գնչուհու վրա տեղում էին կծու
խայթոցներ, մեծամիտ բարյացակամության արտահայտություններ
ու չարաննեզ հայացքներ: Թվում էր, թե այդտեղ բազմած են այն
հոռմեացի դեռատի տիկիները, որոնք հաճույք էին զգում գեղեցիկ
ստրկուհու ստիճի մեջ ոսկե գնդասեղ խրելուց: Կարծես թե դրանք
որսորդական գեղեցիկ քերձեններ լինեին, որոնք քթածակերը լայնաց-
րած ու հրացայտ աչքերով պտույտ են գալիս անասունների խեղճ
եղնիկի շուրջը, որին նրանց տիրոջ հայացքը միայն թույլ չի տալիս
հոշոտել:

Այդ ազնվատոհմիկ աղջիկների առաջ, վերջիվերջո, ո՞վ էր հան-
րային հրապարակի անհայտ ու թշվառ պարուհին: Նրանք կարծես
թե բնավ հաշվի չէին առնում գնչուհու ներկայությունը և խոսում
էին նրա մասին, նրա առաջ, իրենք իրենց ու բարձրաձայն՝ որպես
ինչ-որ բավական կեղտոտ, բավական անարգ ու բավական սիրուն
բանի մասին:

Գնչուհին անզգա չէր գնդասեղի այդ խայթոցներին: Երբեմն-
երբեմն ամոթի շառագույնը, բարկության կայծը բոցավառում էր

րա աչքերն ու այտերը, արհամարհանքով լի խոսքը կարծես թե
կարանում էր նրա շրթունքների վրա, քամահրանքով էր անում այն
հոբբրիկ շրթնակծկումը, որ ճանաչում է արդեն ընթերցողը: Բայց
նշարժ կանգնել էր նա՝ Համակերպությամբ լի տխուր ու մեղմ
այացքը սեեռած Ֆերուսի վրա: Այդ Հայացքի մեջ կար նաև եր-
անկություն ու քնքշանք: Թվում էր, թե նա զսպում էր իրեն՝
կախենալով, որ չվռնդեն:

Իսկ Ֆերուսը ծիծաղում էր և գնչուհու կողմը բռնում լկտիու-
շյան ու խղճահարություն խառնուրդով:

— Թողք, փոքրի՛կ, ինչ ուզում են ասեն, — կրկնում էր նա զնգզնգա-
ւելով իր ոսկե խթանները, — ձեր արդուզարդն անկասկած մի քիչ
սրտառոց ու վայրենի է, բայց դա ինչ կարող է անել այնպիսի մի
տղտրիկ աղջկա, ինչպիսին դուք եք:

— Ասավա՛ժ իմ, — գուչեց խարտյաչ Գայֆոնտենը դառն ժպիտով
ուզղելով կարապի իր պարանոցը, — ինչպես տեսնում եմ՝ արքայական
նդի պարոն աղեղնաձիգները հեշտությունամբ են բռնկվում գնչուների
եղեցիկ աչքերից:

— Եվ ինչո՞ւ ոչ, — պատասխանեց Ֆերուսը:

Այս պատասխանից, որ անփութորեն նետեց զինվորականը որպես
ի հանպետք քար, որի անկմանը նույնիսկ չեն նայում, Կոլոմբն սկսեց
իծաղել ապա և՛ Դիանան, և՛ Ամլոտը, և՛ Ֆլյոր-դը-Լիսը, որի
սչքում միաժամանակ արցունք երևաց:

Գնչուհին, որ Կոլոմբ դը Գայֆոնտենի խոսքերից խոնարհել էր
Հայացքը, այժմ ըարձրացրեց՝ ուրախությունից ու Հպարտությունից
ողջողուն և դարձյալ սևեռեց Ֆերուսի վրա: Շատ գեղեցիկ էր նա
սյդ պահին:

Պառավ տանտիկինը, որ հետևում էր այդ տեսարանին, վիրա-
լորված զգաց իրեն և բան չէր հասկանում:

— Սո՛ւրբ կույս, — գուչեց նա Հանկարծ, — այս ինչ բան է խլրտում
նրա սրունքների մոտ: Փու, զզվելի՛ կենդանի:

Այծն էր դա, որ ներս մտել և իր տիրուհուն էր փնտրում. և երբ վազում էր դեպի նա՝ կոտորչները խճճվեցին հյուսվածքների այն կույտի մեջ, որ ազնվական տիկնոջ սրուներների վրա դիպում էին նրա հագուստները, երբ նա նստած էր:

Դա շեղեց ներկաների ուշադրությունը: Գնչուհին առանց որևէ խոսք ասելու՝ այծին ազատեց խճճվածքից:

— Օհո՛, փոքրիկ, ոսկեստոտիկ այծը, — դուցեց Բերանժեղը ուրախությունից ցատկոտելով:

Գնչուհին չսքեց և իր երեսին հայեց այծի գուրգուրելու հետամուտ գլուխը: Թվում էր, թե աղջիկը ներողություն է խնդրում նրանից՝ այդպես լքելու համար:

Այդ միջոցին Դիանան կուսացած՝ փսփսում էր Կոլոմբի ականջին.

— Օ՛, Աստված իմ, ինչպես մինչև հիմա չեմ մտածել, սա հո այծով գնչուհին է: Ասում են, որ նա կախարդ է և նրա այծն էլ զարմանահրաշ բաներ է անում:

— Դե լավ, — ասաց Կոլոմբը, — հիմա էլ այծը պետք է զվարճացնի մեզ և իր հրաշալիքները ցույց տա:

Դիանան ու Կոլոմբը աշխուժորեն դիմեցին գնչուհուն.

— Հապա՛, փոքրի՛կ, որևէ հրաշք անել տուր քո այծին:

— Ձեմ հասկանում, թե ինչ եք ուզում ասել, — պատասխանեց սլարուհին:

— Որևէ հրաշք, կախարդություն, մի խոսքով՝ մոզական պատկեր:

— Ես այդպիսի բան չեմ իմանում: — Եվ սկսեց շոյել իր սիրուն այծին՝ կրկնելով. — Զալի՛, Զալի՛:

Այդ ժամանակ Ֆլյոր-դը-Լիսը կաշվե, ասեղնագործ մի քսակ նկատեց այծի վզին:

— Այդ ի՞նչ է, — հարցրեց նա գնչուհուն:

Գնչուհին խոշոր աչքերը հառեց նրան և լուրջ շեշտով պատասխանեց.

— Դա իմ գաղտնիքն է:

«Շատ կուզենայի իմանալ, թե ինչ բան է քո այդ գաղտնիքը»,— մտածեց Ֆլյոր-դը-Լիսը:

Այդ միջոցին տանտիկինը նեղացած վեր կենալով՝ ասաց.

— Լսի՛ր, գնչուհի՛, եթե դու կամ քո այծը չեք կարող մի բան պարել մեզ համար, էլ ի՞նչ գործ ունեք այս տան մեջ:

Գնչուհին առանց պատասխանելու՝ դանդաղորեն դիմեց դեպի դուռը: Բայց որքան ավելի էր մոտենում դռանն, այնքան ավելի էին քայլերը դանդաղում: Կարծես թե մի անտեսանելի մագնիս կասեցնում էր նրան: Հանկարծ իր արցունքակալած աչքերը նա հառեց Ֆերուսի վրա ու կանգ առավ:

— Աստված՝ վկա, — գոչեց սպան, — այս ձևով չի կարելի: Վերադարձեք ու որևէ բան պարեցիք մեզ համար: Ի դեպ, անուշի՛կ, ի՞նչ է ձեր անունը:

— Էսմերալդա, — պատասխանեց պարուհին՝ առանց հայացքը հեռացնելու նրանից:

Այդ տարօրինակ անունը քրքիջ բարձրացրեց դեռատի աղջիկների մեջ:

— Ջարհուրելի անուն օրիորդի համար, — ասաց Դիանան:

— Հիմա արդեն տեսնում եք, որ սա կախարդ է, — նկատեց Ամլոտը:

— Սիրելի՛ս, — գոչեց հանդիսավորությամբ տիկին Ալոիզը, — ձեր ծնողներն, անշուշտ, այդ անունը չեն որսացել մկրտության ավստանում:

Այդ միջոցին Բերանժերը քաղցր նշահացի մի կտորով այծին հրապուրել էր սենյակի մի անկյունը, երբ մյուսները ուշադրություն չէին դարձնում, և մի քանի ընթացքում արդեն լավ բարեկամացել էին իրար հետ: Հետաքրքրասեր երեխան արձակել էր այծի վղից կախված քսակը, բացել և պարունակությունը դատարկել էր խորի վրա: Դա այբուբենն էր, որի յուրաքանչյուր տառը դրված էր առանձին՝ շիմշիրի փայտե փոքրիկ սալիկի վրա: Հազիվ էին այդ խաղալիքները

շարված խորի վրա, երբ երեխան զարմանքով տեսավ, թե ինչպես այծը, որի հրաշքներից մեկն էր դա անշուշտ, իր ոսկեզօծ տոտիկով քաշեց որոշ տառեր ու շարեց՝ կամացուկ հրելով և հատուկ կարգով իրար մոտ բերելով: Մի բույն անց դա կազմեց մի բառ, որ այծը կարծես վարժված էր գրել, որովհետև շատ քիչ վարանեց բառը կազմելիս, իսկ Բերանժերը ձեռքերն իրար կցելով հիացած բացականչեց.

– Կնքամայր Ֆլյոր-դը-Լիս, հապա նայեցեք, թե ինչ արեց այծը: Ֆլյոր-դը-Լիսը վաղեց այնտեղ ու սարսուաց: Հատակի վրա շարված տառերը կազմել էին հետևյալ բառը.

ՖԵՐՈՒՍ

– Ա՞յծը գրեց սա, – հարցրեց նա կերկերուն ձայնով:

– Այո, կնքամայր, – պատասխանեց Բերանժերը:

Անկարելի էր կասկածել, երեխան գրել չգիտեր: «Ահա և գաղտնիքը», մտածեց Ֆլյոր-դը-Լիսը:

Երեխայի բացականչության վրա վազել-եկել էին ամենքը և՛ մայրը, և՛ դեռատի աղջիկները, և՛ գնչուհին, և՛ սպան:

Գնչուհին տեսավ իր այծի արած հիմարությունը: Նախ շառագունեց նա, ապա գունատվեց և սկսեց հանցավորի նման դուրյալ վաշտապետի առաջ, որը նայում էր նրան գոհունակության ու զարմանքի ժպիտով:

– Ֆերո՛ւս, – շնչում էին ապշած օրիորդները. – կապիտանի անունն է դա:

– Հիանալի հիշողություն ունեք, – ասաց Ֆլյոր-դը-Լիսը՝ քարացած գնչուհուն, ապա չկարողանալով հեկեկանքը զսպել՝ դառնագին կմկմաց, զույգ ձեռքով դեմքը ծածկելով. – վհուկ է սա: – Եվ լսեց ավելի դառնագին մի ձայն ևս, որ սրտի խորքից ասում էր նրան. «Ախոյան է սա ինձ»:

Եվ ուշաթափ վայր ընկավ:

– Աղջի՛կս, աղջի՛կս, – աղաղակեց սարսափահար մայրը, – կորի՛ր այստեղից, դժոխքից փախած գնչուհի:

Էսմերալդան մեկ ակնթարթում հավաքեց չարաբաստիկ տառերը, նշան արեց Զալիին և դուրս եկավ մի դռնից, երբ մյուսից տանում էին Ֆլյոր-դը-Լիսին:

Վաշտապետ Ֆերուսը մենակ մնալով՝ մի վայրկյան վարանեց երկու դռների միջև, ապա հետևեց գնչուհուն:

II

ՔԱՀԱՆԱՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱՐԴԻԿ ԵՆ

Այն քահանան, որին դեռատի աղջիկները նկատել էին Տաճարի հյուսիսային աշտարակի կատարից հրապարակի վրա կուսցած և գնչուհու պարն ուշադրութեամբ դիտելիս, հիրավի, սարկավագապետ Կլոդ Ֆրոլոն էր:

Մեր ընթերցողները մոռացած չեն լինի այն խորհրդավոր խցիկը, որ սարկավագապետը վերապահել էր իրեն այդ աշտարակում (անցողիկ կերպով ասենք, որ ես հաստատապես չգիտեմ, թե դա այն նույն խցիկն է, որի ներքնակողմը այսօր էլ կարելի է տեսնել մարդու հասակի բարձրության վրա գտնվող քառակուսի փոքր լուսանցուցից, որ արևելյան կողմից բացված է այն հարթակի վրա, որտեղից վեր են սլանում աշտարակները, այժմ մերկ, դատարկ ու ավերված որջ է դա, որի վատ գաջված պատերն այս ու այնտեղ զարդարված են հիմա մայր եկեղեցիների ճակատները պստկերող մի քանի անպետք ու դեղնած փորագրանկարներով: Ես ենթադրում եմ, որ այդ որջում իրար հետ մրցելով ու միասին ապրում են չղջիկներն ու սարգերը, ուստի և այդտեղ կրկնակի կռիվ է մղվում ճանճերին բնաջնջիլու համար): Ամեն օր, մայրամուտից մեկ ժամ առաջ, սարկավագապետը բարձրանում էր աշտարակի սանդուղքով և փակվելով այդ խցիկում՝ երբեմն ամբողջ գիշեր մնում էր այնտեղ: Այդ օրը, այն պահին, երբ

Հասնելով իւցիկի ցածրիկ դռանը՝ փականքի մեջ էր մտցնում այն փոքրիկ ու խորամտորեն շինված բանալին, որ միշտ կրում էր կողքից կախած քսակի մեջ, կաստանյետների ու դափի ձայն Հասսավ նրա ականջին: Այդ ձայնը գալիս էր ժամագավթի Հրապարակից: Խնչպես արդեն ասացինք, միայն մի լուսանցույց ունեւր, որը նայում էր եկեղեցու տանիքի վրա: Կլոզ Ֆրոլուն անմիջապես բանալին դուրս էր հանել և մեկ վայրկյան Հետո արդեն աշտարակի գաղաթին էր՝ այն մռայլ ու ինքնամփոփ դիրքով, որով օրիորդները նկատել էին նրան:

Կանգնել էր նա այդտեղ խոժոռադեմ, անշարժ, սեւեռուն Հայացքով և խորասուզված մտածմունքի մեջ: Նրա ոտքերի տակ փռված էր ամբողջ Փարիզը իր դաստակերտների Հաղարավոր սուր-նետանման գմբեթներով և ականահաճո շարված բլուրների շրջանաձև Հորիզոնով, կամուրջների տակից գալարապտույտ Հոսող իր գետով և փողոցներում ծփացող բնակչութամբ, ծխերից առաջացող ամպերով, իր տանիքների լեւնանման շղթայով, որ սեղմում է Աստվածամոր տաճարը կրկնակ օղակներով: Սակայն այդ ամբողջ քաղաքից սարկավազապետը դիտում էր միայն սայահատակի մի կետը՝ ժամագավթի Հրապարակը, այդ ամբողջ բազմութունից միայն մի էակի՝ գնչուհուն:

Դժվար է ասել, թե ինչ բնույթի էր այդ Հայացքը և ինչն էր դրանից ժայթքող կրակի պատճառը: Շեշտակի էր այդ Հայացքը, բայց և այնպես, խռովահույզ ու անհանդիստ: Եվ դատելով նրա ամբողջ մարմնի անշարժութունից, որ Հազիվ երբեմն-երբեմն երերում էր մեքենայաբար արված սարսուռից, ինչպես Հողմահար ծառը, նրա արմունկների պիրկ վրճակից, որոնք ավելի մարմարե էին, քան այն պատվարը, որոնց Հենված էին, տեսնելով նրա դեմքը կծկող քարացած ժպիտը՝ կկարծեիր, որ Կլոզ Ֆրոլոյի մեջ միայն մի բան է կենդանի մնացել՝ աչքերը:

Գնչուհին պարում էր, նա պտտեցնում էր դափը իր մատի ծայրին և վեր էր նետում՝ պրովանսալյան սարաբանդներ պարելով: Այդ արագաշարժ, թեթև ու զվարթ աղջիկը չէր զգում այն վտանգավոր

Հայացքի ծանրությունը, որ կապարի նման ընկնում էր իր գլխի վրա: Բազմությունը խլրտում էր նրա շուրջը. մերթ ընդ մերթ դեղին ու կարմիր կուրտիկ հագած մի մարդ շրջանակն ընդլայնում էր, ապա գալիս նստում պարուհուց մի քանի քայլ հեռու, աթոռին, և այծի գլուխը դնում իր ծնկների վրա: Այդ մարդը կարծես թե գնչուհու ընկերն էր: Կլոդ Ֆրոյուն իր կանգնած բարձր կետից չէր կարող լավ տեսնել նրա դիմագծերը:

Այն ըրպեից, երբ սարկավագապետը նկատեց այդ անծանոթին, նրա ուշադրությունը կարծես թե բաժանվեց պարուհու ու այդ տղամարդու միջև, և նրա դեմքը հետզհետե ավելի մռայլվեց: Հանկարծ նա ուղղվեց, և ամբողջ մարմնով սարսուռ անցավ:

— Ո՞վ է այդ մարդը, — ասաց նա ատամների միջից, — ես միշտ մենակ եմ տեսել այդ աղջկան:

Եվ նորից սուզվելով պտուտակաձև սանդուղքի ոլոր-մոլոր կամարի տակ՝ իջավ ցած, բայց զանգակատան կիսաբաց դռան առջևից անցնելիս տեսավ մի բան, որ խիստ զարմացրեց նրան. Քվազիմոդոն կռացած հսկայական շերտափնդկերի նմանող այդ թերթաքարե ծածկերից մեկի վրա՝ նույնպես դիտում էր հրապարակը: Այնքան էր նա տարված իր գննումով, որ նույնիսկ չնկատեց իր հոգեհոր անցնելը: Նրա վայրագ աչքը արտասովոր դյուրեթված ու մեղմացած արտահայտություն ունեեր:

— Տարօրինակ բան է, — մրթմրթաց Կլոդը: — Մի՞թե գնչուհուն է դիտում այդպես:

Եվ շարունակեց իջնել: Մի քանի ըրպե հետո մտահոգ սարկավագապետը աշտարակի ստորոտում գտնվող դռնից դուրս եկավ հրապարակ:

— Ի՞նչ եղավ գնչուհին, ո՞ւր կորավ, — հարցրեց նա՝ խառնվելով Հանդիսատեսների բազմությանը, որին հավաքել էր դափի ձայնը:

— Չեմ իմանում, — պատասխանեց կողքին կանգնածներից մեկը, — Հենց նոր անհետացավ: Կարծում եմ՝ գնաց որևէ կաստանյետապար պարելու այս դիմացի տանը, ուր կանչեցին նրան:

Գնչուհու փոխարին, նույն այն գորգի վրա, որի արաբական նախշերը մի բուսական առաջ ջնջվում էին նրա պարի քմահաճ պտույտների ներքո, սարկավագապետը տեսավ միայն կարմիր-դեղին կուրտիկով մարդուն, որ նույնպես մի քանի տեստոն վաստակելու համար, պտտվում էր շրջանակի բոլորը՝ ձեռքերը ազդրերին, գլուխը ետ գցած, դեմքը կարմրած, վիզը պարզած և մի աթոռ բռնած ատամների մեջ: Այդ աթոռի վրա կապել էր նա մի կատու, որ հարևանուհիներից մեկն էր փոխ տվել և որը սարսափից խիստ ճչում էր:

— Սո՛ւրբ աստվածածին, — բացականչեց սարկավագապետը այն պահին, երբ ձեռնածուն քրտնաշաղախ անցավ նրա առջևից աթոռի ու կատվի իր բուրգով, — այս ի՞նչ է անում տյար Պիեր Գրենգուարը:

Սարկավագապետի խիստ ծայնը ինչո՞ւ մարդուն այնպես տականու՜ վրա արեց, որ նա հավասարակշռութունը կորցրեց՝ իր ամբողջ կառուցվածքով հանդերձ և աթոռն ու կատուն պցեց ներկաների գլխին, երկարատև ու անասելի սուլոցներ բարձրացնելով:

Հնարավոր է, որ տյար Պիեր Գրենգուարը (քանի որ իրոք նա էր) ստիպված կլիներ անախորժ հաշվհարդարի նստել կատվի տիրուհու և իրեն շրջապատած՝ այդ բոլոր ճմլված ու քերծված դեմքերի հետ, եթե չչտապեր ժխորից սգովելով՝ ապաստանել եկեղեցում, ուր Կլոդ Ֆրոլուն նշան էր արել հետևել իրեն:

Տաճարն արդեն մութ էր ու ամայի, կողմնային բեմերը թաղվել էին խավարի մեջ, իսկ մատուռների ճրագներն սկսում էին նշուլել աստղերի նման, կամարները սևանում էին: Ճակատամասի խոշոր վարդագարդը միայն, որի անհամար գույնզգույն ապակիները շղթված հորիզոնական արևի ճառագայթներով՝ շողշողում էին խավարի մեջ ակների ու գոհարների կույտի պես, իր շլացուցիչ լուսապատկերն էր նետել նավի մյուս ծայրը:

Մի քանի քայլ անելուց հետո, տեղ Կլոդը մեջքը հենեց մի սյան և շեշտակի նայեց Գրենգուարին: Դա այն հայացքը չէր, որից վախենում էր Գրենգուարը՝ խիստ ամոթահար, որ մի խստաբարո ու բանիմաց անձնավորութուն բռնել է իրեն խեղկատակի այդ տարազը

Հաղած: Քահանայի Հայացքի մեջ ծաղրական ու հեգնող ոչ մի բան չկար, նա լուրջ էր, Հանդարտ ու խորաթափանց: Նախ սարկավագապետը խզեց լուռություներ:

— Լսեցեք, տյա՛ր Պիեբ, դուք ինձ շատ բաներ պետք է բացատրեք: Ամենից առաջ՝ ի՞նչն է պատճառը, որ Համարյա թե երկու ամիս է, ինչ չեք երևում, և ահա նորից ենք գտնում ձեզ քառուղիներում, ի՞նչ խոսք, Հիանալի արդուզարդով, կեսը կարմիր, կեսը դեղին, Գողբեկի խնձորի նման:

— Տե՛ր իմ,— ասաց Գրենգուարը ակնածանքով,— արդարև, զարմանահրաշ գգեստավորում է սա, և դուք ինձ տեսնում եք ավելի ամոթահար, քան թե դդամաշիշը գլխին դրած կատուն: Խոստովանում եմ՝ շատ վատ բան կլինի պահակապետության պարոն Հեծյաներին հարկադրել, որ այս կուրտիկի տակ գանակոծեն պլաթագորասյան փրիստփայի բազկոսկրը: Բայց ի՞նչ կարող եմ անել, պատվելի՛ ուսուցիչ, Հանցանքն իմ նախկին վերնազգեստինն է, որ վատաբար լքեց ինձ այս ձմռան սկզբին՝ պատրվակելով, թե բզիկ-բզիկ է լինում և կարիք ունի Հանգստանալու քրջահավաքի կողովի մեջ: Ի՞նչ անեմ, քաղաքակրթությունը տակավին չի հասել այն կետին, որ մարդը կարողանա ման գալ բուլրովին մերկ, ինչպես Հնադարյան Դիոգիենեսն էր ուզում: Ավիլացրեք նաև այն, որ խիստ ցուրտ քամի էր փչում և հունվարը բնավ էլ այն ամիսը չէ, որ հաջողությամբ կարողանաս փորձել տալ մարդկությանն այդ նոր քայլը: Այս կուրտիկը ընձեռնվեց ինձ, ես էլ վերցրի և այնտեղ էլ թողի իմ հին, սև վերնազգեստը, որն ինձ նման Հերմետիկոսի Համար բնավ էլ Հերմետիկոսին փակված չէր: Եվ ահա ես հուպիտի հագուստով եմ, ինչպես սուրբ Գենեստիոսը: Ի՞նչ արած, խավարում է սա, երկար չի քաշի: Ապուլլոնն էլ նախիր էր պահում Ադմետոս արքայի մոտ:

— Հիանալի արհեստի եք անցել,— նկատեց սարկավագապետը:

— Համաձայն եմ, հարգելի՛ ուսուցիչ, որ շատ ավելի լավ է փրիստփայել և բանաստեղծել, կրակ բորբոքել հնոցում կամ ստանալ

երկնքից, քան թե կատուներ ման ածել վահանի վրա: Այնպես որ, երբ դուք խոսեցիք ինձ հետ, ես նույնքան հիմար զգացի ինձ, որքան էլը խորովածի շամփուրի առաջ: Բայց ի՞նչ արած, տե՛ր իմ, չէ՞ որ պետք է սնվել ամեն օր, իսկ ալեքսանդրյան՝ տասներկուտոնյա ամենադեղեցիկ բանաստեղծությունները ատամի տակ մի կոոր Բրիի պանիր էլ չարժեն: Արդ, ինչպես գիտեք, ես գրել եմ, ի պատիվ տիկին Մարգարիտ Ֆլանդրացու, այն նշանավոր Հարսներգությունը, որին դուք ծանոթ եք, սակայն քաղաքը չի ուզում վճարել ինձ դրա համար՝ պատճառաբանելով, թե ընտիր չէ, կարծես թե չորս էքյուով հնարավոր է սոֆոկլեսյան ողբերգություն տալ: Եվ ահա քաղցից պիտի մեռնեի: Բարբախտաբար, նկատեցի, որ բավական ուժեղ եմ ծնոտի կողմից, ուստի և ասացի նրան՝ այդ ծնոտին.— Ուժի և Հավասարակշռության խաղեր խաղա՛, ինքդ քեզ կերակրի՛ր: *Ale te ipsem*¹⁶³: Բագմաթիվ սինլքոր մարդիկ, որ իմ լավ բարեկամներն են դարձել, քսան տեսակ Հերկուլյան խաղ են սովորեցրել ինձ, և այժմ ամեն երեկո ես իմ ատամներին տալիս եմ այն հացը, որ վաստակել են նրանք ցերեկը՝ իմ ճակատի քրտինքով: *Վերջիվերջո, concedo*¹⁶⁴, համամիտ եմ, որ դա իմ մտավոր ընդունակությունների տխուր գործադրությունն է, որ մարդն ստեղծված չէ ամբողջ կյանքը դափ գարնելով և աթոռներ կրծելով անցկացնելու համար: Բայց, պատվելի՛ ուսուցիչ, բավական չէ կյանք վարել, պետք է նաև վաստակել կյանքի ապրուստը:

Տեր Կլոդը լսում էր լուռ: Հանկարծ նրա խոր ընկած աչքերն այնպիսի զգաստ ու խուզարկու արտահայտություն ստացան, որ Գրենգուարն զղաց, թե այդ հայացքը, այսպես ասած, պեղեց իրեն մինչև հոգու խորքը:

— Շատ լավ, տյա՛ր Գրենգուար, բայց ինչպե՞ս է եղել, որ հիմա դուք ընկերացած եք այդ գնչու պարուհուն:

— Հավատս վկա,— պատասխանեց Գրենգուարը,— այն է եղել, որ նա իմ կինն է, ես էլ նրա ամուսինը:

163. Կերակրի ինքդ քեզ (լատ.):

164. Զիջում եմ, համաձայն եմ (լատ.):

Քահանայի խավար հայացքը բոցավառվեց:

— Եվ այդպիսի բա՞ն ես արել դու, թշվառակա՛ն,— գոռաց նա՝ կատաղությամբ բռնելով Գրենգուլարի բազուկը:— Որքա՞ն ես լքված Աստծուց, որ համարձակվել ես ձեռք դիպցնել այդ աղջկան:

— Երգվում եմ արքայության իմ բաժնով, սո՛ւրբ հայր,— պատասխանեց Գրենգուլարը ոտից-գլուխ դողալով,— որ ես նրան ձեռք չեմ տվել, եթե դա է անհանգստացնում ձեզ:

— Էլ ի՞նչ ես ասում, թե մարդ ու կին ենք,— ասաց քահանան:

Գրենգուլարն շտապեց ըստ հնարավորին համառոտակի պատմել այն ամենը, ինչ ընթերցողն արդեն գիտե՛ նրա: զլխին եկած փորձանքը Հրաչքների բակում և ամուսնությունը ջարդած փարչի միջոցով: Պարզվեց նաև, որ այդ ամուսնությունը դեռ ոչ մի հետևանք չի ունեցել, և որ ամեն երեկո գնչուհին ճարպկությամբ զրկում է նրան հարսանեկան գիշերից, ինչպես առաջին օրն էր արել:

— Շատ անդուր բան է,— ասաց նա վերջացնելով իր խոսքը.— բայց դրա պատճառն այն է, որ ես զժբախտաբար ամուսնացել եմ կույսի հետ:

— Ի՞նչ եք ուզում ասել,— հարցրեց սարկավազապետը, որ այս պատմությունը լսելով աստիճանաբար մեղմացել էր:

— Բավական դժվար է բացատրել,— պատասխանեց բանաստեղծը:— Նախապաշարմունք է դա: Իմ կինը, ինչպես ասաց ինձ մի ծեր սինլքոր, որին անվանում են մեզ մոտ Եգիպտոսի դուքս, գտնված կամ կորած երեխա է, որ վերջին հաշվով՝ նույն բանն է: Նա վզից կախած ունի մի թալիսման, որը, ինչպես հավատացնում են, մի օր նրան կհանդիպեցնի իր ծնողներին, բայց այդ թալիսմանը կկորցնի իր զորությունը, եթե աղջիկը կորցնի էր անարատությունը: Դրանից հետևում է, որ մենք երկուսս էլ առաքինի կյանք ենք վարում:

— Ուրեմն, տյա՛ր Պիեր,— շարունակեց Կլոդը, որի ճակատը հետզհետե ավելի էր պայծառանում,— դուք կարծո՞ւմ եք, որ այդ էակին ոչ մի տղամարդ չի մոտեցել:

— Ձեր կարծիքով, տե՛ր Կլոդ, ի՞նչ պետք է անի տղամարդը նախապաշարմունքի դեպքում: Նա այդ մտքրել է իր ուղեղը: Կարծում

եմ, որ ամենայն հավանականությամբ հազվագյուտ բան է միանձնուհու այդ ողջախոհությունը, որը կատաղաբար պաշտպանում է իրեն այնքան հեշտությամբ ընտելացող գնչու աղջիկների մեջ: Սակայն իմ կիներ պաշտպանվելու համար ունի երեք բան՝ եզրիպտոսի դուքսը, որ նրան առել է իր հովանավորութեան տակ, թերևս հույս ունենալով ծախել որևէ նզովյալ արբայի. նրանց ողջ ցեղը, որ արտակարգ կերպով հարգում է նրան, ինչպես ինչ-որ աստվածամոր. և մի պատրիկ դաշույն, որ անվհեբ աղջիկը միշտ կրում է իր վրա՝ չգիտես որ անկյունում, հակառակ պրենյի հրամանների, և որն անմիջապես ընկնում է նրա ձեռքը, հենց որ սեղմում ես մեջքը: Մի խոսքով՝ կծան բոռ է:

Սարկավագապետը շարունակեց հարցումներ տեղալ Գրենգուարի վրա: Գրենգուարի կարծիքով՝ էսմերալդան անվնաս ու հրապուրիչ էակ էր, սիրուն, թեև մի շրթնակծկում ունի, որ միայն նրան է հատուկ, միամիտ ու տաքարյուն աղջիկ է, ամեն ինչից անտեղյակ և ամեն ինչով խանդավառվող, մինչև հիմա էլ չի իմանում, թե ինչով է կիներ տարբերվում տղամարդուց, անգամ երևակայությամբ. այդպես է ահա նա: Խելքը թուցնում է մանավանդ պարելու համար, աղմուկի ու բաց օդի համար. մի տեսակ էգ մեղու է, որ ոտքերի վրա անտեսանելի թևեր ունի և ապրում է հողմապտույտի մեջ: Այդ խառնվածքը ձեռք է բերել մշտապես վարած թափառական կյանքից: Գրենգուարն ի վերջո կարողացել էր իմանալ, որ խիստ փոքր հասակում էսմերալդան չափչփել էր Իսպանիան ու Կատալոնիան՝ մինչև Սիցիլիա. նույնիսկ կարծում էր, որ բոչաների քարավանը, որի մեջ նա ելել էր, տարել էր նրան Ալջերիայի թագավորութունը՝ Աքաիայում գտնվող մի երկիր, իսկ այդ Աքաիան մի կողմից սահմանակից է փոքր Ալբանիային և Հունաստանին, իսկ մյուս կողմից՝ Սիցիլիայի ծովին, որ Կոստանդնուպոլսի ճանապարհն է: Գնչուները, ասում էր Գրենգուարը, վասալ էին Ալջերիայի թագավորին, որպես սպիտակամորթ մավրերի ազգի պարագլխի: Հավաստին այն էր, որ էսմերալդան Ֆրանսիա էր

եկել շատ փոքր հասակում՝ Հունգարիայի վրայով: Մանկահասակ աղջիկն այդ բոլոր երկրներից բերել էր արտառոց բարբառների պատառիկներ, օտարերկրյա հրդեր ու գաղսփարներ, որոնք նրա լեզուն դարձնում էին նույնքան խայտարղետ մի բան, որքան նրա կիսափարիզյան, կիսաաֆրիկյան հագուստն էր: Իսկ այն թաղամասերի բնակիչները, ուր հաճախ էր լինում նա, սիրում էին նրան զվարթ բնավորության, սիրալիրության, աշխույժ շարժուձևերի, նրա երգերի ու պարերի համար: Նա կարծում էր, թե ամբողջ քաղաքում իրեն ատում են միայն երկու մարդ, որոնց մասին հաճախ էր նա սարսափով խոսում: Ռոյանի աշտարակի քրճենավորը՝ մի չար ապաշխարուհի, որը չգիտես թե ինչու. ոխ ունեւր գնչուհիների դեմ և անիծում էր խեղճ պարուհուն ամեն անգամ, երբ նա անցնում էր նրա լուսանցույցի առջևից, և մի քահանա, որ նրան հանդիպելիս անպայման նետում էր խիստ հայացքներ ու խոսքեր, որոնցից աղջիկը վախենում էր:

Այս վերջին հանգամանքը խիստ անհանգստացրեց սարկավազապետին, թեև Գրինգուարն այնքան էլ ուշադրութուն չդարձրեց դրան, որովհետև երկու ամիսը բավական էր, որ անհոգ բանաստեղծը մոռանար այն երեկոյի արտակարգ մանրամասնությունները, երբ նա հանդիպել էր գնչուհուն և այդ միջոցին ներկա էր եղել նաև սարկավազապետը: Այնուամենայնիվ, փոքրիկ պարուհին ոչ մի բանից չէր վախենում, բախտագուշակութուն չէր անում, իսկ դա գերծ էր դարձնում նրան որպես կախարդ մեղադրվելուց, մինչդեռ դրա համար այնքան հաճախ դատեր էին հարուցում գնչուհիների դեմ: Եվ բացի դրանից, Գրենգուարը նրա համար եթե ոչ ամուսին, ապա եղբայր էր: Վերջիվերջո, փիլիսոփան խիստ համբրատարութամբ էր տանում այդ պլատոնական ամուսնությունը: Այսպես թե այնպես, դա օթեան ու հաց էր տալիս նրան: Ամեն առավոտ նա դուրս էր գալիս մուրացկանների ապաստարանից, մեծ մասամբ՝ գնչուհու հետ, օգնում էր նրան քառուղիներում հավաքելու արծաթե ու պղնձե փողերի հունձը. ամեն երեկո նրա հետ վերադառնում էր նույն

կտուրի տակ, թողնում, որ նա մտնի իր խցիկը և դուռը նիգով փակի, և ինքն էլ քնում էր արդար մարդու քնով: Ամեն ինչ լավ կշռադատելուց հետո, ասում էր Գրենգուլարը, խիստ հաճելի կյանք է դա և երազելու հնարավորություն ընձեռող: Եվ վերջապես, իր հոգու և խղճի առաջ խոստովանելով՝ փլիխոփան այնքան էլ վստահ չէր, որ խելացնոր կերպով սիրում է գնչուհուն: Ինքը գրեթե հավասարապես սիրում է և նրա այծին: Շատ անուշիկ կենդանի է դա՝ քաղցրաբարո, խելացի, սրամիտ, գիտնական մի այծ: Միջին դարերում շատ սովորական էին այդպիսի խելացի կենդանիները, որոնց վրա մարդիկ խիստ զմայլում էին և որոնք հաճախ իրենց դաստիարակողներին տանում էին դեպի խարույկ՝ վառվելու: Այնինչ ոսկեզօծ տոտիկներով այծի կախարդությունները ամենաանմեղ չարաճճիություններն էին: Գրենգուլարը բացատրից դրանք սարկավագապետին, որը կարծես թե խիստ հետաքրքրվում էր այդ մանրամասնություններով: Մեծ մասամբ բավական էր դափը այս կամ այն դիրքով ցույց տալ այծին՝ ստանալու համար քո ցանկացած միմոսությունը: Այդ ամենը սովորեցրել էր նրան գնչուհին, որն այդ նուրբ գործում այնպիսի արտասովոր տաղանդ ուներ, որ կարողացել էր երկու ամսվա մեջ սովորեցնել իր այծին շարժական տառերով գրելու **Ֆերուս** բառը:

– Ֆերո՛ւս, – գոչեց քահանան, – ինչո՞ւ **Ֆերուս**:

– Չեմ իմանում, – պատասխանեց Գրենգուլարը: – Գուցե և դա այնպիսի բառ է, որ նրա կարծիքով որևէ կախարդական ու գաղտնի զորություն ունի: Հաճախ է նա կրկնում դա, երբ կարծում է, թե մենակ է:

– Վստա՞հ եք դուք, – շարունակեց Կլոդը՝ խորաթափանց հայացք նետելով Գրենգուլարին, – որ դա բառ է միայն և անուն չէ:

– Ո՞ւմ անունը, – հարցրից բանաստեղծը:

– Ի՞նչ իմանամ, – պատասխանեց քահանան:

– Ահա թե ինչ եմ ես ենթադրում, տե՛ր իմ: Այդ գնչուները մի քիչ կրակապաշտ են և արևապաշտ: Դրանից էլ ահա **Ֆերուս**:

– Դա ինձ այնքան էլ պարզ չի թվում, որքան ձեզ, տյա՛ր Պիեր:

– Այնուամենայնիվ, դա ինձ չի հետաքրքրում: Որքան ուզում է, թող հոլովի իր Ֆերուսը: Հավասարի է այն, որ Ջալին ինձ սիրում է այնքան, որքան նրան:

– Ջալի՞ն ով է:

– Նրա այծն է:

Սարկավագապետը կղակր հենեց ձեռքին և մի ընկավ մտած-մունքի մեջ: Եվ հանկարծ ընդոստ դարձավ դեպի Գրեննդուարը:

– Եվ դու երգվում ես, որ ձեռք չե՞ս տվել նրան:

– Ո՛ւմ, – հարցրեց Գրեննդուարը, – այժի՞ն:

– Ոչ, այդ կնոջը:

– Իմ կնո՞ջը: Ես ձեզ երգվում եմ, որ ոչ:

– Եվ հաճա՞խ ես մենակ մնում նրա հետ:

– Ամեն երեկո՞ մեկ ժամ, ոչ պակաս:

Տեր Կլոդը հոնքերը խոտոեց:

– Օ՛հ, օ՛հ, *Solus cum sola non cogitabund orare Pater noster*¹⁶⁵.

– Հագիս վկա, ես կարող էի ասել և՛ *Pater*, և՛ *Ave Maria*, և՛ *Credo in Deum patrem omnipotentem*¹⁶⁶, և նա ավելի ուշադրութուն չէր դարձնի ինձ, քան հավր եկեղեցուն:

– Երգվի՛ր մորդ որսվայնով, – կրկնեց սարկավագապետը սաստկությամբ, – որ դու մատիդ ծայրն էլ չես դիսցրել այդ կնոջը:

– Կարող եմ երգվել նաև հորս գլխով, որովհետև այդ երկուսն ավելի հարաբերութուն ունեն իրար հետ: Բայց, մեծահարգ ուսուցիչ, թույլ տվե՛ք, որ մի հարց էլ ես տամ ձեզ:

– Տվե՛ք, պարո՞ն:

– Ի՞նչն է ձեզ այդպես անհանգստացնում:

Սարկավագապետի դժգույն դեմքը կարմրեց դեռատի աղջկա այտերի նման: Մի պահ նա մնաց լուռ, ապա ակներև չփոթությամբ պատասխանեց.

165. Մարգ ու կին մենակ լինելիս չեն մտածի «Հայր մեր» ասել (լատ.):

166. «Հայր մեր», «Ուղջույն քեզ, Մարիամ», «Հավատամ ի հայր Աստուած ամենակարող». կաթոլիկական աղոթքների սկզբի բառերը (լատ.):

– Լսեցեք, պարո՛ն Պիեր Գրենգուար: Դուք, որքան ես գիտեմ, ձեր հոգին չեք կորցրել: Ես հետաքրքրվում եմ ձեզնով և ձեր լավն եմ ցանկանում: Ուստի այդ դիվսիդներդ գնչուհու հետ նվազագույն հարաբերություն ունենալը ձեզ կդարձնի սատանային դերի: Ինչպես գիտեք՝ միշտ էլ մարմինն է հոգու կորստյան պատճառը: Վա՛յ ձեզ, եթե դիպչել եք այդ կնոջը: Ուրիշ ոչինչ:

– Մեկ անգամ փորձեցի,– ասաց Գրենգուարը ականջի տակը քորելով.– առաջին օրը, բայց խայթվեցի:

– Այդպիսի լրբությո՞ւն եք ունեցել, պարո՛ն Պիեր:

– Մի ուրիշ անգամ էլ,– շարունակեց բանաստեղծը ժպտալով,– անկողին մտնելուց առաջ նայեցի փականքի ծակից և փառավորապես տեսա մի շապկով ամենահրապուրիչ կնոջը, որի մերկ ոտքերի տակ երբևէ ճռճուացել են մահճակալի քաշանները:

– Կորի՛ր սատանայի ծոցը,– դռուաց քահանան գարհուրելի հայացքով և հրելով զմայլված Գրենգուարի ուսերը՝ մեծ-մեծ քայլերով անհետացավ մայր եկեղեցու սմինամուկ կամարների տակ:

III

ՋԱՆԳԵՐԸ

Անարգանքի սյան վրա պատժվելու օրվանից սկսած՝ Աստվածամոր տաճարի մոտակա տների բնակիչները նկատել էին, որ Քվազիմոդոյի զանգահարելու եռանդը խիստ նվազել է: Առաջ ամեն առթիվ զանգերը զողանջում էին. լսվում էին երկարատև ցայգազանգեր, որ տևում էին մինչև եկեսցեն, դիտաշտարակի զողանջները մեծ պատարագի համար, փոքր զանգակների վրա ոստոստող հարուստ գամմաներ ամուսնություն համար, մկրտություն համար, որոնք օգուտ իրար էին խառնվում ամեն տեսակ ախորժալուր հնչյունների ժանյակի

նման: Ամբողջովին թրթռուն ու հնչուն հնադարյան եկեղեցին զանգերի մշտական ուրախության մեջ էր: Այնտեղ անդադար զգացվում էր այդ բոլոր պղնձի բերանների երգած աղմուկի ու քմահաճության ոգու ներկայությունը:

Այժմ կարծես անհետացել էր այդ ոգին, մայր եկեղեցին թվում էր մռայլ և հաճությամբ լռություն էր պահպանում, տոների և թաղումների ժամանակ լսվում էին պարզ զանգահարումներ՝ չոր ու անպահույճ, այն, ինչ պահանջում էր արարողությունը, և ուրիշ ոչինչ. եկեղեցու բարձրացրած կրկնակի աղմուկից – ներսից երգեհոնը, դրսից՝ զանգերը – մնացել էր միայն երգեհոնը: Կարծես թե այլևս երաժիշտ չէր մնացել զանգակատներում: Բայց և այնպես, Քվազիմոդոն միշտ այդտեղ էր: Ի՞նչ էր ուրեմն կատարվել նրա հոգում, արդյո՞ք դեռ նրա սրտի խորքում նստել էին պատժարանի ամոթն ու հուսահատությունը, խոշտանդոդի մտրակի հարվածներն անընդհատ արձագանքում էին նրա հոգու մեջ, և իր հետ այդպես վատ վարվելուց առաջացած տխրությունը հանդերձ՝ նրա մեջ ամեն ինչ, նույնիսկ զանգակների բուռն սերը: Կամ գուցե «Մարիամը» ախոյա՞ն ուներ Աստվածամոր տաճարի ժամհարի սրտում և խոշոր զանգն ու նրա տասնչորս քույրերը մոռացություն էին մատնված ի սեր ավելի սիրելի և ավելի գեղեցիկ մի բանի:

Այնպես պատահեց, որ փրկչական այդ 1482 թվականին Ավետման տոնն ընկավ մարտի 25-ին, երեքշաբթի օրը: Այդ օրը օդն այնքան մաքուր էր ու թեթև, որ Քվազիմոդոն դարձյալ զգաց իր զանգակների սերը: Ուստի և նա բարձրացավ հյուսիսային աշտարակը, երբ ներքևում տիրացուն լայն բաց էր անում եկեղեցու դռները, որոնք այդ ժամանակ կաշեպատ ամուր փայտե հսկայական փեղկեր էին՝ երիզված երկաթե ոսկեզօծ գամերով և զարդարված «վերին աստիճանի արվեստագիտորեն դրվագված» քանդակներով:

Զանգահարման վերին վանդակին հասնելուց հետո, Քվազիմոդոն գլուխը տխրագին օրորելով՝ որոշ ժամանակ նայեց վեց զանգերին,

կարծես մղկտալով, որ ինչ-որ օտարոտի, խորթ ընդ իր սրտում կանգնել է այդ զանգերի ու իր միջև: Բայց երբ զրանց շարժման մեջ գրեց, երբ զգաց, որ զանգերի այդ ողկույզը օրորվում է իր ձեռքի տակ, երբ տեսավ, քանի որ չէր լսում, թե ինչպես բարախուն օկտավը բարձրանում ու իջնում է այդ հնչուն ելարանի վրա ճյուղից ճյուղ ոստոստող թռչունի նման, երբ երաժշտության դեւը՝ այդ չարքը, որ թափահարում է ստրետաների¹⁶⁷, տրիլլոնների¹⁶⁸ և արպեջիոնների¹⁶⁹ շողշողուն փունջը, տիրապետեց խեղճ խուլին, այդ ժամանակ նա նորից երջանկացավ, մոռացավ ամեն ինչ, և նրա սիրտը, որ սկսում էր պարարել, զվարթացրեց նաև դեմքը:

Նա գնում-գալիս էր, ծափ տալիս, մի պարանից վազում մյուսին, ձայնով ու ծեստով ոգևորում վեց երգիչներին՝ նվագախմբի այն պետի նման, որ հրահրում է հմուտ երաժիշաներին:

— Դե՛, Գարրիե՛լ, քեզ տեսնեմ, — ասում էր նա. — գնա՛, քո ամբողջ աղմուկը թափիր հրապարակը, տո՛ն է այսօր: Թի՛րո՛, ծուլուծյուն մի՛ անի, ետ ես մնում, հա՛. դե շուտ, հո չե՞ս ժանգոտվել, անպիտան: Լա՛վ է, լավ. շո՛ւտ, այնպես արա, որ լեզվակդ չերևա: Բոլորին էլ ինձ պես խլացրու: Հենց դա է որ կա, Թի՛րո, կեցցե՛ս: — Հապա՛, Գիյո՛մ, Գիյո՛մ, ամենախոշորը դու ես, իսկ Պասքիեն՝ ամենափոքրը, բայց Պասքիեն ամենից լավ է ճոճվում: Գրագ պանք, որ լսել կարողացողները նրան ավելի լավ են լսում, քան թե քեզ: Լա՛վ է, իմ սիրելի՛ Գարրիել, լա՛վ է, բայց ավելի ուժգին: Հը՞, այդ ի՞նչ բանի եք այդտեղ՝ վերևում, ճնճողկնե՛ր, երկուսդ էլ. չեմ տեսնում, որ նվագագույն ձայն հանեք: Հապա այն պլնձե կտուցնե՞րը, կարծես հորանջում են, երբ երգել է պետք: Դե՛, դե՛, գործի անցեք, Ավետուսն է

167. Ֆուգայի (տարբեր ձայներով հաջորդաբար կրկնելու) վերջաբանը (իտալ. երաժշտ.):

168. Մելոդիական պաճուճանք՝ երկու սահմանակից հնչյունների արագ հաջորդականությունը (իտալ. երաժշտ.):

169. Ակորդ, երբ հնչյուններն արձակվում են հաջորդաբար, ոչ միանգամից (իտալ. երաժշտ.):

այսօր: Պայծառ արև է, զանգանվազն էլ պայծառ պետք է հնչի: Խեղճ Գիյոմ, սեսնում եմ շնչասպառ ես լինում, սիրելի՛ ցմփոր:

Նա ամբողջովին կլանված էր խթանելով իր զանգերը, որոնք, վեցն էլ, չուզելով միմյանցից ետ մնալ, ուստոստում և թափ էին տալիս իրենց փայլուն դավալները իսպանական ջորիների աղմկարար լծվածքի նման, որին ստեպ-ստեպ հրահրում են ջորեպանի սաստումները:

Հանկարծ հայացքը նեսելով զանգակատան ուղղածից պատը որոշ լարձրությունից թեփուկանման ծածկող լայն թերթաքարերի միջից՝ նա հրապարակում տեսավ տարօրինակ ձևով պճնված մի գեռասի աղջիկ՝ գետնի վրա գորգ փռելիս, որի վրա եկավ ու կանգնեց մի փոքրիկ այծ, և հանդիսատեսների խումբն էլ խռնվեց նրանց շուրջը: Այս տեսարանն իսկույն ևևթ փոխեց Քվազիմոդոյի մտքերի ընթացքը և սառեցրեց նրա երաժշտական իրանդավառությունը, ինչպես քամու հոսանքն է սառեցնում հալած խեժը: Նա կանգ առավ, մեջքը շրջեց դեպի զանգերը և պպեց թերթաքարն ծածկի ետևը՝ պարուհու վրա սեևելով այն երազուն, քնքուշ ու գորովագին հայացքը, որը մի անգամ զարմացրել էր սարկավագապետին: Այդ միջոցին մոռացության մատնված բոլոր զանգերն էլ միանգամից լռեցին՝ ի մեծ հիասթափություն զանգահարության սիրահարների, որոնք Լումայափոինների կամուրջի վրայից սրտանց ունկնդրում էին և ապշած թողին-հեռացան այն շան նման, որին ոսկոր են ցույց տալիս, բայց քար են հրամցնում:

IV

ΑΝΆΓΚΗ

Այնպես պատահեց, որ այդ նույն ամսի մի գեղեցիկ առավոտ, կարծեմ՝ մարտի 29-ի շաբաթ օրը, սուրբ Եվստասիոսի տոնին, մեր պատանի բարեկամ Ժեհան Ֆրոլո դյու Մուլենը հագնվելիս նկատեց,

որ մետաղի ոչ մի զնգոց չի արձակում իր անզրտավարտիքը, որտեղ պահում էր իր քսակը:

– Խեղճ քսակ, – սասց նա՝ հանելով գրպանից, – այս ի՞նչ է, ոչ իսկ նվագագուշն, ամենափոքր փարիզյան դրամ: Ինչպիսի՞ դաժանությամբ փորդ դատարկել են զառերը, գարեջրի գավերը և Վեներան: Եվ ահա այժմ դատարկ ես դու, կնճռոտ ու թուլացած, նման ես Ջագու պառավի կրճբին: Ձեզ եմ հարցնում, տյա՛ր Կիկերոն և տյա՛ր Սենեկա, որոնց երկերի կարծրացած թերթիկներ ունեցող օրինակները ահա ցրված են հատակին, ի՞նչ օգուտ կա ինձ այն բանից, որ ես փողերանոցի որևէ կառավարչից կամ Լուսնայափոխների կամուրջի ամեն մի հրեայից ավելի լավ գիտեմ, թե ամեն մի թագակիր ոսկեդրամ կչուում է երեսունհինգ ունկի՝ յուրաքանչյուրը քսանհինգ սուռ ութ դրնիս արժողությամբ, թե կիսալուսնավոր ոսկեդրամը՝ երեսունվեց ունկի՝ յուրաքանչյուրը տուրենյան քսանվեց և վեց դրնիս արժողությամբ, եթե ես մի թշվառական սև դրոշ էլ չունեմ վեց ու վեցի մեջ բախտս փորձելու համար: Օ՛, կոնսո՛ւլ Կիկերոն, սա այնպիսի փորձանք չէ, որից կարելի է դուրս պրծնել գանազան շրջասություններով, quemadmodum-ներով և verum enim vero-ներով¹⁷⁰:

Նա տխուր-տրտում սկսեց հագնվել: Կոշիկի թելերը կապելիս մտքով մի քան անցավ, որն սկզբում իրենից վանեց, բայց հետո վերադարձավ դրան և ժիլետը հակառակ կողմից հագավ, դա ներքին բուռն պայքարի ակներև նշան էր: Ի վերջո, գլխարկն ուժգնորեն խփեց գետին ու գոչեց.

– Ավիլի վատ: Ինչ ուզում է լինի: Հիմա կգնամ եղբորս մոտ. կրնդունեմ մի քարոզ, բայց և կստանամ մի էքյուլ:

Եվ շտապ հագնելով մուշտակապատ վերնազգեստը՝ վերցրեց գլխարկը և հուսահատ դուրս եկավ:

Լա Հարպ փողոցով նա իջավ դեպի Միջնաքաղաք: Հյուշետ փողոցի առջևից անցնելիս՝ նրա հոտառության զգայարանը խիստ

170. «Այսպիսով» և «այնուամենայնիվ» (լատ.):

բորբոքվեց այն հիանալի խորովածներից, որ անդադար պտտվում են այնտեղ շամփուրների վրա: Նա սիրալիր մի հայացք նետեց այն կրկ-լուպյան հսկայական խորտկարանին, որ մի օր հետևյալ պաթետիկ բացականչությունը կորղեց Ֆրանցիսկյան վանական Կալաթաժիրոնից՝ *Veramente, queste rotisserie sono cosa stupenda!*¹⁷¹ Սակայն ժեհանը նախաճաշելու փող չուներ, ուստի և խոր հոգոց հանելով՝ առաջացավ Միջնաբաղաբի մուտքը պահպանող զանգվածային աշտարակների այդ հսկայական կրկնաերեքնուկի՝ Փոքր Շատլեի դարպասի կողմը:

Նա նույնիսկ ժամանակ չուներեցավ անցնելիս մի քար շարտելու, ինչպես ընդունված սովորություն էր դա, Պերինե Լըկլերկի անարգ արձանին, որ Կառլոս VI-ի օրոք Փարիզը հանձնել էր անգլիացիներին, մի ոճրագործություն, որ երեք դար շարունակ քավեց, անարգանքի մշտնջենական սյան նման Լա Հարպ և Բյուսի փողոցների անկյունում ցցված, քարերից դեմքը փշրված և ցեխով կեղտոտված նրա քանդակապատկերը:

Փոքր կամուրջը կտրելուց, Սեն-ժընևիևի նոր փողոցն անցնելուց հետո, ժեհան դե Մոլենդինոն կանգնեց Աստվածամոր տաճարի առաջ: Այդտեղ անվճռականությունը նորից համակեց նրան, և մի քանի րոպե նա ման եկավ Գորչ պարոնի արձանի շուրջ՝ անձկությամբ կրկնելով.

– Քարոզն ապահով է, էքյուն՝ կասկածելի:

Նա կանգնեցրեց եկեղեցուց դուրս եկող մի տիրացուի:

– Որտե՞ղ է ժողայի պարոն սարկավագապետը, – հարցրեց նա:

– Կարծում եմ, որ աշտարակի իր թաքստոցումն է և ձեզ խորհուրդ եմ տալիս այնտեղ չխանգարել նրան, եթե իհարկե այնպիսի անձնավորության կողմից չեք եկել, ինչպես պապը կամ տեր արքան: ժեհանը ձեռքերն իրար բախեց.

– Գրո՛ղը տանի, սքանչելի առիթ է դա՝ կախարդանքների երևելի օթևանը տեսնելու համար:

171. Արդարև, զմայլելի է այս խորտկարանը (իտալ. և ֆրանս.):

Այս խորհրդածուծությամբ վճռական դարձած՝ նա Հաստատամտորեն ներս մտավ մութ դռնից և սկսեց բարձրանալ Սեն-ժիլի պտուտակաձև սանդուղքով, որը տանում է դեպի աշտարակի վերին հարկերը:

«Անպայման կտեսնեմ, — մտածում էր նա բարձրանալիս, — երգվում եմ սուրբ կույտով, շատ հետաքրքիր պետք է լինի այդ խցիկը, որն իմ պատվելի եղբայրը թաքցնում է որպես իր *rudendum*¹⁷²։ Ասում են, որ դժոխային օջախներ է վառում ու թեժ կրակի վրա փրկաստիճակային քար է եփում: Գրո՛ղը տանի, փրկաստիճակային քարն ինձ խիճից պվելի չի հետաքրքրում, և ես կպերադասեի նրա օջախի վրա զատկական ձվով ու խոզաճարպով պատրաստված ձվածեղ գտնել, քան թե աշխարհի ամենախոշոր փրկաստիճակային քարը»:

Փոքր սյուների դասիկոնը հասնելուց հետո մի րոպե շուռնչ քաշեց և հայհոյեց անվախճան սանդուղքին՝ չգիտեմ քանի միլիոն սայլաբեռ սատանա թափելով նրա գլխին, ապա շարունակեց իր վերելքը հյուսիսային աշտարակի նեղ դռնով, որը հիմա արգելված է այցելողներին: Զանգակների վանդակն անցնելուց մի քանի րոպե հետո հանդիպեց կողմնային խորշի մեջ շինված մի փոքրիկ հարթակի, իսկ դրա կամարի տակ սրանկյուն վերնամասով մի ցածրիկ դռան: Պտուտակաձև սանդուղքը շրջապատող միջնորմի մեջ, դեմուդեմը բացված հրածերպից եկող լույսը թույլ տվեց նրան զննելու դռան հսկայական կողպեքը և երկաթե ամրակուռ գոտին: Այն անձինք, որոնք հիմա կհետաքրքրվեն տեսնել այդ դուռը, կարող են ճանաչել հետևյալ մակագրութունից, որ փորագրված է սպիտակ տառերով սև պատի մեջ. «Ես պաշտում եմ Կորալին. 1823. ստորագրված՝ Ուժեն»: Ստորագրված բառը փորագրված է տեքստում:

— ՕՖ, — գոչեց ճեմարանականը, — անկասկած այստեղ է:

Բանալին կողպեքի մեջն էր, դուռն էլ հենց իր դիմաց: Նա կամացուկ հրեց դուռը և կիսով չափ բանալուց հետո՝ գլուխը ներս մտցրեց:

172. Սեռական օրգաններ (լատ.):

Ընթերցողն ամենայն հավանականությամբ թերթած կլինի Ռեմբանտի՝ նկարչության այդ Շեքսպիրի գործերի արտատպությունները: Բայցմաթիվ հրաշալի փորագրությունների մեջ կա հատկապես ի օֆորտ, որ ներկայացնում է, ինչպես ենթադրում են, դոկտոր Նաուստին, և որն անկարելի է առանց շլանալու դիտել: Մի մռայլ օջիկ է դա. կենտրոնում դրված է զոփելի առարկաներով ծածկված ի սեղան՝ մեռելների գանգեր, գլուխներ, թորելու անոթներ, կողմացույցներ, հիերոգլիֆներով պատած մագաղաթներ: Դոկտորը ստած է այդ սեպանի առաջ՝ հագած իր լայն վերնագգեստը և մուշտակե գլխարկը քաշած մինչև հոնքերը: Մինչև գոսկատեղն է նա բևեռում: Կիսով չափ բարձրացած է իր հսկայական բազկաթոռից, եղմած բուռնքները հենել է սեղանին և հետաքրքրությամբ ու արասփով դիտում է մոգական տառերից կազմված մի մեծ, լուսասոր շրջանակ, որ փայլում է խորքի պատի վրա, ինչպես արեգակնաին սպեկտոր խալար սենյակում: Այդ գաղտնադիտական արեգակը արծես թե դողդաղում է և ադրտ խցիկը լցնում իր խորհրդավոր շողողումով: Սարսափելի է դա, բայց և գեղեցիկ:

Ճառաստի խցիկին նմանող մի բան բացվեց ժեհանի առաջ, երբ ա իրզվախեց գլուխը մտցնել կիսաբաց դռնից ներս: Դա նույնպես՝ ուայլ ու հագիվ լուսավորված մի խորշ էր: Այդտեղ էլ կար մի խոր բազկաթոռ և մի մեծ սեղան, կողմնացույցներ, թորանոթներ, տաստապից կախված անասունների կմախքներ, հատակին դրված ի գլուխ, ձիու գանգեր՝ խառնիխուռն դարսված ապակե անոթների հետ, որոնց մեջ թլթլում էին ոսկու թերթեր, նկարներով ու տաերով նախշված ընտիր մագաղաթների վրա դրված մարդկային անդեր, լայն բացված մեծածավալ ձեռագրերի կույտեր՝ առանց հոգանելու մագաղաթի կտորվող անկյուններին: Մի խոսքով՝ գիտուլյան բոլոր կեղտերը, իսկ այդ ամբողջ խառնակույտի վրա, ամենուեք փոշի ու սարդոստայն: Բայց չկային ո՛չ լուսավոր տառերի շրջաակներ, ո՛չ հափշտակված դիտնական՝ շողշողուն տեսիլքը դիտելիս, նչպես արծիվը արեգակին նայելիս:

Այնուամենայնիվ, իսցիկը թափուր չէր: Սեղանի վրա կոացել էր բազկաթոռին նստած մի մարդ՝ մեջքը դեպի դուռը, այնպես որ՝ ժեհանը կարող էր տեսնել միայն նրա ուսերն ու գլխի ետևի մասը. սակայն ժեհանի համար զժվար չէր ճանաչել այդ ճաղատ գլուխը, որի վրա բնությունը հավերժական տոնգուրա¹⁷³ էր պատրաստել, կարծես այդ արտաքին նշանով ուզեցել էր ցույց տալ սարկավագապետի հոգևորական անդիմադրելի կոչումը:

Ժեհանն այսպիսով ճանաչեց իր եղբորը, բայց դուռն այնքան կամաց էր բացվել, որ ոչ մի բանից տեր կողը չիմացավ նրա ներկայությունը: Հետաքրքրասեր ճեմարանականն օգտփեց դրանից, որպեսզի մի քանի րոպե հանգիստ դիտի իսցիկը: Մի լայն հնոց, որ առաջին հայացքից չէր նկատել, գտնվում էր բազկաթոռի ձախ կողմում՝ լուսանցույցի տակ: Այդ բացվածքից ներս թափանցող լույսի շողքն անցնում էր մի կլոր սարդոստայնից, որ իր նրբակերտ վարդալարդն էր ճաշակով գծագրել լուսանցույցի սրակամար վերնամասում, իսկ վարդազարդի կենտրոնում անշարժ նստել էր դրա ճարտարպետ միջատը՝ որպես այդ ժաննկային անիվի սունու կունդ: Օջախի ծածկի վրա անկարգ խճողված էին ամեն տեսակ անոթներ, թրծած կավե սրվակներ: Եղջուրածև փորձանոթներ, ածխի երկար, նիզականման ձողեր: Ժեհանը հառաչելով նկատեց, որ դրանց մեջ տապկոց չկա:

«Ափսո՛ս, խոհանոցը նոր է հիմնադրվում», — մտածեց նա:

Օջախի մեջ կրակ չկար և նույնիսկ թվում էր, թե վաղուց է չի վառվել: Ապակե մի դիմակ, որ նկատեց ժեհանը ալքիմիայի անոթների մեջ և որ ամենայն հավանականությամբ՝ պաշտպանում էր սարկավագապետի դեմքը, երբ նա որևէ վտանգավոր նյութ էր մշակում, նետված էր մի անկյուն, փոշով ծածկված և կարծես մոռացության էր տրված: Դրա կողքին ընկած էր ոչ պակաս փոշեթաթախ մի

173. Կաթուղիկ հոգևորականներին ձեռնադրելիս ածիլում են գլխի գազաթի մի որոշ կլոր մասը, որտեղ այլևս մազ չի բուսնում, և դա կոչվում է տոնգուրա:

փուքս, որի վերին կափույրի վրա պղնձադրվագ տառերով գրված էր SPIRA, SPERA¹⁷⁴ մակագրութունը:

Ուրիշ շատ մակագրութուններ, ըստ ալքեմիկոսների սովորության, գրված էին պատերի վրա՝ մի քանիսը թանաքով, շատերն էլ՝ սրածայր մետաղով փորագրված: Նկատենք նաև, որ խառնիխուռն իրար էին հաջորդում գոթական տառեր, եբրայական տառեր, հուսական ու հռոմեական տառեր: Մուկագրութուններն արված էին պատահած տեղում՝ մեկը մյուսի վրա, ամենավերջինը ջնջում էր ամենահինը, և բոլորն էլ խճճվելով իրար, ինչպես թփի ճյուղերը կամ նիզակները ճակատամարտի ժամանակ: Արդարև, դրանք ներկայացնում էին ամեն տեսակ փրկիսոփայութունների, մարդկային բոլոր երազանքների ու բոլոր իմաստութունների բավական խառնափնթոր ընդհարումը: Այս ու այնտեղ կար այնպիսի մի մակագրութուն, որ փայլում էր մյուսների մեջ, ինչպես դրոշը նիզակների շրջապատում: Դրանք մեծ մասամբ լատիներեն կամ հունարեն հակիրճ նշանաբաններ էին, որ այնքան լավ էին ձևակերպում միջին դարերում. Unde indé¹⁷⁵. Homo homini monstrum¹⁷⁶. Astra, castra, nomen, numen¹⁷⁷. Μεγα βιδλον, μεγα χαχον¹⁷⁸. Sapere ande¹⁷⁹. Flat ubivult¹⁸⁰ և այլն, երբեմն էլ որևէ սկներև իմաստից զուրկ բառ ΑΝΑΥΧΟΦΥΙΟ¹⁸¹, որ թերևս դառն ակնարկութուն էր պարունակում վանական կենցաղավարության մասին, վերջապես երբեմն էլ՝ հոգևորական կարգապահության որևէ պարզ հորդոր՝ կանոնով հանձնարարված վեցոտնյա չափով՝ Coelestem dominum, terrestrem dicito domnum¹⁸²: Տեղ-տեղ կային նաև

174. Շնչի՛ր, հուսա՛ (լատ.):

175. Որտեղի՞ց. այնտեղի՞ց (լատ.):

176. Մարդը մարդուն գազան (լատ.):

177. Աստղ, ճամբար, անուն, Աստված (լատ.):

178. Մեծ գիրք, մեծ չարիք (հուն.):

179. Խիզախի՛ր իմանալ (լատ.):

180. Փչում է, ուր ուզում է (լատ.):

181. Ճակատագրից ոչնչացված, կերված (հուն.):

182. Երկնային տիրոջը, երկրային կործանումը հիշի՛ր (լատ.):

երրայական խրթնարանություններ, որոնցից ժեհանը, առանց այն էլ հունարենից թույլ, բան չէր հասկանում: Եվ այդ բոլորի մեջ պատահած տեղը լծված էին աստղեր, նկարված էին մարդկանց կամ կենդանիների կերպարանքներ և իրար հատող եռանկյուններ, որ պակաս չէր նպաստում խցիկի խզրզված պատը նմանեցնելու այն թերթին, որի վրա կապիկը ման է ածել թանաքի մեջ թաթախած գրիչը:

Այդ կացարանի ընդհանուր պատկերից երևում էր լքվածություն ու ավերածություն, իսկ անոթների անխնամ, վատ վիճակը հիմք էր տալիս ենթադրելու, որ խցիկի տերը բավական ժամանակ է արդեն, ինչ կտրվել է իր աշխատանքներից՝ այլ մտահոգությունների պատճառով:

Սակայն այդ կացարանի տերը կուացած արտառոց նկարներով զարդարված մի մեծածավալ ձեռագրի վրա՝ կարծես թե տանջվում էր ինչ-որ մտքից, որ անդադար գալիս ու խառնվում էր նրա խորհրդածություններին: Համենայն դեպս, այլույես եղրակացրեց ժեհանը, երբ լսեց, որ նա բարձրաձայն երազողի մտախոհ ընդմիջումներով բացականչեց.

— Այո, Մանուն ասում է այդ և այդպես էլ սովորեցնում է զրադաշտը. արեգակը ծնվում է կրակից, լուսինն արեգակից, կրակը մեծ ամբողջի հոգին է. նրա տարրական ատոմներն անընդհատ տարածվում ու հոսում են աշխարհի վրա անվախճան հոսանքներով: Երկնքի այն կետերում, որտեղ այդ հոսանքները հատում են միմյանց, արտադրում են լույս, երկրի այն կետերում, որտեղ իրար են հատում նրանք, արտադրում են ոսկի: Լույսն ու ոսկին նույն բաներն են: Կրակը ստանում է հաստատուն վիճակ: Նույն նյութի տեսանելի վիճակից շոշափելի վիճակին, հեղուկ վիճակից հաստատուն վիճակին անցնելու տարբերությունն է դա. ինչպես գոլորշին է դառնում սառույց, և ուրիշ ոչինչ: Դրանք բնավ էլ երազանք չեն, այլ բնության ընդհանուր օրենքը: Բայց ի՞նչ պետք է անել այդ ընդհանուր օրենքի գաղտնիքը գիտություն մեջ դուրս բերելու համար: Ի՛նչ, այս

ույսը, որ հեղեղի է իմ ձեռքը, ոսկի է, նույն այդ ատոմները, միայն
 թե ընդարձակված-անջատված՝ ըստ որոշ օրենքի. բանն էլ հենց այն
 ; որ դրանք խտանան ըստ մի այլ որոշ օրենքի: Բայց ինչպե՞ս
 ստացնել: Ոմանք երևակայել են թաղել արեգակի ճառագայթը:
 Կվերրոն՝ սը. այո, Ավերրոնսը: Ավերրոնսը մի ճառագայթ թաղել է
 Ղուրանի սրբարանի ձախակողմյան առաջին սյան տակ, Կորդովայի
 Բեժ մզկիթում, սակայն այդ փորձի հաջողությունն ստուգելու
 անհնար նկուղը կարող են բանալ ութ հազար տարի հետո միայն:

– Թո՛ւ, գրողը տանի, – ասաց Ժեհանը մեկուսի, – որքա՞ն պիտի
 պատեմ մեկ էջուհին:

– ...Ուրիշներն էլ կարծում են, – շարունակեց սարկավագապետը
 իրագելով. – թե ավելի լավ կլիներ փորձը կատարել Սիրիոս (Շնիկ)
 ստղի ճառագայթի վրա: Սակայն չափազանց դժվար է ստանալ այդ
 ճառագայթը մաքուր վիճակում, որովհետև նույն պահին ներկա են
 ևս այլ աստղեր, որոնց ճաճանչները խառնվում են դրան: Ֆլամելը
 լարծում է, որ ավելի հեշտ է փորձը կատարել երկրային կրակի վրա:
 Ֆլամել, ինչպիսի՜ կանխորոշված անուն, *Flamma!*¹⁸³ – Այո, կրակ:
 Եվ ուրիշ ոչինչ: Աղամանդը ածուխի մեջն է, ոսկին՝ կրակի մեջ: Բայց
 ինչպե՞ս դուրս հանել նրա միջից: Մագիստրոսները հավաստում են,
 թե կան կանանց այնքան քաղցրահնչուն և այնքան խորհրդավոր մի
 քանի անուններ, որ բավական է արտաբերել դրանք փորձի ժամա-
 նակ... Կարդանք ու տեսնենք, թե ինչ է ասում Մանուն¹⁸⁴ այդ մասին.
 «Որտեղ կանայք հարգված են, այնտեղ ցնծում են Աստվածները, որ-
 տեղ նրանք արհամարհված են, ավելորդ է աղաչել Աստծուն: – Կնոջ
 լերանը մշտապես մաքուր է. հոսող ջուր է դա, արեգական շող: –
 Կնոջ անունը պետք է լինի հաճելի, խորթալուր, երևակայական,
 լերջանա երկար ձայնավորներով և նմանվի օրհնության բառերի»: –
 Այո, իմաստունն իրավացի է. արդարև, Մարիա, Սոֆիա, էսմերալ...
 Նգո՛վք. մի՛շտ նույն միտքը:

183. Բոց (լատ.):

184. Հնդիկների սրբազան գիրքը:

Եվ մոլեգնորեն փակեց գիրքը:

Նա չփեց ճակատը՝ կարծես թե հետամուտ մի միտք փարատելու համար, ապա սեղանի վրայից վերցրեց մի գամ և մուրճը, որի կոթը նկարագարդված էր գաղտնադիտական հետաքրքիր տառերով ու նշաններով:

— Որոշ ժամանակ է, ինչ բոլոր փորձերս ձախողվում են,— ասաց նա դառնորեն ժպտալով,— սեեռուն միտքը տիրապետում է ինձ և խարանում ուղեղս պատժի շիկացած երեքնուկի նման: Միայն թե դեռ չկարողացա իմանալ Կասիոդորի գաղտնիքը, որի լամպը վառվում էր առանց ձեթի ու պատրուկի: Բայց և այնպես, որքան պարզ բան է դա:

— Ինչպե՛ս չէ,— ասաց ժեհանը քթի տակ:

— ...Բալակասն է ուրեմն,— շարունակեց քահանան,— մի թշվառական մտածմունք՝ մարդուն թույլ ու խնիթ արարած դարձնելու համար: Օ՛, որքա՛ն վրաս կծիծաղեր Կլոդ Պերնելլը՝ այդ աղջիկը, որ Նիկոլա Ֆլամելին մի րոպե իսկ չկարողացավ շեղել մեծ գործը հետապնդելուց: Ի՛նչ, դեռ ձեռքումս էլ բռնել եմ Ջեքիլեի կախարդական մուրճը: Ամեն անգամ, երբ այդ ահեղ ոսբերին իր խցիկի խորքում այս նույն մուրճը խփում էր այս գամին, ապա նրա թշնամիներից այն մեկը, որին ինքը դատապարտել էր մահվան, թեկուզ և երկու հազար լիյո հեռու լիներ, մի արմունկաչափ մտնում էր գետին, ձրը և կուլ էր տալիս նրան: Նույնիսկ Ֆրանսիայի թագավորը, որ մի երեկո առանց մտածելու հրել էր այդ հրաշագործի տան դուռը, մինչև ծնկները խրվեց Փարիզի սալահատակի մեջ: Դա սեղի է ունեցել գրեթե երեք դար առաջ: Շատ լավ. հիմա ես եմ այդ մուրճի և գամի տերը, սակայն այս գործիքներն իմ ձեռքի մեջ ավելի ահեղ չեն, քան թե դարձնի ձեռքում: Մինչդեռ պետք է գտնել այն մոգական բառը, որ ասում էր Ջեքիլեն այս գամին խփելիս:

— Դատա՛րկ բան է,— մտածեց ժեհանը:

— Հապա մի փորձենք,— շարունակեց աշխուժորեն սարկավազապետը:— Եթե հաջողվի, ես կտեսնեմ, թե ինչպես կապույտ կայծ

կճայթի այս գամի գլխից: Էմեն-Հեթա՛ն, Էմեն-Հեթա՛ն: Չէ՛, սա չի: Սիժեանի՛, Սիժեանի՛, թող այս գամը գերեզման բանա ոմն Ֆերուս անուընը կրողի համար... Անեծք ու նզո՛վք. միշտ ու շարունակ, հավիտենապես նույն միտքը:

Եվ բարկությամբ շարտեց մուրճը: Հետո այնպես իջավ բազկաթուռի ու սեղանի վրա, որ Ժեհանը հսկայական թիկնակի պատճառով այլևս չտեսավ նրան: Մի քանի րոպե նա տեսնում էր միայն եղբոր ջղաձկորեն պրկված բռունցքը մի գրքի վրա: Հանկարծ տեր Կլոդը վեր կացավ, վերցրեց կարկիններից մեկը և գլխատառերով լուռ ու մունջ փորագրեց պատի վրա այս հունարեն բառը.

ΑΝΑΓΚΗ

— Եղբայրս ցնդել է, — ասաց Ժեհանն ինքն իրեն. — շատ ավելի պարզ կլինեք գրել *Fatum*¹⁸⁵, հո բուրն էլ պարտավոր չեն հունարեն իմանալ:

Սարկավապապետը եկավ ու նստեց իր բազկաթուռին, գլուխը հենեց զույգ ձեռքերի վրա, ինչպես անում է այն հիվանդը, որի ճակատը ծանրացել ու վառվում է:

Ճեմարանականը զարմացած դիտեց եղբորը: Նա, որ իր սիրտը բաց էր անում արար-աշխարհին, աշխարհում ոչ մի օրենք չէր հարգում, բացի բնության հաճելի օրենքից, թողնում էր իր կրթերը հոսեն ըստ հակումների, և որի մեծ հուզմունքների լիճը միշտ էլ չոր էր, որովհետև յուրաքանչյուր առավոտ այնքա՛ն նոր ու լայն վտակներ էր բացում այնտեղից, նա չգիտեր, թե մարդկային կրթերի այդ ծովը ինչպիսի մոլեգնությամբ է քլթքլթում ու եռում, երբ փակում են բոլոր արտելքները, ինչպես է նա դիզվում, ուռչում ավերից գուրս գալիս, փորում-կրծում սիրտը, տակնուվրա լինում ներքին հեծկտանքներից ու խուլ ջղաձգություններից, մինչև որ ճեղքի իր ամբարտակները և պայթեցնի իր հունը: Կլոդ Ֆրոլոյի խստատես ու սառցային ծածկույթը, անառիկորեն անմատչելի առաքինության սառն արտաքինը միշտ խաբել էր Ժեհանին: Զվարթ ճեմարանականը

185. Ճակատագիր (լատ.):

ընավ չէր մտածել, թե որքան փրվրածուփ, կատաղած ու խոր լուփա կա էտնա լեռան ձյունապատ ճակատի տակ:

Մենք չգիտենք, թե նա անմիջապես անդրադարձա՞վ այդ մտքերին, բայց և այնպես, որքան էլ թեթեամիտ լիներ, այնուամենայնիվ, հասկացավ, որ ինքը տեսել էր այն, ինչ չպետք է տեսներ, որ հանկարծակի վրա էր հասել իր մեծ եղբոր հոգուն՝ նրա ամենագաղտնի վիճակներից մեկի պահին, ուստի և պետք չէր, որ Կլոդն իմանա դա: Տեսնելով, որ սարկավագապետը նորից թաղվեց իր նախկին անշարժության մեջ, նա կամացուկ ետ քաշեց գլուխը և ոտնաձայն առաջացրեց դռան ետևը այն մարդու նման, որ եկել է և ուզում է իմաց տալ իր գալը:

– Մտե՛ք,– գռչեց սարկավագապետը խցիկի ներսից,– ես ձեզ սպասում էի: Բանալին դիտմամբ եմ թողել դռան վրա: Մտե՛ք, վարպե՛տ ժակ:

Ճեմարանականը համարձակորեն ներս մտավ: Սարկավագապետը, որին այդպիսի մի այցելություն խիստ նեղում էր այդպիսի վայրում, սարսուց իր թիկնաթոռի վրա:

– Ինչպես թե, դո՞ւք եք, ժեհա՛ն:

– Այսպես թե այնպես ժ է,– ասաց ճեմարանականն իր կարմիր, անպատկառ ու զվարթ դեմքով:

Տեր Կլոդի կերպարանքը ընդունել էր իր նախկին խիստ արտահայտությունը:

– Ինչո՞ւ եք եկել այստեղ:

– Եղբայր իմ,– պատասխանեց ճեմարանականը՝ ջանալով պարկեշտ, խղճալի ու համեստ տեսք տալ իր դեմքին և գլխարկն անմեղորեն ձեռքերի մեջ պտտեցնելով,– եկել եմ ինդրելու ձեզ...

– Ի՞նչ:

– Մի քիչ բարոյախոսություն, որին մեծ կարիք ունեմ:– ժեհանը չհամարձակվեց բարձրաձայն ավելացնել՝ և մի քիչ էլ փող, որին է՛լ ավելի մեծ կարիք ունեմ: Նախազասություն այս վերջին անգամը մնաց «անտիպ»:

– Պարո՛ն,– ասաց սարկավագապետը սառը շեշտով,– ես չափազանց դժգոհ եմ ձեզանից:

– Ավա՛ղ,– Հառաչեց ճեմարանականը:

Տեր Կողը բազկաթոռը քառորդ շրջանակի չափ պտտեցրեց և շեշտակի նայեց ժեհանին:

– Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու Համար:

Վտանգավոր սուսջարտան էր դա: Ժեհանը պատրաստվեց դաժան ընդհարման:

– Ժեհա՛ն, օր չի անցնում, որ չգան ինձ մոտ ու չգանգատվեն քեզնից: Այդ ի՞նչ տուրուղմրոց է եղել, երբ դուք գանակոծել եք մի փոքրիկ դերկոմսի՝ Ալբեր դը Ռամոնշանին...

– Օ՛,– գոչեց ժեհանը,– շա՛տ մեծ բան է, մի չնչին մանկկավիկ, որ զվարճանում էր ճեմարանականներին կեղտաջրելով՝ իր ձին վագեցնելով ցեխերի մեջ:

– Իսկ ո՞վ է,– շարունակեց սարկավագապետը,– այդ Մահիճ Տարժելը, որի վերնազգեստը պատռել եք: *Tunicum dechiraverunt*¹⁸⁶, ինչպես ասում է հայցի գանգատը:

– Եղածն էլ մի բան լինե՛ր : Մոնտեգյու ճեմարանի մի անպիտան թիկնոց. այդ չէ՞:

– Գանգատն ասում է *tunicam* և ոչ *թե cappettam*¹⁸⁷: Լատիներեն իմանո՞ւմ եք:

Ժեհանը չսպտասխանեց:

– Այո,– շարունակեց քահանան գլուխն օրորելով:– Ահա թե ի՛նչ աստիճանի են հասել հիմա ուսումնառությունն ու դպրությունը: Լատին լեզուն՝ հագիվ են հասկանում, սիրիական լեզուն անծանոթ է, հունարենն այնքան ատելի է, որ ամենագիտնական մարդկանց համար անգամ՝ տգիտություն չի համարվում հունարեն բառի

186. Զգեստը պատռել են (Ֆրանսախառն լատիներեն):

187. Վերնազգեստ և ոչ թե թիկնոց (լատ.):

Հանդիպելիս՝ ցատկել վրայից՝ առանց կարդալու, ինչպես նաև ասել՝
*Graecum est, non legitur*¹⁸⁸.

Ճեմարանականը վճռականապես բարձրացրեց աչքերը:

– Պարոն եղբայր իմ, հաճելի՞ է ձեզ արդյոք, որ ընտիր Ֆրանսե-
րենով բացատրեմ ահա այս հունարեն բառը, որ գրված է պատին:

– Ո՞ր բառը:

– ΑΝΑΓΚΗ:

Սարկավագապետի ամպամած դեմքը ծածկվեց թեթև կարմրու-
թյամբ, ինչպես այն ծխի քուլան, որ դրսում ազդարարում է հրաբխի
թաքուն խռովությունները: Ճեմարանականը հազիվ թե նկատեց դա:

– Շատ լավ, ժեհան, – ճիգ գործադրելով կմկմաց մեծ եղբայրը, –
ի՞նչ է նշանակում այդ բառը:

– Ծավատագիր:

Տեր Կլոդը նորից գունատվեց, իսկ ճեմարանականն անհոգու-
թյամբ շարունակեց.

– Իսկ դրա տակի մյուս բառը, որ փորագրված է նույն ձեռքով՝
ΑΝΑΓΝΕΙΑ, նշանակում է պղծություն: Ինչպես տեսնում եք, իմ չա-
փով հունարեն գիտեմ:

Սարկավագապետը մնում էր լուռ: Հունարենի այս դասը դարձ-
րել էր նրան մտածկոտ: Փոքրիկ ժեհանը, որ օժտված էր երես առած
երեխայի բոլոր խորամանկություններով, պահը հարմար համարեց
իր խնդրանքը հայտնելու համար: Հետևաբար, չափազանց քաղցր
չեչտ ընդունելով՝ սկսեց.

– Իմ բարի՛ եղբայր, մի՞թե այն աստիճան զայրացած եք ինձ վրա,
որ անհամբույր տեսք եք ցույց տալիս մի քանի ապտակի ու բռունց-
քի հարվածների համար, որ ազնիվ կռվում հասցրել եմ ինչ-որ տղա-
ների ու մանչուկների՝ *quibusdam marmosetis*. Ինչպես տեսնում եք,
իմ բարի եղբայր Կլոդ, ես իմ չափով լատիներեն գիտեմ:

Սակայն այս ամբողջ շոգոքորթական կեղծավորությունը խստա-
բարո մեծ եղբոր վրա ամենևին իր սովորական ազդեցությունը

188. Հունարեն է, չի կարդացվում (լատ.):

չգործեց: Կերբերոսը մեկրահունց գաթան չկերավ: Սարկավագապետի կնճռոտ ճակատի ոչ մի ծալքը չհարթվեց:

– Ի՞նչ նպատակով եք ասում այդ բոլորը, – հարցրեց նա չոր շեշտով:

– Ըստ էություն՝ ահա թե ինչ, – պատասխանեց Ժեհանը Համարձակությամբ, – փողի կարիք ունեմ:

Այս անպատկառ Հայտարարություն վրա սարկավագապետի դեմքը միանգամայն Հայրական արտահայտություն ընդունեց:

– Ինչպես գիտեք, պարո՛ն Ժեհան, Տիրչապի մեր ավատական կավածքը բերում է միայն փարիլյան երեսուները լիվր, տասնմեկ սու և վեց դրնի, Հաչվելյով նաև Հողավճարը և քսանմեկ տների վարձակիրը: Սա կիսով չափ ավելի է, քան Պակլե եղբայրների օրոք էր, բայց էլի մեծ բան չէ:

– Փողի կարիք ունեմ, – ստոյիկաբար ասաց Ժեհանը:

– Ինչպես գիտեք, հոգևոր ստոյանը որոշել է, որ քսանմեկ տներն անցնում են եպիսկոպոսությունը որպես լրիվ ավատ, և մենք այդ իրավասությունը կարող ենք նորից տիրանալ միայն այն դեպքում, եթե գերապատիվ եպիսկոպոսին վճարենք երկու մարկ դրամ՝ ոսկե-գօծ, յուրաքանչյուրը փարիլյան վեց լիվր արժեքով: Այդ, ես դեռ չեմ կարողացել ետ գցել այդ երկու մարկը: Դուք այդ գիտեք:

– Ես այն դիտեմ, որ դրամի կարիք ունեմ, – երրորդ անգամ ասաց Ժեհանը:

– Իսկ ի՞նչ եք ուզում անել այդ դրամը:

Այս հարցումը հույսի նշույլ շողացրեց Ժեհանի աչքերում, և նա նորից անցավ շողոթորթող ու քաղցր-մեկցր շեշտի:

– Լսեցեք, սիրելի՛ եղբայր Կյոզ, ես ձեզ երբեէ չէի դիմի վատ մտադրություն, – ասաց նա: – Խոսք չի կարող լինել գինետուն-ճաշարաններում զվարճանալու և ձեր ունկիւներով շալլություն անելու կամ թե ոսկեհուռ ասպազարդով պճնված ձիով, իմ ծառայի հետ՝ *cum meo laquasio*¹⁸⁹, Փարիզի փողոցներում զբոսնելու մասին: Ոչ, եղբայր, լավ գործի Համար եմ ուզում:

189. Իմ ծառայի հետ (ֆրանսախառն լատիներեն):

– Այդ ի՞նչ լավ գործ է,– հարցրեց Կլոդը մի քիչ զարմացած:

– Իմ բարեկամներից երկուսն ուզում են մի աղքատ այրի միանձնուհուհու մանկիկի համար սփիտ գնել, բարեգործություն անել: Դա կարժենա երեք ֆլորին, ես էլ ուզում եմ իմ բաժինը մուծել:

– Ի՞նչ է քո բարեկամների անունը:

– Պիեր լ'Ասոմյոր և Բատիստ Կրոկ-Ուազոն:

– Հը՛մ,– վրա բերեց սարկավագապետը,– ահավասիկ անուններ¹⁹⁰, որոնք այնպես են պատշաճում բարի գործին, ինչպես ումբանետը տաճարին:

Ինչ խոսք, որ ժեհանը շատ վատ էր ընտրել իր բարեկամների այս երկու անունները և ուշ զգաց դա:

– Բացի դրանից,– շարունակեց խորաթափանց Կլոդը,– այդ ինչ տեսակ մանկական սփիտ է, որ երեք ֆլորին պիտի արժենա, այն էլ՝ միանձնուհուհու երեխայի համար: Այդ երբևիանի՞ց է, որ միանձնուհուհուները խանձարուրի երեխաներ են սկսել ունենալ:

Ժեհանը մի անգամ ևս ուզեց սառույցը կտորել:

– Դե՛ լավ, փողի կարիք ունեմ նրա համար, որ ուզում եմ այս երեկո գնալ Վալ-դ'Ամուր՝ Իզաբո-լա-Թիերիին տեսնելու:

– Պի՛ղծ թշվառական,– գոչեց քահանան:

– ԱՆԱՎՆԵԻԱ,– վրա բերեց ժեհանը:

Այս մեջբերումը, որ ճեմարանականը գուցե և չարամտորեն վերցրեց պատի մակագրությունից, արտասուվոր ազդեցություն գործեց քահանայի վրա: Նա կծեց շրթունքները, և նրա գայրույթն անցավ-ջնջվեց դեմքի շառագույնի մեջ:

– Գնացեք այստեղից,– ասաց նա ժեհանին:– Ես մարդու եմ սպասում:

Ճեմարանականը փորձեց մի ջանք ևս գործադրել:

– Եզրա՛յր Կլոդ, գոնե մի փոքրիկ դրամ տվեք ճաշելու համար:

190. Պիեր լ'Ասոմյոր (l'assommer - ջարդարար, ֆր.) և Բատիստ Կրոկ-Ուազոն (Croque-Oison - Սագակիր, ֆր.):

– Գրացիանոսի կոնդակնիրի ո՞ր կետին հք հասել, – հարցրեց տեր Կլոդը:

– Տետրակներս կորցրել եմ:

– Լատին մատենագրությունից որտե՞ղ եք հասել:

– Գողացել են Հորացիոսի իմ օրինակը:

– Արիստոտելի՞ց որ մասն եք անցնում:

– Ազնի՛վ խոսք, եղբա՛յր. եկեղեցու այն ո՞ր հայրն է, որ ասում է, թե հերետիկոսների բոլոր սխալանքների որջը, բոլոր ժամանակներում, Արիստոտելի մետաֆիզիկայի փշոտ բավիղներն են: Արիստոտելի հերն էլ անիծած: Ես չեմ ուզում խախտել իմ հավատը՝ նրա մետաֆիզիկային դիպչելով:

– Երիտասա՛րդ, – շարունակեց սարկավագապետը, – թագավորի վերջին ժամանման օրը չբախմբի մեջ կար մի ազնվական՝ անուըն Ֆրիլպ դը Կոմին, նրա ձիու թամբի տակի ծածկույթին ասեղնագործված էր հետևյալ նշանաբանը, որի վրա խորհուրդ եմ տալիս ձեզ մտածել. *Qui non laborat non manducet*¹⁹¹.

Ճեմարանականը մի պահ լռեց մատը դրած ականջին, աչքերը հառած գետնին, բարկացած արտահայտությամբ: Հանկարծ խաղտտնիկ թռչունի արագաշարժությամբ շրջվեց դեպի Կլոդը:

– Ուրեմն, բարի՛ եղբայր, մերժում եք փարիզյան մի սուլ տալ ինձ հացավաճառից մի կտոր չոր հաց գնելու համար:

– *Qui non laborat non manducet*.

Աննկուն սարկավագապետի այս պատասխանի վրա ժեհանը գլուխն առավ ձեռքերի մեջ, հեծկլտացող կնոջ նման և հուսահատության շեշտով բացականչեց. – *Օ չօժօժօժօժ!*

– Այդ ի՞նչ է նշանակում, պարո՛ն, – հարցրեց Կլոդը՝ այդ խենթությունից զարմացած:

– Ի՛նչ արած, ասեմ, – պատասխանեց ճեմարանականը և Կլոդի վրա հառեց իր անամոթ աչքերը, որոնց վրա սեղմել էր բռունցքները,

191. Ով չի աշխատում, չի ուտում (լատ.):

որպեսզի արցունքի պատճառած կարմրությունն տար դրանց.—
Հունարենն բառ է՝ էսքրիբսի մի անսպիտառ, որ հիանալիորեն
արտահայտում է կակիծը:

Եվ դրա վրա այնպիսի միմոսային ու պոռթկուն քրքիջ բարձրաց-
րեց, որ սարկավագապետն էլ ժպտաց: Արդարև, Կլոդի հանցանքն էր
դա. ինչո՞ւ էր այդքան փշացրել այդ տղային:

— Ո՛հ, բարի՛ եղբայր Կլոդ,— շարունակեց Ժեհանն՝ այդ ժպի-
տից սիրտ առած,— տեսեք, թե ինչպես են ծակվել իմ կոշիկները:
Աշխարհում ավելի ողբալի կոթուրն¹⁹² չի կարող լինել, քան այն
կոշիկները, որոնց ներբանները լեզվի պես դուրս են ընկել:

Սարկավագապետն անմիջապես վերադարձավ իր նստիկին
խստության:

— Ես ձեզ նոր կոշիկ կուղարկեմ, իսկ դրամ՝ երբևք:

— Գոնե մի չնչին փարիզյան սոււ, եղբայր,— աղաչեց Ժեհանը:—
Գրացիանոսն անդիր կսովորեմ, հաստատապես կհավատամ Աստծուն.
կգառնամ գիտության ու առաքինության իսկական Պյութադորաս:
Բայց մի չնչին փարիզյան սոււ շնորհեցեք: Ուզո՞ւմ եք ինձ լափի
քաղցը, որ ահա կանգնած է այնտեղ՝ երախը լայն բացած, ավելի
զարշահոտ, ավելի սև և ավելի անհատակ, քան տարտարոսն է կամ
վանականի քիթը:

Տեր Կլոդն օրորեց կնճռոտ գլուխը.

— *Qui non laborat...*

Ժեհանը չթողեց ավարտի:

— Դե՛ լավ,— գոռաց նա,— գրողը տանի, կեցցե ուրախությունը:
Գինետուն էլ կգնամ, կռիվ էլ կանեմ, ամաններ էլ կջարդեմ, աղջիկ-
ների մոտ էլ կգնամ:

Եվ իր գլխարկը շարտեց պատին, մատներն էլ կաստանյետների
ձեռքով ճթացրեց:

192. Հին Հունաստանում ողբերգակ գերասանները հազնում էին իրիսո
բարձր կրունկով ու ներբանով կոշիկներ, որ կոչվում էին կոթուրն:

Սարկավագապետը մռայլ արտահայտութեամբ նայեց նրան:

– Ժեհա՛ն, անհոգի մարդ եք դուք:

– Այդ դեպքում, ըստ էպիկուրի, ինձ պակասում է ինչ–որ բան, որ կազմված է այնպիսի բանից, որն անուն չունի:

– Ժեհա՛ն, պետք է լրջորեն մտածեք ձեզ ուղղելու մասին:

– Տեսեք, է՛,— դոչեց ճեմարանականը նայելով մերթ եղբորը, մերթ օջախի փորձանոթներին.— ամեն ինչ անհեթեթ է այստեղ՝ և՛ մտքերը, և՛ շշերը:

– Ժեհա՛ն, դուք կանգնած եք չափազանց թիք զառիվայրի վրա: Գիտե՞ք, թե ուր եք գլորվում:

– Գինետուն,— պատասխանեց ժեհանը:

– Գինետունն առաջնորդում է դեպի անարգանքի սյունը:

– Դա էլ մյուսների պես մի լապտեր է, և գուցե հենց դրանով էլ Դիոգինեսը կգտներ իր որոնած մարդուն:

– Անարգանքի սյունը առաջնորդում է դեպի կախաղան:

– Կախաղանն այն կշեռքն է, որի մի ծայրից կախված է մի մարդ, մյուս ծայրից՝ ամբողջ աշխարհը: Պանծալի է լինել այդ մարդը:

– Կախաղանն առաջնորդում է դեպի դժոխք:

– Դա էլ մի մեծ խարույկ է:

– Ժեհա՛ն, ժեհա՛ն, ձեր վախճանը վատ կլինի:

– Սկիզբը հո լավ կլինի:

Այդ միջոցին սանդուղքից ոտնաձայն լսվեց:

– Սո՛ւս,— ասաց սարկավագապետը՝ մատը բերանին դնելով.— պարոն ժակն է: Լսեցեք, ժեհան,— ավելացրեց նա ցածր ձայնով,— զգուշացեք խոսել այն ամենի մասին, որ կտեսնեք և կլսեք այստեղ: Իսկույն թաքնվեցեք այս օջախի տակ և ծպտուն չհանեք:

Ճեմարանականը կծկվեց օջախի տակ, որտեղ տաղանդավոր միտք հղացավ:

– Ի դեպ, եղբա՛յր Կրող, մեկ ֆլորին՝ ծպտուն չհանելու համար:

– Սուս, խոստանում եմ:

– Ոչ թե խոստացեք, այլ սովեք:

– Դե առ, – ասաց սարկավագապետը՝ բարկությամբ չպրտելով նրան իր քսակը:

Ժեհանը սողաց օջախի տակ, և դուռը բացվեց:

V

ԵՐԿՈՒ ՍԵՎԱԶԳԵՍ ՄԱՐԴԻԿ

Ներս մտած անձնավորությունը սև հագուստով էր ու մոայլ դեմքով: Մեր բարեկամ Ժեհանը (նա, ինչպես կուսհում է արդեն ընթերցողը, այնպիսի դիրքով էր կծկվել իր անկյունում, որ կարողանար ամեն ինչ անկաշկանդ տեսնել ու լսել) ամենից ավելի զարմացավ նորեկի հագուստի ու դեմքի կատարյալ տխրությունից: Այնուամենայնիվ, ինչ-որ հեզուկյուն էր արտահայտում նրա կերպարանքը, բայց կատվի կամ դատավորի հեզուկյուն, այսինքն՝ քաղցր-մեղցր հեզուկյուն: Բոլորովին ալեհեր էր նա, դեմքը կնճռոտ, տարիքը մոտենում էր վաթսունին, արագ թարթում էր աչքերը, հոնքերն սպիտակ էին, չրթունքը կախ ընկած, ձևաքերը խոշոր ու հաստ: Երբ Ժեհանը տեսավ, որ եկողը միայն այդ էր, այսինքն՝ ամենայն հավանականությամբ որևէ բժիշկ կամ դատավոր և որ այդ մարդու քիթը բերանից շատ էր հեռու, որը տխմարության նշան է, կծկվեց իր որջում խիստ վշտացած, որ ստիպված է անորոշ ժամանակով նստել այդտեղ այդպես անհարմար դիրքով և այդքան անախորժ մարդկանց հետ:

Սարկավագապետը նույնիսկ ոտքի չկանգնեց այդ մարդու համար: Նա միայն նշան արեց, որ նստի դռան մոտ գրված նստարանին, և մի քանի րոպե լռելուց հետո, որը կարծես ներքին խորհրդածություն շարունակությունն էր, հովանավորության թևթև շեշտով ասաց.

– Բարև ձեզ, տյա՛ր ժակ:

– Ողջույն, տյա՛ր, – պատասխանեց սևազգեստը:

Մի կողմից «տյար ժակ», իսկ մյուս կողմից գերապատմորեն «տյար» կոչականներն արտասանելու շեշտերի մեջ կար «տեր իմ»-ի և «պարոնի», «domine»-ի և «domine»-ի տարբերությունը: Ակներև էր ուսուցչապետի ու աշակերտի հարաբերությունը:

– Հը՞, հաջողություն ունենո՞ւմ եք, – հարցրեց սարկավազապետը դարձյալ որոշ լուծությունից հետո, որը տյար ժակը զգուշացավ իսանգարել:

– Ավա՛ղ, տյա՛ր իմ, – ասաց նորեկը տիրազին ժպտալով, – անվերջ փչում եմ: Մոխիր՝ որքան ուզեք, բայց ոսկու և ո՛չ մի կայծ:

Տեր Կողոն անհամբերության շարժում գործեց:

– Այդ էջ, որ հարցնում եմ ձեզ, տյար ժակ Շարմոլյու, այլ ձեր կախարդի դատի մասին: Կարծեմ ասացիք, որ անունը Մարկ Սընեն է՝ Հաշվային պայտաի մառանապետը: Խոստովանո՞ւմ է իր կախարդությունը: Կարողացա՞ք հարցը հաջողությամբ լուծել:

– Ավա՛ղ, ոչ, – պատասխանեց տյար ժակը նույն տխուր ժպտով, – չարժանացանք այդ մխիթարության: Այդ մարդն ապառաժ է. մենք ողջ-ողջ կխաչենք նրան Խոճկորների շուկայում՝ նախքան նա որևէ բան ուղենա ասել: Բայց և այնպես, ոչ մի բան չենք խնայում ճշմարտությանը հասնելու համար: Արդեն նրա հոդերը բոլորովին քայքայված են. դորձադրում ենք բոլոր հնարավոր միջոցները, ինչպես ձեր կատակարան Պլավտոսն է ասում.

Advorsum stimulos, laminas, erucesque, compedesque.

*Nervos, catenas, carceres, numellas, pedicas, boias*¹⁹³.

Ոչ մի բան չի ազդում, սարսափելի է այդ մարդը: Խնկքս էլ բան չի կտրում նրանից:

– Ոչ մի նոր բան չե՞ք գտել նրա տանը:

193. Ընդդեմ (նրա) կռիւի, շիկացած հրկաթ, ցից, ոտնակապ, խարսկան, շղթաներ, բանտ, ոտքի կաղապար, ձեռքի շղթա և ստրուկի մզկապ (լատ.):

– Գտել ենք, – պատասխանեց տյար ժակը՝ փորփրելով իր խոշոր քսակը, – ահա այս մագաղաթը: Այնպիսի բառեր կան դրված, որ մենք չենք հասկանում, թեև քրեական գործերի դատախազ պարոն Ֆլիլպ Լյորիեն իմանում է մի քիչ եւրոպերեն, որ սովորել է Բրյուսելի կանտերստեն փողոցի հրեաների դատավարության ընթացքում:

Այսպես խոսելով՝ տյար ժակը արձակում էր մագաղաթի փաթեթը:

– Տվեք ինձ, – ասաց սարկավագապետը և մի հայացք նետելով այդ գրությանը՝ գոչեց. – իսկակա՛ն կախարդություն: Էմեն-Ղեթա՛ն. այս գոչյունով են չարքերը շարաթահանդեսի հավաքվում: *Per ipsum, et cum ipso, et in ipso!*¹⁹⁴ այս հրամանով են սատանային նորից արգելափակում դժոխքում: *Hax, pax, max!*¹⁹⁵ սա էլ բժշկական բացականչություն է կատարած շների կծելու դեմ: Տյա՛ր ժակ, դուք արքայական դատախազ եք հոգեորական ատյանում. զարհուրելի է այս մագաղաթը:

– Մենք այդ մարդուն նորից կհարցաքննենք: Ահա և մի ուրիշ բան, որ գտել ենք Մարկ Սըննի տանը, – ավելացրեց տյար ժակը՝ դարձյալ իր քսակը փորփրելով:

Դա տեր Կլոդի օջախի վրա դարսված անոթների նման մի աման էր:

– Օ՛, – գոչեց սարկավագապետը, – ալքիմիական քուրա:

– Ես պետք է խոստովանեմ ձեզ, – ասաց տյար ժակը համեստ ու բռնազբոսիկ ժպիտով, – որ ես դա փորձեցի հնոցի վրա, բայց ավելի հաջողութուն չունեցա, քան երբ իմ քուրայով էի փորձում:

Սարկավագապետն սկսեց զննել անոթը:

– Ի՞նչ է փորագրել նա այս քուրայի վրա, *Och! Och!* (օ՛չ, օ՛չ)՝ այս խոսքով լվերին են քշում: Այդ Մարկ Սըննը տգետ մարդ է: Հավատում եմ անշուշտ, որ սրանով դուք ոսկի չեք ստանա, լավ կանեք, ամռանը սա դնեք ձեր անկողնախորշում, և ուրիշ ոչինչ:

– Քանի որ խոսքը հասավ սխալներին, – ասաց արքայական դատախազը, – ապա պետք է ասեմ, որ այստեղ բարձրանալուց առաջ ես

194. Իրենով, իր հետ և իր մեջ (լատ.):

195. Համահչնյուն, սակայն իրար հետ անիմաստ բառեր են:

ուսուժմնասիրեցի ներքևի ավագ դուռը, ձերդ գերապատվութիւնը միանգամայն վստահ է, որ ֆիզիկայի աշխատութեան սկիզբը պատկերված է այնտեղ, որ երևում է Տնանկների հիվանդանոցի կողմից, ինչպես նաև տիրամոր արձանի ստորոտում գտնվող յոթ մերկ քանդակներից մեկը, որ կրունկների վրա թևեր ունի, Հերմեսն է:

— Այո,— պատասխանեց քահանան,— այդպես է գրում Օգոստինոս Նիֆոն՝ այն իտալացի գիտունը, որ ուներ իրեն ամեն ինչ սովորեցնող մի մորուքավոր դև: Բացի դրանից, մենք հիմա կիջնենք ներքև, և այնտեղ էլ տեքստը կրացատրեմ ձեզ:

— Շնորհակալ եմ, ուսուցիչ,— ասաց Շարմոյուն՝ մինչև գետին խոնարհվելով:— Ի դեպ, քիչ մնաց մոռանայի: Ձեզ ե՞րբ է ցանկալի, որ ես կալանավորիլ տամ փոքրիկ կախարդ աղջկան:

— Ո՞ր կախարդ աղջկան:

— Այն գնչուհուն, որին լավ եք ճանաչում և որ ամեն օր գալիս է պարելու գուլբի առաջ, հակառակ եկեղեցական դատավորի արգելքին: Այդ աղջիկն ունի մի դիվահար այժ՝ սատանայի եղջյուրներով, այդ այժը կարողանում է կարդալ, գրել, Պիկատրիքսի պես թվաբանութիւն գիտե, և դա ինքնին բավական է ամբողջ գնչուական ցեղը կախաողան հանելու համար: Հետաքննութիւնն ավարտված է, և մեղադրականը շուտով պատրաստ կլինի, այո: Մինչդեռ այնքա՛ն գողտրիկ արարած է այդ պարուհին, հոգիս վկա, արտակարգ գեղեցիկ, սև աչքեր, եգիպտական մի ղույգ հակինթ: Ասեք խնդրեմ, ե՞րբ կարող եմք սկսել:

Սարկավագապետը գույնը գցել էր:

— Ես ձեզ կասեմ երբ,— կմկմաց նա հազիվ լսելի ձայնով, ապա ճիգ գործադրելով շարունակեց.— Մարկ Սընենով զբաղվեցեք:

— Անհոգ եղեք,— ժպտալով ասաց Շարմոյուն,— վերադառնամ թե չէ՝ նորից կապել կտամ կաշվե մահճի վրա: Բայց սատանայից պակաս չէ այդ մարդը, հոգնեցնում է անգամ Պիերա Տորտըրյուէին, որ ավելի խոշոր ձեռքեր ունի, քան թե ես, ինչպես այդ բարի Պլավտոսն է ասում:

*Nudus vincetus, centum pondo, es quando pendes per pendes.*¹⁹⁶

Հարցաքննությունն ճախարակով սեղմելու միջոցով. դա մեր միջոցներից լավագույնն է: Դրան էլ կհնթարկվի:

– Տյա՛ր Պիեռա... ուզում եմ ասել՝ տյա՛ր Ժակ, գբաղվեցեք Մարկ Սընենով:

– Այո, այո, տե՛ր Կլոդ: Խե՛ղճ մարդ, պիտի չարչարվի Մուսոլի պես: Բայց ի՛նչ տարօրինակ միտք՝ գնալ դեերի շաբաթահանդես. և ո՞վ՝ Հաշվային պալատի մառանապետը, որ պետք է ծանոթ լիներ Կառլոս Մեծի օրենքի *Striga vel masca*¹⁹⁷ կետին: Ինչ վերաբերում է փոքրիկին՝ Սմերալդային, ինչպես նրանք են անվանում, ապա ես կսպասեմ ձեր հրամանին: Հա՛, ավագ դուան տակից անցնելիս խնդրեմ ինձ բացատրեք նաև, թե ինչ է նշանակում այն հարթ նկարի այգեպանը, որ տեսում ենք եկեղեցյին մտնելիս: Արդյո՞ք Սերմնացանը չէ դա: Հը՞, ուսուցի՛չ, այդ ինչի մասին եք մտածում:

Տեր Կլոդն ինքն իր մեջ խորասուզված՝ այլևս չէր լսում նրան: Շարմոլյուն հետևելով նրա հայացքի ուղղությանը, տեսավ, որ դա մեքենայաբար սևեռված էր լուսանցույցը ցանցող խոշոր սարգոստայնի վրա: Այդ միջոցին մի անմիտ ճանճ, որ մարտ ամսի արևն էր փնտրում, նետվեց այդ ցանցի մեջ և ընկավ ծուզակը: Իր ոստայնի ցնցվելն զգալուն պես՝ Հսկայական սարդն ընդոստ շարժումով դուրս եկավ կենտրոնական բնից և մի ոստյունով հարձակվեց ճանճի վրա, առջևի թաթերով երկտակ ծալեց նրան, երբ գզվելի կնճիթը շոշափում էր նրա գլուխը: – Խե՛ղճ ճանճ, – ասաց հոգևորական ատյանի արքայական դատախազը և բարձրացրեց ձեռքը՝ ճանճին ապատելու համար: Սարկավագապետը կարծես հանկարծակի սթափված՝ ջղաձիգ ուժգնությամբ բռնեց նրա բազուկը:

– Տյա՛ր Ժակ, – գռչեց նա, – մի՛ դիմադրեք ճակատադրին:

Դատախազը սաստիկ շփոթված շուռ եկավ, նրան թվաց, թե երկաթն աքցան է սեղմում իր բազուկը: Քահանայի սևեռուն, վայրագ

196. Մերկ կապված՝ դու Հայուր ֆուլետ ես, երբ ոտքերիցդ կախված ես (լատ.):

197. Չարքեր և վհուկներ (լատ.):

ու փայլակնացայտ աչքերը հառած էին ճանճի ու սարդի փոքրիկ, բայց սարսափելի խմբին:

— Այո, իհարկեւ,— շարունակեց քահանան այնպիսի ձայնով, որ կարծես նրա ընդերքից էր գալիս.— ահա ամեն ինչի սիմվոլը: Թռչում է նա, ուրախ է, նոր է աշխարհ եկել, փնտրում է գարուն, թարմ օդ, ազատութուն, այո, իհարկեւ. սակայն բախվում է ճակատագրական վարդացանցին, այնտեղից դուրս է գալիս սարդը՝ զգվելի սարդը: Խնդճ պարուհի՝ խնդճ կանխադատված ճանճ: Տյա՛ր Ժակ, մի միջամտեք, այդ է ճակատագիրը: Ավա՛ղ, Կլո՛ղ, դու սարդն ես. բայց դու նաև ճանճն ես, Կլո՛ղ: Դու ճախրում էիր դեպի գիտութունը, դեպի լույսն ու արեգակը, միայն մի մտահոգութուն ունեիր՝ հասնել ազատ եթերին, հավիտենական ճշմարտության մեծ լույսին: Սակայն նետվելով դեպի այն լուսաչող պատուհանը, որ նայում է մյուս աշխարհին՝ լույսի, իմացության ու գիտության աշխարհին, կո՛ւյր ճանճ, անխելք պիտոնական, դու չտեսար այս թույլ սարդոստայնը, որ ճակատագիրը հյուսել է լույսի ու քո միջև, դու, թշվառական խենթ, խելակորույս նետվեցիր այնտեղ և հիմա թփրտում, մաքառում ես պուլսոդ կուտրված ու թևերդ պոկված, ճակատագրի երկաթե թաթերի մեջ: Տյա՛ր Ժակ, տյա՛ր Ժակ, թողեք սարդն իր ուզածն անի:

— Հավատացնում եմ ձեզ,— ասաց Շարմոլյուն, որ նայում էր Կլոդին՝ առանց հասկանալու,— որ ես մատ չեմ տա նրան: Բայց աղաչում եմ, ուսուցի՛չ, բաց թողեք թևս. աքցանի նման է ձեր ձեռքը:

Սարկավսուգապեսը չլսեց նրան:

— Օ՛, անմիտ,— շարունակեց նա՝ առանց աչքը լուսանցույցից կտրելու:— Եվ եթե նույնիսկ դու կարողանայիր քո ճանճիկային թևերով պատռել այդ վտանգավոր ոստայնը, կարծում ես, թե կհասնեիր լույսին: Ավա՛ղ, ինչպե՞ս կկարողանայիր անցնել այն ապակուց, որ ավելի հեռու է այդ թափանցիկ խոչընդոտից, այդ բյուրեղե, սակայն պղնձից ավելի ամուր պատից, որ բաժանում է բոլոր փրկաստիպությունները ճշմարտություններից: Ո՛վ գիտության

ունայնութիւնն. քանի՛-քանի իմաստուններ հեռուներից թուչկոտելով գալիս են՝ իրենց ճակատը փշրելու նրա վրա: Քանի՛-քանի գիտական համակարգեր խառնիխուռն բախվում են իրար ու բզզում այդ հավերժական ապակու վրա:

Նա լուեց: Այս վերջին մտքերը, որ աննկատելիորեն վերադարձրել էին նրան գիտութեան մասին խորհրտածելուն, կարծես թե հանդրատացրին նրան: Ժակ Շարմոլյուն ամբողջովին վերադարձրեց նրան իրականութեանը՝ հետեյալ հարցումն անելով.

– Հը՞, ուսուցի՛չ, ե՞րբ կգաք ինձ մոտ՝ օգնելու, որ ոսկի պատրաստեմ: Անհամբեր եմ հաջողութիւնս տեսնելու:

Սարկավագապետը դառնազին ժպտալով՝ օրորեց դուռը:

– Տյա՛ր ժակ, կարդացեք Միքայել Փսելուսի Dialogue de energia et operatione daemonium-ը¹⁹⁸: Այն, ինչ մենք սնում ենք, ամբողջովին անմեղ գործ է:

– Կամա՛ց, ուսուցի՛չ. ես էլ եմ կասկածում. – ասաց Շարմոլյուն: – Բայց և այնպես, պետք է մի քիչ էլ ալքիմիայով զբաղվես, քանի որ արքայական դատախազ ես եկեղեցական ատյանում, տարեկան Տուրնի երեսուն էքյուռ ռոճիկով: Միայն թե ցածր խոսնըք:

Այդ միջոցին ծնոտների ծամելու մի ձայն, որ գալիս էր օջախի տակից, հասավ Շարմոլյուի անհանգիստ սկասկի:

– Այս ի՞նչ է, – հարցրեց նա:

Ճեմարանականն էր, որ սաստիկ նեղված ու ձանձրացած այդ թաքստոցում նստելուց, ի վերջո, չոր հացի կտոր ու բորբոսնած պանրի մի շերտ էր գտել այդտեղ և առանց այլևայլութեան սկսել էր ուտել՝ մխիթարվելու և նախաճաշելու համար: Եվ որովհետև շատ էր սոված, ապա մեծ աղմուկ էր հանում՝ ուժգնորեն զգացնելով ամեն մի պատառը, և հենց դա էլ զգաստացրել ու տագնապի էր մատնել դատախազին:

– Իմ կատուներից մեկն է որևէ մուկ ճաշակում, – աշխուժորեն պատասխանեց սարկավագապետը...

198. Երկխոսութիւն դեբրի եռանդի ու գործունեութեան վերաբերյալ (լատ.):

Այս բացատրութիւնը բավարարեց Շարմոլյուին:

— Արդարեւ, ուսուցի՛չ, — պատասխանեց նա Հարգալիւր ժպտալով, — բոլոր մեծ փիլիսոփաներն ունեցել են իրենց ընտանի կենդանին: Գիտե՞ք ինչ է ասում Սերվիուսը. *Nullus enim locus sine genio est!*¹⁹⁹.

Սակայն տեր Կլոդը, որ վախենում էր ժեհանի մի որևէ նոր արարքից, հիշեցրեց իր արժանահարգ աշակերտին, որ իրենք միասին պետք է ուսումնասիրեն ավագ դռան մի քանի քանդակները, այնպես որ՝ երկուսով դուրս եկան խցիկից՝ ի մեծ թեթևութիւն ճամբարանականի, որ սկսում էր արդեն լրջորեն վախենալ, թե իր կզակի դրոշմը կմնա ծնկի վրա:

VI

ԻՆՉ ՀԵՏԵՎԱՆՔ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ ԲԱՅ ՕԴՈՒՄ ԱՍՎԱԾ ՅՈՔ ՀԱՅՀՈՅԱՆՔԸ

— *Te Deum laudamus!*²⁰⁰ — գոչեց պարոն ժեհանը՝ դուրս գալով իր ծակից, — վերջապես գնացին երկու բվեճները: *Och! Och! Hax, pax, max!* Լվեր, կատաղած շներ, դէ. բավական է, որքան լսեցի դրանց խոսակցութիւնը, գլուխս դժժում է զանգակատան նման: Բորբոսնած պանիրն էլ որպես հավելյալ վարձատրութիւն: Դե՛ իջնենք, վերցնենք մեծ եղբոր քսակը և այդ ամբողջ դրամը վերածենք շշերի:

Նա քնքշանքով ու հիացմունքով նայեց թանկագին քսակի մեջ, կանոնավորեց իր վրա-գլուխը, սրբեց կոշիկները, թափ տվեց մոխրից բոլորովին գորշացած թևքերը, ինչ-որ եղանակ սուլեց, պտույտ գործեց մի ոտքի վրա, ուստնեց, նայեց, թե չէ՞ր կարելի խցիկից մի որևէ բան էլ վերցնել, օջախի վրայից ապակե ինչ-որ թալիսման ճանկեց՝ գոհարի փոխարեն Իզաբո-լա-թիերիին նվիրելու համար, վերջապես

199. Ամեն մի վայր ունի իր ոգին (լատ.):

200. Զքեզ, Տեր. փառավորեմք (լատ. կաթոլիկական մի աղոթքի սկիզբը):

բացեց դուռը, որ եղբայրը վերջին ներողամտությամբ բաց էր թողել, և որ ինքը վերջին չարամտությամբ բաց թողեց, և սկսեց իջնել պտուտակած և սանդուղքը՝ թուչունի պես ոստոստելով:

Սանդուղքի խավարում նա դիպավ մի բանի, որը մրթմրթալով ետ քաշվեց, ժեհանը եզրակացրեց, որ Քվագիմոդոն է, և այնքան զվարճալի թվաց դա նրան, որ սանդուղքի մնացած աստիճաններն իջավ ծիծաղից կողերը բռնած: Հրապարակ դուրս գալով՝ նա դեռ ծիծաղում էր: Երբ արդեն սալահատակի վրա էր, ոտքը գետնին խփեց:

— Օ՛,— գոչեց նա,— Փարիզի ազնի՛վ ու հարգելի սալահատակ, նզովվա՛ծ սանդուղք, որից Հսկոբ նահապետի ելարանով բարձրացող հրեշտակներն էլ շնչասպառ կլինեին: Ի՞նչ էի մտածում, երբ գնում էի խցկվելու երկինքը ծակող այդ քարե գայլիկոնի մեջ. ընդամենը մի կտոր մազակալած պանիր ուտելու և փոքրիկ մի լուսանցույցից Փարիզի գանգակատները տեսնելու համար:

Նա մի քանի քայլ առաջ գնաց և նկատեց երկու բվեճներին, այսինքն՝ տեր կլոդին և տյար ժակ Շարմոլյուին, որ ավագ դռան դիմաց կանգնած՝ ինչ-որ քանդակ էին դիտում: Ժեհանը ոտքի ծայրերի վրա մոտեցավ նրանց և լսեց, թե ինչպես սարկավագապետը կամացուկ ասում էր Շարմոլյուին.

— Գիյոմ Փարիզցին է Հոբ երանելուն քանդակել տվել այդ լաջվարդ գույնի քարից, որի եզրերը ոսկեգօծ են: Հոբը փիլիսոփայական քարի մարմնավորումն է. այդ քարն էլ պետք է փորձության ենթարկվի կատարյալ դառնալու համար, ինչպես ասում է Ռայմոն Լյուլը՝ *Sub conservatione formae specificae salva anima*²⁰¹.

— Ինձ համար միևնույն է,— ասաց ժեհանը,— քսակը հիմա գրպանումս է:

Այդ միջոցին նա լսեց մի ուժգին ու հնչեղ ձայն իր ետևից, որ զարհուրելի հայհոյանքների մի շարան էր բաց թողնում:

— Սատանի ձագ, գրողի բաժին, Աստծու երեսից ընկած, նզովից արմատ, Բեհզդեբուղի պորտ, պապի արևը վկա, շանթ ու կայծակ:

201. Իր ձեռ պահելիս՝ հոգին անվնաս է մնում (լատ.):

– Հոգիս վկա, միայն իմ բարեկամ կապիտան Ֆեբուսը կարող է լինել սա,– գոչեց ժեհանը:

Ֆերուս անունը հասալ սարկավագապետի ականջին այն ժամանակ, երբ նա արքայական դատախազին բացատրում էր այն վիշապի իմաստը, որ իր պոչը թաքցրել է լողանալու տաշտի մեջ, որտեղից ծուխ է բարձրանում և երևում է մի թագավորի գլուխ: Տեր Կլոդը ցնցվեց, ընդհատեց իր խոսքը, ի մեծ զարմանք Շարմուլյուի, շրջվեց և տեսալ իր եղբորը՝ ժեհանին, որ Գոնդրլորիեի դաստակերտի դռան առջև մտանում էր մի բարձրահասակ սպայի:

Արդարև, պարոն կապիտան Ֆեբուս դը Շատոպերն էր դա: Նա մեջքը հենել էր իր հարսնացուի տան անկյունին և հեթանոսի պես հայհոյում էր:

– Արևս վկա, կապիտան՝ Ֆերուս,– սասց ժեհանը՝ բռնելով նրա ձեռքը,– սքանչելի պերճախոսությունք եք հայհոյում:

– Շանթ ու կայծակ,– պատասխանեց կապիտանը:

– Շանթն էլ քեզ, կայծակն էլ,– վրա բերեց ճեմարանականը:– Իսկ հիմա, բարեհամբույր կապիտան, ասեք տեսնե՞մ ի՞նչն է այդ գեղեցիկ խոսքերի զեղման պատճառը:

– Ներեցեք, բարի՛ ընկեր ժեհան,– բացականչեց Ֆեբուսը թոթվելով նրա ձեռքը,– չափ դցած ձին մեկից կանգ չի առնում: Դե ես էլ սրարչալ էի հայհոյում: Հիմա դալիս եմ այս սրբուհիների մոտից, իսկ երբ իջնում եմ փողոց, ապա միշտ էլ կուրծքս լի է լինում հայհոյանքներով, ստիպված եմ թքել դրանք, թե չէ կխեղդվեմ, շանթ ու կայծակ:

– Ձե՞ք ուզում, դնանք խմենք,– հարցրեց ճեմարանականը:

Այս առաջարկը հստակագրեց կապիտանին:

– Բա չե՞մ ուզում, միայն թե փող չունեմ:

– Իսկ ես ունեմ:

– Հա՞. ապա տեսնենք:

ժեհանը վսեմությունք, բայց և պարզությունք ցուցադրեց քսակը կապիտանի աչքերի առաջ: Այդ միջոցին սարկավագապետը, որ բաժանվել էր ապշած Շարմուլյուից, մոտեցել էր նրանց ու կանգ առնելով

մի քանի քայլ հեռավորութեան վրա՝ հետևում էր երկուսին էլ, բայց քսակի գննումով այնքան էին կլանվել նրանք, որ քահանային բնավ ուշադրութիուն չէին դարձնում:

– Քսակը ձեր գրպանում, ժեհա՛ն, այդ նույն է, թե լուսինը մի դուլ ջրի մեջ: Տեսնում ես նրան այնտեղ, բայց դուլի մեջ չէ. միայն արտացոլումն է այնտեղ: Գրողը տանի, գրագ կդամ, որ խիճեր են դրա մեջ, – դոչեց Ֆերուսը:

Ժեհանը պատասխանեց սառնութեամբ.

– Ահա խիճեր, որով խճապատում եմ իմ շալվարի գրպանը:

Եվ առանց որևէ բառ ավելացնելու՝ քսակը դատարկեց մոտակա դարպասի անկյունաքարի վրա՝ հայրենիքը փրկող հոռմեացու արտահայտութեամբ:

– Հիսո՛ւս Քրիստոս, – մրթմրթաց Ֆերուսը, – տարժե՛ր, մեծ ճերմակնե՛ր, մանր ճերմակնե՛ր, սուրնյան կրկնակ օղակավորնե՛ր, փարիզյան ղընիենե՛ր, իսկական արծվանիշ լիարնե՛ր: Խենթանալ կարելի է:

Ժեհանը պահում էր իր արժանավայել ու անայլայլ կեցվածքը: Մի քանի լիար գլորվել էին ցեխի մեջ. ոգևորված կապիտանը կռացավ հավաքելու: Ժեհանը ետ պահեց նրան.

– Փո՛ւ, կասլիտան Ֆերուս դը Շատոպեր:

Ֆերուսը հաշվեց փողերը և հանդիսավոր կերպով շրջվելով դեպի ժեհանը՝ ասաց:

– Գիտե՞ք, ժեհա՛ն, փարիզյան քսաներեք սուև կա այստեղ: Այդ ո՞ւմ գրպանն եք դատարկել այս գիշեր «Կոկորդահասունրի» փողոցում:

Ժեհանը խարտյաչ ու գանգրահեր գլուխը ետ պցեց և արհամարհանք արտահայտող աչքերը կիսափակելով՝ ասաց.

– Մի եղբայր ունեմ սարկավագապետ ու տխմար:

– Վա՛յ, Աստծո՛ւ կոտոչ, – բացականչեց Ֆերուսը: – Ա՛յ քեզ արժանավոր մարդ:

– Գնանք խմենք, – ասաց ժեհանը:

– Մեր գնանք, – հարցրեց Ֆերուսը: – «Եվայի խնձոր» գինետո՞ւնը:

– Ոչ, կապիտա՛ն, գնանք «Հին գիտություն»: Ռեբուս է դա. «պառավ, որ սղոցում է կանթ»: սիրում եմ այսպիսի ռեբուսներ²⁰²:

– Կորչե՛ն ռեբուսները, Ժեհա՛ն. «Եվայի խնձորի» գինին ավելի լավ է, և, բացի դրանից, դուան կողքին, արևի տակ աճում է մի որթատունկ, որն ինձ ուրախացնում է, երբ ես խմում եմ:

– Շատ լավ, համաձայն եմ Եվային էլ, նրա խնձորին էլ, – ասաց ճեմարանականը և բռնելով Ֆերուսի թևը՝ ավելացրեց: – Ի դեպ, իմ սիրելի՛ կապիտան, քիչ առաջ դուք ասացիք «Կոկորդահատների» փողոց: Դա շատ տգեղ արտահայտություն է. այժմ այդքան բարբարոս չենք մենք: Հիմա ասում են՝ «Լանջահատման» փողոց:

Եվ երկու բարեկամները ճանապարհ ընկան դեպի «Եվայի խնձորը»: Ավելորդ է ասել, որ մինչ այդ նրանք հավաքել էին փողը, և որ սարկավազապետը հետևում էր նրանց:

Սարկավազապետը հետևում էր նրանց մռայլ ու վայրագ տեսքով: Արդյո՞ք դա այն Ֆերուսն էր, որի անիծյալ անունը խառնվում էր նրա բոլոր մտքերին այն օրվանից սկսած, ինչ նա տեսակցել էր Գրենգուլարի հետ: Նա այդ չգիտեր, բայց վերջապես Ֆերուս էր սա, և այս մոգական անունը բավական էր, որպեսզի սարկավազապետը գայլի քայվածքով հետևի երկու անհոգ ընկերներին, ուշադիր անձկությամբ լսի նրանց խոսքերը և զինի անգամ ամենափոքր շարժումները: Ասենք նաև, որ ավելի հեշտ բան չկար, քան նրանց բոլոր ասածները լսելը, այնքան բարձր էին խոսում նրանք և բնավ էլ չէին մտահոգվում, որ անցորդները հաղորդակից են լինում իրենց անձնական գաղտնիքներին: Իսկ նրանք խոսում էին մենամարտերից, աղջիկներից, գինու գավերից ու խելառություններից:

Փողոցը շրջվելիս բասկյան դափի ձայն եկավ մոտակա մի քառուղուց: Տեր Կլոդը լսեց, թե ինչպես սպան ասում է ճեմարանականին.

202. Բառախաղ – ռեբուսը հետևյալն է. *vieille science*՝ առաջինը նշանակում է հին, պառավ, երկրորդը՝ երկրառ արտասանելիս՝ *scie ance*, նշանակում է սղոցում է կանթ: Իսկ այնպես՝ հին գիտություն:

– Շա՛նթ ու որոտ, շուտ արա, անցնենք:

– Ինչո՞ւ, Ֆերո՛ւս:

– Վախենում եմ գնչուհին ինձ տեսնի:

– Մ՞ր գնչուհին:

– Այն փոքրիկը, որ մի այծ ունի:

– Սմերալդա՞ն:

– Հենց դա, ժեհա՛ն: Միշտ մոռանում եմ դրա գրողի տարած անունը: Շտապենք, թե չէ կճանաչի ինձ: Չիմ ուզում, որ այդ աղջիկը փողոցում ճանապարհս կտրի:

– Մի՞թե ճանաչում եք նրան, Ֆերո՛ւս:

Այդ պահին սարկավագապետը տեսավ, թե ինչպես Ֆերուսը քմծիծաղ տվեց, կուացավ ժեհանի ականջին և խիստ ցածր ձայնով մի քանի խոսք ասաց, ապա բարձրաձայն քրքջաց և հաղթականորեն թափ տվեց գլուխը:

– Ճի՞շտ եք ասում, – հարցրեց ժեհանը:

– Հոգիս վկա, – պատասխանեց Ֆերուսը:

– Այս երեկո՞:

– Այս երեկո:

– Վստա՞հ եք, որ կգա:

– Իննթ հո չեք, ժեհա՛ն. մի՞թե կարելի է կասկածել այդպիսի բաների մասին:

– Կապիտա՛ն Ֆերուս, երջանիկ Հեծյալ եք դուք:

Սարկավագապետը լսեց այս ամբողջ խոսակցությունը: Նրա ատամներն սկսեցին կափկափել, ակներև սարսուռ անցավ ողջ մարմնով: Մի վայրկյան կանգ առավ նա, հարբած մարդու նման հենվեց մոտակա դարպասի անկյունաքարին, ապա նորից սկսեց հետևել երկու զվարճասերներին:

Այն ժամանակ, երբ հասավ նրանց, խոսակցությունն արդեն փոխել էին նրանք և լիաթոք երգում էին այս հին կրկներգը.

Պտի-Կառոյի մանչուկները

Կախվում են հանց հորթուկները:

ՌԻՐՎԱԿԱՆ ՎԱՆԱԿԱՆԸ

«Եվայի խնձոր» նշանավոր գրինետունը Համայնարանի Թաղամասում էր, Ռոնդել և Բատոնիի փողոցների անկյունում: Դա առաջին Հարկի վրա գտնվող մի սրահ էր՝ բավական ընդարձակ ու ցածր, կամարակապ առաստաղով, որի կենտրոնական կամարը հենվում էր փայտե մի հաստ ու դեղին ներկված սյան վրա: Ամեն տեղ դրված էին սեղաններ, պատերից կախված էին անագե փայլուն գավեր: Գինետունը միշտ լի էր խմողներով և բազմաթիվ անառակուհիներով: Փողոցի կողմը կար ապակեփեղկ, դռան մոտ՝ խաղողի վազ, դռան վերևը՝ երկաթե ձողից կախված ու քամուց ճոճվող, անճաշակ ներկված թիթեղի մի թերթ՝ վրան մի խնձոր ու մի կին նկարված: Հողմացույցի այդ նմանակը, որ սալահատակին էր նայում, գինետան ցուցանակն էր:

Գիշերն իջնում էր. քառուզին մութ էր, իսկ մոմերով լի գինետունը լուսավառվում էր հեռվից, ինչպես հնոցը խավարում, բաժակների, կերուխումի, հայհոյանքների, կռիվների ազմուկը կտտրված ապակիններից հասնում էր փողոց: Մշուշի միջից, որ տարածում էր սրահը գինետան ապակե ցուցափեղկի վրա, երևում էին հարյուրավոր անտրոշ, իլրտացող կերպարանքներ, երբեմն-երբեմն էլ լավում էր պոռթկացող հնչեղ քրքիջ: Իրենց գործին շտապող անցորդները սահում էին այդ ժխորալի փեղկի մոտից՝ առանց նայելու նրան: Ժամանակ առ ժամանակ միայն մի որևէ քրջոտ երեխա մատի ծայրերին բարձրանալով ու հասնելով փեղկի առջամասին՝ գինետան ներսն էր չարտում այն հին, հեգնական գոչյունը, որով այդ դարերում հետապնդում էին հարբած մարդկանց.

*Aux Houls, saouls, saouls, saouls!*²⁰³

203. Դեպի Հալ, հարբածներ, հարբածներ, հարբածներ (Ֆր.):

Սակայն մի մարդ անխռով երթևեկում էր ժխորալի գինետան առաջ, անընդհատ նայում էր ներսը և ավելի չէր հեռանում նրանից, քան ժամապահ գինվորն իր պահակատնակից: Նրա վերարկուի օձիքը ծածկել էր կզակը՝ մինչև քիթը: Նա հենց նոր էր գնել այդ վերարկուն «Եվայի խնձորի» մոտակա մի հնավաճառից, հավանաբար՝ մարտի երեկոյան ցրտից պաշտպանվելու, գուցե և իր հագուստները թաքցնելու համար: Երբեմն-երբեմն նա կանգ էր առնում արճիճե օղացանցով պատված պղտոր ապակեփեղկի առաջ, ունկնդրում, նայում ու դոփում էր գետինը:

Վերջապես բացվեց գինետան դուռը: Այդ մարդն էլ կարծես դրան էր սպասում: Երկու խմող դուրս եկան այնտեղից: Իոնից ժայթքող լույսի շողքը մի րոպե շառագունեց նրանց զվարթ կերպարանքները: Վերարկուով մարդն անցավ փողոցի մյուս կողմը և կանգնելով մի դռան ծածկի տակ՝ շարունակեց դիտել:

— Շա՛նթ ու կայծակ, — գոչեց գինեմոլներից մեկը: — Շուտով ժամը յոթը կհսփի, այսինքն՝ իմ ժամադրուկից ահա:

— Ես ձեզ ասում եմ, — կրկնում էր մյուսը ծանրացած լեզվով, — որ Վայրահաչուկից փողոցում չեմ ապրում. *indignus qui inter mala verba habitat*²⁰⁴. Իմ բնակարանը Ժան-Փափուկ Հաց փողոցում է՝ *in vico Johannis Pain-Mollet*. Դուք մի եղջերուից ավելի կոտոչավոր եք, եթե հակառակն եք պնդում: Ամեն ոք գիտե, որ մեկ անգամ արջ հեծնողն այլևս երբեք չի վախենա, բայց դուք ձեր քիթը տնկել եք դեպի քաղցրավենիք, սուրբ Ժակ Հյուրընկալի նման:

— Ժեհա՛ն, բարեկա՛մ, դուք հարբած եք, — ասում էր մյուսը:

Իսկ սա օրորվելով պատասխանեց.

— Ձեզ իհարկե հաճելի է ասել, Ֆեբո՛ւս. բայց ապացուցված է, որ Պատոնը որսի շան պրոֆիլ ունեւր:

Ընթերցողն, անկասկած, արդեն ճանաչել է մեր քաջակորով բարեկամներին՝ կապիտանին ու ճեմարանականին: Ըստ երևույթին՝

204. Անարժան է նա, ով ապրում է վայրահաչուկից մեջ (լատ.):

Ի՞նչ նրանց լրտեսող մարդն էլ ճանաչել էր, որովհետև համարա-
շայլ հետևում էր այն բոլոր զիզգազներին, որ ճեմարանականը
տիպում էր անել կապիտանին, իսկ սա ավելի փորձված խմող լի-
ւելով՝ պահել էր իր ամբողջ գլխատուօթյունը: Ուշադիր լսելով
յրանց՝ վերարկուով մարդը կարողացավ բռնել իր ամբողջուօթյամբ
ձեռքերից հետևյալ խոսակցուօթյունը.

– Թո՛ւ, նզովյա՛լ, ջանացեք ուղիղ քայլել, էլի՛, պարոն բակա-
ավր. դուք գիտեք անշուշտ, որ ես անհրաժեշտաբար բաժանվելու եմ
Նեզնից: Ժամը յոթն է ահա: Ժամադրուօթյուն ունեմ մի կնոջ հետ:

– Դե ուրեմն՝ թողեք ինձ: Ես տեսնում եմ աստղեր և հրեղեն նի-
լակներ: Դուք նման եք Դամմարտեն դղյակին, որը տրաքում է
յիծաղելուց:

– Երգվում եմ իմ տատիկի կոծիծներով, Ժեհա՛ն, ձեր ասածները
հոլեգին ցնդաբանուօթյուն են: Ի դեպ, Ժեհա՛ն, էլ փող չի՞ մնացել
Նեզ մոտ:

– Պարո՛ն ուկտոր, ոչ մի սխալ չկա. փոքրիկ մսավաճառանոցը
ուշնն է, ինչ *parva baucheria*-ն:

– Ժեհա՛ն, բարեկամ Ժեհա՛ն, դուք դիտեք, որ ես ժամադրու-
օթյուն եմ նշանակել մի փոքրիկ աղջկա հետ, սուրբ Միքայել կամուր-
ի ծայրին և նրան կարող եմ տանել միայն կամուրջի վրա ապրող
իրբ Ֆալուրդելի մոտ, իսկ սենյակի համար պետք է վճարել:
Սպիտակ բեղավոր, պառաված լիրբը ապառիկ չի տա ինձ: Ժեհա՛ն,
նորհ արեք, մի՞թե ավագերեցի ամբողջ քսակը խմեցինք, մի՞թե մի
խարիզյան սու էլ չի մնացել ձեզ մոտ:

– Անցած ժամերը լավ վայելած լինելու գիտակցուօթյունը սեղանի
յրավացի ու համեղ համեմունքն է:

– Տո ես քո փորը ու փսորը... վե՛րջ տվեք ձեր խենթ ու խելառ
նոսքերին: Ժեհա՛ն, սատանի՛ ձագ, ասացեք, էլի՛, որևէ փող չի՞
մնացել ձեզ մոտ: Տվե՛ք, գրողը տանի, թե չէ կխուզարկեմ ձեզ, եթե
ուշնիսկ Հոբի նման բորոտ լինեք դուք, կամ Կեսարի պես քոսոտ:

– Պարո՛ն, Գալիաշ փողոցի մի ծայրը հասնում է Ապակեգործների փողոցին, իսկ մյուս ծայրը՝ Զուլհակների փողոցին:

– Հա՛, ճիշտ է, այո, իմ ազնի՛վ բարեկամ Փեհան, իմ խե՛ղճ ընկեր, Գալիաշ փողոցը, այո, այդպես է, հենց այդպես է: Բայց, ի սեր Աստ-ծու, ուշքի եկեք: Ինձ միայն մեկ փարիզյան սու է պետք, այն էլ՝ ժամը յոթի համար:

– Լռությունն չորս կողմ և ուշադրությունն կրկնեցին:

Երբ առնետներն ուտեն կատվին,

Արքան կդառնա տերն Արրասին:

Իսկ թե անհուն ծովը հանկարծ

Սառույց կապի Հովհաննու տոնին,

Արրասցիքն էլ սառցի վրայով

Հրաժեշտ կտան այդ քաղաքին:

– Թո՛ւ, Նեռի ծնունդ ճեմարանակա՛ն, իեղդվես, հա՛, մորդ աղիք-ներով, – գոչեց Ֆեբուսը և կոպտորեն հրեց հարբած ճեմարանակա-նին, որ սահելով պատի վրայով՝ փափուկ ընկավ Ֆիլիպ-Օգոստոսի փողոցի սալահատակին: Այն եղբայրսական խղճահարության վերջին մնացորդով, որից ելբեք չի զրկվում գինեմոլի սիրտը, Ֆեբուսը Փեհանին ոտքով գլորեց աղքատների այն բարձերից մեկի վրա, որ նա-խաինամությունը պատրաստ է պահում Փարիլի բոլոր անկյունա-քարերի մոտ և որը հարուստ մարդիկ արհամարհանքով նշավակում են աղբակույտ անունով: Կապիտանը Փեհանի գլուխը տեղավորեց կաղամբի կոթերի կույտի թեքության վրա, և ճեմարանական իսկույն եեթ սկսեց խոմփալ սքանչելի թավ ձայնով: Սակայն կապիտանի սրտում ոխը ամբողջովին չէր հանգչել:

– Ավիլի վատ, եթե սատանայի սայլակն անցնելիս քեզ էլ վերց-նի, – ասաց նա քնած խեղճ ճեմարանականին ու հեռացավ:

Վերարկուով մարդը, որ շարունակել էր հետևել նրանց, մի րուպե կանգ առավ պառկած ճեմարանականի առջև, կարծես թե ինչ-որ վա-րանման մեջ, ապա խոր հառաչ արձակելով հեռացավ կապիտանի ետևից:

Մենք էլ, նրանց պես, թողնենք, որ ժեհանը քնի աստղագարդ երկնքի բարյացակամ հայացքի տակ, և հետևենք նրանց, եթե հաճելի է ընթերցողին:

Մտնելով Սենտ-Անդրե-դե-զ'Արկ փողոցը՝ կապիտան Ֆերուսը նկատեց, որ մեկը հետևում է իրեն: Հայացքը պատահաբար շրջելով՝ նա տեսավ, որ ինչ-որ մի ստվեր պատերի երկայնքով գաղտագողի գալիս է իր ետևից: Նա կանգ առավ, կանգ առավ նաև ստվերը. նա շարունակեց քայլիլ, ստվերը նույնպես շարունակեց քայլել: Դա շատ քիչ անհանգստացրեց կապիտանին:

– Ի՛նչ կա որ, – մտածեց նա, – ոչ մի սոււ չունեմ վրաս:

Օթյոնի կոլեջի ճակատի դիմաց նա կանգ առավ: Այդ կոլեջում էր նա կիսատ-պռատ ստացել այն, ինչ անվանում էր կրթություն, և չարածճի աշակերտի սովորությամբ, որ դեռ մնացել էր նրա մեջ, այդ շենքի առջևից անցնելիս, գլխավոր դռան աջ կողմը քանդակված կարդինալ Պիեր Բերտրանի արձանն անպայման ենթարկում էր այն վիրավորանքին, որից այնքան դառնությամբ գանգատվում է Պրիպոսը Հորացիոսի մի սատիրայում՝ *Olim truncus eram ficulnus*²⁰⁵. Ֆերուսն այնպիսի մոլեգնություն էր ներդրել այդ գործի մեջ, որ համարյա թե ջնջված էր *Eduensis episcopus*²⁰⁶ մակագրությունը: Ուստի և ըստ իր սովորության՝ նա կանգ առավ այդ արձանի առաջ: Փողոցը բոլորովին ամայի էր: Այն ժամանակ, երբ նա անփութորեն, գլուխը տնկած՝ իր քուղերն էր կապում, տեսավ, որ ստվերը մոտենում է իրեն դանդաղ, այնքան դանդաղ քայլերով, որ ինքը ժամանակ ունեցավ դիտելու ստվերի վերարկուն ու գլխարկը: Մոտենալով՝ ստվերը կանգ առավ ավելի անշարժ, քան կարդինալ Բերտրանի արձանը, Ֆերուսի վրա սևեռելով այն տարտամ լույսով լի աչքերը, որ կատվի բիբերն են արձակում գիշերը:

Կապիտանը քաջ մարդ էր և շատ քիչ կվախենար դաշույնը բռնած գողից: Սակայն այդ քայլող արձանը, այդ քարացած մարդը

205. Մի ժամանակ ես թզնու բուն եմ եղել (լատ.):

206. Էդուենի, այսինքն՝ Օթյոնի եպիսկոպոս (լատ.):

արտաճաք արեց նրան: Այդ ժամանակները էլ ի՛նչ պատմութիւններ ասես, որ չէին պատմում Փարիզի փողոցներում գիշերները թափառող, ուրվականի տեսքով մի վանականի մասին, և կապիտանը տարտամորեն վերհիշեց դրանք: Մի քանի ըոպե մնաց ապշած և վերջապես խզեց լռութիւնը՝ ջանալով ծիծաղել:

– Պարո՛ն, եթե դուք գող եք, ինչպես ենթադրում եմ, ապա ինձ վրա թողնում եք այն ձկնկուլի տպավորութիւնը, որ գրոհում է ընկույզի կճեպի վրա: Ես քայքայված ընտանիքի զավակ եմ, սիրելի՛ս: Դիմեցեք այն կողմը: Այս կոլեջի մատուռում կա Քրիստոսի խաչափայտի մի կտոր, որ պահւում է արծաթեղենի հետ:

Ստվերի ձեռքը դուրս եկավ վերարկուի տակից և իջավ Ֆերուսի բազկի վրա արծփի մագիլի ուժղնությամբ: Միաժամանակ ստվերը խոսեց.

– Կապիտա՛ն Ֆերուս դը Շատոպեր:
– Գրո՛ղը տանի, – գոչեց Ֆերուսը, – որտեղի՞ց գիտեք իմ անունը:
– Ես գիտեմ ոչ միայն ձեր անունը, – շարունակեց վերարկուով մարդը գերեզմանային ձայնով, – այլև այն, որ ժամադրութիւն ունեք այս երեկո:

– Այո, – պատասխանեց ապշած Ֆերուսը:
– Ժամը յոթին:
– Քառորդ ժամ հետո:
– Ֆալուրդելի մոտ:
– Ճիշտ այդպես:
– Սուրբ Միքայել կամուրջի անառակուհու մոտ:
– Սուրբ Միքայել հրեշտակապետի, ինչպես աղոթագիրքն է ասում:
– Ամբարի՛շտ, – մռլտաց ուրվականը: – Մի կնոջ հետ:
– Confiteor²⁰⁷:
– Որի անունն է...
– Սմերալդա, – պատասխանեց Ֆերուսը զվարթությամբ: Նրա ամբողջ անհոգութիւնն աստիճանարար վերադարձել էր:

207. Խոստովանում եմ (լատ.):

Այս անունն արտասանելիս ստվերի մազիլը կատաղությամբ թափահարեց Ֆերուսի թևը:

– Կապիտա՛ն Ֆերուս Շատոպյեյր, դու ստու՞մ ես:

Ով կարողանար այդ վայրկյանին տեսնել կապիտանի բուցավառ ղեմքը, ղեպի ետ կատարած այնքան ուժգին ուսոյունը, որով ազատեց բազուկը սեղմող աքցանից, այն խրոխտ տեսքը, որով ձեռքը տարավ իր սրի կոթին, իսկ այդ զայրույթի դեմ-հանդիման վերարկուով մարդու մոայլ անշարժությունը, կրկնում ենք, ով տեսներ դա, կոսկար:

Դա Դոն Ժուանի և արձանի մենամարտի պես մի բան էր:

– Քրիստոսն ու սատանան վկա, – գոռաց կապիտանը: – Այսպիսի խոսքիբ հազվագեպ է լսում Շատոպիերներից որևէ մեկի ականջը, և դու չես համարձակվի կրկնել:

– Ստու՞մ ես, – ասաց սավերը սառնասրտությամբ:

Կապիտանն ատամները կրճտեց: Ե՛վ վանական-ուրվականին, և՛ նախապաշարմունքի երկյուղը – ամեն ինչ մոռացավ այդ վայրկյանին: Նա միայն տեսնում էր մի մարդու, գիտակցում էր մի բան՝ վիրավորանք:

– Այդպե՛ս, հա՞, շա՛տ լավ, – թոթովեց նա բարկությունից խեղդված ձայնով: Ապա քաշելով սուրբը և կմկմալով, որովհետև զայրույթն էլ սարսափի նման դողացնում է մարդկանց, ավելացրեց.

– Հե՛նց այստեղ, անմիջապե՛ս, իսկո՛ւյն ևեթ. սրերը կչափենք: Սրե՛րը: Թող արյունը հոսի սալահատակի վրա:

Իսկ հակառակորդը չէր շարժվում: Ելբ նա տեսավ իր ախոյանին խոյանալու պատրաստ վիճակում, ասաց դառնությունից թրթռուն չեչտով:

– Կապիտա՛ն Ֆերուս, դուք մոռանում եք ձեր ժամադրությունը:

Ֆերուսի նման մարդկանց բռնկումները նման են կաթնապուրի. մի կաթիլ սառը ջուրը բավական է նրա եռը հանդարտեցնելու համար: Այդ պարզ խոսքն իջեցրեց կապիտանի ձեռքում շողողացող սուրբը:

— Կապիտա՛ն,— շարունակեց վիրարկուով մարդը,— վաղը, մյուս օրը, մի ամիս հետո, տասը տարի հետո, դուք ինձ կզանեք ձեր կոկորդը կտրելու պատրաստ: Բայց մինչ այդ գնացեք ձեր ժամադրութեանը:

— Ճիշտ որ,— ասաց Ֆեբուսը՝ կարծես թե ինքն իր առջև նահանջելու պատրվակ որոնելով, — հիանալի բան է մեկ ժամադրութեամբ գտնել մի աղջիկ և մի սուր: Բայց ես չեմ հասկանում, թե ինչու մեկի համար թերանամ մյուսից, երբ կարող եմ երկուսն էլ ունենայ:

Եվ սուրը դրեց պատյանը:

— Գնացեք ձեր ժամադրութեանը.— կրկնեց անծանոթը:

— Պարո՛ն,— պատասխանեց Ֆեբուսը մի փոքր չփոթված,— շատ շնորհակալ եմ ձեր վեհանձնութեան համար: Արդարև, վաղն էլ բավական ժամանակ կունենանք պատովածքների և կոճակօղեր բանալու հայր Ադամի մեր պատմուճանի վրա: Ես երախտապարտ եմ ձեզ, որ ինձ թույլ եք տալիս մի հաճելի քառորդ ժամ ևս անցկացնելու: Ես հույս ունեմ, թե ձեզ կքնացնեմ առվի մեջ և ժամանակին էլ կհասնեմ գեղեցկուհուս մոտ, մանավանդ որ՝ բարեկրթութեան նշան է կանանց մի քիչ սպասեցնել այսպիսի դեպքերում: Սակայն դուք համարձակ մարդ եք թվում ինձ, ուստի և ավելի ապահով կլինի գործը հետաձգել վաղվան: Ուրեմն ես գնում եմ իմ ժամադրութեան, ժամը, ինչպես գիտեք, յոթին է:— Այստեղ Ֆեբուսն ականջը քորեց:— Թո՛ւ, գրո՛ղը տանի, մոռացել էի, որ մի սուս անգամ չունեմ խղճուկ սենյակի վարձը վճարելու համար, իսկ պառավ կավատուհին կուզենա առաջուց ստանալ, չի վստահում ինձ:

— Ահա, կվճարեք սրանով:

Ֆեբուսն զգաց, թե ինչպես անծանոթի սառը ձեռքը մի խոշոր դրամ սահեցրեց իր ձեռքի մեջ: Նա չկարողացավ զսպել իրեն, վերջրեց դրամը և սեղմեց նրա ձեռքը:

— Աստվա՛ծ վկա, լավ տղա եք դուք.— բացականչեց նա:

— Միայն թե մի պայման,— ասաց անծանոթը:— Ապացուցեք ինձ, որ ես սխալվում էի, իսկ դուք ճիշտ էիք ասում: Թաքցրեք ինձ մի

որևէ անկյունում, որտեղից ես կարողանամ տեսնել, իսկապե՞ս դա այն կինն է, որի անունն ասացիք:

– Օ, խնդրեմ, ինձ Համար մեկ է,– պատասխանեց Ֆեբուսը:– Կվարձենք սուրբ Մարթայի սենյակը, դուք էլ կարող եք կողքի շան բնից Հանգիստ, ուզածի չափ նայել:

– Դե գնանք,– ասաց ստվերը:

– Պատրաստ եմ ձեզ ծառայելու,– ասաց կապիտանը:– Չգիտեմ՝ դուք տյար սատանան եք անձամբ, թե ոչ, բայց այս երեկո լինենք լավ բարեկամներ, իսկ վաղը կվճարեմ ձեզ՝ թե՛ իմ քսակի, թե՛ սրի բոլոր պարտքերը:

Եվ սկսեցին արագ քայլել: Մի քանի րոպե հետո գետի խշշոցը իմաց տվեց, որ նրանք Սուրբ Միքայել կամուրջի վրա են, իսկ կամուրջն այդ դարաշրջանում ծածկված էր տներով:

– Նախ ես ձեզ կուղիկցեմ ներս,– ասաց Ֆեբուսն իր ուղեկցին,– ապա կգնամ գտնելու գեղեցկուհուն, որ պետք է սպասի ինձ Փոքր Շատլեյի մոտ:

Ուղեկիցը ոչինչ չպատասխանեց: Ամբողջ ժամանակ, որ նրանք քայլում էին կողք-կողքի, նա ոչ մի բառ չէր ասել: Ֆեբուսը կանգ առավ մի ցածր դռան առաջ և ուժգնորեն բախեց, դռան ճեղքերից լույս երևաց:

– Այդ ո՞վ է,– հարցրեց անատամ բերանից լսվող մի ձայն:

– Աստծո՛ւ մարմին, Աստծո՛ւ գլուխ, Աստծո՛ւ փոր,– պատասխանեց կապիտանը:

Դուռն անմիջապես բացվեց, և նորեկները տեսան մի պառավ կին ու մի լամպ՝ երկուսն էլ դողդոջուն: Կորաքամակ այդ պառավը հագել էր ցնցոտիներ, ամբամբացող գլուխը փաթաթված էր ինչ-որ քրջով, դեմքի վրա ասես փորված էին մանր աչքերը, կնճիռները ծածկել էին ձեռքերը, դեմքը, վիզը՝ ամեն տեղ. շրթունքները մտել էին լնդերի միջև, բերանի շուրջը կային սպիտակ աղվամազի փնջիկներ, որ շողոքորթ կատվի տեսք էին տալիս նրան: Կացարանի ներսը պառավից

պակաս քայքայված չէր. կրածածկ պատեր, սոսափողին սև հեծաններ, փլփլած բուխարի, սարդոստայններ բոլոր անկյուններում, մեջտեղը խարխուլ ու կաղ սեղանների ու նստարանների կույտ, բուխարու մոխիրների մեջ մի կեղտոտ հրեխա, իսկ խորքում՝ սանդուղք կամ ավելի ճիշտ՝ ելարան, որ սանուամ էր դեպի առաստաղի կափույրը:

Ֆեբուսի խորհրդավոր ուղեկիցն այդ որջը մտնելուն պես վերարկուի կնգուղն իջեցրեց մինչև աչքերը, իսկ կապիտանը սարակինոսի նման հայհոյելով հանդերձ՝ շտապեց արև շողշողացնել էքյուրի մեջ, ինչպես մեր սքանչելի Ռեյնիենն²⁰⁸ է ասում:

– Սուրբ Մարթայի սենյակը, – ասաց նա:

Պառավր մոսսենյոր անվանելով նրան՝ շտապեց էքյուրն թաքցնել պահարանի դարակի մեջ: Դա այն արծաթե դրամն էր, որ սև թիկնոցով մարդը տվել էր Ֆեբուսին: Երբ պառավը շրջվեց, մոխրի մեջ խաղացող գիսախուփ և գջլոտ մանչուկը ճարպկորեն մոտեցավ դարակին, վերցրեց դրամը և տեղը դրեց խուփի ճյուղից պոկած մի չոր տերև:

Պառավը նշան արեց երկու ազնվականներին, ինչպես անվանում էր նրանց, հետևել իրեն, և սկսեց բարձրանալ փոքրիկ սանդուղքով: Հասնելով վերևի հարկը՝ լամպը դրեց սնդուկի վրա: Ֆեբուսը, որպես տանու մարդ, բացեց մի խավար խցիկ տանող դուռը:

– Մտեք այստեղ, սիրելի՛ս, – ասաց նա իր ուղեկիցին:

Թիկնոցավոր մարդն առանց որևէ խոսք ստելու, հնազանդվեց, դուռը ծածկվեց նրա վրա, և նա լսեց, թե ինչպես Ֆեբուսը նիգով փակեց և մի վայրկյան հետո պառավի հետ իջավ սանդուղքից: Լույսն անհետացել էր:

208. Մաթյուրեն Ռեյնիե (1573-1613), միջնադարյան ֆրանսիացի սատիրական ականավոր բանաստեղծ:

**ԳԵՏԻՆ ՆԱՅՈՂ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԻ
ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կլոդ Ֆրոլոն (որովհետև մենք ենթադրում ենք, թե ընթերցողը Ֆերուսից ավելի ուշիմ լինելով, այդ արկածի ընթացքում այլ ուրվակերպ վանական չի տեսել, եթե ոչ սարկավագապետին) մի քանի վայրկյան խարխափեց այն խավար խորշում, որտեղ փակել էր նրան կապիտանը: Դա մեկն էր այն անկյուններից, որ ճարտարապետները երբեմն թողնում են տանիքի և հենման պատի միանալու կետում: Այդ շան բնի (ինչպես խիստ դիպուկ անվանել էր Ֆերուսը) ուղղածիգ կտրվածքը եռանկյուննաձև էր: Ո՛չ պատուհան կար այնտեղ, ո՛չ լուսանցույց, և տանիքի թեքութունը թույլ չէր տալիս կանգնած մնալ: Կլոդը պպոցեց փոշու և ոտքերի տակ փշրվող գաջակտորների վրա: Նրա գլուխը վառվում էր. ձեռքերով իր շուրջը շոշափելով՝ գետնին ընկած մի ապակու կտոր գտավ, դրեց ճակատին և այդ սառնութունից մի քիչ հանգստացավ:

Ի՞նչ էր այդ ժամանակ կատարվում սարկավագապետի խավար հոգու մեջ. նա և Աստված միայն կարողացան իմանալ դա:

Ճակատագրական ի՞նչ կարգով էր նա դասավորում իր մտքում էամբրալդային, Ֆերուսին, Ժակ Շարմոլյուին, իր փոքր եղբորը, որին այնքան սիրում էր, իսկ այժմ լքել էր ցեխի մեջ, սարկավագապետի իր սքեմը, գուցե և իր համբավը, որ քաշել-բերել էր Ֆալուրդելի մոտ, այդ բոլոր պատկերները, բոլոր արկածները: Ես այդ չեմ կարող ասել, բայց կասկածից դուրս է, որ այդ բոլոր գաղափարները մի զարհուրելի կծիկ էին կազմում նրա մտքի մեջ:

Քառորդ ժամ էր ընդամենը, ինչ նա սպասում էր, սակայն նրան թվում էր. թե ձերացել է մեկ դարով: Հանկարծ նա լսեց փայտե փոքրիկ սանդուղքի աստիճանների ճոճոցը. մեկը բարձրանում էր:

Կափուլը բացվեց և լույս երևաց: Նրա խորշի որդնակեր դռան վրա կար բավականին լայն մի ճեղք, նա դեմքը կպցրեց դրան, այդ ձևով կարող էր տեսնել այն ամենը, ինչ տեղի էր ունենում կողքի սենյակում: Կափուլի բացվածքից նախ դուրս եկավ կատվադեմ պառավը լամպը ձեռքին, ապա Ֆեբուսը՝ բեղերը սղալելով, հետո մի երրորդ անձնավորություն՝ էսմերալդայի գեղեցիկ դեմքն ու նրբագեղ իրանը: Քահանան տեսավ, որ նա գետնից դուրս եկավ որպես մի շլացուցիչ տեսիլք: Կլողը դողդողաց, ամպ տարածվեց նրա աչքերի վրա, քներակներն սկսեցին ուժգնորեն բաբախել, ամեն ինչ դժժաց ու պտտվեց նրա շուրջը: Այլևս նա ոչինչ չտեսավ ու չլսեց:

Երբ նա սթափվեց, տեսավ, որ Ֆեբուսն ու էսմերալդան մենակ են նստած անդուկի վրա, որը սարկավագապետին հստակ տեսանելի էր դարձնում այդ երկու երիտասարդ դեմքերը, և մի ողորմելի խշտյակ ողորմելի սենյակի խորքում:

Խշտյակի կողքին կար մի լուսամուտ, որի մանրակտոր ապակիններից շատերը ջարդված էին անձրևահար սարդոսսայնի ձևով: Այդ լուսամուտն էլ թույլ էր տալիս իր կտրատված՝ ցանցի միջից տեսնել երկնքի մի պատառիկ և հեռվում, փափուկ ամպերի վերմակի վրա հանգչած լուսինը:

Դեռատի աղջիկը շառագունած էր, չփոթահար ու խռովահույզ: Նրա երկար, խոնարհած թարթիչները ստվերում էին շիկակարմիր այտերը: Սպան, որի վրա նա չէր համարձակվում բարձրացնել աչքերը, հրճվանքից շողում էր: Մեքենայաբար և անվարժության զմայլելի շարժումով աղջիկը մատի ծայրով անհեթեթ գծեր էր անում նստարանի վրա և դիտում էր իր մասը: Նրա ոտքերը չէին երևում, փոքրիկ այծը նստած էր ոտքերի վրա:

Կապիտանը չքեղ էր հագնված, վզին ու դաստակներին փարթամ ժանեկածալքեր կային, որ մեծ պերճանք էր այդ դարաշրջանում: Կլողը դժվարություն միայն կարողացավ լսել, իր քունքերը պայթեցնող արյան բաբախման միջից, թե ինչ էին ասում նրանք միմյանց: .

(Բավական տափակ բան է սիրահարները գրույցը: Անվերջ «սիրում եմ ձեզ»: Չափազանց անպահույճ ու անհամ երաժշտական մի ֆրագ անտարբեր մարդկանց համար, երբ դա զարգարված չէ որևէ նվագային թրթռանքով: Բայց Կլոդը որպես անտարբեր չէր լսում):

– Օ՛, մոնսենյոր Ֆեբուս, մի արհամարհեք ինձ, – ասում էր դեռատի աղջիկն առանց աչքերը բարձրացնելու, – ես զգում եմ, որ իմ արածը վատ բան է:

– Արհամարհե՞մ ձեզ, սիրո՛ւն մանկիկ, – պատասխանում էր կապիտանը գերազանց ու բարեկիրթ կնամեծարության շեշտով, – արհամարհե՞մ ձեզ, Աստծու գլուխը վկա, և ինչո՞ւ:

– Որ եկա այստեղ:

– Այդ մասին, Կեյկեյկուհի՛ս, ես այլ կարծիքի եմ: Ես ոչ թե պիտի արհամարհեի ձեզ, այլ ատեի:

Դեռատի աղջիկը սարսափած նայեց սպային:

– Ատե՞լ ինձ: Բայց ես ի՞նչ եմ արել:

– Շատ երկար թախանձել սովիք ձեզ:

– Ավա՛ղ, – վրա բերեց աղջիկը, – ...բանն այն է, որ ես դրժում եմ մի ուխտ... Մոտոյներիս չեմ գտնի... Թախտամանն իր զորությունը կկորցնի: Բայց ի՞նչ փույթ, հիմա էլ ինչի՞ս են պեսք հայրը կամ մայրը:

Այսպես խոսելիս նա կապիտանի վրա սեեռեց ուրախությունից ու քնքշանքից խոնավացած իր խոշոր, սև աչքերը:

– Գրողն ինձ տանի, թե հասկանում եմ ձեզ, – գոչեց Ֆեբուսը:

Էսմերսուդան մի վայրկյան մնաց լուռ, ապա աչքերից մի արցունք գորովելուց, շուրթերից էլ մի հառաչ արձակվելուց հետո, ասաց.

– Օ՛, մոնսենյոր, ես ձեզ սիրում եմ:

Դեռատի աղվա շուրջը ուղախոհության այնպիսի բույր կար, առաքինության այնպիսի հրապույր, որ Ֆեբուսն այնքան էլ անկաշկանդ չէր զգում իրեն նրա մոտ: Եվ ահա այդ խոսքը համարձակություն տվեց նրան:

— Դուք սիրում եք ինձ,— ասաց նա հափշտակությամբ և գրկեց գնչուհու մեջքը: Հինց այդ առիթին էր նա սպասում:

Քահանան տեսավ դա և մատի ծայրով փորձեց կրծքի տակ թաքցրած դաշույնի սայրը:

— Ֆերո՛ւս,— շարունակեց գնչուհին մեջքից կամացուկ սրկելով կապիտանի կառչուն ձեռքերը,— դուք բարի եք, մեծահոգի եք, գեղեցիկ եք դուք. փրկեցիք ինձ, որ գնչուների մեջ կորած խեղճ երեխա եմ: Վաղուց է, ինչ ես երազում եմ այնպիսի մի սպայի հանդիպել, որ փրկի ինձ: Եվ ձեզ էի երազում, նախքան ձեզ ճանաչելը, իմ Ֆերուս. իմ երազածը գեղեցիկ նշանադրեստ ուներ. ինչպես դուք, պատկառելի տեսք ու սուր: Ձեր անունը Ֆերուս է. գեղեցիկ է այդ անունը, սիրում եմ ձեր անունը, սիրում եմ ձեր սուրը: Հապա՛, քաջեցեք ձեր սուրը, Ֆերո՛ւս, որպեսզի տեսնեմ:

— Երեխա՛,— ասաց կապիտանը և ժպտալով սուրը հանեց պատյանից: Գնչուհին նայեց կոթին, շեղբին, հետաքրքրությամբ գննեց ջոկատի նշանագրերը և համբուրելով սուրը՝ ասաց.

— Քաջի սուր ես դու: Ես սիրում եմ իմ կապիտանին:

Ֆերուսը դարձյալ օգտվեց առիթից և նրա գեղեցիկ խոնարհած վրի վրա դրոշմեց մի համբույր, որից իսկույն ուղղվեց բալի նման կարմրած դեռատի աղջիկը: Քահանան էլ ատամները կրճտեց խավարում:

— Ֆերո՛ւս,— շարունակեց աղջիկը,— թողեք, որ մի քիչ խոսեմ: Հապա՛, ման եկեք, որպեսզի տեսնեմ ձեզ ամբողջ հասակով ու լսեմ ձեր խթանների զնգոցը: Որքան գեղեցիկ եք դուք:

Կապիտանը նրան հաճոյանալու համար վեր կացավ, միաժամանակ և գոհունակության ժպիտով կշտամբելով աղջկան.

— Իրոք երեխա եք: Ի՞ դեպ, գեղեցկուհի՛ս, տեսե՞լ եք ինձ գորահանդեսի զգեստով:

— Ավա՛ղ, ոչ,— պատասխանեց համբալզան:

— Ա՛յ, գեղեցիկը դա է:

Ֆերուսը նորից նստեց նրա կողքին, բայց շատ ավելի մոտիկ, քան առաջ:

– Լսեցեք, սիրելի՛ս:

Գնչուհին իր գեղեցիկ ձեռքով մի քանի թեթև հարվածներ տվեց նրա բերանին՝ խելահեղությամբ, շնորհագեղությամբ և հրճվանքով լի մանկամտությամբ:

–Ոչ, ոչ, ես ձեզ չեմ լսի: Սիրո՞ւմ եք ինձ: Ուզում եմ, որ ասեք սիրո՞ւմ եք ինձ, թե՞ ոչ:

– Դեռ հարցնում ես, թե սիրում եմ քեզ, իմ կյանքի հրեշտակ,– գոչեց կապիտանը կիսաչոքելով:– Իմ մարմինը, իմ արյունը, իմ հոգին, ամեն ինչ քոնն է, ամեն ինչ քեզ համար է: Սիրո՞ւմ եմ քեզ և քե՛զ եմ միայն սիրել:

Կապիտանը նման հանգամանքներում այնքան հաճախակի էր կրկնել այս նախադասությունը, որ հիմա արտասանեց մեկ շնչով, առանց անգիր սերտածից մի սխալ անելու: Այս կրքոտ խոստովանությունը լսելով՝ գնչուհին հրեշտակային երջանկությամբ լի Հայացքն ուղղեց երկնքին փոխարինող կեղտոտ առաստաղին.

– Ո՛հ,– մրմնջաց նա,– ահա այն վայրկյանը, երբ մարդ կարող է մեռնել:

Ճեբուսը «վայրկյանը» հարմար համարեց՝ խլելու մի նոր համբույր ևս, որը նոր տառապանք պատճառեց իր որջում թաքնված թշվառ սարկավագպետին:

– Մեռնե՞լ,– գոչեց սիրավառ կապիտանը:– Այդ ի՞նչ եք ասում, չքնա՛ղ հրեշտակ, ապրելու ժամն է սա, ապա թե ոչ Յուպիտերի ասածները դատարկ բան են. մեռնել այսքան քաղցր վայելքի սկզբի՛ն: Գրողը տանի, այս ի՞նչ կատակ է: Ոչ, ոչ, այդպիսի բան չի կարող լինել: Լսեցեք, իմ սիրելի՛ Սիմիլար... էսմերալդա... ներեցեք, այնքան տարօրինակ սարակինոսյան անուն ունեք դուք, որ ես չեմ կարող ճիշտը արտասանել: Կարծես թե թփուտ լինի և ճանապարհս մեկից կտրի:

– Աստվա՛ծ իմ,– ասաց խեղճ աղջիկը,– մինչդեռ ես էլ կարծում էի, որ գեղեցիկ է այդ անունն իր բացառիկությամբ: Բայց քանի որ ձեզ դուր չի գալիս, ես կուզենայի, որ ինձ կոչեիք Գոտոն:

– Դե լա՛վ, նազելի՛ս, չվշտանանք այդպիսի չնչին բանի համար. այնպիսի անու՛ն է դա, որին պետք է վարժվել, և ուրիշ ոչինչ: Մի անգամ որ անգիր սովորեցի, դրանից հետո ինքնին կարտասանվի: Լսեցեք, իմ սիրելի՛ Միմիլար. ես ձեզ պաշտում եմ իմ ամբողջ սրտով: Հրաչք բան է, թե ինչպես եմ սիրում ձեզ: Ես ճանաչում եմ մի աղջկա, որ դրա համար բարկությունից կտրաքի...

Խանդոտ գնչուհին ընդհատեց նրան.

– Այդ ո՞վ է:

– Ինչնե՞րի՞դ է պետք, – պատասխանեց Ֆերուսը: – Ինձ սիրո՞ւմ եք դուք:

– Ո՛հ... – բացականչեց էսմերալդան:

– Շատ լավ. այդ էլ բավական է: Դուք կտեսնեք, թե ինչպես եմ ես սիրում ձեզ: Թող սատանաների պարագլուխ Նեպտունն իր եռաժանի եղանով խոցի ինձ, եթե ես ձեզ չդարձնեմ աշխարհի ամենաերջանիկ արարածը: Մի որևէ տեղ մենք կունենանք մի փոքրիկ, սիրուն բնակարան: Ես իմ նետաձիգների զորահանդես կսարքեմ ձեր լուսամուտների տակ: Բոլորն էլ ձիով են և բանի տեղ չեն դնում կապիտան Մինյոնի նետաձիգներին: Դրանց մեջ կան տեղավորներ, աղեղնավորներ ու հրահար կրակողներ: Ես ձեզ կտանեմ Փարիզի կայազորի մեծ ստուգատեսին՝ Ռյուլիի հարթավայրը: Փառահեղ բան է: Ութսուն հազար զինված մարդ, երեսուն հազար սպիտակ զրահակիր, կուրտիկավոր ու օղազրահավոր. համբարությունների վաթսուն յոթ դրոշ՝ արդարադատության, հաշվային պալատի, գանձապետության, հարկաբաժանման վարչության դրոշակները, մի խոսքով՝ սատանայական պճնահանդես: Ես ձեզ կտանեմ տեսնելու արքայական ապարանքի առյուծներին, որոնք վայրի գազաններ են: Բոլոր կանայք էլ սիրում են այդպիսի բաներ:

Մի քանի վայրկյան էր արդեն, ինչ դեռատի աղջիկը տարված իր հրաշագեղ մտքերով՝ երազում էր Ֆերուսի ձայնի հնչյունի ներքո, առանց ըմբռնելու նրա խոսքերի իմաստը:

– Օ՛ր, շա՛տ երջանիկ կլինեք դուք,– շարունակեց կապիտանը՝ միաժամանակ կամացուկ արձակելով գնչուհու գոտին:

– Այդ ի՞նչ եք անում,– հարցրեց աղջիկը աշխուժությամբ: Այս «բռնադատությունը» կտրեց նրան երազանքից:

– Ոչինչ,– պատասխանեց Ֆերուսը,– ես միայն այն էի ասում, թե հարկ կլինի հրաժարվել այս անհեթեթ ու փողոցային զգեստավորումից, երբ ինձ հետ կլինեք:

– Երբ քեզ հետ կլինե՛մ, իմ Ֆերուս,– ասաց դեռատի աղջիկը խանդաղատանքով:

Եվ նորից խորասուզվեց մտքերի ու լուսթյան մեջ:

Կապիտանը նրա մեղմությունից սրտապնդված՝ գրկեց նրա մեջքը առանց դիմադրության հանդիպելու, ապա սկսեց թույլ շրջուկով արձակել խեղճ աղջկա իրանակալի կապերը և այնպես խառնշտկեց նրա լանջապանը, որ շնչակտուր սարկավագապետը տեսավ, թե ինչպես շղարչի տակից դուրս եկավ գնչուհու մերկ, գեղեցիկ ուսը՝ կլորիկ ու թուխ, ինչպես հորիզոնի մշուշից ծագող լուսինը:

Դեռատի աղջիկը չէր իմանգարում Ֆերուսին: Կարծես նա ոչինչ չէր նկատում: Հանդուգն կապիտանի աչքերը շողշողում էին: Հանկարծ էամերալդան շրջվեց դեպի նա:

– Ֆերո՛ւս,– ասաց սնհուն սիրու արտահայտություններով,– սովորեցրու ինձ քո կրոնը:

– Իմ կրո՛նը,– գոչեց կապիտանը քահ-քահ ծիծաղելով:– Ես ձեզ սովորեցնեմ իմ կրո՛նը: Շանթ ու կայծակ, ինչնեբրի՞դ է պետք իմ կրոնը:

– Ուրպեսզի ամուսնանանք,– պատասխանեց աղջիկը:

Կապիտանի դեմքը ստացավ զարմանքի, արհամարհանքի, անհոգության և լպիրշ պագշոտություն խառն արտահայտություն:

– Պահո՛ւ,– գոչեց նա,– մի՞թե ամուսնանալը անհրաժեշտություն է:

Գնչուհին գույնը գցեց, և նրա գլուխը տխրագին հակվեց կրծքի վրա:

– Իմ չքնա՛ղ սիրահար,– քնքշորեն շարունակեց Ֆերուսը,– ինչի՞ համար է այդ հիմարությունը: Ի՛նչ մի անհրաժեշտություն է

ամուսնանալը. մի՞թե պակաս են սիրում մարդիկ իրար Հենց միայն այն պատճառով, որ լատիներեն չին լիպուում տերտերի կրպակում:

Իր ամենաքաղցր ձայնով այսպիս խոսելով՝ միաժամանակ իրիստ մոտենում էր գնչուհուն. նրա շոյող ձեռքերը նորից իրենց դերն էին կատարում այնքան նուրբ ու ճկուն այդ մեջքի շուրջը, աչքերը Հետզհետե ավելի էին վառվում և ամեն ինչ ազդարարում էր, որ պարոն Ֆերուսն ակներևաբար մոտենում է այն ըուպեններին, երբ Յուպիտերն ինքն էլ այնքան գժություններ է արել, որ բարեմիտ Հոմերոսն ստիպված է մի ամպ կանչել իրեն օգնութայն:

Եվ այդ ամենը տեսնում էր Կյոդ Ֆրոյուն: Դուռը շինված էր բոլորովին փտած տակառի շերտափայտերից, որոնք լայն անցքեր էին թողել իրար միջև՝ որսի Հետամուտ թռչունի նրա Հայացքի Համար: Այդ թխամորթ ու լայնաթիկունք քահանան, որ մինչ այդ դատապարտված էր վանքի խստաշունչ կուսակյացութայնը, սարսուռում ու եռում էր սիրո, գիշերվա ու Հեշտասիրութայն այդ տեսարանի առաջ: Դեռատի ու գեղեցիկ աղջիկը, որ կիսամերկ ընձենուված էր այդ սաքարյուն երիտասարդին, կարծես Հայած արճիճ էր Հոսեցնում տիր Կյոդի երակների մեջ: Արտակարգ ապրումներ ուներ նա: Հայացքը վավաշոտ խանդով խորամուխ էր լինում ամեն մի Հանված գնդատեղի տակ: Ով կարողանար այդ պահին տեսնել որդնակեր տախտակներին փակչած այդ դժբախտ մարդու դեմքը, կկարծեր, թե տեսնում է վազրի կերպարանք, որ իր վանդակից նայում է եղնիկ Հոշոտող շնագայլին: Նրա բիբերը դուան ճեղքերից վառվում էին մոմերի պես:

Հանկարծ Ֆերուսը արագ շարժումով բարձրացրեց գնչուհու լանջակալը: Խեղճ աղջիկը, որ մնացել էր դժգույն ու երազկոտ, կարծես ընդոստ արթնացավ, նա թափով Հեռացավ ձեռներեց կապիտանից և մի Հայացք նետելով իր մերկ կրծքին ու ուսերին, կարմրած ու շփոթված, ամոթից Համրացած՝ իր գեղեցիկ թևերը ծայից լանջի վրա՝ մերկությունը թաքցնելու Համար: Եթե չլիներ Հուզմունքի այն բուցը, որ շառագունել էր նրա այտերը, այդ լուիկ ու անշարժ վիճակում տեսնելիս,

թվում էր, թե դա Ողջախոհության արձանն է: Նրա աչքերը մնացել էին խոնարհած:

Սակայն կապիտանի շարժումը երևան էր բերել այն խորհրդավոր թալիսմանը, որ էսմերալդան կրում էր վզից կախած:

— Այս ի՞նչ բան է, — հարցրեց Ֆեբուսը՝ բռնելով այդ պատրվակը՝ նորից մոտենալու համար այն գեղեցիկ էակին, որին վսիսեցրել էր:

— Ձեռք մի տաք դրան, — ասաց աղջիկը շխուժությամբ, — իմ պահպանն է դա: Դա ինձ կօգնի գտնելու ծնողներիս, եթե ես արժանի մնամ նրան: Ո՛հ, թողեք ինձ, պարո՛ն կապիտան: Մայրի՛կ, իմ խեղճ մայրիկ, մայրի՛կ. ո՛ւր ես դու, օգնության հասիր ինձ: Խղճացե՛ք, պարո՛ն Ֆեբուս, վերադարձրեք իմ լանջակալը:

Ֆեբուսն ընկրկեց և սառը շեշտով ասաց.

— Է՛, օրիո՛րդ. տեսնում եմ ահա, որ դուք ինձ չեք սիրում:

— Քեզ չե՞մ սիրում, — գոչեց թշվառ աղջիկը և միաժամանակ կախվելով կապիտանի վզից՝ նստեցրեց իր կողքին: — Ես քեզ չե՞մ սիրում, իմ Ֆեբուս. այդ ի՞նչ ես ասում, չարսի՛րտ. ուզում ես սիրտս պատահապատա՛ն անել: Դե՛ լավ, առ ամեն բան, ինչ ուզում ես, արա ինձ հետ՝ ես քոնն եմ: Ինչի՞ս է պետք իմ թալիսմանը, ինչի՞ս է պետք մայրս, դու ես իմ մայրը, քանի որ քեզ եմ սիրում: Ֆեբո՛ւս, իմ սիրելի Ֆեբուս, ինձ տեսնում ես դու. ես եմ, ե՛ս, ինձ նայիր, ես այն փոքրիկ աղջիկն եմ, որին դու չես ուզում ետ մղել, որ գալիս է, ինքն է գալիս քեզ փնտրելու: Իմ հոգին, իմ կյանքը, իմ մարմինն ու անձը, ամեն ինչ քոնն է, ի՛մ կապիտան: Դե լավ, պետք չէ, չենք ամուսնանա. դա անախորժ է քեզ. բացի դրանից, ով եմ ես՝ փողոցի մի թշվառ աղջիկ, իսկ դու, ի՛մ Ֆեբուս, ազնվական մարդ ես դու: Իրոք որ երևելի բան կլինե՞ր՝ պարուհին ամուսնանում է սպայի հետ: Ի՛նչ հիմարություն էր իմ կողմից: Ո՛հ, Ֆեբո՛ւս, ո՛չ, ես կլինեմ քո սիրուհին, քո զվարճալիքը, քո հաճույքը, երբ ուզենաս, քո կամակատար աղջիկը: Ես հենց դրա համար եմ ստեղծված՝ արատավորված, արհամարհված, անպատիվ, ի՛նչ արած, բայց և՛ սիրված: Ես կլինեմ կանանցից

ամենահպարտը, ամենանրջանիկը: Իսկ երբ պառավեմ կամ տգեղանամ, Ֆերո՛ւս, երբ այլևս ձեզ սիրելու արժանի չեմ լինի, տե՛ր իմ, դուք կհանդուրժեք, որ ծառայեմ ձեզ: Թող ուրիշ կանայք ձեզ համար վզնոցներ ասեղնագործեն, իսկ ես՝ ձեր աղախինը՝ խնամք կտանեմ դրանց: Դուք թույլ կտաք, որ փայլեցնեմ ձեր խթանները, խոզանակով մաքրեմ ձեր բաճկոնակը, սրբեմ ձեր կոշիկների փոշին: Այնպես չէ՞, Ֆերո՛ւս, այդքան բարություն կզիջիք ինձ: Իսկ հիմա, տիրացիք ինձ, Ֆերո՛ւս, ես ամբողջովին քեզ եմ պատկանում, միայն թե սիրիր ինձ: Մեզ՝ գնչուհիներին, միայն այդ է պետք՝ ազատ օդ ու սեր:

Խոսելիս նա թևերը գցել էր սպայի վզի շուրջը, նայում էր նրան ներքևից վեր, աղաչանքի հայացքով և արցունքների միջից փթթած գեղեցիկ ժպիտով: Նրա նուրբ կուրծքը քսվում էր սպայի բաճկոնակի մահուղին ու կոշտ ասեղնագործ նախշերին, կիսամերկ, գեղեցիկ մարմինը գալարվում էր կապիտանի ծնկների վրա: Միրավառ սպան իր հրաշունչ շրթունքները գրոշմեց աղջկա գեղեցիկ թուխ ուսերին: Դեռատի աղջիկը մոլորուն հայացքն առաստաղին, գլուխը ետ գցած՝ բաբախուն սրտով սարսուռում էր այդ համբուլերից:

Հանկարծ Ֆերուսի գլխից վեր նա տեսավ մի ուրիշ գլուխ, կապարագույն, կանաչ ու ջղածիզ մի դեմք, հայացքում՝ դժոխային տառապանք, իսկ այդ դեմքի մոտ մի ձեռք, որ դաշույն էր բռնել: Քահանայի դեմքն ու ձեռքն էին դրանք: Նա ջարդել էր դուռը և խոյացել այդտեղ: Ֆերուսը չէր կարող տեսնել նրան: Դեռատի աղջիկը զարհուրելի տեսիլքից անշարժացավ, սառեց ու համրացավ այն աղավնու նման, որ գլուխը բարձրացնելու պահին տեսնում է իր բնին նայող արծվի կլոր աչքերը: Համբարալզան չկարողացավ նույնիսկ ճշալ: Նա միայն տեսավ, թե ինչպես դաշույնն իջավ Ֆերուսի վրա և գոլորշի արձակելով նորից բարձրացավ:

– Անեծք, – գոչեց կապիտանն ու ընկավ:

Աղջիկն ուշաթափվեց:

Այն վայրկյանին, երբ նրա աչքերը փակվում էին, երբ ամեն զգացում հանգչում էր նրա մեջ, նրան թվաց, թե իր շրթունքներին կրակ

դիպավ, դրոշմվեց ավելի այրող մի համբույր, քան դահճի հրաշեկ
երկաթը:

Երբ նա ուշքի եկավ, տեսավ, որ շրջապատված է գիշերային պա-
հակախմբի զինվորներով, տանում էին արնաթաթախ կապիտանին.
Քահանան անհետացել էր, սենյակի խորքում, դեպի գետը նայող
պատուհանը լայն բացված էր. հատակից վերցնում էին մի թիկնոց,
որ ենթադրում էին, թե պատկանում է սպային: Աղջիկը լսեց, թե
ինչպես իր շուրջը ասում էին.

– Կախարդ կինն է դաշունահարել կապիտանին:

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԻՐՔ

I

ՉՈՐ ՏԵՐԵՎ ԴԱՐՁԱԾ ԱՐԾԱԹԵ ԴՐԱՄԸ

Գրենգուարը և ամբողջ Հրաշքների բակը մահացու անհանգստության մեջ էին: Մեկ ամիս էր արդեն՝ չգիտեին, թե ինչ է եղել էսմերայդան, ինչը սաստիկ տխրեցնում էր Եգիպտոսի դքսին ու նրա մուրացկան բարեկամներին, չգիտեին, թե ինչ է եղել նրա այծը, որ կրկնապատկում էր Գրենգուարի վիշտը: Մի երեկո գնչուհին անհետացել էր և այդ օրվանից այլևս կենդանության նշան ցույց չէր տվել: Բոլոր որոնումներն ապարդյուն էին մնացել: Մի քանի «ընկնավոր» տիպի մուրացկան ասել էին Գրենգուարին, թե տեսել են նրան այդ երեկո սուրբ Միքայել կամուրջի շրջակայքում, մի սպայի հետ գնալիս, սակայն գնչուական ձևով պսակված այդ ամուսինը թերահավատ փիլիսոփա էր և բացի դրանից որևէ մեկից ավելի լավ էր իմանում, թե ի՞նչ աստիճան կույս է իր կինը: Նա կարողացել էր դատել, թե ինչպիսի՜ անհաղթահարելի ամոթխածություն էր առաջանում թալիսմանի ու գնչուհու այդ երկու համադրված առաքինություններից և մաթեմատիկորեն հաշվել էր, թե ինչպիսի՜ դիմադրություն ցույց կտա այդ քառակուսի աստիճանի ողջախոհությունը: Ուրեմն նա ապահով էր այս կողմից:

Ուստի և չէր կարողանում բացատրել այդ անհայտացման պատճառը: Խոր վիշտ էր համակել նրան: Նա նույնիսկ կնիհարեր, եթե դահնարավոր լիներ: Այդ վշտի պատճառով մոռացել էր ամեն ինչ, նույնիսկ իր գրական հակումները, նույնիսկ իր մեծ աշխատությունը՝

*de Figuris regularibus et irregularibus*²⁰⁹, որ հույս ունեւր տպագրել ձեռք բերած առաջին իսկ փողով (որովհետեւ գիշեր-ցերեկ տպագրութեան մասին էր մտածում այն օրվանից հետո, ինչ տեսել էր Հյուզ դը Սեն-Վիկտորի *Didascalon*-ը²¹⁰ տպագրված Վենդրլին դը Սպիրի նշանավոր տառերով):

Մի օր էլ, երբ նա տխուր-տրտում անցնում էր Տուրնեյի քրեական դատարանի առջևից, մի խումբ մարդիկ տեսավ Արդարադատութեան պալատի դարպասներից մեկի առաջ:

– Ի՞նչ է պատահել.– հարցրեց նա այդտեղից դուրս եկող մի երիտասարդի:

– Ձգիտեմ, պարո՛ն,– պատասխանեց երիտասարդը:– Ասում են, թե դատում են հեծյալ պահակազորի սպանած մի կնոջ: Եվ քանի որ պարզվել է, թե կախարդութուն էլ կա այդ գործի մեջ, ապա դատավարութեանը մասնակցելու են հրավիրված եպիսկոպոսն ու հոգևորական ատյանը, իսկ իմ եղբայրը, որ ժողայի սարկավագապետն է, մի վայրկյան իսկ չի բացակայում: Հիմա ես ուզում էի խոսել եղբորս հետ, սակայն բազմութեան պատճառով չկարողացա հասնել նրա մոտ. իսկ դա խիստ փչացնում է իմ գործը, որովհետեւ դրամի կարիք ունեմ:

– Ափսո՛ս, պարո՛ն,– ասաց Գրենգուարը,– շատ կուզենայի փոխ տալ ձեզ. բայց եթե իմ անդրավարտիքի գրպանները ծակ են, ապա բնավ էլ արծաթե փողերը չեն պատճառը:

Գրենգուարը չհամարձակվեց ասել երիտասարդին, թե ինքը ճանաչում է նրա սարկավագապետ եղբորը, որի մոտ այլևս չէր գնացել եկեղեցու խոսակցութունից հետո, իսկ այդ անտեսումը շփոթեցնում էր նրան:

Ճեմարանականն իր ճանապարհը շարունակեց, իսկ Գրենգուարը հետևեց մեծ սրահի սանդուղքը բարձրացող բազմութեանը: Նա կարծում էր, թե տիրութունը փարստելու համար ոչ մի բան այնքան

209. Կանոնավոր և անկանոն ձևերի մասին (լատ.):

210. Ուսմունք (հուն.):

ազդեցիկ չէ, որքան քրեական գործի քննության պատկերը, որովհետև դատավորները սովորաբար ղվարճալի տխմարություն են երևան բերում: Ժողովուրդը, որին խառնված էր և նա, քայլում ու հրում էր իրար լուելյայն: Բավական ժամանակ դանդաղ ու տաղտկալի քայլում էր Գրենգուարը մի երկար ու մութ միջանցքով, որ գալարվում էր պալատում՝ այդ հնադարյան դաստակերտի աղիքի նման: Վերջապես նա հասավ մի ցածր դռան, որ բացվում էր ինչ-որ սրահի վրա: Նրա բարձր հասակը թույլ տվեց հայացքը ման ածել բազմության ալեծուրի գլուխների վրայով և զննել ամեն ինչ:

Սրահն ընդարձակ էր և մռայլ, որից է՛լ ավելի ընդարձակ էր թվում: Օրն իրիկնանում էր. սրահամար, երկար պատուհաններից ներս էին գալիս աղոտ ճառագայթներ ու հանգչում՝ նախքան ցանցակերպ իրար ազուցված և քսնդակազարդ գերաններից շինված կամարակապ առաստաղին հասնելը, որի անհամար դրվագներ կարծես տարտամորեն երերում էին խավարում: Սեղանների վրա, այս ու այնտեղ, արդեն կային բազմաթիվ վառված մոմեր, որոնք շողչողում էին թղթերի վրա խոնարհված քարտուղարների գլուխներին: Սրահի առաջամասը գրավել էր բազմությունը. աջ ու ձախ կողմերում, սեղանների առաջ նստած էին դատական պաշտոնյաներ, խորքում, հստրադսյի վրա, բազմաթիվ դատավորներ, որոնց վերջին շարքերը կորչում էին խավարի մեջ: Անշարժ ու չարագուշակ էին այդ դեմքերը: Պատերը ծածկված էին արքայական անհամար շուշանանյաններով: Դատավորների գլխավերևում հազիվ էր նշմարվում մի խոշոր խաչելություն, իսկ ամեն կողմ ցցված էին նիդակներ ու գեղարդներ, որոնց ծայրերը մոմերի լույսը հրաշիկ սայրերի էր վերածել:

— Պարո՛ն,— հարցրեց Գրենգուարը իր հարևաններից մեկին,— ու՛ք բե՞ր են այդ բոլոր անձնավորությունները, որ շարվիլ են այնտեղ եկեղեցական ժողովի գումարված թեմական առաջնորդների նման:

— Պարո՛ն,— պատասխանեց հարևանը,— աջ կողմում մեծ ատյանի խորհրդականներն են, ձախ կողմում՝ հետաքննական ատյանի

խորհրդականները. ստորագրասները սև զգեստով են, բարձրաստի-
ճանները՝ կարմիր զգեստով:

– Իսկ այնտեղ, դրանցից վերև, – շարունակեց Գրենգուարը, – ո՞վ
է այդ տուռը, կարմրադեմ մարդը, որ քրտինք է թափում:

– Պարոն նախագահն է:

– Իսկ նրա ետևի ոչխարնե՞րը, – վրա բերեց Գրենգուարը, որ,
ինչպես արդեն ասել ենք, չէր սիրում դատական պաշտոնյաներին և
թերևս դրա պատճառը այն ոխն է, որ տածում էր նա Արդարագա-
տության պալատի Հանդեպ՝ իր գրամատիկական գործունեության
ձախողանքից հետո:

– Արքայական դատարանի պարոն զեկուցողներն են:

– Իսկ նրա առջևի այդ վարազը՞:

– Դա էլ գերադույն դատարանի պարոն քարտուղարն է:

– Իսկ աջակողմյան կոկորդիլո՞սը:

– Տյար Ֆիլիպ Լյոլիեն է՝ արքայական արտակարգ դատախազը:

– Իսկ ձախ կողմի այդ գիրուկ սև կատո՞ն:

– Տյար Ժակ Շարմոլյուն է՝ արքայական դատախազը եկեղեցական
ատյանում, Հոգևոր դատարանի պարոնների հետ:

– Շատ լավ, պարո՛ն, – ասաց Գրենգուարը, – իսկ ի՞նչ են անում
այս բոլոր կորովի մարդիկ:

– Դատում են:

– Ո՞ւմ են դատում, ես մեղադրյալ չեմ տեսնում:

– Կին է մեղադրյալը, պարո՛ն: Չեք կարող տեսնել նրան, մեջքը
դարձրել է մեր կողմը, և, բացի դրանից, բազմությունն էլ ծածկել է
նրան: Այ, նայեցեք, այնտեղ է, ուր գեղարդավորների մի խումբ կա:

– Ո՞վ է այդ կինը, – Հարցրեց Գրենգուարը: – Չե՞ք իմանում նրա
անունը:

– Ոչ, պարո՛ն, ես էլ նոր եմ եկել: Ենթադրում եմ միայն, որ կա-
խարդություն կա այս գործում, քանի որ Հոգևոր ատյանն էլ ներկա
է դատավարությանը:

– Շատ լավ,– ասաց մեր փիլիսոփան,– շուտով կտեսնենք, թե ինչպես այս բոլոր դատական պաշտոնյաները կսկսեն մարդու միս ուտել: Դա էլ իր տեսակի ներկայացում է, ինչպես որևէ մի ուրիշ ներկայացում:

– Մի՞թե, պարո՛ն, չեք կարծում, որ տյար ժակ Շարմոլյուն չափազանց հեզ տեսք ունի,– նկատեց հարևանը:

– Հը՛մ,– պատասխանեց Գրենգուարը:– Ես ոչ մի վստահություն չեմ տածում այն հեզությանը, որի քթածակները սեղմված են, իսկ շրթունքները՝ բարակ:

Այստեղ մյուս հարևաններն ստիպեցին երկու զրուցողներին լռել: Խիստ կարևոր ցուցմունք էին լսում:

– Տյա՛րք իմ,– ասում էր սրահի կենտրոնում կանգնած մի պառավ կին, որի դեմքն այնպես էր անհետացել իր հագուստների մեջ, որ կարծես թե քայլող ցնցոտիների մի կույտ էր դա,– տյա՛րք իմ. բանի իսկությունն այնքան ճիշտ է, որքան ճիշտ է, որ ես Ֆալուրդելն եմ, որ քառասուն տարուց ի վեր է. ինչ հաստատված եմ սուրբ Միքայել կամուրջի վրա, ճշտապահորեն ու կանոնավոր վճարում եմ հողային հարկ, բաժ ու սակ. դուռս էլ ներկարար Տասեն-Կայառի տան դիմացն է, գետի հսանքն ի վեր: Այժմ մի իղճուկ պառավ եմ, իսկ առաջ գեղեցիկ աղջիկ էի, տյա՛րք իմ: Քանի սր էր, ինչ ասում էին ինձ.– Ֆալուրդե՛լ, երեկոները երկար ժամանակ ճախարակ մի՛ մանեք, սատանան սիրում է իր կոտոշներով զզել պառավ կանանց մանածը: Հաստատ բան է, որ ուրվական հոգևորականը, այն, որ անցած տարի Տամպլի կողմերումն էր, հիմա Միջնաքաղաքում է թրև գալիս: Ֆալուրդե՛լ, զգուշ կացեք, մեկ էլ տեսաք ձեր դուռը ծեծեց: Մի երեկո էլ ես իմ ճախարակն էի մանում, երբ դուռս ծեծեցին: Հարցրի, թե ով է: Հայհոյեցին: Բաց արի: Երկու տղամարդ ներս մտան: Մի սևազգեստ ու մի գեղեցիկ սպա: Սևազգեստի աչքերն էին միայն երևում, ասես զույգ կրակներ լինեին, իսկ մնացած ամեն ինչ ծածկված էր թիկնոցի ու գլխարկի տակ: Ահա թե ինչ ասացին նրանք.– Սուրբ

Մարթայի սենյակը:— Դա իմ վերևի սենյակն է, տյա՛րք իմ, իմ ամենամաքուր սենյակը: Եվ մի էքյուս փող տվին ինձ: Փողը դրեցի իմ դարակը և ասացի.— Վաղը սրանով փորոտիք կառնեմ Գլորիետի սպանդանոցից:— Եվ բարձրացանք վերև: Հենց որ հասանք վերին սենյակը, երբ ես մեջքս շուռ տվի, տեսա, որ սևազգեստ մարդը չքվեց: Բավական ապշեցի դրանից: Սպան, որ մեծ ազնվականի պես գեղեցիկ էր, ինձ հետ իջավ ցած: Եվ դուրս գնաց: Մի քառորդ կաթ մանելու չափ ժամանակ անցնելուց հետո վերադարձավ նա մի գեղեցիկ, մատղաշ աղջկա հետ, մի իսկական տիկնիկ, որ արևի պես կշողշողար, եթե շնորհքով հագնված լիներ: Այդ աղջիկն իր հետ ունեւր մի նոխազ, մի խոշոր նոխազ, սև թե սպիտակ, լավ չեմ հիշում: Հենց դա էլ մտածմունքի մեջ դրեց ինձ: Աղջիկը, ճիշտն ասած, ինձ չի վերաբերում, բայց նոխազը... Ես այդ կենդանիներին չեմ սիրում, մորուք ունեն ու կոտոչ: Տղամարդու են նման և, բացի դրանից, դեւերի շաբաթահանդես են հիշեցնում: Բայց ես բան չասացի, քանի որ էքյուսն ստացել էի: Այդպես է, չէ՞, պարո՛ն դատավոր, իրավունք ունեի: Կապիտանին ու աղջկան տարա վերևի սենյակը ու թողեցի մենակ, այսինքն՝ նոխազն էլ հետները: Ցած իջա ու նորից սկսեցի մանել: Ես ձեզ պետք է ասեմ, որ իմ տունն ունի առաջին ու երկրորդ հարկ, ետևի կողմից նայում է գետին, ինչպես կամուրջի վրայի մյուս տները, թե՛ առաջին, թե՛ երկրորդ հարկի սենյակների լուսամուտները բացվում են գետի վրա: Ուրեմն ես իմ մանածն էի մանում, բայց չեմ իմանում, թե ինչու մտածում էի այն ուրվական-վանականի մասին, որ նոխազն էր գլուխս գցել, և մեկ էլ ջահել աղջիկը մի քիչ զարմանալի էր զուգված: Հանկարծ վերևից լսեցի մի ճիչ, մի բան ընկավ հատակին ու լուսամուտն էլ բացվեց: Ես վազեցի դեպի իմ լուսամուտը, որ ուղիղ մյուսի տակն է, և տեսա, որ իմ աչքերի առջևից անցավ մի սև բան ու ընկավ ջուրը: Քահանայի զգեստ հագած ուրվական էր դա: Լուսնյակ գիշեր էր. և շատ լավ տեսա նրան, լողում էր դեպի Միջնաքաղաքը: Դրանից հետո, ոտից-գլուխ դողալով,

պահակներ կանչեցի: Եկան գիշերային պահակութեան պարոնները և առաջին բոպեին չիմանալով բանի էությունը և մի քիչ էլ խմած լինելով՝ նույնիսկ ծեծեցին ինձ: Ես հասկացրի նրանց եղելությունը: Վեր բարձրացանք և ի՛նչ տեսանք, իմ խղճուկ սենյակն ամբողջովին արյան մեջ կորած, կապիտանն ամբողջ հասակով փռված՝ դաշույնը վզի մեջ, աղջիկը սուտ մեռած, նոխազն էլ սարսափից գլուխը կորցրած: Տես, է՛, մտածեցի ես, տասնհինգ օր պիտի չարչարվեմ, մինչև հատակը լվամ-մաքրեմ: Հարկ կլինի քերել, սոսկալի բան է դա: Խեղճ երիտասարդին՝ սպային, տարան, տարան և համարյա մերկ աղջկան: Սպասեցեք, հիմա ասեմ: Ամենավատն այս է, որ մյուս առավոտյան, երբ ուզում էի վերցնել էքյուն փորոսիք գնելու համար, մի չոր տերև գտա նրա տեղը:

Պառավել լուեց: Սարսափի մրմունջը չըջան կատարեց բազմություն մեջ:

— Այդ ուրվականից, այդ նոխազից և ամեն ինչից կախարդություն հոտ է գալիս.— ասաց Գրենգուարի մի հարևանը:

— Հապա չոր տերևի՞ց, — վրա բերեց մի ուրիշը:

— Կասկած չկա, որ այդ աղջիկը կախարդ է և հարաբերություն ունի ուրվական վանականի հետ՝ սպաներին կողոպտելու համար:

Գրենգուարն ինքն էլ հեռու չէր այդ բոլորը սարսափելի ու ճշմարտանման համարելուց:

— Ծալուրդել կոչվող կին, — հարցրեց պարոն նախագահը վսեմաշուք շեշտով, — այլևս ոչինչ չունե՞ք հայտնելու արդարադատությունը:

— Ոչ, տե՛ր իմ, — պատասխանեց պառավել, — միայն թե՛ գեկուցագրի մեջ իմ տնակը որակված է ծուռ ու գարշահոտ, իսկ դա սանձարձակ ու վիրավորական լեզու է: Կամուրջի վրայի տները փարթամ տեսք չունեն, որովհետև բնակչությունը շատ-շատ է, բայց չնայած դրան՝ մագործները չեն դադարում այդտեղ ապրելուց, հարուստ մարդիկ են՝ ամուսնացած գեղեցիկ ու մաքրասեր կանանց հետ:

Վեր կացավ այն դատավորը, որ կոկորդիլոսի տպավորություն էր գործել Գրենգուարի վրա:

— Լուսթյուն,— ասաց նա:— Ես խնդրում եմ պարոններին անտես չառնել այն հանգամանքը, որ մեղադրյալի վրա գտնված է մի դաշույն: Ֆալուրդել կոչվող կին, բերե՞լ եք այն տերևը, որին վեր է ածվել դևի ձեզ տված էքյուն:

— Այո, տե՛ր իմ,— պատասխանեց Ֆալուրդելը,— բերել եմ: Ահա: Եվ դատական կատարածուն չոր տերևը հանձնեց կոկորդիլոսին, որ գլուխը վշտաբեկ օրորեց և փոխանցեց նախագահին. սա էլ ուղարկեց եկեղեցական ատյանի արքայական դատախազին, այնպես որ տերևը շրջան կատարեց սրահում:

— Կեչու տերև է,— ասաց տյար Ժակ Շարմոլյուն:— Կախարդության մի նոր ապացույց:

Խոսք առավ մի խորհրդական:

— Վկա՛, երկու հոգի միաժամանակ մտան ձեր տունը, սեազգեստ մարդը, որ, ինչպես դուք տեսաք, նախ անհետացավ, ապա քահանայի հագուստով լողաց Սենա գետով, և սպան: Երկուսից ո՞րը էքյուն տվեց ձեզ:

Պառավը մի վայրկյան մտածեց, ապա պատասխանեց.

— Սպան:

Բազմության միջով մրմունջ անցավ:

— Ա՛,— մտածեց Գրինգուարը,— ահա թե ինչն է խախտում իմ համոզմունքը և կասկածել տալիս այս ամենին:

Այդ միջոցին արքայական արտակարգ դատախազ տյար Ֆիլիպ Լյոլիեն դարձյալ միջամտեց.

— Ես հիշեցնում եմ պարոններին, որ սպանության ենթարկված սպան իր սնարի մոտ գրի առնված ցուցմունքի մեջ հայտարարել է, որ այն ըոպեին, երբ սեազգեստ մարդն իր ճանապարհը կտրել էր, ինքը տարտամորեն մտածել էր, թե դա կարող էր և ուրվական վանականը լինել, և ավելացրել է. թե ուրվականը համառորեն մղել էր իրեն սերտ հարաբերությունների մեջ մտնել մեղադրյալուհու հետ. իսկ երբ ինքը՝ կապիտանը նկատել էր, թե դրամ չունի, սեազգեստը

տվել էր նրան այն էքյուն, որով սպան վճարել էր Ֆալուերդելին: Հետևաբար՝ այդ էքյունը գժոխքի դրամ է:

Այս եզրահանգող դիտողությունը կարծես թե ցրեց Գրենգուլարի և բազմություն մեջ գտնվող մյուս թերահավատների բոլոր տարակուսանքները:

— Պարոնների տրամադրության տակ է գործի թղթապանակը, — ավելացրեց արքայական դատախազը նստելով, — նրանք կարող են ստուգել Ֆեբուս դը Շատոպերի խոսքերը:

Այդ անունը լսելուն պես մեղադրյալը վեր կացավ: Նրա գլուխը բազմությունից բարձր էր, և սարսափահար Գրենգուլարը ճանաչեց էսմերալդային:

Դժգույն էր նա. նրա վարսերը, որ մի ժամանակ այնքան գեղեցիկ հյուսված էին և փայլուն դրամներով դարդարված, այժմ թափվել էին խճված ու անկարգ, չրթունքները կապույտ էին, ակնակապիճները սարսափեցնում էին: Ավա՛ղ:

— Տեղո՛ւս, — ասաց նա մոլորվածի պես. — որտե՞ղ է նա: Ո՛հ, տյա՛րք իմ, նախքան ինձ սպանելը շնորհ արեք, աղաչում եմ, ասացե՛ք՝ կենդանի՞ է նա դեռ:

— Լռեցե՛ք, կի՛ն, — պատասխանեց նախագահը. — այդ չէ մեր գործը:

— Ո՛հ, գթացե՛ք, ասացե՛ք միայն՝ կենդանի՞ է նա, — շարունակեց աղջիկը՝ կցելով նիհարած գեղեցիկ ձեռքերը: Լավեց, թե ինչպես շղթաները ցնցվում էին շրջագգեստի երկայնքով:

— Դե լավ, — ասաց արքայական դատախազը չոր-չոր, — մեռնում է նա: Գո՛հ եք դուք:

Դժբախտ աղջիկն ընկավ իր նստարանի վրա՝ անձայն, անարցունք, մոմե արձանիկի պես գունատ:

Նախագահը կուսացավ իր ոտքերի մոտ նստած մի մարդու վրա, որ ոսկեհուռ գլխարկ և սև զոեստ ուներ, վզին շղթա և ձեռքին՝ գավազան:

— Կատարածո՛ւ, ներս բերե՛ք երկրորդ մեղադրյալին:

Բոլոր ներկաներն իրենց հայացքը հառեցին մի փոքրիկ դռան վրա, որը բացվեց և մեծ սրտատրոփ պատճառելով Գրենգուլարին՝

ճանապարհ տվեց ոսկեգօծ կոտոշներով ու տոտիկներով մի գեղեցիկ այծի: Փառահեղ անասունը մի վայրկյան կանգ առավ շեմքին և վիզը պարզեց, կարծես թե ցցված էր ժայռի կատարին և իր աչքերի առաջ փռված տեսնում էր անծայրածիր հորիզոնը: Հանկարծ նա նկատեց գնչուհուն և ցատկելով մի սեղանի ու մի քարտուղարի գլխի վրայով՝ երկու ուսոյունով հասավ նրա ծնկների մոտ, ապա շնորհագեղ ձևով թավալվեց իր տիրուհու ոտքերի վրա՝ որևէ խոսք կամ փաղաքշանք թախանձելով: Սակայն մեղադրյալը մնաց անշարժ, և խեղճ Զալին էլ չարժանացավ թեկուզ մի հայացքի:

– Պա՛հ... պա՛հ... սա այն զգվելի անասունն է, – ասաց պառավ Ծալուրդելը. – շատ լավ հիշում եմ երկուսին էլ:

Այդ ժամանակ խոսք առավ ժակ Շարմոլյուն.

– Եթե հաճո է պարոններին, մենք ձեռնամուխ կլինենք այծի հարցաքննությանը:

Արդարև, երկրորդ մեղադրյալն էր նա: Այդ դարաշրջանում ավելի պարզ բան չկար, քան որևէ անասունի դեմ հարուցված կախարդական ապրանքի դատավարությունը: Փարիզի պրեռոյության 1460 թվականի Հաշվետվությունների մեջ, իմիջիայլոց, կարելի է գտնել ծախսերի մի հետաքրքրական մանրամասնություն ժիլե-Սուլարի և նրա մատակ խոզի դատավարությունից, որոնք «մահապատժի են ենթարկվել Կորբեյում՝ իրենց անարժան արարքների համար»: Ամեն ինչ կա այդտեղ, փոս փորելու ծախսը խոզը թաղելու համար, հինգ հարյուր խուրձ խռիվ՝ առնվազն Մորսանի նավահանգստից, երեք պինթ²¹¹ գինին ու հացը՝ դատապարտվածի վերջին ընթրիքը, որ եղբայրաբար իրար մեջ բաժանեցին նա ու դահիճը, մինչև անգամ խոզը տասնմեկ օր պահելու ու կերակրելու ծախսը՝ օրական ութ փարիզյան սու: Երբեմն էլ կենդանիներից շատ ավելի հեռուներն էին հասնում: Կառլոս Մեծի և Լյուդովիկոս Հեզահոգու կանոնների ժողովածուները ծանր պատիժներ են սահմանում այն բոցավառ ուրվականների համար, որոնք թույլ են տալիս իրենց երեւալ օդում:

211. Մոտ մեկ լիտր (հին հեղուկաչափ):

Եվ եկեղեցական ատյանի արքայական դատասխազը ազդարարեց.

– Եթե այս այծին տիրապետած դւը, որ դիմադրել է դիվազանման մեր բոլոր ջանքերին, Համառի իր չարամտությունների մեջ և դրանով ահաբեկի այս ատյանը, մենք զգուշացնում ենք նրան, որ Հարկադրված կլինենք նրա նկատմամբ պահանջել կախաղան կամ խարույկ:

Սառը քրտինքը պատեց Գրենգուարին: Շարմոլյուն մի սեղանի վրայից վերցրեց գնչուհու բասկյան դափը և որոշ ձևով պարզելով այծին՝ հարցրեց.

– Ժամը քանի՞սն է:

Այծը խելացի հայացքով նայեց նրան, բարձրացրեց ոսկեգօծ տոտիկը և յոթ հարված տվեց: Արդարև, ժամը յոթն էր: Սոսկումի շարժում անցավ ամբողջ սրահով: Գրենգուարը չկարողացավ այլևս դիմանալ:

– Քանդո՞ւմ է իր տունը, – գոչեց նա բարձրաձայն, – հո տեսնո՞ւմ եք, որ չի իմանում, թե ինչ է անում:

– Սրահի ծայրի գոնհիկնե՛ր, լուությո՛ւն, – ծղրտաց դատական կատարածուն:

Ժակ Շարմոլյուն դափի նույն ձեռնածուլթյուններով այծին բազմաթիվ ուրիշ՝ տարօրինակ հարցեր տվեց օրվա, ամսի ու տարվա մասին և այլն, որոնց ընթերցողն արդեն ականատես է եղել: Եվ այն տեսողական պատրանքով, որ դատական վիճաբանությունների ժամանակ է առաջանում, այդ նույն Հանդիսատեսները, որոնք գուցե շատ անգամ փողոցների խաչմերուկներում ծափահարել էին Ջալիի անմեղ չարածճիւղություններին, դրանցից սարսափեցին Արդարադատության պալատի կամարակապ առաստաղի տակ: Այժն անկասկած սատանան էր:

Դրությունը շատ ավելի վատթարացավ, երբ արքայական դատախազը շարժական տառերով լեցուն կաշե քսակը, որ կախված էր Ջալիի վզից, դատարկեց հատակին, և մարդիկ տեսան, թե ինչպես այծը իր տոտիկով ցիրուցան այբուբենից դուրս հանեց ու կազմեց Ֆերուս

ճակատագրական անունը: Անառարկելիորեն ապացուցված համարվեցին այն դյութանքները, որոնց զոհն էր դարձել կապիտանը, իսկ զնչուհին՝ այդ թովիչ սլարուհին, որ այնքա՛ն հաճախ զմայլեցրել էր անցորդներին իր շնորհագեղությամբ, բոլորի աչքում դարձավ ոչ այլ ինչ, եթե ոչ մի զարհուրելի վամպիր:

Այդ ընթացքում կենդանության ոչ մի նշան ցույց չէր տալիս նա. ո՛չ Զալիի նազելագեղ շարժումները, ո՛չ դատաստանական խորհրդի սպառնալիքները, ո՛չ էլ բազմության խուլ անեծքները, ոչինչ, այլևս ոչինչ չէր հասնում նրա գիտակցությանը:

Աղջկան ուշքի բերելու համար հարկ եղավ, որ մի զինվոր անխղճորեն թափահարի նրան և նախագահը հանդիսավոր կերպով բարձրացնի իր ձայնը.

— Աղջի՛կ, դուք զնչու ցեղից եք, որը հետամուտ է չարագործությունների: Դուք, այս կախարդված և սույն գործին խառը այծի մեղսակցությամբ, սույն մարտի 29-ի գիշերը, խավար ուժերի համագործակցությամբ, թովչանքով ու դավով դաշունահարել ու սպանել եք արքայական նետաձիգների մի կապիտանի՝ Ֆեբուս դը Շատոպերին: Համառո՞ւմ եք ժխտել սա:

— Արհավի՛րք, — գոչեց դեռատի աղջիկը ձեռքերով ծածկելով դեմքը: — Օ՛, իմ Ֆեբուս: Ո՛հ, դժոխայի՛ն զրպարտություն:

— Համառո՞ւմ եք դուք ժխտել, — հարցրեց նախագահը սառնությամբ:

— Այո, ժխտում եմ, — պատասխանեց աղջիկը զարհուրելի շեշտով: Նա ոտքի էր կանգնել, և աչքերը շողշողում էին:

Նախագահը շարունակեց այս անգամ արդեն շեշտակի.

— Հապա ինչպե՞ս եք դուք բացատրում ձեր դեմ ուղղված մեղադրանքը:

Խամբրալդան պատասխանեց՝ բեկբեկուն ձայնով.

— Արդեն ասել եմ: Չեմ իմանում: Մի քահանա է արել, մի քահանա, որին չեմ ճանաչում, մի դժոխային քահանա, որ հետապնդում է ինձ:

– Հենց դա է, – շարունակեց դատավորը, – ուրվական վանականը:

– Ո՛հ, տյա՛րք իմ, գթացեք, ես մի ինչ՞ն աղջիկ եմ միայն...

– Գնչուաստանից, – վրա բերեց նախագահը:

Տյար Ժակ Շարմոլյուն մեղմ ձայնով ասաց.

– Նկատի ունենալով մեղադրյալի ցավալի համառությունը՝ ես առաջարկում եմ գործադրել տանջանք:

– Համաձայն ենք, – ասաց նախագահը:

Դժբախտ աղջիկն ամբողջ մարմնով սարսուռաց: Այնուամենայնիվ, գեղարդավորների հրամանով վեր կայալ և բավական հաստատ քայլերով գնաց՝ Շյարմոլյուեի և եկեղեցական ատյանի քահանաների ետևից, նիզակակիրների երկու շարքի միջով, դեպի մի միջնապուռ, որ հանկարծակի բացվեց ու փակվեց նրա ետևից՝ վշտարեկ Գրենդուարի վրա գործելով աղջկան լափող սարսափելի երախի տպավորություն:

Երբ մեղադրյալն անհետացավ, լսվեց աղերսալի մայուն. փոքրիկ այծն էր լաց լինում:

Նխտոն ընդհատվեց: Խորհրդականներից մեկը, որ հասկացրեց, թե պարոն դատավորները հոգնել են և շատ երկար կտևի տանջանքի վերջանալուն սպասելը, նախագահը պատասխանեց, որ դատավորը պարտավոր է զոհարեբել իրեն իր պարտականությունը:

– Խայտառակ ու զղվիլի աղջիկ, – մրթմրթաց մի ձեր դատավոր, – տանջանքի է ենթարկում իրեն, երբ մարդիկ չեն ընթրել:

II

ԶՈՐ ՏԵՐԵՎ ԴԱՐՁԱԾ ԱՐԾԱԹԵ ՆՐԱՄԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրը ցերեկով լամպերով լուսավորվող խավար միջանցքներում մի քանի աստիճան բարձրանալուց և իջնելուց հետո, համերալդան, շրջապատված իր սգալի թափորով, Արդարադատության պալատի

պահակագործների կողմից հրվեց մի քստմենելի սենյակ: Այդ կլորածև սենյակը գրավում էր այն հաստ աշտարակներից մեկի առաջին հարկը, որոնք մեր օրերում էլ դեռ դուրս են ցցվում այն ժամանակակից շենքերի շերտից, որով նոր Փարիզը ծածկել է հինը: Ոչ մի պատուհան չունենր այդ նկուղը, ո՛չ մի բացվածք, բացի ցածլիկ մուտքից, որ ծածկվում էր երկաթե հսկայական դռնով: Սակայն լույսի պակաս երբեք չէր լինում այդտեղ, հաստ պատի մեջ փորված էր մի հնոց, որտեղ վառվող թեժ կրակը լցնում էր նկուղն իր կարմիր ցուքերով և որևէ լուսարձակումից զրկում մի անկյունում դրված ողորմելի մոմը: Երկաթե վանդակադուռը, որ հնոցը ծածկելու համար էր և այդ պահին բարձրացված էր, թույլ էր տալիս խավար պատի մեջ եղած այդ բոցավառ երախի վերնամասում տեսնել երկաթե ճաղերի ներքևի ծայրերը միայն, որպես սև, սրածայր ու միմյանցից հեռու առամենների շարան, դրա համար էլ հնոցը նման էր այն վիշապների երախին, որոնք հեքիաթների մեջ կրակ են ժայթքում: Հնոցի լույսի տակ կալանավորուհին սենյակի շուրջը տեսավ զարհուրելի գործիքներ, որոնց կիրառումը չէր հասկանում: Սենյակի մեջտեղը, համարյա թե գետնին դրված էր մի կաշվե ներքնակ, որի վրա կախված էր մի փոկ՝ ծայրին էլ կեռ. այդ փոկը միացած էր մի պղնձե օղակի, իսկ կամարակապ առաստաղի կենտրոնում քանդակված մի տափակաքիթ հրեչ էլ իր առամներով պահում էր այդ օղակը: Հնոցի ներսում, կրակի վրա խառնիխուռն դարսված շիկանում էին աքցաններ, ունելիներ, խոփանման լայն երկաթներ: Հնոցի արնագույն ցուլքն ամբողջ սենյակում լուսավորում էր միայն սարսափելի առարկաների դեզը:

Այդ տարտարոսը կոչվում էր պարզապես «հարցաքննության սենյակ»:

Ներքնակի վրա անիռեթորեն նստած էր երդվյալ խոշտանգող Պիերա Տորտրյուն: Նրա ծառաները՝ քառակուսի դեմքով, կաշվե գոգնոցով, կտավե շալվարով երկու գաճաճներ՝ շրջում էին կրակի մեջ դրված երկաթները:

Խեղճ աղջիկը զուր էր գոտեպնդում իրեն, այդ սենյակը մտնելուց հետո սարսափը պատեց նրան:

Մի կողմում շարվեցին պալատի պահակագործերը, մյուս կողմում՝ եկեղեցական ատյանի քահանաները: Մի անկյունում կար սեղան ու թանաքաման, քարտուղարն էլ նստած առջևը: Տյար ժակ Շարմոլյուն չափազանց քաղցր ժպիտով մոտեցավ գնչուհուն և ասաց.

– Միրելի՛ր՝ զավակս, համառո՞ւմ եք ուրեմն ժխտել:

– Այո,– պատասխանեց էսմերալդան արդեն հանգած ձայնով:

– Այդ դեպքում,– շարունակեց Շարմոլյուն,– մեզ համար շատ ցավալի կլինի հարցաքննել ձեզ ավելի խստապահանջությամբ, քան մենք կուզենայինք: Բարեհաճեցեք նեղութուն կրել և նստել այս ներքնակի վրա: Վարպե՛տ Պիերա, տեղ տվեք օրիորդին և փակեցեք դուռը:

Պիերան մրթմրթալով վեր կացավ:

– Եթե դուռը փակեմ,– մուտաց նա,– կրակը կհանգչի:

– Շատ լավ, սիրելի՛ս, բաց թողեք, – համաձայնեց Շարմոլյուն:

Բայց էսմերալդան մնում էր կանգնած: Նա սարսափում էր այդ ներքնակից, որ վրա այնքա՛ն թշվառ մարդիկ էին շղաճգվել: Սարսափը սառեցնում էր նրա ոսկորների ծուծն անգամ: Եվ մնացել էր այդպես քարացած ու ապշած: Շարմոլյուրի տված նշանի վրա երկու ծառաները բռնեցին նրան ու նստած դիրքով դրեցին մահճին: Նրանք ոչ մի ցավ չպատճառեցին էսմերալդային. բայց երբ այդ մարդիկ ձեռք տվին նրան, երբ այդ կաշին դիպավ նրան, նա զգաց, թե ինչպես ողջ արյունը խուժեց սիրտը: Նա մի մոլորուն հայացք նետեց սենյակի շուրջը: Նրան թվաց, որ բոլոր կողմերից շարժվում ու դեպի իրեն են գալիս, որպեսզի սողոսկեն իր մարմնի վրա և խայթեն ու ճմլեն, տանջանքի այդ բոլոր այլանդակ գործիքները, որոնք մինչ այդ նրա տեսած ամեն տեսակ գործիքների նկատմամբ այն էին, ինչ չղջիկները, հազարոտանիններն ու սարգերը միջատների ու թռչունների նկատմամբ:

– Որտե՞ղ է բժիշկը,– հարցրեց Շարմոլյուն:

– Այստեղ եմ,– պատասխանեց մի սեւալպեստ մարդ, որին էսմերալդան դեռ չէր նկատել:

Եվ դեռատի աղջիկը սարսուռաց:

– Օրիո՞րդ,– ասաց եկեղեցական ատյանի արքայական դատախազը փաղաքշական շեշտով,– երրորդ անգամ եմ հարցնում՝ համառո՞ւմ եք միասել այն հանցանքները, որոնց համար մեղադրվում եք:

Այս անգամ էսմերալդան կարողացավ միայն գլխով պատասխանել այդ ձայնը պսկասեց:

– Համառո՞ւմ եք դուք,– ասաց Ժակ Շարմոլյուն:– Այդ դեպքում ես չափազանց ցավում եմ, բայց պարտավոր եմ կատարել իմ պաշտոնի հանձնարարությունը:

– Պարո՞ն արքայական դատախազ,– հարցրեց հանկարծ Պիերան,– ինչի՞ց պիտք է սկսենք:

Շարմոլյուն մի վայրկյան վարանեց հանգ որոնող բանաստեղծի երկմիտ ծամածուծթյամբ:

– Ճութավոր կոչիկից,– ասաց վերջապես նա:

Տարաբախտ աղջիկն այնքան խորապես լքված զգաց իրեն Աստծուց ու մարդկանցից, որ գլուխն ընկավ կրծքին այն թույլ իրի նման, որը սեփական ուժ չուներ:

Խոշտանգողն ու բժիշկը միասին մոտեցան նրան: Միաժամանակ երկու ծառաներն սկսեցին փորփրել իրենց զլվելի զինանոցը: Այդ զարհուրելի երկաթեղենի չխչխկոցից սարսուռաց դժբախտ աղջիկը այն հերձած գորտի նման, որին գալվանական հոսանք են հաղորդում:

– Ո՛հ,– մրմնջաց նա այնքան ցածր ձայնով, որ ոչ ոք չլսեց,– օ՛, իմ Ֆեբուս:

Դրանից հետո՝ նորից թաղվեց անշարժության և քար լուռթյան մեջ: Այդ պատկերը կկեղեքեր ցանկացած սիրտ, բացի դատավորների սրտերից: Թ՛վում էր, թե որևէ թշվառ, մեղավոր հոգու է հարցաքննում սատանան դժոխքի հրակարմիր կամարի տակ: Այդ թշվառ մարմինը, որին շուտով կկառչեր սղոցների, անիվների ու պրկոցների

այդ հրեշափոր մըջնանոցը, այն էակը, որին շուտով շուռուժուռ էին տալու դահիճների ու աքցանների այդ դաժան ճանկերը, այն գողտտրիկ, ճերմակ ու դյուրբարեկ արարածն էր, կորեկի այն խղճուկ հատիկը, որ մարդկային արգարադատությունը աղալու էր տայիս խոշտանգման ահափոր աղորիքներին:

Այդ միջոցին Պիերա Տորտըրյուի ծառաների կոշտացած ձեռքերը կոպիտ կերպով մերկացրին այն գեղեցիկ սրունքներից, այն փոքրիկ ոտքերից մեկը, որ այնքա՛ն հաճախ ճկունությամբ ու նրբագիզությամբ զմայլեցրել էին անցորդներին Փարիզի քառուղիներում:

— Շա՛տ ցավալի է,— մուտաց խոշտանգողը՝ զննելով այդ ոտքի այնքան շնորհագեղ ու նրբակերտ ձեռքը:

Եթե սարկավագապետը ներկա լիներ, անկասկած այդ բույրեղ կհիշեր սարդի ու ճանճի իր սիմփոյը:

Շատ չանցած դժբախտ աղջիկն իր աչքերի վրա տարածված մշուշի միջից տեսավ «երկարաճիտ կոշիկի» մոտենալը, ապա թե ինչպես երկաթագամ տախտակների մեջ կաղապարված իր ոտքն անհետացավ գարհուրելի սարքի մեջ: Այնժամ սարսուփը ուժ տվեց նրան:

— Հանեցեք դա իմ ոտքից,— գոռաց նա զայրացած և ամբողջովին գիսախուիվ ուղղվելով:— Գթացե՛ք:

Նա նետվեց ներքնակից՝ արքայական դատախազի ոտքերին ընկնելու համար, բայց սրունքը կաշկանդված էր կաղնեփայտի ու երկաթեղնեի ծանր զանգվածի մեջ, և նա կուսցավ ճտքավոր կոշիկի վրա ավելի ջարդված, քան թե ինչ կապար ունեցող մեղուկ:

Շարմուղյուի տված նշանով՝ էսմերալդային նորից դրեցին ներքնակին, և երկու խոշոր ձեռքեր նրա նուրբ մեջքը կապեցին առաստաղից կախված փոկին:

— Վերջին անգամն եմ հարցնում խոստովանո՞ւմ եք ձեր հանցանքի փաստերը,— հարցրեց Շարմուղյուն իր անայլայլ բարեմտությամբ:

— Ես անմեղ եմ:

— Այն ժամանակ, օրի՛որդ, ինչպե՞ս եք բացատրում ձեզ մեղադրող հանգամանքները:

– Ավա՛ղ, տեր իմ, չգիտեմ:

– Ուրեմն ժխտո՞ւմ եք:

– Ամեն ինչ:

– Կատարեցեք, – ասաց Շարմուղյուն Պիերային:

Պիերան պտտեց վերամբարձի կոթը, ճտքավոր կոշիկը սեղմվեց, գժբախտ աղջիկին արձակեց մի զարհուրելի ճիչ, որը մարդկային լեզուներին ոչ մեկը չի կարող տառադարձել:

– Դադարեցրեք, – ասաց Շարմուղյուն Պիերային: – Խոստովանո՞ւմ եք, – Հարցրեց նա գնչուհուն:

– Ամե՛ն ինչ – գոռաց դժբախտ աղջիկը: – Խոստովանո՞ւմ եմ, խոստովանո՞ւմ եմ, զթացե՛ք:

Նա հաշվի չէր առել իր ուժերը՝ տանջալի Հարցաքննությանն ընդառաջելիս: Խեղճ երեխան, որի կյանքը մինչ այդ եղել էր այնքա՛ն ուրախ, այնքա՛ն հաճելի ու քաղցր, առաջին իսկ ցավից հաղթվեց:

– Մարդասիրությունն ինձ պարտավորեցնում է ասել ձեզ, – նկատեց արքայական դատախազը, – որ խոստովանելով դուք կարող եք միայն սպասել մահապատժի:

– Իմ Հուսացածն էլ այդ է, – ասաց և նորից ընկավ կաշվե մահճի վրա՝ կիսամեռ, երկձավված, իր կրծքին հանգուցված փոկից կախված:

– Հապա՛, գեղեցկուհի՛ս, գոտեպնդվեցեք մի քիչ, – ասաց վարպետ Պիերան՝ բարձրացնելով նրան: – Դուք այն ոսկե ոչխարի տեսքն ունեք, որ կախված է Բուրգունդիայի պարոն դքսի վզից:

Ժակ Շարմուղյուն բարձրացրեց ձայնը:

– Քարտուղա՛ր, գրեցեք: Դեռատի գնչու աղջի՛կ, խոստովանո՞ւմ եք, որ մասնակցել՝ եք զժոխային Հացկերույթներին, շաբաթահանդեսներին և չարադյութանքներին՝ վնասաբեր ոգիներին, կախարղներին, վհուկներին ու չարքերին Հետ: Պատասխանեցեք:

– Այո, – ասաց էսմերալդան այնքան ցածր ձայնով, որ նրա խոսքը կորավ արտաշնչման մեջ:

– Խոստովանո՞ւմ եք, որ տեսել եք այն խոյը, որին Բեհեյզերուզը ցույց է տալիս ամպերի մեջ շարաթահանդես գումարելու համար, և որին միմիայն կախարդներն են տեսել:

– Այո:

– Խոստովանո՞ւմ եք, որ պաշտել եք Բոֆոմեի գլուխները՝ տաճարականների այդ նողկալի կուռքերը:

– Այո:

– Որ մշտական հարաբերություն եք ունեցել սատանայի հետ, որը երևան է եկել սույն գործով մեղադրվող ընտանի այծի կերպարանքով:

– Այո:

– Վերջապես, դուք խոստովանո՞ւմ եք, որ դեի և ուրվականի, – որ ռամիկ լեզվով կոչվում է չարք վանական, – օգնությամբ վերջին մարտ ամսի քսանիննի գիշերը խոշտանգել ու սպանել եք մի կապիտանի՝ Ֆերուս դը Շատոպեր անունով:

Համերալդան իր խոշոր չաքերը սևևուց դատավորի վրա և պատասխանեց կարծես թե մեքենայարար, առանց ջղաձգություն և ցնցումների.

– Այո:

Ակներև էր, որ ամեն ինչ փշրված էր նրա մեջ:

– Գրեցեք, քարտուղա՛ր, – ասաց Շարմուլյուն և դիմելով խոշտանգողներին՝ ավելացրեց.

– Արձակել կալանավորուհուն և տանել նիստի սրահը:

Երբ կալանավորուհու «կոշիկը հանեցին», եկեղեցական ատյանի արքայական դատախազը զննեց ցավից դեռ ընդարմացած նրա ոտքը:

– Վնաս չունի, – ասաց նա, – մեծ բան չի եղել: Ծիշտ ժամանակին ճչացիք: Դուք դեռ կկարողանայիք պարել, գեղեցկուհի՛:

Ապա նա դարձավ եկեղեցական ատյանի իր արբանյակներին.

– Վերջապես արդարությունը երևան եկավ: Մխիթարական է դա, պարոննե՛ր: Օրիորդը արժանին կհատուցի մեզ, որ իր հետ վարվեցինք ամենայն հնարավոր մեղմությամբ:

ՉՈՐ ՏԵՐԵՎ ԴԱՐՉԱԾ ԱՐԾԱԹԵՆ ԴՐԱՄԻ ՎԵՐՁԸ

Երբ նա գունատ ու կաղալով մտավ նիստի սրահը, հրճվանքի ընդհանուր մրմունջով դիմավորեցին նրան: Բազմության հրճվանքն առաջացավ այն բավարարված անհամբերութեան զգացումից, որ ունենում են թատրոնում ներկայացման վերջին միջնադադարից հետո, երբ բարձրանում է վարագույրը և սկսվում վերջաբանը. իսկ դատավորների հրճվանքի պատճառը շուտով ընթրելու հույսն էր: Փոքրիկ այծը նմանապես ուրախութունից մայեց, ուզեց վազել դեպի իր տիրուհին, բայց կասել էին նստարանին:

Գիշերն ամբողջովին իջել էր: Մոմիրը, որոնց թիվը չէին ավելացրել, այնքան քիչ էին լույս տալիս, որ սրահի պատերը չէին երևում: Խավարը ծածկել էր բոլոր առարկաները մի տեսակ մշուշով: Հազիվ էին երևում մի քանի դատավորների անտարբեր դեմքերը: Իրենց դիմաց, երկար սրահի ծայրին, նրանք կարող էին տեսնել մութ ֆոնի վրա գծագրվող մի տարտամ, սպիտակ կետ: Մեղադրյալն էր դա:

Նա քարշ գալով հասել էր իր տեղը: Երբ Շարմույուն տիրական քայլվածքով նուշնյով հասավ իր տեղը, նախ նստեց, ապա կանգնեց և իր հաջողությունը այնքան էլ հպարտություն չխառնելով՝ ասաց.

– Մեղադրյալն ամեն բան խոստովանեց:

– Գնչո՛ւ արջիկ. – հարցրեց նախագահը, – դուք խոստովանեցի՞ք կախարհություն, պոստկություն և Ծերուս դը Շատոպերին սպանելու բոլոր հանցանքները:

Գնչուհու սիրտը սեղմվեց, խավարում լսվեց նրա հեծկտանքը:

– Ամեն բան, ինչ կամենում եք, – պատասխանեց նա նվաղուն ձայնով, – միայն թե շուտ սպանեցեք ինձ:

– Պարո՛ն արքայական դատախազ եկեղեցական ատյանում, – ասաց նախագահը, – դատական կազմը պատրաստ է լսելու ձեր եզրակացությունը:

Տյար Շարմոլյուն հանեց մի սարսափելի մեծ տետր և ձեռքի բազմաթիվ շարժումներ անելով, ինչպես նաև դատավարական ճարտասանության չափազանցած շեշտադրություններ սկսեց կարգալ լատիներեն գրված մի ճառ, որում մեղադրանքի բոլոր ապացույցները հիմնված էին կիկերոնյան շրջառությունների վրա, ամբասյնդված էին նրա նախասիրած երգիծաբան Պլավտոսի խոսքերով: Մենք ցավում ենք, որ չենք կարող այդ երևելի ճառը մատուցել մեր ընթերցողներին: Հոետորը խոսում էր սքանչելի եռանդով: Նա դեռ նախաբանը չէր ավարտել, բայց քրտինքն արդեն ցայտում էր ճակատից, իսկ աչքերը՝ գլխից: Հանկարծ, ինչ-որ պարբերության կեսին, նա ընդհատեց ճառը, և հայացքը, որ սովորաբար բավական մեղմ ու անմիտ էր, դարձավ շանթարձակ:

– Պարոններ, – գոչեց նա (այս անգամ արդեն ֆրանսերեն, որովհետև տետրակի մեջ դա չկար): – Սատանան այնքան է խառնված այս գործին, որ ահավասիկ ներկա է մեր վիճաբանություններին և կառուցություն է անում նորին վեհափառության պաշտոնյային: Նայեցեք:

Այս ասելիս նա մատնացույց էր անում փոքրիկ այծին, որ տեսնելով Շարմոլյուի ձեռքի թափահարումները, արդարև, կարծել էր, թի տեղն ու ժամանակն է նույն շարժումները կրկնել: Ուստի նստելով հետույքին, առջևի տոտիկներով ու երկարամորուք գլխով իր կարողության չափով վերարտադրում էր եկեղեցական աստվանի արքայական դատախազի պաթետիկ շարժումները: Դա, ինչպես հիշում են ընթերցողները, նրա ամենագեղեցիկ ընդունակություններից մեկն էր: Այս պատահարը, այս վերջին «ապացույցը» մեծ տպավորության գործեց: Կապեցին այծի տոտիկները, և արքայական դատախազը շարունակեց իր պերճախոսությունը: Խիստ երկար տևեց դա, բայց վերջաբանը սքանչելի էր: Ահա դրա վերջին նախադասությունը. ավելացրեք միայն շնչակտուր Շարմոլյուի խոպոտ ձայնը և ձեռքի շարժումները.

– *Ideo, Domini, coram stryga demonstrata, crimine patente, intentione criminis existente, in nominae sanctae Ecclesiae Nostrae-Dominiae*

*parisiensis quae est in saisina habendi omnimodam altam et bassam justitiam in illa hac intermerata Civitatis insula, tenore praesentium declaramus nos requirere, primo, aliquandam pecuniariam indemnitate; secundo, amendationem honorabilem ante portaliu maximum Nostrae-Dominae, ecclesiae cathedralis; tertio, sententiam in virtute cujus ista stryga cum sua capella seu in trivio vulgariter dicto la Grève, seu in insula exeunte in fluvio Secanae, juxta pointam jardini regalis, executae sint!*²¹²

Եվ գլխարկը դնելով՝ նստեց իր տեղը:

– Eheu! – Հառաչեց Գրենգուարը, – *bassa latinits!*²¹³

Վեր կացավ մեղադրյալի մոտ գտնվող մի ուրիշ սևազգեստ մարդ, նրա փաստաբանն էր: Քաղցած դատավորներն սկսեցին մրթմրթալ:

– Փաստաբան՛ն, կարճ կապեցեք, – ասաց նախագահը:

– Պարո՛ն նախագահ, քանի որ իմ պաշտպանյալը խոստովանել է ոճրագործությունը, – պատասխանեց փաստաբանը, – ես միայն մի խոսք ունեմ ասելու, պարոններին: Ահա սալյան օրենսգրքից մի հատված. «Եթե որևէ մարդագայլ մարդ է կիրել և հանցավոր է ճանաչված, կվճարի տուգանք ութ հազար դրնիե, այսինքն՝ փարիզյան երկու հարյուր ոսկի սու»: Կրարեհաճի՞ արդյոք դատաստանական խորհուրդը դատապարտել իմ պաշտպանյալին տուգանքի:

– Վերացված է այդ կետը, – ասաց արքայական արտակարգ դատախազը:

212. Քանի որ, տյա՛րք, սույն կախարդը երևան է բերված և նրա ոճրագործական մտադրությունն ապացուցված է և առկա, Փարիզի սուրբ Աստվածամոր տաճարի անունից, որին իրավունք է տրված վերին և ստորին իրավարություն կիրառել կղզու վրա, որ կոչվում է Միջնաքաղաք, հայտարարում ենք ներկաներին, թե մեր ճառի բովանդակությամբ պահանջում ենք. նախ դրամական տուգանքի ենթարկել նրան, երկրորդ՝ դատապարտել հրապարակային զղջման Աստվածամոր մայր եկեղեցու ալագ դռան առաջ, երրորդ՝ դատապարտել, որի զորությունք այս կախարդն իր այժի հետ մահապատժի ենթարկվի այն վայրում, որ ռամկերեն կոչվում է լա Գրե, կամ Սենա գետի կղզում՝ արքայական պալատի գնդերի դիմաց (լատ.):

213. Ավա՛ղ, ռամիկ լատիներենն է (լատ.)

– Nego!²¹⁴ – առարկեց փաստարանը:

– Քվեարկել, – ասաց մի խորհրդական, – ոճրագործությունն ականերև է, ժամանակն էլ՝ ուշ:

Քվեարկել սկսեցին առանց սրահից հեռանալու: Դատավորները «գլուխներն էին օրորում», խիստ շտապում էին: Մթնշաղի մեջ երեկում էր, թե ինչպես նրանք իրար ետևից հանում էին գլխարկները ի հավանություն այն դժնդակ հարցումին, որ ցածր ձայնով տալիս էր նրանց նախագահը: Թշվառ մեղսորդայլը կարծես թե նայում էր նրանց, սակայն մոլորուն աչքերը այլևս ոչինչ չէին տեսնում:

Այնուհետև կատարածուն սկսեց գրել, ապա մի երկար մագաղաթ մեկնեց նախագահին: Այդ ժամանակ տարարախտ աղջիկը լսեց, որ բազմությունը խլրտաց, նիղականերն իրար դիպան և սառցաշունչ մի ձայն, որ ասում էր.

– Գնչո՛ւ աղջիկ, այն օրը, երբ հաճո լինի մեր տեր արքային, ցերեկվա ժամը տասներկուսին, դուք մեկ շապկով, ոտաբոբիկ, պարանը վզից կախ, մահասայլով կտարվեք Աստվածամոր տաճարի ավագ դռան առաջ՝ հրապարակային մեղա ասելու երկու Ֆնտանոց մեղրամոմե կերոնը ձեր ձեռքին, և այդտեղից կտարվեք Գրեւի հրապարակը, որտեղ խեղդամահ կլինեք քաղաքային կախաղանի վրա, նույնպես և ձեր այս այծը, և եկեղեցական ատյանին կվճարեք երեք առյուծանիչ ոսկի ի հատուցում ձեր կատարած և ձեր խոստովանած ոճիրների, ի հատուցում կախարդություն, վհուկություն, հեշտամոլություն և տյար Ֆեբուս դը Շատոպերի սպանություն: Թող Աստված ընդունի ձեր հոգին:

– Օ՛, երազ է սա, – մրմնջաց էսմերալդան և զգաց, որ բիրտ ձեռքեր տանում են իրեն:

214. Բացատրւմ եմ (լատ.):

LASCIAE OGNI SPERANZA²¹⁵

Միջին դարերում որևէ ավարտված կարևոր շինք համարյա իր բարձրության չափ էլ գետնի տակ էր լինում: Եթե շինված չէր հողի մեջ ամբողջովին մտցված ցցերի վրա, ինչպես Աստվածամոր տաճարը, ապա ամեն մի պալատ, ամրոց կամ եկեղեցի միշտ ունենում էր ստորերկրյա շինություններ: Մայր տաճարներում կար յուրատեսակ ստորերկրյա մի եկեղեցի՝ ցածր, խավար, խորհրդավոր, կույր ու համը՝ լուսառատ և գիշեր-ցիւրեկ երգեհոնի ու զանգերի հնչյուններից թնդացող վերին նավի տակ: Երբեմն այդ ստորերկրյա հարկում ննջեցյալներ էին թաղվում: Պալատների, միջնաբերդերի նկուղահարկերը բանտ էին լինում, երբեմն էլ դարձյալ հանգստարան, իսկ երբեմն էլ՝ երկուսը միասին: Այդ ամրակուռ շինությունները, որոնց ձևավորվելու և «ծլարձակման» եղանակը մենք արդեն բացատրել ենք մի այլ տեղ, ոչ թե պարզասպես հիմք ունենին, այլ այսպես ասած՝ արմատներ, որոնք ճյուղավորվելով մտնում էին գետնի մեջ՝ կազմելով սենյակներ, երկար ու նեղ սրահներ, սանդուղքներ, ինչպես վերևի շենքը: Այսպիսով, եկեղեցիների, պալատների ու միջնաբերդերի հասակի կեսն էր գետնից վեր: Որևէ կարևոր շինքի նկուղները մի ուրիշ շենք էին, ուր փոխանակ բարձրանալու՝ իջնում էին. և այդ ստորերկրյա հարկերը հուշարձանի արտաքին հարկերի զանգվածին հավում էին այնպես, ինչպես լճափի այն անտառներն ու լեռները, որոնք գլխիվայր 'երևում են լճի հայելանման ջրի մեջ: Սենտ-Անտուան միջնաբերդում, Փարիզի Արդարադատության պալատում, Լուվրում այդ ստորերկրյա շինությունները բանտ էին: Այդ բանտերի հարկերը որքան ավելի էին իջնում գետնի մեջ, այնքան ավելի նեղ

215. Թողեք ամենայն հույս (իտ., Դանթեի «Դժոխքից»):

ու մուսայլ էին դառնում: Գոտիների թվի համեմատ էլ ավելանում էին սարսափի նրբությունները: Դանթեն գրանից ավելի լավ բան չի կարողացել գտնել իր դժոխքի համար: Զնդանների այդ ձագարները սովորաբար վերջանում էին քարավազանի նմանող մի ցածր փոսով, որտեղ Դանթեն գրել է իր սատանային, և որտեղ մարդկային հասարակությունը նետում էր մահվան դատապարտվածին: Որևէ թշվառական էակ այդտեղ նետվելուց հետո կարող էր միայն հրածեչտ տալ լուսին, օդին, կյանքին, *ogni speranza*-ին. այդտեղից նա դուրս էր գալիս միայն կախաղան կամ խարույկ բարձրանալու համար: Երբեմն նա փտում էր այնտեղ, իսկ մարդկային արդարադատությունը անվանում էր դա «մոռանալ»: Դատապարտվածը մարդկանց ու իր միջև զգում էր քարերի ու բանտապահների կուտակման ճնշումն իր գլխի վրա, և բանտն ամբողջովին, այդ զանգվածային ամրոցը, այլևս ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի վիթխարի բարդ կողպեք, որ փակում էր նրան կենդանի աշխարհից:

Ահա այս տեսակ մի խոր փոսի մեջ, սուրբ Լյուդովիկոսի փորել տված խոր վիրապներից մեկի, լա-Տուրնելի *in pace*-ի¹⁶ մեջ էին նետել (հավանաբար՝ փախուստ տալուց վախենալով) կախաղանի դատապարտված էսմերալդային՝ Արդարադատության հսկայական պալատը թողնելով նրա գլխի վրա: Խնճճ ճանճ, որ չէր կարող շարժել նրա ամենափոքրիկ քարն անգամ:

Անշուշտ, հավասարապես անարդար էին եղել թե՛ նախախնամությունը, թե՛ հասարակությունը, դժբախտության ու տանջանքի այդքան շոայլություն անհրաժեշտ չէր այնքան նրբակազմ մի արարածի խորտակելու համար:

Այդտեղ էր էսմերալդան՝ խավարի մեջ թաղված, գետնի մեջ դրված ու պատը վրան քաշված: Ով նրան տեսներ այդ վիճակում, արևի տակ նրա ծիծաղելն ու պարելը տեսնելուց հետո, կասրսուար: Գիշերվա պես սառն, մահվան պես սառն, օդի ոչ մի շունչ նրա

216. Զնդան (լատ.): Բառացի՝ խաղաղության մեջ:

վարսերի մեջ, մարդկային ոչ մի ձայն նրա ականջներում, լույսի ոչ մի շողք աչքերի մեջ. երկտակ կռացած, շղթաներից ջարդված, պպզած ջրամանի ու հացի կտորի մոտ՝ բարակ հարդաչերտի վրա, որ նեսոված էր զնդանի ծորումներից նրա տակ կազմված ջրափոսի երեսին: Նա ոչ շարժվում էր, ոչ էլ համարյա թե շնչում, որովհետև տանջվել էլ այլևս չէր կարող: Ֆերուսը, արևը, ցերեկը, ազատ օդը, Փարիզի փողոցները, ծափահարությունների ներքո կատարած պարերը, սիրո քաղցր շաղակրատանքը սպայի հետ. ապա քահանան, կավատ պառավը, դաշույնը, սրյունը, խոշտանգումը, կախաղանը, այս բոլորը դեռ հառնում էին նրա մտքում մերթ որպես երաժշտություն մար առլեցուն ոսկեզօծ տեսիլք, մերթ էլ որպես այլանդակ մղձավանջ: Բայց դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ խավարի մեջ ջնջվող մի վարհուրելի ու տարտամ պայքար կամ հեռավոր երաժշտություն, որ նվազում էին այնտեղ՝ վերևում, երկրի վրա և որ այլևս չէր լսվում այն խորխորատում, ուր ընկել էր գժբախտ աղջիկը: Այդտեղ նետվելուց հետո նա ոչ արթուն էր, ոչ էլ քնած: Այդ գժբախտության մեջ, այդ զնդանում նա չէր կարող իրարից տարբերել քունն ու արթունը, երազն ու իրականությունը, ցերեկն ու գիշերը: Ամեն ինչ խառնված էր, ջարդված, տակնուվրա եղած ու անորոշ տարածված նրա մտքում: Այլևս ո՛չ զգում էր նա, ո՛չ գիտակցում, ո՛չ էլ մտածում, շատ շատ՝ երազում էր: Երբեք կենդանի հակը այդ աստիճան չէր թաղվել անէություն մեջ:

Այդպես ընդարմացած, սառած ու քարացած՝ հաղիվ էր նա երկուբերեք անգամ լսել կափույրի ազմուկը, որ բացվել էր նրա գլխավերևում ինչ-որ տեղ՝ առանց նույնիսկ մի քիչ լույս ներս թողնելու, և որտեղից մի ձեռք գցել էր նրան մի կտոր չոր, սև հաց: Մինչդեռ դա՝ բանտապահի պարբերական այցելությունը, մարդկանց հետ հաղորդակցելու համար մնացած նրա միակ միջոցն էր: Սոսկ մի բան էր դեռ մեքենայաբար զբաղեցնում նրա ականջները, գլխավերևում խոնավությունը մզվում էր կամարակապ առաստաղի քարերի միջով

և հավասար ընդմիջումներով մի կաթիլ ջուր էր պոկվում դրանցից: Նա ապշած լսում էր այն քլթոցը, որ առաջացնում էր ջրի կաթիլն՝ ընկնելով իր կողքի ջրակուլտի մեջ:

Ջրի այդ կաթիլի ընկնելը նրա շուրջը կատարվող միակ շարժումն էր, ժամանակի անցնելը նշող միակ ժամացույցը, միակ ձայնը, որ հասնում էր նրան երկրի մակերեսի վրա լսվող բոլոր ձայներից:

Ամեն ինչ լրիվ լինելու համար ասենք, որ տիղմի ու խավարի այդ անդունդի մեջ երբեմն-երբեմն նա զգում էր ինչ-որ սառը բան, որ անցնում էր նրա ոտքի կամ բաղկի վրայով, և նա սարսուռում էր:

Որքա՞ն ժամանակ էր նա այդտեղ, չգիտեր: Նա միայն հիշում էր ինչ-որ մեկի դեմ արձակված մահապատժի դատավճիռը և այն, որ դրանից հետո իրեն տարել էին, և ապա ինքն արթնացել էր ցրտից սառած խավարի ու լուռթյան մեջ: Նա քարշ էր եկել ձեռք ու ոտքի վրա, բայց երկաթե օղակները ճմլել էին ոտքի կոճերը. իսկ շղթաները ղնզղնգացել էին: Հասկացել էր, որ իր չորս կողմը պատեր են, որ իր տակ կա ջրով ծածկված սալաքար և մի խուրձ ծղոտ: Բայց ո՛չ լապտեր, ո՛չ օդանցք: Այն ժամանակ նստել էր այդ ծղոտին, երբեմն էլ, դիրքը փոխելու համար, զնդանի մեջ եղած քարե սանյուղքի վերջին աստիճանի վրա:

Մի պահ նա փորձել էր համրել այն սև ըրպենները, որ ջրի կաթիլն էր չափում նրա համար, բայց շատ չանցած հիվանդ ուղեղի այդ տխուր աշխատանքն ինքնին ընդհատվել էր նրա գլխում և թշվառ աղջկան թողել անզգա թմբիրի մեջ:

Վերջապես մի օր էլ, ցերեկ թե գիշեր, հայտնի չէր, որովհետև այդ դամբարանում կեսգիշերն ու կեսօրը նույն գույնն ունեին, նա իր գլխավերևում լսեց ավելի բարձր ոտնաձայն, քան սովորաբար բանտապահի ոտնաձայները, երբ նրան հաց ու ջուր էր բերում: Նա բարձրացրեց գլուխը և տեսավ, որ կարմրավուն շողք է երևում զնդանի կամարակապ առաստաղի մեջ շինված դռան թե կափույրի ճեղքերից: Միաժամանակ ծանր երկաթամածը ճռնչաց, կափույրը

ծղրտոցով պտտվեց իր ժանգոտ ծխնինների վրա: Կալանավորը տեսավ մի լապտեր, մի ձեռք և մարդկային երկու մարմնի ներքևի մասերը, դուռը խիստ ցած էր, որպեսզի կարողանար տեսնել նաև նրանց գլուխները: Լույսն այնքան սաստիկ ծակեց նրա աչքերը, որ ստիպված եղավ փակել:

Երբ նորից բացեց աչքերը, դուռը փակված էր, լապտերը դրված սանդուղքի աստիճաններից մեկի վրա, և նրա առաջ կանգնած էր միայն մի մարդ: Սև վեղարավոր սքեմը հասնում էր մինչև նրա ոտքերը, նույն գույնի երեսակալը ծածկում էր դեմքը: Ոչինչ չէր երևում նրա անձից՝ ո՛չ երեսը, ո՛չ էլ ձեռքերը: Դա ուղղաձիգ դիրքով մի սև, երկար պատանք էր, որի տակ զգացվում էր ինչ-որ բանի խլրտոցը: Դատապարտյալը մի քանի բուռ և շեշտակի նայեց այդ ուրվականակերպին: Բայց ո՛չ մեկն էր խոսում, ո՛չ մյուսը: Թվում էր, թե երկու արձան դեմ առ դեմ զննում էին իրար: Այդ նկուղում կարծես թե միայն երկու բան էին կենդանի՝ լապտերի պատրույգը, որ առկայծում էր օդի խոնավության պատճառով, և առաստաղի ջրի կաթիլը, որ լապտերի անկանոն ճթճթոցը կտրում էր իր միօրինակ տկտկոցով, և լապտերի լույսը համակենտրոն վետիվտումներով դողդողացնում յուզոտ ջրափոսի վրա:

Վերջապես կալանավորուհին խզեց լուռթյունը.

– Ո՛վ եք դուք:

– Քահանա եմ:

Այդ բառը, առոգանությունը, ձայնի հնչյունը սարսուացրին աղջկան: Քահանան խուլ արտաբերումով շարունակեց.

– Պատրաստ եք դուք:

– Ինչի՞:

– Մեռնելու:

– Օ՛, – գոչեց նա, – չո՛ւտ կլինի:

– Վաղը:

Նրա գլուխը, որ ուրախությամբ բարձրացել էր, նորից կախվեց կրճքին:

– էլի երկար պիտի սպասեմ,– մրմնջաց նա.– ի՞նչ դժվարութիւն էր նրանց համար, որ այսօր լինէր:

– Ուրեմն շա՛տ դժբախտ եք դուք,– հարցրեց քահանան փոքր լուսթյունից հետո:

– Շատ եմ մրսում,– պատասխանեց կալանավորուհին:

Եվ ոտքերն առավ ձեռքերի մեջ. մրսող մարդկանց այն սովորական շարժումը, որ, ինչպես տեսանք, անում էր Ռոլանի աշտարակի ապաշխարուհին: Եվ նրա ատամները կափկափեցին:

Քահանան, թվում էր, թե իր վեպարի տակից աչքերը ման է ածում զնդանում:

– Անլո՛ւյս, անկրա՛կ, ջրի մե՛ջ, սարսափելի է:

– Այո,– պատասխանեց դատապարտյալը այն զարմացած արտահայտութեամբ, որ դժբախտութիւնն էր տվել նրան:– Ցերեկը ամենքի համար է: Ինչո՞ւ ինձ միայն գիշեր են տալիս:

– Գիտե՞ք, թե ինչի համար եք դուք այստեղ,– հարցրեց քահանան դարձյալ մի փոքր լուելուց հետո:

– Կարծեմ թե իմացա,– պատասխանեց աղջիկը՝ նիհար մատներով շոյելով հոնքերը, կարծես թե հիշողութեանն օգնելու համար,– բայց հիմա չգիտեմ:

Հանկարծ նա սկսեց երեխայի պես լաց լինել:

– Կուզենայի դուրս գալ այստեղից, պարո՛ն: Մրսում եմ, սարսափում եմ. չգիտեմ ի՛նչ կենդանիներ կան, որ սողոսկում են իմ մարմնի վրա:

– Դե լավ, հետեեցեք ինձ:

Եվ այս ասելով՝ քահանան բռնեց նրա թևը: Դժբախտ աղջիկը սառել էր մինչև ուղևուծուծը: Այնուամենայնիվ, այդ ձեռքը սառնութեան ազդեցութիւնը գործեց կալանավորուհու վրա:

– Մ,– մրմնջաց նա,– մահվան սառցաշունչ ձեռքն է դա: Մ՞վ եք դուք:

Քահանան բարձրացրեց իր կնգուղը, աղջիկը նայեց: Դա այն չարագուշակ դեմքն էր, որ վաղուց էր հետապնդում նրան, դէի այն

գլուխը, որ երևացել էր նրան Ֆալուրդելի տանը՝ նրա պաշտելի Ֆեբուսի գլխի վերևը, այն աչքերը, որոնց փայլատակելը վերջին անգամ տեսել էր դաշույնի կույքին:

Այդ քահանայի երևալը, որ միշտ այնքան ճակատագրական էր եղել դատապարտյալի համար և այդպես հրել էր նրան մի դժբախտությունից մյուսը ու հասցրել խոշտանգման, հանեց նրան իր թմրությունից: Նրան թվաց, թե պատուվում է այն թանձր քողը, որ իջել էր իր հիշողության վրա: Նրա գծնդակ փորձանքի բոլոր մանրամասնությունները, սկսած Ֆալուրդելի տան գիշերային տեսարանից մինչև Տուրել աշտարակը նետվելու դատապարտվելը, միաժամանակ վերակենդանացան նրա հիշողության մեջ ոչ թե տարտամ ու խառնիխուռն, ինչպես մինչ այդ, այլ որոշակի, մերկ, ցայտուն, թրթռուն ու ահավոր: Համարյա թե աղոտացած և ծայրահեղ տառապանքից գրեթե ջնջված այդ վերհուշները, նրա առաջ կանգնած մտայլ մարդու ներկայութամբ, նորից պայծառ երևացին նրա մտքում, ինչպես կրակի մոտեցնելն է սալիտակ թլլթի վրա միանգամայն որոշակի երևան բերում այն անտեսանելի տառերը, որ գրել են ծածկագրական թանաքով: Նրան թվաց, թե իր սրտի բոլոր վերքերը նորից բացվեցին և սկսեցին արյուն ծորալ միանգամից:

— Վա՛յ,— գոչեց նա ձեռքերն աչքերին դնելով և ջղաձգորեն դողալով:— Քահանա՛ն է սա:

Հետո ջլատված ձեռքերն ընկան ցած, նա մնաց նստած՝ գլխահակ, աչքերը սևևուած գետնին, լուռ և շարունակելով դողալ:

Քահանան նայում էր նրան այն ուրուրի աչքերով, որը երկնքում, խիստ բարձր, երկար ժամանակ պտուղտներ է գործել ցորենի արտում կծկված խեղճ արտույտի շուրջը և երկար ժամանակ լուռ ու մունջ նեղացրել է իր թուխքի ահեղ շրջանակները: Ու հանկարծ խոյացել է իր որսի վրա կայծակե նետի նման և այժմ դողողջուռ թռչնիկին պահել է իր մագիլների մեջ:

Դատապարտյալն սկսեց թույլ ձայնով մրմնջալ.

– Վերջացրե՛ք, վերջացրե՛ք, իջնցրեք վերջին հարվածը,– և գլուխը սարսափած քաշեց ուսերի մեջ այն ոչխարի պես, որ սպասում է մսագործի լախտի իջնելուն:

– Ուրեմն ես սարսափ եմ պատճառում ձեզ,– ասաց վերջապես քահանան:

Աղջիկը չպատասխանեց:

– Մի՞թե ես սարսափ եմ պատճառում ձեզ,– կրկնեց նա:

Համերալդայի շրթունքները կծկվեցին, կարծես թե ծիծաղում էր նա:

– Այո,– ասաց:– Դահլիճը ծաղրում է դատապարտյալին: Քանի՛ ամիս է ահա, ինչ նա հետապնդում է ինձ, սպառնում է ու սարսափեցնում: Առանց նրան, Աստված իմ, որքա՛ն երջանիկ էի ես: Նա՛ ինձ նետեց այս անդունդը: Մ՛վ երկինք, նա՛ սպանեց.... այո, նա սպանեց իմ Ֆերուսին:– Այստեղ արցունքներից խեղդվելով և աչքերը քահանային հառելով՝ գոչեց.– Օ՛, թշվառակա՛ն, ո՞վ եք դու ք, ես ի՞նչ եմ արել ձեզ, ինչո՞ւ եք այդչափ ատում ինձ: Ավա՛ղ, ի՞նչ ունեք իմ դեմ:

– Ես քեզ սիրում եմ,– գոչեց քահանան:

Կալանավորուհու արցունքներն իսկույն դադարեցին, և նա նայեց նրան ապուշի հայացքով, իսկ քահանան ծունկ էր չոքել և բոցավառ աչքերով լափում էր աղջկան:

– Լսո՞ւմ ես, սիրում եմ քեզ,– նորից գոչեց նա:

– Ինչպիսի՛ սեր,– ասաց աղջիկը սարսռալով:

– Գեհնապարտի սեր,– վրա բերեց քահանան:

Երկուսն էլ մի քանի րոպե մնացին լուռ՝ իրենց հուզմունքի սաստկությունից ճխլված, քահանան խելակորույս, աղջիկը՝ ասլշած:

– Լսի՛ր,– ասաց վերջապես քահանան, արտակարգ հանդարտություն էր այժմ համակել նրան:– Հիմա ամեն ինչ կիմանաս: Հիմա ես քեզ կասեմ այն, ինչ մինչև այսօր հազիվ եմ համարձակվել ասել ինքս ինձ, երբ գաղտագողի հարցաքննել եմ իմ խիղճը գիշերվա այն խոր ժամերին, երբ այնքան խավար կա և երբ, ինձ թվում է, թե Աստված մեզ չի տեսնում այլևս: Լսի՛ր: Քեզ հանդիպելուց առաջ, դեռատի՛ աղջիկ, ես երջանիկ էի:

– Ես էլ, – հառաչեց կայանավորուհին թույլ ձայնով:

– Մի՛ ընդհատիր ինձ: Այո, երջանիկ էի ես, համենայն դեպս՝ կարծում էի, թե երջանիկ եմ: Մաքուր էի ես, Հոգիս յի էր պայծառ լույսով: Ոչ մի գլուխ ավելի խրոխտ և ավելի հրճվագին չէր բարձրանում, քան իմը: Քահանաներն իմ խորհուրդն էին հարցնում ողջախոհության վերաբերյալ, գիտնականները՝ գիտության: Այո, գիտությունն ամեն ինչ էր ինձ համար, իմ քույրն էր նա, և մի քույրը բավական էր ինձ: Չի կարելի ասել, որ իմ տարիքի ավելանալու հետ այլ մտքեր չէին այցելում ինձ: Հաճախ իմ մարմինը ընդվզել էր, երբ դեռատի կին էր անցել իմ կողքից: Տղամարդու այդ սեռի ու արյան զորությունը, որ ես, անխելք պատանիս, կարծում էի, թե խեղդել եմ այս կյանքի համար, քանի անգամ ջղոճգորին բարձրացրել էր այն երկաթե ուխտի շղթան, որ ինձ՝ թշվառականիս, գամում ու դրոշմում է եկեղեցու խորանին: Սակայն ծոմապահությունը, աղոթքը, ուսումնասիրությունը, վանական կյանքի խստապահանջությունները Հոգիս դարձրել էին իմ մարմնի տիրակալը: Բացի դրանից, ես խույս էի տալիս կանանցից, մանավանդ՝ բավական էր, որ բաց անեի որևէ գիրք, և ահա իմ ուղեղի բոլոր անմաքուր ծխերը ցնդում էին գիտության փառահեղության առաջ: Ես զգում էի, թե ինչպես մի քանի րոպեի մեջ երկրային թանձր պատկերները փախչում են հեռու, և ես նորից եմ գտնում իմ հոգու խաղաղությունը, շլացած ու պայծառացած՝ հավիտենական ճշմարտության հանդարտ ճաճանչավորման դեմ հանդիման: Քանի դեռ դեռ ինձ վրա գրոհելու համար ուղարկում էր միայն կանացի տարտամ ուրվագծեր, որոնք ցաք ու ցրիվ անցնում էին իմ աչքերի՝ առջևից եկեղեցում, փողոցներում, մարգագետիններում և հազվադեպ էին վերադառնում իմ երազներում, ես դյուրությամբ էի հաղթում նրան՝ դեհին: Ավա՛ղ, եթե ես չկարողացա պահել այդ հաղթանակը, ապա հանցավորն Աստված է, որ մարդուն ու դեհին հավասարագոր չի ստեղծել: Ակա՛նջ դիր, մի օր էլ...

Այստեղ քահանան կանգ առավ, և կայանավորուհին լսեց, որ նրա կրծքից դուրս էր գալիս հառաչանքի մի խոխուռոց, որ հիշեցնում էր արմատախիլ ելող մի ինչ-որ բան:

Նա շարունակեց.

— ...Մի օր էլ ես արմուկներիս վրա կռթնել էի իմ խցի պատուհանին... Ի՞նչ գիրք էի կարդում... Օ՛, ամեն ինչ տակնուվրա է եղել իմ գլխում: Կարդում էի ուրեմն: Իմ պատուհանը նայում էր հրապարակի վրա: Դափի ու նվագի ձայն լսեցի: Զայրացած, որ այդպես խանգարում են իմ երազանքը, նայեցի հրապարակին: Այն, ինչ ես տեսա, տեսնում էին ուրիշ շատ-շատեր էլ. և սակայն այդ տեսարանը մարդկային աչքերի համար չէր ստեղծված: Կեսօր էր, պայծառ արևոտ օր, և հրապարակի մեջտեղը պարում էր մի էակ: Այնքան գեղեցիկ մի էակ, որ Աստված կղերադասեր նրան սուրբ կուլսից և նրան կընտրեր որպես իր մայր և կուզենար նրանից ծնվել, եթե նա գոյություն ունենար իր ստեղծվելու ժամանակ: Աքանջելի էին նրա աչքերը ու սև. նրա սև վարսերի միջից մի քանի մազ արևի տակ հուրհրատում էին ոսկե թեյերի պես: Նրա ոտքերն անհետանում էին իրենց շարժման ընթացքում անիվի շառավիղների նման, երբ նա արագ է պտտվում: Նրա գլխի շուրջը, սև հյուսերի մեջ, կային մետաղե զանակներ, որ փայլում էին արևի տակ և աստղապսակ կազմում ճակատի վրա: Նրա շրջապեսսօր, որի վրա մանր վահանակներ էին սփռված, հազարավոր կայծերով փայլում էր կապույտ ֆոնի վրա, ինչպես ամռան գիշեր: Նրա թուխ ու ճկուն բազուկները հանգուցվում ու արձակվում էին մեջքի շուրջ՝ զույգ շարժի նման: Նրա մարմնի ձևն արտակարգ գեղեցկութուն ունի: Օ՛, ինչպիսի՜ գմայլելի կերպարանք էր նա, որ որպես լուսապատկեր գծագրվում էր անգամ արևի լույսի մեջ... Ավա՛ղ, դեռատի՛ աղջիկ, այդ դու էիր: Զմայլած, արբեցած ու դյութված՝ ես այլևս չկարողացա զսպել ինձ և եկա քեզ դիտելու: Այնքան նայեցի ես քեզ, մինչև որ հանկարծ սարսափից սարսուռացի. գգացի, որ ճակատափրը բռնում է ինձ:

Քահանան ընկճված՝ մի ընդհանուր ևս կանգ առավ, ապա շարունակեց.

– Արդեն կիսով չափ կախարդված՝ փորձեցի կառչել որևէ բանից և կանգ առնել իմ անկման մեջ: Վերհիշեցի այն ծուղակները, որ սատանան արդեն մինչ այդ լարել էր իմ դեմ: Այն էակը, որ իմ աչքերի առաջ էր, օժտված էր այն գերմարդկային գեղեցկությամբ, որ միայն երկնքից կամ դժոխքից կարող է գալ: Անկասկած, դա Հասարակ աղջիկ չէր, որ ստեղծված է մեր Հողի մի փոքր քանակությամբ և ներքուստ աղքատիկ կերպով լուսավորված է կանացի Հոգու երերուն ճառագայթով: Հրեշտակ էր դա, բայց խավարի ծնունդ, բոցից և ոչ թե լուսից կերտված: Այն ընդհանուր, երբ ես մտածում էի այս մասին, տեսա քո կողքին մի այծ, շաքարահամ զեմի անասուն, որ խնդուն նայում էր ինձ: Միջոցին արևը նրա կոտորները դարձնում էին հրեղեն: Այդ ժամանակ ես տեսա դեի ծուղակը և այլևս կասկած չմնաց, որ դու գալիս էիր դժոխքից և գալիս էիր Հատկապես ինձ կործանելու համար: Ես այդպես հավատացի:

Այստեղ քահանան նայեց կայանավորուհու դեմքին և սառնությամբ սովեցրեց.

– Եվ դեռ այդպես եմ հավատացած: Սակայն հմայքը ներգործում էր քիչ-քիչ. քո պարը պտտվում էր իմ ուղեղում, և զգում էի, որ խորհրդավոր կախարհանք է կատարվում իմ մեջ: Այն ամենը, որ պետք է արթուն մնար իմ Հոգու մեջ, նիրհում էր. և այն մարդկանց նման, որոնք ձյան մեջ են մեռնում, ես էլ հաճույք էի զգում այդ նիրհի գալուց: Հանկարծ դու սկսեցիր երգել: Ի՞նչ կարող էի անել ես՝ թշվառականս: Քո երգն էլ ավելի դյուրեթիչ էր, քան քո պարը: Ես մտածեցի փոխաչել: Անկարելի բան: Գամված էի ես, արմատ նետած Հողի մեջ: Ինձ թվում էր, թե սալահատակի մարմարը բարձրացել-հասել է իմ ծնկներին: Ստիպված եղա մնալ մինչև վերջ: Ուրբերս սառույց էին կտրել, սակայն գլուխս եռում էր: Վերջապես, թերևս դու գթացիր ինձ, դադարեցիր երգել և անհետացար: Իմ աչքերից ու ականջներից աստիճանաբար ցնդեցին շլացուցիչ անսխիլի անդրադարձումն ու

Թովիչ երաժշտության արձագանքը: Այն ժամանակ ես ընկա լուսամուտի գոգի անկյունն ավելի քարացած, բայց և ավելի թույլ, քան տեղահանույսձ արձանը: Եկեսցեի զանգահարությունն արթնացրեց ինձ. ես փախա, բայց ավա՛ղ, իմ մեջ կար մի ընկած բան, որ չէր կարող վեր կենալ, մի հանկարծահաս բան, որից չէի կարող ճողոպրել:

Նա մի դադար էլ առավ, ապա շարունակեց.

– Այո. այդ օրվանից սկսած իմ մեջ բույն դրեց մի մարդ, որին ես չէի ճանաչում: Ես ցանկացա գործադրել իմ բոլոր դեղ ու դարմաները՝ մենաստանը, խորանը, աշխատանքն ու գրքերը: Հիմարությո՛ւն: Օ՛, որքա՛ն ունայն է հնչում գիտությունը, երբ հուսահատած գալիս է նրան բախվելու կրքերով լեցուն գլուխը: Գիտե՞ս արդյոք, դեռատի՛ աղջիկ, թե այդ օրվանից հետո ես ինչ էի շարունակ տեսնում գրքի ու իմ միջև: Քեզ, քո ստվերը, այն լուսեղեն հայտնության պատկերը, որ մի օր կտրեց-անցավ իմ առջևի տարածությունը: Սակայն այդ պատկերն այլևս նույն գույնը չուներ, մուգ էր նա, մահագույժ, խավարչտին, ինչպես այն սև շրջանակը, որ երկար ժամանակ հետապնդում է արեգակին շեշտակի նայած անզգույշ մարդու տեսողությունը:

Չկարողանալով ազատվել դրանից, շարունակ քո երգի հնչյունները լսելով իմ գլխի մեջ, միշտ քո ոտքերի պարելը տեսնելով իմ ժամագրքի վրա, գիշերը երազում անվերջ քո սահելն զգալով իմ մարմնի վրա՝ ուզեցի նորից տեսնել քեզ, շոշափել քեզ, իմանալ ով ես դու, տեսնել, թե իրո՞ք դու նման ես այն իդեալական պատկերին, որ մնացել էր իմ մեջ քեզնից, իրականությունը տեսնելով՝ փշրել թերևս իմ երազը: Համենայնդեպս, ես հույս ունեի, որ նոր տպավորությունը կջնջիր առաջինը, իսկ առաջինն անտանելի էր դարձել ինձ համար: Եվ ես փնտրում էի քեզ: Եվ նորից տեսա: Վա՛յ ինձ: Երբ քեզ տեսա երկու անգամ, ուզեցի տեսնել հազար անգամ, ուղևից տեսնել միշտ: Այն ժամանակ – կարելի՞ էր այլևս կանգ առնել դժոխքի այդ զառիվայրի վրա, – այն ժամանակ ես այլևս ինձ չէի պատկանում:

Սատանան պարանի մի ծայրը կապել էր իմ թևերին, մյուս ծայրն էլ հանգուցել իր ոտքին ու տանում էր ինձ: Ես էլ դարձա քեզ պես անհաստատ ու թափառակալ: Սպասում էի քեզ տների դռնածածկերի տակ, աչալուրջ փնտրում էի փողոցների անկյուններում, դարանակալ հետևում իմ աշտարակի բարձունքից: Ամեն երեկո ես խորանում էի ինքս իմ մեջ ավելի դյուլթված, ավելի հուսահատված, ավելի կախարդված և ավելի կործանված:

Ես իմացել էի. թե ով ես դու՝ բոշա, գնչուհի, գիտան, ձինգարա: Կարելի՞ էր այլևս կասկածել կախարդություն: Լսիր: Ես հույս ունևիր, որ դատական մի գործ կապատի ինձ հմայքից: Մի կախարդ կին դյուլթել էր Բրունո Աստիացուն. սա էլ խարույկի մատնեց նրան և այնուհետև բուժվեց: Ես այդ գիտեի: Ցանկացա այդ դեղն էլ փորձել: Փորձեցի արգելիլ, որ դու գաս Աստվածամոր տաճարի հրապարակը՝ հուսալով, որ եթե չգաս այնտեղ, ես կմոռանամ քեզ: Բայց դու բանի տեղ չդրիր դա: Նորից եկար: Հետո մտածեցի առևանգել քեզ: Մի գիշեր էլ դու արդեն ինձնից խույս տալ չէիր կարող: Մենք երկու հոգի էինք: Քեզ բռնել էինք արդեն, երբ վրա հասավ այն թշվառական սպան: Նա ազատեց քեզ: Այդպես նա սկիզբ էր դնում քո, իմ և իր դժբախտությունը: Վերջապես չիմանալով ինչ անեմ, ինչպես վարվեմ, մատնեցի քեզ եկեղեցական դատարանին: Կարծում էի, թե կբուժվեմ, ինչպես Բրունո Աստիացին: Տարտամորեն կարծում էի նաև, որ դատավարությունը քեզ կհանձնի ինձ, որ բանտում ես քեզ կունենայի իմ բռի մեջ, կտիրանայի քեզ, որ այդտեղ չէիր կարող խույս տալ ինձանից. քանի որ դու վաղուց էիր տիրացել ինձ, ուստի և ես էլ իմ հերթին պետք է տիրանայի քեզ: Երբ չարիք ես անում, լրիվ պետք է անես: Հրեշայինի մեջ խելագարություն է կես ճամփին կանգ առնել: Ոճրագործություն ծայրահեղությունը հրճվանքի մոլուցք ունի: Քահանան ու կախարդ կինը կարող են վայելքի մեջ միաձուլվել զնդանի ծղոտի խուրձի վրա:

Ես քեզ մատնեցի ուրեմն: Հինց այդ ժամանակ էր, որ ահաբեկում էի ես քեզ իմ հանդիպումներով: Այն դավր, որ նյութում էի քո դեմ, փոթորիկը, որ կուտակում էի քո գլխին, ժայթքում էին ինձանից որպես սպառնալիք ու կայծակ: Այնուամենայնիվ, ես դեռ վարանում էի: Իմ նախագիծն ունեւր զարհուրելի կոցմեր, որոնք ստիպում էին ինձ նահանջել:

Գուցե և ես հրաժարվեի նրանից, գուցե և այդ դադրելի մտահոգացումը չորսնար իմ ուղեղում՝ առանց պտուղ տալու: Եւ կարծում էի, թե միայն ինձնից է կախված այդ դասական դործին ընթացք տալը կամ կարճելը: Սակայն ամեն մի վատ մտահոգացում անսոցք է և ուզում է դառնալ իրողութուն, բայց այնտեղ, ուր ես ամենագոր էի զգում ինձ, այնտեղ ճակատապիրտ ավելի էր ուժեղ, քան ես: Ավա՛ղ, ավսո՛ւ. քեզ առնողը նա է՝ ճակատապիրտ, նա է քեզ հանձնել այն մեքենայի սարսափելի անիվներին, որ դարսնուկալ կառուցել էի ես: Լսի՛ր, մոտենում եմ վերջաբանին:

Մի օր, մի ուրիշ արևաշող օր, իմ առջևից անցավ մի մարդ, որ քո անունն էր կրկնում ու ծիծաղում, իսկ աչքերի մեջ վավաշոտութուն կար: Անե՛ժք: Ես հետևեցի նրան: Մնացածը զու գիտես:

Քահանան լռեց:

Դեռատի աղջիկը միայն մի բառ կարողացավ գտնել.

– Ո՛վ իմ Ծերուս:

– Չլսե՛մ այդ անունը, – ասաց քահանան ուժգնորեն բռնելով նրա թևը: – Մի՛ արտասանիր այդ անունը: Օ՛, որքա՛ն թշվառ ենք մենք, հենց այդ անունը կործանեց մեզ: Կամ թերևս մենք բոլորս էլ կորած ենք ճակատագրի անբացատրելի խաղով: Դու տառապում ես, այնպես չէ՞, խավարը կուրացնում է քեզ, զնդանը՝ պարուրում, բայց գուցե դու դեռ որոշ հույս ունես քո մեջ, թեկուզ և քո մանկական սերը այդ դատարկամիտ մարդու հանդեպ, որը խաղ էր անում քո սրտի հետ: Մինչդեռ ես իմ մեջ եմ կրում զնդանը, իմ ներսում ձմեռ է, սառույց, հուսահատութուն. գիշերն է պատել հոգիս: Գիտե՞ս արդ՞յոք՝ որքա՛ն եմ ես տառապել: Ես ներկա էի քո դատապարտությանը.

նստած էի եկեղեցական ատյանի աթոռներին: Այո, քահանայական այդ կնգուղներից մեկի տակ տեղի էին ունենում մի գեհնապարտ մարդու գալարումները: Ես այնտեղ էի, երբ քեզ բերին, ես այնտեղ էի, երբ քեզ հարցաքննեցին:— Գայլերի ո՛րը: — Իմ ոճրագործութունն էր դա: Ես տեսնում էի իմ կախաղանի դանդաղորեն բարձրանալը քո ճակատի վրա: Ես այնտեղ էի ամեն մի ցուցմունք, ամեն մի ապացույց ու պաշտպանական խոսք ասվելու պահին, ես կարողացա հաշվել քո յուրաքանչյուր քայլը քո ցավատանջ ճանապարհին. ես այնտեղ էի նաև այն ժամանակ, երբ այն վայրի գազանը...— Ո՛հ, ես խոշտանգումը չէի նախատեսել:— Լսի՛ր: Ես հետևեցի քեզ, եկա տանջանքի խուցը: Տեսա, թե ինչպես խոշտանգողի պիղծ ձեռքերը հանեցին քո զգեստները և քեզ շուռումուռ էին տալիս կիսամերկ վիճակում: Ես տեսա, թե ինչպես քո ոտքը, այն ոտքը, որի վրա ես կցանկանայի մի կայսրության փոխարեն միայն մի համբույր դրոշմել ու մեռնել, այն ոտքը, որի տակ այնպիսի՛ երանավետությամբ կուզեմայի իմ գլխի փշրվելն զգալ, ես տեսա, թե ինչպես այդ ոտքը սեղմեցին սոսկալի կոշիկի մեջ, որը կենդանի էակի անդամներն սրնաշաղախ ցեխ է դարձնում: Օ, թշվառակա՛նս. երբ ես տեսնում էի քո այդ տանջանքը, իմ պատանքի տակ թաքցրած դաշույնով կտրատում էի իմ կուրծքը: Լսելով քո արձակած ճիչը՝ ես դաշույնը խրեցի մարմնիս մեջ. եթե երկրորդ ճիչն էլ արձակեիր՝ կմտներ սրտիս մեջ: Նայի՛ր, ինձ թվում է, թե դեռ արյուն է ծորում:

Եվ բացեց իր սքեմը: Արդարև, նրա կուրծքն ասես պատառոտված էր վագրի ճիրաններով, իսկ կողի վրա կար բավականին լայն ու լավ չփակված մի վիրք:

Կայանավորուհին սարսափած ընկրկեց:

— Օ, դեռատի՛ աղջիկ, — ասաց քահանան, — խղճա ինձ: Դու դժբախտ ես համարում քեզ, բայց, ավա՛ղ, չես իմանում, թե ինչ բան է դժբախտությունը: Օ, լինես քահանա, լինես ատելի և կին սիրես, սիրես նրան հոգու ամբողջ մոլեգնությամբ, զգաս, որ նրա

նվազագույն ժպիտի համար կտայիր արյունդ, բոլոր գգացմունքներդ, հռչակդ ու փրկությունդ, անմահությունդ ու հավերժությունդ, այս և մյուս կյանքը, ափսոսաս, որ արքա չես, ոգի չես, կայսր չես, հրեշապակապետ չես, Աստված չես, որպեսզի մի ավելի մեծ ստրուկ նետես նրա ոտքերի տակ. գիշեր-ցերեկ երպաներիդ ու խորհրդածություններիդ մեջ փայփայես նրան և տեսնես, որ նա սաստիկ սիրահարված է զինվորի նշանազգեստին, իսկ ինքդ ոչինչ չունես մատուցելու նրան, բացի քահանայական սքեմից, որից նա կվախենա և խորշանք կզգա: Քո խանդով ու կասաղությամբ ներկա գտնվես այն տեսարանին, երբ քո պաշտելին սիրո ու դեղեցկություն գանձեր է շոպյուում ինչ-որ թշվառական ու դատարկամիտ տխմարի: Տեսնես այդ մարմինը, որի ձևը վառում է քեզ, այդ կուրծքը, որ այնքան մեղկություն ունի, այդ մարմինը, որ տրոփում ու կարմրում է մի ուրիշի համբույրներից: Ո՛վ երկինք, սիրես նրա ոտքը, նրա բազուկը, նրա ուսերը, երազես նրա կապույտ երակները, թուխ մաշկը այն աստիճան, որ գիշերներ շարունակ գալարվես քո խցիկի սալահատակի վրա և տեսնես, որ նրա համար երազած քո բոլոր գգվանքները հանգում են խոշտանգման: Ունենաս լուկ մի հաջողություն՝ պառկեցնես նրան կաշվե մահճի վրա: Ո՛հ, սրանք են ահա դժոխքի Հնոցում շիկացած իսկական աքցանները: Օ՛, շատ ավելի երջանիկ է այն մարդը, որին սղոցում են տախտակի պես կամ չորս ձիու կապելով՝ չորս կտոր են անում: Հասկանո՞ւմ ես, թե ի՞նչ է այն տանջանքը, որ կրում եմ ես երկար գիշերների ընթացքում, երբ եռում է արյունը երակներին մեջ, սիրտս պայթում է, գլուխս տրաքում, ատամներս կրծում են մատներս, երբ այդ կատաղած խոշտանգողները անընդհատ շուռուձուռ են տալիս ինձ ասես հրաշեկ կուսկարայի վրա՝ սիրո, խանդի ու հուսահատություն մտորումների վրա: Դեռատի՛ աղջիկ, շնորհ արա, մի ըոպե դադար տուր, մի քիչ մոխիր ցանիր այս կրակի վրա: Սրբի՛ր, նզովում եմ քեզ, այս քրտինքը, որ խոշոր կաթիլներով հոսում է իմ ճակատից: Երեխա՛, տանջիր ինձ մի ձեռքով, սակայն մյուսով էլ՝ փայփայիր: Խղճա՛ ինձ, դեռատի՛ աղջիկ, գթա ինձ:

Քահանան թափալովում էր սալարկի ջրի մեջ և գանգը մուրճի նման խփում քարե աստիճանների անկյուններին: Դեռատի աղջիկը նայում էր նրան, լսում:

Երբ նա ուժասպառ ու շնչակտուր լուց, կալանավորուհին կիսաձայն կրկնեց.

— Օ, իմ Ֆերուս:

Քահանան չոքեչոք շարժվեց դեպի աղջիկը:

— Աղաչում եմ քեզ. եթե դու սիրտ ունես, մի՛ վանիր ինձ: Ո՛հ, սիրում եմ քեզ. թշվառական մարդ եմ ես: Երբ դու տալիս ես նրա անունը, դժբախտ աղջիկ, ինձ թվում է, թե ատամներիդ տակ տրորում-աղում ես իմ սրտի բոլոր նյարդերը: Գթա՛ ինձ. եթե դու դժոխքից ես գալիս, ես էլ քեզ հետ գնում եմ այնտեղ: Ես ամեն ինչ արել եմ դրա համար: Դժոխքը, ուր դու լինես, կդառնա իմ արքայությունը, քո տեսքն ավելի սքանչելի է, քան Աստծունը: Ո՛հ, ասա՛, ուրեմն դու ինձ չե՞ս ուզում: Այն օրը, երբ կլինը մերժի այսպիսի մի սեր, ինձ թվալու է, թե լեռները շարժվելու են: Ո՛հ, եթե դու ուզենայի՛ր... ո՛հ, որքա՛ն երջանիկ կլինեինք մենք: Կիսախչեինք. ես կիսալսցնեի քեզ, կմեկնեինք որևէ տեղ, այնպիսի վայր կփնտրեինք աշխարհի վրա, որտեղ ավելի շատ արև կա, ավելի շատ ծառեր, ավելի շատ կապույտ երկինք: Կսիրեինք մենք միմյանց, մեր հոգիները կլցնեինք իրար մեջ, իրար անշեջ ծարավը կզգայինք շարունակ և միասին ու անընդհատ կհագեցնեինք դա սիրո անսպառ թասից:

Կալանավորուհին սոսկալի քրքրիջով ընդհատեց նրան.

— Նայեցեք, տե՛ր հայր, արյուն կա ձեր եղունգների տակ:

Մի քանի վայրկյան քահանան ասես քարացած՝ աչքերը շեշտակի հառած իր ձեռքին:

— Դե լավ, այո, — շարունակեց նա վերջապես՝ տարօրինակ հեզու-թյամբ, — անարգի՛ր ինձ, ծաղրի՛ր ինձ, նախատինքներ թափիր գլխիս, բայց ե՛կ, արի՛: Շտապենք, չո՛ւտ: Վաղն է նշանակված, ասում եմ քեզ: Դրևի կախաղանը, գիտե՞ս, միշտ էլ պատրաստ է: Զարհուրելի

բան է քեզ տեսնել այդ մահակառքով զնայիս: Աղաչո՛ւմ եմ, գթա: Ես երբեք, այնպես չէի զգացի, թե որքա՛ն եմ քեզ սիրում, ինչպես Հիմա զգացի: Ո՛հ, Հետևիք ինձ: Դու ժամանակ կուսենեսս ինձ սիրելու, երբ ես փրկած կլինեմ քեզ: Կարող ես նաև ատել ինձ այնքան ժամանակ, որքան ուզենաս: Բայց եկ: Վա՛ղը, վա՛ղը կախաղանի օրն է, քո մահավատժի օրը: Ո՛հ, փրկի՛ր քեզ, ինայի՛ր ինձ:— Նա բռնեց կալանավորուհու թևը. խելակորույս էր, ուզում էր քաշել-տանել նրան:

Աղջիկը հայացքը սևեռեց քահանայի վրա:

— Ի՞նչ է եղել իմ Ֆերուսը:

— Ա՛խ, — գոչեց քահանան բաց թողնելով նրա թևը. — անգուժ եք դուք:

— Ի՞նչ է եղել Ֆերուսը, — կրկնեց աղջիկը սառնասրտորեն:

— Մեռե՛լ է, — բացականչեց քահանան:

— Մեռե՛լ է, — կրկնեց աղջիկը դարձյալ սառն ու անշարժ:— Ուրեմն էլ ի՞նչ եք հորդորում ինձ ապրել:

Քահանան չէր լսում:

— Դե՛ իհարկե, — ասաց նա՝ կարծես ինքն իր հետ խոսելով, — պետք է որ մեռած լինի: Շեղբը շատ խոր էր մտել: Ինձ թվում է, թե ծայրը դիպցրի սրտին: Օ՛, ինձ ապրեցնողն էլ այդ դաշույնի ծայրն էր:

Դեռատի աղջիկը կատաղած էր վազրի նման հարձակվեց նրա վրա և գերբնական ուժով հրեց սանդուղքի աստիճանների վրա:

— Կորի՛ր, հրե՛լ, կորի՛ր, մարդասպա՛ն, թող ինքս ինձ մեռնեմ: Թող մեր երկուսիս արյունը հովիտենական խարան գրոշմի քո ճակատին: Քե՞զ պատկանել, քահանա՛, հրե՛ք, հրե՛ք: Մեզ ո՛չ մի բան չի միացնի, ոչ իսկ դժոխքը: Գնա՛, անիծյա՛լ, երրեք:

Քահանան սայթաքեց սանդուղքի վրա ու գլորվեց: Նա լուռ ու մունջ ազատեց իր ոտքը աղջկա շրջագրեստից, վերցրեց իր լապտերը և սկսեց դանդաղորեն բարձրանալ դեպի գուռն առաջնորդող սանդուղքը: Եվ դուրս եկավ: Հանկարծ կալանավորուհին նորից տեսավ նրա գլուխը՝ այս անգամ սարսափելի արտահայտությամբ:

Եվ կատաղությունից ու հուսահատությունից խռպոտած ձայնով գոռաց.

— Ես քեզ ասում եմ, որ մեռած է նա:

Կալանավորուհին բերանքսիվայր փռվեց գետին, և զնդանում այլևս ուրիշ ձայն չլսվեց, բացի առաստաղից ընկնող կաթիլի հառաչը, որ խավարում թրթռացնում էր լճացած ջուրը:

V

ՄԱՅՐԸ

Ես կարծում եմ, որ աշխարհում չի կարող լինել ավելի հրճավի բան, քան այն պատկերները, որ զարթնում են մոր սրտում՝ իր երեխայի փոքրիկ մաշիկները տեսնելիս, մսնավանդ՝ եթե տոն օրվա, կիրակիների, մկրտության մաշիկներն են, մինչև իսկ կրունկների տակն ասեղնագործված մաշիկներ, այնպիսի մաշիկներ, որոնցով երեխան դեռ ոչ մի քայլ չի արել: Այդ մաշիկներն այնքան գեղեցիկ ու այնքան փոքրիկ են, այնքան անկտրելի է դրանցով քայլել, որ մոր համար դա նույնն է, թե նա տեսնում է իր մանկան: Նա ժպտում է այդ մաշիկին, համբուրում ու խոսում հետը, հարց է տալիս ինքն իրեն, թե իսկապես հնարավոր է, որ ոտքն այդչափ փոքր լինի, իսկ երբ երեխան բացակա է, բավական է փոքրիկ մաշիկը, որպեսզի նրա աչքերի առաջ երևա անուշիկ ու քնքուշ արարածը: Մորը թվում է, թե տեսնում է նրան, և տեսնում է՝ ամբողջովին, կենդանի, ուրախ ու զվարթ, իր նուրբ մատներով, կլոր գլխով, մաքուր շրթունքներով, ջինջ աչքերով, որի սպիտակուցը կապտավուն է:

Եթե եղանակը ձմեռ է, մանկիկն ահա քո կողքին սողում է գորգի վրա, ջանասիրաբար մագլցում-բարձրանում է նստարանին, իսկ մայրը դողում է, որ չլինի թե հանկարծ մոտենա կրակին: Եթե ամառ

է, մանկիկը քարշ է գալիս բակում, պարտեզում, սոկոտում է սալաքայրերի արանքի խոտերը, միամտորեն նայում է խոշոր շներին, մեծ ձիերին՝ առանց վախենալու, խաղում է խեցեկատոյանների ու ծաղիկների հետ և ստիպում քրթմնջալ պարտիզպանին, որը թափված ավազ է գտնում ծաղկանոցների միջակա շերտի վրա և հող՝ ծառուղիների մեջ: Ամեն ինչ ժպտում է, ամեն ինչ փայլում, ամեն ինչ խաղում նրա շուրջը՝ նրա պես, մինչև անգամ օդի հեքը և արևի ճաճանչը, որոնք իրար հետ մրցելով խայտում են նրա մագերի չարաճճի խոպոպների մեջ: Մաշիկն այդ ամենը ցույց է տալիս մորը և հայրամաշ անում նրա սիրտը, ինչպես մեղրամոմը՝ կրակից:

Բայց երբ երեխան կորել է, ապա ուրախության, հրապույրի ու քնքշանքի այդ հագարավոր պատկերները, որոնք խոնջում են փոքրիկ մաշիկի շուրջը, դառնում են հագարավոր զմույակ հուշեր: Ասեղնագործված գեղեցիկ մաշիկը այլ բան չէ այլևս, եթև ոչ տանջանքի գործիք, որ անվերջ տրորում է մոր սիրտը: Թրթռում է շարունակ նույն նյարդը՝ ամենախոր և ամենագոյայուն նյարդը, սակայն նրան գուրգուրացող հրեշտակի փոխարեն առկա է խայթոլ ու խոցող դևը:

Մի առավուտ, երբ մայրսյան արևը բարձրանում էր դեպի այն մուգ-կապույտ երկինքը, որ Գարոֆալոն²¹⁷ սիրում է նկարել «Քրիստոսի իջնցնելը խաչից» պատկերների շուրջը, Ռույանի աշտարակի ապաշխարուհին անիվների, ձիերի ու երկաթեղենի ալմուկ լսեց Գրեկ հրապարակից: Նա շատ քիչ սթափվեց դրանից, մաղերը ոլորեց-հավաքեց ականջների վրա՝ խլանալու համար և շարունակեց ծնկաչոք նայել այն անշունչ առարկային, որ այդպես պաշտում էր տասնհինգ տարուց ի վեր: Ինչպես ասել ենք արդեն, այդ փոքրիկ մաշիկը ամբողջ տիեզերքն էր նրա համար: Նրա միտքն ամփոփված էր դրա մեջ և պետք է դուրս գար մահվան հետ միայն: Ռույանի աշտարակի այդ մթին նկուղն էր միայն իմացել, թե որքա՛ն դառն անեծքներ, սրտառուչ գանգատներ, աղաչանքներ ու հեծեծանքներ էր ուղղել նա

217. Բենվենուտո Տիգի կամ Գարոֆալո (1481-1559), իտալացի նկարիչ:

երկինքին՝ վարդագուռն ատլասն այդ սքանչելի մանկական խաղալիքի՝ մաշիկի առթիվ: Ո՛չ մի ժամանակ ավելի հուսահատութուն չի թափվել դրանից ավելի գողտրիկ և ավելի նրբակերտ բանի համար: ԹՎում էր, թե այդ առափստ նրա կսկիծը հորդում էր սովորականից ավելի ուժգնորեն, և դրսից լսվում էր այնպիսի բարձրաձայն ու միայլար ույր ու կոծ, որ ամեն մի լսողի սիրտը կեպեքվում էր:

— Օ՛, իմ անուշ աղջիկ,— ասում էր նա,— իմ թշվառ, փոքրիկ, սիրելի գավակ, ուրեմն ես քեզ էլ չե՛մ տեսնի: Վերջացա՛վ ուրեմն ամեն ինչ: Իսկ ինձ թվում է միշտ, թե դա երեկ եղավ: Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, քանի որ այդքան շուտ պիտի առնեիր ինձնից, ավելի լավ էր բնավ չտայիր: Մի՞թե դու չգիտես, որ մեր երեխաները մեր միս ու արյունից են, և իր գավակը կորցրած մայրն այլևս չի հավատում Աստծուն: Ա՛խ, ի՛նչ ախմարութուն արեցի, որ այն օրը դուրս եկա տնից: Տե՛ր Աստված, տե՛ր Աստված, ուրեմն դու երբեք չէիր նայել ինձ՝ նրա հետ միասին, երբ ես տաքացնում էի նրան իմ օջախի մոտ, որից նա խիստ հրճվում էր, երբ նա կախս ծծելով ժպտում էր ինձ, երբ ես ասում էի, որ իր փոքրիկ ոտքերը ղնելով կրծքիս՝ հասցնի իմ շրթունքներին,— դրա համա՞ր այսպես խլեցիր ինձնից: Օ՛, եթե տեսնեիր այդպես, տե՛ր իմ Աստված, կխղճայիր իմ ուրախությանը և չէիր խլի ինձնից իմ սրտում մնացած միակ սերը: Ուրեմն ես շա՞տ թշվառական արարած էի, տե՛ր իմ, որ դու դատապարտելուց առաջ չկարողացար նայել ինձ:

— Ավա՛ղ, ավա՛ղ, այստեղ է մաշիկը, բայց ո՞ւր է ոտքը, ո՞ւր է մնացածը, ո՞ւր է մանկիկը: Իմ սիրասո՛ւն դստրիկ, ի՞նչ արեցին քեզ: Աստվա՛ծ իմ, վերադարձրու նրան ինձ: Ծնկներին կաշին պղկվեց տասնհինգ տարի՝ քեզ աղոթելուց, Աստվա՛ծ իմ. մի՞թե բավական չէ դա: Վերադարձրու նրան ինձ, թեկուզ մի օրով, մեկ ժամով, մեկ րոպեով, միայն մե՛կ րոպեով, տե՛ր իմ, իսկ հետո ինձ չպրտիր հավիսյանս հավիտենից սատանային: Ո՛հ, եթե ես իմանայի, թե որտեղ է քարը գալիս քո զգեստի քղանցքի ծայրը, զույգ ձեռքովս

կկառչեի նրանից, և այն ժամանակ ստիպված կլինեիր երեխայիս վերադարձնել ինձ: Տե՛ս նրա սիրունիկ մաշիկը, մի՞թե դու չես խղճում դրան, Աստված իմ: Ինչպե՞ս կարող ես դու տասնհինգ տարի շարունակ այսպիսի տանջանքի դատապարտել մորը: Բարևախոս աստվածածին, երկնավոր սուրբ կույս, իմ Հիսուս մտնկան վերադարձրու ինձ, խլեցին նրան ինձնից, գողացան ինձնից, խորովեցին խարույկի վրա ու կերան, խմեցին նրա արյունը, ծամեցին ոսկորները: Ո՛վ սուրբ կույս, խղճա՛ ինձ, գթա՛: Ուզո՛ւմ եմ, իմ աղջի՛կն եմ ուզում: Ինձ ի՛նչ օգուտ, որ նա քո արքայության մեջ կլինի, քո հրեշտակներն ինձ պետք չեն, իմ երեխան է ինձ պետք: Էգ առյուծ եմ ես, իմ կորյունն եմ ուզում: Օ՛, ես թավալղլոր կլինեմ դետնի վրա, քարեր կփշրեմ իմ ճակատով, կնզովեմ ինձ, բայց և կանիծեմ քեզ, տե՛ր, եթե պահես, չտաս իմ երեխան: Տեսնում ես, չէ՞, ինչպես եմ բազուկներս կծոտել, տե՛ր, մի՞թե բարեգուժ Աստված գուժ չունի: Լոկ սև հաց ու աղ տուր ինձ, միայն թե աղջիկս ինձ մոտ լինի և արևի պես տաքացնի ինձ: Ավա՛ղ, տե՛ր իմ Աստված, ես մի անարգ մեղապարտ կին եմ, բայց իմ աղջիկը բարեպաշտ կդարձնեիր ինձ: Ի սեր իմ երեխայի՛ ես լի էի հավատով և նրա ժպտի միջից տեսնում էի քեզ, ինչպես երկնքի պատուհանից: Ա՛խ, երանի թե կարողանայի միայն մեկ անգամ, ևս մեկ անգամ, միմիայն մեկ անգամ էլ այս սիրուն մաշիկը հագցնել նրա փոքրիկ, սիրուն վարդագույն ոտքին և կմեռնեի, սո՛ւրբ կույս, քեզ օրհնելով: Օ՛, տասնհինգ տարի, մեծացած կլինեիր հիմա: Դժբա՛խտ երեխա, ի՛նչ, ճի՛շտ է ուրեմն, որ ես էլ չեմ տեսնի նրան, չեմ տեսնի նույնիսկ երկնքում. քանի որ ինքս այնտեղ չեմ գնա: Ա՛խ, ինչպիսի՛ ցավ ու պատիժ, ասել, թե ահա նրա մաշիկը, և այդ է ամենը:

Տարաբախտ կինը նետվել էր այդ մաշիկի՝ երկար տարիների իր միակ մխիթարության, բայց և հուսահատության վրա, և առաջին օրվա պես սիրտը մղկտում էր, ու արցունքները հոսում էին: Չէ՞ որ որդեկորույս մոր համար միշտ էլ առաջին օրն է դա: Հենց այդ

կսկիծն է, որ երբեք չի հնանում: Որքան էլ սգո զգեստները մաշվեն ու խուճանան, սիրտը միշտ կմնա սևով փաթաթված:

Այդ միջոցին մանկական թարմ ու զվարթ ձայներ անցան նրա խցիկի առջևից: Ամեն անգամ, որ նրա հայացքն ընկնում էր երեխաների վրա կամ նրանց ձայները հասնում էին ապաշխարուհու սկանջին, խեղճ մայրը փախչում էր իր տապանի ամենախավար անկյունը և թվում էր, թե աշխատում է գլուխը մտցնել քարի մեջ, որպեսզի չլսի նրանց ձայները: Այս անգամ, ընդհակառակը, նա կարծես հանկարծակի խթանված ուղղվեց և ազահարար ականջ գրեց: Փոքրիկ տղաներից մեկն ասաց.

– Այդ նրա համար է, որ այսօր մի բոշա աղջիկ պիտի կախեն:

Այն սարդի ընդոստ ոստնումով, որը, ինչպես մի անգամ տեսանք, հարձակվեց ճանճի վրա, հենց որ ոստայնը թրթռաց, ապաշխարուհին էլ վազեց դեպի իր լուսանցույցը, որ ինչպես գիտենք, նայում էր Գրեկի հրապարակին: Արդարև, մշտական կախաղանի մոտ հաստատված էր մի ելարան և դահիճը զբաղված էր անձրևից ժանգոտած շղթաներն ուղղելով: Շուրջը մի փոքր բազմութուն կար:

Զվարթ երեխաների խումբն արդեն հեռու էր: Քրձենավորը հայացքով փնտրեց որևէ անցորդի, որին կարողանար հարցուփորձ անել: Եվ մեկ էլ նկատեց, հենց իր կացարանի կողքին, մի քահանայի, որը ձևանում էր, թե Հանրային ժամագիրքն է կարդում, սակայն շատ ավելի քիչ էր զբաղված երկաթավանդակված մատյանով, քան թե կախաղանով, որի ուղղությամբ երբեմն-երբեմն մռայլ ու ամեհի հայացք էր նետում: Ապաշխարուհին ճանաչեց քահանային՝ Ժողայի պարոն սարկավագապետին, որ սուրբ մարդ էր:

– Տե՛ր հայր, – հարցրեց նա, – այդ ո՞ւմն են կախելու:

Քահանան նայեց նրան, բայց չպատասխանեց. կինը հարցումը կրկնեց: Այս անգամ քահանան պատասխանեց.

– Չեմ իմանում:

– Քիչ առաջ երեխաներ կային այստեղ և ասում էին, թե բոշա աղջիկ է, – շարունակեց ապաշխարուհին:

– Կարծում եմ, թե այդպես է, – ասաց քահանան:

Այդ ժամանակ Պաքետ Շանարֆլյորին բորենու քրքիջ արձակեց:

– Քո՛ւյր իմ, – ասաց սարկավագապետը, – ուրեմն դուք շա՛տ եք ատում բոշա կանանց:

– Հարցնո՛ւմ եք դեռ՝ ատո՞ւմ եմ նրանց, – գոչեց ապաշխարուհին, – վամպիրներ են դրանք, երեխա գողացողներ: Նրանք լափեցին իմ փոքրիկ աղջկան, իմ երեխային, իմ մինուճար երեխային: Ես է՛լ սիրտ չունեմ, դրանք կերել են իմ սիրտը:

Սարսափելի էր նա: Քահանան նայում էր նրան սառն հայացքով:

– Դրանց մեջ կա մեկը, որին առանձնապես եմ ատում, որին անիծել եմ, – շարունակեց ապաշխարուհին, – ջահել աղջիկ է, տարիքն այնքան, որքան իմ աղջկանը պիտի լիներ, եթե դրա մայրը իմ աղջկան կերած չլիներ: Ամեն անգամ, որ այդ ջահել օձն անցնում է իմ խցիկի առջևից, արյունս տակնուվրա է անում:

– Դե լավ, քո՛ւյր իմ, ուրախացեք, – ասաց քահանան՝ շիրիմի արձանի պես սառցաշունչ, – հենց դրա մեռնելն է, որ պիտի տեսնեք:

Նրա գլուխն ընկավ կրծքի վրա, և նա դանդալորեն թողեց գնաց: Ապաշխարուհին բազուկներն ուրախությունից գալարեց:

– Մարգարեացե՛լ էի ես, ասե՛լ էի նրան, որ կբարձրանա այնտեղ: Շնորհակալ եմ, քահանա՛, – գոռաց նա:

Եվ սկսեց մեծ-մեծ քայլերով երթևեկել իր լուսանցույցի ճաղերի առաջ՝ հերարձակ, հրացայտ աչքերով, ուսով պասը հրելով, վանդակ դրված այն էգ գայլի վայրագ հայացքով, որը վաղուց քաղցած է և զգում է, որ մոտ է կերակրման ժամը:

ՏԱՐՔԵՐ ԿԵՐՊ ՍՏԵՂՄՎԱԾ ԵՐԵՔ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՍՐՏԵՐ

Այնուամենայնիվ, Ֆերուսը չէր մեռել: Այդ տեսակ մարդկանց ոսկորը պինդ է լինում: Երբ արքայական արտակարգ դատախազ տյար Ֆիլիպ Լյուլիեն խեղճ էամերալդային ասել էր նա **մեռնում է**, ապա դա սխալմունք էր կամ կատակ: Երբ սարկավագապետը դատապարտվածին կրկինել էր **նա մեռել է**, ապա փաստն այն է, որ նա ոչինչ չգիտեր, բայց այդպես էր հավատացած, իր հաշվով այդպես պիտի լիներ. չէր կասկածում դրան և շատ էր ուզում, որ այդպես լինի: Չափազանց ծանր կլիներ նրա համար իր ախոյանի մասին լավ լուրեր հաղորդել այն կնոջը, որին սիրում էր: Նրա դրուժյան մեջ գտնվող ամեն մարդ նույնը կաներ:

Ձի կարելի ասել, որ Ֆերուսի վերքը ծանր չէր, սակայն ոչ այնքան, որքան սարկավագապետն էր ինքն իրեն պարծենալով կարծում: Գլխավոր վիրաբույժը, որի մոտ էին տարել նրան գիշերային պահակապորթերը ամենից առաջ, ութ օր վտանգի տակ էր համարում նրա կյանքը և նույնիսկ լատիներենով հայտնել էր նրան: Այնուամենայնիվ, երիտասարդութունը հաղթել էր և, ինչպես հաճախ է պատահում, չնայած կանխանշաններին և ախտանշաններին, բնությունը զվարճացել էր՝ փրկելով հիվանդին բժշկի քթի տակից: Եվ ահա նա դեռ պառկած էր վիրաբույժի խշայակի վրա, երբ Ֆիլիպ Լյուլիեն և հիկեղեցական ատյանի հետաքննիչները կատարել էին առաջին հարցաքննությունը, որ նրան մեծ ասուղառու էր պատճառել: Ուստի, մի գեղեցիկ առավոտ, համեմատաբար լավ զգալով իրեն, ոսկե խթանները թողել էր որպես ղեղադին և փախչել: Դա, իհարկե, ոչ մի շփոթություն չէր առաջացրել գործի քննության մեջ: Այդ դարաշրջանի արդարադատությունը շատ քիչ էր մտահոգվում քրեական

դատավարուիթյան հստակուիթյամբ ու ճշգրտուիթյամբ: Բավական էր, որ մեղադրյալը կախաղան հանվի, ահա այս էր միայն նրան պետք: Իսկ դատավորները բավականաչափ ապացույցներ ունեին էսմերալդայի դեմ, Ֆեբուսին էլ մեռած էին կարծում, և ահա ամեն ինչ ասված էր:

Ֆեբուսն էլ իր հերթին հեռու չէր փախել, պարզապես գնացել-գտել էր իր վաշտը, որ կայազորային ծառայուիթյան մեջ էր Քյոտ-ան-Բրիում (Իլ դը Ֆրանս), Փարիզից մի քանի ձիափոխման կայան հեռու:

Վերջիվերջո, նրան ամենևին հաճելի չէր անձամբ երևալ այդ դատավարուիթյան մեջ: Նա տարտամորեն զգում էր, որ այնտեղ ծիծաղելի դրուիթյան մեջ կլինի: Ըստ էուիթյան՝ ինքն էլ չէր իմանում, թե ինչ մտածի այդ գործի մասին: Լինելով թույլ հավատացյալ ու սնապաշտ, ինչպես ամեն մի գիևվոր, որ միայն գիևվոր է, երբ նա մտովի քննում էր այդ պատահարը, վստահ բան չէր կարող ասել ո՛չ այծի, ո՛չ այն տարօրինակ հանգամանքի մասին, որով հանդիպել էր էսմերալդային, ինչպես նաև այն ոչ պակաս տարօրինակ եղանակի մասին, որով գնչուհին թողել էր, որ նա կռահի իր սերը, և վերջապես ոչինչ չէր կարող ասել նրա գնչուհի լինելու և ուրվական վստականի մասին: Այդ պատմուիթյան մեջ նա շատ ավելի կախարղանք էր նշմարում, քան թե սեր. հավանաբար, այդ աղջիկը վհուկ էր, գուցե և ինքը՝ սատանան, վերջապես՝ կատակերգուիթյուն և կամ թե, այն ժամանակվա լեզվով ասած, խիստ անախորժ միտտերիա, որտեղ նա՝ կապիտանը, կատարում էր չափաղանց ձախուղակ դեր՝ հարվածն ու ծաղրն ընդունողի դերը: Կապիտանը գիտակցում էր, որ մի լավ տվել են իր քթին, ուստի և զգում էր այն ամոթը, որ մեր Լաֆոնտենը այնքան սքանչելի բնորոշել է.

Ամոթահար հանց այն աղվեսն,
Որին հավն է գերի բռնել:

Նա հույս ուներ նաև, որ այդ պատմուիթյունը չէր տարածվի և քանի որ ինքը բացակա է, ապա իր անունը հաղիվ թե արտասանվի

այնտեղ կամ համենայն դեպս՝ Տուրնելի դատասարահից դուրս չի թնգա: Այս կետում նա բնավ չէր սխալվում, այդ դարաշրջանում «Դատարանների լրագիր» չկար, և որովհետև շաբաթ չէր անցնում, որ մի դրամանենգ չխաչեին, կամ կախարդ կին չկախեին և կամ հերետիկոս խարույկի չմատնեին Փարիզի անհամար «արդարադատությաններից» որևէ մեկում, ապա այն աստիճան վարժված էին ֆեոդալական պառաված Թեմիսին՝²¹⁸ տեսնել բոլոր խաչմերուկներում թե երբ քշած ու մերկաբազուկ իր գործն անելիս կախադանների, ելարանների և անարգանքի սյուների մոտ, որ համարյա թե՛ ուշք չէին դարձնում: Այդ ժամանակների բարձր դասը համարյա թե չէր իմանում այն դատապարտվածի անունը, որին անցկացնում էին փողոցի անկյունից, իսթամուժն էլ շատ-շատ հյուրասիրվում էր այդ անախորժ կոշտ կերակուրով: Մահապատիժը մեծ փողոցի սովորական պատահարն էր, ինչպես կարկանդակ թխողի կրակարանը կամ մսագործի սպանդանոցը: Դահիճը մի տեսակ մսագործ էր, մյուսներից քիչ ավելի ճարպիկ:

Եվ ահա Ֆերուսը բավական արագ խաղաղություն տվեց իր մտքին՝ թովչուհի էսմերալդայի, կամ Սիմիլարի, ինչպես նա էր ասում, գնչուհու կամ ուրվական վանականի (նրա համար մեկ էր) հասցրած դաշույնի հարվածի և դատավարության ելքի վերաբերյալ: Բայց հենց որ նրա սիրտն այդ կողմից մնաց դատարկ, Ֆլյոր-դը-Լիսի պատկերը նորից վերադարձավ: Կապիտան Ֆերուսի սիրտը, այդ ժամանակների ֆիզիկայի պես, վախենում էր դատարկությունից:

Ասեմք նաև, որ խիստ անհամ էր Քյո-ան-Բրիում անցկացրած ժամանակը: Պայտառների և ձեռքերը ճաքճաքած կովարած կանանց մի գյուղ, որի մեծ փողոցի երկու կողմից, կես լիյո տարածությունամբ շարված էր խղճուկ տնակների և խրճիթների երկար շարանը, մի խոսքով՝ իսկական քո՛²¹⁹:

218. Արդարադատության աստիճանահիս (ըստ հունական դիցաբանության):

219. Պոչ: Գյուղի անունը Քյո-ան-բրի՝ Պոչ Բրիում (Բրին նահանգի անունն է):

Ֆլյոր-դը-Լիսը նրա նախավերջին սերն էր. սիրուն աղջիկ ու հիանալի օժիտ: Եվ ահա մի գեղեցիկ առավոտ, բոյորովին առողջացած և ենթադրելով, որ երկու ամիս անցնելուց հետո գնչուհու գործը պետք է վերջացած և մոռացված լինի, սիրահար ասպետը սիգայով ձին կանվանեցրեց Գոնդըլլորիենների բնակարանի դռան առաջ:

Նա ուշադրութուն չդարձրեց բավական մեծաթիվ ամբոխին, որ հավաքվում էր Գրեխի հրապարակում՝ Աստվածամոր տաճարի ավագ դռան դիմաց. հիշեց, որ ամիսը մայիսն էր, բայց ենթադրեց, թե որևէ թափոք կլինի, Հոգեգալստի կամ մի ուրիշ որևէ տոն. ուստի ձին կապեց դռնածածկի օղակին և ուրախ-գվարթ բարձրացավ իր գեղեցիկ հարսնացուի մոտ: Օրիորդը մենակ էր մոր հետ:

Ֆլյոր-դը-Լիսի սրտին շարունակ ճնշում էին կախարդ աղջկա տեսարանը՝ նրա այծը, անիծյալ այբուբենը և Ֆերուսի երկար բացակայությունները: Բայց երբ տեսավ իր կապիտանի ներս մտնելը, այնքան հաճելի սրտաքինով ու տեսքով, բոլորովին նոր բաճկոնակով, փայլուն թրակապով ու սիրավառ արտահայտությամբ, հրճվանքից շառագունեց: Այնվատահմ օրիորդն ինքն էլ ավելի հրապուրիչ էր, քան երբևէ: Նրա փարթամ ու խարոյաչ վարսերը հյուսված էին խելահան անելու աստիճան գեղեցիկ, հագել էր երկնագույն շրջագգեստ, որ այնքան պատշաճում է սպիտակամորթ կանանց, մի պրչրանք, որ օրիորդ Կոլոմբն էր սովորեցրել նրան, աչքերը լողում էին այն սիրատարփ նվաղկոտություն մեջ, որ է՛լ ավելի է պատշաճում այդ կարգի կանանց:

Բյո-ան-Բրի գյուղի անհրապույր կանանցից հետո Ֆերուսը ոչ մի գեղեցիկ կին չէր տեսել, այնպես որ՝ գլուխը պտտվեց Ֆլյոր-դը-Լիսից, իսկ դա այնպիսի հաճոյակատարություն ու կնամեծարություն հաղորդեց մեր սպային, որ հաշտությունն իսկույն կնքվեց: Տիկին դը Գոնդըլլորիեն անգամ, որ ըստ սովորության մայրաբար նստած էր իր բազկաթոռին, ուժ չունեցավ կապիտանին կշտամբելու: Իսկ ինչ վերաբերում է Ֆլյոր-դը-Լիսի հանդիմանություններին, ապա դրանք փարատվեցին տատրակային քսոյցր մնչյունների մեջ:

Դեռատի աղջիկը նստած լուսամուտի մոտ՝ շարունակում էր նեպտունի քարայրն ասեղնագործել: Կապիտանը հենված իր աթոռի թիկնակին՝ մնացել էր կանգնած, իսկ օրիորդը ցածր ձայնով իր փաղաքչական կշտամբանքներն էր ուղղում նրան:

– Ուղիղ երկու ամիս է անհետացել էիք, չարասի՛րտ, ի՞նչ էր եղել ձեզ:

– Երդվում եմ ձեզ, – պատասխանում էր Ֆերուսը հարցումից մի քիչ ճնշված, – որ դուք որևէ արքեպիսկոպոսի անրջել տալու չափ գեղեցիկ եք:

Ճյուր-գը-Լիսը չէր կարող իր ժպիտը զսպել:

– Լավ, շատ լավ, պարո՛ն: Հանգիստ թողեք իմ գեղեցկությունը և իմ հարցին պատասխանեցեք: Իրո՛ք որ գեղեցիկ գեղեցկություն, քանի որ մոռացել էիք:

– Դե լավ, սիրելի՛ կուզին, ինձ կանչել էին կայազորելու:

– Եվ որտե՞ղ, եթե կրարեհաճեք ասել, և ինչո՞ւ չեկաք հրաժեշտ տալու ինձ:

– Քյո-ան-Բրիում:

Ֆերուսը սքանչացած էր, որ առաջին հարցն օգնում էր իրեն խուսափել երկրորդից:

– Բայց դա չափազանց մոտ է, պարո՛ն: Ինչպե՞ս թե. չգալ ու ինձ չտեսնե՛լ թեկուզ և մեկ անգամ:

Այստեղ Ֆերուսը լրջորեն շփոթվեց:

– Բանն այն է, որ... ծառայությունը... և բացի դրանից, չքնա՛ղ կուզին, հիվանդ էի:

– Հիվա՞նդ, – կրկնեց օրիորդը սարսափած:

– Այո... վիրավորված:

– Վիրավորվա՞ծ:

Խեղճ աղջիկն ամբողջովին տակնուվրա եղավ:

– Օ՛, մի՛ սարսափեք դրանից, – ասաց Ֆերուսն անփութորեն, – չնչին բան էր: Կոիվ, սրի հարված, դրանից ինչ կլինի ձեզ:

– Ինչ կլինի ի՞նձ, – բացականչեց Ֆլյոր-դը-Լիսը՝ բարձրացնելով արցունքով լի գեղեցիկ աչքերը: – Օ, դուք չեք ասում այն, ինչ մտածում եք այդ խոսքն ասելիս: Ինչի՞ համար էր սրի այդ հարվածը: Ես ուզում եմ ամեն բան իմանալ:

– Շատ լավ, իմ սիրելի՛ գեղեցկուհի, անսխորժություն ունեցա Մահե Ծեղիի, կարծեմ ճանաչում եք, Սեն-ժերմեն-ան-Լեյի լեյտենանտի հետ. և ահա մի քանի մատնաչափ քանդեցիկք միմյանց մաշկի կարը: Եղած-չեղածն այս է:

Ստախոս կապիտանը շատ լավ գիտեր՝ պատիվը պաշտպանելու մենամարտը միշտ էլ տղամարդուն բարձրացնում է կնոջ աչքում: Հիրավի, Ֆլյոր-դը-Լիսը նայում էր շեշտակի՝ վախից, հաճույքից և հիացմունքից հուզված:

– Միայն թե բոլորովին բուժված լինեք դուք, ի՛մ Ծեբուս, – ասաց նա: – Ես ձեր այդ Մահե Ծեղիին չեմ ճանաչում, բայց նա վատ մարդ է: Իսկ ինչի՞ց ծագեց այդ կռիվը:

Այստեղ Ծեբուսը, որի երևակայությունը ստեղծագործելու միջակ կարողություն ուներ, այլևս չէր իմանում ինչպես դուրս գա իր քաջագործությունից:

– Է՛, ինչ իմանամ... չնչին բան... ձի... խոսք-գրույց: Գեղեցի՛կ կուզին, – գոչեց նա խոսակցության նյութը փոխելու համար, – այդ ի՞նչ աղմուկ է Գավթի հրապարակում: – Եվ մոտեցավ պատուհանին. – Օ, Աստվա՛ծ իմ, գեղեցի՛կ կուզին, որքա՛ն բազմություն է հավաքվել հրապարակում:

– Չգիտեմ, – ասաց Ֆլյոր-դը-Լիսը, – կարծեմ թե մի կախարդ կին պետք է հրապարակային զզվում անի այս առավոտ, եկեղեցու առաջ, որպեսզի դրանից հետո կախաղան բարձրանա:

Կապիտանը միանգամայն վստահ էր, որ էսմերալդայի գործն ավարտված կլինի, ուստի և շատ քիչ հուզվեց Ֆլյոր-դը-Լիսի խոսքերից: Այնուամենայնիվ, մի երկու հարց տվեց նրան:

– Ի՞նչ է այդ կախարդի անունը:

– Զգիտեմ, – պատասխանեց օրվորդը:

– Չե՞ն ասում, թե ինչ է արել:

Ֆլյոր-գը-Լիսը այս անգամ էլ վեր քաշեց իր ճերմակ ուսերը:

– Զգիտեմ:

– Օ՛, տե՛ր իմ Հիսուս, – գոչեց մայրը, – այնքան կախարդ կա հիմա, որ իմ կարծիքով՝ վառում են նրանց՝ առանց անուննհրն իմանալու: Այդ նույնն է, որ ուզենաս իմանալ երկնքի յուրաքանչյուր ամպի անունը: Վերջիվերջո, կարելի է հանգիստ լինել: Աստված իր հաշիվը պահում է: – Այստեղ պատվարժան տիկինը վեր կացավ ու մոտեցավ լուամուտին: – Տե՛ր Աստված, – գոչեց նա, – իրավունք ունեք, Ֆերո՛ւս: Ինչքա՛ն խաժամուժ ամբոխ է հավաքվել: Օրհնյա՛լ Աստված, մինչև իսկ տանիքների վրա են լցվել: Գիտե՞ք ինչ, Ֆերո՛ւս, սա հիշեցնում է ինձ իմ լավ օրերը: Կառլոս VII թագավորի մուտքը, այդ օրն էլ այսչափ ժողովուրդ կար: Հիմա չեմ հիշում ո՞ր թվին էր: Երբ ես ձեզ պատմում եմ այդպիսի դեպք, դա ձեզ վրա ինչ-որ հնացած բանի տպավորություն է գործում, այնպես չէ՞, իսկ ինձ հիշեցնում է իմ երիտասարդությունը: Օ՛, այն ժամանակվա ժողովուրդը շատ ավելի գեղեցիկ էր, քան հիմիկվանը: Մարդիկ խունվել էին մինչև իսկ Սենտ-Անտուան գարպասի հրածերպի Վրա:

Թագավորը գավակն էր առել թագուհուն, իսկ նորին վսեմություններին հետո գալիս էին բոլոր սենյորները՝ տիկիները գավակին: Հիշում եմ, որ սաստիկ ծիծաղում էին, որովհետև Ամանիոն դը Գառլանդի կողքից, որը խիստ կարճահասակ մարդ էր, գալիս էր այնվատուհմ Մատֆերյոնը՝ հսկայահասակ մի ասպետ, որ դեզ-դեզ անգլխացի էր սպանել: Շատ գեղեցիկ պատկեր էր, Ֆրանսիայի բոլոր ազնվականների թավորը՝ արևից հուրհրացող իրենց դրոշներով: Ոմանք եռանկյուն նիզակադրոշներ ունեին, ոմանք էլ՝ երկսայր դրոշակներ: Ո՞ր մեկն ասեմ. սենյոր դը Կալանը նիզակադրոշով էր, ժան դը Շատոմորանը՝ երկծայր դրոշակով, սիր դը Կուսին՝ երկծայր դրոշակով և ավելի պճնագուրդ, քան մյուսները, բացի Բուրբոնյան

ՊԱՐՏԱԴԻՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ

**ՓԱՐԻԶԻ
ԱՍՏՎԱԾԱՄՈՐ
ՏԱՃԱՐԸ**

**Ֆրանսերենից թարգմանեց՝
Վահե Միքայելյանը**



**Երևան
«Անտարես»
2012**